Սույն գիրքը թվայնացվել է Գրքասեր ՀԿ-ում՝ հայերենով գրականության պահպանման, հանրայնացման և ժամանակակից թվային միջավայրում հասանելի դարձնելու նպատակով:

Կազմակերպության նախաձեռնությունը միտված է հայերեն գրքերի և տեքստերի տարածմանը, ընթերցանության խթանմանը և մշակութային ոչ նյութական ժառանգության պահպանությանը՝ ապահովելով դրանց հասանելիությունը հնարավորինս լայն շրջանակների համար:

Մենք հավատում ենք, որ թվայնացումը ոչ միայն պահպանման միջոց է, այլև գիտելիքի, գրականության և մշակույթի շարունակական փոխանցման կարևոր ուղի:

Գրքասեր ՀԿ-ն գրքերը ձայնագրում և թվայնացնում է բացառապես Ձեր նվիրատվությունների շնորհիվ: Կազմակերպությանը կարող եք օժանդակել հետևյալ հղումով՝

https://grqaser.org/hy/donate

Իտալական գրականություն, Վեպ, Արձակ 13+

Թարգմանիչ՝ Ժիրայր Ավետիսյան

Լուիջի Պիրանդելլո

Ծերերն ու երիտասարդները

Իմ երեխաներին՝ այսօր երիտասարդ, վաղը՝ ծեր

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Գլուխ I

Տեղատարափ անձրևը չդադարեց ամբողջ գիշերը, և երկար սայլուղին, որ ոլորվում էր ամեն քայլափոխում՝ կարծես փնտրելով պակաս ուղղաբերձ վերելքներ և ավելի թեթև վայրէջքներ, դարձավ բոլորովին անանցանելի: Վատ եղանակի պատճառած ավերածություններն առանձնապես անախորժ էին թվում այն պատճառով, որ հիմա բացարձակապես պարզ էր դառնում, թե այստեղ ինչպիսի անհոգությամբ, նույնիսկ արհամարհանքով են վերաբերվում շինարարների ջանքերին, որոնց նպատակն է եղել այս խիստ կտրտված տեղանքում հեշտացնել ուղին՝ սահուն ոլորաններով, կեռմաններով, արհեստական ամրաթմբերով ու նեցուկներով: Հորդ անձրևից ամրապատնեշները փլվել էին, նեցուկները՝ ջարդվել, իսկ այն տեղերում, որտեղ շինարարները փորձել էին հատել անկյունները և ուղին կարճել, փլված ապարները փակել էին ճանապարհը: Հորիզոնն արդեն սկսել էր սպիտակել, կարծես մաքրվում էր, բայց արևմտյան քամու սառցաբույր պոռթկումները դեռ երբեմն անձրև էին բերում: Եվ ամեն մի այդպիսի պոռթկումի հետ այդ անուրախ տեղանքով, որի աղոտ ուրվագծերն արդեն ելևում էին փոթորկալի գիշերներին փոխարինող առավոտի մռայլ ու տամուկ մթնշաղից, կարծես դող էր անցնում՝ լեռան վրայի մշուշոտ քաղաքից՝ հովիտներով ու բլուրներով, սևին տվող խոզանների բծերով ծածկված դաշտերով՝ դեպի ցած, դեպի գզգզված ծովը:

Կարելի էր կարծել, թե անձրևն ու քամին ինչ-որ համառ դաժանությամբ այստեղ է ուղարկում երկինքը, որ ատում է այս ամայացած սիցիլիական ծովափերը, որտեղ դեռ

պահպանվել են հնագույն կյանքի խղճուկ մնացորդները. դրանց վրա բարձրանում էր Ջիրջենտին՝ ժամանակակից կյանքից զարմացած. լռին բեկորն անցյալի՝ իր անգործունյա գոյության ունայնության մեջ, անհուսալի աղքատության ամայությամբ: Փշփշոտ, հյութեղ ու ոլորուն կակտուսների դալար ցանկապատերի արանքում, ագավայի ու մոշի չոր թփերի հյուսացանկերի և ճաքճքած, ցածրիկ պատերի արանքում տեղ-տեղ երևում էին թեքված սյուներ, որոնց վրա հազիվ էին դիմանում ժանգոտ վանդակաճաղերը կամ էլ կոպիտ, անզարդ, փոքրիկ մատուռները: Իրենց անշարժ միայնության մեջ, ծառերի պաշտպանության տակ, որոնց ճյուղերի փշերից անձրև էր կաթում, այդ փոքրիկ մատուռները ոչ միայն սփոփանք չէին պարգևում, այլև նույնիսկ ներշնչում էին ինչ-որ սարսափ, թեև այդտեղ բարձրացված էին, որ հավատի մասին հիշեցնեն անցորդներին (մեծամասամբ գյուղացիներ կամ սայլապաններ), որոնք չափազանց հաճախ իրենց բացահայտ կամ թաքցված չարությամբ կարծես հայտնում էին այն մասին, որ մոռացել են հավատը: Երբեմն մի ինչ-որ թշվառ, մոլորված թռչնակ, երկչոտ թափահարելով թաց թևերը, նստում էր այդ փոքրիկ մատուռներին և նայում շուրջը՝ նույնիսկ չհամարձակվելով սրտաճմլիկ ծվծվալ:

Խախտելով (գոնե առաջին տպավորությամբ) այդ վիատության մթնոլորտը, նրա մեջ էր ներխուժում անդադրում, հնչուն խրխինջը սպիտակ զամբիկի, որով գնում էր մի ինչ-որ խեղկատակ՝ կարմիր հեծելաշալվարով և կապույտ կուրտկայով: Սակայն եթե լավ նայենք, ապա կնկատենք, որ զամբիկն էլ անուրախ տեսք ունի. լինելով պառավ և հոգնած, նա ժամանակ առ ժամանակ փնչացնում էր՝ թափահարելով խոնարհած գլուխը, կարծես այլևս ուժ չուներ ցեխ տրորելու, իսկ հեծյալը փաղաքշանքով խրախուսում էր ձիուն: Թեև նրա հագին բուրբոնյան զինվորի վառ համազգեստ էր, բայց նա էլ էր ընկճված, ինչպես իր ձին. ձեռքերը ցրտից կարմրել էին ու փայտացել, և նա ամբողջովին կուչ էր եկել՝ աշխատելով որևէ կերպ պաշտպանվել քամուց ու անձրևից:

— Դե՛հ, դե՛հ, Տիտանա,— և նրա համազգեստային բերետի առաջ կախված ծոպիկը մի կողմից մյուսն էր ճոճվում՝ թշվառ զամբիկի հոգնած քայլերի տակտով:

Եթե դիմացից եկող անցորդները կամ էլ նրանք, որ գալիս էին ծույլ ավանակներով, օտար մարդիկ էին այդ կողմերում, ետ էին նայում զարմացած՝ չիմանալով ինչ մտածել, և կանգնում էին մի ակնթարթ, որ նայեն այդ ծիծաղաշարժ ուրվականին, որ հայտնվեց ցայգի մթնշաղի պատռված մշուշից: Չէ՞ որ նրանք գաղափար անգամ չունեին, որ սինյոր իշխան Իպոլիտո Լաուրենտանոն, ցանկանալով ընդգծել իր ամբարտավան հավատարմությունը Երկու Սիցիլիաների նախկին կառավարությանը, Կոլիմբետրա կալվածքի իր հողերում, որտեղ առանձնացել էր 1860 թվականից, քսանհինգ պահապաններ էր պահում, որ հագնում էին բուրբոնյան համազգեստ:

Անցնելով այդ զարմացած և անտեղյակ մարդկանց մոտով, Պլաչիդո Շարալլան՝ ջոկատի կապիտանը, որ ոտքից գլուխ թրջված էր ու ցեխոտ, չնայած ցրտին ու անձրևին, շտկվում էր և մարտական տեսք ընդունում: Եթե մատուռ էր հանդիպում, նա զինվորական ձևով պատվի էր առնում, հետո խոնարհելով աչքերը, նայում էր խոշոր, սապատավոր քթի տակ ծվարած, ներկած ու դեպի վեր ոլորած, սև, ցանցառ բեղերի ծայրերին (թող անիծված լինեն դրանք) և նորից դառնում էր զամբիկին՝ փաղաքշական խրախուսանքը փոխարինելով հրամայական «դե՛հ, դե՛հ» բացականչությամբ, որին հաջորդում էին սանձի թափահարումն ու թեթևակի խթանումը: Այդ ժամանակ Տիտանան (գրողը տանի նրան՝ հոգնած ու պառավ ձիուն) մեծ մասամբ պատասխանում էր ոչ թե խրխնջոցով, այլ ուրիշ՝ ոչ այնքան պատշաճ ձայներով:

Բայց այդպիսի հանդիպումներ, որ հաճելի էին կապիտանի համար, խիստ հազվադեպ էին պատահում: Հիմա բոլորը գիտեին Կոլիմբետրայի այդ ջոկատի մասին և ծիծաղում էին կամ վրդովվում:

Պապի մոտ՝ Վատիկանում, շվեյցարացիներ են, դոն Իպոլիտո Լաուրենտանոյի տիրույթներում՝ Շարալլան և նրա մարդիկ:

Եվ Շարալլան, որ Կոլիմբետրայի սահմաններում իրեն զգում էր իր տեղում, իսկական կապիտան, կալվածքի սահմաններից դուրս չգիտեր իրեն ինչպես պահի, որ խուսափի ծաղրից ու վիրավորանքներից:

Սկսենք այն բանից, որ նրան ստորացնում էին՝ կոչելով կապրալ: Խելքից-մտքից դուրս բան: Նողկալի խոսք: Անարդարությո՛ւն: Նրա հրամանատարության տակ քսանհինգ զինվոր կա (այո՛, քսանհինգ), և թող մի տեսնեն, թե կապիտանն ինչպես է նրանց սովորեցնում զինվորական գործի գերիմաստություններն ու ճիավարություն: Եվ հետո, ի վերջո, ներեցե՛ք, մի՞թե բոլոր խոշոր կալվածատերերն իրենց հողերում չեն պահում համազգեստավոր դաշտային պահակներ:

Ճիշտ է, իրեն սոսկ դաշտային պահակ համարելը վիրավորական էր Շարալլայի համար. նա սերում էր լավ ընտանիքից և ուներ տարրական դպրոցի ուսուցչի մարմնամարզության դասատուի դիպլոմ: Նա տհաճությամբ էր համաձայնել այդ կոչմանը, սակայն համբերում էր՝ վախենալով, որ ուրիշ, ավելի վատ անուն կտան իր պաշտոնին: Դաշտային պահակ, այո՛: Բայց ոչ թե հասարակ պահակ, այլ դաշտային պահակների պետ:

— Կապրա՞լ եք: Ավա՞գ:

— Պահակապետ, պահակապետ: Ի՞նչ կապ ունի այստեղ կապրալը: Ուրեմն՝ դուք գտնում եք, որ մենք կանոնավոր զորամա՞ս ենք:

— Բայց այդ ի՞նչ է նշանակում: Եվ ինչո՞ւ եք դուք այդպես հագնված:

Շարալլան թոթվում էր ուսերը և կկոցում աչքերը.

— Դե՛, համազգեստ է, էլի՛: Նորին պայծառափայլության քմահաճույքն է, ի՞նչ կարող ես անել:

Ուրիշների՝ ավելի դյուրահավատների հետ ավելի անկեղծ էր խոսում՝ խորհրդավոր տեսքով հայտնելով, որ իշխանի հայացքները նկատի ունենալով, նրան անվստահությամբ է վերաբերվում իտալական այժմյան կառավարությունը, որը, ինքներդ էլ եք հասկանում, բնավ չի վշտանա, եթե իմանա, որ նրան կողոպտել են և անգթորեն սպանել. ահա թե ինչու են իշխանի համար անհրաժեշտ գյուղական առանձնացումը և պահակախումբը, որի գլխին պետ է կարգված ինքը՝ անարժան Շարալլան: Այնուամենայնիվ, չպարզված էր մնում այն հարցը, թե ինչո՞ւ պետք է բոլորի համար ատելի համազգեստներ հագցնել այդ պահակներին:

— Իսկևիսկ դահիճ,— ի պատասխան շատ անգամներ էր լսել թշվառ Շարալլան, որն այդ ժամանակ ոչ առանց դառնության մտածում էր, թե իր Կոլիմբետրայում փակված իշխանի համար հեշտ է այդպիսի արժանապատվությամբ ու համառությամբ պահպանել բողոքի հպարտ կեցվածքը՝ այն դեպքում, երբ ինքն ու իր ենթակաները ստիպված են դուրս գալ կալվածքի սահմաններից և բացատրվել բոլորի հետ:

Երբ որևէ մեկի հետ մենակ էր մնում, Շարալլան իզուր էր աստծու անունով երդվում, որ Բուրբոնների ժամանակ ինքը երբեք չէր հագնի այդ համազգեստը՝ այն ժամանակվա բռնապետության խորհրդանշանը, հայրենիքի ստրկացման խորհրդանշանը, և, ձեռքերը թափահարելով, ավելացնում էր.

— Իսկ հիմա, պարոններ, բանը բոլորովին ուրիշ է: Հիմա դուք եք տերերը... Միայն թե ինձ հանգիստ թողեք: Դուք, ի՞նչ է, լո՞ւրջ եք խոսում:

Այդ մարդիկ ուզում էին՝ ինչ գնով էլ լինի, տանջել նրան՝ ձևանալով, թե չեն հասկանում, որ համազգեստը, որ կրում է նա, դեռ ինքը չէ, որ համազգեստի տակ կա մարդ, որը մյուս բոլորի նման ստիպված է վաստակել իր հացը՝ ամեն մի միջոցով, թեկուզև խոզային: Շարալլան նայում էր շուրջը, բարեհաճ ժպտում, ցույց տալիս, թե իրեն շատ են հետաքրքրում ուրիշների գործերը, և դրանով փորձում էր՝ որքան հնարավոր է, նրանց ուշադրությունը շեղել իր համազգեստից: Հետո՝ այդ բոլոր հնարանքներից ու ծամածռություններից հետո, նա մոլեգնորեն զայրանում էր ինքն իր վրա, որովհետև՝ եթե նրա զգեստին նայենք առանց կանխակալ մտքերի, ապա, ճշմարիտն ասած, այն թերևս նույնիսկ գեղեցիկ է և իսկապես

սազում է նրան. և նա գրեթե պատրաստ էր ամաչելու, որ ստիպված է ձևացնել, թե այդ համազգեստը կրելու անհրաժեշտությունը ճնշում է իրեն:

Շարալլան լսել էր, որ մայրցամաքից եկած ինչ-որ աստիճանավոր՝ մորուքավոր ու մաղձոտ, Ջիրջենտիում, ձեռքերը մոլեգնաբար թափահարելով, հայտարարել է, թե Իտալիայի որևէ այլ մարզում և նույնիսկ, գուցե, Սիցիլիայի որևէ այլ գավառում, բացի Ջիրջենտիից, ոչ ոք չէր հանդուրժի այդպիսի անպարկեշտություն, այդպիսի հանդգնություն, այդպիսի ակնհայտ վիրավորանք՝ հասցված հեղափոխության փառքին, կառավարությանը, քաղաքակրթությանը: Չէ՞ որ դա այնպիսի՛ բան է, այնպիսի՛ բան է... Նա չի ցանկացել ասել, թե դա ինչ բան է և ինչպիսի, բայց ինչ-որ արտահայտիչ շարժում է արել մատներով:

Բայց, տե՛ր իմ աստված, ինչո՞ւ այդքան արհամարհանք ու հակակրանք կա այդ բուրբոնյան համազգեստի նկատմամբ, որ կրում են մի ինչ-որ քսանհինգ հոգի: Այդ քննադատների համար ավելի լավ չէ՞ր լինի ուշադրություն դարձնել պարոն սինդակոյի, պարոնայք ատենակալների, քաղաքային ու գյուղական խորհրդականների վրա, որոնք՝ զուգված ու փքված, շարունակ հայտնվում են Կոլիմբետրայում՝ իրենց հարգանքը հավաստելու նորին պայծառափայլություն իշխան Լաուրենտանոյին, որ նրանց ընդունում է իր վիլլայում, ինչպես արքան իր թագավորությունում: Էլ չենք խոսում բարձրագույն հոգևորականության մասին՝ մոնսինյոր եպիսկոպոսի գլխավորությամբ. պարզ բան է, որ մոնսինյոր եպիսկոպոսը ամենահարմար դաշնակիցն է այնպիսի լեգիտիմիստի համար, ինչպիսին նորին պայծառափայլությունն է:

Այդպիսի այցելությունների ժամանակ Շարալլան հպարտությունից փքվում էր, և նրա համար չկար ավելի հաճելի բան, քան ամեն անգամ կանգնել ձգված և հրացանով պատվի առնել: Երբ գալիս էր մոնսինյորը կամ սինդակոն, ժամապահը, չհեռանալով դարպասից, կանչում էր հարևան պահակետի անձնակազմը, և այստեղ առաջին անգամ զինվորական պատիվներ էին տալիս բոլոր կանոնների համաձայն՝ այնպես, որ բարձր շրխկան հրացանների խզակոթերը, որ կտրուկ բարձրացնում էին և հետո դնում ոտքի մոտ. երկրորդ անգամ՝ մյուս ժամապահի կանչով, որ կանգնում էր շքամուտքի մոտ, նույն արարողությունը կատարում էին շքամուտքի կամարների տակ: Շարալլան և նրա ստորադրյալները այդպիսի չնչին աշխատանքի համար չափազանց բարձր ռոճիկ էին ստանում, դրա համար էլ, ամեն տեսակի առիթներից օգտվելով, ձգտում էին ցուցադրել իրենց ջանասիրությունը. նրանց գրեթե ամենակարևոր գործը հենց այդ զինվորական ողջույններն էին, որ բավական հաջողությամբ օգնում էին նրանց՝ ազատվելու այն ստորացուցիչ գիտակցությունից, որ իրենց շքեղ համազգեստներով հանդերձ՝ իրենք, ըստ էության, իսկական ձրիակերներ են: Բարձրաստիճան հովանավորների այդպիսի քանակության դեպքում Շարալլան թերևս կարող էր արհամարհել չնչին մարդուկների ծաղրը, եթե բոլոր սնափառ մարդկանց նման նա էլ համառորեն չձգտեր, որ ամենուր իրեն վերաբերվեն սիրալիր ու բարեհաճ և համապատասխան ձևով ընդունեն: Նա այդպես էլ չկարողացավ սովորել՝ ծիծաղել ուրիշների ծաղրանքի վրա. բացի այդ, վերջին ժամանակներս նրան բավական շփոթեցնում էր մի ուրիշ հանգամանք:

Ամբողջ երկրամասում տարածվել էր և հետզհետե ավելի ու ավելի էր հաստատվում այն լուրը, թե Սիցիլիայի քաղաքների և խոշոր գյուղերի բանվորները և հատկապես ծծմբահանքերի բանվորները, որ ապրում էին կղզու ներքին մասերի խոշոր ավաններում, մտադիր են միավորվել կորպորացիաներում կամ, ինչպես դրանք կոչում էին, «Աշխատավորների միություններում», որպեսզի ապստամբեն ոչ միայն պարոնների դեմ, այլև ընդհանրապես ամեն տեսակի օրենքների դեմ և, ինչպես պնդում էին, ավերել ամեն ինչ:

Նախասենյակում հերթապահելիս Շարալլան շատ անգամներ է լսել, որ այդ մասին են զրուցում հյուրասենյակում: Ինքնին հասկանալի, որ իշխանը ամեն ինչի համար մեղադրում էր բռնատերերի կառավարությանը. նրանք իրենք են կղզու բնակչությանը հրապուրել ազատության լուսապսակով, իսկ հետո հարկերով ու հանցագործ կամայականությամբ հասցրել են սովի դուռը: Բոլորը պաշտպանում էին իշխանին, բայց Շարալլային թվում էր, որ մոնսինյոր եպիսկոպոսն ամենից լավ է տեսնում, թե որն է ամենամեծ դժբախտությունը:

Նոր կառավարության գործած իսկական չարիքը՝ ամենամեծ չարիքը ոչ այնքան իշխանության զավթումն էր, որի պատճառով, լիակատար հիմք ունենալով, արյուն էր կաթում նորին պայծառափայլություն իշխան Լաուրենտանոյի սրտից: Միապետները, քաղաքական և սոցիալական սահմանակարգերը՝ այդ ամենը ժամանակավոր են, անցողիկ. լավ չէ, իհա՛րկե, մարդկանց զրկել դիրքից և գոյության միջոցներից, եթե մարդիկ առաքինի են և ոչ մի բանում մեղավոր չեն: Այդ չարիքը դեռ կարելի է ուղղել: Բայց շատ ավելի վատ չէ՞՝ խլել մարդկանցից կամ էլ մթագնել նրանց գիտակցության մեջ այն, ինչ պետք է հավետ բոցկլտար նրանց հոգիներում՝ հավատը, կրոնը: Իսկ նոր կառավարությունը հենց այդ էլ արել է: Եվ ինչպե՞ս կարող է տառապած ժողովուրդը այդ բոլոր կենսական դառնությունների մեջ հանգիստ մնալ, եթե հավատը չի օգնում նրան՝ իր ճակատագիրն ընդունելու խոնարհ և նույնիսկ ուրախ՝ որպես խոստում ու ապացույց հանդերձյալ կյանքում ստանալիք պարգևի: Իսկ եթե կյանքը միայն մե՞կն է: Հենց սա: Եվ բոլոր տառապանքների դիմաց, նույնիսկ եթե դրանք տանում ես համբերությամբ, ոչ մի պարգև չի լինի այն աշխարհում: Այդ դեպքում էլ ի՞նչ իմաստ ունեն հնազանդվելն ու համբերելը: Ա՛յ, հենց այդ սողանցքով էլ թափանցում է մարմնական ստոր տռփանքները այստեղ՝ երկրում, բավարարելու բնազդական, անասնական ձգտումը:

Ճիշտ էր ասում մոնսինյորը: Այո՛, այո՛, հենց սա է բոլոր դժբախտությունների իսկական պատճառը: Եվ մոնսինյորի հետ, որը հարուստ էր և քիչ էր տառապել կյանքի հարվածներից, Շարալլան էլ կուզենար, որ բոլոր աղքատները լավ հասկանային այդ պատճառը: Բայց նա ոչ մի կերպ չէր կարողանում մոռանալ ծեր մուրացկանին, որը վարդարանը ձեռքին մոտեցավ վիլլայի ցանկապատին՝ ողորմություն խնդրելու և, զգալով, թե ինչպես է իր փորը գոռգոռում, տխուր ժպիտով ասաց.

— Լսո՞ւմ ես: Այդ ես չեմ քեզ ասում: Ինքը՝ փորս է ասում, որ սոված է:

Մի խոսքով, լուրջ վտանգ է կախվել պարոնների գլխին, բայց իշխանն այնտեղ՝ իր հյուրասենյակում, կարծես մարտահրավեր էր նետում այդ վտանգին, և դրանից միայն աճում էր Շարալլայի վիատությունը: Իշխանը, իհա՛րկե, լի է ինքնավստահությամբ և, բացի այդ, հույս է դնում իր մարդկանց նվիրվածության վրա, նրա համար բավական է հայտարարել, որ ինքն անձամբ ոչնչից չի վախենում, իսկ մնացած ամեն ինչի համար թող հոգան ուրիշները:

Դեռ բախտ է, որ այստեղ՝ Ջիրջենտիում ոչ մի խռովություն չի եղել, և ոչ ոք նույնիսկ չի պատրաստվում խռովության: «Մեռյալ երկրամաս»: Ճիշտ է, չար լեզուներն ասում են, թե այստեղ տիրություն են անում սև ագռավները, այսինքն՝ հոգևորականները: Թախծալի անգործունեությունը, անտարբերությունը չարի ու բարու նկատմամբ արմատավորված էին իրենց ճակատագրի հանդեպ մարդկանց խորագույն անհավատության մեջ, այն համոզման մեջ, որ ոչինչ չի կարող կատարվել, և չարժե ջանք թափել՝ փորձելու համար թոթափել հուսահատությունն ու վիատությունը, որոնց մեջ թաղվել էին ոչ միայն մարդկային հոգիները, այլև շուրջը ամեն ինչ:

Եվ Շարալլային թվում էր, թե այս ամենը ակնհայտորեն հաստատվում է այն թախծալի տեսարանով, որ այդ առավոտ նրա աչքերի առաջ բացեց ճանապարհի երկու կողմերում փռված հարթությունը:

Շարալլան արդեն անցել էր ճանապարհի մի մասը, որ ձգվում էր բլուրների երկար շարքի զառիթափ լանջերի երկարությամբ, որոնց վրա բարձրանում են հին Ակրագանտի տաճարների նրբակերտ ու հոյակապ ավերակները . այստեղ մի ժամանակ վեր էին խոյանում վաղո՛ւց-վա-ղո՛ւց անհայտացած քաղաքի Ոսկե դարպասները: Հիմա Շարալլան անվստահ մանրավարգով իջնում էր լանջն ի վար՝ այն ճանապարհով, որ տանում էր դեպի Սանտ-Աննա հովիտը. այնտեղ քարերի վրա տեղ-տեղ փրփրելով, վազում էր ծանծաղ, ամռանը ցամաքող մի գետակ՝ հնում Հիպսաս, այժմ՝ Դրագո, որ ճահճատենդի բույն էր, որից տառապում էր ողջ շրջական: Դաբաղման փոսերում, որ փորված էին փշփշոտ մացառների և ցամաքող հունի քարերի մեջ, լճանում էր ջուրը: Գետակը, որ բուռն էր ու պղտոր

գիշերային տեղատարափից հետո, այսօր առավոտյան ողողել էր ցածրիկ կամուրջը, որով ամառներն անցնում էին ցամաքած հունի ավազի և գետաքարերի վրայով:

Եվ թվում էր, թե ինքը՝ այդ աղքատիկ հողը, որ նզովված էր կարիքով իրեն շղթայված, տենդից հյուսված ու դեղնած գյուղացիների կողմից, հիմա արշալույսի աղոտ լույսի մեջ սփռում է ինչ-որ տանջալից ճնշվածության զգացում, որ համակում է նույնիսկ այդտեղի հատուկենտ ծառերին, մի քանի հարյուրամյա ձիթենիներ, մի քանի նշենիներ, որ աշնանային առաջին քամիներից կմախքների էին վերածվել:

— Ա՛յ թե տեղատարափ էր, հա՛, շտապելով ասում էր կապիտան Շարալլան հանդիպող ծանոթ գյուղացիներին և սայլապաններին, որ կանխի կատակներն ու վիրավորանքները, և խթանում էր թշվառ Տիտանային:

Ի դեպ՝ այսօր նա պատահական չէ, որ ընդգծում էր անցած տեղատարափը: Ընթանալով մանրավարգով և նայելով երկնքով վազող ցածր, սև գզուզ ամպերին, նա մտածում էր հենց անձրևի մասին, որ որևէ արդարացում գտնի իր խղճի առաջ, քանի որ չէր կատարել կտրուկ հրամանը, որ նախորդ օրը երեկոյան ստացել էր իշխանի քարտուղարից՝ նամակն անհապաղ տանել դոն Կոսմո Լաուրենտանոյին՝ դոն Իպոլիտոյի եղբորը, որը նույնքան մեկուսի ապրում էր մյուս կալվածքում՝ Վալսանիայում, որը մոտավորապես չորս մղոն հեռու էր Կոլիմբետրայից: Շարալլան սիրտ չարեց ճանապարհվել այդքան ուշ ժամին և այդպիսի գարշելի եղանակին: Նա մտածեց, որ ծերունի Լիզի Պրեոլան՝ իր սրիկա որդու հետ, որը համառորեն ձգտում է պահակապետ դառնալ, հենց միայն այն մասին է երազում, թե ինչպես իրեն՝ Շարալլային, այն աշխարհն ուղարկի. այնինչ այդ նամակը գուցե բոլորովին էլ չէր պահանջում, որ նա այդպես շտապեր՝ վիզը կոտրելու վտանգին ենթարկվելով այդ սատանայի ճանապարհին՝ խավարում, տեղատարափ անձրևի, կայծակի բռնկումների և ամպրոպի որոտի տակ: Ի վերջո նա կարող էր սպասել լուսաբացին և այն ժամանակ արդեն աննկատելիորեն ճանապարհ ընկնել՝ այդ երեկո չզրկելով իրեն Սպերոնեի զառիթափի վերևի փոքրիկ զորանոցում մի պարտիա բրիսկոլա խաղալու հաճույքից: Այնտեղ նա և իր երեք օգնականները հերթապահեցին ամբողջ գիշերը՝ երեք ժամը մեկ պահակետում փոխարինելով իրար:

Կապիտան Շարալլան միշտ էլ առանց մի առանձին բավականության էր թողնում Կոլիմբետրան. իսկ ուղևորությունը Վալսանիա իսկական ճանապարհորդություն էր, դրան ավելացրած նաև այն, որ այնտեղ ամեն անգամ ստիպված էր լինում համբերությամբ տանել Մաուրո Մորտարա անունով ծերունու ատելությունը, ծերունի, որն իսկական խրտվիլակ էր շրջակայքի բոլոր բնակիչների համար: Օգտվելով դոն Կոսմոյի բարեհոգությունից, որը բոլորովին ցնդել էր իր փիլիսոփայական գրքույկների պատճառով, նա իրեն տեր էր զգում և իրենից վեր ոչ մի իշխանություն չէր ճանաչում:

— Դե՛հ, դե՛հ, Տիտանա,— հառաչում էր Շարալլան ամեն անգամ, երբ նրա երևակայության մեջ հայտնվում էր ծերունու կերպարանքը՝ ցածրահասակ, փոքր-ինչ կորացած, առանց կուրտկայի, կարմիր վանդակներով՝ բաց մանուշակագույն, բրդե կոպիտ բլուզով, որի կոճակներն արձակված էին՝ բացելով մազոտ կուրծքը, ահագին բրդոտ փափախով, որ ինքն էր կարել գառան մորթուց. կոշտանալով քրտինքից, այդ փափախը դեղին էր ներկել նրա երկար մազափնջերը և կողքերից՝ նաև չսանրված, ճերմակ մորուքը: Նրա տեսքը և՛ ծիծաղելի էր, և՛ մի տեսակ սարսափելի. երկու խոշոր ատրճանակները նրա գոտու տակ խրված էին մնում նաև գիշերները, որովհետև նա քնում էր ծղոտե ներքնակի վրա, առանց հանվելու, մի չորս-հինգ ժամ: Յոթանասունյոթ տարեկան հասակում Մաուրո Մորտարան քսանամյա պատանուց առույգ էր և ամրապինդ:

— Մահ էլ չունի,— փնթփնթաց Շարալլան:— Գրողը տանի: Նրան էլ ի՞նչ է հարկավոր: Քանի տարի է ծառայում է իշխանների մոտ, նրան ընդունում են արդեն որպես ընտանիքի անդամի, նույնիսկ ինքը՝ դոն Իպոլիտոն. իսկ դրանով ամեն ինչ ասված է: Դոն Կոսմոյի հետ նա գրեթե «դու»-ով է խոսում:

Եվ, շարունակելով իր ճանապարհը, Շարալլան հիշում էր զարմանալի արկածներն այդ մարդու, որը քառասունյոթ թվականին իշխանի հոր՝ դոն Ջերլանդո Լաուրենտանոյի հետ աքսոր գնաց Մալթա կղզին: Երբ ինչ-որ սկանդալի պատճառով Նեապոլյան արքունիքում Ջերլանդոն զրկվեց Ոսկե բանալիով սենեկապետի կոչումից և քաշվեց Վալսանիա, նա ամենից շատ կապվեց Մաուրոյի հետ՝ աղքատ գյուղացու որդու, որն այդ ժամանակ մի հասարակ հովիվ էր:

Ամենից հաճախ Պլաչիդո Շարալլայի մտքերը վերադառնում էին մի դեպքի, որի պատճառով Մորտարային կոչեցին Վանական: Դա վաղեմի ժամանակներում էր, դեռ քառասունութ թվականից առաջ , երբ Վալսանիայում ծեր իշխանի շուրջը, որը նեապոլյան սկանդալից հետո այրվում էր վրեժից, գաղտնի հավաքվում էին հեղափոխական կոմիտեի անդամները, որ գալիս էին Ջիրջենտիից: Այդ ժամանակ ոմն ֆրանցիսկյան վանականի գլուխը մի չարաբաստիկ միտք եկավ՝ ծածուկ մտնել իշխանի կալվածքը՝ եկեղեցու համար նվիրատվություն խնդրելու: Չգիտես ինչու, Մորտարան նրան դրեց լրտեսի տեղ և առանց ձևականությունների բռնեց, կապեց, կախեց ծառից և այդպես թողեց ամբողջ մի օր. գիշերը կապանքներն արձակեց և բաց թողեց նրան, բայց վանականը այդպես էլ չապաքինվեց ապրած երկյուղից և շուտով մեռավ:

Այդ պատմությունը Շարալլան մյուսներից ավելի վառ էր հիշում ոչ միայն այն պատճառով, որ այդտեղ Մաուրո Մորտարան երևում էր այնպես կատաղի, ինչպես Շարալլան սիրում էր պատկերացնել նրան, այլև նրա համար, որ ծառը, որից կախված էր ֆրանցիսկյան վանականը, դեռ բարձրանում էր կալվածքի մուտքի մոտ, և Մաուրոն առիթը բաց չէր թողնում ցույց տալու այն՝ իր ձեռքի շարժումն ուղեկցելով չար քմծիծաղով ու գլխի թեթև շարժումով և զզվանքով էր նայում Շարալլայի բուրբոնյան համազգեստին:

— Դե՛հ, դե՛հ, Տիտանա:

Ի՞նչ արած, հարկ էր լինում լռությամբ տանել ծերունու կոպտություններն ու կշտամբանքները: Չէ՞ որ նա էլ կյանքում քիչ փորձանքների ու վտանգների չի ենթարկվել, բայց բախտն ինչպե՞ս է բերել: Նա սպասարկում էր դոն Կոսմոյին, որը երբեք ոչ մի բանով չի հետաքրքրվել, բացի իր գրքույկներից, որոնց պատճառով ամբողջ օրերով թափառում էր Վալսանիայում, ինչպես քնի մեջ:

Ինչքան տարբեր են իր՝ Շարալլայի տերն ու դոն Կոսմոն: Եվ ինչքան տարբեր են երկու եղբայրն էլ իրենց քրոջից՝ դոննա Կատերինա Աուրիտիից, աղքատ այրուց, որ բնակվում է Ջիրջենտիում:

Շատ տարիներ առաջ երեքն էլ իրարից խզել են իրենց կապերը:

Միայն դոննա Կատերինան էր բաժանում հոր նոր հայացքները: Բացի այդ, գտնում էին, որ դեռ ջահել աղջիկ ժամանակ նա արատավորել է ընտանիքի պատիվը՝ տանից փախչելով Ստեֆանո Աուրիտիի հետ, գարիբալդիականի, որն սպանվեց Միլացցոյի ճակատամարտում, որտեղ նրա և Մորտարայի կողքին կռվում էր նրա որդի Ռոբերտոն՝ մի տղա, որի տասներկու տարին նոր էր լրացել. նա ամենափոքրն էր Հազարի ջոկատում: Լիովին հասկանալի է, որ իշխանը չէր կարող հաշտվել այդպիսի քրոջ հետ: Բայց ինչո՞ւ չհաշտվել դոն Կոսմոյի հետ: Չէ՞ որ նա, գոնե բացահայտ, չէր պատկանում ոչ մի կուսակցության: Ի դեպ՝ գուցե դոն Կոսմոն ինքն էլ հավանություն չէր տալիս ավագ եղբոր ընդդիմությանը նոր կառավարության հանդեպ: Այդ երկուսից ո՞րն է իրավացի: Հայրը լիբերալ դառնալուց առաջ Բուրբոնների կողմնակիցն էր, Ոսկե բանալիով սենեկապետ. զարմանալի ի՞նչ կա այն բանում, որ ավագ որդին, դավաճան համարելով հորը, մնացել է հին կարգերին հավատարիմ: Օ՛, նա նույնիսկ հարգանք է վաստակել այդպիսի հաստատամտության համար, հարգանք ու պատիվ, և եթե նա կամենում է, որ իր մտածելակերպի մասին կարելի լինի գլխի ընկնել նույնիսկ իր մարդկանց համազգեստներից, դրան առարկելու բան չկա: Այո՛, սինյորներ, ես Բուրբոնների կողմնակիցն եմ: Եվ քաջություն ունեմ պաշտպանելու իմ համոզմունքը:

Այստեղ կապիտան Շարալլայի ուսին դիպավ ինչ-որ մեկի նետած հողակոշտը, ապա լսվեց բարձր քրքիջ:

Կապիտանը վեր թռավ թամբի վրա և կատաղի շրջվեց: Բայց ոչ ոք չէր երևում: Հողաթմբի հյուսացանկի ետևից ինչ-որ մեկը ծաղրանքով ու դանդաղ-դանդաղ երգեց.

Շարալլինո, Շարալլինո,

Ո՞ր դարից ես դու հայտնվել՝

Քո հնօրյա գոռոզությամբ,

Հալից ընկած քո զամբիկով,

Շարալլինո՛, Շարալլինո՛:

Կապիտանը ճանաչեց Մարկո Պրեոլայի՝ այդ սրիկայի, իշխանի քարտուղարի որդու ձայնը և զգաց, թե ինչպես սկսեց փոթորկվել իր ամբողջ արյունը: Այդ նույն ակնթարթում նրա առաջ կանգնեց ինքը՝ երիտասարդ Պրեոլան, բայց այնպիսի տեսքով, որ Շարալլայի բարձրացած հոնքերը նետվեցին մինչև բերետը, իսկ շրթունքները, որ մինչ այդ կատաղությունից սեղմված էին, զարմանքից բացվեցին:

Պրեոլան իսկի մարդու նման էլ չէր. կարծես կնքված քրիստոնյա չլիներ, այլ իսկական խոզ, որ նոր է դուրս եկել ցեխաջրի լճակից ու կանգնել ետևի ոտքերի վրա՝ գզգզված և ցեխի մեջ կորած: Հարբածի նման իրանը ետ գցած և ոտքերը լայն դրած՝ Պրեոլան հողաթմբին կանգնած շարունակեց արտասանել՝ ձեռքերը թափահարելով.

Դոն Կիխոտիկ Շարալլինո,

Դու բոլորին կտապալես,

Հողմաղացը քեզ տեսնելով՝

Կսարսափի ահեղ տեսքից:

Այս ի՛նչ պատկեր է գրավիչ,

Այս ի՛նչ կուրտկա է երկնագույն

Եվ ինչ շալվար՝ կարմի՛ր-կարմի՛ր,

Շարալլինո՛, Շարալլինո՛:

— Ախ, այդ դո՞ւ ես, թանկագինս,— քրթմնջաց Շարալլան՝ աշխատելով հնար գտնել և պոկել մեջքին կպած ցեխագունդը:

Մարկո Պրեոլան նստած ցած սահեց հողաթմբից և մոտեցավ նրան:

— Թանկագի՞նս: Ո՛չ,— ասաց նա,— ես էժան եմ ծախվում: Ոտանավորս քեզ դո՞ւր եկավ: Լա՛վն է: Ես շարունակությունն էլ ունեմ: Հաջորդ կիրակի կտպագրեմ «Էմպեդոկլեում»:

Որոշ ժամանակ կապիտան Շարալլան չէր շարժվում՝ նայելով նրան արդեն ուրիշ հայացքով, խղճահարության ու նողկանքի ծամածռությամբ: Նա գիտեր, որ Մարկոն ընկնավորության նոպաներ է ունենում, հաճախ շրջում է գիշերները, թափառիկ շան նման կորչում երկու-երեք օրով, իսկ հետո նրան գտնում են ինչ-որ տեղ՝ Կուլմո-դելե Ֆարկեում կամ Սերրա

Ֆելուչչոյում, կամ էլ՝ պարզապես դաշտում. ընկած է լինում լեշի նման՝ դեմքը թաղած հողի մեջ, իսկ բերանը՝ փրփուրի մեջ կորած: Շարալլան տեսավ նրա ուռած դեմքը, աջ այտի երկար, մուգ կարմիր սպին, որ ձգվում էր աչքից մինչև բերանը, տեսավ բաց գույնի ցանցառ մազերը շրթունքի վրա և կզակին. նայեց նրա գունաթափ ու ճարպոտված փոքրիկ գլխարկին, որը չէր կարողանում ծածկել նրա կեղտոտ, վաղաժամ ճաղատը. նկատեց, որ նրա թարթիչներն էլ են թափվել, բայց չէր կարողանում տանել լկտի հայացքը այդ բաց գույնի, կանաչավուն աչքերի, որոնք կարծես լեփ-լեցուն էին ամեն տեսակ արատներով: Արտաքսված լինելով Մոդենայի զինվորական ուսումնարանից, Պրեոլան մոտ մի տարի աշխատել էր Հռոմում՝ մի բուլվարային թերթուկի խմբագրությունում, ութ ամիս բանտ էր նստել ու փորձել էր ինքնասպանություն գործել՝ ցած նետվելով Տիբերի կամուրջից: Երբ հրաշքով փրկվել էր, նրան հարկադրական կարգով ուղարկել էին հայրենիք, և հիմա ապրում էր Ջիրջենտիում, հոր միջոցներով:

— Քեզ ի՞նչ է պատահել,— հարցրեց նրան Շարալլան:

Պրեոլան նայեց իր ցեխոտված շորերին և սառը քմծիծաղով պատասխանեց.

— Ոչինչ: Մի քիչ դաս տվեցին:

Եվ Պրեոլան մի շարժում արեց, որ նշանակում էր, թե իրեն խփել են բռունցքով ու գետին տապալել: Հանկարծ, փոխելով դեմքի արտահայտությունը, նա բռնեց Շարալլայի արմունկը և գոռաց բոլորովին ուրիշ տոնով.

— Տո՛ւր նամակը: Ես գիտեմ, որ քեզ մոտ է:

— Դու ի՞նչ է, խենթացա՞ր,— կտրուկ մի կողմ թեքվելով, բացականչեց Շարալլան:

Պրեոլան գրգռիչ ծիծաղեց.

— Ես միայն հոտ կքաշեմ նամակից: Հապա մի դուրս քաշիր: Նրանից պիտի հարսանեկան կոնֆետների հոտ գա: Անասո՛ւն, դու չգիտե՞ս, որ քո տերն ամուսնանում է:

Շարալլան ապշած նայեց նրան.

— Իշխա՞նը:

¬— Այո-ս, նորին պայծառափայլությունը: Չե՞ս հավատում: Գրազ կգամ, որ նամակում խոսքը հենց այդ մասին է: Իշխանը եղբորը հայտնում է առաջիկա հարսանիքի մասին: Մի՞թե դու չես տեսել մոնսինյոր Մոնտորոյին: Հենց նա է խնամախոսը:

Իսկապես, վերջին օրերին մոնսինյոր Մոնտորոն սկսել էր հաճախ այցելել Կոլիմբետրա: Մի՞թե դա ճիշտ է:

Շարալլան վճռականապես հրաժարվում էր հավատալ այդքան ֆանտաստիկական լուրին՝ այդքան անհեթեթ իրադարձության մասին, բայց հանկարծ պատկերացրեց հոյակապ տոնակատարությունները, ուրախ աշխուժությունը այդ դաժան ու մռայլ ապաստանում. հույս ծագեց, որ նվերներ կստանա ջոկատի գերազանց կեցվածքի, անբասիր ծառայության համար, որով կփայլի ինքը... Բայց իշխանը... Մի՞թե հնարավոր է: Այդքան լուրջ մարդը... և այդ տարիքում: Եվ մի՞թե կարելի է հավատալ Պրեոլային:

Փորձելով թերահավատ ժպիտով քողարկել իր զարմանքն ու հետաքրքրությունը, Շարալլան հարցրեց.

— Իսկ ո՞ւմ հետ է ամուսնանում:

— Նամակը կտաս՝ այն ժամանակ էլ կասեմ,— պատասխանեց Պրեոլան:

— Ինչպես չէ, կստանաս: Դե հիմա չքվիր:

Ես քեզ լավ հասկացա: Եվ Շարալլան ամբողջ մարմնով ընկավ զամբիկի վզին, որ նրան ստիպի տեղից շարժվել:

— Սպասի՛ր,— ճչաց Պրեոլան՝ բռնելով Տիտանայի պոչից:— Ես թքել եմ հարսանիքի վրա և այն բանի, որ դու ինձ չես հավատում: Պարզապես, գուցե նամակում որևէ բան կա ընտրությունների մասին: Ես ուզում եմ իմանալ՝ արդյոք իշխանը եղբորը չի՞ գրում այն մասին, որ իրենց զարմիկը առաջարկել է իր թեկնածությունը: Դու նույնիսկ դա՞ չգիտես: Չգիտե՞ս, որ Ռոբերտո Աուրիտին՝ «տասներկուամյա հերոսը», իր թեկնածությունն է առաջարկել որպես պատգամավոր:

— Ես ոչինչ չգիտեմ: Ո՞վ է այդ մասին մտածում,— ասաց Շարալլան:— Մի՞թե մենք պատգամավոր չունենք: Մեծապատիվ սինյոր Ֆացելլոն:

— Ճիշտ եմ ասում, որ դուք ձեր Կոլիմբետրայում ապրում եք ժամանակից դուրս,— քմծիծաղ տվեց Պրեոլան:— Մեզ մոտ՝ համընդհանուր ընտրություններ են, իսկ Ֆացելլոն, այդ ավանակը, որդու մահվան պատճառով հրաժարվել է առաջադրել իր թեկնածությունը:

— Որդո՞ւ: ՉԷ՞ որ նա ամուրի է:

Եվ Պրեոլան դարձյալ լկտիաբար ծիծաղեց.

— Իսկ մի՞թե ամուրին և նույնիսկ հոգևոր անձը չի կարող երեխա ունենալ: Բթամիտ: Մեզ մոտ Աուրիտին կլինի, նա կառավարության թեկնածուն է, իսկ նրա դեմ՝ փաստաբան Կապոլինոն: Դաժան մարտ կլինի, մեծ պայքար... Տո՛ւր նամակը:

Շարալլան խթանեց Տիտանային և ակնթարթապես ազատվեց Պրեոլայից: Սա, ի հատուցումն, երկու անգամ քար նետեց նրա վրա և պատրաստվում էր նետել երրորդ անգամ, երբ ոլորանի ետևից լսվեց զայրալից մի ձայն.

— Է՛յ, գրողը տանի: Այդ ո՞վ է քարեր նետում:

Իսկ մյուս ձայնը, որ ակնհայտորեն ուղղված էր հեռացող Շարալլային, գոռաց.

— Ամաչի՛ր: Խեղկատա՛կ: Տգե՛տ: Ծաղրածո՛ւ:

Ոլորանի ետևից, ծածկված կանաչ հովանոցի տակ, երևացին թրջված ու տանջահար երկու անբաժան բարեկամները՝ Լուկա Լիցիոն և Նոչո Պինյան կամ, ինչպես վերջերս կոչում էին նրանց, Պրոպագանդան և Ընկ.: Մեկը ձողի նման երկարահասակ էր, գունատ ու թավամազ, ակնոց էր կրում, որ շարունակ ցած էր սահում քթից. նա ամբողջովին կուչ էր եկել ցրտից՝ բարձրացնելով ամառային պիջակի օձիքը: Մյուսը մի անճոռնի գաճաճ էր՝ ծռված ողնաշարով, նրա մի ձեռքը կախված էր գրեթե մինչև գետին, մյուսը հենվում էր ծնկին, որ հեշտությամբ պահի հավասարակշռությունը:

Դրանք երկու տեղական հեղափոխականներ էին:

Կապիտան Շարալլան իրավացի չէր, երբ մտածում էր, թե Ջիրջենտիում ոչ ոք չի փորձում առաջ շարժվել:

Այդ երկուսը՝ Լիցիոն ու Պինյան, շարժվում էին:

Ճիշտ է, այս առավոտ իրենց ծածկված հովանոցի տակ երկուսն էլ այնպես թրջված էին ու ցեխոտ, որ նրանց հեղափոխական գաղափարները այնքան էլ վտանգավոր չէին թվում:

Ոչ ոք չէր կարող այդ բանն ավելի լավ հասկանալ, քան Մարկո Պրեոլան, որն արդեն վաղուց դիպվածի կամքին էր հանձնել իր կյանքը՝ ավելի քիչ իմաստ տեսնելով նրա մեջ, քան շրջապատի մարդիկ: Կորցնելով մտերմական կապերն ու հավատը որևէ բանի նկատմամբ, նա վաղուց էր ազատագրվել ոչ միայն ամեն տեսակի սկզբունքներից, այլև ամեն տեսակի սովորություններից, բայց դրա փոխարեն տրվում էր ամեն մի անսպասելի և կրքոտ քմահաճույքի, ամեն ինչ համարում էր ծիծաղելի և ունայն, ծաղրում էր ամեն ինչ և ամենքին՝

այդ ծաղրանքների մեջ թեթևացում գտնելով իր դաժանացած հոգու ոչ արտակարգ, բայց և ճնշված եռանդի համար:

Նա գիտեր, որ երեք օր առաջ այդ երկուսը եղել էին Պորտո-Էմպեդոկլեի ծովայինների մոտ, որտեղ ագիտացիա էին անում ծծումբ բարձող բեռնակիրների, սևագործ բանվորների, առագաստանավերի նավաստիների, սայլապանների, կշռավարների մեջ՝ փորձելով նրանց միավորել «Աշխատավորների միություններում»: Տեսնելով, որ նրանք վերադառնում են այդպիսի տեսքով և այդ ժամին, Պրեոլան կնճռոտեց քիթը, կանգնեց ճանապարհի մեջտեղում և սկսեց սպասել, որ հետո միասին շարժվեն դեպի Ջիրջենտի: Երբ նրանք մոտեցան, Պրեոլան լայն բացեց ձեռքերը, կարծես պատրաստվում էր գրկելու ինչ-որ հաստափոր շիշ, և ասաց.

— Գնացի՛նք: Ոչինչ, ես ինքս կտանեմ:

Պինյան կանգնեց և, աշխատելով ինչքան հնարավոր է շտկվել, արհամարհանքով նայեց Պրեոլային: Թեև նա ամբողջովին կազմված էր սապատներից ու փոսվածքներից, բայց նրա դեմքը, որ կարմրել էր այտերին դուրս տված ցանից, հարթ էր, առանց մի հատիկ մաղի, ինչպես մեծ տիկնիկի դեմքը. ճմրթված գլխարկի տակ սև, կարծես արծնապատ աչքերը հածում էին խելագարի աչքերի պես: Նա նման էր սատանայի ճուտի, որ հանկարծ դուրս է ցատկում արկղիկից:

Մարկո Պրեոլան դիմեց նրան՝ օգտագործելով նրա անվան քամահրական-փաղաքշական ձևը:

— Նոչարե՛, մի նեղանա:— Նա աչքով արեց:— Սա գարշելի աշխարհ է, անշնորհակալ մարդկանց աշխարհ: Նավաստիները զազրելի թաթեր են: Փակիր հովանոցը, Լուկա: Աստված մեզ ջուր է առաքում, իսկ դու չես ուզում դրանից օգտվել: Ջրով ողողենք մեր կերպարանքները: Ա՛յ այսպես:

Նա դեպի երկինք բարձրացրեց իր ցեխոտված դեմքը: Ամպերից, որոնց պատռված եզրերը ծիրանի էին ներկված, դեռ կաթկթում էր, ամպերը սահում էին արևին ընդառաջ՝ տեղալով մանրիկ, ծակծկող, պաղ անձրև:

— Սրանք ի՞նչ ասեղներ են,— բացականչեց նա՝ փնչացնելով ձիու նման, ցնցեց գլուխը և դիտմամբ հրեց Պինյային:

Նա ոտքից գլուխ ցեխոտ էր և մինչև վերջին թելը թրջված, բայց դրա փոխարեն հիմա կարիք չուներ մտածելու, թե ինչպես խուսափի ջրից ու ցեխից, և անզսպորեն ու աներկյուղ չլմփացնում էր ցեխաջրի լճակներում: Նա կրքոտ ցանկություն էր զգում՝ անպատիժ կերպով աղտոտել ուրիշներին:

— Հեռացի՛ր, գոռաց Պինյան:— Ո՞վ է քեզ կանչել: Դու ո՞ւմ ես պետք: Որևէ մեկը երբևիցե վստահե՞լ է քեզ:

Պրեոլան անխռով պատասխանեց նրան.

— Դու ինչքան լավիկն ես դառնում, երբ բարկանում ես: Կավը մեր մայրն է, թանկագինս: Ես ուզում էի մի քիչ քսմսել քեզ վրա... Իսկ դու ինձ քշում ես: Հետո էլ գանգատվում ես ուրիշներից, թե անշնորհակալ են:

— Նա ուզում է մռութին ստանալ...— մռթմռթաց Պինյան՝ դիմելով Լիցիոյին:

Բայց Լիցիոն մռայլ ու մտախոհ քայլում էր առջևից և ոչ մի բանի վրա ուշադրություն չէր դարձնում: Նա թոթվեց ուսերը, կարծես ուզում էր ասել, թե չի ուզում կտրվել իր մտքերից:

Որոշ ժամանակ Պրեոլան լուռ գնում էր նրանց ետևից՝ մի քիչ ետ մնալով և հայացքը դարձնելով մեկից մյուսին: Նրա մեջ բորբոքվում էր այդ առավոտ ինչ-որ արտակարգ բան անելու պահանջը, բայց չգիտեր ինչ անել: Ուզում էր գայլի պես ոռնալ: Եվ որպեսզի չոռնա, նա բացեց բերանը, ձեռքը սեղմեց ատամներին և ձգեց ծնոտն այնպես, որ քիչ էր մնում

դուրս գցի. հետո շունչ քաշեց կամ էլ ցնցվեց կենդանու պես: Նա կարող էր ճարպկորեն խաղ խաղալ միայն այդ երկուսի գլխին: Բայց ի՞նչ ուրախություն՝ կպչել Լիցիոյից: Նա էլ այնպիսի թշվառական է, ինչպես ինքն է, և դեռ գլխում էլ մշուշ է: Երկու դժբախտություն մեկը մյուսի ետևից՝ հոր ինքնասպանությունը, որ լավ փաստաբան էր, բայց խենթ, հետո էլ՝ եղբոր ինքնասպանությունը, շրջանում որոշ համակրանք էին առաջացրել նրա նկատմամբ, խղճահարություն և նույնիսկ որոշ հարգանք: Նա շատ-շատ էր կարդում, քիչ էր խոսում, ավելի ճիշտ՝ նույնիսկ բոլորովին չէր խոսում: Ասենք, դա էլ իր պատճառն ուներ. նա չէր կարողանում արտասանել այբուբենի կեսը: Բայց նա Պինյային էր ընտրել իրեն երգեհոնիկ և դրա համար էլ դարձել էր ծաղրանքների թիրախ: Բոլոր հասարակական հանդեսներում նրանք միասին էին հայտնվում՝ երգեհոնիկը և երգեհոնահարը: Եթե Պինյան շեղվում էր տոնից, Լուկան, ցնցելով թևքը, ուղղում էր նրան ծայրահեղ լրջությամբ: Սոցիալական հեղափոխություն... ժողովուրդների եղբայրություն... իրավունքներ ճնշվածների համար, մի խոսքով, բոլոր բարձրագոչ խոսքերը: Եվ գուցե դրա համար Պինյան սկսեց ցրված ծամել հացի պատառը, որ ուրիշներն էին ձեռք բերել նրա համար: Այդ ամենը ոչինչ: Միայն թե մի քիչ ցուրտ էր...

— Գոնե մի գավաթ սուրճ՝ աստծու ողորմածությամբ,— հանկարծ աղաղակեց Պրեոլան՝ ձեռքերը բարձրացնելով դեպի երկինք:— Երեք կտոր շաքար, մի գավաթ սեր, չորս կտոր տապակած հաց: Օ՛, քավարանի սուրբ հոգիներ:

Լուկա Լիցիոն կտրուկ շրջվեց նրա կողմը: Հենց այդ պահին նա էլ էր սևեռուն մտածում մի գավաթ սուրճի մասին, իր առաջ տեսնում էր այդ գավաթը և երազանքներում արբում ներշնչելով տաք բուրմունքը: Տանջալից ցանկությունից՝ նա գրպանում սեղմում էր ցրտից փայտացած բռունցքը: Պարտություն կրելով, նա դեռ մթնով էր դուրս եկել Պորտո-Էմպեդոկլեից. հիմա նրա համար մահացու ցուրտ էր, և նա չէր հավատում, թե երբևիցե կհասնի տուն: Սուրճ խմելու չնչին պահանջմունքը ստորացուցիչ էր թվում, և նա իրեն զգում էր խորապես դժբախտ մի մարդ, որն արժանի է սփոփանքի, բայց համոզված էր, որ սփոփանք չի գտնի ոչ մեկի մոտ:

Որոշ ժամանակ առաջ այն պահից, երբ Լիցիոն հայտնվեց սպիտակ զամբիկի վրա սնգսնգացող այդ խամաճիկի և Պրեոլայի միջև, որ հողաթմբին կանգնած սպասում էր նրանց՝ շրթունքներին լկտի մի քմծիծաղ, Լիցիոյին հանկարծ համակեց ինչ-որ տարօրինակ զգացողություն, որ առաջ երբեք չէր ապրել, բայց հիմա թափանցեց մինչև հոգու խորքը: Հանկարծ նրան տիրեց զարմանքը, թե ինչո՞ւ էր ինքը բորբոքվում, տարակուսում, վրդովվում: Հիմա՝ վատ եղանակին, այս տրտում վայրերում, կարծես թե դրսից նայելիս այդ ամենը նրան թվում էր ունայն ու անմիտ: Լիցիոն կարծես կողքից էր տեսնում իր խղճուկ, վտիտ մարմինը, որ դողում էր ցրտից, բայց ծածկված էր կպչուն քրտինքով, և մի տեսակ զգում էր նրա նմանությունը ցածրիկ ցանկապատերից դուրս ցցված մանրիկ, բարալիկ ծառերի հետ, որ արտասվում էին անձրևի կաթիլներով: Ցրտի պատճառով կաթում էր Լիցիոյի քթի ծայրից, և ակնոցի տակ արցունքոտվում էին կարճատես աչքերը: Նա ամբողջովին կուչ եկավ, իսկ այդ նոր զգացողությունը, որ թափանցել էր նրա էության խորքերը, հիմա ճնշում էր սուր թախիծով, և նա զգում էր, որ ցավում է ամբողջ մարմինը. ցավում էին սեղմված քունքերը, թիակների սուր-սուր ցցվածքները, որոնց վրա մաշափայլում էր ամառային պիջակի կտորը, ցավում էին դաստակները, որ դուրս էին ցցվել չափազանց կարճ թևքերից, ու քրքրված կոշիկների մեջ ցավում էին թաց ոտքերը: Եվ թվում էր, թե շուրջն ամեն ինչ էլի ինչ-որ բան է ավելացնում՝ այդ դաժան ընկճվածության զգացումին ամեն մի քայլ ճանապարհով, որ վերածվել էր կավաջրի բուռն հոսանքի, այգաբացի վառ լույսը, որ չնայած մռայլ ամպերին, արտացոլվում էր ցեխի մեջ ու կուրացնում աչքերը, և հատկապես՝ այդ թշվառի ներկայությունը: Նա ոտքից գլուխ կորած էր ցեխի մեջ, ցեխոտ էր ներսից, ցեխոտ էր դրսից և ուզում էր ամեն կերպ Պինյային քաշել խոսակցության մեջ: Սովոր լինելով երկար տարիներ լռելու, Լուկան այդ լռության պատճառով գտնվում էր հետզհետե ավելի ու ավելի անհանգիստ շվարածության վիճակում, որը բոլորից թաքուն նրա մեջ սնում էր և ամրացնում՝ ա՛յ այդպիսի տարօրինակ զգացողություններ՝ նման հենց նոր

վերապրածին: Բայց նա չէր համարձակվի դա բացատրել նույնիսկ ինքն իրեն, որպեսզի չզրկվի առաջվա ձգտումներից և իր գործի նկատմամբ ունեցած հավատից:

Այդ ընթացքում Մարկո Պրեոլան շարունակ շատախոսում էր ու շատախոսում՝ գրեթե ուշադրություն չդարձնելով՝ լսո՞ւմ են իրեն, թե՞ ոչ:

— Դե, ես ինչ: Ո՞վ եմ ես: Թափառաշրջիկ: Ես արժանի եմ և այս վիճակին, և վատթարին: Բայց նայեցեք, թե երկնային տերն ինչպիսի եղանակ է առաքել հենց այն ժամանակ, երբ հանուն սրբազան առաքելության ճանապարհ են ընկել երկու թշվառ մարդասերներ, որոնց լպիրշ խաժամուժը գիշերը քշել է մտրակներով:

Պինյան, ամբողջ մարմնով դողալով, փորձեց կանգնել, բայց Լուկա Լիցիոն, զայրալից մռնչոցով ցնցելով նրա թևքը, տարավ նրան իր ետևից:

— Մտրակներով... լսո՞ւմ ես, հա՞,— ատելությամբ ասաց նա սեղմված ատամների արանքից:— Ես հենց իրեն մտրակներով...

— Եվ ես քեզանից կընդունեի այդ հարվածները, Նոչարե,— փութկոտ պատասխանեց Պրեոլան՝ խոնարհվելով,— կընդունեի, որովհետև դու չես ձևանում, այլ իսկական հերոս ես: Դու, գրողը տանի, գարշահոտություն ես տարածում, բայց հերոս ես. երբ ես եմ դա ասում, դու ինձ հավատա: Ժողովուրդը քեզ չի կարող հասկանալ: Չի կարող հասկանալ քո գաղափարը, որովհետև գաղափարը, դժբախտաբար, ո՛չ աչքեր ունի, ո՛չ ոտքեր, ո՛չ բերան: Նա խոսում և շարժվում է մարդկանց շրթունքներով ու ոտքերով: Եթե դու, օրինակ, ասում ես՝ «Ժողովուրդ, մարդկությունն առաջ է շարժվում: Եվ ես քեզ կսովորեցնեմ առաջ շարժվել», նրանք միայն նայում են, թե դու ինքդ ինչպես ես շարժում ոտքերդ. «Մի տեսեք, թե ով է ուզում մեզ քայլել սովորեցնել»:

— Ավանա՛կ,— պատասխանեց Պրոպագանդան՝ այլևս ուժ չունենալով իրեն զսպելու:— Ա՛յ սա, իսկապես, դատում է ոտքերով:

— Ե՞ս: Ես չէ, այլ ժողովուրդը,— պատասխանեց Պրեոլան:

— Ժողովո՞ւրդը: Մի սրան տես,— գոռաց Պինյան՝ աչքերը չռելով խելագարի պես, բայց և անմիջապես զսպեց իրեն:— Մի՛ հիշատակիր այդ անունը: Դու արժանի չես նույնիսկ արտասանելու «ժողովուրդ» բառը: Շատ բան է հասկացել ժողովուրդը, թանկագինս, թող քեզ հայտնի լինի, և ամենից առաջ այն, որ քո «հայրենասերները» խաբում են իրեն...

— Ի՞մ,— Պրեոլան սկսեց ծիծաղել:

— Քո. նրանք, որ, ոսկեդար խոստանալով, ժողովրդին մղեցին վաթսուն թվականի հեղափոխությանը: Հայրենասերներն ու տերտերները: Չէ՛, թանկագինս, ի գիտություն քեզ. մենք փաստարկները ձեռքներիս ժողովրդին ապացուցում ենք, որ ինչպես երկու անգամ երկու չորս է, այնպես էլ նա կարող է բարելավել իր վիճակը միայն իր անհատական ուժով, հասկանո՞ւմ ես, իր անհատական ուժով, պա՞րզ է քեզ, և ոչ թե ուրիշների ողորմածությամբ:

— Ավելի լավ կլիներ, եթե լիներ՝ իր անհատականության ուժով,— հեզաբար նկատեց Պրեոլան:

Պինյան նայեց շփոթահար: Բայց Պրեոլան շտապեց հանգստացնել նրան.

— Դատարկ բան է: Ուշադրություն մի՛ դարձրու: Բառախաղ է:

— Անհատական... իր սեփական ուժով,— կամացուկ և հիմա արդեն ոչ այնքան վստահ պատասխանեց Պինյան՝ շրջվելով Լիցիոյի կողմը, որ հայացքով հարցնի, թե արդյոք լա՞վ արտահայտվեց ինքը, իսկ հետո փոքր-ինչ շփոթված շարունակեց:— Այո՛, սինյորներ, բարելավել այս խայտառակ տնտեսական պայմանները, որոնց մեջ ապրում են մարդիկ... այսինքն՝ ո՛չ... և այնուամենայնիվ՝ այո՛: Որոշ մարդիկ ապրում են առանց աշխատելու, իսկ մյուսները, թեև աշխատում են, չեն ապրում: Հասկանո՞ւմ ես: Մենք ժողովրդին ասում ենք՝

«Դու ամեն ինչ ես: Դու ամեն ինչ կարող ես: Միավորվիր և թելադրիր քո օրենքներն ու քո իրավունքները»:

— Հոյակապ է,— բացականչեց Պրեոլան:— Թույլ տուր հիմա էլ ես խոսեմ:

— Քո օրենքներն ու քո իրավունքները,— մի անգամ էլ մոլեգնորեն կրկնեց Պինյան:— Խոսի՛ր, խոսի՛ր:

— Իսկ դու չե՞ս նեղանա:

— Չեմ նեղանա: Խոսի՛ր:

— Դու կարծեմ վերջերս տիրացու էիր:

Պրոպագանդան նորից զարմացած շրջվեց նրա կողմը.

— Իսկ դա ի՞նչ կապ ունի:

Պրեոլան շարունակեց հեզաբար.

— Դու խոստացար չնեղանալ: Պատասխանի՛ր:

— Այո՛, ես տիրացու եմ եղել,— արիաբար խոստովանեց Պինյան:— Հետո ի՞նչ: Դրանով ի՞նչ ես ուզում ասել: Որ ես գույնս փոխե՞լ եմ:

— Չէ՛, ի՞նչ գույն փոխել: Շորերդ ես փոխել:

— Ես սովորեցի հասկանալ տերտերներին, ահա թե ինչ:

— Եվ երեխաներ սարքել...— հեգնեց Պրեոլան,— յոթ աղջիկ՝ իրար ետևից: Գուցե ես ստո՞ւմ եմ:

Նոչո Պինյան կանգնեց երկրորդ անգամ, որ նայի նրան: Խոստացել էր չնեղանալ: Բայց ի՞նչ է մտադրվել Մարկոն, որ այդպես հարցաքննում է: Պինյան կորցրեց իր պաշտոնը եկեղեցում, որովհետև նրա աղջիկներից մեկը՝ ավագը և կանոնիկոս Լանդոլինան...

— Չեմ նեղանա՝ պայմանով, որ որոշ հարցեր դու շոշափես,— նախազգուշացրեց նա մռայլվելով և խոնարհեց աչքերը:

— Ո՛չ, ո՛չ, ո՛չ,— փութկոտ ասաց Պրեոլան՝ ձեռքը դնելով կրծքին:— Լսի՛ր, Նոչո: Ընդունված իմաստնության տեսակետից՝ ես այն եմ, ինչ կոչվում է խարդախ: Համաձա՞յն ես: Ութ ամիս բանտ եմ նստել: Պատկերացրո՛ւ: Իսկ հիմա նայի՛ր այստեղ,— ավելացրեց նա՝ ցույց տալով դեմքի սպին:— Սա այն ժամանակ եղավ, երբ ես «գետը նետվեցի», ինչպես ասում են Հռոմում... Ահա: Այնպես որ, ինքդ էլ ես հասկանում, դժվար է ազդել ինձ վրա: Եվ գիտե՞ս ինչն ազդեց: Այն, որ դու այդ դժբախտ աղջկա...

— Ես քեզ արդեն ասացի, այդ բաների մասին՝ լռություն:

— Թանկագինս,— հառաչեց Պրեոլան՝ աչքերը կկոցելով:— Ես քեզ խոստովանում եմ: Եթե որևէ մեկի նկատմամբ թեկուզ մի քիչ հարգանք եմ տածում, ապա միայն նրանց, ովքեր պայքարում են: Բայց հենց նրանք՝ իմ... ասենք, տխուր հանգամանքների պատճառով չեն ցանկանում ինձ հետ գործ ունենալ և նույնիսկ կուզենային գլուխս ուտել: Սակայն այստեղ նրանք իրավացի չեն: Ես պետք է ապրեմ: Եվ որպեսզի ապրեմ, տերտերների կողմնակից եմ դարձել: Մարդիկ չեն ներում, իսկ աստված, եթե հավատանք տերտերներին, ժամանակին ինձ ներել է, և այդ հիման վրա նրանք օգտագործում են ինձ: Տե՛ս, Նոչո, ի՛նչ ճակատ է, և նա արագ հանեց գլխարկը,— ներսում էլ ինչ-որ բան կա: Եթե բախտս բերեր... Բայց հերի՛ք է, թողնենք դա... Ես, դուք... ամեն ինչ... Մի լավ նայի՛ր: Միայն կեղտ է: Եվ մենք երեքս էլ թաղված ենք կեղտի մեջ: Դե ի՞նչ, խոսենք անկեղծ: Աստված իմ, վերջապես մեկ-մեկու ասենք ամբողջ ճշմարտությունը, մերկ ճշմարտությունը՝ չպարուրելով այն ամեն տեսակի բառերով, մեզ պատճառենք այդ բավականությունը: Ես, իհա՛րկե, խոզ եմ, իսկ դու ի՞նչ ես,

Նոչարե: Ի՞նչ աշխատանք ես կատարում, ասա ինձ: Պատասխանիր խղճով. չէ՞ որ դու չես աշխատում:

— Ես,— բացականչեց Պինյան՝ ավելի զարմացած, քան նեղացած այդ անարդարությունից. նա ձեռքն առաջ նետեց, հետո նորից ծալեց՝ ցուցամատը դիպցնելով իր կրծքին:

— Աշխատում ես ընդհանուր գործի՞ համար: Դատարկ խոսքեր,— անմիջապես վրա բերեց Պրեոլան:— Չէ՞ որ ես խնդրեցի՝ մերկ ճշմարտությունը: Հետո տանը դու կարող ես զուգել այն՝ ինչպես կամենաս, որ հանգստացնես քո խիղճը: Դու աշխատում էիր... քեզ քշեցին եկեղեցուց, հետո էլ՝ վիճակախաղային բանկից... Զրպարտություն է, գիտեմ: Բայց եթե նույնիսկ դու իսկապես ինչ-որ բան գրպանդ ես դրել, երբ այդ հիմարները հույս էին դրել անազնիվ գործունեությամբ միացած անձնավորությունների ձեր խմբակի վրա, կարծում ես ես դա մե՞ղք կհամարեմ: Դու լավ բան արած կլինեիր: Բայց հիմա ինչո՞վ ես զբաղված: Քո աղջիկներն աշխատում են, իսկ դու ուտում ես ու քարոզում: Ավելացրու նաև սրան՝ սուրբ Լուկային, ավետարանիչին... Դա ինչպե՞ս է կոչվում ձեզ մոտ: Ազատ սե՞ր: Դարձյալ դատարկ խոսքեր: Իսկ իրականում նա մտերմացավ քո մյուս աղջկա հետ:

Այս խոսքերը լսելիս Լուկա Լիցիոն գունատվեց, դեմքը ծամածռվեց, և նա առաջ պարզած ձեռքերով նետվեց Պրեոլայի վրա, կարծես ուզում էր նրա կոկորդից բռնել: Բայց Պրեոլան միայն ետ քաշվեց, իսկ հետո ճարպկորեն բռնեց Լուկայի դաստակները և առանց զայրույթի հրեց նրան:

— Հանդա՛րտ,— գոռաց Պրեոլան, և նրա աչքերում ու քմծիծաղի մեջ չարախնդություն երևաց:— Ես ճշմարտությունն եմ ասում...

— Թո՛ղ նրան,— միջամտեց Պինյան և իր հերթին սկսեց զսպել Լուկա Լիցիոյին:— Մի՞թե չես տեսնում, որ նա կարծես բոռ լինի:

— Ճիշտ է, բոռ: Ես խայթեցի նրա ամենախոցելի տեղը,— քմծիծաղ տվեց Պրեոլան:— Եվ այն էլ այս ցրտին: Այո՛, այո՛: Ավելի լավ ծածկիր քո մերկությունը: Ես ուզում էի միայն, թանկագին Նոչո, առանց որևէ վիրավորանքի բացատրել քեզ, թե ինչու դու հաջողություն չունես:

¬— Որովհետև այս երկիրը լիքն է ամեն տեսակի սրիկաներով,— բացականչեց Պինյան՝ շրջվելով և հայացքով մոխրացնելով նրան:

— Համաձայն եմ,— իսկույնևեթ հայտարարեց Պրեոլան:— Եվ ես ամենագարշելի սրիկան եմ այդ բոլորի մեջ:— Համաձայն եմ: Բայց դու այնուամենայնիվ չես աշխատում: Քո աղջիկներն աշխատում են, իսկ Լուկան ուտում է ու կարդում, իսկ դու ուտում ես ու քարոզում: Կարդալը, քարոզելը՝ այդ ամենը բառեր են: Իսկ էությունը այն պատառն է, որ կարելի է ուտել: Կուզենայի իմանալ, թե ինչո՞ւ ձեզ չի տանջում այն միտքը, որ քո աղջիկները մեջք են ծռում՝ կար անելով ու գիշերները չեն քնում, որ ձեզ համար ձեռք բերեն այդ պատառը:

Պինյան ձևացրեց թե չի լսում. նա մի քանի անգամ օրորեց գլուխը և նորից փնթփնթաց.

— Սրիկայական քաղաք: Գնա Արագոնա, երկու քայլ է Ջիրջենտիից, գնա Ֆավարա, Գրոտտե, Կաստելտերմինե, Կամպոբելլո, այնտեղ գյուղացիներ են ապրում և ծծմբահանքերի բանվորներ, անգրագետ, աղքատ մարդիկ: Մինչև Կաստելտերմինե ընդամենը չորս մղոն է: Ես անցյալ շաբաթ այնտեղ էի: Ներկա եղա «Միության» կազմակերպական ժողովին:

— Աստվածամոր արձանի առաջ մոմ վառելո՞վ,— հարցրեց Պրեոլան:

— Հիմար ես դու. ուրիշ բան է աստված, ուրիշ բան՝ տերտերները,— մեծամտաբար պատասխանեց Պինյան:

— Իսկ շեփորնե՞րը, որ հանդիսերգ էին նվագում՝ ի պատիվ թագավորի:

— Կարգապահություն է, կարգապահություն,— բացականչեց Պինյան:— Ճիշտ են անում: Հարկավոր էր տեսնել նրանց: Լուրջ, պատրաստակամությամբ լի չորս հազար մարդ... ուս-

ուսի. նրանց մեջ մարմնավորվել է ինքը՝ հողը, կենդանի հողը, հասկանո՞ւմ ես: Հողը, որ մտածում է ու շարժվում, ութ հազար աչքեր, որոնք հասկանում են ու նայում են քեզ... ութ հազար ձեռքեր: Իմ սիրտը տակնուվրա էր լինում այն մտքից, որ միայն մեզ մոտ՝ Ջիրջենտիում, գլխավոր քաղաքում և Պորտո-Էմպեդոկլեում՝ ծովային ավանում, որ բաց է առևտրի համար, ոչինչ չկա, ոչինչ... Ոչինչ չի կարելի անել: Անասունների նման են: Ավելի վատ: Իսկ գիտե՞ս ինչպես են ապրում Պորտո-Էմպեդոկլեում: Ինչ ձևով է կատարվում ծծումբի բեռնումը: Դու դա գիտե՞ս:

Մարկո Պրեոլան հոգնել էր. նա կախեց գլուխը և մռթմռթաց.

— Պորտո-Էմպեդոկլե...

Եվ երեքն էլ մտովի տեսան այդ ծովային ավանի պատկերը, ավան, որը շատ արագ աճեց հին Ջիրջենտիի հաշվին, իսկ հիմա դարձել է ինքնուրույն քաղաք: Սկզբում մի երկու տասնյակ հյուղակներ կային ուղիղ ծովափին, և քամին փրփուրով ու ավազով մտրակում էր դրանց. կար բարակ տախտակներից սարքած մի կարճ կամրջակ, որ հիմա կոչվում էր Հին ծովապատնեշ. և ամրոց կար ծովափին՝ քառակուսի ու մռայլ, որտեղ աշխատում էին տաժանապարտները, հենց նրանք, որոնք հետո, երբ ծծմբի փոխադրումն ավելացավ, կառուցեցին նոր նավահանգստի երկու քարե ամբարտակները: Հին ծովապատնեշը մնաց դրանց միջև, իսկ քանի որ ծովապատնեշին հարում էր պարսպապատ առափը, դրան պատիվ վիճակվեց ծառայելու որպես նավահանգստի վարչության նստավայր, իր վրա կրելու գլխավոր փարոսի սպիտակ աշտարակը: Թիկունքում բարձրացող կրակավային սարահարթի պատճառով ավանը չէր կարող աճել դեպի ցամաքի խորքը և դրա համար էլ ձգվում էր երկարությամբ. ծովափնյա նեղ շերտում, մինչև սարահարթի եզրը շարված էին տները՝ խիտ, իրար սեղմված, մեկմեկու վրա ելած: Ծծմբի շեղջերը կուտակվել էին ծովափին, և առավոտից երեկո լսվում էր բեռնասայլակների անընդմեջ ճռնչոցը, որոնք ծծումբ էին տեղափոխում երկաթուղային կայարանից կամ էլ անմիջաբար մոտիկ հանքերից: Այստեղ անվերջանալի հոսանքով շարժվում էին բոկոտն բանվորներն ու բարձած ավանակները, լսվում էր ոտքերի շլմփոցը թաց ավազին, աղմուկ՝ վեճեր, ու անեծքներ, ճիչեր, և այդ ամենը դղրդոցի ու սուլոցների հետ անդադրում գնացքների, որ անցնում էին ծովափով, գնում մերթ դեպի մի, մերթ դեպի մյուս ամբարտակը, որոնք շարունակ հարկ էր լինում վերանորոգել: Արևելյան ամբարտակից այն կողմ ծովափին կպած ցանկապատի նման բարձրանում էին առագաստանավերը՝ իջեցրած առագաստներով: Ծծմբի շեղջերի ստորոտներում դրված էին կշեռքներ, որոնցով կշռում էին ծծումբը և այդտեղից բարձում բեռնակիրների ուսերին, որոնց այստեղ կոչում էին ջրային, իսկ նրանք՝ բոկոտն, քաթանե շալվարներով, ուսերին չկապված պարկեր, որ հենվում էին ծոծրակներին, մինչև գոտին ջրի մեջ՝ ծծումբը հասցնում էին առագաստանավերի մոտ, որոնք հետո, բացելով առագաստները, իրենց բեռը տանում էին առևտրական նավերին, որ խարիսխ գցած կանգնած էին նավահանգստում կամ խարսխակայանում:

— Ստրկական աշխատանք է,— ասաց Պինյան:— Ձմեռ օրով որ նայում ես, սիրտդ ճմլվում է: Մարդիկ՝ բեռան տակ ճնշված, մինչև գոտին ջրի մեջ: Եվ մի՞թե նրանք մարդիկ են: Անասուններ են: Իսկ երբ նրանց ասում ես, որ պետք է մարդ դառնան, նրանք լայն բացում են երախները և ծիծաղում ապուշի պես կամ էլ սկսում են հայհոյել: Գիտե՞ս, թե ինչու նոր նավահանգստի կամրջակալներում նավամատույցներ չեն կառուցում, որտեղից կարելի կլինի բարձել արագ, հեշտ ու հարմար՝ բեռնասայլակների ու վագոնիկների օգնությամբ: Որովհետև այս երկրամասի հարուստներն են առագաստանավերի տերերը: Քանի դեռ նրանք անհաշիվ շահույթներ են հափռում այս գործում, կեղտաջրերի խողովակները բաց կմնան ծովափին, և մարդիկ կմեռնեն վարակիչ հիվանդություններից: Անսահման ծովն է տարածվում նրանց աչքերի առաջ, իսկ խմելու համար պիտանի ջուր չկա, և մարդիկ կոտորվում են ծարավից: Բայց այդ մասին ո՛չ ոք չի մտածում, ո՛չ ոք չի գանգատվում: Բոլորն այստեղ կարծես խելքները թռցրել են շահույթի համար մղվող ստոր ու կատաղի պայքարում:

— Գիտե՞ս, դու իսկապես լավ ես խոսում,— խրախուսանքով նկատեց Պրեոլան:— Քեզ լրջորեն օգնել են քարոզները, որ լսել ես, երբ դեռ տիրացու էիր:

— Բաիբաի, բաիբաի, ինչպես ասում են անգլիացիները,— ավելացրեց Պրեոլան՝ սպառնալից պարզելով երկար ձեռքը:— Մենք երեք հարյուր հազար ենք, սիրելիս, դա պարզ է, ինչպես ցերեկը: Եվ շուտով դուք մեզ կճանաչեք:

Այդ ընթացքում Պլաչիդո Շարալլան, հաղթահարելով կտրուկ վերելքը, Տիտանային հեծած դեռ մանրավարգում էր այն ճանապարհով, որ ոլորվելով բլրալանջին, իջնում էր հովիտը: Պրեոլայի հաղորդած լուրը նրան խորասուզել էր նոր, ավելի բարդ մտորումների մեջ: Վերջապես նա հոգնեց մտածելուց, թոթվեց ուսերը և նայեց շուրջը:

Հիմա նրա առաջ ձախ կողմում փռված էր մերձծովյա ուրախ հարթավայրը, որ ծածկված էր խաղողի այգիներով, նշենիներով և ձիթենիներով: Արդեն երևում էր Սետան՝ ավանը, որի հիսունի չափ ճյուղերը ձգվում էին միակ փողոցի երկարությամբ: Դրանք մեծ մասամբ պահեստներ էին կամ էլ փոքրիկ պանդոկներ՝ սայլապանների համար: Ամեն կողմից բարձրանում էր սուր, տտիպ գարշահոտություն՝ խաղողի քաղցուի հոտ և գոմաղբի գաղջ գոլորշիներ: Կողք-կողքի շարվել էին դարբինների, փականագործների, կառագործների արհեստանոցները, իսկ կենտրոնում բարձրանում էր մի հյուղ, որ վերածել էին եկեղեցու՝ կիրակնօրյա ժամերգությունների համար: Որպեսզի չերևա ավանի հանդուգն բնակիչների աչքին, որոնք բոլորն էլ ճանաչում էին իրեն, և թիրախ չդառնա նրանց հայհոյանքների համար, Շարալլան թեքվեց արահետը և շուտով հայտնվեց Վալսանիա կալվածքում:

Անձնական օգտագործման համար դոն Կոսմոյի տրամադրության տակ էր գտնվում կալվածքի միջին հողամասը, որտեղ կար խաղողի այգի (Մաուրո Մորտարայի կրքոտ հոգածության ու հպարտության առարկան), ձիթենիների մի հին պուրակ, որ մնացել էր դեռ սարացինների ժամանակից, նշենիների մի փոքրիկ տնկադաշտ, մի քանի հեկտար ցանած արտեր և կիտրոնածառերի մի պուրակ՝ մեծ ձորի ստորին կողմում: Կալվածքի մնացած մասը մանր հողակտորներով վարձակալության էր տրված աղքատ կիսրարներին. սակայն գյուղացիներն այդ հողակտորները վարձակալում էին ո՛չ թե անմիջապես դոն Իպոլիտոյից, թեև կալվածքը պատկանում էր նրան, այլ՝ մանր վարձակալներից. սրանք էլ իրենց հերթին հող էին ստանում ավելի խոշոր վարձակալներից, որոնք ոչ միայն աղայաբար ապրում էին քաղաքում՝ այդ թշվառների աշխատանքի հաշվին, այլև նեղում էին նրանց անողորմ վաշխառուությամբ ու խառնաշփոթությամբ, որ առաջանում էր բոլոր այդ պայմանագրերը ձեռքից ձեռք հանձնելուց: Տոկոսներ էին գանձվում և՛ փոխ տված սերմացու հացահատիկի համար, և կանխավճարների, որ գյուղացիներն ստիպված էին լինում վերցնել տարվա ընթացքում. ամենաանարգ բռնությունը գործադրվում էր բերքահավաքի ժամանակ: Աշխատելով ամբողջ տարին, այսպես կոչված՝ կիսրարը տեսնում էր, թե ինչպես իր սարայից շեղջ շեղջի ետևից տանում են ամբողջ բերքը. մի շեղջ՝ սերմացուի դիմաց, մի շեղջ՝ արոտավայրի համար, իսկ այս շեղջը՝ կանթեղի համար, սա՝ դաշտային պահակին, սա՝ վշտահար աստվածամոր համար, սա՝ սուրբ Կալոջերոյի, մի խոսքով, եկեղեցական օրացույցի գրեթե բոլոր սրբերի համար. այնպես որ երբեմն նրան բաժին էր մնում միայն ծղոտը, այսինքն՝ փոշու և ծղոտի հետ խառնված այն մի քիչ հացահատիկը, որ կալսումից հետո մնում էր կալատանը:

Արևն արդեն ծագել էր, և կապիտան Շարալլան տեսնում էր՝ ինչպես դաշտերի ընդարձակ տարածություններում այս ու այնտեղ շառագունում ու փայլփլում էին գիշերային անձրևից մնացած լճակները կամ էլ ջնարակով ծածկված խեցեղենի մի բեկոր: Հողից գոլորշի էր բարձրանում, և կարծես նրա վրա թրթռում էր ինչ-որ սպիտակավուն շղարշ: Ժամանակ առ ժամանակ հանդիպում էր որևէ կիսավեր, մրոտված հյուղ, որ գյուղացիներն իրենց բարբառով կոչում էին «ռոբա». դա միաժամանակ և՛ բնակարան էր, և՛ գոմ: Այնտեղից ելնում էր կիսրարի կինը, որ դրսում կապի խռնչացող խոճկորը. նրա ետևից գնում էին երեք-չորս հավեր: Կարմրավուն բծերով ծածկված դռան առաջ մի ուրիշ կին սանրում էր թնկթնկացող աղջնակի մազերը, իսկ տղամարդիկ գիշերային առաջին տեղատարափից հետո դժվարությամբ էին վարում հողը իրենց պարզունակ գութաններով, որոնց լծված էին ջորիներ կամ դանդաղ քարշ եկող իշուկներ, որոնց կողերը լարումից փոս էին ընկել: Տեսնելով Շարալլային, որ գնում էր սպիտակ զամբիկով, այդ բոլոր աղքատ մարդիկ դադարեցնում էին աշխատանքը, որ ողջունեն նրան այնպիսի հարգանքով, կարծես թե դա

ինքը՝ իշխանը լիներ: Կապիտան Շարալլան պատասխանում էր արժանապատվությամբ՝ զինվորական ձևով ձեռքը տանելով դեպի բերետը, և հարգանքի այդ նշաններն ընդունում էր որպես մի տեսակ նախնական փոխհատուցում այն ստորացման դիմաց, որ պիտի կրեր կատաղի ծեր սատանա Մորտարայից: Վախը փչացնում էր այդ խոնարհ ողջույններից ստացած ամբողջ բավականությունը. շուտով, հենց որ մտնի Մորտարայի տիրույթները, նրա վրա կնետվեն երեք պահապան շները, երեքն էլ կատաղի, ավելի կատաղի, քան իրենց տերն է, որը, հասկանալի է, ինքն է շներին սովորեցրել, որ այդպես դիմավորեն Շարալլային: Եվ կապիտանն ստիպված էր լինում նեղություն տալ կոկորդին, երբ շները նրա վրա էին նետվում՝ մերթ մի կողմից, մերթ մյուս, ցատկելով ձիու գավակից բարձր, իսկ Տիտանան իր հերթին վախից վեր-վեր էր ցատկում ոչխարի նման: Չարաբախտ Շարալլան արդեն մտածում էր, թե հասել է իր վերջը, բայց այդ պահին դուրս էր գալիս Մաուրոն կամ էլ կառավարիչ Վաննի դի Նինֆան և անշտապ կանչում էր շներին:

Մաուրո Մորտարան այնպես էր խոսում իր երեք շների հետ, կարծես, դրանք բանական արարածներ լինեին: Նա պնդում էր, որ մարդիկ չեն կարողանում հասկանալ շներին, բայց շները հրաշալի հասկանում են մարդկանց: Ամբողջ դժբախտությունն այն է, հավատացնում էր նա, որ այդ խեղճերը չեն կարողանում արտահայտվել, իսկ մենք մտածում ենք, թե նրանք չեն հասկանում և չեն զգում: Բայց Շարալլան այդ երևույթը բացատրում էր յուրովի: Շներն այդպես լավ են հասկանում իրենց տիրոջը, որովհետև նա էլ իրենց պես շուն է և գուցե ավելի վատ, քան իրենք: Եվ Շարալլայի կարծիքով, դա լիովին հաստատվեց այդ առավոտ:

Մաուրոն կանգնած էր վիլլայի առաջ, իսկ նրա երեք բարեկամները դունչները ցցած, պահակախմբի պես տեղավորվել էին նրա շուրջը: Այս անգամ, երբ Շարալլան մոտեցավ, նրանք տեղից չշարժվեցին (մեկը նույնիսկ հորանջեց), կարծես հասկանում էին, որ ինքը՝ տերը հրաշալի կերպով կկատարի իրենց պարտականությունները:

— Քեզ ի՞նչ է հարկավոր առավոտ գիշերով, պիղծ թափթփուկ,— ասաց նրան Մաուրոն՝ ետ գցելով իր կոպիտ կուրտկայի կնգուղը և բարձելով ահագին բրդոտ փափախի տակ ճնշված գլուխը:

Երբ մոտենում էր խաղողի բերքահավաքի ժամանակը, Մաուրոն գիշերները չէր քնում, նա պահպանում էր խաղողի այգին՝ իր երեք շների հետ շրջելով խաղողի վազերի երկար շարքերի արանքով: Գուցե նա այդ ամբողջ ցուրտ գիշերն անց էր կացրել բաց երկնքի տակ. համենայնդեպս նրանից լիովին կարելի էր այդ բանն սպասել:

Շարալլան խոնարհ բարևեց, հետո, ցույց տալով շներին, հարցրեց.

— Կարելի՞ է իջնել:

— Իջիր,— մռթմռթաց Մաուրոն:— Այդ ի՞նչ ես բերել:

— Նամակ՝ դոն Կոսմոյի համար,— պատասխանեց Շարալլան՝ իջնելով ձիուց:

Եվ մինչ նա փնտրում էր կուրտկայի ծոցագրպանում, Մաուրոյի աչքերը հետևում էին նրան՝ զայրույթով ու ծաղրանքով:

— Ահա՛: Նորին պայծառափայլությունից: Հույժ շտապ:

— Կանգնիր այստեղ,— հրամայեց Մաուրոն՝ վերցնելով նամակը: Եվ տե՛ս, բաց չթողնես զամբիկին:

Շարալլան գիտեր, որ իրեն արգելված է մտնել վիլլա, կարծես իր համազգեստով կարող էր պղծել այդ ավերակը, այդ կոպիտ սարքած միհարկանի տնակը, ինքը, որ եկել է Կոլիմբետրայի հոյակապ տնից, որտեղ նույնիսկ պատերին կարելի է տեսնել իրեն, ինչպես հայելու մեջ: Արգելքն, իհա՛րկե, գալիս էր ոչ թե դոն Կոսմոյից, այլ իրենից՝ Մորտարայից, որը թույլ չէր տալիս նույնիսկ ձին կապել օղակից, որն ամրացված էր արտասանդուղքի ելուստին: Շարալլան պիտի բռներ ձիու սանձը և սպասեր բաց երկնքի տակ կանգնած, կարծես եկել էր ողորմություն խնդրելու:

Հենց որ Մորտարան տեղից շարժվեց, երեք շներն էլ կամացուկ մոտեցան կապիտան Շարալլային և սկսեցին հոտոտել նրան: Խեղճ մարդու սիրտը սեղմվեց, բայց նա մնաց անշարժ կանգնած և միայն նայեց Մորտարային, որ բարձրանում էր սանդուղքով:

— Մի՛ կեղտոտեք ձեր քթերը՝ քսելով դրա շալվարին,— ասաց Մաուրոն և իր մոտ կանչեց շներին, հետո դառնալով Շարալլային, ավելացրեց:— Ես հիմա քեզ մի կում սուրճ կուղարկեմ, որ ուշքի գաս:

Հասնելով սանդղահարթակ, Մաուրոն արդեն պատրաստվում էր պայմանական թակոցով բախելու դուռը, այսինքն երեք անգամ խփելու ներքին փականքի մղլակի ատամներին, բայց հազիվ էր ձեռքը դիպցրել, երբ դուռն ինքնիրեն բացվեց, և նա, ներս մտնելով, բարձր գոռաց.

— Բա՛ց է: Էլի՞ բաց է: Այդ դո՞ւք եք բացել,— ավելացրեց նա՝ մտնելով խոհանոց, որտեղից ակնթարթապես դուրս ցցվեց շորագլխարկով մի գլուխ, դա դոննա Սառա Ալայմոն էր, Վալսանիայի տան կառավարչուհին (բնավ ոչ աղախինը):

— Ե՞ս,— ճչաց սենյակից դոննա Սառան:— Ես դեռ նոր եմ վեր կենում:

Եվ, լսելով, որ Մաուրոն հեռանում է, մի ձեռքով եղջյուրիկներ սարքեց չար աչքի դեմ և մի քանի անգամ ցնցեց՝ ի նշան արհամարհանքի:

Ո՛չ, նա աղախին չէ, ո՛չ, գրողը տանի, ո՛չ Մաուրոյի համար, ո՛չ էլ ներսում եղած որևէ մեկի: Ճիշտ է, նրա ձեռքին փուքս կար, նա պատրաստվում էր կրակ վառել խոհանոցում, բայց ծննդյամբ ու դաստիարակությամբ իսկական սինյորա է, Լաուրենտանոյի փեսա Ստեֆանո Աուրիտիի հեռավոր ազգականուհին, և դրա համար էլ, ինչ էլ որ ասեն, այդ ընտանիքի անդամն է:

Նա արդեն շատ տարիներ ապրում էր Վալսանիայում և խնամում էր դոն Կոսմոյին, որը գուցե երբեք չզգար դոննա Սառայի կարիքը, եթե քույրը՝ Կատերինան, նրան չուղարկեր Ջիրջենտիից, որտեղ դոննա Սառային վիճակված էր մեռնել քաղցից՝ թեկուզև սփոփվելով այն մտքով (չէ՛ որ նա իսկական տիկին էր), որ դա կարող է անել արժանապատվությամբ: Վալսանիայում դոննա Սառան իր օրերն անց էր կացնում՝ շոյելով ժամանակակից ձևով ամորձատված երկու կատուների մեջքերը, որոնք շարունակ պոչերը տնկած քայլում էին նրա ետևից, և մռթմռթում էր տասնհինգ աղոթքներից բաղկացած «շղթան», հետո էլ շշնջում էր էլի ուրիշ աղոթքներ: Նրան լսելով, կարելի էր մտածել, թե այստեղ ամեն ինչ լավ է գնում միայն այն պատճառով, որ նա գտնվում է այստեղ. առանց նրան ամեն ինչ կկործանվեր: Եթե բերքը հասունանում էր, եթե պտղաբերում էին ծառերը, եթե ժամանակին անձրև էր գալիս... Մի խոսքով, նա այնպիսի տեսք էր ընդունում, կարծես կառավարում էր աշխարհը... Մաուրոն նրան տանել չէր կարողանում: Եվ դոննա Սառան նույն կերպ էր պատասխանում ամբողջ հոգով: Նրա համար չկար ավելի ծանր պարտականություն, քան այն, որ պիտի սեղանը գցեր նաև Մաուրոյի համար, քանի որ դոն Կոսմոն հասել էր այնպիսի անկման, որ այդ պատվին էր արժանացնում նաև գյուղացու որդուն և ինքն էլ գրեթե հողագործ գյուղացի էր դարձել. այ, այսպես էր վիճակը, այնինչ դոննա Սառան, որ ծննդյամբ ու դաստիարակությամբ իսկական տիկին էր, պիտի գտնվեր խոհանոցում և ծառայեր նրան:

Դոննա Սառան դուրս կախվեց պատուհանից և, ցածում տեսնելով կապիտան Շարալլային, այնպես խոր շունչ քաշեց, որ շունչը կարծես փոխվեց հառաչանքի.

— Ախ, Պլաչիդինո, Պլաչիդինու Աստծու առաջ խոստովանենք մեր մեղքերը:

Այդ ժամանակ Մաուրոն մտավ դոն Կոսմոյի լոգասենյակը: Այդ հնամենի, լքված վիլլայում ամեն ինչ հին էր ու փայտե. հատակի մաշված աղյուսները փոս էին ընկել, պատերն ու առաստաղը՝ սևացել, ծածկոցափեղկերն ու կահույքը գունաթափվել էին ու ծռմռվել, և ամեն ինչ ներծծված էր՝ չոր հացահատիկի, բորբոսի, ժանգոտ երկաթի, վառածղոտի, տապից թառամած խոտի, արևով ողողված հողի խառն հոտով: Լոգասենյակում դոն Կոսմոն, որ գործած վարտիքով էր և բոբիկ ոտքերին հին կոշիկներ էր հագել, մերկացնելով մազոտ իրանը, պատրաստվում էր սովորական շփումների՝ մի դյուժինի չափ մեծ ու փոքր

սպունգներով, որ շարած էին լվացարանին: Ամեն առավոտ, նույնիսկ ձմռանը, նա ոտքից գլուխ լվացվում էր շատ սառը ջրով, և դա նրա կյանքի միակ հաճույքն էր: Մաուրոյին դա թվում էր մի հոյակապ խենթություն. նա միշտ չէ, որ առավոտները լվանում էր «միայն դիմակը», ինչպես ինքն էր ասում, այդ խոսքի տակ հասկանալով «միայն երեսը»:

— Դուք դարձյա՞լ քնելիս դուռը բաց եք թողել:

— Այո՞: Մի՞թե,— ասաց դոն Կոսմոն, կարծես զարմացած էր դրանից, և քորեց կարճ, գանգուր ու ճերմակ մորուքը:

— Ուրեմն ձեր աչքերը երբեք չե՞ն բացվելու,— համառորեն շարունակեց Մաուրոն:— Մի՞թե ես չեմ ասել՝ երեխա եք: Ձեզ դայակ ու ծծմայր է պետք: Ողորմած աստված, դուք ի՞նչ տեսակ մարդ եք: Թե՞ չեք կարդացել երեկվա թերթերը: Այդ սրիկաների մասին, որոնք առիթ դարձնելով սովը, ուզում են հիմնիվեր շուռ տալ այն ամենը, ինչի հասել ենք մեր արյան գնով:

Այս խոսքերն ասելիս Մաուրոն այնպես կատաղի էր թափահարում ձեռքերը, որ դոն Կոսմոն նույնիսկ չնկատեց նամակը, որ նա բերել էր, և հանգիստ սկսեց օճառել գլուխը: Այդ հանգստությունից գրգռված՝ Մաուրոն շարունակեց.

— Եթե բոլորը ձեզ նման լինեին... Բայց փառք աստծու, ես դեռ այստեղ եմ: Թեկուզև ծեր եմ, բայց դեռ կարող եմ չափվել նրանց հետ:

Դոն Կոսմոն շրջեց գլուխը, որ փայլում էր օճառափրփուրից, և նայեց նրան.

— Ինքդ էլ ես տեսնում, որ ես կարող եմ քնելիս առաջվա նման դուռը բաց թողնել: Չէ՞ որ դու այստեղ ես:

Թերթերը ժամանակ առ ժամանակ Վալսանիա էին ընկնում՝ արդեն օգտագործված ավելի համեստ, բայց գուցե ավելի օգտակար նպատակով՝ փաթեթավորման համար: Մաուրոն սիրով էր կարգի բերում դրանք, շատ անգամներ հարթում ձեռքերով, որ վերացնի ծալքերն ու ծվենները, և վանականի համբերությամբ հաղթահարելով ընթերցման անասելի դժվար աշխատանքը (նա ուշ էր կարդալ սովորել և այն էլ՝ գրկապելով), հաճույք էր վայելում ամբողջ շաբաթներով, ամեն ինչ անգիր անելով՝ առաջին տողից մինչև վերջինը: Բոլոր լրագրային հաղորդումները՝ կենդանի աշխարհի այդ թույլ արձագանքները, նրա համար նորություն էին: Վերջին թերթում, որ նախորդ օրը պատահաբար ընկել էր նրա ձեռքը, խոսվում էր ծծմբահանքերի բանվորների գործադուլի մասին՝ գավառներից մեկում և նրանց կազմակերպած «Միության» մասին:

«Պրոլետարիատի պահանջները»:

Ինչ կարիք կար: Նա Դոն Կոսմոյին խնդրեց բացատրել իրեն այդ երկու հանելուկային բառերը և ամբողջ գիշերը կատաղի տեղատարափի տակ, թիկնոցի մեջ փաթաթված, ծամծմեց ու ծամծմեց այդ բառերը՝ սրբազան վրդովմունքից գռմռալով հայրենիքի թշնամիների դեմ:

Մաուրոն պատասխանի չարժանացրեց դոն Կոսմոյի վերջին խոսքերը, որի գլխում, նրա կարծիքով էլ, ամեն ինչ չէ, որ կարգին էր, և պարզեց դոն Իպոլիտոյի նամակը.

— Նրա խեղկատակներից մեկը բերեց՝ կապիտան Շարալլինոն:

— Ի՞նձ,— զարմացած հարցրեց դոն Կոսմոն՝ ջուրը պահելով բռում:— Ի՞նձ է գրում Իպոլիտոն: Ա՛յ քեզ հրաշք... Բաց արա՛ ու կարդա՛, իմ ձեռքերը թաց են:

— Թաց են, սրբեք,— կոպտաբար ասաց Մաուրոն:— Չէ՞ որ դուք գիտեք, որ ես չեմ ուզում նույնիսկ ամենաչնչին առնչություն ունենալ ձեր եղբոր գործերին... Բայց ձեռագիրը կարծես նրանը չէ:

— Ա՛, դա Պրեոլան է,— ասաց դոն Կոսմոն՝ նայելով ծրարին:

Նամակը դոն Իպոլիտոն թելադրել էր քարտուղարին, բայց ստորագրել էր ինքը: Կարդալով՝ դոն Կոսմոն առաջին իսկ տողերից մռայլվեց, հետո հետզհետե նրա ճակատը հարթվեց, և լարված հայացքն արտահայտեց մի տխուր զարմանք: Նա փակեց աչքերը և ցած թողեց ձեռքը, որով բռնել էր նամակը.

— Ա՛, ուրեմն ճիշտ է:

— Ի՞նչն է ճիշտ,— մռթմռթաց Մաուրոն՝ հետաքրքրությունից դրդված:

Դոն Կոսմոն դառն ու քամահրական ափսոսանքով սեղմեց շրթունքները, օրորեց գլուխը, իսկ հետո ասաց.

— Քանի որ նա դա վճռել է, արդեն ոչինչ չես անի... Կկործանի իրեն...

— Ասացեք բանն ի՞նչ է, գրողը տանի,— կրկնեց Մաուրոն՝ էլ ավելի գրգռված:

Բայց դոն Կոսմոն պատասխանելուց առաջ որոշ ժամանակ լուռ նայեց նրան:

— Նա ինձանից խնդրում է վիլլան:— Հետո ավելացրեց՝ դանդաղ, անփույթ արտասանելով բառերը:— Վիլլան՝ Ֆլամինիո Սալվոյի համար:

— Վիլլա՞ն,— հարցրեց Մաուրոն՝ այնպես ցնցվելով, կարծես դոն Կոսմոն հարվածեց նրա դեմքին:— Գեներալ Լաուրենտանոյի վիլլան Ֆլամինիո Սալվոյի՞ համար:

Բայց դոն Կոսմոն Մաուրոյի նման կատաղության չհասավ՝ վիլլայի երևակայական պղծման համար: Նա ճնշված էր վշտախառն զարմանքից՝ իմանալով, թե ինչ է նշանակում այդ հյուրընկալությունը, որ եղբայրն էր առաջարկել Սալվոյին: Մի քանի օր առաջ մի բարեկամ՝ Լեոնարդո Կոստան, որ երբեմն հարևան ծովափնյա ավանից գալիս էր Վալսանիա, հայտնեց նրան, որ Ջիրջենտիում լուրեր են տարածվել Իպոլիտոյի և Սալվոյի չամուսնացած քրոջ՝ պառավ օրիորդի, մոտալուտ հարսանիքի մասին: Դոն Կոսմոն չէր ուզում հավատալ դրան, եղբայրը՝ Իպոլիտոն, երկու տարով մեծ էր իրենից, արդեն վաթսունհինգ տարեկան էր: Նա տասը տարի առաջ էր այրիացել ու, թեև արտաքուստ ցույց չէր տալիս, բայց կնոջ՝ այդ սուրբ արարածի, մահից հետո չէր կարողանում սփոփանք գտնել... Դա անհնար է... Եվ այնուամենայնիվ...

— Դուք նրան կմերժե՞ք,— մի քիչ սպասելով, հարցրեց Մաուրոն՝ մի տեսակ սպառնալից եղանակով:

Դոն Կոսմոն տարածեց ձեռքերը և աչքերը փակ հառաչեց.

— Ի՞նչ իմաստ ունի: Եվ հետո՝ ի վերջո...

— Ինչպե՞ս,— ընդհատեց նրան Մաուրոն,— Սալվոն՝ այդ վաշխառուն, այդ կեղծ բարեպաշտը՝ այստե՞ղ: Այդ դեպքում ես այստեղից կգնամ: Դուք մոռացե՞լ եք, գրողը տանի, որ նրա հայրը ներկա էր «Te Deum» -ին, երբ ձեր հորն աքսոր էին ուղարկում: Իսկ նա ինքը դեռ պատանի, մի՞թե բուրբոնյան ոստիկանությանը ցույց չտվեց այն տունը, որտեղ թաքնվել էր Ստեֆանո Աուրիտին ձեր քրոջ հետ, երբ Պալերմոյի ազնվականները Կալտանիսետտայում, Սատրիանոյին էին մատուցում քաղաքի բանալիները: Դուք մոռացե՞լ եք, մոռացե՞լ եք այդ ամենը: Բայց ամեն ինչ այստեղ է, իմ գլխում, ինչպես տպագրված գրքում: Հրավիրեք նրան, թող գա Վալսանիա, եթե այդքան քաջություն կունենաք: Բայց գեներալի սենյակը, չէ՛, չեմ տա: Այդ սենյակի բանալին ինձ մոտ է: Սալվոն այնտեղ չի մտնի, կամ էլ ես կսպանեմ նրան. Մաուրո Մորտարայի խոսքն է:

Մաուրոյի երկար, զայրալից ճառը չցրեց դոն Կոսմոյի վշտախառն զարմանքը: Մի անգամ չէ արդեն, որ նա մտադրվել էր Մաուրոյին բացատրել, թե իր հոր՝ Ջերլանդո Լաուրենտանոյի մտքով երբեք չի անցել Իտալիայի միասնության գաղափարը, և թե հազար ութ հարյուր քառասունութ թվականի սիցիլիական պառլամենտը, որի ռազմական մինիստրն է եղել նա մի քանի ամիս, երբեք չի առաջարկել ո՛չ իտալական կոնֆեդերացիա, ո՛չ էլ միավորում Իտալիայի հետ, բայց ձգտել է Սիցիլիան անջատել Նեապոլիտանական թագավորությունից,

նրա գլխին առանձին սիցիլիական թագավոր կարգել ու վերջ: Դա այն ժամանակվա բոլոր հին ու բարի սիցիլիացիների երազանքն էր, և եթե այն իրականանար, Իտալիայում բանը չէր հասնի նույնիսկ ինչ-որ ֆեդերացիայի, որի կազմում ամեն մի իտալական պետություն կպահպաներ իր ինքնուրույնությունը: Սակայն դոն Կոսմոն այդպես էլ որևէ բան չէր բացատրել ծերունուն և հիմա էլ չէր ուզում այդ բանն անել: Եվ նա վրդովմունքից խռխռացող Մաուրոյին թողեց, որ շրջվի-գնա ու փակվի իշխան-հոր սենյակում, որ ծերունու համար այնպես սրբազան էր, ինչպես սրբազան էր հայրենիքը. դա ազատության առաջին բույնն էր, իսկ հիմա՝ գրեթե նրա տաճարը:

Նույն այդ ժամանակ ցածում՝ վիլլայի մուտքի մոտ, թշվառ Շարալլան դեռ սպասում էր խոստացված սուրճին. գոնե մի կում սուրճ լիներ և մի տեղ՝ կրակի մոտ: Նա սպասեց, սպասեց, հետո մոռացավ իր ցանկությունները, որովհետև իրեն ասեղների վրա էր զգում, քանի որ նամակն ուշանում էր: Նա կստանար այն դեռ երեկ երեկոյան, եթե լսեր Պրեոլային: Նա մտածում էր, որ այդ ժամին Կոլիմբետրայում գուցե իշխանն արդեն արթնացել է և քարտուղարից պահանջել նամակի պատասխանը: Իսկ ինքը դեռ այստեղ է ու դեռ սպասում է: Ինչքա՞ն ժամանակ է հարկավոր, որ նամակը կարդան և մի քանի տող պատասխան գրեն: Բայց գուցե Մորտարան դիտմամբ մինչև հիմա դեռ նամակը չի տվել դոն Կոսմոյին: Եվ Շարալլան բարկանում էր ու զայրույթը թափում Տիտանայի վրա, որը ոչ մի րոպե հանգիստ չէր կանգնում, քանի որ նրան տանջում էին ճանճերը:

— Հանդա՛րտ, հանդա՛րտ, հանդա՛րտ:

Երեք հարված սանձափոկով, և Տիտանան փակեց արցունքոտվող աչքերը՝ այնպիսի խոնարհ տխրությամբ, որ Շարալլան իսկույն զղջացիր կոպտության համար:

— Դու էլ ես իրավացի, ա՛յ թշվառ: Քեզ էլ չտվեցին նույնիսկ մի գրկաչափ ծղոտ:

Եվ նա խոր հառաչեց:

Ի վերջո դոն Կոսմոն երևաց վիլլայի պատուհանում: Ծածկոցափեղկերի չրխկոցի վրա Շարալլան կտրուկ շրջվեց: Բայց դոն Կոսմոն զարմացավ, որ նա դեռ այստեղ է:

— Պլաչիդո: Դու այստեղ ի՞նչ ես անում:

— Ինչպե՞ս թե, ձերդ պայծառափայլություն: Ես սպասում եմ նամակի պատասխանին,— ձեռքերն աղերսանքով կրծքին դնելով, Շարալլան հառաչեց:

— Մի՞թե պատասխան է պետք:

— Իհարկե,— բացականչեց Շարալլան հուսահատ:— Ես արդեն ամբողջ մի ժամ սպասում եմ:

— Այո՛, այո՛, իսկապես: Այդ ծերացած եզը նրան ոչինչ չի ասել:

— Դու իրավացի ես, այո՛, սպասի՛ր, որդի,— ասաց դոն Կոսմոն պատուհանից հեռանալով:

Նա մտածեց, որ եղբայրը միշտ էլ հոգ է տարել նույնիսկ մանր ձևականությունների մասին (ինքը՝ դոն Կոսմոն գտնում էր, որ դրանք դատարկ բաներ են) և վիրավորանք կհամարի կամ էլ առնվազն՝ մեծ անքաղաքավարություն, եթե պատասխան չստանա: Նա վերցրեց դեղնած թղթի մի խղճուկ թերթիկ, կպցրած գրիչը թաթախեց ժանգագույն թանաքով լի սրվակի մեջ և կանգնած, արմունկով հենվելով կոմոդի մարմարե տախտակին, մեծ լարումով գրեց պատասխանը, որը, ի վերջո, երկար ջանքերից հետո ստացվեց այսպես.

Վալսանիայից, 22 սեպտեմբերի 1892 թվականի

Թանկագին Իպոլիտո.

Դու գուցե չգիտես, թե ինչ խղճուկ վիճակի է հասել այս կիսավեր խրճիթը, որտեղ միայն ես կարող եմ ապրել, որովհետև ինձ համարում եմ արդեն այս աշխարհի սահմաններից դուրս և ոչ մի բանից չեմ գանգատվում: Եթե դու գտնում ես, որ դա կարևոր չէ, և դրանից չի կարելի խուսափել, թող Սալվոյի ընտանիքն ապրի այստեղ՝ գյուղական կյանքով: Խնդրում եմ քեզ՝ նախազգուշացնել նրանց, որ այստեղ՝ մեզ մոտ ամեն ինչի պակաս կա, և որ նրանք իրենց հետ բերեն ամեն տեսակի տնային կահ-կարասի, անկողնու սպիտակեղեն և այն ամենը, ինչ հարկավոր կլինի իրենց:

Ես կուզենայի որոշ բաներ ասել քեզ և կասեի, եթե զուր չհամարեի այն հույսը, թե դու կլսես իմ խորհուրդները:

Բոլոր դեպքերում քնքշաբար գրկում եմ քեզ՝

Կոսմո:

Նա ֆսֆսալով կնքեց նամակը և նորից մոտեցավ պատուհանին: Կապիտան Շարալլան մոտ վազեց, հանեց բերետը և դրանով բռնեց նամակը:

— Համբուրում եմ ձեր ձեռքը, ձերդ պայծառափայլություն:

Մի ցատկ, և նա թամբի վրա է:

— Թռի՛ր, Տիտանա:

— Հա՛ֆ, հա՛ֆ, հա՛ֆ,— և երեք շները, հանկարծակի զարթնելով, վազեցին նրա ետևից, որ իրենց ձևով բարի ճանապարհ մաղթեն նրան:

Դոն Կոսմոն մնաց պատուհանի մոտ, նա հայացքով հետևեց կապիտան Շարալլայի քառատրոփ արշավին այնքան ժամանակ՝ մինչև ձին թեքվեց անկյունը: Ապարդյուն վազքից հետո երեք շները գոմռալով վերադարձան: Երբ նրանք նորից սանդուղքի մոտ փռվեցին գետնին և, դունչները դնելով առջևի թաթերին, փակեցին աչքները, որ նորից քնեն, դոն Կոսմոն, նայելով նրանց, թոթվեց ուսերը, թեթևակի օրորեց գլուխը և ժպտաց: Այն բանից հետո, երբ շները նորից քնեցին, դոն Կոսմոյին արդեն անիմաստ չէր թվում ո՛չ նրանց հետապնդումը, ո՛չ վազքը: Նրանք արտահայտեցին իրենց բողոքը այդ մարդու այցելության դեմ, որն ընդհատեց իրենց քունը: Հիմա, ենթադրելով, որ իրենց հաջողվեց քշել նրան, շները նորից հանգիստ պառկեցին քնելու:

«Դրա մեջ է շնային իմաստնությունը,— մտածեց դոն Կոսմոն խոր հառաչանքով:— Կերել են, բավարարել իրենց մարմնի մյուս պահանջմունքները, իսկ հիմա թող ժամանակն իր համար հոսի, քանի դեռ իրենք քնած են»:

Դոն Կոսմոն նայեց տան առջևի ծառերին, և նրան թվաց, թե ծառերը խորասուզված են անվերջանալի քնի մեջ, որն իզուր էին փորձում խանգարել և՛ ցերեկվա լույսը, և՛ քամին, որ սոսափում էր նրանց տերևների մեջ: Այդ տերևների երկար, թեթև սոսափի մեջ, որոշ ժամանակից ի վեր, նա կարծես անսահման հեռվից լսում էր ինչ-որ խուլ տրտունջ, որ խոսում էր ամենայն գոյի ունայնության մասին, կյանքի տանջալից թախծի մասին:

Գլուխ II

Ֆլամինիո Սալվոյի խնդրանքով, որն այնպես էր կլանված բանկային գործառնություններով և բազմաթիվ այլ գործարքներով, որ ոչ մի րոպե ազատ ժամանակ չէր մնում, Ինյացիո Կապոլինոն՝ նրա նախկին քեռայրը, և Նինի դը Վինչենտիսը՝ տան պատանի բարեկամը, հենց հաջորդ օրը քառանիվ կառքով Ջերջենտիից ուղևորվեցին Վալսանիա՝ ծովափ

տեղափոխվելու գործը տնօրինելու հանձնարարությամբ, որ չափազանց հաճելի էր երկուսի համար էլ, թեև տարբեր և նույնիսկ իրար հակադիր պատճառներով:

Տնային կահ-կարասիով բեռնված սայլերը քաղաքից դուրս էին եկել ավելի վաղ և հիմա, հավանաբար, արդեն Վալսանիա էին հասել: Զրույցը ուղևորների միջև, որ գնում էին Սալվոյի կառքով, վերջապես անդրադարձավ իշխան Լաուրենտանոյի և դոն Ֆլամինիոյի քրոջ՝ դոննա Ադելաիդայի առաջիկա հարսանիքին:

— Չէ՛, նա շատ երկար սպասեց,— խոսակցին աչքով անելով, կրկնեց Կապոլինոն:— Չկեղծենք. հիսուն տարի ամուսնության սպասելը չափազանց է: Խեղճ Ադելաիդա:

Նինի դը Վինչենտիսն անդադար թարթում էր՝ կարծես նրա համար, որ իր գեղեցիկ, սև ու նշաձև աչքերը չմատնեին անբավականությունը, որ հարուցում էին այդ ծաղրանքները: Չնայած դրան, նա ճիգ էր անում իր դալուկ, նուրբ դեմքին ձևացնելու ժպիտի նման մի բան, կարծես փորձում էր Կապոլինոյի տոնին հարմարվել և զվարթությանը պատասխանել զվարթությամբ՝ թեկուզ անժամանակ և անտեղի:

— Ա՛յ թե հարսանիք կլինի, եթե ընդհանրապես դա կարելի է այդպես կոչել,— անողոքաբար իր գիծն էր տանում Կապոլինոն. այստեղ նրան չէին կարող լսել: (Նինի՞ն: Սիրելի Նինի: Հրեշտակային հոգի է, բայց բացարձակ զրո):— Ա՛յ թե հարսանիք կլինի... դեպ՝ դա լավ կվերջանա, թե՞ վատ՝ մեզ ի՞նչ: Օրենքը միշտ էլ օրենք է մնում, և նրա առաջ քաղաքացիական ու կրոնական համոզմունքները շատ քիչ նշանակություն ունեն կամ էլ բոլորովին ոչինչ չեն նշանակում: Իսկ իշխանը, ինչպես գիտես, դրել է conditio sine qua , որ ամուսնությունը լինի միայն եկեղեցական. քաղաքացիականն անհամատեղելի է նրա հայացքներին: Հասկանո՞ւմ ես, թե սրանից ինչ է բխում: Այն, որ ամուսնությունը օրինական ուժ չի ունենա: Չեմ վիճում, դա գեղեցիկ է, ինքնատիպ, նույնիսկ համարձակ, բայց ավա՛ղ... Խե՛ղճ Ադելաիդա:

Եվ Կապոլինոն նորից սկսեց քրքջալ, կարծես, նրա պատկերացմամբ, Ադելաիդա Սալվոն այն կանանցից չէր, որոնցից կարելի է պահանջել հերոսության նոր տեսակ՝ համարձակ մարտահրավեր հասարակությանը, որը հիմնված է քաղաքացիական օրենսդրության վրա:

Նինի դը Վինչենտիսը լռում էր և շարունակում էր թարթել աչքերը՝ միշտ նույն թախծալի ժպիտը դեմքին, հուսալով, որ գոնե դրանով կմեղմացնի իր ուղեկցի ծաղրական ավյունը:

Բայց ոչինչ չէր ստացվում: Կապոլինոն մոլեգնում էր ամբողջ ուժով:

— Ինչո՞ւ է նա այդ բանն անում,— շարունակեց նա՝ վառ պատկերացնելով հարսնացուին՝ պառավ օրիորդին:— Որ մտնի բարձրաշխարհիկ հասարակություն՝ որպես իսկական ազնվատոհմ սինյորա՞: Ես կասեի, որ նա շուտով դուրս կգա այդ հասարակությունից: Նա իրեն կփակի Կոլիմբետրայում: Չէ՞ որ այդ կալվածքը կդառնա ամենաիսկական մենաստան: Իշխանն առնվազն վաթսունհինգ տարեկան կլինի:

Վինչենտիսն օրորեց գլուխը, և Կապոլինոն մի րոպե ընդհատեց իր ճառը:

— Էհ, թանկագինս: Ես գիտեմ, դու լի ես հրեշտակային անմեղությամբ, բայց չէ որ խոսքն ամուսնությանն է վերաբերում, և հարկ կլինի մտածել նաև տարիքի մասին. vis, vis, vis , սա ասում են նույնիսկ կրոնավորները: Հետևաբար բանն այստեղ հասարակությունը չէ: Ադելաիդան կդառնա իշխանուհի, իշխանուհի Լաուրենտանո: Ավելի լավ է ասենք՝ Կոլիմբետրայի թագուհի: Այո՛, ինձ համար, քեզ համար, մեզ բոլորիս համար, ովքեր գտնում են, որ եկեղեցական ամուսնությունը ոչ միայն վեր է քաղաքացիականից, այլև միակ իսկական, օրինական ամուսնությունն է: Ամուսնությունը, որ բավական է աստծու առաջ, պետք է որ լիովին բավական լինի մարդկանց համար: Եվ այնուամենայնիվ, բոլոր մյուսները, ավա՛ղ, բոլորովին էլ պարտավոր չեն ճանաչելու այն և Կոլիմբետրայի սահմաններից դուրս Ադելաիդային համարելու իշխանուհի Լաուրենտանո. օրինակ՝ Լանդոն՝ իշխանի որդին առաջին ամուսնությունից, նա բնավ էլ պարտավոր չէ հարգել Ադելաիդային՝ որպես իր երկրորդ մորը: Էլ ի՞նչ է մնում... Հարստությո՞ւնը... Իհա՛րկե, Ադելաիդան փողի համար չի

ամուսնանում, նա առանց այդ էլ փող շատ ունի: Բայց եթե թշվառ Ադելաիդան այնուամենայնիվ ամուսնանում է փողի համար, ապա ես շատ եմ վախենում, որ նրան էլ նույնը պատահի, ինչ պատահեց ինձ:

Կապոլինոն դարձյալ անուրախ ծիծաղեց:

Ժամանակին երկար պայքարից հետո նրան հաջողվեց ամուսնանալ Ֆլամինիո Սալվոյի քրոջ հետ. այդ քույրը երկու տարով փոքր էր Ադելաիդայից՝ ծռակող մի արարած, բայց կնոջ օժիտի շնորհիվ Կապոլինոն նախանձելի վիճակ ստեղծեց իր համար: Սակայն, ավա՛ղ, երջանկությունը վաղանցուկ եղավ: Վշտերով լի է մեր աշխարհը, և վա՛յ այն մարդուն, որ հավատում է նրան: Հինգ տարի անց կինը մեռավ՝ այդպես էլ երեխա չպարգևելով նրան՝ ի լրումն այդ դժբախտության, և Կապոլինոն ստիպված եղավ վերադարձնել օժիտը՝ նորից հայտնվելով առաջվա վիճակում՝ հենց այն ժամանակ, երբ նրա հնարամիտ ուղեղում խռնվում էին այնքան շատ ծրագրեր՝ մեկը մեկից լավ ու համարձակ: Ավա՛ղ, օրհնյալ դրամական լծակը հանկարծ չքացել էր: Կես տարի նա ձևացրեց, թե տրվել է իր խորունկ սրտային մորմոքին, հետո ևս կես տարի խորասուզվեց խորին մելամաղձոտության մեջ՝ հուսալով այս կամ այն կերպ հուզել Սավոյի մյուս քրոջ՝ այդ նույն Ադելաիդայի սիրտը: Բայց Ադելաիդայի սիրտը, որ լավ էր պաշտպանված լայնածավալ կրծքի ամրոցով, բոլորովին չգթաշարժվեց: Նա կես տարի դիմացավ պաշարմանը, որ կատարվում էր սիրալիրությունների, նվիրվածության և սիրահետումների միջոցով: Եվ վերջապես մի հարվածով ետ մղեց ամենաուժեղ ու վճռական գրոհը, և Կապոլինոն ստիպված եղավ նահանջել՝ թեև պահպանելով մարտակարգը: Հետո էլի խորին ընկճվածության և անհաղթահարելի թախծի կես տարի: Եվ վերջապես, ամուսնանալով երկրորդ անգամ՝ երիտասարդ ու գեղեցիկ կնոջ հետ, Կապոլինոն նորից սկսեց (և այս անգամ մեծ հաջողությամբ) պաշարել Ֆլամինիո Սալ-վոյի տունը:

Չար լեզուները հաստատում էին, որ միայն Նիկոլետտա Սպոտոյի՝ իր երիտասարդ, գեղեցիկ ու կենսախինդ կնոջ հմայքների շնորհիվ էր (իսկ նա անմիջապես դարձավ Ադելաիդայի և Ֆլամինիոյի միակ դստեր՝ Դիանելլայի ընկերակցուհին), որ Կապոլինոն ընդունվեց բանկ՝ որպես քարտուղար և իրավախորհրդատու: Բայց շան հաչոցը քամին կտանի: Արդեն մի տարի նա ապրում էր շքեղության ու լիության մեջ. և՛ նա՝ ինքը, և՛ նրա կինը օգտագործում էին Սալվոյի շքեղ լանդոն ու նրա ախոռի հոյակապ ձիերը՝ որպես իրենց սեփականը: Նա ամենանրբագեղ հեծյալն էր և ամեն կիրակի, կարծես ձգտելով ապացուցել դա, սիգարշավում էր Պասեջատա ծառուղով: Ի վերջո, օգտվելով Ֆլամինիո Սալվոյի անսահմանափակ աջակցությունից, նա կարողացավ առաջ գնալ և հասնել այն բանին, որ նրան համարեցին մարտնչող կղերական կուսակցության ղեկավար, կուսակցություն, որը մեծապատիվ Ֆացելլոյի հրաժարականից հետո նրան առաջարկեց առաջադրել իր թեկնածությունը որպես պատգամավոր՝ առաջիկա համընդհանուր ընտրություններում:

Նինի դը Վինչենտիսի պարզունակ հոգում չէր ծագում նույնիսկ մի աղոտ կասկած, որ Կապոլինոյի մաղձոտ ծաղրանքները դոննա Ադելաիդայի վերաբերյալ կարող են ունենալ գաղտնի պատճառներ, որոնք չի կարելի խոստովանել: Նա, ինչպես չէր կասկածում, որ Ֆլամինիոյի դստեր՝ Դիանելլա Սալվոյի նկատմամբ տածած իր երկչոտ, մաքուր ու կրքոտ սիրո վրա որևէ մեկը կարող է ուշադրություն դարձնել, ինչպես առաջ չէր նկատում, որ Կապոլինոն համառորեն, բայց ապարդյուն պաշարում է դոննա Ադելաիդային, այնպես էլ հիմա չէր հավատում բամբասանքներին՝ հաճելի սինյորա Նիկոլետտայի՝ Կապոլինոյի երկրորդ կնոջ մասին: Նա չէր կարողանում ոչ մի բանի մեջ աստառը տեսնել, հատկապես՝ դրամական: Այդ հարցում նա կարծես կույր լիներ: Ծնողների մահից հետո նա և իր ավագ եղբայր Վինչենտեն ահա արդեն քանի տարի թույլ էին տալիս, որ իրենց կողոպտի Յակո Պաչա անունով գող կառավարիչը, որը կարողացել էր այնպես վարպետորեն խճճել բոլոր գործերը, որ երբ թշվառ Նինին ի վերջո հաշվետվություն պահանջեց, քիչ էր մնում գլուխը պտտվեր: Եվ նա ստիպված եղավ առաջին անգամ մուրհակով փոխառություն վերցնել Սալվոյի բանկից: Ի վերջո, իր կառավարչի խորհրդով, նա Սալվոյին պարտքի դիմաց առաջարկեց Պրիմոսոլե հոյակապ կալվածքը. առաջարկն անհապաղ ընդունվեց, և Սալվոն, կալվածքից բացի, ստացավ նաև Նինիի ջերմ երախտագիտությունը. նրա մտքով էլ չէր

անցնում, իհա՛րկե, որ իր կառավարիչ Պաչայի բանկիրի միջև կարող է համաձայնություն լինել: Նա սիրում էր Դիանելլա Սալվոյին և դոն Ֆլամինիոյի մեջ տեսնում էր միայն նրա հորը:

Հիմա, երբ աղջիկը հրաշքով ապաքինվել էր ծանր տիֆից, Նինին այնպես էր ուզում, որ Դիանելլան կազդուրվելու համար գնա Պրիմոսոլե վիլլան, որ համակված էր մանկության հուշերի թախծալի քնքշությամբ. այնտեղ ամեն ինչ Դիանելլային կպատմեր նրա մասին: Բայց բժիշկները Սալվոյին ասացին, թե նրա դստեր համար օգտակար կլինի ծովային օդը: Եվ Նինին տխրությամբ մտածում էր, որ ինքը հազվադեպ կարող է գնալ ծովափ՝ Վալսանիա: Առայժմ նրան սփոփում էր այն միտքը, որ ինքը պիտի հսկի Դիանելլայի սենյակը նախապատրաստելուն, մի բույն, որտեղ աղջիկը կապրի առաջիկա մի քանի ամիսը:

Կապոլինոն իսկույն հասկացավ, թե ինչ է մտածում իր երիտասարդ բարեկամը, որովհետև արդեն վաղուց և շատ հեշտությամբ կռահել էր նրա միամիտ հույսերը: Նա ծիծաղեց, ավարտեց առաջվա խոսակցությունը՝ «վերջ» բացականչությամբ և, ձեռքերը շփելով, փոխեց թեման.

— Շուտով կհասնենք: Դու հոգ կտանես Դիանելլայի սենյակի մասին, այդպես ավելի լավ կլինի: Իսկ ես կզբաղվեմ դոննա Վիտտորինայի համար հարմար տեղ գտնելով:

Նինին, որին դա լիովին բավարարում էր, խոր կարեկցանք արտահայտեց դոննա Վիտտորինայի՝ Սալվոյի կնոջ նկատմամբ, որը խելագարվել էր շատ տարիներ առաջ:

— Այո՛, այո՛,— ասաց նա,— հարկավոր է շատ զգույշ լինել, որ այս փոփոխությունները, աստված մի՛ արասցե, շատ չհուզեն նրան:

— Սարսափելի ոչինչ չկա,— ընդհատեց նրան Կապոլինոն:— Կտեսնես, նա նույնիսկ չի նկատի: Եվ առաջվա նման կգործի իր անվերջանալի գուլպան: Գիտե՞ս, նա գուլպա է գործում տեր աստծու համար, գործում է գիշեր ու ցերեկ և պահանջում է, որ իրեն օգնեն Սան-Վինչենցոյից եկած երկու միանձնուհիները, որ խնամում են նրան: Ասում են, թե այդ գուլպան արդեն մի մեծ ձկնորսական նավակի նավակողի երկարությունն ունի:

Նինին տխուր օրորեց գլուխը:

Անցնելով Սետան, քառանիվ կառքը մեծ ճանապարհից թեքվեց ուղիղ դեպի կալվածքը: Դարպասն ավերված էր. լրիվ ժանգոտված փեղկերից մեկը դեռ դիմանում էր՝ սյունին կպած, մյուս սյունը վաղուց էր տապալվել: Կառանցի ճանապարհը, որ անցնում էր կալվածքի այդ մասով, որը նույնպես տրված էր կիսրարներին, գտնվում էր անմխիթար վիճակում, ինչպես մնացած ամեն ինչը, և ծածկվել էր թփերով, որոնց միջև երևում էին քիչ առաջ անցած կահույք տանող սայլերի թողած աղուրները:

Նինի դը Վինչենտիսը նայեց այդ տխուր պատկերին և ոչինչ չասաց: Իսկ Կապոլինոն շարունակում էր խոսել երկուսի փոխարեն:

— Դժվար թե այստեղ որևէ բան զվարճացնի մեր հիվանդին,— ասաց նա՝ դեմքը ծռմռելով,— այնպես չէ՞:

— Այստեղ շատ տխուր է,— հառաչեց Նինին:

— Ես խոսում եմ ոչ միայն տեղանքի մասին,— ավելացրեց Կապոլինոն,— այլև նրանց մասին, ովքեր ապրում են այստեղ... Երկու խենթեր, թանկագինս: Հիմա կտեսնես: Բայց... Այս ուղևորությունը Ադելաիդայի համար, որն այստեղ ձեռնարկված է ավելի շատ դոննայի տեղափոխվում, քան Դիանելլայի: Իսկ Դիանելլան գուցե նկատում է այդ, բայց ինչպես միշտ, շարունակ լռում է՝ հորաքրոջ սիրուց... Այո՛, Ֆլամինիոն մեծ մարդ է: Ոչինչ չես ասի:

— Բայց օդն այստեղ լավն է,— նկատեց պատանին, որ թեկուզ մի քիչ մեղմացնի կծու դիտողությունը Սալվոյի մասին:

— Գերազանց է, գերազանց,— քրթմնջաց Կապոլինոն. հետո նա պարփակվեց մռայլ լռության մեջ և այդպես մնաց մինչև վիլլա հասնելը:

Սայլերը քիչ առաջ էին տեղ հասել՝ բաց կառքի հետ, որ բերել էր Սալվոյի երկու ծառաներին, խոհարարին, աղախնին և երկու պաստառագործների: Նայելով լավորակ կահույքով բեռնված չորս սայլերին, դոննա Սառա Ալայմոն ուրախ ծափ տվեց վերին սանդղահարթակում:

— Բեռնաթափե՛ք, շո՛ւտ արեք,— ելնելով կառքից և ծաղկեփունջը թափահարելով, հրամայեց Կապոլինոն ծառաներին ու սայլապաններին: Հետո, փութկոտ վազելով սանդուղքի վրա, դոննա Սառային հարցրեց.

— Դոն Կոսմո՞ն:

Եվ, չսպասելով պատասխանի, մտավ հին վիլլան. Նինի դը Վինչենտիսը հետևեց նրան, ինչպես ետևից ընկած շնիկ:

— Բեռնաթափե՛ք,— կրկնեց ծառաներից մեկը՝ իր ընկերների քրքիջի տակ կապկելով այդ մի ժամվա տիրոջ խոսելու եղանակը, ձայնը և ձեռքի հրամայական շարժումը:

Դոն Կոսմոն անդադրումի պես շրջում էր սենյակներում, որոնք հենց նոր էր լվացել դոննա Սառան, որը դեռ նախորդ օրն էր իմացել Սալվոյի շուտափույթ գալուստի մասին և հիմա ամբողջովին համակվել էր ուրախությամբ: Նա իսկույն գործի անցավ և նույնիսկ դոն Կոսմոյին համոզեց սենյակներից հանել անպետքացած կահույքը, որ այդ հարուստ հյուրերը չտեսնեն իշխանական տան աղքատությունը:

Բայց հենց որ լսեց դժբախտ հին կահույքի ճռճռոցը, որ առանց ձևականության պոկում էին սովորական տեղերից և քաշելով դուրս տանում, դոն Կոսմոն բղավեց իր սենյակից.

— Պետք չէ, պետք չէ, պետք չէ:

Եվ դոննա Սառան, այդ բողոքից, զարմացած, հարցրեց.

— Պետք չէ՞: Ինչպե՞ս թե պետք չէ, եթե դուք ինքներդ եք ինձ պատվիրել:

Միշտ այդպես էր ստացվում. դոննա Սառան շարունակ խոսում էր, խոսում, իսկ դոն Կոսմոն շարունակ մտածում էր, մտածում՝ ժամանակ առ ժամանակ ձևացնելով, թե լսում է, և թեթևակի գլխով անելով այն ժամանակ, երբ նրան սկսում էր առանձնապես զայրացնել բառերի այդ անվերջանալի հոսանքը: Դոննա Սառան, բնականաբար, դրանք ընդունում էր որպես համաձայնության նշաններ: Երբ դոն Կոսմոն ձևացնում էր, թե լսում է, դոննա Սառան նրա համբերատարության մեջ տեսնում էր՝ տունը և աշխարհը կառավարելու իր իմաստնության ճանաչումը: Եվ յուրովի մեկնաբանելով տիրոջ այդ նշանները և այդ համբերատարությունը, նա այնքան եռուն էր գնում, որ գուցե երեկոյան որևէ կերպ կփորձեր բռնել տիրոջ ձեռքը և տանել անկողին, եթե հանկարծ դոն Կոսմոն զարմացած չբացեր աչքերը և չարձակեր մի բացականչություն, որն ակնթարթապես ավերում էր դոննա Սառայի բոլոր օդային ամրոցները:

— Դոն Կոսմո՛, շա՛տ հարգելիս,— բացականչեց Կապոլինոն՝ սենյակներում երկար թափառելուց հետո վերջապես գտնելով նրան:— Մենք այստեղ մեծ իրարանցում ենք սարքել, գրողը տանի: Հա՞:

— Ի՛նչ եք ասում, ի՛նչ եք ասում,— շտապեց առարկել դոն Կոսմոն, որ միանգամից վերջ դնի բոլոր ծեքծեքուն խոսակցություններին: Նրա քիթը կնճռոտվեց բորբոսի սուր հոտից, որ տիրում էր դեռ խոնավ վիլլայում, որը շատ վաղուց չէին լվացել:— Ես կուզենայի միայն գտնել որևէ մեկուսի սենյակ, որտեղ կարող եմ ապրել՝ ոչ ոքի չխանգարելով:

Կասոլինոն արդեն սկսում էր բողոքել, բայց դոն Կոսմոն անմիջապես կանխեց նրան.

— Թույլ տվեք ես ասեմ: Ե՛վ ինձ հարմար կլինի, և՛ նրանց: Այդպես ավելի լավ կլինի: Հասկացեք, հասկացեք:— Այս խոսքերի հետ նա բարձրացրեց ձեռքը և շոյեց Նինի դը Վինչենտիսի սև ու նրբագեղ փոքրիկ մորուքը:

— Դու գեղեցիկ տղա ես դարձել, որդիս, և այնպես ես մեծացել, որ ես ակամա հիշում եմ, թե ինչքան եմ ծերացել: Իսկ քո եղբայր Վինչենտե՞ն: Առաջվա նման հափշտակված է արաբագիտությա՞մբ:

— Առաջվա նման,— ժպտալով պատասխանեց Նինին:

— Ա՛խ այդ արաբական ձեռագրերի տասնչորս հատորները երևի այն աշխարհում տասնչորս ջրաղաց քարերի նման ճնշում են կոմս Լուկեզի-Պալիի հոգին՝ այն բանի համար, որ մեռնելիս դրանք կտակեց մեր գրադարանին և կործանեց խեղճ տղային:

— Նա արդեն ծանոթագրել է տասը,— ասաց Նինին:— Մնացել են չորսը, բայց ա՛յ, այսպիսի հաստ հատորներ:

— Բարի հաջողում, բարի հաջողում,— բարեկամաբար ընդհատեց Դոն Կոսմոն:— Բայց դու էլ, որդիս, մի՛ քնիր... Երկուսդ էլ զբաղվեք ձեր գործերով: Չէ՞ որ ձեր գործերը վատ են գնում: Մտածե՛ք, մտածե՛ք:

Իսկ այդ ժամանակ Կապոլինոն փորձեց որպես հայելի հարմարեցնել պատուհանի փեղկը և հարդարեց իր արդեն ճերմակող այտամորուսները: Նա իսկական գեղեցիկ տղամարդ չէր, բայց նրա կրակոտ, թափանցող աչքերը հաճելի լուսավորում էին թուխ, նիհար դեմքը: Նկատելով, որ Լաուրենտանոյի և Նինիի զրույցը մարում է, նա ձևացրեց, թե ուզում է որոշել վիլլայի դիրքը:

— Այս սենյակը նայում է հարավ, ճիշտ չէ՞: Դուք սա՞ եք ընտրել, դոն Կոսմո:

— Սա թե մի ուրիշը՝ մեկ է...— պատասխանեց Լաուրենտանոն:— Այստեղ սենյակներ շատ կան, դուք կտեսնեք, բայց բոլորն էլ այսպես են՝ հին ու անխնամ: Ելնելով այստեղից... Ո՛չ, ինչո՞ւ նրբանկատություն անել, ի՞նչ իմաստ ձևացնել, որ հինը հին չէ: Չէ՞ որ դա չես թաքցնի: Այսպես ահա, ես հենց դա էլ ասում եմ: Ելնելով այստեղից, մենք կընկնենք մի երկար միջանցք, որ շենքը բաժանում է երկու մասի. այս կողմի սենյակները նայում են հարավ, այն կողմինը՝ հյուսիս: Նախասենյակը հատում է միջանցքը և նույնպես վիլլան բաժանում է երկու գրեթե հավասար մասերի, քանի որ այս ծայրում կա նաև կամերոնե , որի մուտքը իմ թիկունքի կողմից է, իսկ մյուս կողմում պատշգամբն է: Հատակագիծը շատ պարզ է:

— Ա՛, լավ է, լավ է, լավ է,— համաձայնեց Կապոլինոն:— Ուրեմն այստեղ կամերոնե՞ էլ կա:

Դոն Կոսմոն ժպտաց, բացասաբար տարուբերեց գլուխը, հետո բացատրեց, թե իրենից ինչ է ներկայացնում այդ կամերոնեն և ով է այն պահպանում:

— Աստվա՛ծ իմ,— բացականչեց Կապոլինոն:

— Դրա համար էլ ավելի լավ կլինի,— եզրափակեց դոն Կոսմոն,— որ դուք տեղավորվեք մյուս կողմում: Ես դիտմամբ այս սենյակն եմ ընտրել ինձ համար:

Կապոլինոն դարձյալ համաձայնեց, և քանի որ ծառաներն արդեն ներս էին բերում առաջին իրերը, Նինիի հետ գնաց տան մյուս կեսի սենյակները: Դոն Կոսմոն մնաց այդ սենյակում, որտեղ դոննա Սառայի օգնությամբ քարշ տվեց բերեց իր բոլոր գրքերը: Զգալով, թե որքան է կշռում այդ ամբողջ էրուդիցիան, խեղճ տնտեսուհին ոչ մի կերպ չէր կարողանում հասկանալ, թե դոն Կոսմոն, այդ ամենը տեղավորելով իր մեջ, ինչպե՞ս կարող է շարունակ ճախրել ամպերում:

Դոն Կոսմոն շարունակ կնճռոտում էր քիթը. նա ոչ մի կերպ չէր կարողանում հանգստանալ, որովհետև այդ ամբողջ առավոտը ամեն տեղից խոնավության հոտ էր փչում: Ասենք, գուցե նրա պատկերացումներում այդ հոտը ինչ-որ կերպ խառնվում էր սրտնեղությանը, որ համակում էր նրան, երբ մտածում էր, թե հյուրերի գալու պատճառով իր բոլոր սովորությունները կխախտվեն՝ ո՞վ իմանա ինչքան ժամանակով:

Շուտով վերադարձավ Կապոլինոն՝ տան մյուս կեսում թողնելով դը Վինչենտիսին, որը, փաստաբանի կարծիքով, ավելի ընդունակ դուրս եկավ կարգ հաստատելու գործում.

համենայն դեպս նա այդպես հայտարարեց: Իրականում Կապոլինոն ձգտում էր հասնել այն բանին, ինչի համար այդպես հաճույքով էր ընդունել Սալվոյի հանձնարարությունը. նա ուզում էր հարցուփորձով իմանալ դոն Կոսմոյի վերաբերմունքը եղբոր ամուսնության նկատմամբ կամ, ինչպես ինքն էր իրեն ասում, «շոշափել նրան» այդ կապակցությամբ:

Նա, իհա՛րկե, հույս չուներ, թե այդ ամուսնությունն անպայման կխանգարվի, բայց իմանալով, թե որքան տարբեր, նույնիսկ անհաղթահարելի հակադիր են դոն Կոսմոյի ու Սալվոյի հայացքներն ու զգացմունքները, իրեն օրորում էր այն հույսերով, թե որևէ տարաձայնություն, որևէ բախում կծագի նրանց միջև այդ ընտանիքի՝ Վալսանիայում ապրելու պատճառով: Դոն Կոսմոյի հոգին այնքան էր հեռու իրականությունից և այնքան էր միայնակ, որ նույնիսկ շփումը մարդկանց հետ չէր կարող նրան սովորեցնել ձևանալուն, արհեստական գործելաձևերին ու խորամանկություններին, որոնց շնորհիվ մարդն այնպես փոխվում է ուրիշների աչքում, և դրա համար էլ հաճախ նրա ստոիկյան անկեղծության սառցածածկույթը ճեղքելով, դուրս էր հորդում ամենաանսքող ճշմարտությունը:

— Ինչքա՜ն գրքեր կան,— բացականչեց Կապոլինոն՝ ներս մտնելով:— Ասենք, դուք միշտ էլ խորասուզված եք գիտության մեջ... Ռոմանյոզի Ռոսմինի , Հեգել, Կանտ...

Գրքերի կռնակներին կարդացած ամեն մի անվան հետ նա ավելի ու ավելի լայն էր բացում աչքերը, կարծես դնում էր ավելի ու ավելի ազդու բացականչական նշաններ:

— Այդ ամենը բանաստեղծություն է,— հառաչեց դոն Կոսմոն՝ ձեռքով անորոշ մի շարժում անելով և կկոցելով աչքերը:

— Ի՞նչ: Ի՞նչ: Չեմ հասկանում, դոն Կոսմո, դուք ուզում էին ասել փիլիսոփայությո՞ւն:

— Կոչեք՝ ինչպես ուզում եք,— պատասխանեց Լաուրենտանոն՝ նորից հառաչելով:— Այստեղ բոլորովին գիտություն չկա կամ էլ շատ քիչ կա: Դե, իհա՛րկե, կարելի է բավականություն ստանալ մարդկային փոքրիկ խելքի վեհությունից, որը հիպոթեզի վրա, այսինքն՝ ամպի վրա, ամրոցներ է կառուցում: Այդ բոլոր զանազան փիլիսոփայական սիստեմները, թանկագին փաստաբան, իմ երևակայության մեջ պատկերանում են... գիտե՞ք ինչ: Դրանք բոլորը տարբեր ոճերի մեծ ու փոքր եկեղեցիներ են՝ կառուցված ամպերի վրա:

— Դե՛, դե՛...— փորձեց ընդհատել Կապոլինոն՝ ծոծրակը քորելով:

Բայց դոն Կոսմոն, որը երբեք ոչ մեկի հետ չէր զրուցել, հիմա, երբ դիպել էին նրա ամենազգայուն լարին, չէր կարող զսպել իրեն.

— Փչեք, և ամեն ինչ կփլվի, որովհետև ներսում ոչինչ չկա. դատարկություն է՝ այնքան ավելի ճնշող, որքան ավելի բարձր ու հոյակապ է շենքը:

Գրգռված այն տարօրինակությունից, որով խոսում էր դոն Կոսմոն, Կապոլինոն ամբողջովին լարվեց՝ կենտրոնանալով, որ պատասխանի, ժխտի, և լարված սպասում էր դադարի: Հենց որ դոն Կոսմոն լռեց, նա փորձեց առարկել.

— Այնուամենայնիվ...

— Ո՛չ, չարժե: Թողնենք դա,— անսպասելիորեն ընդհատեց դոն Կոսմոն՝ ձեռքը դնելով նրա ուսին:— Ամեն ինչ բարբաջանք է, թանկագին փաստաբան:

Բարեբախտաբար, այդ պահին վիլլայի առջևի փոքրիկ հրապարակում, որ ելնում էր դեպի խաղողի այգին ու դեպի ծով, Մաուրո Մորտարան իր սովորական «պիո, պիո, պիո» կանչով սկսեց կանչել իր անհամար աղավնիներին, որոնց կերակրում էր օրը երկու անգամ:

Դոն Կոսմոն ու Կապոլինոն ելան պատշգամբ, Նինին նույնպես ցած թեքվեց նրանցից ամենահեռու պատշգամբի ճաղաշարքի վրայով, հետո պատշգամբում երևացին ծառաները, աղախինը և պաստառագործները:

Այդ պատահում էր ամեն անգամ. թևերի անմեղ թրթռոցը փոխվում էր կատաղի պայքարի, որովհետև կերի քանակությունը վաղուց նույնն էր մնում, իսկ աղավնիներն անասելի բազմացել էին և հիմա ապրում էին գրեթե վայրի վիճակում՝ և՛ կալվածքում, և՛ ամբողջ շրջակայքում: Նրանք հիանալի գիտեին իրենց ժամանակը և բոլոր կողմերից թռչում, գալիս էին խիտ, շրշացող ամպերի նման, նրանցով լիքն էին վիլլայի, ծառաների կողաշենքի, մարագի, աղավնատան, ամբարի, հնձանի և գինու մառանի կտուրները: Եվ եթե Մաուրոն ուշանում էր, պարզապես մոռանում էր նրանց մասին կամ էլ խորասուզվում էր հիշողությունների մեջ, աղավնիները փոքրիկ երամներով թռչում էին կտուրներից և հիշեցնում էին իրենց մասին՝ ղունղունալով նրա սենյակի դռան մոտ: Փոքրիկ երամները հետզհետե մեծանում էին, և շուտով տան առջևի ամբողջ հրապարակը լցվում էր թևերի թրթռոցով ու ղումղունոցով, իսկ այն աղավնիները, որ նստելու տեղ չէին գտնում, ճախրում էին օդում՝ հրապարակի վրա:

Դոն Կոսմոն սրտնեղությամբ մտածում էր, որ Մաուրոն չի գա նախաճաշելու. անցած օրը նա տիրոջն ասել էր.

— Այսօր ես վերջին անգամ եմ ուտում ձեզ հետ: Հուսով եմ, որ դուք կբարեհաճեք հավատալ, որ ես սեղան չեմ նստի Ֆլամինիո Սալվոյի հետ:

Հիմա Մաուրոն կանգնած էր ցածում, իր աղավնիների մեջ, գլուխը կախած: Կապոլինոն պատշգամբից նայում էր նրան, կարծես իր առաջ ինչ-որ արտասովոր գազան լիներ:

— Բարևե՞մ,— հարցրեց նա դոն Կոսմոյին: Սա ձեռքի շարժումով ցույց տվեց, որ պետք չէ:

— Արջ է, հա՞, — ավելացրեց Կապոլինոն: Բայց նշանավոր տիպ է:

— Արջ է,— կրկնեց դոն Կոսմոն՝ հեռանալով պատշգամբից:

Երբ նրանք գնացին պաստառագործների կողմից հարուստ կահավորված սեղանատունը, որ տան մյուս կեսում էր, Կապոլինոն մի անգամ էլ փորձեց շոշափել դոն Կոսմոյի տրամադրությունը՝ այն գործի կապակցությամբ: Հարկավոր էր աշխատել, որ չվերադառնան խոսակցությանը՝ փիլիսոփայական գրքերի մասին:

Եվ դոն Կոսմոն մոռացավ այդ խոսակցությունը՝ հիանալով դահլիճով, որը հիմա անհնար էր ճանաչել:

— Ատլանտի սխրանքը,— բացականչեց նա՝ թփթփացնելով Նինի դը Վինչենտիսի ուսին:— Ինձ թվում է, թե ընկել եմ Կոլիմբետրա:

Կապոլինոն իսկույն բռնեց գնդակը թռիչքի պահին.

— Դուք շա՞տ տարիներ չեք եղել Կոլիմբետրայում:

Դոն Կոսմոն մի ակնթարթ մտորեց.

— Տասը տարի:

Ու լռեց՝ չավելացնելով ոչ մի բառ: Բայց Կապոլինոն արդեն իր ձկնիկը կարթն էր գցել և սկսեց քաշել.

— Այն ժամանակից, երբ մեռավ ձեր հարսը, այնպես չէ՞:

— Այո՛,— չոր պատասխանեց Լաուրենտանոն:

— Դոննա Թերեզա Մոնտալտոն... Ինչպիսի՛ կին էր... Ի՛նչ մեծ վիշտ էր: Չէ՛ որ նա հին ժամանակների իսկական տիկին էր:

Եվ Կապոլինոն հառաչեց:

Լռությունից հետո, որին ուզում էր իր կեղծ կարեկցանքով կարևորություն հաղորդել, նա էլի մի անգամ հառաչեց, բայց բոլորովին ուրիշ ձևով:

— Այո՛: «Ոչինչ է դառնում երկրային գեղեցկությունը»:

Դոննա Սառա Ալայմոն՝ տնտեսուհին, որն այդ պահին սպասարկում էր սեղանը, որոշեց հյուրերի աչքում բարձրացնել իրեն այդ ստորացումից և, համարձակվելով միջամտել, թախծագորով հառաչանքով ու մանրիկ ծիծաղով ասաց.

— Մետաստազիո:

Նինին շրջվեց և զարմացած նայեց նրան: Դոն Կոսմոն հավաքեց շրթունքները, որ արձակի իր բնորոշ մանրիկ ծիծաղը, որ բաղկացած էր երեք «հո, հո, հո»-ից՝ հնչուն, մռայլ, խոր: Բայց Կապոլինոն՝ տեսնելով, որ իր դիտավորությունը կարող է ձախողվել, սրտնեղած ուղղեց դոննա Սառային.

— Լեոպարդի, Լեոպարդի:

— Պետրարկա, Պետրարկա, ներեցե՛ք, թանկագին փաստաբան, առարկեց դոն Կոսմոն՝ ձեռքերը տարածելով:— Ճիշտ է, չէ՞, Նինի:

— Ա՛խ, այո՛, Պետրարկա: Ի՜նչ հիմարն եմ ես: «Ով թանկ է երկնքին, պատանի է մեռնում»,— անմիջապես իրեն ուղղեց Կապոլինոն:— Ես շփոթեցի... Ուրեմն դուք այն ժամանակից չե՞ք տեսել ձեր եղբորը:

Դոն Կոսմոն հանկարծ քնկոտ տեսք ընդունեց և, աչքերը կկոցելով, գլխով արեց միայն:

— Դոն Կոսմոն մեկուսացել է այստեղ,— բացատրեց Կապոլինոն դը Վինչենտիսին, կարծես թե նա չգիտեր:— Հասկանալի է, տարբեր ճաշակներ, նույնիսկ տրամագծորեն հակառակ, որովհետև դոն Իպոլիտոն սիրում է... սիրում է հասարակություն, չի կարող ապրել առանց հասարակության... Եվ գուցե, ասում եմ, դժբախտությունից հետո կուզենար չմնալ միայնության մեջ, առանց մի հատիկ հարազատ հոգու: Բայց դուք այստեղ եք, որդին՝ միշտ Հռոմում... և...

Դոն Կոսմոն հասկացավ Կապոլինոյի մտադրությունը՝ թեկուզև յուրովի և, որպեսզի ընդհատի խոսակցությունը, ասաց.

— Եվ հետևաբար, ուզում եք ասել, նա վճռել է ամուսնանալ երկրորդ անգամ: Ճիշտ է: Իսկ դու, սիրելիս,— ավելացրեց նա՝ դառնալով Նինիին,— դեռ ոչ մի կերպ չես կարողանում որոշում ընդունել:

Նինին ամբողջովին շիկնեց, երբ նրանից այդպես հանկարծակի պատասխան ուզեցին:

— Ե՞ս:

— Տեսեք, թե ինչպես կարմրեց,— բացականչեց Կապոլինոն՝ պոռթկուն ծիծաղով, որ թաքցնի սրտնեղությունը:

— Ուրեմն այստեղ ինչ-որ բան կա՞, ինչ-որ բան կա՞,— հարցրեց դոն Կոսմոն՝ մատը դնելով կրծքին՝ սրտի վրա:

— Ինչպե՞ս կարող է չլինել,— բացականչեց Կապոլինոն՝ ավելի բարձր ծիծաղելով:

Նինին, որ կարծես նստած էր ասեղների վրա, այդ անպատեհ ծիծաղից շփոթված ու վիրավորված՝ բավական եռանդուն բողոքեց.

— Ոչինչ, ո՛չ մի բան չկա: Խնդրում եմ, այդպիսի բաներ մի՛ ասեք:

— Մի՞թե: Սուրբ Լուիջի Գոնզագա,— շարունակեց Կապոլինոն՝ առաջվա նման դիտմամբ բարձր ծիծաղելով:— Կամ, ավելի ճիշտ... Ըհը, իսկ ո՞ւր է դոննա Սառան: Ա՛յ, այստեղ իսկապես Մետաստազիո է... Մետաստազիոյի հերոսը, դոն Կոսմո: Կամ էլ, ավելի լավ է ասենք, հրեշտակը... բայց ոչ այն իմաստով, ինչ իմաստով ասում են Ալկամոյում: Գիտե՞ք, դոն Կոսմո, Ալկամոյում հրեշտակ են ասում խոճկորներին:

Նինին իսկապես վրդովվեց: Նա գունատվեց և կտրուկ ասաց.

— Դա ինձ ձանձրացրեց, պարոն փաստաբան:

— Լավ, լռում եմ,— հաշտարար եղանակով պատասխանեց Կապոլինոն:

Դոն Կոսմոն տխրեց. սկզբում չհասկացավ, թե բանն ինչ է, հետո բացեց բերանը, որ ասի «ա՛խ», բայց բացականչությունը մնաց նրա կոկորդում: Գուցե խոսքը Սալվոյի աղջկա մասին էր: Դե, դե իհա՛րկե: Նա այդ մասին չէր մտածել: Դեռ ծանոթ չէր Դիանելլայի հետ: Այսպիսով, ամեն ինչ պարզ է: Հրաշալի է: Այդ վիճակից դուրս գալու գերազանց ելք թանկագին Նինիի համար: Եվ նա ցանկացավ սիրտ տալ պատանուն.

— Մի՛ շփոթվիր, որդիս: Դա շատ լուրջ գործ է: Քո վիճակում չի կարելի ժամանակ կորցնել:

Նինին ամբողջովին կուչ եկավ աթոռի վրա, կարծես ուզում էր առանց որևէ գանգատի, մի կերպ ազատվել մարմնի մեջ խրվող հազարավոր ասեղների խայթոցներից: Կապոլինոն՝ շունչը պահած սպասում էր, որ ձյան հյուսը փլվի: Դոն Կոսմոն չէր կարող հասկանալ իր խոսքերի թողած տպավորությունը և զարմանքով նայեց նախ մեկին, ապա՝ մյուսին:

— Երևի իմ շրթունքներից դուրս թռավ էլի ինչ-որ հիմարությո՞ւն,— հարցրեց նա:— Ներեցե՛ք: Ավելի լավ է ես էլ լռեմ:

Նինին իսկապես ճախրում էր իր սեփական արևով լուսավորված երկնքում, արև, որ դեռ չէր ծագել, բայց ուր-որ է կծագեր. ասենք, գուցե նրան այդպես էլ բախտ չվիճակվեր ծագելու: Նինին գերադասում էր պահել նրան այնտեղ՝ իրականության ժայռոտ լեռների ետևում, և լինել հավերժական արշալույսի աղոտ-վարդագույն լույսի մեջ, քանի որ այդ արևը, ծագելով, այլևս երբեք մայր չէր մտնի, իսկ անխուսափելի ստվերները կմնային թեթև ու գրեթե թափանցիկ: Նինին արդեն սկսել էր մտածել այն մասին, որ Սալվոն հազիվ թե բարյացակամ վերաբերվի իր ամուսնական առաջարկությանը, եթե նույնիսկ ինքը ստիպի իրեն անելու այդ առաջարկությունը: Նինին միշտ ձգտում էր, որ այդ կասկածները չհասնեին իր գիտակցությանը, և դրանց մասին կարելի լիներ չմտածել, որպեսզի չպղտորի իր ամբողջ կյանքի ամենամաքուր երազանքը: Եվ ոչ այն պատճառով, որ այդ կասկածները կխանգարեին. պարզապես նրան, իրոք, չէր բավականացնում արիությունը՝ իրականություն դարձնելու այդքան վսեմ իդեալը, և սարսափելի էր, որ այն կարող է խորտակել նույնիսկ թեթևակի շփումը իրականության հետ: Ահա թե ինչու նա ոչ միայն չէր կարող համարձակվել պաշտոնական առաջարկություն անելու, այլև նույնիսկ չէր կարող բացատրվել Դիանելլա Սալվոյի հետ: Իսկ հիմա այն կասկածը, որ ինքը կարող է ձգտել ամուսնության՝ հաշվի առնելով աղջկա օժիտը, կգցեր իր դրամական գործերը, նրան սուր ցավ էին պատճառում, թունավորում ուրախությունը, որ նա զգում էր՝ ծառայություն մատուցելով Դիանելլային՝ աղջկա հանդեպ տածած սիրուց մղված, որովհետև այդ ծառայությունը կարող էր ընդունվել՝ որպես հաշվով արված: Եվ նրան թվում էր, թե արևը հանկարծ մայր մտավ, և ամեն ինչ անսպասելիորեն մթնեց: Իսկ երբ սենյակները կարգի էին բերված, և Նինին՝ զգալով, որ ջղաձգությունը սեղմում է կոկորդը, վերջին անգամ մի պտույտ կատարեց և ստուգեց ամեն ինչ, նա արդեն չէր կարող, ինչպես սկզբում էր ուզում, Դիանելլայի բարձին համբույր դրոշմել, որով կարողանար դիմավորել աղջկան, երբ նա, այդ մասին չիմանալով, գտներ համբույրը երեկոյան, երբ պառկեր քնելու:

Դոն Կոսմոն ու Կապոլինոն, որ փոքրիկ ու սև էին թվում շատ բարձր, մայրամուտին մռայլ հուրհրատող երկնքի տակ, դուրս եկան զբոսնելու հին վիլլայի առաջ՝ երկար, ուղիղ ծառուղում, որ անցնում էր տան ձախ կողմով, գրեթե զառիթափի երկարությամբ. ծառուղուց կտրուկ իջնում էր մեծ, խոր ձորը, որ այստեղ կոչում էին հովիտ:

Թվում էր, թե երկրաշարժն է ճեղքել սարահարթի այդ ամբողջ մասը, որ դարձած էր դեպի ծովը:

Ձորի մի կողմում գտնվում էր Վալսանիա կալվածքը, և նրա վերջին ձիթենիներն իջնում էին այդ ձորը, որ լիքն էր մոխրագույն ստվերներով, և որի խորքում աղոտ ուրվագծվում էին

թթենիները, եղջերենիները, նարնջենիները, լիմոնի ծառերը՝ հաճելիորեն թարմացած Սան-Կալոջերո քարայրի խորքից բխող աղբյուրի ջրերով:

Մյուս կողմում նույն բարձրության վրա գտնվում էին Պլատանիայի անտառահանդերը, որ հարավում կտրուկ իջնում էին դեպի երկաթգիծը, որ ելնելով Վալսանիայի տակ գտնվող թունելից, անցնում էր ափի երկարությամբ՝ մինչև Պորտո-Էմպեդոկլե:

Մայրամուտի բոցի և ոսկու շերտը ֆանտաստիկական գագաթնաշարով նշմարվում էր ձորի մյուս կողմի հեռավոր ծառերի վառ կանաչի միջից: Այստեղ Վալսանիայի նշենիների ու ձիթենիների միջով արդեն անցնում էր իրիկնային ստվերների առաջին զովությունը՝ քնքուշ, թեթև ու թախծալի:

Այդ մթնշաղային ժամը, երբ բոլոր առարկաները վրա հասնող խավարից առաջ հատկապես լարված են պահում վերջին ճառագայթները և ձեռք են բերում գունավորման ինչ-որ արծնապակի պայծառություն, այդ ժամն առանձնապես թանկ էր դոն Կոսմոյի մենակությանը: Նա շարունակ իր հոգում կրում էր այն զգացողությունը, որ իր գոյությունն անհաստատ է այն տեղերում, որտեղ անցել է իր կյանքը, բայց տխրություն չէր զգում: Այդ զգացման պատառով, որը ողջ շրջակայքի անթափանց խորհրդավորության մեջ դառնում էր թեթև ու անորոշ, նրա համար անտանելի էր ամեն մի հոգս, ամեն մի գործնական նկատառում: Հիմա կարելի է պատկերացնել, թե ինչպես տանջալիորեն էր նա ընկալում Կապոլինոյի մենախոսությունը, որը տենդագին պատմում էր Սալվոյի հաջող ձեռնարկումների մասին, ծրագրերի մասին, որ նա հիմնավորապես քննարկում էր իր ծծմբահանքերի կառավարիչ, ինժեներ Աուրելիո Կոստայի հետ, որ նոր զարկ տա ծծմբի արդյունահանությանը, որ վերջին տարիներին հասել էր լիակատար անկման:

— Դա նոր գիտակցության մարդ է,— ասաց Կապոլինոն,— պարզորոշ, ճշգրիտ ու բարդ, դոն Կոսմո, ինչպես ժամանակակից պողպատե մեքենաներն են: Նա միշտ գիտի ինչ է անում: Եվ երբեք չի սխալվում:

— Բախտավոր մարդ է,— կրկնեց դոն Կոսմոն՝ կկոցելով աչքերը և աշխատելով համբերատար լսել:

— Եվ դրա հետ խորապես հավատացյալ է, գիտե՞ք,— շարունակեց Կապոլինոն:— Նա, իրոք, բարեպաշտ մարդ է:

— Երանելի այր:

— Պարզապես զարմանալի է, որ, չնայած իր բոլոր գործերին, նա ժամանակ ու միջոցներ է գտնում մեր կուսակցության մասին հոգալու համար: Եվ ինչպիսի կրքով է պաշտպանում նրա շահերը:

Այստեղ Կապոլինոն նկատեց, որ դոն Կոսմոն իրեն չի լսում, և փոխեց թեման: Նա ավելի մոտեցավ դոն Կոսմոյին, ձեռք տվեց նրա ձեռքին և թախծալի տեսքով կամացուկ ասաց.

— Խե՜ղճ Նինի: Գիտե՞ք, ես հավատացած եմ, որ նա այնտեղ լալիս է: Այն պատճառով, որ մենք մի քիչ կատակեցինք սեղանի շուրջը: Նա թունդ սիրահարված է, խե՜ղճ տղա: Բայց աղջիկն, իհա՛րկե, նրան բաժին չի հասնի...

— Որևէ մեկի հետ նշանվա՞ծ է,— հանկարծակի կանգնելով հարցրեց դոն Կոսմոն:

— Ո՛չ, ո՛չ, պաշտոնապես՝ ո՛չ,— անմիջապես պատասխանեց Կապոլինոն:— Բայց... միայն թե, խնդրում եմ, ոչ մեկին ո՛չ մի խոսք: Նույնիսկ օդը չպետք է իմանա այդ մասին: Ես կարծում եմ, թանկագին դոն Կոսմո, որ աղջիկը ոչ այնքան մարմնով է հիվանդ, որքան հոգով:

— Մի քիչ ցնդած է, հա՞:

— Ցնդած է: Ահա միակ բանը, որ վատ է սարքված նրա հոր կողմից: Այստեղ Ֆլամինիոն վրիպել է... դե՛, ի՞նչ կարող ես ասել, վրիպել է:

Դոն Կոսմոն կանգնեց, մի քանի անգամ օրորեց գլուխը և շատ լուրջ ասաց.

— Ա՛յ, տեսնո՞ւմ եք, նա էլ կարող է վրիպել, թանկագին փաստաբան:

— Ի՞նչ կարող ես անել, երբ սատանային հաջողվում է պոչը խոթել...— շարունակեց Կապոլինոն:— Դուք գիտե՞ք, որ Ֆլամինիոն մի տասը տարի առաջ... դե չէ՛, երևի մի տասնհինգ տարի... ասենք, կարևոր չի մի տարի ավել կամ պակաս... Մազ էր մնում, որ նա մեռնի, խեղդվելուց հազիվ փրկվեց... Չգիտե՞ք: Ինչպե՞ս թե: Պորտո-Էմպեդոկլեում, ծովում լողանալիս: Զվարճալի պատմություն է և միևնույն ժամանակ՝ ահավոր, հավատացեք: Երկու դդումի պատճառով...

— Երկու դդումի՞,— կրկնեց դոն Կոսմոն, իր սովորությանը հակառակ՝ հետաքրքրություն ցուցաբերելով: — Լսենք:

— Հա, ուրեմն,— շարունակեց Կապոլինոն,— նա լողանում էր Կազոտտիում: Լողալ չիմանալով, զգուշությունից մնում էր ցանկապատի սյուների արանքում, որտեղ ջուրը հազիվ էր հասնում նրա կրծքին: Եվ հանկարծ, գրողը տանի, նա նկատում է, որ իր կողքով լողում են երկու դդումներ, որ երևի ինչ-որ երեխա էր ծովը գցել: Սալվոն բռնում է դդումները և պպզում, որ ջուրն իրեն ծածկի մինչև վիզը: (Սիրելի դոն Կոսմո, ի՛նչ հիմար տեսք է ունենում լողալ չիմացող մարդը ջրի մեջ): Նրա գլուխը մի չարաբաստիկ միտք է գալիս՝ պարզել ձեռքն ու բռնել պարանը, որով այդ դդումները կապված էին իրար, և նստել դրանց վրա: Նա նստում է դդումների վրա և բաց է թողնում սյունը, որ ստուգի, թե կարո՞ղ են արդյոք դրանք իր ոտքերը կտրել հատակից, բայց քանի որ դդումները, բնականաբար, թեթևակի հրում են, նա հանկարծ՝ բը՛լդ-բը՛լդ-բը՛լդ, կորցնում է հավասարակշռությունը և սուզվում գլխիվար:

— Երևակայեցեք, է՛,— վշտացած բացականչեց դոն Կոսմոն:

— Պատկերացրեք,— շարունակեց Կապոլինոն,— թե ինչպես է նա սկսել ոտքերը թափահարել, որ ջրի երեսը դուրս գա: Բայց, դժբախտաբար, ոտքերը խճճվել են պարանի մեջ և, բնականաբար, ինչքան էլ թպրտացել է ջրի տակ, նրան չի հաջողվել կանգնել և ոտքերով հենվել հատակին:

— Ի՛նչ եք ասում, ի՛նչ եք ասում: Ա՛յ քեզ փորձանք,— դեմքը ծամածռելով, բացականչեց դոն Կոսմոն և սեղմեց ձեռքերը:

Բայց Կապոլինոն շարունակեց.

— Եվ իրոք, պարզապես ծիծաղելի է, չէ՞, խեղդվել լողանալու համար ցանկապատված տեղում, որտեղ շուրջն այնքան մարդիկ կային, բայց նրանք ոչինչ չէին նկատում և չէին օգնում Սալվոյին, որովհետև նույնիսկ չէին կասկածում, որ նա կործանման եզրին է: Եվ նա կխեղդվեր, կխեղդվեր, աստված է վկա, եթե տասներեքամյա մի տղա՝ այդ նույն Աուրելիո Կոստան, որը հիմա ինժեներ է և Սալվոյի ծծմբահանքերի կառավարիչը Արագոնայում ու Կոմիտինիում, չնկատեր այդ մի զույգ ոտքերը, որ հուսահատ զարկվում էին ջրին, և ծիծաղելով չվազեր նրան ազատելու...

— Ա՛, հասկանում եմ...— ասաց դոն Կոսմոն:— Եվ հիմա աղջիկը...

— Աղջիկը... աղջիկը...— սեղմած ատամների արանքից ասաց Կապոլինոն:— Ինքներդ էլ եք հասկանում, որ Սալվոն պետք է երախտահատույց լիներ այդ տղային, և երախտահատույց եղավ՝ վտանգից ու ապրած երկյուղից փրկելու համար: Նրան ասացին, որ տղան ծծումբի բեռնման վրա աշխատող աղքատ կշռավարի որդի է...

— Ախ Հա՛, Կոստան, Լեոնարդո Կոստան,— ընդհատեց դոն Կոսմոն:— Նա իմ բարեկամն է: Երբեմն կիրակի օրերը ինձ մոտ է գալիս Պորտո-Էմպեդոկլեից:

— Ուրեմն դուք գիտեք, որ նա հիմա ծառայում է Ֆլամինիոյի մոտ,— ավելացրեց Կապոլինոն:— Ֆլամինիոն նրան ազատեց կշռավարությունից և աշխատանք տվեց ծծումբի մեծ պահեստում, արևելյան լողափի մոտ: Իսկ որդուն՝ Աուրելիոյին, որոշեց առաջ մղել՝

հաշվի չառնելով ծախսերը: Սալվոն ոչ միայն նրան վերցրեց իր մոտ, այլև մեծացրեց իր տանը, իր երեխաների հետ՝ Դիանելլայի և տղայի, որը հետո մեռավ: Եվ այդ դժբախտությունը, հավանաբար, ուժեղացրեց նրա կապվածությունը Աուրելիոյի հետ: Այնուամենայնիվ, դա կապվածություն է մինչև որոշակի սահմաններ: Հենց այդ նույն պատճառով, որի համար նա իր աղջիկը չի տա Նինի դը Վինչենտիսին, ես վստահեմ, որ չի տա նաև Աուրելիո Կոստային՝ իր ստորադրյալին, հասկանո՞ւմ եք:

— Մի մտածեցե՛ք, Է՛,— բացականչեց դոն Կոսմոն՝ ուսերը թոթվելով:— Այդքան հարուստ... Եվ միակ դուստրը...

— Դե ո՛չ... Ո՛չ,— պատասխանեց Կապոլինոն:— Ես հասկանում եմ, որ տվյալ դեպքում ամբողջ հարստությունն անպայման ինչ-որ մեկի ձեռքը, օրինակ՝ փեսայի, ով էլ որ նա լինի: Բայց Ֆլամինիոն կուզենա սկզբում ամեն ինչ կշռադատել՝ ինչպես որ պետքն է: Նա հեռու է վարդագույն ռոմանտիկայից: Ռոմանտիկան աղջկա համար է՝ այդ բառի ճշգրիտ իմաստով, հասկանո՞ւմ եք, որովհետև նրա այդ իսկական գաղտնի հիվանդության մասին գիտեմ միայն ես՝ իմ սեփական հատուկ պատճառներով: Կարծում եմ, որ այդ մասին գիտի նաև Ֆլամինիոն կամ գոնե կասկածում է, բայց ինքը՝ ինժեներ Կոստան (հրաշալի պատանի, նկատի ունեցեք, տոկուն է, գերազանց հասկանում է իր վիճակը և այն, թե ինչով է պարտական իր բարերարին) բացարձակապես ոչ մի բան գլխի չի ընկնում, նույնիսկ հեռավոր ձևով դա չի պատկերացնում: Կարող եմ ձեզ հավատացնել դրանում, ես ապացույցներ ունեմ, ապացույցներ՝ հույժ անձնական բնույթի, Ինժեներ...

Այդ պահին Կապոլինոն կանգնեց՝ ճանապարհի վերջում նկատելով ինչ-որ տարօրինակ մարդու, որը ձեռքերով զանազան շարժումներ անելով, վազում էր նրանց ընդառաջ:

— Դա ո՞վ է,— մռայլ հարցրեց նա:

Դա Մարկո Պրեոլան էր՝ տանջահար, փոշու և քրտինքի մեջ կորած: Գուլպաներն իջել էին պատռտված կոշիկների վրա: Նա չափազանց հոգնած էր:

— Վերջապե՛ս, վերջապե՛ս,— գոռաց Պրեոլան՝ մոտ վազելով:— Նա եկավ:

— Աուրիտի՞ն,— հարցրեց Կապոլինոն:

— Հենց նա,— պատասխանեց Պրեոլան:— Ընտրություններին է եկել: Դա ճիշտ է: Ես հատուկ դրա համար Ջիրջենտիից վազեցի այստեղ:

Նա հանեց մահուդե գլխարկը և կեղտոտ թաշկինակով սրբեց քրտինքը, որ գլուլ-գլուլ թափվում էր նրա կեղանքով պատած գլխից:

— Իմ զարմի՞կը,— զարմանքով հարցրեց շփոթահար դոն Կոսմոն:

Կապոլինոն անմիջապես դեմքի վշտալի արտահայտությամբ նրան հայտնեց Ֆացելլոյի հրաժարականի մասին, այն ճնշման մասին, որ գործ էին դրել նրա վրա, որպեսզի նա առաջադրի իր թեկնածությունը, Ռոբերտո Աուրիտիի անսպասելի գալու կապակցությամբ Ջիրջենտիում տարածված լուրերի մասին: Լուրեր... լուրեր, որոնց ինքը՝ Կապոլինոն նշանակություն չի տալիս երկու պատճառով. նախ՝ Աուրիտիի հանդեպ ունեցած հարգանքից, հարգանք, որը թույլ չի տալիս ենթադրել, թե նա առանց հրավերի կգա պայքարելու այն տեղի համար, որը Ֆացելլոն լքել է կամովին: Կուսակցական միությունը, որը ներկայացնում է ընտրողների մեծամասնությունը, ամուր կմնա նույնիսկ Ջաչինտո Ֆացելլոյի հեռանալուց հետո. դրա համար կան բազմաթիվ անվիճելի ապացույցներ: Երկրորդ պատճառը՝ ավելի անձնական բնույթի, այն է, որ իր՝ Կապոլինոյի համար ցավալի կլինի, չափազանց ցավալի այս անհավասար պայքարում հակառակորդ ունենալ մի ոչ վտանգավոր մարդու, որը, սակայն, չնայած ընտանեկան տարաձայնություններին, այնուամենայնիվ հանդիսանում է ազգականը իշխան Լաուրենտանոյի, որին ինքը հարգում է և որի բարեկամությամբ հպարտանում է: Ո՛չ, ո՛չ: Ինքը կգերադասեր համարել, որ Աուրիտին Ջիրջենտի է եկել միայն մորն ու քրոջը տեսնելու համար:

— Դե, ի՛նչ եք ասում, սինյոր փաստաբան,— ուսերը թոթվելով, Մարկո Պրեոլան ընդհատեց այդ երկար ու հոգնեցուցիչ ճառը, որով Կապոլինոն ուզում էր, իբր պատահաբար, բացել իր սեփական քաղաքական դիրքավորումը:— Չէ՞ որ նրան կայարանում դիմավորել են չորս սրիկաներ, տեխնիկական ուսումնարանի ուսանողներ: Չէ՞ որ այստեղ են հայտնվել մաֆիայի անդամներն ու մասոնները՝ Գվիդո Վերոնիկայի և Ջամբատիստա Մատտինայի գլխավորությամբ: Ես ձեզ ասում եմ՝ ոչ մի կասկած չկա: Նա եկել է ընտրություններին:

Այն ժամանակ, երբ Կապոլինոն ու Պրեոլան վիճում էին, դոն Կոսմոյի աչքերը, քիթն ու բերանը ներկայացնում էին մի ամբողջ պանատամիմա. ձգվում էին, ծռմռվում, մռայլվում: Ապրելով ճգնավորի պես, շարունակ իր փիլիսոփայական մտորումների մեջ խորասուզված, աչքերը հառած աստղերին, ծովին կամ էլ շրջակա ամայի դաշտերին, դոն Կասման հիմա, երբ վրան տեղացին այդ բոլոր մանրիկ նորությունները, իրեն զգում էր այնպես, կարծես նրա վրա էին հարձակվել բազմաթիվ ձանձրացնող, մանրիկ միջատներ:-

— Հիսո՛ւս, Հիսո՛ւս: Ախր սա անտանելի է: Ամեն ինչ բարբաջանք է:

— Դե, իսկ հիմա մի բաժակ գինի, սինյոր դոն Կո,— որպես եզրափակում բացականչեց Մարկո Պրեոլան:— Այդ շնորհին արեք, հրամայեք գինի բերեն, էլ ուժ չկա: Ես ոտքի տակ եմ տվել ամբողջ Ջիրջենտին, որ գտնեմ մեր ամենաթանկագին փաստաբանին... Ինձ ասացին, թե նա գտնվում է այստեղ՝ Վալսանիայում, և ես ոտքով շտապեցի Սպինա Սանտայով: Տեսեք, թե ինչ տեսք ունեմ: Բացի այդ, կոկորդս էլ ցամաքել է:

— Մտեք վիլլա և խմեք,— պատասխանեց դոն Կոսմոն:

— Իսկ Մորտարան այնտեղ չէ՞,— հարցրեց Պրեոլան:— Ես նրանից վախենում եմ...— ավելացրեց նա ծիծաղելով:— Անցյալ տարի նա կրակեց ինձ վրա (ասաց, թե իբր ես եկել եմ այստեղ՝ կալվածքում իր աղավնիները որսալու): Ազնիվ խոսք, սինյոր դոն Կոսմո, դա ճիշտ չէ: Չէ՞ որ ես վայրի տատրակներ էի որսում: Հնարավոր է, որ երբեմն սխալներ էին պատահում: Այսպես ուրեմն՝ ևս կրակեցի և իսկույն պատասխան կրակոց՝ ուղիղ ինձ վրա: Դեռ բախտ էր, որ արագ շրջվեցի: Թրը՛խկ: Եվ կոտորակների մի կարկուտ դիպավ ետևիս... Աստված է վկա, երդվում եմ ձեզ, սինյոր դոն Կոսմո, որ միայն Լաուրենտանո ընտանիքի հանդեպ ունեցած հարգանքից... Իմ ձեռքին էլ երկփողանի հրացան կար, և ազնիվ խոսք...

Ճանապարհի վերջից նրանց հասավ բոժոժիկների ղողանջ: Ձրուցակիցները, որ արդեն մոտեցել էին վիլլային, շրջվեցին՝ նայելու ճանապարհին: Կապոլինոն բացականչեց.

— Նինի՛, Նինի՛: Ահա՛ և կառքերը: Գալի՛ս են:

Նինին արագ վազեց սանդուղքով. նրա ետևից իջան ծառաները, դոննա Սառա Ալայմոն և աղախինը, որ արդեն հասցրել էր մտերմանալ տնտեսուհու հետ:

Մոտեցան երկու բաց կառքեր: Առաջինում նստած էր դոն Ֆլամինիոն՝ աղջկա հետ, երկրորդում՝ խելագար կինը՝ երկու հիվանդապահուհիների հետ: Դոն Կոսմոն սպասում էր, որ հարսնացուն էլ կգա, դոննա Ադելաիդան, բայց հարկ եղավ հիասթափվել. Նինի դը Վինչենտիսը համարձակություն չունեցավ բարևելու համար ձեռք տալ Դիանելլային: Նրա սիրտը դողաց, երբ հուզմունքից մշուշված աչքերով տեսավ աղջկա նիհարած դեմքը, որ շատ դալուկ էր ճամփորդական թանձր քողի տակ. նա աչք չէր հեռացնում աղջկանից՝ մինչև Դիանելլան՝ ծանր թիկնոցով փաթաթված, Կապոլինոյի ձեռքին հենված, պառավի նման շատ դանդաղ բարձրացավ սանդուղքով՝ դոննա Սառա Ալայմոյի շողոմ ողջույնների տեղատարափի տակ:

Դոննա Վիտտորիան իր անասելի գիրության պատճառով դժվարությամբ դուրս գալով կառքից, կանգնել էր երկու հիվանդապահուհիների միջև. համեստ, սև շալի տակ՝ լայն, դալուկ դեմք, անշարժ, դատարկ աչքեր: Նա մի պահ նայեց դոն Կոսմոյին, հետո նրա հաստ, անգույն շրթունքները ձգվեցին խղճուկ մի ժպիտով, և նա խոնարհվելով ասաց.

— Սինյոր պրիոր:

Հիվանդապահուհիներից մեկը բռնեց նրա ձեռքը, իսկ դոն Կոսմոն, որ կանգնած էր Սալվոյի կողքին, վշտացած փակեց աչքերը: Նինին գնաց խելագարի ետևից:

— Շնորհակալություն,— ասաց Ֆլամինիո Սալվոն՝ ամուր սեղմելով դոն Կոսմոյի ձեռքը:— Ես էլ ուրիշ խոսք չունեմ:

— Հարկավոր չէ, հարկավոր չէ...— փութկոտ պատասխանեց Լաուրենտանոն՝ տխուր տեսարանից հուզված ու սրտաշարժված, հանկարծ խորին խղճահարություն զգալով այդ հզոր, բոլորի նախանձը շարժող մարդու նկատմամբ, որը մի ձեռքսեղմումով ցույց տվեց, թե ինչպես տվյալ դեպքում խորապես դժբախտ է ինքը:

Գլուխ III

— Այստեղ, այստեղ, համեցեք, իմ ետևից,— իր ետևից եկող պարոնին ասաց ծեր ծառան, որի ոտնաթաթերը դուրս էին ծռված. դրա պատճառով նա քայլում էր ծնկները ծալելով և օրորվելով:

Փափուկ, փոշոտ գորգերի վրայով նրանք անցան երեք անբնակ սենյակներ, և յուրաքանչյուր սենյակում ծառան բացեց մեծ, հնաձև պատուհանների կանաչ ծածկոցափեղկերը: Եվ այնուամենայնիվ սենյակներում առաջվա նման տիրում էր մռայլ կիսամութը՝ ծանր վարագույրների՞, թե՞ այն պատճառով, որ տունը ցածր էր, և այն ստվերում էին փողոցի հակառակ կողմի բարձր շենքերը: Բացելով ծածկոցափեղկերը, ծառան ուշադիր դիտում էր սենյակը, կարծես ուզում էր ասել. «Դուք տեսնո՞ւմ եք, թե ինչքան գեղեցիկ են հարդարված: Եվ այնուամենայնիվ տեսք չունեն»:

Նրանք այսպես հասան հեռավոր հյուրասենյակը՝ մռայլ ու հանդիսավոր, ճաքճքած առաստաղով, որ զարդարված էր ոսկեզօծ ծեփակերտվածքով:

Պարոնն իր նրբագեղ դրամապանակից հանեց զինանշանով այցետոմսը, ծալեց անկյունը և պարզեց ծառային, որը, ցույց տալով հյուրասենյակի դռներից մեկը, ասաց.

— Մի րոպե: Այնտեղ է գտնվում կավալեր Պրեոլան:

— Պրեոլա-հա՞յրը:

— Որդին:

— Ի լրումն ամենի, նա նաև կավալե՞ր է:

— Ինձ համար,— պատասխանեց ծերունին՝ խոր գլուխ տալով և ձեռքը դնելով կրծքին,— իմ բոլոր տերերը և նրանց հյուրերը կավալերներ են:

Եվ իր ծուռ ոտքերը քարշ տալով, նա կարդաց այցետոմսի վրա. «Կավալեր Ջան Բատիստա Մատտինա»:

(Սա կարծես իսկական կավալեր է):

Մատտինան մտախոհ կանգնած մնաց հյուրասենյակի կենտրոնում. հետո ջղային ցնցեց ուսերը, ցրված նայեց շուրջը, ուղիղ իր դիմացի պատին հայելի տեսավ և մոտեցավ: Այդ ահագին, աղոտացած հայելու մեջ սեփական արտացոլումը նրան անիրական թվաց, և նա մի ակնթարթ տանջալի անհանգստություն զգաց:

Այդ ամբողջ կահույքից, գորգերից, վարագույրներից փչում էր հին տների մգլահոտը, մարող կյանքի մգլահոտը, անցած ժամանակների շունչը: Մատտինան նորից նայեց շուրջը, և այդ հին իրերի քարացած անշարժությունը, իրեր, որ աստված գիտե, թե ինչքան ժամանակ ընկած էին առանց օգտագործման, նրան տարօրինակ շփոթության մեջ գցեց: Նա ավելի

մոտեցավ հայելուն, որ ավելի լավ դիտի իրեն, հանդարտ օրորեց գլուխը և գրեթե մինչև աչքերը ձգեց բեղերի ծայրերը. բեղերը ներկած էին և դրա համար առանձնապես սև էին թվում՝ ի հակադրություն ժամանակից շուտ ճերմակած մազերին, որ այնպիսի լուրջ տեսք էին տալիս նրա թուխ դեմքին: Հանկարծ նրա բերանը լայն բացվեց ու ծռմռվեց ջղաձգական հորանջից. ներշնչելով հեղձուկ օդը, նա տխրությամբ կնճռոտվեց, կարծես սիրտը խառնում էր: Նա արդեն ուզում էր հեռանալ հայելուց, երբ, իջեցնելով հայացքը, հայելու պատվանդանին տեսավ բազմաթիվ մանրիկ անցքեր, որ կրծելով բացել էին փայտակեր բզեզները. դրանք դասավորված էին, կարելի է ասել, որոշ արվեստով:

Նա հետաքրքրությամբ թեքվեց, որ դիտի այդ անցքերը: Լավ էին աշխատել բզեզները, բայց, թվում էր, ոչ ոք չի գնահատել նրանց աշխատանքը, այնինչ դրա պտուղները լավ երևում էին և կարծես ասում. «Գործն արված է: Հավաքեք տարեք այս ամենը»: Նա պարզեց ձեռքը, երկու մատով վերցրեց մի պտղունց փայտի փոշի: Ոչինչ չմնաց: Ոչ մի փոշեհատիկ: Եվ, դիտելով ցուցամատի ու բթամատի ծայրերը, Մատտինան նորից նստեց օթոցի մոտի հարմարավետ բազկաթոռին: Նստելով, նա մի քիչ ցնցեց այն, կարծես համոզվելու համար, որ ամուր է:

— Ո՛չ մի փոշեհատիկ... Ոչի՛նչ...

Արհամարհանքով կնճռոտվելով, նա օթոցի մոտի կլոր սեղանից վերցրեց ալբոմը, որտեղ առաջին էջում տան տիրոջ՝ կանոնիկոս Ագրոյի դիմանկարն էր:

Մատտինային միշտ թվում էր, թե կանոնիկոս Պոմպեո Ագրոն տարօրինակ կերպով նման է ինչ-որ թռչունի, որի անունը մոռացել էր: Եվ իսկապես, նրա քիթը, որ հիմքի մասում լայն էր, դեմքի վրա դուրս էր ցցվել կտուցի նման: Իսկ բարձր ու նեղ ճակատի տակ՝ գորշ, աշխուժով լի աչքերում առկայծում էր խորամանկ, նրբասքող ու համառ նենգությունը, որով հայտնի էր Ագրոն:

Մատտինան դիտում էր այդ դեմքը, կարծես ուզում էր դիմագծերի մեջ կարդալ, թե ինչ պատճառով է երեկ երեկո ստացել այդ հրավերը և ինչ է նշանակում այդ գերազնիվ կանոնիկոսի խզումը կղերական կուսակցությունից, խզում, որն այնպիսի սկանդալ է առաջացրել ամբողջ շրջանում: Նա իսկապե՞ս կապերը խզել է կղերական կուսակցությունից, թե՞ դա ավելի շուտ մի նենգ, խորամանկ քայլ է, որպեսզի խաբի Աուրիտիի վստահությունը, թափանցի թշնամական ճամբարը և իմանա նրա մտադրությունները: Հավատ ընծայել աղվեսին... Իսկ այստեղ՝ նաև գաղտնի զրույց Պրեոլայի հետ... Գուցե սա թակա՞րդ է:

Նա բարձրացրեց աչքերը, մի հայացք գցեց անշարժության մեջ քարացած ու ոչ ոքի պետք չեկող հնամենի կահույքին և անհանգստություն զգաց, կարծես այդ իրերը՝ այն բանից հետո, երբ ինքը տեսավ նրանց խարխլվածությունը, սկսեցին հետևել իրեն շատ ավելի թշնամաբար, քան առաջ:

Երեք սենյակների միջով նա լսեց իր ծեր ծառայի ձայնը, որ կրկնում էր.

— Այստեղ, այստեղ, համեցեք, իմ ետևից:

Նա ցած դրեց ալբոմը և հայացքը հառեց դռանը:

— Ա՛, Վերոնիկա...

— Թանկագին Տիտա,— պատասխանեց Գվիդո Վերոնիկան, կանգնելով հյուրասենյակի մեջտեղում:

Նա հանեց ակնոցը, ապակիները սրբեց նախապես պատրաստած թաշկինակով, կկոցեց խիստ կարճատես աչքերը, երկու մատով շոյեց քթարմատը, որ ակնոցը շատ ուժեղ էր սեղմել, հետո մոտեցավ ու նստեց բազկաթոռին՝ Մատտինայի դիմաց. բայց Մատտինան վեր կացավ և, թևանցուկ անելով նրան, կամացուկ ասաց.

— Սպասիր, ես ուզում եմ քեզ ցույց տալ...

Մատտինան նրան տարավ հայելու պատվանդանի մոտ, ցույց տվեց շեղջիկները:

Չհասկանալով, թե ինչի պիտի նայի, Վերոնիկան կարճատեսության պատճառով այնքան կռացավ, որ քիթը գրեթե քսվեց տախտակին:

— Բզեզիկն է,— ասաց՝ նշանակություն չտալով դրան և նույնիսկ փոքր-ինչ սառը նայելով Մատտինային՝ կարծես ուզենալով հարցնել, թե այդ ամենը նա ինչո՞ւ ցույց տվեց իրեն. և նորից նստեց բազկաթոռին:

— Tu quoque? — այդ ժամանակ հարցրեց Մատտինան՝ անհարմար զգալով և ցանկանալով թաքցնել դժգոհությունը:

— Չգիտեմ բանն ինչ է,— պատասխանեց Վերոնիկան այնպիսի տեսքով, կարծես ուզում էր նրանից թաքցնել ինչ-որ գաղտնիք:

— Ես էլ չգիտեմ,— փութկոտ պատասխանեց Մատտինան՝ կեղծ անտարբերությամբ:— Ես հրավեր եմ ստացել...

Նա չտեսնող հայացքը հառեց Վերոնիկայի ճակատին, որ տարբեր ուղղություններով կտրտված էր երեք երկար սպիներով, որոնք հետևանք էին մենամարտերում ստացած վերքերի:

— Դու վերադառնում ես Հռոմի՞ց:

— Ո՛չ, Պալերմոյից:

— Եվ երկա՞ր ես մնալու:

— Չգիտեմ:

Վերոնիկայի չոր պատասխանները պարզ հասկացնել էին տալիս, որ նա մտադիր է լռել ու բնավ չի ցանկանում հետաքրքրություն հարուցել իր անձի նկատմամբ և այն բանի, ինչ կարող էր ասել, եթե կամենար: Իսկապես, հիմա նրա խնդիրն այն էր, որ ներկայանա գրգռված, նույնիսկ հոգնած ու չվստահող: Ի դժբախտություն իրեն (և այդ բոլորը գիտեին), նա իդեալ ուներ՝ հայրենիքը, որը ներկայացված էր, նույնիսկ ամբողջովին մարմնավորված մի մարդու մեջ՝ հին, փառաբանված պետական գործիչ Կրիսպիի , որը մի քանի տարի առաջ պարտություն էր կրել պառլամենտի աղմկոտ նիստում՝ մանր ու անազնիվ պայքարից հետո: Այդ փառապանծ ծերունու պատճառով նա մի քանի անգամ մենամարտել էր՝ գրեթե միշտ անհաջող և բազմիցս չլսված խիստ արտահայտություններով թերթերում պատասխանել էր հակառակորդների վիրավորանքներին: Բայց հիմա, երբ ընկել էր ծերունին, նրա համար ընկել էր և հայրենիքը, հաղթել էր ամեն տեսակի խառնամբոխը, նա սրտնեղություն չէ, որ զգում էր, ո՛չ, նրա համար իսկապես զզվելի էր ապրելը: Վերոնիկան բոլորովին չէր հավատում, որ Աուրիտին կարող է հաղթել, թեև կառավարությունն աջակցում էր նրան. բայց ինքը՝ մեծապատիվ ծերունին, որ երեխայի նման մոլորված էր հայրենիքի ապագա ճակատագրի հարցում, հրամայեց նրան մեկնել Ջիրջենտի և պայքարել Աուրիտիի համար: Նա գիտեր, որ Աուրիտին համաձայնեց պայքարի մեջ մտնել ոչ այնքան կառավարության հորդորների պատճառով, որքան մի պետական գործչի համառ պահանջով: Վերոնիկան կանոնիկոս Ագրոյի հրավերն ընդունեց միայն նրա համար, որ կատարի իր պարտքը, թեև հոգևորականները միշտ էլ նրա աչքի փուշն են եղել: Եվ ահա նա Ջիրջենտիում է: Չնայած այն բանին, որ մասնակցում էր ընտրություններին՝ առանց հավատալու հաջողությանը, նրան շատ էր վրդովում այն հանգամանքը, որ ինքը հավասարեցվել է ինչ-որ Մատտինայի, և իրենց միավորել են փոքրիկ դավադրության մեջ, որ ուզում է կազմակերպել կանոնիկոս Ագրոն:

Մատտինան շուռումուռ էր գալիս բազկաթոռում, փնչացնում, շարունակ փոխում դիրքը:

— Նա մեզ ստիպում է սպասել իրեն...

— Իսկ ո՞վ կա նրա մոտ,— հարցրեց Գվիդո Վերոնիկան՝ առանց անհամբերության նշույլի:

— Պրեոլա-որդին, զենքը, որ օգտագործում է Ինյացիո Կապոլինոն: Ես ծառայից իմացա: Դա քեզ ինչպե՞ս է դուր գալիս:

— Լսենք,— հառաչեց Վերոնիկան:

Մատտինան լռեց. բացվեց դուռը, և ներս մտավ բարձրահասակ, նիհարությունից կորացած կանոնիկոս Ագրոն:

Նշանացի հասկացնելով, որ հյուրերը ոտքի չելնեն, նա ճղճղան ձայնով ասաց.

— Ներումն եմ խնդրում: Նստեցե՛ք, նստեցե՛ք, խնդրում եմ: Թանկագին Վերոնիկա, հարգելի կավալեր: Այստե՛ղ, կավալեր, նստեցե՛ք այստեղ, իմ կողքին: Ինձ չեն վախեցնում ձեր ջահելության մեղքերը:

— Լավ ջահելություն է,— ժպտաց Մատտինան՝ ցույց տալով իր ճերմակ մազերը:

Կանոնիկոսը փոքրիկ կրծքագրպանից հանեց հնամենի արծաթե ժամացույցը:

— Դուք ինձ ցույց եք տալիս ձեր մազերը և ոչ թե արատները: Արդեն տասն է, գրողը տանի: Ինչքան ժամանակ կորցրեցի... Բայց ի՞նչ կարող ես անել:

Նա մռայլվեց, մի ակնթարթ տատանվեց՝ խոսե՞լ, թե՞ չխոսել, հետո, կարծես ավարտելով ընդհատված հառաչանքը, ասաց.

— Երախտագիտությունը պարզապես առասպել է:

Նա օրորեց գլուխը և շարունակեց.

— Այնքան սիրալիր չե՞ք գտնվի, սինյորներ, որ ինձ հետ կարճ ժամանակով գաք մի տուն:

— Ո՞ւր,— հարցրեց Մատտինան:

— Ռոբերտո Աուրիտիի մոտ... իմ բարեկամի, իմ մեծ բարեկամի... վաղ մանկությունից, գիտե՞ք: Մեր հայրերը ավելի հարազատ են եղել, քան եղբայրները, նրանք զենքի ընկերներ էին: Ռոբերտոյի հայրն սպանվեց Միլացցոյում, իսկ իմը զոհվեց Վոլտուրնոյի մոտ: Դա արդեն պատմություն է: Դրա հետ պիտի հաշվի նստեն մեր շրջանում և ոչ թե այսպիսի աղմուկ բարձրացնեն իմ... Ինչպե՞ս են նրանք դա կոչում... իմ ուխտադրժության պատճառով: Հա՞... Ուխտադրժություն են գտել: Իհա՛րկե, հոգևորականի զգեստը... Բայց չէ որ դրա տակ սիրտ էր բաբախում, և ես էլ հանուն սրբազան բարեկամության և նույնիսկ... նույնիսկ...

Գուցե կանոնիկոսն ուզում էր ասել՝ «Հանուն հայրենիքի»: Նա այդ հասկացնել տվեց ձեռքի շարժումով, բայց սանձեց ազնիվ զգացմունքների պոռթկումը: Նա փորձում էր խոսել պատկերավոր, շրթունքներին խաղում էր խորամանկ ժպիտը. ձեռքերի ափերը տանելով ուղիղ կզակի տակ, նա անդադար իրար էր շփում ոսկրոտ մատները, կարծես ձեռքերը լվանում էր իր կոկած ճոռոմախոսությունների գետակում, թեև այդ ճոռոմախոսությունները չէին հոսում անընդհատ, վճիտ հոսանքով, այլ դուրս էին թռչում մի տեսակ ճողփյուններով՝ հաճախ դանդաղելով և նույնիսկ ընդհատվելով տարօրինակ բացականչություններով: Ժամանակ առ ժամանակ բարձրացնելով հոգնած կոպերը, կանոնիկոսը թռուցիկ հայացք էր գցում մի կողմ՝ նրա համար այնքան անսովոր, որ ամեն մեկին թվում էր, թե այդ մարդը իր ներքին կյանքում բոլորովին այնպիսին չէ, ինչպիսին ներկայացնում է իրեն, թե նրա հոգում կան բավական շատ թաքուն վշտեր ու թաքուն տառապանքներ, և դրանից է, որ նրա մեջ այդքան խորամանկություն ու խարդավանք կա:

— Գնալուց առաջ,— շարունակեց նա արդեն ուրիշ եղանակով,— ևս երկու խոսք, որ մենք հասկանանք մեկմեկու: Ես մտորել եմ... ուրվագծել, ինչպես ինձ թվում է, պայքարի մի փոքրիկ ծրագիր: Բայց, ի դեպ, ես զորավարության չեմ ձգտում: Դուք, սինյորներ, կկռվեք, իսկ ես ձեր ետևից կբերեմ կաթսայիկը: Ա՛յ այդպես: Եթե ամեն ինչ կշռադատենք, ինչպես

հարկն է, ապա ո՞վ է մեր ամենալուրջ հակառակորդը: Կապոլինո՞ն: Ո՛չ, ո՛չ թե ինքը՝ Կապոլինոն, այլ այն մարդը, որ կանգնած է նրա թիկունքում՝ Սալվոն, նրա նախկին աներձագը, հզոր մի մարդ: Վերջերս ես շատ հավաստի աղբյուրներից իմացա, որ Սալվոն մինչև ամենավերջին օրերը ամեն կերպ խոչընդոտներ է հարուցել Կապոլինոյի առաջադրմանը:

— Այո՛, այո՛,— Հաստատեց Մատտինան,— իր քրոջ և իշխան Լաուրենտանոյի ամուսնության մասին բանակցությունների պատճառով:

— Այդպես է, ճի՛շտ է,— հաստատեց կանոնիկոսը:— Բայց Սալվոն համաձայնել է աջակցել նրան՝ հենց որ իմացել է՝ որ իշխանը ոչ միայն հաշվի չի առնում այն հանգամանքը, որ Աուրիտին իր ազգականն է, այլև հրամայել է, որ կուսակցությունն էլ դա հաշվի չառնի: Քանի որ այդպես է իրադրությունը, մեր Ռոբերտոյի գործը գրեթե անհուսալի է: Ինքներս մեզ չխաբենք:

— Դա ակնհայտ է,— փնչացրեց Վերոնիկան:

Կանոնիկոսն անմիջապես ձեռքի շարժումով ընդհատեց նրան և շարունակեց.

— Բայց եթե մենք... Այո՛, ենթադրենք, որ մենք, սինյորներ, չնայած այն ազատությանը, որ մեր հակառակորդներին տվել է իշխանը, կարողանում ենք կապել այդ հսկա Սալվոյի ձեռքերն ու ոտքերը, հը՞: Ի՞նչ ձևով: Ա՛յ, հենց դա է իմ ծրագիրը:

Զրուցակիցների հետաքրքրությունը գրգռելով, Պոմպեո Ագրոն որոշ ժամանակ լռեց, ափերը տարավ կզակի տակ, ապա նորից սեղմեց ու ցած թողեց ձեռքերը և փակեց աչքերը, որ ավելի լավ կենտրոնանա: Հետո էլի մի անգամ բացականչեց.

— Ահա՛,— կարծես կարթ գցեց, որ դրանով որսա երկու ունկնդիրների ուշադրությունը, ապա էլի որոշ ժամանակ նստեց լուռ:— Դուք գիտեք, սինյորներ, Լաուրենտանոյի դրած պայմանները, որոնց դեպքում ամուսնությունը կարող է կայանալ: Այսպես ահա, այդ պայմանները, իմ կարծիքով, կարող են դառնալ, ինչպե՞ս ասել, Սալվոյի խոցելի տեղը:

— Աքիլլեսյան գարշապարը,— հուշեց Մատտինան՝ վեր թռչելով, որ մեջ գցի մի նոր խոսք:

— Հրաշալի է: Հենց Աքիլլեսյան,— հավանություն տվեց Ագրոն,— ես հիմա կբացատրեմ: Սալվոյի համար, որն ընդունել է այդ պայմանները, իհա՛րկե, կարևորն այն է, որ իշխանի Հռոմում ապրող որդին (կարծեմ, նրա անունը Ջերլանդո է, ինչպես պապինն էր, Ջերլանդինո, Լանդինո) դժգոհ չլինի կամ գոնե բացահայտ չարտահայտի իր դժգոհությունը հոր ամուսնության առթիվ: Ես գիտեմ նույնիսկ, որ Սալվոն պայման է դրել, որ այդ պատանին պիտի մասնակցի հարսանեկան արարողությանը՝ որպես այդ կապի ճանաչում իշխանական ընտանիքի կողմից և ջենտլմենական պարտավորություն ապագայի համար: Ես ծանոթ չեմ այդ Ջերլանդինոյի հետ, բայց գիտեմ, որ դա ուրիշ խմորից է թխված... դե, ասենք, բոլորովին այլ տիպ է, քան հայրը:

— Ուղղակի հակապատկերն է,— բացականչեց Վերոնիկան:— Ես նրան լավ գիտեմ:

— Ի՞նչ կա որ, շատ լավ է,— խոսքը խլեց Ագրոն:— Բայց ենթադրենք նույնիսկ, թե նա չի ընդունում Ռոբերտո Աուրիտիի հայացքները. ես կարծում եմ, որ, չնայած դրան, եթե նա ընտրություն կատարի Աուրիտիի և Կապոլինոյի միջև, նրա համար հաճելի կլինի իր ազգականի հաղթանակը:

Այդ պահին Գվիդո Վերոնիկան շարժվեց ու խոր շունչ քաշեց՝ կարծես ազատվելով մի ակնթարթ հայտնված պատրանքից, և ասաց.

— Դե ոչ, ես չեմ կարծում, բոլորովին չեմ կարծում, թե Լանդոն կուզենա խառնվել այդ գործերին...

— Թույլ տվեք ես ասեմ,— կտրուկ ընդհատեց նրան կանոնիկոսը: Ինձ բոլորովին պետք չէ, որ նա խառնվի: Ես կուզենայի ձեզանից իմանալ, քանի որ դուք այդքան ժամանակ ապրել եք

Հռոմում և ծանոթ եք երիտասարդի հետ, բաժանո՞ւմ են արդյոք դոն Իպոլիտո Լաուրենտանոյի և դոննա Կատերինա Աուրիտիի որդիները այն, մեղմ ասած, հակասությունը, որ գոյություն ունի նրանց ծնողների միջև:

— Ո՛չ, դա չկա,— իսկույն պատասխանեց Վերոնիկան:— Նրանք լավ հարաբերություններ են պահպանում, նույնիսկ բարեկամական:

— Դա բավական է,— բացականչեց կանոնիկոսը՝ ձեռքի երեսով խփելով մյուս ձեռքի ափին:— Դա ավելի քան բավական է: Եթե հայրը չի կամենում հաշվի առնել ազգակցական կապերը, դրանք կարող է և նույնիսկ կուզենա հաշվի առնել որդին: Եվ ահա հսկա Սալվոն կաշկանդված է:

Պոմպեո Ագրոն ուզում էր թեկուզ մի րոպե վայելել առաջին հաղթանակի հաճույքը՝ փոքր-ինչ ծուռ ժպիտով, թափանցող հայացքով երկար նայելով նախ Վերոնիկային, հետո՝ Մատտինային, որոնք արդեն հետաքրքրված էին նրա ծրագրով, որը նրանց թվում էր առնվազն մտորումների արժանի: Հետո, ինչպես գեներալ, որը չբավարարվելով միայն տակտիկական դատողություններով, որը հեշտ հաղթանակ է տալիս սեղանի մոտ, սկսում է մտածել ձեռնարկման իրական դժվարությունների մասին, կանոնիկոսը շարունակեց.

— Գլխավորն այն է, որ մեր սիրելի Ռոբերտոյին համոզենք՝ օգտագործել պահը: Այսպիսով, որպես նվազագույն, մեզ անհրաժեշտ է Ջերլանդինոյի մասնավոր նամակը, որը կարելի կլինի ցույց տալ Սալվոյին կամ էլ գոնե հայտնել ի գիտություն: Հենց այդպես: Նամակը պետք է հասցեագրված լինի Սալվոյին, մի բան, որ շատ դժվար է, կամ էլ Ռոբերտոյին, կամ էլ որևէ բարեկամի, օրինակ՝ ձեզ, թանկագին Վերոնիկա, մի խոսքով, ապացույց, փաստաթուղթ...

Գվիդո Վերոնիկան չէր ուզում խոստովանել, որ չի կարող նամակ սպասել Լանդոյից, որի հետ մոտ ծանոթ չէր. նա հայտարարեց, թե, իհարկե, Ագրոյի ծրագիրը շատ սրամիտ է համարում, բայց երևի դա անհրագործելի է Ռոբերտոյի արտակարգ զզվողության պատճառով, որը... որը... դե, այո՛... նա ծառայություններ ունի հայրենիքի հանդեպ:

— Անբասիր ազնվություն,— ավելացրեց Ագրոն:

— Այո՛,— համաձայնեց Վերոնիկան,— և բացի այդ՝ խելք, եթե կկամենաք, բայց... բայց... բայց ներկայումս նրան ձանձրացրել է ոստիկանապետը, և, թվում է, ձանձրացրել են նաև լավ բարեկամները... մի խոսքով... Դա դժվար խնդիր է: Ինչ վերաբերում է ինձ, ես ամեն ինչ կանեի, որ օգնեի նրան, և այնուամենայնիվ...

Նա չավարտեց խոսքը, ձեռքը զարկեց ճակատին ու բացականչեց.

— Գտա՛: Ջուլիոն... Ռոբերտոյի եղբայրը, որը ներկայումս ծառայում է նորին գերազանցություն մինիստր դ'Ատրիի անձնական քարտուղարությունում. գրողը տանի, կարելի է նրան գրել... Նա ու Լանդոն սերտ բարեկամներ են: Ջուլիոյից մենք հեշտությամբ կստանանք այն, ինչ պետք է, այնպես որ Ռոբերտոն էլ ոչինչ չի իմանա, թե չէ նա մեջտեղ կբերի աստված գիտե, թե ինչ առարկություններ: Դե ահա՛, և գործն արված է:

— Բրավիսիմո, բրավիսիմո,— մի քանի անգամ կրկնեց ուրախացած կանոնիկոսը:

Միայն Մատտինան էր իրեն զգում նավակի պես, որի առագաստները ոչ մի կերպ չէին կարողանում բռնել քամին: Տեսնելով, թե մյուս երկու նավակներն ինչպես են արագ լողում՝ ուշադրություն չդարձնելով իր վրա, որ ծուլաբար քարշ էր գալիս նրանց ետևից, նա իրեն վիրավորված էր զգում, ուզում էր իր խոսքն էլ մեջ գցել և, ի վիճակի չլինելով ուրիշ ոչինչ անելու, փորձեց մեջտեղ բերել ինչ-որ խոչընդոտներ կամ առարկություններ:

— Այո՛,— ասաց նա,— բայց չափազանց ուշ չէ՞, սինյորներ: Մտորենք: Ինչպիսի ջանքեր էլ որ գործ դնենք, մինչև նամակը հասնի Հռոմ, և պատասխանը վերադառնա, կանցնի մեկ շաբաթ, դա ամենաքիչն է: Սալվոն այդ ժամանակ կհասցնի իրեն կաշկանդել պարտավորություններով և չի կարողանա նահանջել:

— Դե, ես կուզենայի այդ բանը տեսնել,— բացականչեց կանոնիկոսը՝ թափահարելով ձեռքը:— Ո՛չ, ո՛չ, հավատացնում եմ ձեզ: Ո՛չ մի դեպքում, ո՛չ մի դեպքում: Դուք կարծում եք նրա համար այդքան թա՞նկ է Կապոլինոն:

— Ներեցե՛ք, իսկ սեփական արժանապատվությո՞ւնը,— առարկեց կավալերն այնպիսի եղանակով, կարծես խոսքն իր անձնական արժանապատվության մասին էր:—Լա՛վ վիճակի մեջ կընկնի նա: Գիտե՞ք դուք արդյոք, որ հենց այսօր «Էմպեդոկլեի» խմբագրատանը Սալվոյի և կուսակցության մյուս գլխավոր գործիչների կողմից պաշտոնապես կառաջադրվի Կապոլինոյի թեկնածությունը: Սա հանաք բան չէ:-

— Այդ դեպքում,— բացականչեց Վերոնիկան,— որպեսզի ինչ արագ արվի, հարկավոր է հենց հիմա շիֆրով շտապ հեռագիր ուղարկել Ջուլիոյին: Ռոբերտոն ու եղբայրը իրենց սեփական շիֆրն ունեն: Ժամանակ չկորցնենք... Կամ էլ, ավելի լավ է... սպասեք... Ես հենց հիմա այդ մասին մտածեցի... Սելմին, գրողը տանի:

— Սելմի՞ն,— հարցրեց կանոնիկոսը՝ շշմած այդ անսպասելի անունից, որը հնչեց ինչպես անհաղթահարելի արգելք այնպես լավ հարթած ճանապարհին:— Պատգամավո՞ր Սելմին:

— Այո՛, Կորրադո Սելմին,— պատասխանեց Վերոնիկան:— Ես նրան տեսա Պալերմոյում... Նա Ռոբերտոյին խոստացավ այստեղ գալ նրա գործի համար և նույնիսկ ճառ ասել...

— Դե, ի՞նչ կա որ,— նկատեց Ագրոն:— Պառլամենտական է, որ մեծ հարգանք է վայելում... իսկական հայրենասեր...

— Թողե՛ք, թողե՛ք,— ընդհատեց նրան Վերոնիկան՝ կկոցելով աչքերը և ձեռքը թափահարելով:— Դե, լավ, հայրենասեր է: Բայց արատավոր է, արատավոր, թանկագին կանոնիկոս... Պարտքեր... վարկաբեկող հանգամանքներ... սկանդալներ... Աստված չանի, որ խեղճ Ռոբերտոն նրա պատճառով... Բայց, ի դեպ, բանը հիմա նա չէ: Այլ Լանդո Լաուրենտանոն:

Եվ Գվիդո Վերոնիկան մի քանի անգամ շրխկացրեց մատներով, կարծես ուզում էր վանել տհաճ մտքերը, որ հարուցել էր Սելմիի անունը:

— Չեմ հասկանում...— նկատեց կանոնիկոսը:— Ի՞նչ կա Լաուրենտանոյի և Սելմիի միջև:

— Այստեղ բանն ուրիշ է,— բացականչեց Վերոնիկան:— Մահացու թշնամություն:

— Կնոջ պատճառով,— նշանակալից եղանակով ավելացրեց Մատտինան՝ կկոցելով աչքերը և վերին աստիճանի գոհ ծագած արգելքից:

Իսկ կանոնիկոսը հետաքրքրությամբ հարցրեց.

— Ա՛խ այդպե՞ս: Կնո՞ջ պատճառով:

— Հին պատմություն է,— պատասխանեց Վերոնիկան:— Հիմա կարծես ամեն ինչ վերջացած է, բայց մի քանի տարի առաջ Կորրադո Սելմին (ես խոսում եմ այդ մասին, որովհետև դա գիտի ամբողջ Հռոմը) Ջաննետա դ'Ատրիի՝ այժմյան մինիստրի կնոջ սիրեկանն էր:

Կանոնիկոսը բարձրացրեց ձեռքը.

— Ու՛, ինչպիսի բաներ: Իսկ այդ... դոննա Ջաննետտան ո՞վ է:

— Մոնտալտո ընտանիքից,— ասաց Վերոնիկան:— Լանդոյի զարմուհին... Չէ՞ որ դուք գիտեք, իշխանի առաջին կինն էլ Մոնտալտո էր:

— Ա՛խ, ահա թե բանն ինչ է... Եվ գուցե պատանին...

— Դե, գիտե՞ք, երբ նա դեռ տղա էր... զարմիկ, զարմուհի... Բայց ես դա ինչպես հարկն է չգիտեմ: Միայն փաստը մնում է փաստ՝ Լանդոն երկու անգամ մենամարտի է հրավիրել

Սելմիին... Հիմա հասկանո՞ւմ եք, եթե Սելմին եկել է այստեղ, որ պաշտպանի Ռոբերտոյի թեկնածությունը...

— Այո՛, այո՛, այո՛... Հիմա հասկանում եմ,— բացականչեց կանոնիկոսը։— Հարկ կլինի խանգարել: Հարկ կլինի խոչընդոտել դրան:

— Գուցե դա այնքան էլ դժվար չէ,— հայտարարեց Վերոնիկան,— որովհետև Կորրադո Սելմին դեռ ստիպված կլինի մարտնչել իր համար, իր ընտրական շրջանում: Դե լավ, կտեսնենք: Իսկ այժմ՝ շուտ Ռոբերտոյի մոտ:

Կանոնիկոսը վեր կացավ:

— Մենք պատրաստ ենք,— ասաց նա։— Կառքն սպասում է: Մի րոպե, ձեր թույլտվությամբ: Գլխարկս ու թիկնոցս վերցնեմ:

Փողոցում Վերոնիկան ու Մատտինան նորից տեսան ծեր, ծուռոտն ծառային, որը հիմա կառապանի շորեր էր հագել, և կառք նստեցին Ագրոյի հետ:

Անցնելով Սան-Դոմինիկո դո Ռաբոլտո հրապարակով, նրանք անսովոր շարժում նկատեցին գլխավոր փողոցում: Չորս թե հինգ տղաներ վազում էին՝ ժամանակ առ ժամանակ կանգնելով ու գոռալով «Էմպեդոկլե» կղերական լրագրի անունը, որը նրանցից գնում էին խլխլելով:

— Իմպիոկլի: Իմպիդոկլի :

Ամենուր հավաքվել էին մարդկանց խմբեր. ոմանք կարդում էին, մյուսներն աշխուժորեն մեկնաբանում ակնհայտորեն շատ խիստ ինչ-որ հոդված, որ տպագրված էր այդ թերթում:

Տեսնելով գոռացող տղաներից մեկին, որ անցնում էր կառքի մոտով, Վերոնիկան չկարողացավ դիմանալ գայթակղությանը և հրամայեց մի օրինակ թերթ նետել կառքի մեջ: Կանոնիկոսը, որն այդ օրերին քաղաքի փողոցներում իրեն զգում էր ինչպես թշնամական ճամբարում, կրկնեց.

— Ավելի լավ է՝ տանը: Ավելի լավ է՝ տանը:

Թերթը բարձրացրեց Մատտինան:

— Կարդա՞մ:

Եվ սկսեց կիսաձայն կարդալ առաջնորդող հոդվածը, որը և, անկասկած, այդպիսի հուզմունքի էր հասցրել հասարակությանը: Այն վերնագրված էր. «Հայրենասերներ՝ ընտանեկան հանգամանքներով», և նողկալի ակնհայտությամբ (ի դեպ՝ առանց անուններ տալու) վերաբերում էր հանգուցյալ Ստեֆանո Աուրիտիին՝ Ռոբերտոյի հորը, զրպարտչական ձևով, ստորաբար աղավաղելով Կատերինա Լաուրենտանոյի նկատմամբ նրա ռոմանտիկական սիրո պատմությունը. երիտասարդների փախուստը հազար ութ հարյուր քառասունութ թվականի հեղափոխության նախօրեին, մասնակցությունը, որ ունեցավ Ստեֆանո Աուրիտին այդ հեղափոխությանը՝ ո՛չ թե հայրենիքի սիրուց մղված, այլ հենց ընտանեկան հանգամանքներով, «այսինքն՝ նվաճելու համար օժիտը՝ աներոջ հարկադրական բարեհաճության հետ մեկտեղ, աներոջ, որը հարուստ էր, լիբերալ, իհա՛րկե, բայց բացարձակապես անդրդվելի»:

Քանի դեռ Մատտինան կարդում էր, նրա ձայնը փոխվում էր վրդովմունքից, որով նա վարակվեց գլխավորապես Ագրոյից, քանզի սա ժամանակ առ ժամանակ փակում էր ականջները և ետ էր թեքվում՝ բացականչելով. «Սրիկաներ, սրիկաներ»:

Գվիդո Վերոնիկան Մատտինայի ձեռքից խլեց թերթը և խիստ գունատված, զայրույթից այլանդակված դեմքով՝ բացեց կառքի դռնակը, ցած ցատկեց ու, չլսելով կանոնիկոսի կանչերը, սկզբում կատաղորեն նետվեց դեպի մարդկանց խումբը, որի մեջ Կապոլինոն էր, իսկ հետո խոյացավ նրա վրա և, նրա քթի տակ խցկելով թերթը, ճմրթելով տրորեց երեսին:

Հարձակումն այնպես անակնկալ էր, որ սկզբում բոլորը քարացան տեղերում՝ լիակատար շփոթության մեջ, հետո նետվեցին հարձակվողի վրա: Մարդիկ գոռալով վազեցին եկան բոլոր կողմերից, ամեն ինչ խառնվեց իրար. օդում երևացին ձեռնափայտեր, լսվեցին աղաղակներ և անեծքներ: Մատտինան չհասցրեց նետվել Վերոնիկային պաշտպանելու, ասենք, չէր էլ կարող հասնել նրա մոտ, բայց շուտով ամբոխը նոսրացավ, տուրուդմփոցն ավարտվեց: Անհանգստացած կանոնիկոսը գոռում էր կառքից՝ կանչելով Մատտինային: Վերջապես նա լսեց ու շրջվեց, բայց այդ պահին տեսավ Վերոնիկային՝ առանց գլխարկի, առանց ակնոցի, պատռված շորերով, շնչակտուր. Կանգնած էր մի խումբ պատանիների մեջ, որոնք, երևում է, պաշտպանել էին նրան, և Մատտինան վազեց Վերոնիկայի մոտ: Քիչ անց նա վերադարձավ կանոնիկոսի կառքը:

— Դատարկ բաներ են,— ասաց նա,— հանգստացեք: Շարունակենք մեր ճանապարհը, նա բարեկամների մեջ է, հաջող կերպով ազատվեց:

Կանոնիկոսն ամբողջ մարմնով դողում էր.

— Աստվա՛ծ իմ, աստվա՛ծ իմ... Ինչպիսի՛ սկանդալ... Ինչի՞ համար... Սրիկաներ... Պետք չէր ձեռքերը կեղտոտել... Հիմա ի՞նչ է լինելու:

— Օ՛,— թեթևակի արհամարհանքով բացականչեց Մատտինան:— Մենամարտ: Շատ հասարակ, կամ էլ՝ դատական գործ, եթե սուրբ եկեղեցին չի թողնի այդ խարդախին հատուցել այն բոլոր ստորությունների համար, որ հենց ինքն է թույլ տվել նրան դուրս թափել կեղտաջրի խողովակից:

— Եկեղեցին, ներեցեք, չդիպչեք նրան, կավալեր,— հանգիստ ասաց Պոմպեո Ազրոն,— նա կապ չունի... Թույլ տվեք ձեզ ասել: Եվ Կապոլինոն էլ կապ չունի:

— Այդ ինչպե՞ս:

— Լսե՛ք ինձ: Ես գիտեմ ով է գրել այդ հոդվածը, այդ կեղտոտ գարշանքը: Դա Պրեոլան է. այսօր առավոտյան Պրեոլան եկավ ինձ մոտ, ակնհայտորեն ուղարկված էր որևէ մեկի կողմից, թե ում՝ չգիտեմ… Անշնորհակալ անասուն: Ստո՛ր անպիտան:

— Բայց չէ՞ որ Կապոլինոն է թերթի խմբագիրը,— առարկեց Մատտինան:— Նա է բաց թողել այդ հոդվածը:

— Երդվում եմ, պատրաստ եմ ձեռքս խցկելու կրակի մեջ,— պատասխանեց կանոնիկոսը,— որ մինչև լույս տեսնելը նա հոդվածը չի կարդացել: Իհա՛րկե, նա իմ հակառակորդն է, բայց ես գտնում եմ, որ նա անընդունակ է այդպիսի ստորության... Իսկ հիմա... մեզ ի՞նչ է սպասվում Ռոբերտոյի մոտ, տանը:

Դոննա Կատերինա Աուրիտի-Լաուրենտանոն իր նույնպես այրի աղջկա՝ Աննայի և թոռան հետ ապրում էր մի հին, մռայլ տան մեջ, Բադիա-Գրանդեի մոտ: Տունը պատկանում էր Միքելե Դել Ռեին՝ Աննայի ամուսնուն. նա ուրիշ ոչինչ չկարողացավ ժառանգություն թողնել իր երիտասարդ կնոջը և միակ որդուն, որը հիմա տասնութ տարեկան էր արդեն:

Դեպի տուն պետք էր բարձրանալ աստիճանաձև նեղլիկ փողոցներով, որ վատ էին սալարկված գետաքարերով և հաճախ կեղտոտ էին լինում. այնտեղ տարբեր, բայց միատեսակ վատ հոտեր էին փչում՝ անձավների նման խավար կրպակներից, որտեղ մեծ մասամբ մակարոն էին պատրաստում հատուկ հաստոցներով և հենց այդտեղ էլ կախում ձողերի ու փռում տակդիրների վրա՝ չորացնելու համար: Նույնպիսի գարշահոտություն էր փչում խցիկներից, որտեղ ապրում էին միայնակ կանայք, որ ամբողջ օրերով նստում էին դռների առաջ, և նրանց օրերն անցնում էին միապաղաղ. նույն մարդիկ էին հայտնվում նույն ժամերին, շարունակ լսվում էր նույն փոխադարձ հայհոյանքը՝ երկու կամ երեք լեզվանի, բամբասասեր կանանց միջև՝ երեխաների պատճառով, որոնք խաղալիս մեկմեկուց մազափնջեր էին պոկում կամ էլ իրար գլուխ էին ջարդում: Ժամանակ առ ժամանակ միակ

բազմազանությունը ամպհովանիավոր քահանայի այցելությունն էր, որը սրբազան մասունքներն էր տանում որևէ հիվանդի սնարին, զանգակների զրնգոցը և աստվածավախ կանանց ձայները.

Քե՛զ, սուրբ Հիսուս, քե՛զ, մեր Փրկիչ երանելի,

Փառաբանում է աշխարհը ցավերով լի:

Երբ ամուսնությունից երեք տարի հետո ամուսինը վախճանվեց, Աննա Աուրիտին գրեթե մեռավ աշխարհի համար: Այդ օրից նա այլևս երբեք դուրս չեկավ տանից՝ նույնիսկ կիրակնօրյա պատարագին գնալու համար. նրան երբեք չտեսան պատուհանում, որ պինդ փակված էր ծածկոցափեղկերով: Միայն երեկոները, երբ նա մայրամուտին օդ շնչելու համար երևում էր իր տան նեղլիկ կախովի այգում, որը հարում էր բարձր ու մռայլ աբբայությանը՝ Կյարամոնտե բարոնների նախկին ամրոցին մոտենալով վանդակացանցին, նրան կարող էին տեսնել այդ աբբայության միանձնուհիները: Եվ, իհա՛րկե, այդ կանայք նրա նկատմամբ նախանձ չէին զգում, չէ՛ որ Աննան էլ էր աշխարհից մեկուսացած: Իրենց նման նա էլ միշտ սևեր էր հագնում և գուցե նրա շորը կարված էր ավելի էժանագին կտորից, իրենց նման նրա մազերն էլ ծածկված էին մետաքսե սև գլխաշորով, որ հանգուցված էր կզակի տակ. և եթե նրա մազերը կտրված չէին, ապա չէր կարելի նաև սանրվածք համարել հապճեպորեն ծոծրակին ոլորած երկու երկար մազափնջերի հանգույցը: Իսկ դրանք գեղեցիկ, շագանակագույն, խիտ մազեր էին, որոնք ժամանակին նա հարդարում էր հմտորեն սանրելով, և այդ ժամանակ դրանք այնպիսի հմայք էին տալիս նրա գունատ ու հեզ, զարմանալի քնքուշ դեմքին:

Դոննա Կատերինան լիովին բաժանում էր աղջկա մեկուսացումը: Հազար ութ հարյուր վաթսուն թվականից՝ Միլացցոյում ամուսնու հերոսաբար զոհվելու օրից, նա էլ միշտ սևեր է հագնում: Դա նիհար, դառնացած կին էր՝ բնավ ոչ երկչոտ և ոչ էլ խոնարհ, ինչպես իր աղջիկն էր: Ամենադաժան փորձությունների մեջ, որ նրան առաքել էր ճակատագիրը, նա գնացել էր ամեն զոհաբերության, բայց անփոփոխ պահպանել էր կամքի ուժը, դառն ու տանջալից հպարտությունը. և ապրածը այնքան էր փոխել նրա դիմագծերը, որ չնչին հետք էլ չէր մնացել նախկին գեղեցկությունից: Քիթը երկարել էր, բարակել ու կախվել շրթունքների վրա, որ ծռմռվել էին ու փոս ընկել այնտեղ, որտեղ թափվել էին ատամները. այտերն էլ էին փոս ընկել, կզակը սրվել էր: Բայց այդ դեմքին առանձնապես ճնշող տեսք էին տալիս աչքերը՝ խիտ, սև հոնքերի տակ. կոպերը ցած էին կախվել, մեկը շատ, մյուսը՝ քիչ: Ե՛վ այն աչքը, որ ավելի էր փակված, և՛ դոննա Կատերինայի լարված սպասումով մշուշված հայացքը այդ մարող դեմքը վերածում էին ինչ-որ մոմե, սոսկալի վշտոտ դիմակի: Իսկ մազերը մնացել էին սև ու փայլուն՝ կարծես որպես ծաղր, որ ավելի ընդգծեն նախկին գեղեցկության չքացումը և ժխտեն բոլորի կողմից ընդունված կարծիքը՝ իբր մարդիկ վշտից ճերմակում են: Դոննա Կատերինա Լաուրենտանոն, որ ծնվել էր ճոխության մեջ, դաստիարակվել ու մեծացել հոյակապ իշխանական տանը, ստիպված եղավ ճաշակել ամեն զրկանք, նույնիսկ քաղց. քաղցը նա ճանաչեց հազար ութ հարյուր քառասունութ թվականի հեղափոխության ճնշումից հետո, երբ տասնութամյա մի կին՝ նորածին Ռոբերտոն գրկին, տարագրության ուղևորվեց Պյեմոնտ՝ ամուսնու ետևից, որը այն քառասուներեք հեղափոխականների թվում էր, որոնք ներում ստացան և դատապարտվեցին իրենց աղքատիկ գույքի բռնագրավման, Հայրը՝ Ջերլանդո Լաուրենտանոն, որը նույնպես քառասուներեքի թվում էր, կանչեց նրան Մալթա՝ իր աքսորավայրը՝ պայմանով, որ նա կապերը լրիվ խզի Ստեֆանո Աուրիտիից: Իսկ նա՞: Նա արհամարհանքով հրաժարվեց և Է՛լ ավելի մեծ արհամարհանքով մերժեց եղբոր՝ Իպոլիտոյի ողորմությունը: Իպոլիտոն այն քիչ թվով սիցիլիական պատվարժան ազնվականներից էր, ովքեր նվաստացան Սատրիանոյի առաջ, և կարողացավ հասնել այն բանին, որ վերադարձրեց բռնագրավված հայրական տիրույթները: Իսկ դոննա Կատերինան և իր ամուսինը մեկնեցին Տուրին՝ կույրերի պես բախտին ապավինելով, քանի որ հարկավոր

էր պահպանել իրենց փոքրիկ տղայի կյանքը՝ թեկուզև ողորմություն խնդրելով: Աքսորականներից՝ հյուսիս տեղափոխված սիցիլիացիներից, ոչ մեկը սկզբում չէր ուզում հավատալ, որ նա՝ այդքան ազնվատոհմ ընտանիքից ելած կինը, իշխան Լաուրենտանոյի միակ դուստրը, իր հետ ոչինչ չի բերել և օգնություն չի ստանում ընտանիքից. դրա համար էլ իրենք՝ դժբախտության ընկերները, ամեն տեսակի արգելքներ էին հարուցում Ստեֆանո Աուրիտիին, երբ նա տանջալիորեն որևէ աշխատանք էր փնտրում, որ հաց վաստակի, միայն հաց՝ կնոջ և իր համար: Այդ ժամանակ դոննա Կատերինան հիվանդացավ ու հինգ ամիս պառկեց հիվանդանոցում, որտեղ նրան ընդունեցին գթասիրությունից՝ անասելի զրկանքներից հետո. և նույնպես գթասիրությունից փոքրիկ Ռոբերտոյին վերցրին դաստիարակելու որբանոցում: Վերջապես աքսորի ընկերները սրտաշարժվեցին ու զղջացին և օգնեցին Ստեֆանո Աուրիտիին: Ելնելով հիվանդանոցից, դոննա Կատերինան լուր ստացավ, որ իր հայրը՝ Ջերլանդո Լաուրենտանոն, թույլ խմելով ինքնասպանություն է գործել Բուրմուլայում: Տուրինում անցկացրած տասներկու տարիների մասին դոննա Կատերինան պահպանել էր աղոտ, անորոշ հիշողություններ, կարծես թե նա չէր ապրել, այլ տեսել էր ինչ-որ տարօրինակ, տրտմալի երազ, որի մեջ, այնուամենայնիվ, երբեմն երևում էին ուրախ տեսիլքներ, վառ երջանկության, հայրենասիրական խանդավառության պահեր: Բայց նրա սրտից այդպես էլ չջնջվեց հուշը այդ երազից արթնանալու մասին: Դա այն ժամանակ էր, երբ լուր ստացվեց, որ Ստեֆանո Աուրիտին, որ հազիվ տասներկու տարեկան դարձած որդու հետ ընդունվել էր Գարիբալդիի գունդը՝ մարտնչելու Սիցիլիայի ազատագրման համար, զոհվել է գլխավոր ճակատամարտում, Միլացցոյի մոտ: Այդ ակնթարթում երկնային տերը նրան չտվեց նույնիսկ ամենախղճուկ ողորմածությունը՝ չառավ նրա խելքը: Եվ նա գրեթե ֆիզիկապես զգում էր, թե ինչպես իր կանացի սիրտը՝ բզկտված, մահացու խոցված, այնտեղ՝ Սիցիլիայում, արյունաքամ լինելով, ձգտում է տղայի մոտ՝ որդու, որը շարունակում էր կռվել, բայց հիմա առանց հոր, առանց նրա պաշտպանության: Տուրինում նրա համար փող հավաքեցին, և նա՝ Ջուլիոյի ու Աննայի՝ այնտեղ ծնված երկու կրտսեր որբերի ետ վերադարձավ Սիցիլիա՝ արդեն ազատագրված հայրենիքը: Ընդհանուր ցնծության մեջ նա վերադարձավ որպես սևեր հագած այրի, էլ ավելի դժբախտ, քան մեկնելիս, սևեր հագած երկու փոքրիկների հետ: Ռոբերտոն արդեն Գարիբալդիի հետ մտել էր Նեապոլ և հիմա Մաուրո Մորտարայի կողքին կռվում էր Կազերտայի մոտ: Դոննա Կատերինային ապաստան տվեց Ալայմո ընտանիքը՝ Ստեֆանո Աուրիտիի աղքատ ազգականները: Նրա եղբայր Իպոլիտոն, որ նորից բնակություն էր հաստատել Կոլիմբետրայում, դարձյալ նրան օգնություն առաջարկեց, բայց դոննա Կատերինան այս անգամ էլ արհամարհանքով հրաժարվեց՝ զարմանք ու ցավ պատճառելով իրեն ապաստան տված Ալայմո ընտանիքին: Դրանք աղքատ մարդիկ էին, աղքատ՝ նաև խելքով ու սրտով. դրա պատճառով դոննա Կատերինան ապրել էր ոչ քիչ դառն պահեր: Նա ստիպված էր զգուշանալ նրանցից, քանզի նրանք, որ ի վիճակի չէին հասկանալու, թե ինչ է պահանջում դոննա Կատերինայից սեփական արժանապատվության զգացումը, եղան նրա ոխերիմ թշնամիները: Նրանք լիովին ընդունակ էին դոննա Կատերինայից թաքուն խնդրելու և ընդունելու այն օգնությունը, որից նա հրաժարվել էր. ի դեպ՝ նրանց լիովին բավարարում էր այն աշխատանքը, որ դոննա Կատերինան անում էր տանը, և այն, որ ձեռք էր բերում դրսում, որպեսզի արդարացիորեն հատուցի այն քիչը, որ նրանք տալիս էին իրեն: Այդ բոլոր նվաստացումներից նա փոքր-ինչ ուշքի եկավ, երբ վերադարձավ Ռոբերտոն, որին խանդավառությամբ ընդունեցին ամբողջ շրջանով: Երբ դոննա Կատերինան հիշում էր այդ օրը, այդ րոպեն, նույնիսկ հիմա նրա ամբողջ տանջահար մարմնով դող էր անցնում: Իսկ երբ ժողովուրդը ձեռքերի վրա հանդիսավոր բերեց հանձնեց որդուն՝ կարմիր վերնաշապիկով հերոս տղային, որը վերադարձել էր մենակ, առանց հոր, ի՜նչ հիացմունքով, հրճվանքի ու սիրո ի՜նչ պոռթկումով նա կրծքին սեղմեց որդուն: Ժամանակավոր կառավարությունը ամենամսյա թոշակ նշանակեց դոննա Կատերինային, իսկ Ռոբերտոյին (տարիքի պատճառով ուրիշ ոչինչ չէր կարելի անել նրա համար) տրամադրեց կրթաթոշակ՝ Պալերմոյում սովորելու համար: Մի քանի տարի անց Ռոբերտոն զոհեց այդ կրթաթոշակը հանուն այն բանի, որ հետևի Գարիբալդիին դեպի Հռոմ արշավելիս: Ասպրամոնտե լեռան վրա կառավարությունը կասեցրեց երիտասարդ ուժերի այն հոսանքը, որը պետք է թարմացներ հյուծված Հռոմը: Գարիբալդիականների առաջ պատնեշի նման կանգնեցին

հենց նրանց եղբայրները. և Ռոբերտոն մյուս բոլորի հետ գերի վերցվեց ու բանտ դրվեց՝ սկզբում Սպեցիում, հետո Ջենովայում՝ Ֆորտե Մոնտերատտիում: Ազատվելուց հետո նա վերադարձավ իր պարապմունքներին, բայց ոչ երկար ժամանակով: Հազար ութ հարյուր վաթսունվեց թվականին նա նորից հետևեց Գարիբալդիին: Միայն հազար ութ հարյուր յոթանասունմեկ թվականին նրան հաջողվեց ավարտել իրավաբանական ֆակուլտետը: Նա անմիջապես գնաց Հռոմ, որ այդքան բուռն իրադարձություններից հետո հոգա վաստակի մասին: Մի քանի տարի անց նրա մոտ գնաց եղբայրը՝ Ջուլիոն: Աննան Ջիրջենտիում ամուսնացավ, և դոննա Կատերինան բնակություն հաստատեց փեսայի՝ Միքելե Դել Ռեի տանը՝ սպասելով, որ Ռոբերտոն Հռոմում կարիերա կանի, իր անցյալին արժանի ապագա կնախապատրաստի և վերջապես կսփոփի մորը՝ նրա կրած այնքան դառնություններից ու նվաստացումներից հետո, որոնցից նա ամենից շատ էր տառապում: Փեսայի մահը՝ հարսանիքից երեք տարի հետո, աղջկա վիշտը, չքավորության վերադարձը՝ այդ ամենը այնպես չցնցեցին նրան, ինչպես մյուս՝ ավելի խորունկ և անսահման վիշտը: Որդին. որդին, որից նա այնքան շատ բան էր սպասում, իր Ռոբերտոն բոլորովին գլուխը կորցրել էր՝ ընկնելով աղմկոտ իրարանցման մեջ միավորված Իտալիայի երրորդ մայրաքաղաքի այդ նոր կյանքում, բոլոր նրանց անպարկեշտ հրմշտոցում, ովքեր պահանջում էին մեծ արանքներ ու խրախուսանքներ: Պարզապես իր պարտքը համարելով այն, ինչ արել էր հայրենիքի համար, Ռոբերտոն չէր ուզում և չէր կարող նվաճել վարձահատուցման ինչ-որ իրավունք: Գուցե նա հույս ուներ և սպասում էր, որ բարեկամները, ընկերները կգնահատեն իր համեստությունն ու սեփական արժանապատվության զգացումը և կհիշեն իր մասին: Հետո նրան համակեց զզվանքը, և նա մի կողմ քաշվեց: Իսկ ինչպես խորտակվեցին բոլոր պատրանքները բուն Սիցիլիայում, կործանվեց ապստամբությունը ոգեշնչող բոցավառ հավատը: Դժբախտ կղզի, որին նայում էին որպես նվաճված երկրի: Դժբախտ կղզեցիներ, որոնց բարբարոսներ էին պատկերում, որ կարիք ունեն քաղաքակրթության: Եվ մայրցամաքից հայտնվեցին մարդիկ , որ քաղաքակրթեն նրանց. հայտնվեցին նոր զինվորներ, գարշելի հրոսակներ, որոնց հրամանատարն էր դավաճան-հունգարացի գնդապետ Էբերհարդտը, որ առաջին անգամ Սիցիլիայում հայտնվեց Գարիբալդիի հետ, իսկ հետո լեյտենանտ-հրձիգ սավոյացի Դյուպյուի հետ մասնակցեց գարիբալդիականների գնդակահարությանը Ասպրոմոնտեի մոտ. հայտնվեցին աստիճանավորության տականքները. սկսվեցին գժտություններ, մենամարտեր և ամեն տեսակի վայրի տեսարաններ, հետո էլ՝ Մեդիչիի ոստիկանությունը, զինվորական տրիբունալները, հափշտակությունները, սպանություններն ու կողոպուտները, որ հղանում և իրականացնում էր նոր ոստիկանությունը՝ հանուն թագավորական կառավարության. կեղծարարություններ, փաստաթղթերի բռնագրավումներ և քաղաքական դատավարություններ. այսպիսին էր պառլամենտական Աջերի նոր կառավարությունը: Հետո իշխանության գլուխ անցավ Ձախերի կառավարությունը, բայց նա էլ Սիցիլիայում իր գործունեությունն սկսեց արտակարգ միջոցներով. սկսվեցին և՛ հողերի բռնի յուրացումներ, և՛ կեղծիքներ, և՛ շորթումներ, և՛ սկանդալային ֆավորիտիզմ, և՛ հասարակական միջոցների սկանդալային վատնումներ: Ոստիկանապետերը, ոստիկանական աստիճանավորները հաճոյանում էին կառավարող կուսակցության պատգամավորներին. այդտեղ կային՝ և՛ անամոթ խնամիություն, և՛ նախընտրական պայքար՝ խելահեղ ծախսերով, և՛ ստորացուցիչ քծնանք, և՛ պարտվածների ու բանվորների շահագործում, որ աջակցություն էր գտնում և պաշտպանվում էր օրենքով, և անպատժելիության ապահովում շահագործողների համար...

Այն պահից, երբ Ռոբերտոն եկել էր Ջիրջենտի, երկու օրվա ընթացքում դոննա Կատերինա Աուրիտիի վշտահար շուրթերից հորդում էր դաժան հիշողությունների, կծու կշտամբանքների, համարձակ մեղադրանքների այդ բուռն հոսանքը: Ցած կախված կոպերի տակից գրեթե մարած աչքերով նայելով որդուն, նա զեղում էր սրտից այսքան տարիներ կուտակված վիրավորանքները, ամբողջ վիշտը, որով թունավորել էին նրա հոգին:

— Դու ինչի՞ վրա ես հույս դնում: Դու ի՞նչ ես ուզում,— հարցնում էր մայրը:— Դու ի՞նչ ես մտադիր անելու այստեղ:

Եվ Ռոբերտո Աուրիտին, մոր զայրույթից խոցված, լռում էր, մռայլվում, կախում գլուխը, փակում աչքերը: Նա քառասուներեք տարեկան էր, արդեն ճաղատ, բայց ուժերով լի. դեմքի

վրա աչքի էին ընկնում խիտ, սև, գրեթե սերտաճած հոնքերը և կարճ, նույնպես սև մորուքը: Նա թույլ տղայի նման նվաստացման դառնությունն էր զգում մոր առաջ, որը պառավել էր, թառամել ամբողջ ապրածից, բայց այնքան եռանդ էր պահպանել և հոգու այնպիսի հպարտություն: Ռոբերտոն իրեն իսկապես պարտված էր զգում: Վաղ երիտասարդության տարիների հսկայական լարումից հետո այդ նոր, անազնիվ պատերազմի՝ շահույթի ու եկամտաբեր տեղերն անարժան ստանալու համար մղվող տուրուդմփոցի առկայությամբ նա հետզհետե սկսեց ընկճվել հոգով: Չէ՞ որ նա էլ էր ֆինանսների մինիստրությունում պաշտոն խնդրել՝ ոչ թե իր համար, այլ եղբոր՝ Ջուլիոյի, և ստացել էր: Իսկ ինքն ապրում էր փաստաբանի իր մասնագիտության համեստ ու անկայուն եկամուտներով: Այս եկամուտները միշտ չէ, որ հնարավորություն էին տալիս նրան պահպանելու խղճի հանգստությունը՝ ոչ այն պատճառով, որ անիրավացի էր համարում վարձատրությունը իր աշխատանքի, իր ջանքերի դիմաց, այլ ուրիշ պատճառով. գործերի մեծ մասը նա ստանում էր իր բարեկամների՝ սիցիլիական պատգամավորների և գլխավորապես Կորրադո Սելմիի միջնորդությամբ, և նրա մեջ հաճախ կասկածներ էին ծագում, որ այս կամ այն գործը ինքը շահել է ոչ թե իր հմտությամբ և ընդունակություններով, այլ կողմնակի և ո՛չ անշահախնդիր միջամտություններով: Բայց փեսայի՝ Միքելե Դել Ռեի մահից հետո նա ստիպված էր Ջիջենտիում ապրուստի միջոցներ հայթայթել մորը, այրի քրոջը և զարմիկին, դեռ չհաշված այն, որ արդեն մի քանի տարի Հռոմում էլ նա մենակ չէր ապրում: Իհա՛րկե, մայրը գիտեր Հռոմում նրա կենակցության մասին մի կնոջ հետ, որի նկատմամբ չէր կարող ոչ մի հարգանք տածել իր արտասովոր նախապաշարումների և խիստ, պուրիտանական բարոյականության պատճառով: Նա երբեք ոչ մի խոսք չէր ասել որդուն այդ կնոջ մասին, բայց Ռոբերտոն զգում էր մայրական սրտի խիստ կշտամբանքը. զգում էր նաև, իր կարծիքով՝ չհիմնավորված, այդ վիշտը, որ մայրը չէր արտահայտում, որ Է՛լ ավելի չնվաստացնի, չվշտացնի որդուն: Ասենք, դոննա Կատերինան այդ պահին գուցե չէր էլ մտածում այդ մասին, նա կլանված էր կրքոտ պահանջով՝ հեղել որդու առաջ և ընտանեկան թախծալի հիշողությունները, և իր վրդովմունքն այն բանի համար, որ հայրենիքը հիմա գտնվում է այդպիսի վիճակում: Հենց այդ ժամանակ էլ նրանց գտան կանոնիկոս Պոմպեո Ագրոն ու Մատտինան:

Այն ջերմ սրտակցությունից, որով Ռոբերտո Աուրիտին ընդունեց հյուրերին, Ագրոն իսկույն հասկացավ, որ նա դեռ չգիտի նողկալի հոդվածի հայտնվելու մասին: Ագրոն բարևեց սինյորային և Մատտինային ներկայացրեց նրան:

Դոննա Կատերինան սպասեց՝ մինչև բարեկամները ողջունեցին իրար, արտահայտեցին իրենց զգացմունքները այդքան տարիների անջատումից հետո, և նորից սկսեց խոսել՝ դիմելով Ագրոյին.

— Խնդրեմ, մոնսինյոր, քանի որ դուք հավատարիմ բարեկամ եք, նրան ստիպեք հասկանալ: Մենք այստեղ յուրայինների մեջ ենք: Եվ այդ սինյորը, որին դուք եք բերել, հավանաբար, նույնպես բարեկամ է: Ես ուզում եմ համոզել իմ որդուն, որ չխառնվի այդ պայքարին:

— Մայրի՛կ,— աղերսեց Ռոբերտոն տխուր ժպիտով:

— Այո՛, այո՛,— ընդհատեց նրան մայրը:— Դուք ասացեք նրան, ըստ էության, ի՞նչ է արել Ռոբերտոն և ինչո՞ւ, հանուն ինչի՞ է հիմա հայտնվել այստեղ՝ իր հայրենիքի վստահությունը խնդրելու: Չլինի՞ թե հանուն այն բանի, ինչ կատարել է երեխա ժամանակ, չլինի՞ թե հանուն զոհված հոր և այն զոհաբերությունների, որ նա արել է, և այն գաղափարների, որոնց համար դրանք արվել են, և ապրած տառապանքների: Ախր նրան ծաղր ու ծանակի կենթարկեն:

— Օ՛, ո՛չ, ինչո՞ւ, դոննա Կատերինա,— փորձեց նրան ընդհատել կանոնիկոսը՝ ձեռքը տանելով կրծքին, կարծես վիրավորվել էր:— Ինչո՞ւ եք այդպես ասում:

— Կծաղրե՛ն, կծաղրե՛ն,— բացականչեց դոննա Կատերինան՝ Է՛լ ավելի բորբոքված:— Չէ՞ որ դուք էլ գիտեք, թե իրականում ինչ ստացվեց այդ իդեալներից սիցիլիական ժողովրդի համար: Ի՞նչ տվեցին նրան, ինչպե՞ս են վերաբերվում նրա հետ: Նա ճնշված է, ստորացված, բախտի քմահաճույքին նետված և շրջապատված արհամարհանքով: Ո՞ւր են քառասունութ և վաթսուն թվականների իդեալները: Բայց բոլոր ծերունիներն այստեղ գոռում են. «Առաջ

ավելի լավ էր: Առաջ ավելի լավ էր»: Եվ գիտե՞ք, դա ես էլ եմ գոռում՝ Կատերինա Լաուրենտանոս, Ստեֆանո Աուրիտիի այրին:

— Մայրի՛կ, մայրի՛կ,— աղերսանքով բացականչեց Ռոբերտոն՝ ականջները փակելով:

Բայց մայրը շարունակեց նորից.

— Այո՛, որդիս, որովհետև առաջ գոնե հույս կար, որը սատարում էր մեզ այնտեղ՝ Տուրինում՝ բոլոր այն դժբախտությունների մեջ, որոնց մասին գիտես և որոնց մասին չգիտես: Հիմա այլևս ոչ ոք չի ուզում հիշել այդ մասին, հավատա՛: Չափազանց թանկ վճարեցինք դրանց համար, այդ իդեալների: Իսկ հիմա բավակա՞ն է: Վերադարձի՛ր Հռոմ: Ես չեմ ուզում, չեմ կարող հանդուրժել, որ դու եկել ես այստեղ կառավարության անունից, որը տնօրինում է մեզ: Դու չես գողացել, որդի՛ս, երբեք չես մասնակցել այն անարդարություններին ու ստորություններին, որ կատարվում են այստեղ՝ ոստիկանապետերի ու պատգամավորների հովանավորությամբ, երբեք չես օգնել տեղական խառնախմբերին, որոնք մեր քաղաքների համար նույնպիսի վարակ են, ինչպես ճահճատենդը գյուղերի համար: Դու ի՞նչ ունես անելու այստեղ: Դու ի՞նչ իրավունք ունես այն բանի համար, որ պատգամավոր ընտրված լինես: Ո՞վ է քեզ աջակցում: Ո՞վ է քեզ ուզում:

Այդ պահին ներս մտավ Գվիդո Վերոնիկան, որը հասցրել էր կարգի բերել իրեն և հանգստանալ: Տուրուդմփոցից հետո նա մտել էր հյուրանոց, զգեստը փոխել և ելնելիս պատվիրել էր՝ եթե որևէ մեկը հարցնի, հայտնեն, որ ինքը կվերադառնա ցերեկվա ժամը երեքին: Ագրոն ու Մատտինան իսկույն հայացքներով հասկացրին նրան, որ Ռոբերտոն ոչինչ չգիտի: Դոննա Կատերինա Աուրիտին վեր կացավ, որ որդուն համոզի հրաժարվել կառավարության օգնությունից, որը, ի դեպ, ոչ մի նշանակություն չի ունենա անխուսափելի պայքարում, և այդ պայքարի մեջ մտնել հանուն ստրկացված կղզու: Իհա՛րկե, նա չի հաղթանակի, բայց պարտությունը գոնե չի պատվազրկի նրան և նախազգուշացում կդառնա կառավարությանը:

— Կտեսնեք,— ավարտեց նա,— չի անցնի մեկ տարի, և մենք կդառնանք արյունալի իրադարձությունների վկաներ:

Գվիդո Վերոնիկան նրան պարզեց իր թմբլիկ ձեռքերը:

— Խնդրում եմ, սինյորա, խնդրում եմ, այդպիսի բաներ մի՛ ասեք: Ձեր շուրթերից դրանք սարսափելի են հնչում: Թող այդ ասեն դրդիչները, որոնք, իրենք էլ չցանկանալով, ջուր են լցնում եկեղեցականների ջրաղացին: Ներեցե՛ք, կանոնիկոս, բայց այդպես է, որ կա: Մի քանի փառամոլ սրիկաներ տարաձայնություններ են սերմանում, որ գրավեն քաղաքային խորհուրդները և պառլամենտական տեղերը: Մեր հայրենիքի մի քանի թշնամիներ էլ երազում են Սիցիլիայի անջատման մասին՝ Անգլիայի խնամակալության տակ, որ մեզ մոտ էլ լինի այնպես, ինչպես Մալթայում է: Եվ, բացի այդ, գոյություն ունի Ֆրանսիան՝ մեր թանկագին «լատինական քույրը», որը բորբոքում է կրակը և դրամ է ուղարկում, որ վաղն օգուտ քաղի մաֆիայի սանձազերծած որևէ ավազակային խռովությունից:

— Ախ այդպե՞ս,— բացականչեց դոննա Կատերինան, որ դժվարությամբ էր զսպում իրեն:— Ահա թե դուք ինչով եք մխիթարվում: Այդ ամենը զրպարտություն է, սովորական զրպարտություն, այն կրկնում են մինիստրները՝ ոստիկանապետերի և ամեն տեսակի տեղական պարագլուխների ետևից, որոնք իշխում են ընտրողներին. և այդ ամենը նրա համար, որ սքողեն իրենց բոլորովին անպետք տեր ու տնօրինությունը երեսուն տարվա ընթացքում: Այստեղ քաղցած են մնում, թանկագին սինյոր, և՛ գյուղերում, և՛ ծծմբահանքերում. լատիֆունդիաները, ֆեոդալական բռնությունները, այսպես կոչված՝ կապելլաները , կոմունալ հարկերը ծծում են մարդկանց արյան վերջին մնացորդներն այնպես, որ նրանց ոչինչ չի մնում հաց գնելու համար: Ավելի լավ է՝ լռեք: Լռեցե՛ք:

Գվիդո Վերոնիկան շփոթված ժպտաց և տարածեց ձեռքերը, հետո դարձավ Ռոբերտոյին.

— Լսի՛ր... ձեր թույլտվությամբ, սինյորա: Ինձ պետք է քո շիֆրը, որ շտապ հեռագիր ուղարկեմ Հռոմ:

— Ախ, հա՛: Հրաշալի՛: Հրաշալի՛,— բացականչեց կանոնիկոս Ագրոն՝ թոթափելով իրենից թախծալի թմրությունը, որի մեջ խորասուզել էր նրան դոննա Կատերինայի կրակոտ խոսքը:

Ռոբերտոն գնաց մյուս սենյակը՝ շիֆրը բերելու: Երեք բարեկամների և պառավ սինյորայի միջև խոսակցությունն ընդհատվեց: Հետո Ագրոն տանջալից լռությունը խզելու համար շշնջաց.

— Իհա՛րկե, մեր դժբախտ երկրամասն ապրում է հույժ ցավալի պայմաններում:

Եվ խոսակցությունը վերսկսվեց, բայց արդեն առանց առաջվա կրքոտության: Երեք տղամարդիկ առանց խոսքերի հասկացան մեկմեկու, բայց այդ սկանդալային հոդվածից մտահոգված ու հուզված՝ բազմանշանակ հայացքներ էին փոխանակում. նրանք ուզում էին մենակ մնալ, որ պայմանավորվեն, թե ինչպես ավելի լավ նախապատրաստեն Ռոբերտոյին: Բայց դոննա Կատերինան չէր հեռանում:

— Դուք չգիտե՞ք, Կորրադո Սելմին Ռոբերտոյին չի՞ գրել իր գալու մասին,— հարցրեց նրան Գվիդո Վերոնիկան:

— Այո՛, այո՛, նա կգա,— պատասխանեց դոննա Կատերինան՝ դառն արհամարհանքով օրորելով գլուխը:

— Ես նախազգուշացրել եմ նրան,— կամացուկ ասաց Վերոնիկան՝ դիմելով Ագրոյին ու Մատտինային:— Ավելի լավ՝ եթե գա: Ես նույնիսկ հեռագիր կուղարկեմ նրան, որ գա անհապաղ, կուղարկեմ իմ անունից, հասկանո՞ւմ եք: Այսպիսով, Լանդոն... Լռություն, ահա և Ռոբերտոն:

Բայց դա Ռոբերտոն չէր. նրա փոխարեն դահլիճ մտավ բարձրահասակ, նիհարակազմ մի պատանի՝ ակնոցով, որը, սեղմելով նրա քթարմատը, կարծես մի գծի մեջ էր միացրել խիտ հոնքերը և նրա դեմքին տվել մռայլ ու խիստ համառության արտահայտություն: Դա Ռոբերտոյի զարմիկն էր, Անտոնիո Դել Ռեն: Նրա դեմքը, որ առանց այդ էլ գունատ էր, հիմա մոմեղեն էր թվում:

— Դուք կարդացի՞ք «Էմպեդոկլեում»...— հարցրեց նա. նրա շրթունքները դողացին, և զայրույթից ուռեցին ռունգները:

Կանոնիկոս Ագրոն ու Մատտինան իսկույն սկսեցին թափահարել ձեռքները՝ հասկացնելով նրան, որ լռի:

— Ռոբերտոյի՞ դեմ,— հարցրեց դոննա Կատերինան:

— Պապիկի դեմ,— ամբողջ մարմնով դողալով, պատասխանեց պատանին:— Մի գունդ ցեխ: Եվ քո դեմ:

— Գարշա՛նք է, գարշա՛նք,— բացականչեց Ագրոն:— Խնդրում եմ, թող Ռոբերտոն այդ մասին ոչինչ չիմանա:

— Նա հիմա կարդում է հոդվածը,— արհամարհանքով ասաց զարմիկը:

— Ի՛նչ եք ասում, ի՛նչ եք ասում,— բացականչեց Ագրոն՝ վեր կենալով:— Օ՛, աստված իմ: Հարկավոր է կանխել նրան: Այդ սրիկաներն արդեն դաս են ստացել մեր Վերոնիկայից: Ի սեր աստծու, գնացե՛ք, գնացե՛ք, դոննա Կատերինա: Ի՛նչ անզգուշություն, ի՛նչ անզգուշություն, տղաս:

Դոննա Կատերինան դուրս վազեց, բայց չափազանց ուշ: Ռոբերտո Աուրիտին, չիմանալով, թե դրանից առաջ ինչ է արել Վերոնիկան, գունատված, ջղաձիգ ժպիտից ծռմռված դեմքով՝ սուրաց այդ թերթուկի խմբագրատուն, Պորտա-Աթենայի մոտ: Նա այդտեղ գտավ կղերական կուսակցության գլխավոր ներկայացուցիչներին՝ Ֆլամինիո Սալվոյի գլխավորությամբ. նրանք

հավաքվել էին, որ հարձակումից անմիջապես հետո առաջադրեն Ինյացիո Կապոլինոյի թեկնածությունը: Ծեր պահակին, որ նստած էր փոքրիկ նախասենյակում՝ խմբագրության սենյակը տանող ապակեպատ դռան մոտ, նա նույն ծուռ ժպիտով ասաց, որ Ռոբերտո Աուրիտին ուզում է խոսել գլխավոր խմբագրի հետ: Խմբագրության սենյակում անսպասելի լռություն տիրեց, հետո Ռոբերտոյի ականջին հասան հուզմունքով լի հետևյալ խոսքերը.

— Ո՛չ, սինյորներ: Ես կգնամ, դա իմ գործն է: Հոդվածը ես եմ դրել, ես էլ դրա պատասխանը կտամ:

Ռոբերտոն նույնիսկ չնայեց, թե ով է ելնում իրեն ընդառաջ. գազանի նման նետվեց նրա վրա, օդ բարձրացրեց և ամբողջ թափով զարկեց դռանը, որը չրխկոցով պոկվեց ծխնիներից, իսկ ջարդված ապակու բեկորները զրնգոցով թռան տարբեր կողմեր:

Երբ Վերոնիկան, Մատտինան և զարմիկ Դել Ռեն փութկոտ անցան մարդկանց բազմության միջով, որ բոլոր կողմերից վազել եկել էին խմբագրության դահլիճից լսվող վայրի աղաղակների վրա, Մարկո Պրեոլան՝ արյունով ողողված դեմքով, դանակը ձեռքին, կատաղիորեն փորձում էր պոկվել իրեն բռնողներից ու գոռում էր.

— Թողե՛ք ինձ, անիծվածներ, թողե՛ք ինձ: Եթե թողնեք, որ գնա, ես, միևնույն է, հետո կսպանեմ նրան: Թողե՛ք ինձ: Թողե՛ք ինձ:

Գլուխ IV

Նախասրահի խորքում՝ դափնիների և արմավենիների միջև, գունավոր ապակիներով մեծ դռան ֆոնին Վեներա Ուրանիայի բրոնզե թանկարժեք անգլուխ արձանն էր, որը փորել-հանել էին Կոլիմբետրայում, հենց այն տեղում, որտեղ հիմա գտնվում էր վիլլան: Հիանալով արձանով, ամեն դիտող պատկերացնում էր նրա գոյություն չունեցող դեմքը՝ թեթևակի մի կողմ թեքած՝ այնպես, եթե այն իսկապես գոյություն ունենար, և կարելի լիներ մտածել, թե Վեներան իրոք բարձրացրած ձեռքերով ծածկում է երեսը՝ ոչ թե նրա համար, որ ամաչում է իր մերկությունից, այլ ավելի շուտ այն պատճառով, որ մատուռի աջ կողմում չտեսնի արտասովոր հագնված մարդկանց՝ կապիտան Շարալլայի բուրբոնյանների ծնկաչոք կերպարանքները:

Պատարագը մոտենում էր ավարտին: Մատուռի ներսում, որ շողում էր մարմարով ու ոսկեջրով, աղոթքի մեջ խորասուզված իշխան Իպոլիտո Լաուրենտանոն էր միայն, որ ծունր էր իջել ուղիղ բեմի առաջ, կամկայով պատած ոսկեզօծ աթոռակին. նրանից քիչ ետ Լիզի Պրեոլան էր՝ քարտուղարը, ավելի հեռու՝ կանայք՝ տան կառավարչուհին ու երկու ջահել աղախինները: Տղամարդ ծառաներին թույլատրվում էր պատարագը լսել միայն նախասրահից, իսկ իշխանի սիրելի ծառային՝ Լիբորիոյին, որ կարճ շալվար էր հագել ու մետաքսե գուլպաներ, թույլատրված էր կանգնել հենց մուտքի մոտ, ընդ որում՝ ավելի շուտ մատուռի ներսում, քան դրսում. և դա Շարալլային թվում էր ամենաիսկական անարդարություն Պրեոլայի կողմից: Որպես կապիտան նա իրեն արժանի էր համարում կանգնելու՝ եթե ոչ իշխանից մի քիչ ետ, ապա գոնե Պրեոլայի կողքին. ահա թե ինչ: Իհա՛րկե, նա զգուշությունից բարձրաձայն չէր գանգատվում, այնուամենայնիվ նրա մեջ կուտակվում էր դառնությունը: Եվ նա դրա համար, ինչպես նախանձոտության մեղքի, ապաշխարում էր դոն Լագայպայի առաջ, որն ամեն կիրակի գալիս էր Կոլիմբետրա՝ պատարագ մատուցելու:

— Բոլոր դեպքերում աստծու առաջ մենք բոլորս պիտի հավասար լինենք: Բացառությամբ իշխանի, դա ինքնին հասկանալի է:

Բայց մի՞թե Շարալլան գանգատվում էր ոչ այն պատճառով, որ ուզում էր աստծու առաջ առանձնանալ և կանգնել իր ենթակաների առջևում: Ու թեև առաջին հայացքից նրա

նկատառումներն արդարացի էին թվում, բայց դրանց մեջ պարզ երևում էին սատանայի եղջյուրներն ու պոչը:

Դոն Իլլումինատո Լագայական այդպես փակեց Շարալլայի բերանը:

Եվ Շարալլան խոր հառաչեց:

Բայց մատուռի առջևի այդ մերկ արձանը իսկական սատանայական գայթակղություն էր բոլոր պահնորդների համար, որ պարտավոր էին կանգնել դրսում: Այն ժամանակ, երբ նրանց շրթունքները աղոթք էին շշնջում, աչքները պարզապես ստիպված էին մեղք գործել՝ նրանց կամքին հակառակ նայելով այդ կանացի մարմնին, որը նորին պայծառափայլությունը (այդքան բարեպաշտ մարդը) չպետք է դներ նախասրահում՝ ի ցույց ամենքին: Օ՛, անիծյալ կին... Նա կենդանի էր թվում, թվում էր... Խեղճ աղախիններն ամեն անգամ նրա մոտով անցնելիս խոնարհում էին հայացքները, և դոն Իլլումինատոն՝ նույնպես. ի՞նչ երեսպաշտն է:

Իսկ նա կարծես փթթելով ծիծաղում էր, նա՝ գլխատված աստվածուհու այդ հրաշալի մարմինը, որ ծնվել էր վաղեմի ժամանակներում՝ հույն վարպետի հատիչի տակ, որը չի էլ իմացել, որ իր ստեղծագործությանը վիճակված կլինի իրենից այդքան երկար ապրել և հիմա դափնեծառերի ու արմավենիների չաների միջև կանգնած՝ սարսափելի մտքեր ներշնչել տգետներին:

Պատարագն ավարտվեց, և երբ իշխանը ուղղվեց դեպի թանգարան՝ անցնելով պահնորդների մոտով, նրանք ձգվեցին ու պատվի առան:

Թանգարան էին կոչվում նախասրահի մյուս կողմում գտնվող առաջին հարկի դահլիճները, որտեղ ջերմոցային բարձր բույսերի արանքում դրված էին անտիկ արվեստի ստեղծագործություններ, առարկաներ, որ գին չունեին՝ արձաններ, սարկոֆագներ, սկահակներ, արձանագրություններով սալիկներ, որ գտնված էին Կոլիմբետրայում: Իր «Ակրագանտայի մասին հիշողություններ»-ում դոն Իպոլիտոն գրում էր՝ դրանց մասին, ինչպես նաև մեդալների թանկարժեք հավաքածուի մասին, որ ցուցադրված էր վերևում՝ հյուրասենյակում:

Անտիկ Ակրագանտայի նշանավոր Կոլիմբետրան իրականում ընկած է եղել շատ ավելի հեռվում՝ հարթավայրի ամենացածր տեղում, որտեղ իրար են միանում երեք փոքրիկ հովիտները, իսկ ժայռերը ետ են քաշվում, և լեռնաշղթայի ուռուցիկ գիծը, որի վրա բարձրանում են տաճարները, ընդհատվում է լայն կիրճով: Այդ տեղում, որ հիմա հայտնի է Ներքին Աբբադին անունով, իրենց քաղաքի հիմնադրումից հարյուր տարի հետո ակրագանտցիները ձկնաբուծարան են սարքել՝ մինչև Հիպսաս տարածվող մեծ ջրամբար. այդ տեղում պատնեշափակված ջրերը ծառայել են նաև քաղաքի պաշտպանությանը:

Դոն Իպոլիտոն իր կալվածքը Կոլիմբետրա էր կոչել, որովհետև նա էլ էր հրամայել լճակ փորել կալվածքի արևմտյան մասում. ձմռանն այն լցնում էին հեղեղաջրերը, որ իջնում էին Բուռնամորոնե լեռն ի վար, իսկ ամռանը՝ նորիայի օգնությամբ, որի ճռճռան անիվը առավոտից երեկո պտտում էր մի կույր ձի: Արհեստական լճակը շրջապատված էր նարնջենիների ու նռնենիների մի հիասքանչ պուրակով:

Սովորաբար դոն Իպոլիտոն թանգարանում էր անցկացնում ամբողջ առավոտը՝ անսպառ ոգևորությամբ ուսումնասիրելով ակրագանտյան հնությունները: Հիմա նա պատրաստվում էր նոր գրքում նկարագրելու հին քաղաքի պատմական տեղագրությունը՝ հիմնված այդ վայրերի երկարատև մանրակրկիտ ուսումնասիրության վրա, որովհետև նրա Կոլիմբետրան գտնվում էր հենց այն տեղում, որտեղ եղել է հունական Ակրագանտայի կենտրոնը:

Երկրորդ դահլիճում՝ վարդագույն, թեթև վարագույրներով զարդարված լայն պատուհաններից մեկի մոտ դրված էր մի խոշոր գրասեղան, բայց դոն Իպոլիտոն քիչ էր նստում գրասեղանի մոտ, անցուդարձ անելով դահլիճում, նա մտքում կառուցում էր երկու-երեք երկար, ծանր նախադասություններ՝ «այն բանի հետևանքով, որ» և «ընդսմին, այսուհանդերձ» ձևերի օգնությամբ, իսկ հետո մոտենում էր գրասեղանին և, հաճախ

նույնիսկ չնստելով, գրում էր դրանք՝ խոշոր, հատուկ նախապատրաստված թերթերի վրա: Ուղիղ կզակի տակ մի ձեռքի մեջ սեղմելով իր փառահեղ մորուքը, որը մինչև հիմա պահպանել էր ինչ-որ փայլ և նույնիսկ նախկին ոսկեգույնի ինչ-որ նմանություն, նա՝ բարձրահասակ, ուժեղ և, չնայած իր տարիքին, դեռ շատ գեղեցիկ, կանգնում էր այս կամ այն հուշարձանի առաջ, և թվում էր, թե խոժոռված հոնքերի տակ նրա երկնագույն, վճիտ աչքերը խորասուզվել են հնամենի սկահակի սիմվոլիկ պատկերաքանդակների կամ մակագրության հետազոտության մեջ: Երբեմն նա ձեռքերով զանազան շարժումներ էր անում կամ բավարարված ժպիտով փոքր-ինչ բացում գծագրությամբ կատարյալ ու պատանեկանի նման թարմ շրթունքները, երբ նրան թվում էր, թե ինքը գտել է ինչ-որ վճռական ապացույց, որն ընդունակ է հաղթականորեն ժխտելու անտիկ տեղագրության մասնագետների տեսակետը:

Այդ օրը գրասեղանին դրված էր Պոլիբիոսի «Պատմությունը» հունարեն, գիրք 9-րդ, գլուխ 27, բացված այն էջի վրա, որտեղ հիշատակվում էր ակրագանտյան միջնաբերդը:

Դոն Իպոլիտոն արդեն մի քանի ամիս գլուխ էր կոտրում մի շատ կարևոր խնդրի վրա. ի՞նչ նպատակով է կառուցված այդ միջնաբերդը:

— Ես չե՞մ խանգարում,— հայտնվելով շեմքին, խոնարհվելով հարցրեց դոն Իլլումինատո Լագայպան, որն արդեն հասցրել էր հանել եկեղեցական զգեստը և իրեն զորացնել մի գավաթ շոկոլադով ու բիսկվիտով:

Դա միջին տարիքի հոգևորական էր, հաստավուն, արևառ դեմքով և շատ բաց, կապույտ աչքերով, որոնք, թվում էր, մի տեսակ զարմացած են նայում աշխարհին: Ամեն կիրակի իշխանը նրան հյուրասիրում էր ճաշով, և որպեսզի դոն Իպոլիտոյին հաճույք պատճառի, այդ խաղաղ ու անհոգ բնավորությամբ, ըստ էության, բարի մարդը հագնում էր դաժան ու մարտնչող անհանդուրժողական դիմակ և հետո ինքն էլ էր ծիծաղում դրա վրա՝ փիլիսոփայաբար զրուցելով իր հավատարիմ, ծեր Ֆիֆայի հետ՝ ալարկոտ ավանակի, որն իր տիրոջը տանում էր նրան պատկանող հողամասը՝ Բուոնամորոնե գերեզմանոցի մոտ գտնվող մի քանի հեկտար հող, որը, չնայած կյանքի վաղանցուկությանը, ամեն թագավորի ժամանակ, ամեն տարի նրան բերում էր այն մի քիչը, որի կարիքը նա զգում էր իր համեստ պահանջմունքների համար:

— Այսօր կիրակի է, չի կարելի աշխատել,— ասաց նա՝ ձեռքերն իրար զարկելով ու ժպտալով:

— Այն, ինչ ես եմ անում, չի կարելի աշխատանք կոչել,— զուսպ, նրբագեղ շարժումով պարզելով ձեռքը, պատասխանեց դոն Իպոլիտոն:

— Այո՛, այո՛, otia, otia , ինչպես ասում է Կիկերոնը,— շտապեց իր սխալն ուղղել դոն Լագայպան:— Դուք իրավացի եք: Բայց ես եկա ձեզ ասելու, ձերդ պայծառափայլություն, որ երեկ առավոտյան, նախքան ես կուղևորվեի իմ փոքրիկ կալվածքը, մոնսինյորն ինձ պատիվ արեց ձեզ ուղղված մի հանձնարարությամբ:

— Մոնսինյոր Մոնտորո՞ն:

— Այո՛, նա խնդրեց նախազգուշացնել ձերդ պայծառափայլությանը, որ այսօր՝ կեսօրից հետո ինքը, աստծո օգնությամբ, կգա այստեղ, որ խոսի, ինչպես ես եմ ենթադրում, մոտալուտ ընտրությունների մասին: Ավա՛ղ,— հառաչեց նա՝ մատներն իրար հյուսելով ու թափահարելով սեղմած ձեռքերը:— Թվում է՝ անիծյալ սատանան արդեն դուրս է հանել իր եղջյուրները... Պատերազմ, պատերազմ, փոթորիկ: Ասում են, թե կանոնիկոս Ագրոյի կոչով Պալերմոյից սրարշավ եկել են երկու մթագույն ձիեր, այո՛, բարձր մաֆիայի ու տխրահռչակ մասոնական բանդայի երկու նշանավոր պատգամաբերներ... ոմն Մատտինա և ոմն Վերոնիկա:

— Ագրոն,— մռայլ ասաց Իպոլիտո Լաուրենտանոն, որին գրգռում էր միայն այդ անունը, մյուսների վրա նա ուշադրություն չէր դարձնում:— Ուրեմն Ագրոն իսկապես ուզում է ելնել հրապարակ՝ առանց քաշվելու, նույնիսկ նկատի չառնելով իր հոգևոր զգեստը:

— Ավա՛ղ,— նորից հառաչեց դոն Լագայպան։— Նա իմ պետն է... պետը... Բայց ես ձեզ հայտնում եմ այն, ինչ ասել են ուրիշները, relata refero ... Թող սա մեր մեջ մնա... Ասում են՝ ճառով է, որ նրան եպիսկոպոս չեն դարձրել գերապատիվ մոնսինյոր Մոնտորոյի փոխարեն: Իսկ հիմա նա հույս ունի, թե կպահպանվի պատշաճությունը. նրա վարմունքը կվերագրեն հին բարեկամությանը, որ կապում է նրան Աուրիտիի հետ... Այդպես է:

— Լա՛վ բարեկամություն է, պարծենալու բան ունեն,— փնթփնթաց Լաուրենտանոն: Մանավանդ հոգևորականի համար:

— Բայց Ագրոն...— նկատեց դոն Իլլումինատոն:

Եվ էլ ոչինչ չավելացրեց: Նա փակեց աչքերը, օրորեց գլուխը և հառաչեց երկրորդ անգամ:

— Այո՛, ամեն ինչ բարդանում է... բարդանում է գործը... Ուզում եմ ասել՝ այն դառնում է բավական փափկանկատ...

— Ի՞նձ համար,— բացականչեց դոն Իպոլիտոն, և նրա փայլուն գանգը կաս-կարմիր կտրեց։— Փափկանկատ ի՞նձ համար: Թող իմանա մոնսինյոր Մոնտորոն, իսկ նա առանց այդ էլ պիտի իմանար, որ ես որպես ազգական չեմ ճանաչում ու երբեք չեմ ճանաչի այդ գարիբալդիական Ռոբերտո Աուրիտիին: Ես նրա երեսն էլ ոչ մի անգամ չեմ տեսել. նա երբեք չի եղել այստեղ, և ես էլ նրան թույլ չէի տա անցնել իմ շեմից: Թեև քաղաքացիներից ոչ մեկը նրան չի հրավիրել, նա իր կառավարության հրամանով եկել է այստեղ՝ Ջաչինտո Ֆացելլոյի տեղը գրավելու անմիտ հույսով: Շատ լավ: Նա կստանա այն, ինչի արժանի է: Թող մեր պայքարը մղվի՝ առանց հաշվի առնելու իմ՝ նրա հետ ունեցած չարաբաստիկ ա-կա-մա ազգակցությունը, և թո՛ղ նա պարտվի:

— Ախ, պայքար, պայքար, իհա՛րկե: Անհրաժեշտ է պայքարել,— ասաց դոն Իլլումինատոն՝ կատաղաբար բարձրացնելով հոնքերը տարօրինակ հայացքով նայող աչքերի վրա։— Նույնիսկ եթե չհաջողվի հաղթել...

— Իսկ ինչո՞ւ չպիտի հաջողվի,— խստությամբ հարցրեց դոն Իպոլիտոն։— Հաղթանակի ի՞նչ հավանականություն կարող է ունենալ Աուրիտին: Ի՞նչ արժե Ագրոն:

— Բայց... ասում են... ոստիկանությունը...— և դոն Իլլումինատոն քորեց մաքուր սափրած այտը:

— Այդ ամենը նշանակություն չունի,— անմիջապես պատասխանեց իշխանը։— Դրանում մենք համոզվեցինք մունիցիպալ ընտրությունների ժամանակ:

— Այո՛, այո՛,— համաձայնեց Լագայպան։— Եվ այնուամենայնիվ հիմա գործին խառնվել է մաֆիան... Ոստիկանությունը ներողամտաբար քաջալերում է նրան... Գործի են դրվում ամեն տեսակի հնարքներ, ասում են... պիտի գա ինչ-որ նշանակալից դեմք՝ պատգամավոր Սելմին, եթե, ինչպես ինձ թվում է, ես ճիշտ եմ հասկացել...

Դոն Իպոլիտոն որոշ ժամանակ լռեց. նրա դեմքը ծռմռվեց, կարծես սրտախառնուք էր սկսվել. հետո, թափահարելով բռունցքը, նա բացականչեց.

— Ֆիլանջյերի՛, Ֆիլանջյերի՛:

Լագայպան հառաչանքով օրորեց գլուխը այդ բացականչության ժամանակ, որը պոկվեց իշխանի շրթունքներից և միշտ ուղեկցվում էր զայրալից ափսոսանքի շարժումով.

— Ֆիլանջյերի՛:

Նա գիտեր, թե ինչպիսի ակնածանքով է դոն Իպոլիտո Լաուրենտանոն վերաբերվում Սատրիանոյին՝ հազար ութ հարյուր քառասունութ թվականի հեղափոխության օրհնյալ հաղթողին, «անամոթ հեղափոխական օրգիայի» տասնվեց ամիսներից հետո սոցիալական կարգը խելամիտ ու եռանդուն վերականգնողին: Իշխանը դառն հիշողություններ էր պահպանել այդ տասնվեց ամիսների մասին, հատկապես խաժամուժի բիրտ սպառնալիքի

մասին՝ ազնվականական արտոնությունների և կրոնական հավատալիքների դեմ: Սատրիանոն նրա համար հաղթանակի արևն էր՝ կործանարար փոթորկի վրա, և երբ վերադարձավ անդորրությունը, նա արևի նման շողաց Սիցիլիայի երկնքում, պալերմյան նորմանական թագավորության երկնքում, որը կարծես վերածնվեց շքեղ տոնակատարություններում, որ կազմակերպվում էին հատուկ այն բանի համար, որ նրա իշխանությունը շրջապատ են նապոլեոնյան հեղինակությամբ: Այնտեղ՝ պալատում Իպոլիտոն ծանոթացավ դեռ շատ ջահել դոննա Թերեզա Մոնտալտոյի հետ, և ինքը՝ Սատրիանոն, ցանկացավ դառնալ հարսանիքի հարսնեհայրը՝ մեծ դժվարությամբ փեսայի համար ստանալով սուրբ Յանուարիի շքանշան, որով արդեն պարգևատրված էր նրա հայրը: Փոթորիկը նորից պայթեց հազար ութ հարյուր վաթսուն թվականին. Կոլիմբետրայի առանձնության մեջ իշխանը լսեց հեռավոր որոտը: Նա ամբողջ թափով պայքարեց հայրենի քաղաքի փոքրիկ շրջանում, քանի որ բուրբոնների գործն այն ժամանակ տանուլ էր տրված, հարկավոր էր պայքարել եկեղեցու իշխանության համար: Չէ՞ որ Հռոմը վերադարձվել էր պապին, և ի՞նչ իմանաս, թե էլի ինչ է լինելու: Իսկ հիմա պետք է ամեն գնով խանգարել Ռոբերտո Աուրիտիին, որ չհաստատվի Ջաչինտո Ֆացելլոյի տեղում:

— Ի վերջո,— շարունակեց նա,— Աուրիտին ոչ մի ազդեցություն չունի շրջանում: Նա այստեղից գնացել է մոտ քսան տարի առաջ:

— Եվ, այնուամենայնիվ, համակրանք,— զգուշորեն առարկեց Լագայպան,— որոշ համակրանք նա գուցե և վայելում է:

— Ներկա ժամանակում համակրանքը ոչինչ չարժե,— վճռականորեն առարկեց դոն Իպոլիտոն,— նյութական շահերի համեմատ ոչինչ է:

Այս ասելով, նա գրասեղանից վերցրեց Պոլիբիոսի «Պատմության» բացած հատորը և մեքենաբար մոտեցրեց աչքերին: Եվ իսկույն նրա հայացքն ընկավ այնքան անգամ կարդացված ու կշռադատված մի պարբերության վրա, որտեղ շարադրված էր բանավեճը այդ հռչակավոր միջնաբերդի մասին: Նա շեղվեց զրույցից, նորից կարդաց պարբերությունը բանավեճի մասին, որը հուզում էր նրան, հառաչեց, փակեց գիրքը՝ ցուցամատը թողնելով էջերի արանքում և, գիրքը պահելով թիկունքում, ասաց.

— Ի վերջո հարկավոր է հաղթել, դոն Իլլումինատո: Ահա տեսեք, ներկա պահին իմ դեմ է ամբողջ մի բազմություն՝ գերմանական խորագիտակ անձինք, բոլոր ազգերի հին ու նոր հնագետները, պատմաբանները և ժողովրդական ավանդույթը. և, այնուամենայնիվ, ես ինձ պարտված չեմ համարում: Մարտադաշտն այստեղ է: Եվ ես նրանց սպասում եմ այստեղ:

Նա ցույց տվեց գիրքը և, մատների հոդերով թխկթխկացնելով էջին, ավելացրեց.

— Դուք ինչպե՞ս կթարգմանեք այս բառերը՝ κατ'αυ'τας τας δεινας ανατοyας!-

Շշմելով այդ չորս «ας, ας, ας, ας»-ից, ինչպես չորս անսպասելի ապտակներից, խեղճ դոն Իլլումինատո Լագայպան քիչ էր մնում ուշագնաց լիներ: Նա մտածեց, թե ինքն արժանի չէր նման վերաբերմունքի:

Դոն Իպոլիտոն ժպտաց, հետո թևանցուկ անելով նրան, ավելացրեց.

— Գնա՛նք ինձ հետ, ես երկու խոսքով կբացատրեմ ձեզ:

Նրանք ելան վիլլայի առջևի լայն հրապարակը, հետո փոքր-ինչ թեքվեցին աջ. այնտեղ, կտրուկ շրջվելով, իշխանը հոգևորականին ցույց տվեց վիլլայից այն կողմ բացվող զառիվեր լեռնալանջը և նրա վերևում՝ միակ գագաթը՝ հարթ, ասես երկաթից ձուլված ժայռը:

— Ահա սա է, այնպես չէ՞, միջնաբերդի բլուրը,— ասաց նա:— Ահա սա է՝ վերևում, մեր նշանավոր Ռուպե-Աթենեան: Շատ լավ: Պոլիբիոսն ասում է. «Վերին մասը (ամրոցը, ընդհանրապես, այսպես կոչված՝ միջնաբերդը) վեր է խոյանում քաղաքի վրա (ուշադիր լսեք) երեսով դեպի ամառային արևածագը»: Հիմա ասացեք, որտեղի՞ց է բարձրանում արևև ամռանը: Գուցե ա՞յն բլրից, որտեղ գտնվում է Ջիրջենտին: Ո՛չ, Բարձրանում է այնտեղից՝

Ռուպեի ետևից: Հետևաբար, միայն այնտեղ՝ ցածում կարող էր գտնվել միջնաբերդը և բոլորովին էլ ոչ այնտեղ, որտեղ հիմա գտնվում է Ջիրջենտին, ինչպես ուզում են ապացուցել գերմանական դոկտորիկները: Ջիրջենտիի բլուրը գտնվում է հնամենի պարիսպների պարագծից դուրս: Ես այդ կապացուցեմ... կապացուցեմ: Թող նրանք այնտեղ տեղադրեն Կամիկոն... Կոկալի պալատը... Օմֆաչեն... ամենը, ինչ կամենան... Բայց միայն ոչ միջնաբերդը:

Եվ նա կարծես ձեռքով մի կողմ հրեց Ջիրջենտին, որը երևում էր մի քիչ վերևում՝ նրանից ցած ընկած Ռուպեից ձախ:

— Այնտեղ,— շարունակեց նա՝ ոգևորվելով և նորից ցույց տալով Ռուպե-Աթենեան,— այնտեղ միայն վերին պահակետն է եղել ճարը և ոչ թե միջնաբերդը, հովանավոր աստվածների սրբավայրը: Քամահրանքից ու զայրույթից դողալով, Հելիոսն իջավ աստվածային Աթենասի տաճարը, որ նվիրված էր նաև Յուպիտերին, և վառեց այն, որպեսզի թույլ չտա պղծեն: Ութամսյա պաշարումից հետո քաղցից ուժասպառ ակրագանտցիները, սարսափից ու մահից հալածված, թողեցին ծերերին, երեխաներին ու հիվանդների և փախան: Հելայի դարպասների մոտ՝ սիրակուզացի Դաֆնեայի հովանավորության ներքո: Ութ հարյուր կամպանցիներ նահանջեցին լեռնանցքից. գարշելի Դեզիպպոսը կարողացավ փրկվել. այդ պահից ամեն դիմադրություն անօգուտ էր: Չփախավ միայն Հելիոսը: Նա հույս ուներ, թե հավատն իրեն կփրկի, և գնաց դեպի Աթենասի տաճարը: Պատերն ավերված էին. հրաշալի շինությունները կործանվում էին. այստեղ՝ ցածում, վառվում էր քաղաքը, և նա, վերևից նայելով սարսափելի հրդեհին, որ ծածկում էր ծովը բոցերի ու ծխի թաղման վարագույրով, վճռեց այրվել կրակի մեջ, որ պատել էր աստվածուհու տաճարը:

Ցածում՝ վիթխարի սանդուղքի հսկայական աստիճանների նման իջնող ու ծաղկաթմբերով ծածկված երեք հարթակներից երկրորդում, մարմարե ձևավոր ճաղաշարքին հենված՝ կանգնած էին Պլաչիդո Շարալլան և Լիզի Պրեոլան: Նրանք օրորեցին գլուխները՝ նույնպես հիացած իշխանի խոսքի կրակոտությամբ, թեև հեռավորության պատճառով ոչ մի բառ չէին լսել:

Դոն Իպոլիտո Լաուրենտանոն, լարված հայացքը հառած ուղիղ իր դիմաց, հուզմունքով նայելով՝ հիանում էր հոյակապ համայնապատկերով: Այնտեղ, որտեղ նա արթնացրեց ահեղ հրդեհի և ավերումների տեսիլքները, այնտեղ, որտեղ անտիկ քաղաքի կենտրոնն էր, այժմ բարձրանում էր նռնենիների ու ձիթենիների պուրակը, որը հիմա էլ կրում էր Չիվիտա անունը: Ձիթենիների տերևները օդեղեն էին թվում և արևի ճառագայթներից դառնում էին ոսկե-վարդագույն:

Պուրակից այն կողմ, բլուրների երկար կատարներին երևում էին մինչև հիմա պահպանված նշանավոր տաճարները, որ, թվում էր, դիտմամբ են կառուցված իշխանական վիլլայից որոշ հեռավորության վրա, որպեսզի Է՛լ ավելի գեղեցիկ լինի նրա տեսքը: Լեռնաշղթայից այն կողմ, որտեղ մի ժամանակ բարձրանում էր հոյակապ ու հին քաղաքը, ամայի, ժայռոտ ու զառիվայր սարահարթը կախված էր Ակրագանտայի հարթավայրի վրա՝ խաղաղ, շողշողուն հարթավայրի, որ ձգվում էր հեռուն՝ մինչև ծովը:

— Տանել չեմ կարող այդ տևտոններին,— ասաց իշխանը՝ դոն Իլլումինատո Լագայպայի հետ վերադառնալով թանգարան,— այդ տևտոնները, եթե ոչինչ չեն կարող անել զենքի ուժով, ապա աշխարհը ողողում են գրքերով և անհեթեթություններ դուրս տալիս մեր մասին՝ մեր սեփական տանը, որտեղ առանց նրանց էլ արդեն խոսվում են և արվում ամեն տեսակի այնքան դատարկ բաներ:

Այդ պահին անիվների դղրդյուն լսվեց վիլլայի ետևի սալարկած ճանապարհից, և դոն Իպոլիտոն խոժոռեց հոնքերը: Քիչ անց ներս մտավ ու շփոթված ծառա անսպասելի իրադարձությունից անհանգստացած Լիբորիոն:

— Նե... ներեցե՛ք, ձերդ պայծառափայլություն,— մրմնջաց նա։— Ջիրջենտիից եկել է սինյորա...

— Ի՞նչ սինյորա,— հարցրեց իշխանը։

— Ձեր քույրը... դոննա Կատերինան...

Դոն Իպոլիտոն սկզբում շշմած քարացավ տեղում, կարծես անսպասելի հարվածեցին գլխին. հետո կնճռոտեց քիթն ու գունատվեց, բարձրացրեց հոնքերը, սեղմեց բռունցքները և ուժգին բաբախող սրտով հարցրեց.

— Որտե՞ղ է նա։ Այստե՞ղ։

— Վերևում, ձերդ պայծառափայլություն... հյուրասենյակում,— պատասխանեց Լիբորիոն և, տեսնելով, որ իշխանն ապշահար է, հարցրեց։— Ես ճիշտ չե՞մ արել։

Դոն Իպոլիտոն շրջվեց, մի րոպե նայեց նրան՝ կարծես չհասկանալով, հետո ասաց.

— Բանն այդ չէ...

Եվ գնաց՝ նույնիսկ չնայելով Լագայպային։ Ամբողջ էությամբ խռովված, նա փորձում էր ինքն իրեն բացատրել այդքան անսպասելի այցելության նպատակը՝ չցանկանալով և ի վիճակի չլինելով համաձայնել այն մտքի հետ, որ սկզբում եկավ նրա գլուխը. մի՞թե քույրը, որ, չնայած իր բոլոր դժբախտություններին, միշտ համառ հպարտությամբ նույնիսկ արհամարհանքով վճռաբար չի ընդունել ամեն մի օգնություն, հիմա եկել է պաշտպանություն խնդրելու իր որդի Ռոբերտոյի համար։ Բայց ի՞նչ կարող է ուզել նա եղբորից։ Դոն Իպոլիտոն բարձրացավ սանդուղքով։ Հուզմունքից ու տագնապից նա այնպես էր շնչասպառվել, որ ստիպված էր մի ակնթարթ կանգնել շեմքի մոտ։ Ներս մտնե՞լ։ Երևա՞լ նրան այսպիսի վիճակում։ Ո՛չ։ Նախ հարկավոր է իրեն տիրապետել։ Եվ, ոտքերի մատների վրա քայլելով, նա անցավ ննջարան։ Այստեղ բնազդաբար գնաց դեպի արկղիկը, որտեղ պահվում էին մեդալիոնը՝ Կատերինայի մանրագեղ դիմանկարով, երբ քույրը տասնվեց տարեկան էր, և երկու կարճ գրություններ, որ քույրը գրել էր նրան՝ առանց կոչական բառերի և առանց ստորագրության. մեկը՝ Տուրինից, հոր ինքնասպանությունից հետո, մյուսը, երբ ամուսնու մահից հետո վերադարձել էր Ջիրջենտի։ Առաջինը, որ ավելի դեղնած էր, հայտնում էր.

«Ունեցվածքը, որ Ջերլանդո Լաուրենտանոյից բռնագրավել էր Բուրբոնների կառավարությունը, Կառլ Ֆիլանջյերի դի Սատրիանոյի կողմից վերադարձվել է նրա որդի Իպոլիտոյին։ Հետևաբար, ինձ ոչինչ չի հասնում հայրական ժառանգությունից։ Ստեֆանո Աուրիտիի կինն ու որդին չեն ուտի հայրենիքի դավաճանի հացը»։

Երկրորդը ավելի հակիրճ էր.

«Շնորհակալ եմ։ Ստեֆանո Աուրիտիի աղքատ ազգականները հոգ են տանում նրա այրու համար։ Քեզանից ոչինչ չեմ վերցնի։ Շնորհակալություն»։

Նա ձեռքով մի կողմ հրեց այդ երկու գրությունները և հայացքը հառեց մեդալիոնին, որը տարել էր հայրական տան հյուրասենյակից՝ Ստեֆանո Աուրիտիի հետ քրոջ փախչելուց հետո։

Այդ ժամանակից, իսկ անցել էր արդեն քառասունհինգ տարի, նա ոչ մի անգամ չէր տեսել քրոջը։

Ինչպիսին կտեսնի հիմա՝ այդքան տարիներ անց, այդքան վշտալի իրադարձություններից հետո, այն նորահաս գեղեցկուհուն, որը հիմա նայում էր դիմանկարից՝ ամբողջովին վարդագույն, խիստ լանջաբաց զգեստով, հնաձև սանրվածքով, կրակոտ ու մտախոհ հայացքով:

Մի անգամ էլ հայացք գցելով երկու արհամարհական գրություններին, իշխանը ծածկեց արկղը և մռայլ տեսքով մտավ հյուրասենյակ:

Երբ դռների մեջ բարձրացրեց ծանր վարագույրը, հուզմունքից աղոտացած նրա հայացքի դիմաց երևաց սևեր հագած բարձրահասակ մի կին՝ նրա քույրը: Այդ խամրած, անճանաչելի դեմքը տեսնելով, նա կանգնեց հենց շեմքի մոտ՝ տանջալից զարմանքից ճնշված:

— Կատերինա,— մրմնջաց նա ու կանգնեց՝ հակասական զգացմունքներով համակված, ու թեև նրան թվում էր, թե իր առաջ օտար, անծանոթ կին է, նա, այնուամենայնիվ, մի տեսակ բնազդաբար պարզեց ձեռքը:

Դոննա Կատերինան չշարժվեց տեղից ու մնաց հյուրասենյակի կենտրոնում. նա, որ մի տեսակ դալուկ-թափանցիկ էր թվում իր սգազգեստի պատճառով, լարված դեմքով և փակ աչքերով կարծես հպարտ քարացել էր ջղաձիգ սպասման մեջ: Դոննա Կատերինան սպասեց՝ մինչև եղբայրը մոտեցավ և, իր սառը ձեռքով հազիվ դիպչելով նրա ձեռքին, նայեց նրան հոգնած, վշտից մշուշված աչքերով, որ գրեթե չէին երևում կիսափակ կոպերի տակ. մի կոպը շատ էր ցած իջել:

— Նստի՛ր,— ասաց եղբայրը՝ խոնարհելով աչքերը և զգալով ինչ որ երկչոտություն. նա ցույց տվեց բազմոցն ու ձախ կողմի պատի մոտի բազկաթոռները:

Նրանք նստեցին, և որոշ ժամանակ ոչ ոք չէր համարձակվում խոսել, բայց այդ լռությունը կարծես դողում էր լարված ու սուր հուզմունքից: Դոն Իպոլիտոն փակեց կոպերը: Մի քանի անգամ ճիգով խեղդելով հեկեկանքը, քույրը ի վերջո խռպոտ ձայնով ասաց.

— Ռոբերտոն այստեղ է...

Դոն Իպոլիտոն ցնցվեց. նա նորից բացեց աչքերը և ակամա դիտեց սենյակը, կարծես, տագնապալից հիշողություններից շփոթված դարան էր կասկածում:

— Ո՛չ թե այստեղ, ո՛չ թե քո կալվածքում, այն մեզ համար օտար է,— շարունակեց դոննա Կատերինան, թեթև քմծիծաղով, որ սառն էր ու դառն,— Ջիրջենտիում է, արդեն երկու օր:

Դոն Իպոլիտոն մռայլվեց, մի քանի անգամ գլխով արեց՝ ի նշան այն բանի, որ դա իրեն հայտնի է:

— Ես գիտեմ, թե նա ինչու է եկել,— ավելացրեց նա խուլ ձայնով, հետո բարձրացրեց գլուխը և տանջալից ճիգով նայեց քրոջը:— Ես ի՞նչ կարող եմ...

— Ոչինչ, հասկանալի է, որ ոչինչ,— փութկոտ ընդհատեց նրան դոննա Կատերինան:— Ես ուզում եմ, որ դու նրա դեմ պայքարես ամբողջ ուժով: Միայն այդ էր պակաս, որ դու նրան աջակցես, և նա անցնի ձեր ձայների օգնությամբ:

— Դու էլ շատ լավ գիտես...— փորձեց պատասխանել եղբայրը:

— Գիտե՛մ, գիտե՛մ,— կտրուկ ընդհատեց դոննա Կատերինան՝ եռանդուն թափահարելով ձեռքը:— Բայց դու նրա դեմ պայքարիր, Իպոլիտո, ո՛չ թե դանակը ձեռքիդ, ո՛չ թե բորենու նման գերեզմանները քանդելով, պղծելով սրբազան դամբարանները, որտեղից դուրս կգան մեռելները, և այն ժամանակ մահացու սարսափը կսպանի ամենքիդ:

— Հանդարտ, հանդարտ,— ասաց դոն Իպոլիտոն՝ պարզելով դողացող ձեռքերը:— Դա բողոքի շարժում չէր՝ ավելի շուտ նա ուզում էր որևէ կերպ հանգստացնել ողբերգական ստվերը՝ իր հարազատ քրոջը, որ համակված էր տանջալից հուզմունքով:— Ես քեզ չեմ հասկանում...

— Այս գարշանքն այրում է իմ ձեռքերը,— բացականչեց դոննա Կատերինան՝ բազմոցի առջևի սեղանին նետելով «Էմպեդոկլեի» ճմրթված համարը:

Դոն Իպոլիտոն վերցրեց թերթը, բացեց և սկսեց կարդալ:

— Այդպիսի գարշելի զենքով... մեռածի դեմ... — շշնջաց դոննա Կատերինան՝ հետևելով, թե եղբայրն ինչպես է կարդում:

Նա շնչահեղձ էր լինում՝ տեսնելով, թե եղբայրն ինչպես է կարդում, և ինչպես նրա դեմքին հետզհետե ավելի ու ավելի ուժեղ է արտահայտվում նողկանքը:

— Ռոբերտոն,— շարունակեց դոննա Կատերինան,— գնացել է այդ թերթի խմբագրատուն: Նրան ընդառաջ է ելել այդ հոդվածի հեղինակը, որը, ինչպես ինձ ասացին, քո այստեղի ստրուկներից մեկի որդին է... ոմն Պրեոլա: Ռոբերտոն բռնել է նրան ու զարկել դռանը... Նրան խլել են Ռոբերտոյի ձեռքից: Այդ ժամանակից այդ Պրեոլան դանակով զինված (նա այն ժամանակ էլ է դանակ հանել) սպառնում է Ռոբերտոյին սպանել. այսօր առավոտյան էլ տեսել են, որ նա դարան է մտել իմ տան մոտ: Բայց ես նրանից չեմ վախենում. ես վախենում եմ, որ Ռոբերտոն կվարկաբեկի իրեն, նորից կկեղտոտի ձեռքերը... Մի՞թե դուք այդպիսի միջոցով եք ուզում հաղթել նրան:

Դոն Իպոլիտոն, որ կարդում էր և միաժամանակ շունչը պահած լսում քրոջ պատմությունը, այդ հարցի ժամանակ վրդովմունքից ցնցվեց, կարծես քույրը հարվածեց դեմքին՝ նրան խառնելով հերձվածողի հետ, որը գրել էր այդ հոդվածը:

Նա այն է ուզում էր ձգվել գոռոզաբար, բայց տեղնուտեղը տիրապետեց իրեն ու հնչեցրեց զանգակը: Երբ շեմքին հայտնվեց Լիբորիոն, իշխանը հրամայեց.

— Պրեոլային:

Քիչ անց քծնողաբար կռանալով ներս մտավ, գրեթե ներս սողաց ծեր քարտուղարը, կարծես նրան բռնությամբ, մտրակի հարվածներով էին քշում սենյակ: Նրա հագին նապոլեոնյան լայն ու ծանր թիկնոց էր: Ցածրիկ, չափազանց լայն օձիքից դուրս էր ցցվել խոշոր ու լերկ մի գանգ՝ անմաղ, անմորուք գլուխը, որ նման էր մսավաճառի խանութում ցուցադրվող հորթի գլխի:

— Ձերդ պայծառափայլություն... ձերդ պայծառափայլություն...

— Անմիջապես մարդ ուղարկիր Ջիրջենտի՝ քո որդու ետևից,— հրամայեց իշխանը:— Թող անհապաղ ներկայանա: Ես կխոսեմ նրա հետ:

— Ձերդ պայծառափայլություն, թույլ տվեք ինձ,— վերջապես համարձակվեց ասել Պրեոլան. նա կռանում էր ու խոնարհվում ավելի ու ավելի ցած, ձեռքը սեղմելով կրծքին, իսկ երակների ցանցն Է՛լ ավելի ցայտուն էր գծագրվում նրա կարմիր գանգին,— թույլ տվեք դիմել պայծառափայլ սինյորային՝ ձեր քրոջը, ամենախոնարհ...

— Բավակա՛ն է: Բավակա՛ն է: Բավակա՛ն է,— ընդհատ-ընդհատ գոչեց իշխանը:— Ես գիտեմ, թե ինչ պիտի ասեմ քո որդուն: Ո՛չ, ավելի լավ է դու լսիր: Նա չափազանց նողկալի է ինձ համար, չեմ ուզում ոչ տեսնել նրան, ոչ էլ խոսել նրա հետ: Դու ինքդ նրան ասա, որ եթե մի անգամ էլ համարձակվի իր գարշելի մռութը ցույց տալ Ջիրջենտիի փողոցներում, ես քեզ փողոց կնետեմ, դուրս կշպրտեմ հենց նույն րոպեին: Դու հասկացա՞ր:

Պրեոլան թիկնոցի ներքին գրպանից հանեց թաշկինակը և, գլուխը սրբելով, մի քանի անգամ գլխով արեց. հետո թաշկինակը տարավ աչքերին և ամբողջ մարմնով սկսեց ցնցվել անզուսպ հեկեկանքից:

— Հանցագո՛րծ... հանցագո՛րծ,— տնքաց նա:— Նա խայտառակում է ինձ, ձերդ պայծառափայլություն: Ես նրան կուղարկեմ Թունիս... Իսկ մինչ այդ կբերեմ այստեղ: Ներեցե՛ք, ողորմած եղեք, ձերդ պայծառափայլություն:

Եվ դուրս եկավ՝ քծնողաբար ետ-ետ գնալով ու թաշկինակը բերանին սեղմած:

Դոննա Կատերինան վեր կացավ:

— Եվ չնայած դրան,— ասաց դոն Իպոլիտոն,— ես չեմ պատրաստվում խուսափելու պայքարից քո որդու դեմ՝ հանուն իմ սկզբունքների:

Դոննա Կատերինան բարձրացրեց հայացքը, նայեց Ֆրանցիսկ 2-րդ թագավորի մեծ, յուղաներկ դիմանկարին, հետո մյուսին «Ռումբի» թագավորի դիմանկարին, որ կախված էին հոյակապ հյուրասենյակի պատվավոր տեղում, նա թեքեց գլուխը և ասաց.

— Շատ լավ, ինձ այլևս ոչինչ պետք չէ,— ու շարժվեց դեպի ելքը:

— Կատերինա,— բացականչեց դոն Իպոլիտոն, երբ քույրը մոտեցավ ելքին:— Դու այդպես էլ գնո՞ւմ ես: Գուցե մենք այլևս երբեք չհանդիպենք... Դու եկար այստեղ...

— Ինչպես այն աշխարհից,— ասաց դոննա Կատերինան՝ գլուխն օրորելով:

— Ես չէի ճանաչի քեզ,— ավելացրեց եղբայրը,— որովհետև... մի քիչ սպասիր այստեղ, ես ցույց կտամ, թե քեզ ինչպես էի հիշում, Կատերինա:

Նա վազեց ննջարան, բերեց մանրագեղ դիմանկարով մեդալիոնը և ցույց տվեց քրոջը.

— Նայի՛ր... Դու հիշո՞ւմ ես:

Տեսնելով իր աղջկական դիմանկարը, դոննա Կատերինան կարծես հարված զգաց. սկզբում նա երեսը շրջեց, հետո եղբոր ձեռքից վերցրեց մեդալիոնը, մոտեցավ պատշգամբին և սկսեց դիտել իր նկարը: Նրա մարած աչքերը արդեն վաղուց չէին արտասվել, և հիմա արցունքները թափվում էին առատորեն: Կամացուկ լալիս էր նաև եղբայրը:

— Ուզո՞ւմ ես վերցնել,— հարցրեց նա:

Սևերիզ թաշկինակով սրբելով աչքերը, դոննա Կատերինան բացասաբար օրորեց գլուխը և շտապով եղբորը վերադարձրեց մեդալիոնը:

— Ես մեռած եմ,— ասաց նա:— Մնաս բարով:

Դոն Իպոլիտոն քրոջն ուղեկցեց մինչև բակը, օգնեց կառք նստել, նրա ձեռքը երկար սեղմեց իր շրթունքներին, հետո հայացքով հետևեց՝ մինչև կառքը, անցնելով կարճ ծառուղին, դուրս եկավ դարպասից ու թեքվեց դեպի ձախ: Այնտեղ բուրբոնյան համազգեստով պահնորդներից մեկը որոշեց ձգվել զինվորական ձևով, որ պատիվ տա: Դոն Իպոլիտոն տեսավ այդ և զայրույթից ցնցեց ուսերը:

— Խեղկատակություն,— մռնչաց նա՝ հայացքով մոխրացնելով կապիտան Շարալլային, որ կանգնած էր դռների մոտ:

Իշխանը վերադարձավ վիլլա, փակվեց իր սենյակում և այնտեղից իր ներողությունը հղեց դոն Իլլումինատոյին, որ այսօր չի կարող նրան ճաշի հրավիրել:

Մոնսինյոր Մոնտորոն եկավ ցերեկվա ժամը չորսին՝ իր անաղմուկ կառքով, որին լծված էին ծղոտե գլխարկներով մի զույգ սրընթաց ջորիներ:

Նրան ուղեկցում էր արաբագետ Վինչենտե դը Վինչենտիսը, որն այդ օրը Իտրիայի գրադարանից անցել էր հարևան եպիսկոպոսական պալատը և հիմա խոսում էր անլռելի՝ կարծես այն բոլոր երկար օրերի և ամիսների փոխարեն, երբ լռում էր ձկան պես՝ ասես լեզուն էջանշանի փոխարեն թողել էր իր սիրած արաբական ձեռագրերի թերթիկների արանքում:

Նա խոսում էր նույնիսկ կառքում, բառերը դուրս էին թռչում փնչոցի ու փսլինքի ցայտերի հետ, որից ջղաձգորեն ցնցվում էր նրա վտիտ, ոսկրոտ մարմինը: Նիհար, կարմրած դեմքից,

ակնոցի հաստ ապակիների տակից նայում էին կարճատես աչքերը. խիստ հայացքը մտամոլոր սևեռված էր մի կետի:

Եպիսկոպոսը իր փափուկ, կանացիորեն խնամված ձեռքերի շարժումով ու մեղրածոր ձայնով, որ համաչափ ելևէջներ ուներ ու լի էր հովանավորական հեղինակությամբ, շատ անգամներ նրան կոչեց հանգստության, հանգստության: Իսկ երբ նրանք հարգալից ու քծնողաբար ծգված պահնորդների շարքերի միջով անցան վիլլայի դարպասը, նա կամացուկ խորհուրդ տվեց զգույշ լինել, շատ զգույշ և նախքան կառքից իջնելը մի անգամ էլ նրան կոչեց զգուշության:

Լիբորիոն անմիջապես նրանց տարավ հյուրասենյակ, բայց իշխանին սպասելիս եպիսկոպոսն այնուամենայնիվ իրեն թույլ տվեց ելնել շքամուտքի սյուների վրա հենվող մարմարե պատշգամբը, որ հիանա շրջակայքի և ծովի վիթխարի տեսարանով:

Այնտեղ՝ անսահման ծովի պայծառ լազուրի վրա արծաթագույն խթանի նման ուրվագծվում էր հեռավոր ափը՝ արևելքում Պուենտա-Բյանկայից, որն ամբողջովին կտրտված էր մեծ ու փոքր ծովախորշերով, ընդհուպ մինչև Մոնտե-Ռազելլոն՝ արևմուտքում, որի արնակարմիր փարոսը երևում էր միայն գիշերը: Եվ միայն մի կարճ հատվածում, որ սահուն, լայն աղեղի գրեթե կենտրոնում էր, ափի գիծն ընդհատվում էր Հիպսասի գետաբերանով:

Քիչ անց հայտնվեց դոն Իպոլիտոն. նա դեռ լիովին ուշքի չէր եկել այն խոր ցնցումից, որ պատճառել էր քրոջ այցելությունը:

— Ես ինձ հետ բերել եմ մեր դը Վինչենտիսին,— անմիջապես հայտարարեց մոնսինյոր Մոնտորոն,— նա ուզում է ինչ-որ բան տեսնել ձեր թանգարանում, ես չգիտեմ՝ հատկապես ինչ, թանկագին իշխան: Դուք նրան ուղեկցող կտաք, իսկ մենք այստեղ՝ պատշգամբում, կվայելենք այս տեսարանի հաճույքը. ես պարզապես չեմ կարողանում կտրվել սրանից: Բայց նախ դը Վինչենտիսն ուզում է ինչ-որ բան խնդրել ձեզանից:

— Այո՛,— բացականչեց դը Վինչենտիսը, կարծես էլեկտրական հոսանքը հարվածեց նրան:— Ես ուզում էի մենակ գալ այս առավոտ: Մոնսինյորը չհամաձայնեց և ասաց, որ ավելի լավ կլինի գամ իր հետ: Գործը շատ, շա՛տ լուրջ է:

— Լավ, ես լսում եմ,— ասաց իշխանը՝ նրան հրավիրելով նստելու պատշգամբում դրված հյուսածո բազկաթոռներից մեկին:

Փնտրելով բազկաթոռը, դը Վինչենտիսը ծիծաղելիորեն կորացավ, հետո, արդեն նստելով, իր մանրիկ, սմքած ու ծուռտիկ մատներով պինդ բռնեց իշխանի ձեռքը և ասաց.

— Դոն Իպոլիտո, մենք սնանկացա՛ծ ենք, սնանկացա՛ծ ենք:

— Բավակա՛ն է... բավակա՛ն է...— փորձեց առարկել մոնսինյորը՝ պարզելով ձեռքը, որ եպիսկոպոսական մատանի ուներ մատին:

— Սնանկացած ենք, մոնսինյոր, դե, թողեք ասեմ,— առարկեց դը Վինչենտիսը, և նրա փոս ընկած, տենդագին վառվող այտերը դարձան դալուկ-հողագույն:— Եվ մեր սնանկացման պատճառը իմ եղբայր Նինին է: Այդ նա է գնացել... գնացել...

Եպիսկոպոսը նորից պարզեց ձեռքը: Դը Վինչենտիսը ժամանակին նկատեց նրա շարժումը և կարողացավ զսպել իրեն: Բայց իշխանն արդեն հասկացել էր:

— Սալվոյի մոտ,— ասաց նա հանգիստ:— Գիտեմ, որ դուք նրան զիջել եք...

— Նինին, Նինին,— սկսեց ճչալ դը Վինչենտիսը:— Պրիմոսոլեն... Նինին: Այդ նա է զիջել... Ես ոչինչ չգիտեմ, բացարձակապես ոչինչ. շրջում եմ, ինչպես խավարի մեջ, ինչպես կույրը... Իսկ նա Է՛լ ավելի կույր է, քան ես, նա՝ հիմարը, սիրահարվել է խելագարի պես... Ինչպե՞ս են ասում: Transeat ... Պրիմոսոլեի վրա էլ կարելի է հրաժեշտի աղոթք կարդալ: Այո՛, Ես արդեն խաչ եմ քաշել դրա վրա, թեև վճարված էր միայն հողի դիմաց և այն էլ ծիծաղելիորեն էժան...

— Դե ո՛չ, ինչո՞ւ,— դարձյալ նրան հակահարված տվեց մոնսինյորը:

— Լավ, մնում է միայն լաց լինել,— վրա բերեց դը Վինչենտիսը՝ նորից ընկնելով կատաղության մեջ:— Ավելի լավ՝ էլ ի՞նչ: Ութանասուն հազար լիրա, հետն էլ վիլլան... իմ մոր վիլլան... այնտեղ...

Եվ նա նորից ձեռքով ցույց տվեց դեպի արևելք՝ Սպերոնեի զառիվայր ափից այն կողմ գտնվող ամենաբարձր բլուրը, որ կոչում էին Խոսող աշտարակ. այն նման էր պառկած առյուծի, որին որպես բաշ էր ծառայում ձիթենիների խիտ պուրակը:

— Քառասուներկու հազարի չվճարված մուրհակներ էին, իսկ մնացածը ցրիվ եկավ ծխի նման, ցնդեց մի ինչ-որ երկու տարուց էլ պակաս ժամանակում: Ո՞ւր: Հիմա խոսք է գնում Միլոնեի հողերը Սալվոյին զիջելու մասին: Մենք ի՞նչ անենք: Գումարները, որ պարտք ենք Սալվոյին և մյուսներին... Ես գիտեմ... ես իմացել եմ, ասում են՝ դուք ամուսնանում եք նրա քրոջ... դոննա Ադելաիդայի հետ...

— Դա ի՞նչ կապ ունի,— զարմացած ու տխուր հարցրեց իշխանը՝ նայելով մոնսինյոր Մոնտորոյին:

— Շնորհավորում եմ, հավատացե՛ք, սրտանց շնորհավորում եմ...— անմիջապես ավելացրեց դը Վինչենտիսը՝ կարմրելով խեցգետնի նման:— Իսկ ա՛յ, մենք սնանկացած ենք...

Նա վեր կացավ, որ ոչ ոք չտեսնի արցունքները իր ոսկեշրջանակ ակնոցի ետևում:

Դոն Իպոլիտոն նորից նայեց եպիսկոպոսին՝ չհասկանալով, թե բանն ինչ է:

— Ես ձեզ կբացատրեմ,— ասաց եպիսկոպոսը խիստ եղանակով՝ դժգոհ պատանու անհնազանդությունից, և բարակ կոպերը, որ նման էին սոխի կճեպների, իջեցրեց գունաթափ, դուրս պրծած աչքերի վրա,— ես ձեզ կբացատրեմ: Գիտեմ, որ Ֆլամինիո Սալվոն արդեն իր քրոջն է նվիրել Պրիմոսոլեի հողերը և մտադիր է նրան նվիրել նաև Միլոնե կալվածքը, երբ այն պատկանի իրեն... Բայց ես շատ եմ վշտացած՝ լսելով, թե ինչպես մեր դը Վինչենտիսն արտահայտվեց այդ մասին. որովհետև… որովհետև անթույլատրելի է այդպես խոսել շատ հարգելի մարդկանց մասին, որոնք, գուցե մեզ համար էլ աննկատելի, ինչ-որ չափով նույնիսկ բարերարություն են արել մեզ:

Դը Վինչենտիսը, որ կանգնած էր թիկունքով նրա կողմը և աչքերն էր սրբում, վերջին խոսքերի հետ շրջվեց.

— Բարերարությո՞ւն են արել:

— Այո, որդիս: Դու չես կարող հասկանալ դա, որովհետև, դժբախտաբար, երբեք հոգ չես տարել քո գործերի մասին: Հիմա տեսնում ես, թե դրանք ինչպիսի քայքայված վիճակում են, ու պահանջ ես զգում դրա համար որևէ մեկին մեղադրելու, և իզուր: Հարկավոր է ջանալ որևէ կերպ շտկել դրությունը: Մի՞թե դու դրա համար չես եկել:

Դը Վինչենտիսը, որ հուզմունքից դեռ չէր կարողանում խոսել, մի քանի անգամ գլխով արեց հաստատաբար:

— Ավելի լավ կլինի,— ասաց մոնսինյորը,— եթե դու իշխանի թույլտվությամբ իջնես թանգարան: Իսկ քո խնդիրքը ես կշարադրեմ:

Դոն Իպոլիտոն վեր կացավ և դը Վինչենտիսին հրավիրեց հետևելու իրեն, հետո սանդուղքի վրա նրան հանձնարարեց Լիբորիոյին, որին տվեց թանգարանի բանալիները, և վերադարձավ եպիսկոպոսի մոտ. սա, տեսնելով իշխանին, հառաչեց և սեղմված ձեռքերը վշտալիորեն իջեցրեց ծնկներին:

— Երկու դժբախտներ. նա և իր եղբայրը: Ֆլամինիո Սալվոն, հավատացնում եմ ձեզ, նրանց հետ վարվել է որպես իսկական բարեկամ... Առանց ամեն տեսակի... չօգտագործենք «վաշխառություն» արտահայտությունը, այդ մասին, հասկանալի է, խոսք էլ չի կարող լինել.

առանց ամեն տեսակի տոկոսների նա սկզբում պարտք է տվել մի շատ խոշոր գումար. հետո եղբայրներն իրենք են առաջարկել հողամասը, որը նա՝ բանկիրը, ինքն էլ չի իմանում, թե ինչ անի: Ուրիշ պարտատեր այդ հողերը կվաճառեր հրապարակային աճուրդով, որ վերադարձնի իր փողերը: Իսկ նա բարեկամաբար է վարվել՝ առաջարկելով իր դրամարկղը բաց պահել երկու եղբայրների համար էլ, և նրանք ծախսել են, ծախսել՝ հայտնի չէ ինչպես, հայտնի չէ ինչի վրա... Որովհետև, պետք է խոստովանել, խեղճերը ոչ մի արատ չունեն, նրանք լավ պատանիներ են: Բայց բոլոր դեպքերում արդեն խրվել են հիմնավորապես:

— Նրանք կուզենային օգնությո՞ւն ստանալ ինձանից,— հարցրեց դոն Իպոլիտոն այնպիսի եղանակով, որից հնարավոր լիներ գլխի ընկնել, որ ինքը հակված է ցույց տալու այդ օգնությունը:

— Ո՛չ, ո՛չ,— տխուր պատասխանեց մոնսինյորը:— Նա ուզում է դիմել ձեզ խնդիրքով, որը, իմ կարծիքով, չի կարող հաջողություն ունենալ: Դը Վինչենտիսը մտածում է, որ Նինին՝ իր կրտսեր եղբայրը, սիրահարված է Ֆլամինիոյի աղջկան և...

— Ե՞վ,— հարցրեց իշխանը:

Բայց նա արդեն հասկացել էր, և երկխոսությունը ավարտվեց սիցիլիական ձևով՝ ձեռքերի արտահայտիչ շարժուններով: Դոն Իպոլիտոն ձեռքը դրեց կրծքին և հայացքով հարցրեց. «Սալվոյի հետ ե՞ս պիտի խոսեմ»: Մոնսինյորը մելամաղձոտ գլխով արեց: Իշխանն սկզբում բացասաբար օրորեց գլուխը, հետո թոթվեց ուսերը և ձեռքով մի անորոշ շարժում արեց, կարծես ուզում էր ասել. «Ես այդ բանը չեմ անի, իսկ թե անեի...»: Մոնսինյորը հառաչեց, և դրանով խոսակցությունն ավարտվեց:

Որոշ ժամանակ նրանք լռեցին:

Արդեն մի քանի տարի դոն Իպոլիտոն աղոտ կերպով զգում էր, որ այդ մոնսինյոր Մոնտորոն իրեն տհաճ է ոչ այնքան իր արտաքին տեսքով, որքան ճնշող է մի տեսակ ներքնապես, կարծես իր չափազանցավ խնամված մարմնի անշարժ ծանրությամբ նա չէր թողնում տեղից շարժվել ոչ մի բանի, ինչը ինքը չէր կարող շարժման մեջ դնել: Ճիշտ է, իշխանը չէր կարող ասել, թե հատկապես ինչ, սակայն նրա համար պարզ էր, որ մոնսինյորը իր այդ կազմվածքով, իր այդ փափուկ, վարդագույն, ծանրաշարժ անտարբերությամբ առանց ուշադրության էր թողնում շատ բան, ինչ նրա տեղում մի ուրիշը՝ ավելի կենդանի և պակաս կանացիակերպ, կարող էր շարժել տեղից, ցնցել և ուղղել հարկ եղած կողմը:

Իսկ մոնսինյորն իր կողմից նկատում էր, որ իր և իշխանի միջև շարունակ բարձրանում է ինչ-որ հեշտությամբ չբնորոշվող զգացմունք, որը հաճախ և՛ մեկ, և՛ մյուս կողմից մերթ սրվում է, մերթ տեղի տալիս՝ թողնելով նրանց մեջ ինչ-որ անորոշ շփոթություն, որից նրանցից յուրաքանչյուրի մեջ ծնվում էր մղկտացող մորմոք:

Գուցե այդ շփոթության պատճառը հանդիսանում էր այն հարցը, որը (մոնսինյորն այդ գիտեր) ինքը չպետք է շոշափի, բայց որը կազմում էր իշխանի կյանքի խիստ կարևոր մասը. դա հենց նրա հնագիտական հետազոտություններն էին, անտիկ աշխարհի նրա պաշտամունքը: Մոնսինյորը չէր համարձակվում այդ հարցին անդրադառնալ՝ վախենալով, որ դոն Իպոլիտոն դա առիթ կհամարի նորից խոսելու իր հետ այն թեմայի մասին, որն ինքը՝ ըստ էության նրբակիրթ և ամեն տեսակի անմիտ քմահաճույքներ չճանաչող մարդ, չէր ցանկանում շոշափել: Շատ անգամներ էր իշխանը փորձել մոնսինյորին ստիպել, որ նա իր եպիսկոպոսական առատ եկամուտների թեկուզ մի մասը տա՝ վերականգնելու հին տաճարը՝ նորմանական արվեստի նշանավոր հուշարձանը, որը 17-րդ դարում ապականել են սարսափելի սվաղով և գռեհիկ ոսկեջրով: Եպիսկապոսը հրաժարվում էր այն պատրվակով, որ եթե իրեն հաջողվի առանձնացնել որոշ միջոցներ, ինքն ավելի շուտ այն կդարձնի դրամական ֆոնդ, որի օգնությամբ կարող են այստեղ՝ տաճարի մոտի՝ Սանտ-Ալֆոնսո վանքը վերադառնալ հայր-լիգուրյանները, որ տարագրվել են հազար ութ հարյուր վաթսուն թվականին:

Դոն Իպոլիտոյին չէին հետաքրքրում բարելավումները, որ նրա հայրենի քաղաքում կատարում էր նոր վարչությունը՝ փոխարինելով նրա ժամանակի դիկուրիուսներին և ինտենդանտությանը: Թեև չէր դադարեցրել պայքարը և ուզում էր վճռականորեն մղել այն մինչև վերջ, այնուամենայնիվ հոգու խորքում նա չէր հավատում, որ կկարողանա վերադառնալ քաղաք, որտեղից ինքն էր իրեն աքսորել: Մտովի նա քաղաքը տեսնում էր այնպես, ինչպես եղել էր մինչև այդ չարաղետ տարին՝ դեռ «բուրջիներով» ու «ստացցիոնիներով», այսինքն՝ դեռ ծղոտի դեզերով և աղյուս թրծելու վառարաններով, որ գտնվում էին Պորտոդի-Պոնտեից այն կողմ՝ ճահճուտ պարապուտում. դեռ երեք մեծ խաչերով, որ բարձրանում էին բլրալանջին, որտեղից ամեն տարի ավագ ուրբաթ օրը քարոզ էր կարդացվում հավաքված ամբողջ ժողովրդին. դեռ այն փոքրիկ այգով, որ ժամանակին տնկել էր նրա հավատարիմ բարեկամներից մեկը՝ գնդապետ Ֆլորեսը, բուրբոնյան կայազորի հրամանատարը, հեղափոխությունից տասը տարի առաջ, որ իր կողմը տրամադրի քաղաքացիների սրտերը: Դոն Իպոլիտոն գիտեր, որ հիմա այդ փոքրիկ այգին ոչնչացրել են, որպեսզի ընդարձակեն հրապարակի այն մասը, որ ելնում է դեպի ծով. գիտեր նաև, որ գլխավոր հրապարակում բարձրանում է մի մեծ պալատ, որտեղ տեղավորված է ոստիկանությունը և գավառի մյուս հիմնարկները: Բայց նույնիսկ դա էլ, նրա տեսակետից, իրավունքների նողկալի վերազանցում էր, որովհետև այդ պալատի առաջին քարը դրված էր հազար ութ հարյուր հիսունութ թվականին ոմն շռայլ եպիսկոպոսի կողմից, որը ցանկանում էր այդտեղ մեծ ապաստան հիմնել աղքատների համար. ծերերն այդ շենքը կոչում էին Բարեգործության պալատ:

Դոն Իպոլիտոյի համար հաճելի կլիներ, որ տաճարը վերականգնեին մոնսինյոր Մոնտորոյի միջոցներով, քանի որ նոր ժամանակի գործիչներն այնքան էլ չէին ձգտում վերականգնելու և զարդարելու եկեղեցական շենքերը, իսկ իշխանի համար միայն դրանք էին խորին ափսոսանքի առարկա: Այստեղ՝ կամավոր աքսորում, նրան էին հասնում ավելի մոտիկ եկեղեցիների զանգերի ձայները: Նա ճանաչում էր բոլոր այդ ձայները և ասում էր. «Ահա զանգահարում է Բադիա Գրանդեն... Հիմա զանգահարում է Սան-Պետրոն... իսկ հիմա՝ Սան-Ֆրանչեսկոն»:

Այնպես էլ այդ օրը երկար լռությունը, որ տիրում էր այդտեղ՝ պատշգամբում, խախտեց Ave Maria-ի զանգահարությունը, որ լսվում էր Սան-Պետրո փոքրիկ եկեղեցուց: Երկինքը, որ քիչ առաջ փիրուզյա էր, դարձավ բաց մանուշակագույն, իսկ ցածում՝ հնձած դաշտերում, որ հետզհետե սուզվում էին աղջամուղջի մեջ, նշենիների միջև, որոնցից հավաքել էին պտուղները, շարքով կանգնած էին թխավուն նոճիները՝ ինչպես արթուն պահապանների մի ջոկատ Կոնկորդիա աստվածուհու տաճարի շուրջը, որը վեհորեն բարձրանում էր ոչ հեռու բլրի վրա: Մոնսինյոր Մոնտորոն հանեց իր փեղույրը, աչքերը փակելով՝ փոքր-ինչ խոնարհվեց. իշխանը խաչակնքեց երեսը, և երկուսն էլ մտովի աղոթք կարդացին:

— Դուք լսե՞լ եք սկանդալի մասին, որը, իհա՛րկե, կվրդովի մեր խաղաղ թեմը,— նշանակալից եղանակով տեղեկացրեց եպիսկոպոսը:

Կիսով չափ փակելով աչքերը, դոն Իպոլիտոն մի քանի անգամ գլխով արեց:

— Այստեղ էր եկել իմ քույրը:

— Ո՞վ,— հարցրեց եպիսկոպոսը արագ և զարմանքով:

Այդ ժամանակ դոն Իպոլիտոն նրան համառոտ պատմեց քրոջ այցելության և այն ուժեղ հոգեկան ցնցումի մասին, որ ապրեց ինքը այդ կապակցությամբ:

— Օ՛, ես հասկանում եմ, հասկանում եմ,— բացականչեց մոնսինյորը՝ թափահարելով իրար հյուսած ձեռքերը և նույնպես կիսափակելով աչքերը:

— Ի՛նչ սարսափելի փոխվել է նա...— խոր հառաչեց դոն Իպոլիտոն:

Որպեսզի փոխի խոսակցության նյութը, մոնսինյոր Մոնտորոն, խոր ներշնչելով, նույնպես բարձր հառաչ արձակեց:

— Իսկ այդ ժամանակ մեր ասպետն ուզում է՝ ինչ էլ որ լինի, ցատկել թամբին. և նոր սկանդալ կլինի, որից բոլոր դեպքերում կուզենայինք խուսափել:

— Կապոլինո՞ն,— մռայլվելով հարցրեց դոն Իպոլիտոն:— Ուզում է մենամարտե՞լ:

— Իհա՛րկե: Նրա վրա հարձակվել են...

— Նրա՞ վրա: Պրեոլայի վրա:

— Նրա վրա՝ նույնպես: Ուրեմն դուք ամեն ինչ չէ, որ գիտեք: Առավոտյան մեր Կապոլինոյի վրա է հարձակվել ոմն Վերոնիկա, որը եղել է Ագրոյի հետ, մի բան, որ ինձ առանձնապես վշտացնում էր:

— Նա ինձ այդ մասին չասաց,— փնթփնթաց դոն Իպոլիտոն գրեթե ինքն իրեն:

— Հավանաբար, այն պատճառով,— բացատրեց մոնսինյորը,— որ Աուրիտին չի իմացել առավոտվա կռվի մասին, համենայն դեպս այդպես են ասում ամենուր: Ի՞նչ կարող ես անել: Եկեղեցին ստիպված կլինի դրա վրա փակել թեկուզ մի աչքը, որովհետև վիրավորանքը, այո՛, վիրավորանքը շատ լուրջ էր. պատռված թերթը ճմրթել են նրա երեսին՝ մարդաշատ փողոցում... Դուք գիտեք, որ մեր Կապոլինոն տաքարյուն է, իսկական ասպետ... Անհնար կլինի համոզել նրան ենթարկվելու քրիստոնեական պատվիրաններին: Նա արդեն մարտահրավեր է ուղարկել:

— Գիտեմ, որ նա լավ է տիրապետում սրին,— հպարտ ու մռայլ ասաց դոն Իպոլիտոն:— Ի վերջո վատ չէր լինի դաս տալ նրանցից մեկին, որ դրանց ամբարտավանությունը կոտրվի: Ինչ վերաբերում է ինձ, մոնսինյոր, ես քրոջս ուղղակի հայտարարեցի՝ անողոք պայքար:

— Դե, իհա՛րկե: Հաղթանակը կտանենք մենք, անկասկած մենք,— ավարտեց եպիսկոպոսը:

Դարձյալ լռության տիրեց. հետո մոնսինյորը ցնցվեց ու հարցրեց.

— Լանդինո՞ն,— կարծես այդ հարցը պատահաբար եկավ նրա գլուխը. իրականում նա միայն դրա համար էր եկել:

Հենց եպիսկոպոսն էր կազմակերպել Ադելաիդա Սալվոյի և դոն Իպոլիտոյի ենթադրյալ հարսանիքը. նա հասկացնել տվեց իշխանին, որ միայն նրա հանդեպ ունեցած հարգանքից է Ֆլամինիո Սալվոն համաձայնել, որ քույրն ամուսնանա անօրինական ամուսնությամբ՝ համենայնդեպս զուտ իրավաբանական տեսակետից. բայց Սալվոն ուզում է (և դա արդարացի է), որ իշխանի առաջին ամուսնությունից ծնված որդին ճանաչի երկրորդ մորը և ներկա գտնվի կրոնական արարողությանը. սիցիլիական ազնվականության համար դա լիովին բավական կլինի:

Դոն Իպոլիտոն մռայլվեց:

Ինքն իր դեմ երկար պայքարելուց հետո նա գրել էր որդուն, որը միշտ մեծացել էր հորից հեռու՝ սկզբում Պալերմոյում՝ Մոնտալտոների տանը, հետո՝ Հռոմում, և դրա համար էլ նրանց միջև չկար ոչ մի մոտիկություն: Նա գիտեր, որ որդու հայացքներն ու զգացմունքները լիովին հակադիր են իր հայացքներին, թեև նրանց միջև ոչ մի վիճաբանություն տեղի չէր ունեցել: Հիմա դոն Իպոլիտոն շատ դժգոհ էր իր նամակից, դժգոհ էր նրա տոնից և արտահայտություններից, որոնցով որդուն հաղորդում էր իր որոշումը՝ ամուսնանալ երկրորդ անգամ, և ցանկություն էր հայտնում, որ որդին այդ իրադարձության ժամանակ գա Կոլիմբետրա: Չափազանց շատ էին արդարացումները՝ մենակությունը, տարիքը, մոտիկ մարդու հոգատարության և ուշադրության պահանջը... Նրան թվում էր, թե ինքը նվաստացրել է իրեն որդու աչքում: Ասենք, նա սրտնեղություն ու նվաստացում էր զգում ոչ միայն անհաջող նամակի պատճառով. դրանք ծնվում էին նրա սրտում ավելի անձնական և խոր պատճառից:

Սկզբում այնքան էլ չցանկանալով այդ, նա թույլ տվեց իրեն համոզել, որ անհրաժեշտ է իրականացնել այն որոշումը, որն առաջ նրան թվում էր անիրագործելի. երբ հաղթահարվել

էին առաջին արգելքները՝ ընդունվել էր նրա ծանր պայմանը, գտնվել էր հարսնացու և որոշվել հարսանիքի օրը, նա հանկարծ զգաց, որ կապված է պարտավորությամբ, որ վերցրել է իր վրա՝ առանց բավականաչափ կշռադատելու, և հիմա այլևս ոչ մի առիթով հնարավոր չէ նահանջել: Թեև Սալվոյի ընտանիքը ազնվական կոչում չուներ, այնուամենայնիվ, հին տոհմ էր. համապատասխան էր նաև հարսնացուի տարիքը. ըստ էության, նա ոչինչ չկարողացավ առարկել արտաքինի վերաբերյալ, երբ նրան ցույց տվեցին դոննա Ադելաիդայի լուսանկարը. և, բացի այդ, նա բավականություն էր զգում այն մտքից, որ հարգանք են ցուցաբերել իր քաղաքական և կրոնական սկզբունքների նկատմամբ... Այո՛, այո՛, բայց դոննա Թերեզա Մոնտալտոյի մեծ հարգանքի արժանի հիշատա՞կը: Եվ սեփական թուլության նվաստացնող գիտակցությո՞ւնը: Նա էլ ուժ չուներ հաղթահարելու մենակության թախիծը, որ որոշ ժամանակից ի վեր նրան իր ազդեցությանն էր ենթարկում երեկոները, երբ նա փակվում էր իր սենյակում և, նայելով իր ձեռքերին, անձնատուր էր լինում տխուր մտքերին այն մասին, որ... այո՛, այն մասին, որ մահը միշտ բոլորի կողքին է՝ երեխաների, պատանիների, ծերերի, պատրաստ է ամեն պահի բռնելու մեր կոկորդից. բայց երբ աստիճանաբար ավելի ու ավելի ես մոտենում այն սահմանին, որը կանխորոշված է մարդկային կյանքի համար, և երբ այսքան տարի, այսքան երկար կյանքի ընթացքում հաջողվել է խույս տալ այդ անտեսանելի ուղեկցի հարձակումից, մի կողմից՝ կարծես հաստատվում է պատրանքն այն հնարավորության, թե կարելի է հետագայում ևս խուսափել նրանից, մյուս կողմից՝ մարդուն համակում է անխուսափելիության հետզհետե ուժեղացող, սահմռկեցուցիչ, մռայլ զգացումը. այո՛, մահը կներկայանա հանկարծակի, քանի որ, միևնույն է, քիչ ժամանակ է մնացել և այն վազում է սրընթաց: Եվ դոն Իոլիտոն զգում էր՝ ինչպես է շունչը կտրվում անասելի վախից, ինչպես է սեղմվում կոկորդը: Նա սարսափով էր նայում իր ձեռքերին: Առայժմ միայն նրա ձեռքերն էին ծերունական. հոդերը հաստացել էին, մաշկը՝ կոպտացել: Այո՛, նրա ձեռքերն սկսել էին մեռնել: Հաճախ թմրում էին: Եվ նա այլևս չէր կարողանում գիշերները տեսնել փորի վրա ծալած իր ձեռքերը, երբ մեջքի վրա պառկում էր անկողնում: Բայց դա նրա բնական դիրքն էր. նա պիտի մեկնվեր այնպես, որ սկսեր քունը տանել: Իսկ հիմա ամեն ինչ այլ կերպ էր. նա իրեն տեսնում էր մեռած, սառույցի պես պաղ ձեռքերը փորի վրա ծալած և անմիջապես սկսում էր շարժվել, փոխում էր դիրքը ու երկար տառապում անքնությունից:

Դրա պատճառով նրա մեջ ցանկություն էր առաջանում ունենալ մի մոտիկ մարդ. և ահա այդ ցանկությունը կատարվեց, բայց հարուցում էր սրտնեղություն ու նվաստացման զգացում: Նրան թվում էր, թե իր այդ ցանկությունը իշխանություն է ձեռք բերել իր վրա, և այդ իշխանությունը ենթակա չէ իր կամքին: Ինչ-որ ուրիշն է կառավարում դրան և տանում է իրեն, քարշ է տալիս, իսկ ինքը չի կարողանում դիմադրել. այդպես սայլին լծած ձին է սկզբում այն քաշում լանջն ի վար, բայց հետո արդեն իր կամքից անկախ զգում է՝ ինչպես է սայլը հրում իրեն, ստիպում արագ վազել առաջ:

— Ո՛չ մի պատասխան,— ավելացրեց մոնսինյորը, որ խզի մռայլ լռությունը, որի մեջ պարփակվել էր իշխանը:— Լավ, լավ: Պարզապես ուզում էի իմանալ: Նա կպատասխանի: Իսկ առայժմ... ա՛յ, մենք Ֆլամինիոյի հետ խոսում էինք ծանոթացնելու մասին: Դա կարելի է անել Վալսանիայում, ճիշտ չէ՞: Դոննա Ադելաիդան կգնա իր զարմուհուն ու դժբախտ հարսին տեսության, իսկ դուք ուղղակի մեծ ճանապարհից, քաղաքի մոտով անցնելով, կգնաք ձեր եղբորն ու ձեր հյուրերին այցելության: Այդպես լա՞վ կլինի: Շաբաթվա ընթացքում: Ինքներդ որոշեք օրը:

— Թեկուզ հիմա,— ասաց իշխանը եռանդուն թափ տալով իրեն:— Թեկուզ վաղը:

— Չափազանց շուտ է...— ժպտալով նկատեց մոնսինյորը:— Հարկավոր է նախազգուշացնել... ժամանակ տալ... Վաղը չէ մյուս օ՞րը: Ո՛չ, նույնպես ոչ: Երեքշաբթի է: Գիտե՞ք, կանայք այդպիսի բաներին ուշադրություն են դարձնում: Թող լինի չորեքշաբթի:

Եվ նա ճիգով ու զգուշությամբ վեր կացավ (շատ էր ծանր այդ թմբլիկ, կանացիորեն լավ խնամված մարմինը) ու հառաչանքով ասաց.

— Bene eveniat : Խե՛ղճ տղա...— Նա նկատի ուներ դը Վինչենտիսին։— Կարողանայի նրան հանգստացնելու միջոց գտնել... Ես պարզապես երջանիկ կլինեի... Բայց ի՞նչ կարող ես անել։

Ցածում, սանդուղքի մոտ մոնսինյորը կանգնեցրեց իշխանին և, ցույց տալով թանգարանի դուռը, որտեղ դը Վինչենտիսն էր, ասաց.

— Մի՛ երևացեք։ Նրա հրաժեշտին պատասխանեք պատշգամբից։ Բարի գիշեր։

Իշխանը համբուրեց նրա ձեռքը և նորից բարձրացավ սանդուղքով։ Քիչ անց նա պատշգամբից բարի ճանապարհ մաղթեց եպիսկոպոսին ու ձեռքով ողջույն հղեց դը Վինչենտիսին, որը խոնարհվեց՝ անկասկած, չտեսնելով նրան։ Իշխանը մնաց ձևավոր ճաղաշարքի մոտ։ Նա նստեց և հետևում էր, թե դաշտերի վրա ինչպես է հետզհետե թանձրանում աղջամուղջը՝ մայրամուտի վարդագույն շերտից այն կողմ, որը դալկանում էր ու մշուշվում հեռվում, կապույտ ծովի վրա. ցածում՝ խորքում, պայծառ փարոսից աջ, Հիպասի գետաբերանում ծովի պաստառի վրա սևին էին տալիս Մոնտելուզայի ձիթենիները։ Երկնքում հետզհետե ավելի ու ավելի պայծառ էր շողում լուսնի մահիկը։

Դոն Իպոլիտոն նայեց խստաշունչ ու հանդիսավոր տաճարներին, որ ուրվագծվում էին խավարում, և տանջալից ափսոսանք զգաց այդ ուրիշ կյանքի և ուրիշ աշխարհի բեկորների համար։ Անհայտացած քաղաքի բոլոր փառավոր հուշարձաններից միայն դրանց էր բախտ վիճակվել տեսնել նոր ժամանակները. քաղաքի սարսափելի ավերակների մեջ միայն դրանք էին մնացել անցյալի կենդանի վկաներ. իսկ հիմա միայն դրանք էին մեռած՝ ծառերի մեջ, որ այնպես կենդանի էին՝ լռության մեջ թրթռացող տերևներով թռչունների թևերով։ Թվում էր՝ ամենամոտիկ Տամբուրելլո բլրից դեպի Հերա Լիցինիայի տաճարն է շարժվում ծեր, գզուզ ձիթենիների երկար, հոծ թափորը, ձիթենիներ, որ կարծես կախված էին Ակրագանտայի ձորի վրա. մեկը կարծես բոլորի առջևում էր, և ասես հմայված նրա անհարթ բունը խոնարհվել էր տաճարի առաջ՝ սրբազան սյուների անվիճարկելի վեհությամբ. իսկ գուցե ծառն աղոթում էր մարդկանցից լքված այդ լանջերի խաղաղության համար, այդ տաճարների՝ ուրիշ ժամանակների և բոլորովին ուրիշ կյանքի ուրվականների, խաղաղության համար։

Եվ հանկարծ վերահաս խավարում հեծկլտոցի պես հնչեց բուի հեռավոր կռինչը։

Դոն Իպոլիսն զգաց՝ ինչպես է կոկորդը սեղմվում խեղդող հեկեկանքից։ Նա նայեց աստղերին, որ արդեն վառվում էին երկնքում, և թվաց, թե նրանց վառ առկայծումներին դաշտերից պատասխանում է ծղրիդների հնչուն ճռճռոցը։ Հետո նա արևելքում՝ գետի զառիթափից այն կողմ, տեսավ չորս լապտերների օրորվող կրակները, որ բարձրանում էին Սպերոնեի զառիվեր լանջով։

Այդ Շարալլան և իր երեք ընկերներն էին մագլցում, որ ստանձնեն իրենց անիմաստ հերթապահությունը բլրի վրայի պահականոցում։

Գլուխ V

Հենց որ արշալույսի առաջին ճառագայթները թափանցեցին թզենու կոշտ տերևների միջով, Մաուրո Մորտարան, որ նստած էր խաղողի այգու խորքում՝ թիկունքով ծառաբնին հենված, բացեց աչքերը, ձեռքը տարավ թիկունքին ու փնթալով քորվեց, լայն հորանջեց և ամբողջ մարմնով ձգվեց. հետո թուլացրեց մկանները, փակեց աչքերը, կարծես ուզում էր նորից գտնել քնի տաք խավարը, բայց լսեց աքաղաղի կանչը հեռավոր կալատեղից և մյուսի պատասխանը՝ Է՛լ ավելի հեռվից. Լսեց թևերի շատ մոտիկ թրթռոց ու ցնցվեց։ Ծառի շուրջը պառկած երեք շները նայեցին նրան խոնավ, ուշադիր աչքերով՝ սիրալիր շարժելով պոչերը։ Բայց տերը բարկացած նայեց նրանց՝ դժգոհ այն բանից, որ նրանք իրեն քնած են տեսել. հետո նույնպես բարկացած նայեց իր փայտացած ոտքերին, որ բացել էր ու մեկնել խաղողի

այգու կավոտ հողին, ձեռքի երեսով սրբեց արցունքոտվող աչքերը. վերջապես ճյուղից կախված տոպրակից հանեց երեք կտոր հաց, նետեց շներին, կանգնած ձգվեց, թիկնոցը կախեց ծառից և հրացանն ուսին, դեռ կիսանինջ քայլեց խաղողի այգով:

Հիմա նրան չէր հաջողվում արթուն մնալ ամբողջ գիշերը. մի որոշ ժամի գաղտագողի, կարծես նրան կարող էին տեսնել, գնում էր թզենու տակ՝ ոչ երկար ժամանակով, ինչպես ինքն էր ասում իրեն, բայց օրեցօր նրա համար ավելի ու ավելի դժվար էր դառնում արթնանալը: Ոտքերն այլևս այն չէին, ինչ առաջ էին, և եռանդն էլ արդեն այն չէր:

Ա՛խ, նրա հրաշալի խաղողի այգին: Գուցե այս տարի նա դեռ կխմի իր գինին, իսկ եկող տարի՞: Նա թոթվեց ուսերը, կարծես ուզում էր ասել՝ դե, ի վերջո... և նորից հորանջեց՝ օրվա առաջին շողերի տակ, որ, թվում էր, թախիծով էին արթնացնում երկիրը ցերեկվա աշխատանքների համար: Նա նայեց դաշտերի լայնարձակ տարածություններին, որոնց վրա դեռ մինչև վերջ չէր հալվել գիշերային խավարի վերջին մշուշաքողը. հետո շրջվեց, որ նայի ծովին, որի թխավուն մշուշաքողով պատած փիրուզը փռված էր այնտեղ՝ ցածում ու երևում էր փշփշոտ ագավաների ու կանաչակապույտ, մսեղ կակտուսների միջև, որ հանգուցավոր ծուռտիկ հայտնվեցին նրա առաջ այդ դալկացող խավարում. նվազող լուսինը, որ ծագում էր ուշ գիշերին, հիմա երկնքի մեջտեղում էր՝ արշալույսով բռնված, և արդեն մարում էր նրա առաջին շողերի պայծառությունից: Ավանում այս ու այնտեղ ճերմակավուն մշուշի թեթև քողի տակ վառվեցին օջախները, որոնցում այրվում էին նշի կճեպները, և ծխի սյուները անշարժ օդում բարձրացան ուղիղ դեպի երկինք:

Այնուհետև Մաուրո Մորտարան վերջին երկու օրը ավելի քիչ էր մռայլվում: Ճիշտ է, նա դեռ չարությամբ էր նայում վիլլային, բայց հետո՝ հիշելով, որ Ֆլամինիո Սալվոն ամեն օր այդ ժամին կառքով գնում է Ջիրջենտի կամ Պորտո-Էմպեդոկլե և վերադառնում է միայն ուշ երեկոյան, թեթևացած շունչ էր քաշում, կարծես նրա համար հաճելի էր նայել հին շինությանը, երբ այնտեղ չէր Սալվոն: Ճիշտ է, այստեղ էին մնում Սալվոյի կինն ու աղջիկը, բայց մեկը դժբախտ խելագար է՝ հանգիստ ու անվնաս, իսկ մյուսը (դա պարզապես անըմբռնելի էր), մյուսը՝ թեկուզև «անհավատի» դուստր է, բայց վատ աղջիկ չի, չէ, նույնիսկ...

Եվ Մաուրոն մի հայացք գցեց շուրջը, որ տեսնի, թե դոննա Դիանելլան դեռ չի՞ եկել խաղողի այգին:

Վալսանիայում անցկացրած մի քանի օրվա ընթացքում Դիանելլան գրեթե լիովին ապաքինվել էր. առավոտները վաղ էր վեր կենում, իսկ երբ հայրը հեռանում էր իր կառքով, նա, ամբողջ խաղողի այգու միջով անցնելով, գնում էր Մաուրոյի մոտ և հարցուփորձ անում գյուղի մասին, ձիթենիների մասին և թե ինչպես պետք է խնամել դրանք. հարցնում էր թթենու մասին, որը մարտին լցվում էր նոր արյունով և սիրային խոնջանքի մեջ, որը նախորդում էր տերևների հայտնվելուն, դառնում էր խմորի պես փափուկ: Հետո Դիանելլան կանգնում էր սոճու մեծ հովանոցի տակ՝ այնտեղ, ցածում, որտեղ սարահարթը կախվում էր ծովի վրա, և հետևում էր արևի ծագումին՝ Կրոկկի բարձունքներում, հենց հորիզոնի եզրին: Բարձունքներն սկզբում դժգույն էին թվում, հետո՝ երկնագույն, հետո՝ օդեղեն, հետո՝ փխրուն: Ամեն առավոտ նախ ոսկեզօծվում էր այդ սոճին, որը վեհորեն ուրվագծվում էր ծովի լայնաբաց, պայծառ լազուրի վրա՝ երկնքի նուրբ և կարծես հալվող կապույտի տակ:

Մի քանի օրում Դիանելլան հրաշք կատարեց. արջը դարձավ ձեռնասուն: Աղջկա դեմքի ձվաձևությունը, կեցվածքի հաճելի, թեկուզև հպարտ նրբագեղությունը, հայացքի թախծալի քնքշությունը, ժպիտը, փաղաքուշ ձայնը կատարեցին անհավատալին. դրանք այնպես բնական ձգվեցին ծեր վայրենուն ընդառաջ, որ հաղթեցին նրա մռայլ խստությունը:

Պատահում էր, որ խոսակցության ընթացքում Դիանելլայի ձայնն ու հայացքը հանկարծ դառնում էին մի տեսակ անկյանք, կարծես երբեմն նրա հոգին ասած բառի հետքով թռչում էր ու ճախրում աստված գիտի որտեղ՝ հեռո՛ւ-հեռո՛ւ: Եթե չէր կարողանում անմիջապես սթափվել, նա շփոթվում էր, հարցնում՝ «Ինչի՞ մասին էինք խոսում» և ժպտում էր, որովհետև ինքը չէր կարող իրեն բացատրել, թե ինչ կատարվեց իր հետ: Այդպես էլ հաճախ

իրականության հետ նույնիսկ չնչին, բայց կոպիտ ընդհարման ժամանակ նա անսպասելի շփոթություն էր զգում, կամ՝ ավելի ճիշտ, նրան թվում էր, թե իր շուրջը թանձրանում է պաղ խավարը, և այդ ժամանակ թեթևակի կիտում էր հոնքերը: Ճիշտ է, նա անմիջապես փաղաքուշ ժպիտով ջնջում էր այդ ակամա խոժոռումը, և նրա աչքերը լայն բացված և ուրախ էին նայում աշխարհին:

«Ո՛վ ինձ չարիք կպատճառի,— թվում էր, ասում է նա ինքնիրեն:— Միթե ես չեմ գնում կյանքին ընդառաջ՝ դյուրահավատ և անխռով»:

Դյուրահավատությունը ճառագում էր նրա ամեն շարժումից, ամեն հայացքից և հաղթում էր բոլորին: Հարկավոր էր տեսնել, թե ինչպես հախուռն էին ողջունում նույնիսկ Մորտարայի երեք ծեր շները: Նրանք էլ (մերթ մեկը, մերթ մյուսը) շրջվում էին վիլլայի կողմը, կարծես սպասում էին աղջկան: Եվ Մորտարան, որպեսզի շատ հեռու չգնա, ավելի ուշադիր էր զննում խաղողի վազերը, դրանցից կախված ողկույզները՝ խնամքով պահպանված գանձերը: Նա արդեն բոլորը հերթով ցույց էր տվել Դիանելլային՝ մռայլ տեսք ընդունելով, բայց ներքուստ հրճվելով գովասանքներից, որ աղջիկն առատորեն տեղում էր նրա վրա՝ իր խոսքն ընդհատելով հիացական բացականչություններով:

— Օ՛, ինչքան շա՛տ են այստեղ:

— Ողկույզների մեջ կորած են, հա՞: Իսկ ա՛յ, այս վազը տեսե՛ք...

— Ծա՛ռ է... Իսկական ծառ է:

— Այստեղ էլ, այստեղ էլ...

— Օ՛, այստեղ ավելի շատ պտուղ կա, քան տերև: Եվ նա կդիմանա՞ այսքան բեռին:

— Եթե վատ եղանակից չտուժի...

— Ինչ մեղք կլինի: Իսկ ա՛յ սա՞,— հարցրեց Դիանելլան՝ տեսնելով գետնին ընկած ինչ-որ վազ:— Սա քամո՞ւց է: Ախ, հարկավոր է բարձրացնել ու կապել...

Նրանք առաջ շարժվեցին խաղողի այգով:

— Իսկ ա՛յ, սրա՞նք: Սա վայրի՞ խաղող է: Չէ՛, նոր պատվաստներ են, հասկացա: Ի՛նչ հմայիչ է: Այնուամենայնիվ, կյանքում լավ բան էլ կա:

Եվ թվում էր, թե նրա ձայնում զրնգում է ուրախությունը, որ ներարկում էին նրա մեջ մաքուր օդն ու արևը, այն նույն արևը, որ թրթռում էր արտույտի կոկորդում:

Այդ օրը Մաուրոն խոստացավ Դիանելլային ցույց տալ գեներալի կամերոնեն՝ «ազատության տաճարը»: Բայց շները հանկարծ սրեցին ականջները, հետո մեկը մյուսի ետևից, առանց հաչալու, խաղողի վազերի տակի նեղ արահետով վազեցին դեպի զառիթափի եզրը:

— Դոն Մա՛: Դոն Մա՛,— որոշ ժամանակ անց կանչեց շնչակտուր մի ձայն:

Մաուրոն ճանաչեց Լեոնարդո Կոստային, իր բարեկամին՝ Պորտո-Էմպեդոկլեից, և իսկույն ետ կանչեց շներին.

— Ի՛նձ մոտ, Սկամպիրրե: Ի՛նձ մոտ, Նեուլա: Ի՛նձ մոտ, Տուրկու:

Բայց շներն էլ ճանաչեցին Լեոնարդո Կոստային և, պոչերը շարժելով, կանգնեցին խաղողի այգու սահմանի մոտ, բլրի վրա:

Մաուրոն մոտեցավ:

— Իսկ տերը գնացե՞լ է,— իսկույն հարցրեց Լեոնարդո Կոստան՝ ծանր ու լարված շնչելով:

Դա հաղթանդամ տղամարդ էր, շիկակարմիր մորուքով և գանգուր, շիկակարմիր մազերով, արևից դարչնագույն դարձած դեմքով և ծծմբափոշուց այրված աչքերով: Ականջներին կրում

էր ոսկե օղակներ, գլխին՝ սպիտակ գլխարկ՝ փոշոտ և քրտինքի բծերով ծածկված: Նա Պորտո-Էմպեդոկլեից վազել-եկել էր ծովափով, երկաթգծի մոտով:

— Չգիտեմ,— մռայլ պատասխանեց Մաուրոն:

— Խնդրում եմ, ասացեք, որ սպասի: Ես պիտի նրան հայտնեմ կարևոր գործերի մասին:

Մաուրոն օրորեց գլուխը:

— Վազե՛ք, դեռ կհասցնեք... Ի՞նչ է պատահել:

— Փորձանք է, մեծ փորձանք ծծմբահանքերում:

— Անիծված լինեն ինքն էլ, իր հանքերն էլ,— ինքն իրեն փնթփնթաց Մաուրոն:

Ֆլամինիո Սալվոն իջնում էր վիլլայի սանդուղքով՝ պատրաստվելով նստելու արդեն մատուցված կառքը, երբ կողմնային արահետում, ձիթենիների արանքում հայտնվեց Լեոնարդո Կոստան:

— Կանգնե՛ք: Կանգնե՛ք:

— Այդ ո՞վ է: Ի՞նչ է պատահել:

— Համբուրում եմ ձերդ ողորմածության ձեռքը,— ասաց Կոստան: Նա հանեց գլխարկը և ավելի մոտեցավ՝ հազիվ շունչ առնելով:— Ես ուզում էի գիշերը գալ... բայց հետո...

— Հետո՝ ի՞նչ: Ի՞նչ է պատահել: Քեզ ի՞նչ է եղել,— կտրուկ ընդհատեց Սալվոն:

— Արագոնայում և Կոմիտինիում բոլոր հանքերում գործադուլ է,— հայտնեց Կոստան:

Ֆլամինիո Սալվոն սառը հայացքով նայեց նրան՝ խոժոռվելով և իջեցնելով երկար, ճերմակ բեղերի ծայրերը, որ ոսկե ակնոցի հետ նրան նմանեցնում էին դիվանագետի. հետո արհամարհանքով ասաց.

— Ես այդպես էլ գիտեի:

— Այո՛, սինյոր: Բայց երեկ ուշ երեկոյան Արագոնայից մարդիկ եկան Պորտո-Էմպեդոկլե և հայտնեցին, որ նրանք ավերմունք են սարքել ավանում:

— Հանքափորնե՞րը:

— Այո՛, սինյոր: Հորատողները, հանքահատները, հաշվառիչները, կշռավարները՝ բոլորը: Նրանք նույնիսկ կտրել են հեռախոսալարը: Ասում են, թե նույնիսկ հարձակվել են իմ որդու տան վրա, և նա դիմադրել է, ինչպես կարողացել է...

Այս խոսքերի հետ Ֆլամինիո Սալվոն շրջվեց և հայացքը հառեց մոտեցող Դիանելլայի աչքերին: Խոսակցության կեսին աղջկան ուղղված այդ տարօրինակ հայացքը շեղեց Կոստայի ուշադրությունը. նա նույնպես շրջվեց և սկսեց նայել «փոքրիկ սինյորիտային», ինչպես ինքն էր կոչում տիրոջ դստերը: Դիանելլայի դեմքը, որ սովորաբար դալուկ էր, հանկարծ շիկնեց, հետո նորից գունատվեց:

— Դե, հետո ի՞նչ,— զայրույթով բացականչեց Սալվոն:

— Ահա թե ինչ, սինյոր,— շփոթված շարունակեց Կոստան:— Վատն այն է, որ զինվորներ չկան, բոլոր շրջանները հանքափորների ձեռքին են: Միայն երկու կարաբինակիրներ կան, ֆելդֆեբելը և ոստիկանական կատարածուն… Նրանք ի՞նչ կարող են անել:

— Իսկ ես այստեղ ի՞նչ կարող եմ անել քո կարծիքով,— գոռաց Սալվոն կատաղի:— Քո որդի Աուրելիոն ի՞նչ է այնտեղ. ի՞նչ է իրենից ներկայացնում սինյոր ինժեներ դիրեկտորը, որ ավարտել է Փարիզի Ecole de mines -ը: Նա ի՞նչ է: Խամաճի՞կ: Նրան գործել ստիպելու համար հարկավոր է, որ ես այստեղից ձգե՞մ նրա թելերը:

— Ո՛չ, սինյոր...— ասաց Լեոնարդո Կոստան՝ մի քայլ ետ քաշվելով, կարծես Սալվոն հարվածեց նրա դեմքին:— Կարող եք հանգիստ լինել, ձերդ ողորմածություն, իմ որդի Աուրելիոն գիտի, թե ինչ պետք է անել: Նա իր ուսերին գլուխ ունի և արիություն... Թեև հարկ չկա, որ ես ասեմ դա... Բայց երկու հազար մարդու դեմ՝ հանքափորների ու սայլապանների դեմ, ասացեք, ձերդ ողորմածություն... Ի վերջո գլխավոր չարիքն այստեղ չէ, մեր շրջանում: Երեկ Աուրելիոն մարդ ուղարկեց նախազգուշացնելու, որ նրանք խճուղում խլել են ածուխով բեռնված ութ սայլ, որ գնում էին Մոնտե-Դելի ծծմբահանքերը:

— Ախ, այդպե՞ս,— չար քմծիծաղ տվեց Սալվոն:

— Ձերդ ողորմածությունը գիտի,— շարունակեց Կոստան,— որ հանքերում ածուխը պոմպերի համար նույնն է, ինչ հացը աղքատների համար և նույնիսկ ավելի կարևոր է: Ձերդ ողորմածությունը գնում է Ջիրջենտի: Անմիջապես գնացեք ոստիկանապետի մոտ, որ նա ինչքան կարելի է շատ զինվորներ ուղարկի Արագոնայի կայարանը, որ նրանք ածուխով բեռնված սայլերն ուղեկցեն մինչև հանքերը: Այնտեղ լրիվ բարձած յոթ վագոն կա՝ պաշարները վերականգնելու համար. սայլապաններն էլ են գործադուլ անում, բայց ածուխը կարելի է բարձել էշերին ու ջորիներին և ուղարկել պահակախմբով. իհա՛րկե, այնքան էլ շուտ տեղ չեն հասցնի, բայց գոնե վտանգ չի լինի, որ ջուրը կողողի Կաչայի մեծ հանքահորը. թող աստված փրկի դրանից:

— Թո՛ղ ողողի, թո՛ղ, թո՛ղ,— կատաղաբար գոռաց Սալվոն՝ թափահարելով ձեռքերը:— Թող ամեն ինչ գրողի ծոցը կորչի: Ինձ համար հիմա ամեն ինչ մեկ է: Ես կփակեմ հանքահորերը, իմացիր: Եվ բոլորին կվռնդեմ՝ քեզ, որդուդ, բոլորին՝ առաջինից մինչև վերջինը: Գնա՛,— հրամայեց նա կառապանին:

Կառքը շարժվեց, և Ֆլամինիո Սալվոն նույնիսկ գլուխը չշրջեց, որ հրաժեշտ տա աղջկան:

Ձայրույթի այդ անսովոր բռնկման ժամանակ դոն Կոսմոն դուրս նայեց վիլլայի պատուհանից, իսկ դոննա Սառա Ալայմոն ելավ սանդղահարթակ: Ե՛վ մեկը, և՛ մյուսը, իսկ ցածում՝ Կոստան ու Դիանելլան, քարացել էին անսպասելիությունից: Վերջապես Կոստան ցնցեց իրեն, գլուխը բարձրացրեց դեպի պատուհանը և վշտահար ձայնով ասաց.

— Համբուրում եմ ձեր ձեռքը, սինյոր դոն Կոսմո: Նա իրավացի է, չէ՞ որ ինքն է տերը: Բայց, երդվում եմ խաչելությամբ, սինյորիտա, դա հենց այնպես խռովություն չէ: Քաղցը մնում է քաղց, և երբ այն չի կարելի... հագեցնել...

Դոննա Սառան սանդղահարթակում կանգնած օրորեց շորագլխարկ դրած գլուխը՝ հայացքը բարձրացնելով դեպի երկինք:

— Կառավարությունը կուշտ է,— շարունակեց Կոստան,— կուշտ են և՛ քաղաքային վարչությունը, և՛ պետերը, և՛ օգնականները, և դիրեկտորը, և՛ ինժեները, և՛ վերակացուն... Իսկ ի՞նչ անեն նրանք, որ գետնի տակ են գտնվում ու բոլորից ցած և պետք է բոլորին տանեն իրենց ուսերին՝ քանի դեռ չեն ճզմել նրանց, ու նրանք չեն ընկել: Աստվա՛ծ իմ, ես թշվառ եմ, ես տգետ եմ, տրորեք ինձ ոտքի տակ՝ ինչքան ուզում եք: Բայց իմ որդուն՝ չէ՛ : Չհամարձակվե՛ք նրան դիպչել: Մենք ամեն ինչով պարտական ենք մեր պատվարժան տիրոջը, որը կարող է ինձ ապտակ հասցնել, կարող է ինձանից խլել ամեն ինչ, և ես դրա համար կհամբուրեմ նրա ձեռքը, բայց նա էլ, եթե դեռ այստեղ է և դեռ տնօրինում է ու հաճույք է վայելում իր հարստությունից, դրա համար պարտական է իմ որդուն, այո՛, իմ որդուն, դուք այդ գիտեք, սինյորիտա, և գուցե դուք էլ, սինյոր դոն Կոսմո... արդարացի լինենք:

— Այո՛, այո՛,— պատուհանի մոտ կանգնած հառաչեց Լաուրենտանոն:— Այդ դդումների պատմությունը...

— Ի՞նչ դդումների,— հետաքրքրությամբ հարցրեց դոննա Սառան:

— Լավ,— պատասխանեց Կոստան,— դուք մի օր խնդրեք սինյորիտային պատմել այդ մասին: Նա լավ է ճանաչում իմ որդուն, որովհետև միասին են մեծացել՝ էլի մի ուրիշ տղայի հետ, նրա եղբոր, որին աստված կամեցավ տանել իր մոտ՝ ի վիշտ մեզ բոլորիս: Խեղճ սինյորան այն ժամանակ կորցրեց խելքը... Ի՜նչ գեղեցկուհին էր, պայծառ արեգակ... Իսկ նա... նա դժբախտ մարդ է. ով երեխա ունի, կհասկանա նրա վիշտը...

Դիանելլան, որի սիրտը կտոր-կտոր էր լինում հոր դաժանությունից, այդ հիշողության ժամանակ չկարողացավ իշխել իրեն և, որպեսզի հուզմունքը չմատնի, գնաց կածանով, որով եկել էր Կոստան, և ծածկվեց ձիթենիների մեջ:

Դոննա Սառան, իսկ հետո էլ դոն Կոսմոն անմիջապես Կոստային հրավիրեցին բարձրանալ վերև, որպեսզի նրան հնարավորություն տան փոքր-ինչ ուշքի գալու այդպիսի վազքից հետո և քրտնած չկանգնի առավոտվա սառը քամու դիմաց: Դոննա Սառան ուզում էր էլ ավելի մեծ սիրալիրություն ցուցաբերել և մի գավաթիկ սուրճ առաջարկել, բայց ձևացրեց, թե այդ մասին չի էլ մտածում, որ ոչ մի բառ բաց չթողնի Կոստայի խոսքերից: Հիմա, երբ Սալվոյի աղջիկը գնացել էր և չէր կարող լսել, Կոստան սկսեց շտապ-շտապ դոն Կոսմոյին զանազան բաներ պատմել նրա հոր մասին:

Մենք իրար գիտենք, աստված է վկա, մենք իրար գիտենք, դոն Կո: Ո՞վ է եղել նա ի վերջո: Այո, ես բոբիկ եմ ման եկել, շալակով ծծումբ ու ածուխ եմ կրել ափից մինչև առագաստանավերը: Ես դա չեմ թաքցնում, ես դրանով հպարտանում եմ: Ինչպես լատիներեն են ասում՝ necessitas non abita legge : Այո՛, սինյոր, ես բեռնակիր եմ եղել և հպարտանում եմ դրանով, թշվառ օրամշակ եմ եղել մաքսատան բեռնումներին և հպարտանում եմ դրանով: Իսկ նա ո՞վ է եղել: Լավ ընտանիքից է, այդ ճիշտ է, բայց ինքը մի չնչին մակլեր է եղել, ոտքից գլուխ փոշու մեջ կորած՝ Սպինասանտայի խճուղով ոտքով գնում էր Ջիրջենտիից Պորտո-Էմպեդոկլե, որովհետև փող չուներ կառքի կամ նույնիսկ ավանակի համար վճարելու, երկաթուղի էլ դեռ չկար: Իսկ նա ինչպե՞ս է վաստակել առաջին գրոշները: Դա գիտե աստված և շատերը նրանցից, ովքեր արդեն մեռել են: Հետո նա երկաթուղու շինարարությունում կապալ վերցրեց փեսայի հետ, որը հիմա ապրում է Հռոմում, սինյոր ինժեներ, բանկիր, կոմանդոր դոն Ֆրանչեսկո Վելլայի հետ, որին նույնպես ճանաչում ենք...

— Ա՛,— ասաց դոննա Սառան,— նա ուրիշ քո՞ւյր էլ ունի:

— Իհա՛րկե,— պատասխանեց Կոստան՝ դադարեցնելով խորին խոնարհումները, որոնցով ուղեկցում էր Վելլայի ամեն մի տիտղոսը,— դոննա Ռոզան, ամենաավագը, կոմանդոր Ֆրանչեսկո Վելլայի տիկինը (նա մի անգամ էլ խոնարհվեց), իսկ կոմանդոր Վելլան հիմա կարևոր դեմք է երկաթգծի վարչությունում: Մի՞թե նա չի անցկացրել Ջիրջենտիից Պորտո-Էմպեդոկլե գիծը: Որսա՛ պահը, քանի դեռ բախտդ բերում է: Հարյուր հազարավոր լիրաներ, քույրիկս: Փողը թիակով են կուտակում, ավազի նման: Երկու կամուրջ, չորս թունել... Այստեղ նա երկարացնում է ոլորանը, այնտեղ հատում ելուստը: Հետո ուրիշ կապալներ գծերում... Նրա ամբողջ հարստությունը դուրս եկավ այստեղից, ճիշտ չէ՞, դոն Կո: Մենք հո գիտենք:

— Իսկ դդումնե՞րը, դդումնե՞րը,— նորից հարցրեց դոննա Սառան:

Եվ Կոստան ստիպված եղավ բոլոր մանրամասներով պատմել դդումների նշանավոր պատմությունը, իսկ դոննա Սառան նրան պարգևատրում էր զարմանքի, վախի, հիացմունքի ամենահնչուն բացականչություններով, ինչպիսիք կարող են գտնվել տեղական բառարանում, ժամանակ առ ժամանակ ձեռքերն իրար էր զարկում, որպեսզի գրավիդոն Կոսմոյի ուշադրությունը, որը, այդ պատմությունն իմանալով, նորից էր ընկել իր փիլիսոփայական լեթարգիայի մեջ: Վերջապես նա թեթևակի ցնցվեց, առանց աչքերը բացելու՝ ձեռքերն առաջ պարզեց և ասաց:

— Այնուամենայնիվ...Այո՛, այո՛,— իսկույն ոգևորված շարունակեց Կոստան՝ երկու ձեռքերը զարկելով կրծքին:— Աստված ամեն ինչ տեսնում է, և ես պետք է ասեմ միայն ճշմարտությունը: Բայց իմ որդին, սինյոր Կոսմո (և Կոստան բարձրացրեց ձեռքը՝ միացնելով բթամատն ու ցուցամատը, կարծես ինչ-որ բան էր ծանրութեթև անում), իհա՛րկե, բոլոր

երեխաներն էլ հարազատ են իրենց հորը, բայց սա: Կատարելություն է: Դրոշաձողի պես շիտակ: Որտեղ էլ որ սովորել է, ամեն տեղ առաջինն է եղել: Նոր էր հանձնել ավարտական վկայականի քննությունները, երբ իսկույն անցավ մրցույթով՝ արտասահմանյան կրթաթոշակ ստանալու համար... Չորս հարյուրից ավելի երիտասարդ ինժեներներ կային Իտալիայի բոլոր ծայրերից, և նա ամենքից առաջ անցավ: Չորս տարի ապրեց Փարիզում, Լոնդոնում, Բելգիայում, Ավստրիայում: Նոր էր հայրենիք վերադարձել, կառավարությունը նրան ծառայության ընդունեց որպես լեռնային ինժեներ և ուղարկեց Սարդինիա՝ Իգլեզիաս, որտեղ նա տարբեր ներկերով նախշեց մի սարի քարտեզը... Սարրուբաս... չէ՛, ինչպես էր... ըհը՛, Սարրուբաս, այո՛, ճիշտ է, (Նրանք այնտեղ՝ Սարդինիայում, թուրքերեն են խոսում), այնպիսի գործ է արել, քույրիկս, որ դրա առաջ կանգնում ես ապուշ կտրած: Նա այնտեղ երկար չմնաց, մի տարի, գուցե մի քիչ ավելի, որովհետև մի ֆրանսիական ընկերություն, մեկը նրանցից, որ... ոսկին պարկերով են կուտակում... տեսնելով այդ քարտեզը, ապուշ կտրեց: Ես դա ասում եմ ոչ թե այն պատճառով, որ նա իմ որդին է. ինչքան ինժեներներ կան այստեղ և ուրիշ տեղերում, նա բոլորին գրպանը կդնի: Այդ ֆրանսիական ընկերությունը իմ որդուն առաջարկեց այն ամենը, ինչ նա կցանկանար: Աուրելիոն տատանվում էր՝ ընդունե՞լ այդ առաջարկությունը, թե՞ չընդունել, և այստեղ արձակուրդ եկավ վեց թե յոթ ամիս առաջ, որ խորհրդակցի ինձ հետ և տիրոջ հետ՝ իր բարերարի, որին նա հարգում է, ինչպես երկրորդ հորը և ճիշտ է անում: Տերը նրան խորհուրդ տվեց չընդունել այդ առաջարկությունը, որովհետև նրան ուզում էր վերցնել իր մոտ, հասկանո՞ւմ եք: Մեզանում ասում են. «Ինձ քիչն էլ բավական է, շատը ինձ համար արդեն ավելորդ է»: Նա էլ գնաց տիրոջ մոտ՝ ի վնաս իրեն, ազնիվ խոսք: Եվ այս ամենից հետո հիմա պարզվում է, որ նա խամաճիկ է, լսեցի՞ք: Տե՛ր Հիսուս:

Լեոնարդո Կոստան բարձրացրեց ձեռքը, վեր կացավ, քթով փնչացրեց, օրորեց գլուխը և աթոռից վերցրեց սպիտակ գլխարկը: Նա պետք է անմիջապես գնար, բայց ամեն անգամ, երբ խոսում էր որդու՝ իր տան լուսատու ջահի և ուրախության մասին, էլ չէր կարողանում լռել:

— Համբուրում եմ ձեր ձեռքը, սինյոր դոն Կոսմո, թույլ տվեք հրաժեշտ տալ: Դոննա Սառա, ձեր խոնարհ ծառան:

— Ո՛չ, ո՛չ, սպասե՛ք,— բացականչեց դոննա Սառան՝ ձևացնելով, թե հենց հիմա, երբ զրույցն ավարտվեց, մտածեց սուրճի մասին,— մի կում սուրճ...

— Ո՛չ, ո՛չ, շնորհակալ եմ,— հրաժարվեց Կոստան,— ես այնպես եմ շտապում:

— Հինգ րոպե,— սկսեց աճապարել դոննա Սառան և թափահարեց ձեռքը, կարծես ուզում էր ասել, թե աշխարհը չի կործանվի, եթե Կոստան սպասի, և վերջապես գնաց դեպի դուռը: Իսկ Կոստան նորից նստեց և հառաչեց՝ դիմելով դոն Կոսմոյին.

— Այստեղ մի վատաբարո կին կա, սինյոր դոն Կոսմո, մի վատաբարո կին, որ փչացնում է իմ որդու և դոն Ֆլամինիոյի հարաբերությունները, ես դա գիտեմ:

Եվ դոննա Սառան էլ չկարողացավ անցնել շեմքը. շրջվեց, լայն բացեց աչքերը, կնճռոտեց քիթը և, վիզը հարցական ձգելով, հարցրեց.

— Ո՞վ է:

— Մի՛ ստիպեք ինձ բամբասել, սիրելի դոննա Սառա,— ասաց Կոստան:— Ես առանց այդ էլ քիչ չշաղակրատեցի:

Բայց դոննա Սառա Ալայմոն արդեն հասկացել էր, թե նա ինչ վատաբարո կնոջ նկատի ունի, և դուրս եկավ՝ ձեռքերն իրար զարկելով,

— Ինչ ասես, որ չի կատարվում աշխարհում:

Այդ առավոտ Դիանելլան չէր շտապում խաղողի այգում գտնել Մաուրոյին: Հոր դաժան, զայրալից հայացքը, որ նետել էր նրա վրա, երբ Կոստան խոսում էր Արագոնայում որդուն

սպառնացող վտանգի մասին, հանկարծ հիշեցրել էր հոր մի ուրիշ հայացքը. դա վաղուց էր, երբ փոքրիկ եղբայրը մեռավ, իսկ մայրը խելագարվեց:

Դիանելլան այն ժամանակ տասնմեկ տարեկան էր: Ե՛վ եղբոր մահը, և՛ մոր սարսափելի ճակատագիրը այնքան սուր չվիրավորեցին նրա հոգին, որքան այդ ատող հայացքը, որ հայրը կատաղության և հուսահատության մեջ նետեց նրա վրա՝ աղջնակի, որ գրեթե ոչինչ չէր հասկանում և ընդունակ չէր գիտակցելու, թե ինչ վիշտ է ներխուժել իր մանկական խաղերի մեջ:

— Ավելի լավ էր դու մեռնեիր,— պարզ ասում էր նրան այդ հայացքը:

Դա այդպես էր: Հենց այդպես: Եվ հիմա Դիանելլան շատ լավ էր հասկանում, որ հայրը ոչ մի րոպե չէր տատանվի և կտար աղջկա կյանքը տղայի կյանքի փոխարեն:

Հոր հայացքը սառցաբեկորի պես սառել ու կարծրացել էր նրա հոգում, և՛ ամբողջ հոգատարությունը, և՛ ուշադրությունը, և՛ փաղաքշանքները, և՛ նվերները, որ հետո առատորեն տալիս էր հայրը, չէին կարողանում հալեցնել այդ սառցաբեկորը: Դիանելլան հաճախ էր կշտամբում իրեն, որ հայրական սիրո ջերմությունը չէր կարողանում թափանցել իր սիրտը, որ այն ընդունակ չէ հալեցնելու այդ սառցաբեկորը:

Ինչի՞ համար է հայրը հիմա շարունակում աշխատել այդպիսի համառությամբ, կուտակում այդքան հարստություններ: Իհա՛րկե, ոչ աղջկա համար, այլ իր խառնվածքի անհաղթահարելի, տիրական պահանջի, որ իշխի բոլորի վրա, որ բոլորը վախենան իրենից ու հարգեն, իսկ գուցեև նրա համար, որ ինքնամոռացում գտնի աշխատանքի մեջ և գոնե ինչ-որ բանով վրեժ լուծի ճակատագրից, որն այդպիսի հարված հասցրեց իրեն: Բայց զայրույթի պահերին (ա՛յ, ինչպես հիմա), հոգնության կամ էլ անվստահության պահերին նա կողմնակի մարդուն հնարավորություն էր տալիս անսխալ գուշակել, որ իր բոլոր ձեռնարկումները, ջանքերը, իր ամբողջ կյանքը ըստ էության եղել են անիմաստ, քանի որ կորցրել է իր գործերը շարունակողին, իր անվան, հզորության ու հաջողության ժառանգորդին:

Ոչ այնքան վաղուց Դիանելլան վերջնականապես համոզվեց այդ բանում ու թեև նա նույնիսկ չէր կարող պատկերացնել սեփական կյանքն առանց իրեն շրջապատող շքեղության, նրա մեջ սկսել էր ծնունդ առնել թաքուն սրտնեղություն հոր հարստության դեմ, որի միակ ժառանգորդը մի օր (նա ուզում էր, որ այդ օրը գա որքան կարելի է ուշ) պիտի դառնա ինքը՝ իր կամքից ու ցանկությունից անկախ հանգամանքների բերումով: Քանի անգամ, տեսնելով հորը ջղային ու հոգնած, նա ուզում էր գոռալ. «Բավակա՛ն է, Վե՛րջ տուր, ինչո՞ւ այդքան կուտակել, եթե, միևնույն է, գալու է վերջը»: Եվ նա կգոռար, ուրիշ բան էլ կասեր հորը, բոլորովին այլ բան, եթե նրա հոգին կարողանար հաղորդակցվել հոր հոգուն, և նրանք առանց խոսքերի հասկանային իրար:

Այն ժամանակից, երբ Դիանելլայի խիստ սուր ներըմբռնումը օգնեց նրան հարցախույզ, սևեռուն հայացքով ներթափանցել ամեն ինչի մեջ, այն ժամանակից, երբ նա սովորեց իմաստավորել շրջապատի մարդկանց առանձին, պատահաբար լսած դիտողությունները, նա սկսեց հասկանալ, որ թեև հոր հարստությունը ձեռք է բերված գուցե ոչ բոլորովին անազնիվ ճանապարհով, կղզում շատ-շատերն են դարձել նրա զոհերը: Ասենք, ճակատագիրն անողորմ գտնվեց և նրա համար պատրաստեց դաժան հատուցում: Նա ամեն ինչ ուզում էր իր համար, ուզում էր ամեն ինչ հավաքել իր բռունցքի մեջ՝ մի ամբողջ գավառի և՛ ծծմբահանքերը, և՛ հողերը, և՛ արհեստանոցները, և՛ արդյունաբերությունը: Հիմա ինչո՞ւ Դիանելլայի աղջկական փխրուն ուսերին (դստեր ուսերին, գուցեև սիրելի, քանի որ միակն էր մնացել, բայց ոչ նախընտրելի) դնել լուծը այդ բոլոր հարստությունների, որոնք, միևնույն է, երջանկություն չեն բերի. չէ՞ որ այնքան մարդիկ, հավանաբար, թաքուն անիծում են նրանց: Եվ, այնուամենայնիվ, Դիանելլան մինչև վերջին ժամանակներս իրեն օրորում էր այն հույսով, որ հայրը իրեն կթողնի ընտրության ազատությունը, որ նա, ըստ էության, նույնիսկ կօգնի իրեն ընտրելու՝ բարերարություն անելով այն մարդուն, որ դեռ երեխա փրկել էր նրա կյանքը: Թուխ, կարծես բրոնզից ձուլված, սևագանգուր, լուրջ, խոհուն հայացքով՝ առաջին

անգամ այսպես հայտնվեց Դիանելլայի առաջ տասներեքամյա Աուրելիո Կոստան. իսկ հետո նա երկար ժամանակ խաղում էր Դիանելլայի ու նրա կրտսեր եղբոր հետ: Այն ժամանակ նրանք երեխաներ էին ու ոչ մի տարբերություն չէին տեսնում իրենց միջև: Սակայն Դիանելլայի եղբոր մահից հետո Աուրելիոն սկսեց աղջկա հետ վարվել հետզհետե ավելի ու ավելի երկչոտ ու բռնազբոսիկ: Նա չէր ուզում խաղալ առաջվա նման. շատ էր մեծացել, փոխվել էր ձայնը. և նա սկսեց սովորել, սովորել, իսկ աղջիկը, որն այն ժամանակ տասներկու տարեկան էր, բավարարվում էր նրանով, որ թաքուն հետևում էր տղային, երբ նա պարապում էր, ձևացնելով, թե ինքն էլ է սովորում, և միայն ժամանակ առ ժամանակ մոտենում էր ոտնաթաթերի վրա, որ քաշի նրա ծոծրակի մազափունջը: Երբ լրացավ Աուրելիոյի տասնութ տարին, նա գնաց և ընդունվեց Պալերքոյի համալսարանի ինժեներական ֆակուլտետը: Առանց նրան Դիանելլայի համար երկար ամիսներ տունը կարծես դատարկ լիներ. առաջին անգամ կյանքում աղջիկը ճանաչեց մենակությունը և այնպիսի զգացողություն ուներ, կարծես անվերջանալի ձմեռն անց էր կացրել՝ ճակատը պատուհանի ապակուն սեղմած. դրսում անձրևի կաթիլներն արցունքների նման գլորվում էին ապակու վրայով, իսկ ներսի կողմում դեռ մնում էր ցրտից սատկած մժեղը, որն ընկնում էր նրա մատի թեթևակի հպումից: Գուցե այդ ժամանակից, սառցակալած ապակիների պատճառով, նրա ճակատն էլ էր կարծես սառցակալել: Բայց ի՜նչ խնդություն համակեց նրան, երբ առաջին ուսումնական տարին ավարտվեց, և Աուրելիոն արձակուրդներին վերադարձավ: Դա իսկական տոն էր, և Դիանելլան այնպես ուրախացավ, այնպես թռչկոտեց, որ հայրը, հենց որ Աուրելիոն գնաց, աղջկան կանչեց իր մոտ և, մեղմաբար շոյելով մազերը, զգույշ, ակնարկներով հասկացրեց, որ նա պետք է իրեն զուսպ պահի, որ նրա առաջվա խաղընկերը պատանի է դարձել, և Աուրելիոյին այլևս չի կարելի դիմել «դու»-ով: Ինքն էլ չիմանալով ինչու, Դիանելլան իրեն զգում էր, ինչպես ածուխների վրա. աստված իմ, նրան ինչպես դիմել «դուք»-ով: Մի՞թե նա նույն Աուրելիոն չէ: Ո՛չ, նույնիսկ Դիանելլայի համար էլ նա առաջվա Աուրելիոն չէր, և դրանում տարեցտարի աղջիկն ավելի ու ավելի էր համոզվում՝ նրա ամեն գալու ժամանակ, հատկապես վերջին անգամ, երբ ավարտական վկայական ստանալով, նա հայտնեց իր ցանկությունը՝ մասնակցելու արտասահմանյան կրթաթոշակի մրցույթին: Նա, հենց նա դարձավ բոլորովին ուրիշ: Քանի որ Դիանելլան... այո՛, այն ժամանակ, երբ աղջկա շուրթերն արտասանեցին՝ «սինյոր Աուրելիո», աչքերը շարունակում էին նրա հետ խոսել «դու»-ով: Փարիզ մեկնելուց առաջ Աուրելիոն եկավ հրաժեշտ տալու իր բարերարին, հայտնելու իր ընդմիշտ երախտապարտությունը, իսկ աղջկան գրեթե ոչինչ չգտավ ասելու, գրեթե չհամարձակվեց նայել նրան, գուցե նույնիսկ չնկատեց ո՛չ նրա դալկությունը, ո՛չ էլ դողացող ձեռքը: Բայց Դիանելլան խռովք չէր զգում, ընդհակառակը, ինչքան շատ էր կասկածում Աուրելիոյի զգացմունքին, այնքան ավելի պարզ էր հասկանում իր զգացմունքը... Նա սնահավատորեն համոզված էր, որ Աուրելիոն ճակատագրով կանխորոշված է իր համար: Աուրելիոյի մեկնելուց հետո Դիանելլան շատ անգամներ էր լսել՝ ինչպես հայրը խոսում է այդ պատանու բացառիկ արժանիքների մասին, փայլուն ապագայի, որն սպասվում է նրան, և պարծենում էր այն բանով, ինչ արել էր նրա համար՝ դաստիարակելով նրան, ինչպես իր որդուն: Բնական է, որ այդպիսի խոսքերը Է՛լ ավելի էին բորբոքում աղջկա սրտի թաքուն կրակը, Է՛լ ավելի ջերմ էր վառվում հույսը, որ հայրը, կորցնելով միակ որդուն և կարծես գտնելով իր համար ուրիշը, որին պարտական էր իր կյանքը, կգերադասի, որ հենց նրան և ոչ թե որևէ օտարի բաժին հասնեն և՛ իր հարստությունը, և՛ դուստրը: Այդ հավատն առանձնապես ամրացավ նրա մեջ մի քանի ամիս առաջ, երբ հայրը Սարդինիայից վերադարձած Աուրելիոյին նշանակեց ծծմբահանքերի դիրեկտոր: Դիանելլան ոչ մի անգամ չէր տեսել նրան Փարիզ մեկնելու օրից: Աղջիկն ապրում էր անզբաղ շքեղության մեջ, բայց նրան ճնշում էր կյանքի անպետքությունը հնամյա Ջիրջենտի քաղաքում, ոչ թե բացարձակապես անբովանդակ էր, այլ թախծալիորեն ձգվող՝ երկար ու միշտ միօրինակ օրերի անհուսալի դատարկության մեջ նրան ճնշում էր հարաբերությունների անփոփոխ շրջապտույտը երեք թե չորս ծանոթ ընտանիքների հետ, որոնք մրցելով վիճարկում էին նրա ուշադրությունն ու վստահությունը, որովհետև այդ երկրամասում նա յուրատեսակ արքայադուստր էր: Դիանելլան ձանձրանում էր՝ լսելով միշտ նույն սրամտությունները միշտ նույն պատանիներից, որոնք նրբագեղ էին, ծուլության մատնված ու հիմարացած՝ գավառական կյանքի անձկության ու խղճուկության մեջ:

Դիանելլան ամբողջ մարմնով ցնցվեց, երբ տեսավ Աուրելիոյին, որն այնպես առնական էր, այնպես իշխում էր իրեն: Սակայն Աուրելիոյի հետ հանդիպման ուրախությունը մռայլվեց՝ հենց որ հայտնվեց Նիկոլետա Սպոտոն, որը հազիվ մի տարի առաջ էր դարձել Կասոլինոյի կինը: Հետո, երբ հայրը Աուրելիոյին տարավ իր առանձնասենյակը, սինյորա Կապոլինոն, թեթևացած շունչ քաշելով, սկսեց խանդավառ և աշխուժորեն պատմել նրան և հորաքույր Ադելիադային, որ այդ խեղճ դմբլոն համարձակվել է խնդրել իր ձեռքը այն բանից անմիջապես հետո, երբ Սարդինիայում գլխավոր ինժեների պաշտոն էր ստացել. երևի հիշել էր, որ այն ժամանակ, երբ դեռ ուսանող էր, իրենք աչք են գցել մեկմեկու: Պատկերացնո՞ւմ եք ի՜նչ սարսափ համակեց իրեն՝ Լելլե Սպոտոյին այդ առաջարկությունն ստանալիս, մանավանդ որ արդեն սկսվել էին բանակցությունները Կապոլինոյի հետ ամուսնության մասին: Դիանելլան զգում էր՝ ինչպես է կրծքի տակ սեղմվում սիրտը այդ անսպասելի լուրից. հասկանալի է, որ նրա դեմքը հանկարծ շիկնեց, և նա քիչ էր մնում մատներ իրեն այդ կնոջ առաջ, որը (դա լավ հայտնի էր նրան) գտնվում էր գաղտնի և անթույլատրելի կապի մեջ նրա հոր հետ: Դիանելլան ոչինչ չասաց Լելլեին, բայց երբ Աուրելիոն երկար զրույցից հետո վերադարձավ հյուրասենյակ, աղջիկը, կասկարմիր կտրելով, նրան դիմավորեց չափազանցված ուշադրությամբ և նրա հետ աշխույժ խոսակցություն սկսեց մանկական տարիների, համատեղ խաղերի, առաջվա բարեկամության մասին: Եվ մի անգամ չէ, որ ուրախությամբ նկատեց՝ ինչպես Լելլեն կրծում է շրթունքներն ու գունատվում: Դիանելլան հույս ուներ, որ Աուրելիոն գոնե այս անգամ հասկացավ իրեն: Իր հոգու խորքում աղջիկն իսկույն ներեց ամբողջ դավաճանությունը, որի մասին Աուրելիոն իմանալ չէր կարող: Չէ՞ որ նրան անհրաժեշտ էր թվում նույնիսկ հայացքը բարձրացնել Դիանելլայի վրա. օ՜, աստված, նրան դուր է գալիս այդ ամեն տեսակետից անարժան կինը: Եվ նույնիսկ այն բանում, որ Լելլեն մերժել էր Աուրելիոյին, Դիանելլան պատրաստ էր վիրավորանք տեսնելու՝ ուղղված հենց իրեն: Ասենք, Աուրելիոն որոշ ժամանակ ապրել է Փարիզում, և գուցե նրա ճաշակով են Նիկոլետա Սպոտոյի աշխուժությունն ու քմահաճ անպարկեշտությունը, որովհետև դրանք նրան հիշեցնում են կանանց, որոնց նա իմացել է և որոնցով հիացել է: Լինելով ցածր ծագումի մարդ, Աուրելիոն երևի մեծ հաջողություն է համարել ազգականը դառնալ այնպիսի ընտանիքի, ինչպիսին Սպոտոների ընտանիքն է՝ մի ժամանակ շատ հարուստ, հիմա, ճիշտ է, աղքատացած, բայց էլի ամենահարգվածներից մեկը գավառում: Եվ, իհա՛րկե, հիմա Լելլեն, օգտվելով Դիանելլայի հոր վրա ունեցած ազդեցությունից, վրեժ է լուծում Աուրելիոյից նրա հանդուգն առաջարկության համար: Նույնիսկ ինքը՝ Դիանելլան էր նկատել, որ հայրը վերջին ժամանակներս մի տեսակ դժգոհ է Աուրելիոյից, և երեկոներն այստեղ՝ վիլլայում, խոսելով դոն Կոսմո Լաուրենտանոյի հետ, նա համառորեն հարցեր էր տալիս, որոնք աղջկան ստիպում էին մտածմունքի մեջ ընկնել: Թաքուն Դիանելլան հավանություն չէր տալիս իշխան Իպոլիտոյի և իր հորաքրոջ ամուսնությանը և նույնիսկ ամոթ էր զգում, որովհետև կասկածում էր, թե հայրը ուրիշ, գաղտնի ծրագրեր ունի. նա մտածում էր, թե այդ ոչ այնքան պատվավոր ամուսնությամբ հայրն ուզում է թափանցել Լաուրենտանոյի տուն և հետզհետե յուրացնել նրանց հարստությունը: Երբեմն երեկոները՝ ընթրիքի ժամանակ, զրուցելով դոն Կոսմոյի հետ, Ֆլամինիո Սալվոն համառորեն խոսակցություն էր բացում իշխանի որդու՝ Լանդո Լաուրենտանոյի մասին, որն ապրում էր Հռոմում: Ինչո՞ւ:

Այդ մտքերի մեջ խորասուզված՝ Դիանելլան նստեց ձիթենու տակ, խոր ձորի եզերքին և հիմա նայում էր ուղիղ իր առջև, զառիթափ ափին, որտեղ արածում էր այծերի հոտը, որ իջել էր Պլատանիայի հողերից: Այստեղ գալով, հենց առաջին օրից նա իրեն կարծես վերածնված էր զգում: Այդ հին, լքված վիլլայի գյուղական պարզությունը. խոր թախիծը, որով այդ լքվածությունը պարուրում էր շուրջն ամեն ինչ. ծառուղիները, փայտի մամուռի ու սարդոստայնների տակ հազիվ երևացող ամայի արահետները, որտեղ փարթամորեն աճած կակտուսների դալար ցանկապատերի ետևում, նշենիների ու ձիթենիների ստվերում թարմ օդը հագեցած էր մամխիի դառն բուրմունքով, անանուխի և եղեսպակի թանձր ու սուր հոտով. և՛ այդ հսկայական զառիթափ ձորը, և՛ ծովի պայծառ, ուրախ մոտիկությունը, և՛ ծեր, գրեթե վայրի դարձած ծառերը՝ ցից-ցից կանգնած ջահել ընձյուղներով, որ ննջում էին անսահման մենության լռության մեջ,— այդ ամենը հաճելիորեն ներդաշնակում էին նրան

իշխող տրամադրությանը: Բայց հիմա... հոր զրույցները... նրա զայրույթը Աուրելիոյի դեմ... և սպառնալիքները: Իսկ ինքն այստեղ մենակ է և, իսկապես, ոչ ոք չունի, որ նրա առաջ բացի սիրտը... Մայրը կողքին է և կարծես ողջ ու առողջ է, բայց մեռածից վատ է, և չկա նրա հետ խորհրդակցելու ոչ մի հնարավորություն... Ձորի խորքում, եղեգների ցանցառ ցողունների արանքում փայլում էր գետակի շերտը, որը մի տեղ անջրպետված էր երկաթուղային կառույցներով: Դիանելլան նայեց այդ տեղին, և նրա աչքերի առաջ պատկերացավ՝ իբր ինքն էլ գետակի նման է, որի հոսանքը չարամիտ քմահաճույքով փակել է ինչ-որ մեկի անտեսանելի ձեռքը՝ ակունքի մոտ նետելով սուր-սուր ու ծանր քարեր. և մի տեղում ջուրը ելել է ափերից ու լճացել, իսկ մի այլ տեղում անցել ավազի ու գետաքարերի մեջ: Դիանելլան մայրական սիրո անհագ պահանջ էր զգում: Նա մոտենում էր մորը, բայց մայրը չէր ճանաչում աղջկան: Եվ աղջկա թախիծը արձագանք չէր ծնում մոր մթագնած գիտակցության մեջ, թեև նա գտնվում էր հենց այդտեղ և այնքան անհրաժեշտ էր:

— Վիտտորիա Վիվոնա դ'Ալեսսանդրիո դելլե Ռոկան,— ասում էր մայրն իր մասին այնպիսի ձայնով, որ, թվում էր, գալիս է ինչ-որ հեռու տեղից:— Գեղեցիկ աղջիկ էր: Գեղեցիկ աղջիկ էր: Եվ ի՜նչ հյուսքեր ուներ՝ երկա՜ր-երկա՜ր, երեք կին սանրում էին նրա հյուսքերը... Նա երգում էր ու երգեհոն նվագում, նվագում էր Սանտա Մարիա դել Ուդիենցա եկեղեցում, և փոքրիկ հրեշտակները ծնկաչոք լսում էին նրան՝ ձեռքները ծալած ա՛յ, այսպես... Նա պիտի ամուսնանար Ջիրջենտիում՝ մի հարուստի հետ, բայց նրա գլուխը ցավեց, և նա մեռավ...

Այստեղ Դիանելլան էլ չէր կարողանում զսպել իրեն և կամացուկ լալիս էր՝ ինչ-որ դառն հաճույք գտնելով իր մենակության մեջ: Բայց շուրջը լռությունն այնքան խորն էր, և այնպես լարված ու մոռացկոտ էր հողի ու շրջապատի ամեն ինչի նինջը, որ հետզհետե նա զգում էր, ինչպես են դրանք իշխում իրեն և դյութում: Եվ այդ ժամանակ նրան թվում էր, թե այդ ծառերը պարուրված են անվախճան, խաղաղաբեր թախիծով, խորասուզված են հավերժական քնի մեջ, որն իզուր է փորձում ցրել քամին: Բնության հետ այդ խորհրդավոր միաձուլման մեջ նա առանձնապես պարզորոշ էր տարբերում տերևների շրշյունը, միջատների բզզոցը. նա դադարել էր իրեն զգալ որպես առանձին անհատ, ապրում էր գրեթե անգիտակցաբար՝ հողի հետ միասին, ինչպես եթե նրա հոգին լուծված լիներ ու միախառնված այն ամենին, ինչ այստեղ ստեղծել էր բնությունը: Ախ, մանկան նման թարմ է խոտը, որ աճում է այստեղ՝ նրա կողքին: Եվ ի՜նչ վարդագույն է թվում նրա ձեռքը տերևների քնքուշ կանաչի վրա: Ահա ձեռքի վրայով վազեց մի ուշացած մայիսյան բզեզ, բայց չէ որ արդեն աշուն էր: Ի՜նչ գեղեցիկն է: Փոքրիկ է ու թանկագին քարից վառ է շողշողում: Ուրեմն՝ հողը, որի վրա այնքան այլանդակ ու տխուր բան կա, կարող է ծնել նաև այդպիսի հմայիչ ու նուրբ արարածնե՞ր:

Եվ կարծես ի պատասխան նրա հարցին, տերևների վրայով, նրա ձեռքի վրայով անցավ ուրախության թեթև ու թարմ շունչը: Դիանելլան շունչ քաշեց և ձեռքը դրեց խոտին, որ բզեզիկը սողալով իջնի ձեռքից ու նորից գտնի իր ճանապարհը տերևների մեջ: Հետո նրան թմրության վիճակից դուրս բերեցին Մաուրոյի երեք շները. դրանք հրճվանքով սկսեցին ցատկոտել աղջկա շուրջը և գրեթե գետին տապալեցին նրան՝ հրմշտելով իրար, սաստիկ տենչով պահանջելով նրա ձեռքերի փաղաքուշ հպումը: Շներն աղջկան ոչ մի կերպ չէին թողնում վեր կենալ: Վերջապես մոտեցավ Մաուրո Մորտարան:

— Դուք ձեզ վա՞տ եք զգում,— մռայլ հարցրեց նա՝ չնայելով աղջկան:

— Ո՛չ... ոչինչ...— պատասխանեց Դիանելլան՝ ձեռքերով պաշտպանվելով շների թաթերից ու լեզուներից և տխուր ժպտալով:— Մի քիչ հոգնել եմ...

— Ինձ մոտ,— բարձր գոռաց Մաուրոն երեք շներին՝ հեռացնելով նրանց Դիանելլայի մոտից:

Շներն իսկույն վերջ տվեցին գզվռտոցին՝ կարծես քարանալով այդ կանչից: Դիանելլան վեր կացավ, կռացավ շների վրա և սկսեց շոյել նրանց ու սփոփել.

— Իմ խղճուկներ...

— Եթե դուք ուզում եք գնալ...— սկսեց Մաուրոն:

— Այո՛, այո՛: Գեներալի սենյակը տեսնելու: Ինձ այնպես է հետաքրքրում...

Երբ խոսում էր Մաուրոյի հետ, Դիանելլան շփոթվում էր՝ չիմանալով «դու»-ով դիմել նրան, թե՞ «դուք»-ով:

— Ձեր հայրը գնա՞ց:

— Այո՛, այո՛, գնաց,— շտապով պատասխանեց Դիանելլան և իսկույն էլ զղջաց իր շտապողականության համար, որը կարծես վկայում էր, թե ինչպիսի թեթևություն են զգում բոլորը, երբ հայրը տանը չէ:— Արագոնայում ըմբոստացել են հանքափորները: Հարկավոր է զինվորներ ու կարաբինակիրներ ուղարկել այնտեղ:

— Գնդակներ և միայն գնդակներ,— համաձայնեց Մաուրոն՝ վճռականորեն գլխով անելով:— Հավատացնում եմ ձեզ, որ պատրաստ եմ ոստիկան դառնալու, թեև արդեն ծեր եմ:

— Գուցե...— փորձեց առարկել Դիանելլան:

Բայց Մորտարան ընդհատեց նրան իր սովորական բացականչությամբ.

— Սուրբ տիրամայր: Այդպես էլ պետք է դրանց:

Մաուրո Մորտարան առարկություններ չէր հանդուրժում: Դաշտերում իր երկար ու միայնակ թափառումների ընթացքում նա մտովի իր ձևով էր կառուցում աշխարհը և քայլում էր այդ աշխարհով՝ վստահ, ինչպես տեր աստված՝ շոյելով իր երկար, ճերմակ մորուքը և աչքերով ժպտալով իրեն լիովին բավարարող այն բացատրություններին, որ գտնում էր նա բոլոր իրերի համար: Այն ամենը, ինչ կատարվում էր նրա շուրջը, պետք է ենթարկվեր այդ՝ իր կառուցած աշխարհի կանոններին: Այն, ինչ չէր տեղավորվում այդ համակարգի մեջ, նա դեն էր նետում առանց տատանվելու կամ էլ ձևացնում էր, թե չի նկատում: Վայ այն մարդուն, ում մտքով կանցներ հակաճառել նրան:

— Այդպես էլ, սուրբ տիրամայր, պետք է դրանց: Նրանք ինչի՞ հավակնություն ունեն: Կուզենայի իմանալ՝ նրանք ինչի հավակնություն ունեն: Մենք բոլորս պիտի ենթարկվենք՝ առաջինից մինչև վերջինը, բոլորս, և ամեն մեկը պիտի լինի իր տեղում ու պահպանի միասնությունը: Այդ տաժանապարտներին ինչո՞ւ է պետք եկել՝ խախտել մեր նվաճած միասնությունը և խլել մեզանից՝ ծերերիցս, մեր ուրախությունը՝ տեսնելու Իտալիան այնպիսին, ինչպիսին դարձել է հիմա մեր ջանքերի շնորհիվ: Նրանք ի՞նչ գիտեն այն մասին, թե առաջ ինչպիսին է եղել Իտալիան: Սեղանը բացել են նրանց համար, հացաբրդոշը պատրաստել, և հիմա նրանք թքում են դրա մեջ, հասկանո՞ւմ եք: Այնինչ ահա այնտեղ Թունիսն է:

Նա շրջվեց դեպի ծովը և, պարզելով զույգ ձեռքերը, մատով մռայլ ցույց տվեց հորիզոնի ինչ-որ անտեսանելի կետ: Դիանելլան էլ շրջվեց ու նայեց այնտեղ՝ չհասկանալով, թե ինչ կապ ունի Թունիսը: Նա Մաուրոյին չէր խանգարում խոսել և երբեք չէր ընդհատում, երբեմն միայն հավանություն էր տալիս հայրենասիրական մենախոսություններին, որ նա արտասանում էր աղջկա առաջ:

— Այնտեղ է,— հանդիսավորությամբ կրկնեց Մաուրոն:— Եվ այնտեղ ֆրանսիացիներն են, որոնք դավաճանաբար խլեցին Թունիսը մեզանից: Իսկ վաղը կարող են հայտնվել մեզ մոտ, մեր տանը, հասկանո՞ւմ եք: Երդվում եմ ձեզ, որ ես երբեք չեմ քնում գիշերները և կատաղությունից արմունկներս եմ կրծոտում: Եվ այդ մասին ինչպես պետքն է մտածելու փոխարեն այս սրիկաները գործադուլներ են անում ու կռվշտում են իրար հետ: Եվ գիտե՞ք, այդ ամենը տերտերների ձեռքի գործն է: Հայտնի խարդախներ են: Նրանք գաղտնաբար բորբոքում են կրակը, որ նորից մասնատեն Իտալիան: Սանֆեդիստներ են: Սանֆեդիստներ: Ես պետք է շարունակ շուրջս նայեմ, որովհետև նրանք նզովել են ինձ և հետևում են իմ ամեն քայլին: Բայց ինձ հետ դա չի անցնի: Հապա նայեցե՛ք,— և նա Դիանելլային ցույց տվեց իր երկու խոշոր նեապոլիտանական ատրճանակները, որ կախված էին գոտուց:

Այցելությունը գեներալի նշանավոր սենյակը, որն ստացել էր կամերոնե անունը, Դիանելլային ցույց տրված հատուկ ողորմածություն էր: Մաուրո Մորտարան, որի մոտ պահվում էր այդ սենյակի բանալին, ոչ ոքի այնտեղ չէր թողնում: Փակի տակ էր ոչ միայն դուռը, այլև երկու փոքրիկ պատշգամբների ծածկոցափեղկերը. պատուհաններն էլ միշտ փակված էին, կարծես օդն ու լույսը, ներս թափանցելով, կարող էին ցրել հիշողությունները, որ հավաքված էին ու պահպանվում էին այդպիսի ջերմեռանդ ակնածանքով:

Իհա՛րկե, ծեր իշխանի տարագրություն գնալուց հետո դուռն ու պատուհանները լայն բացվել էին աստված գիտի քանի անգամ, բայց այն ժամանակից, երբ Մաուրոն վերադարձավ Վալսանիա, նա բոլոր դեպքերում ծածկոցափեղկերը փակ էր պահում և իրեն օրորում էր այն պատրանքով, թե դրանք միշտ փակ են մնացել, և կամերոնեի պատերը պահպանել են գեներալի շունչը և այն ժամանակների օդը:

Այդ պատրանքը պահպանվում էր նաև նրանով, որ կահույքը մնացել էր անձեռնմխելի, բացառությամբ պղնձե մահճակալի, որի վրա ո՛չ ներքնակ կար, ո՛չ տակդիր, ո՛չ լայն առագաստ՝ ամպհովանիով: Սենյակում տիրող կիսախավարից հեռավոր հուշերը դառնում էին մի տեսակ պայծառ ու պարզորոշ:

Մտնելով սենյակ, Մաուրոն որոշ ժամանակ ետուառաջ էր քայլում այնտեղ՝ կանգնելով որևէ հնախարխուլ բազկաթոռի կամ դրվագազարդված սեղանի առաջ, որի զարդերը ճաքճքել էին ու դուրս էին գալիս բներից. հետո նստում էր բազմոցին, որը պաստառապատված էր կանաչ, այժմ արդեն դեղնելու չափ գունաթափված կտորով և ամեն կողմից ուներ ետ ծալովի երկու գլանաբարձ: Այստեղ Մաուրոն՝ աչքերը կիսախուփ, կարճ, փոքրիկ, բայց ուժեղ ձեռքով շոյելով երկար, սպիտակ մորուքը, խորասուզվում էր մտորումների, մեծ մասամբ՝ պարզապես հիշողությունների մեջ, ինքնամոռաց տրվելով դրանց, ինչպես հավատացյալն է եկեղեցում տրվում աղոթքին:

Նրան չէին խանգարում նույնիսկ առնետները, որ սոսկալի իրարանցում էին բարձրացնում վերին տեռասում, որի հատակը հարկ եղավ ծածկել երկաթաթերթերով, որ ավերումից փրկեն կամերոնեի առաստաղը: Դրանից քիչ օգուտ եղավ, և դա երկար չօգնեց. երկաթաթերթերը հեռացան իրարից և սկսեցին ծռմռվել՝ մեծ ուրախություն պատճառելով առնետներին, որոնք վազվզում էին ու թաքնվում դրանց տակ: Կամերոնեի առաստաղն արդեն ճկվել էր, ձմռանը կաթում էր մի քանի տեղից, իսկ պատերին նույնիսկ ամռանը մնում էին չորացող խոնավության բորբոսով ծածկված երկու լայն շերտեր: Դոն Կոսմոն չէր հոգում այդ մասին: Նա գրեթե չէր մտնում կամերոնե, իսկ Մաուրոն չէր ցանկանում, որ սենյակը վերանորոգեին. նրան քիչ էր մնացել ապրելու, և նա ուզում էր, որ ամեն ինչ պահպանվի այնպես, ինչպես եղել է: Նա գիտեր, որ երբ ինքը մեռնի, ոչ ոք իր վրա չի վերցնի «ազատության տաճարի» հոգսը, և այն ժամանակ թող փլվի առաստաղը կամ էլ թող վերանորոգեն: Իսկ առայժմ ամեն տարի, հենց որ գալիս էր աշունը, նա բարձրանում էր պատշգամբ, ուղղում և խոշոր քարերով ամրացնում էր երկաթաթերթերը, իսկ կամերոնեի հատակին շիթերի տակ դնում էր կոնքեր ու խոր ճաշամաններ: Կաթիլներն ընկնում էին հնչուն, մեկը մյուսի ետևից, և այդ համաչափ կաթ-կաթը, թվում էր, օգնում է նրան կենտրոնանալու:

Հազիվ սենյակ մտնելով, Դիանելլան ցնցվեց, ինչպես անսպասելի հարվածից՝ տեսնելով գազանի խրտվիլակը, որ դրված էր դիմացի պատի մոտ, անկյունին մոտիկ՝ ցած կախված պոչով և կատվի նման մի կողմ թեքած գլխով, կիսախավարում գազանը կենդանի էր թվում:

— Օ՛,— ճչաց աղջիկը՝ ձեռքերով ծածկելով դեմքը և ժպտալով նյարդային ժպիտով:— Ներեցեք, դա անսպասելիությունից էր... Սա ի՞նչ գազան է:

— Ընձառյուծ է:

— Ի՛նչ գեղեցիկն է:

Եվ Դիանելլան պարզեց ձեռքը, որ շոյի խայտաբղետ մորթին, բայց իսկույն ետ քաշեց՝ ամբողջովին փոշոտ և նկատեց, որ պակասում է գազանի ապակե աչքերից մեկը՝ ձախը:

— Մի ուրիշը՝ ճիշտ այնպիսին, ինչպիսին սա է, ես նվիրել եմ Ջիրջենտիի ինստիտուտի թանգարանին: Դուք այն չե՞ք տեսել: Թանգարանում կա մի ցուցափեղկ, որ իմն է: Ընձառյուծի կողքին բորենի է՝ գեղեցիկ, խոշոր, իսկ նրանց վերևում՝ լայնաթև արծիվ: Ցուցափեղկին գրված է. «Որսացվել, մշակվել և նվիրվել են Մաուրո Մորտարայի կողմից»: Այսպես, սինյորա: Բայց նախ եկեք այստեղ: Ես ուզում եմ ձեզ ցույց տալ ուրիշ մի բան:

Նա Դիանելլային տարավ հին, խարխլված բազմոցի մոտ:

Բազմոցի վերևում պատին կախված էին չորս մեդալներ՝ երկուսն արծաթե, երկուսը բրոնզե, որ կպցրած էին հնամաշ ու գունաթափ, կարմիր թավիշով պատած տախտակին, իսկ տախտակից վերև շրջանակի մեջ դրված էր մի նամակ՝ գրված մարգարտաշար ձեռագրով, խունացած, կապույտ թղթի վրա:

— Ախ, մեդալնե՛րը,— բացականչեց Դիանելլան:

— Ո՛չ,— դողացող ձայնով ասաց Մաուրոն՝ փակելով աչքերը:— Նամակը: Կարդացե՛ք նամակը:

Դիանելլան մոտեցավ բազմոցին և նախ կարդաց ստորագրությունը՝ «Ջերլանդո Լաուրենտանո»:

Մաուրոն, որ դեռ չէր բացում աչքերը, վեհակերպ տեսքով գլխով արեց հաստատաբար:

Եվ Դիանելլան կարդաց.

«Բարեկամներ. Ֆրանսիայից լուր է ստացվել Լուի-Նապոլեոնի պետական հեղաշրջման մասին, որը անկասկած կհանգեցնի մեր սուրբ գործի երկար ու տանջալից հետաձգման և անորոշ ժամանակով կհետաձգի մեր վերադարձը Սիցիլիա:

Ես արդեն ծեր եմ և չեմ ուզում ու չեմ կարող տանել կյանքի ծանրությունը աքսորում:

Կարծում եմ, որ ի վիճակի չեմ լինի օգնություն ցույց տալու հայրենիքին, երբ իրադարձությունները կհասունանան, և հայրենիքը դրա կարիքը կունենա: Դրա համար էլ վերանում է ազդակը՝ քարշ տալու այստեղ ինձ համար տանջալից և երեխաներիս համար բեռ հանդիսացող գոյություն:

Դուք՝ ավելի ջահելներդ, ունեք այդ ազդակը, ապրեցեք հանուն դրա և երբեմն ջերմ զգացմունքով հիշեցեք ձեր՝

Ջերլանդո Լաուրենտանոյին»:

Դիանելլան շրջվեց ու նայեց Մորտարային. ամբողջովին իր մեջ ամփոփված, նա հիմա՝ աչքերը լայն բացած, դեմքը ծռմռված, մի ձեռքով փակել էր բերանը՝ աշխատելով խճճված մորուքով խլացնել դուրս թռչող հեկեկանքը:

— Ես շատ տարիներ չեմ կարդացել նամակը,— փնթփնթաց նա, երբ կարողացավ խոսել:

Նա օրորեց գլուխը, հետո շարունակեց.

— Ա՛յ այսպես նա ինձ հիմարացրեց: Գրեց նամակը, հետո նոր կարած շորեր հագավ, կարծես պատրաստվում էր պարահանդեսի: Ես խոհանոցում էի, և նա կանչեց ինձ:

— «Ահա նամակ, կտանես Լա-Վալլետա՝ Մարիանո Ջոենիին...»: Մյուս բոլոր սիցիլիական տարագիրները, որ հավաքվում էին այստեղ՝ այս սենյակում, նախապատրաստելով իրենց

դավադրությունը քառասունութի նախօրեին, այն ժամանակ ապրում էին Լա-Վալլետայում: Նրանք հիմա էլ կարծես կանգնած են իմ առաջ՝ դոն Ջովանի Ռիչին, Գրամիտոն՝ բանաստեղծ, դոն Մարիանո Ջոենին և նրա եղբայր դոն Ֆրանչեսկոն, դոն Ֆրանչեսկո դը Լուկան, դոն Ջերլանդո Բյանկինին, դոն Վինչենցո Բարրեզին. նրանք բոլորն էլ գալիս էին այստեղ, իսկ ես կանգնում էի ցածում, հսկում էի: Դե լավ: Ես տարա նամակը... Ինչպե՞ս կարող էի գլխի ընկնել: Իսկ երբ վերադարձա Բուրմուլա, նա արդեն մեռած էր:

— Նա սպանե՞լ էր իրեն,— երկչոտ հարցրեց Դիանելլան:

— Թունավորել էր,— պատասխանեց Մաուրոն:— Նույնիսկ չէր հասցրել անկողնու վրա քաշել երկրորդ ոտքը: Նա այնպես գեղեցիկ էր: Դուք ճանաչո՞ւմ եք դոն Իպոլիտոյին: Հայրն ավելի գեղեցիկ էր: Բարձրահասակ, կրակոտ աչքերով, իսկական սուրբ Գևորգ: Թեև արդեն ծեր էր, բայց կանայք սիրահարվում էին նրան:

Մաուրոն փակեց աչքերը և կամացուկ, հիշողությամբ կրկնեց նամակի եզրափակիչ տողերը.

— «Դուք՝ ավելի ջահելներդ, ունեք այդ ազդակը, ապրեցեք հանուն նրա և երբեմն ջերմ զգացմունքով հիշեցեք ձեր՝ Ջերլանդո Լաուրենտանոյին»: Տեսնո՞ւմ եք: Ես ապրեցի, ինչպես նա էր կամենում, և ահա այստեղ՝ նամակի տակ, որը ես ետ վերցրեցի դոն Մարիանո Ջոենիից, որոշեցի կախել մեդալներս՝ որպես պատասխան գեներալին: Ձուր չէ, որ դրանք բաժին են ընկել ինձ: Նստեցեք այստեղ, թե չէ կհոգնեք...

Դիանելլան նստեց հին բազմոցին: Այդ պահին դոննա Սառան, ձայներ լսելով կամերոնեից ու տեսնելով, որ սովորականին հակառակ դուռը կիսաբաց է, ներս խցկեց շորագլխարկ հագած գլուխը:

— Ձեզ այստեղ ի՞նչ է պետք,— առաջ նետվեց Մաուրո Մորտարան այնպես, ինչպես, հավանաբար, կնետվեր ընձառյուծը, եթե ողջ լիներ:— Դուք այստեղ անելիք չունեք:

— Դե, կորե՛ք,— փնթփնթաց դոննա Սառան՝ իսկույն ետ քաշելով գլուխը,— դուք ո՞ւմ եք պետք:

Մաուրոն վազեց և շրխկոցով փակեց դուռը:

— Ա՛յ թե կխեղդեի նրան: Տանել չեմ կարող: Չեմ կարող տեսնել այդ տերտերական լրտեսին: Հիմա նա արդեն համարձակվում է քիթը խոթել նույնիսկ այստեղ: Ավելի լավ կլինի, եթե նա երբեք այդ բանը չանի: Տերտերներն են նրան պահում այստեղ, գիտե՞ք: Օգտվում են այն բանից, որ դոն Կոսմոն միամիտ է: Սանֆեդիստներ:

— Բայց մի՞թե իսկապես դեռ գոյություն ունեն այդ սանֆեդիստները,— թեթևակի ժպտալով հարցրեց Դիանելլան:

— Սո՛ւրբ տիրամայր: Դուք դեռ հարցնո՞ւմ եք,— նորից բացականչեց Մորտարան:— Գոյություն ունե՞ն արդյոք նրանք: Գուցե հիմա նրանց ուրիշ անունով են կոչում, բայց նրանք էլի նույնն են: Դժոխային աղանդ է, որ տարածվել է ամբողջ աշխարհում: Նրանք լրտեսում են ամենուր. ես մեկին գտա նույնիսկ Թուրքիայում, պատկերացրեք, Կոստանդնուպոլսում:

— Դուք այնտե՞ղ էլ եք եղել,— հարցրեց Դիանելլան:

— Այնտեղ էլ: Եվ նույնիսկ ավելի հեռվում,— պատասխանեց Մաուրոն ինքնագոհ ժպիտով:— Որտեղ ասես, որ չեմ եղել, ինչ ասես, որ չեմ արել: Հաշվելու համար ձեռքի մատները հերիք չեն անի՝ հովիվ, գյուղացի, ծառա, նավի փոքրավոր, բեռնավոր, դոկեր, հնոցապան, խոհարար, բաղնիսպան, վայրի գազանների որսորդ, հետո՝ կամավոր-գարիբալդիական, Բիկսիոյի զինվորական սպասավորը, հեղափոխությունից հետո՝ բանտային ավագ հսկիչ Սան-Վիտոյում և, վերջապես, այստեղ՝ էլի գյուղացի: Իմ կյա՞նքը: Ոչ ոք չի հավատա, եթե որևէ մեկն ուզենա այդ ամենը պատմել:

Նա որոշ ժամանակ լռեց՝ շոյելով մորուքը, իսկ նրա կանաչավուն աչքերը լուսավորվեցին հիշողությունների ներքին թրթիռից:

— Կտրեք ծառը,— ասաց նա,— և բունը նետեք ծովը՝ ափից հեռու: Այն ո՞ւր կլողա: Ես՝ ինչպես Վալսանիայում աճած ծառ, այստեղ եմ ծնվել, այստեղ եմ մեծացել: Սկսվեց փոթորիկը և տարավ ինձ: Սկզբում գեներալը գնաց իր ընկերների հետ, իսկ ես գնացի երկու օր անց՝ գիշերը, առագաստանավով, ինչպես սովորաբար լինում էր այն ժամանակ, բարկասով, որը կոչում են տարտանա: Հիմա ծիծաղելի է հիշել այդ մասին: Իսկ գիտե՞ք, թե ես ինչ սարսափ զգացի այդ գիշերը ծովում:

— Առաջի՞ն անգամ:

— Ես երբեք չէի նավարկել: Սև էր, ամեն ինչ սև էր՝ և՛ երկինքը, և՛ ծովը: Խավարի մեջ սպիտակին էր տալիս միայն բացած առագաստը: Աստղերը, որ շողում էին բարձր ու խիտ-խիտ, փոշի էին թվում: Ալիքները փշրվում էին տարտանայի նավակողին, իսկ կայմը ճոճվում էր: Հետո հայտնվեց լուսինը, և գազանը բարիացավ: Նավաստիները նավախելում ծխում էին ծխամորճները և շատախոսում իրար հետ, իսկ ես, հակերի ու ձյութած պարանների միջև ընկած, տեսնում էի նրանց ծխամորճների կրակները և լայն բացված աչքերով լալիս էի, չնկատելով այդ: Արցունքները կաթում էին իմ ձեռքերին. ես կարծես հինգ տարեկան երեխա լինեի, թեև արդեն երեսուներեք տարեկան էի: Մնաս բարով, Սիցիլիա, մնաս բարով, Վալսանիա, Ջիրջենտի, որ երևում ես հեռվից, այնտեղ՝ բարձունքում, մնաս բարով: Մնաք բարով, Սան-Ջերլանդոյի զանգեր (դրանց ղողանջները թռչելով լռին դաշտերի վրայով, դեռ հասնում էին ինձ), մնաք բարով, ծառեր. չէ՞ որ ես ճանաչում էի դրանցից ամեն մեկին առանձին: Դուք նույնիսկ չեք կարող պատկերացնել, թե հեռվից որքան սրտին թանկ են թվում ծանոթ առարկաները, երբ թողնում եք, ինչպես դրանք ձեզ դեպի ետ են քաշում, պոկում են ձեր հոգին: Այստեղի որոշ վայրեր ես հանկարծ այնպես պարզ էի տեսնում, կարծես դրանք շրջապատում էին ինձ, նույնիսկ ավելի պարզ, քան երբևէ. ես այնպիսի բաներ էի տեսնում, որոնք առաջ երբեք չէի նկատել՝ խոտեր, որ դողում էին հյուսիս-արևելյան քամուց, պատից ընկած քար, փոքր-ինչ թեքված ծառ՝ լանջին. ինձ թվում էր, թե ես հիմա կարող եմ գրկել այդ ծառը, կարող եմ հաշվել ամեն տերևը... Դե, հերի՛ք է: Առավոտյան մենք հասանք Մալթա: Նախ լողում ես Գոցցո կղզու մոտով, Մալթա, հասկանո՞ւմ եք: Նրա նավահանգիստը կարծես ծովածոց լինի, որի մեջ մի ամբողջ ծով կտեղավորվի: Ամենուր ծովախորշեր են: Դրանցից մեկը Բուրմուլան է, որտեղ բնակություն էր հաստատել գեներալը: Ընդարձակ նավահանգիստներ, կայմերի անտառ և տարբեր ռասաների մարդիկ, ամեն տեսակի ազգությունների՝ արաբներ, թուրքեր, բեդվիններ, մարոկկոցիներ և էլի՝ անգլիացիներ, ֆրանսիացիներ, իսպանացիներ: Հարյուրավոր լեզուներ: Հիսուն թվականին խոլերան բռնկվեց, հրեաներն էին բերել Սուզայից, իսկ նրանք ինչպիսի կանայք ունեին, ա՛յ թե գեղեցկուհիներն էին: Ջահել աղջնակները՝ տասնվեց-տասնութ տարեկան, ձեզ նման...

— Օ՛, ես ավելի մեծ եմ,— ժպտաց Դիանելլան:

— Մե՞ծ եք: Մտքովս էլ չէր անցնի: Եվ նրանք ներկվում էին: Առանց որևէ անհրաժեշտության, պառավների նման: Շատ ափսոս: Բայց գեղեցիկ կանայք էին: Եվ ահա նրանք բերեցին խոլերան, ինչպես ասացի, սարսափելի համաճարակ էր: Բուրմուլայում, մի պատկերացրեք, է՛, փոքրիկ ավանում մի օրում ութ հարյուր մարդ մեռավ: Կոտորվում էին ճանճերի նման: Բայց չարաբախտ մարդու համար մահն էլ սարսափելի չէ: Ես ուտում էի բադրիջաններ ու պոմիդորներ, կարծես ոչինչ չէր եղել, դիտմամբ էի ուտում: Սովորեցի մի մալթայական երգ և պատուհանի գոգին հեծած գիշեր ու ցերեկ երգում էի: Որովհետև սիրահարված էի:

— Ահա թե ինչ: Այնտե՞ղ,— զարմանքով հարցրեց Դիանելլան:

— Չէ՛, այստեղ,— պատասխանեց Մաուրոն:— Ես այստեղ՝ Վալսանիայում, թողել էի մի գեղջկուհու, որի ետևից քարշ էի գալիս... Սերաֆինային... Մի տարի էլ չէր անցել իմ փախուստից, որ նա մարդու գնաց ուրիշի: Իսկ ես երգում էի... Ուզո՞ւմ եք լսել իմ երգը: Ես հիշում եմ մինչև հիմա:

Նա կկոցեց աչքերը, գլուխը ետ գցեց և սկսեց երգել ֆալցետաձայն՝ իր ձևով արտասանելով մալթայական ժողովրդական երգի բառերը.

Ahi me kalbi, kentu giani.

Դիանելլան նայում էր նրան հուզմունքով և տխուր քնքշությամբ, այնպիսի, ինչպիսի քնքշությամբ համակված էր երգի թախծալի մեղեդին, որ պատկանում էր ուրիշ ժամանակի և ուրիշ երկրի և այդ ծերունու շուրթերին հնչում էր որպես թույլ արձագանք արկածներով լեցուն հեռավոր պատանության: Նա պատկերացնել անգամ չէր կարող, որ Մորտարայի կոպիտ արտաքինի տակ կարող են թաքնված լինել այդպիսի քնքուշ հիշողություններ:

— Ի՜նչ գեղեցիկ է,— ասաց նա:— Մի անգամ էլ երգեք:

Հուզված Մաուրոն մատով ժխտական շարժում արեց:

— Չեմ կարող, ես ձայն չունեմ... Գիտե՞ք ինչ են նշանակում առաջին բառերը՝ «Ավա՛ղ, սիրտ իմ, ինչպես ես ցավում»: Մյուս բառերի իմաստը ես արդեն չեմ հիշում: Գեներալը սիրում էր այդ երգը: Շարունակ խնդրում էր, որ երգեմ: Դե, այն ժամանակ ես ձայն ունեի... Դուք նայեցեք ընձառյուծին: Հիմա նրա մասին էլ կպատմեմ:

Եվ նա պատմեց՝ ինչպես գեներալի մահից հետո ինքը մենակ մնաց Բուրմուլայում և, չցանկանալով վերադառնալ Սիցիլիա, որտեղ անբարեհույս էր համարվում, ուղևորվեց Լա-Վալլետա: Այստեղ սիցիլիական տարագիրներն ուզում էին օգնել նրան, բայց Մաուրոն՝ իմանալով, որ նրանք էլ ծանր կարիքի մեջ են, հրաժարվեց ամեն տեսակի օգնությունից և սկսեց աշխատել նավահանգստում՝ որպես նավի փոքրավոր, բեռնորդ, բեռնակիր: Աշխատող ձեռքերը քիչ էին. խոլերայի համաճարակից հետո ժողովուրդը պակասել էր: Հետո նա ընդունվեց անգլիական շոգենավ՝ որպես հնոցապան: Կես տարուց ավելի թաղված էր նավի հզոր, ահեղորեն գոռգոռացող որովայնում և, խորովվելով հնոցի մոտ, որ բոցկլտում էր գիշեր ու ցերեկ, նույնիսկ չգիտեր, թե ուր է լողում: Անգլիացի մեխանիկները նայում էին նրան ու ծիծաղում՝ ո՞վ գիտե, թե ինչու, իսկ մի անգամ էլ նրան, որ մրից բոլորովին սևացել էր, ուժով քարշ տվեցին, տարան անգլիացի նավապետի մոտ՝ կարմիր դեմքով, լողլող մի մարդու, որ երկար, գրեթե մինչև ծնկները հասնող շիկակարմիր մորուք ուներ. և նավապետը մի քանի անգամ թփթփացրեց Մաուրոյի ուսին, գուցե գովում էր ջանասիրության համար: Նա իսկապես բոլոր այդ ամիսներին իրեն թույլ չէր տվել ոչ մի րոպե հանգստանալ՝ նույնիսկ ուտելու համար. նա կորցրել էր ախորժակը, միայն խմում էր շարունակ, որ թուլացնի մարմնի ջերմությունը. այդտեղ՝ մեքենայական բաժնում, շնչելու օդ չկար: Երբ մտնում էին որևէ նավահանգիստ, Մաուրոյի միակ զվարճությունը հին, բոլորովին քրքրված խոհարարական գիրքն էր. դրա օգնությամբ նրան գրկապելով կարդալ էր սովորեցրել նավի ծեր խոհարարը՝ նույնպես իտալացի, որ վաղուց էր բնակություն հաստատել Մալթայում:

Այդ գիրքը ոչ միայն զվարճացնում էր, այլև իսկական գանձ դարձավ նրա համար: Քանի որ մի անգամ, երբ նավի խոհարարը լրջորեն հիվանդացավ, և հարկ եղավ նրան ափ իջեցնել Զմյուռնիայում, Մաուրոյին, որն այդ գրքի հետ ժառանգել էր նաև նրա ամբողջ խոհարարական գիտունությունը, ստուգելու համար կանգնեցրին արդեն ուրիշ կրակի մոտ: Նա սկսեց ջանասիրաբար զբաղվել նոր գործով, և նավապետն այնպես գոհ էր նրանից, որ երբ Մաուրոն նախկին խոհարարի նման սկսեց հիվանդանալ, հնարավոր համարեց որպես խոհարարի օգնական տեղավորել նրան մի մեծահարուստ անգլիացու ընտանիքում, որն ապրում էր Կոստանդնուպոլսում: Բայց նավի վրա ստացած հիվանդության պատճառով Մաուրոն չկարողացավ այդ տեղում երկար մնալ. այդ ժամանակ նրա հետ կատարվեց մի բավական տխուր դեպք: Ալկամոցի մի դեղագործ, որը շատ տարիներ առաջ բնակություն էր հաստատել Կոստանդնուպոլսում և որի ծառայություններից Մաուրոն օգտվում էր նաև այն պատճառով, որ լսի մայրենի լեզուն, որոշեց թունավորել նրան: Այո՛: Մի բաժին քաղցր նշայուղի փոխարեն դեղագործն, ըստ երևույթին, տվել էր դառն նշայուղ: Նա էլ սանֆեդիստ տերտերների լրտեսն էր: Ակամա սխա՞լ: Դե չէ: Մաուրոն չէր մոռացել այն դեպքը, երբ

դեղագործը բարձրաձայն իր վրդովմունքը հայտնեց՝ լսելով կախված ֆրանցիսկյան կրոնավորի պատմությունը, որ Մաուրոն պատմել էր նրան հենց այնպես, ծիծաղի համար: «Ես հենց այնպես առողջացա թունավորումից երեք ամիս հետո, և այն ժամանակ նա ինձ լավ հատուցեց իր սև գործի համար... Ես այնպես թափով հասցրի բռունցքով (Մաուրոն ժպտաց՝ ցույց տալով բռունցքը), որ նա փռվեց իր կրպակի հատակին: Իմ մատին կար երկաթե հաստ մատանի՝ ոլորած մեխի նման, որ գնել էի Զմյուռնիայում, և դրանով (իհա՛րկե, առանց դիտավորության) ճեղքեցի նրա քունքը»: Տեսնելով, թե ինչպես այդ մարդը, արյունով ողողվելով, պարկի նման տապալվեց հատակին, Մաուրոն ապշել էր զարմանքից ու վախից, իսկ հետո, ուշքի գալով, փախել էր և մի քանի ժամ հետո նավով հասել էր մի փոքրասիական փոքրիկ նավահանգիստ: Մաուրոն չէր հիշում այն ծովափնյա գյուղի անունը, որտեղ բնակություն էր հաստատել: Ամառ էր, և նրան հաջողվել է անմիջապես բաղնիսպան վարձվել:

— Դուք լսե՞լ եք Օրացիո Անտինորիի մասին,— հարցրեց Մաուրոն՝ ընդհատելով պատմությունը:

— Ճանապարհորդի՞: Լսել եմ,— ասաց Դիանելլան:

— Մի անգամ նա եկավ բաղնիք,— շարունակեց Մաուրոն,— մի ուրիշ իտալացու հետ: Ես լսեցի իտալերեն խոսակցություն և մոտեցա: Անտինորին մարդիկ էր վարձում Լիբիական անապատում գազաններ որսալու համար: Ես նրան դուր եկա, և նա ինձ տարավ իր հետ: Դե, գնացինք. մենք՝ որսորդներս, սպանված գազաններ էինք բերում նրա համար, իսկ նա դրանցից խրտվիլակներ էր պատրաստում և հետո ուղարկում թանգարանները՝ Լոնդոն, Վիեննա... Նա սիրում ու վստահում էր ինձ, դրա համար էլ որսից վերադառնալիս ես նրան օգնում էի դեղեր պատրաստել և միաժամանակ կամաց-կամաց ընդօրինակում էի նրա արվեստը: Այդպես ես սովորեցի խրտվիլակները պինդ խցկել, իսկ երբ նա գնաց, արդեն ինքս շարունակեցի գազաններ որսալ և զանազան տեղեր ուղարկել: Ես ուզում եմ ձեզ պատմել մի արկած: Մի անգամ մենք երկուսով մոլորվեցինք և մեռնում էինք սովից ու ծարավից: Մի տեղ մեզ թզենիներ պատահեցին, և դուք կարող եք պատկերացնել, թե մենք ինչպես վրա պրծանք պտուղներին: Բայց ամենալավ թզերը հասունացել էին բարձր ճյուղերին, և մենք չէինք կարողանում հասնել դրանց: Այդ ժամանակ ես՝ գյուղացիս, ի՞նչ արեցի: Քիչ հեռացա և վերադարձա՝ բերելով մի լավ, երկար փայտ. մի քիչ ծայրը ճեղքեցի և դրանով սկսեցի վերևից պոկել ամենահասուն թզերը՝ կաթնահյութով լիքը, մաքուր մեղր, ես ձեզ կասեմ: Անտինորին նայում էր ու մեռնում սրտնեղությունից: Վերջապես էլ չհամբերեց ու գոռաց ինձ վրա. «Ի՞նչ ես անում: Վե՛րջ տուր: Իսկ ինձ ինչի՞ համար պիտի թուրքերն սպանեն»: Ես հասկացա նրա ակնարկը, լուռ պարզեցի ձեռքս ու նրան տվեցի փայտը: Իսկ ինքս գնացի ուրիշը բերելու, և երկուսով հանգիստ սկսեցինք գողանալ թզերը: Ա՛խ, Անտինորի... Նա ինձ լավ էր վերաբերվում և շատ էր օգնում, նույնիսկ այն ժամանակ, երբ բաժանվել էինք: Ես այնտեղ ապրեցի վեց տարուց ավելի: Հետո լսեցի, որ Գարիբալդին ափ է իջել Մարսալայում, և անմիջապես սլացա Սիցիլիա: Գնացի Մեսսինա, Միլացցոյում միացա կամավորներին: Դոն Ստեֆանո Աուրիտին մեռավ իմ ձեռքերի վրա: Նա չէր կարողանում խոսել, բայց աչքերով ինձ հանձնեց որդուն՝ դոն Ռոբերտոյին, իր տասներեքամյա կոյուսինին... Մենք կռվեցինք: Այդ ես էի, որ կրակ բացեցի Ռիջոյի մոտ, գիտե՞ք: Առաջին կրակոցը իմն էր: Հետո Բիկսիոն ինձ վերցրեց զինվորական սպասավոր... Ճակատամարտը Վոլտուրնոյի մոտ, ա՛յ թե օր էր: Եվ ահա հիմա՝ այն ամենից հետո, երբ այսքան բան եմ տեսել, այսքան բան եմ տարել, ես գոհ եմ, ինչպես կամենաք: Իտալիան մեծ երկիր է: Իտալիան ազգերի ղեկավարն է: Նա է օրենքներ թելադրում ամբողջ աշխարհին: Եվ կարող եմ ասել, որ ես էլ՝ աղքատ ու չնչին տգետս, ինչ որ բան եմ արել և այն էլ առանց ավելորդ շաղակրատանքի: Կարող եմ գնալ թագավորի մոտ և ասել նրան. «Ձերդ մեծություն: Գահի վրա, որին դուք նստում եք, եթե ոչ մի ոտքը կամ վերադրակը, ապա փորակը կամ մեխը ես եմ սարքել: Ես իմ խնդիրը կատարել եմ, որդիս»: Եվ ես գոհ եմ: Շրջում եմ Վալսանիայում, նայում հեռագրալարերին, լսում եմ՝ ինչպես են գվվում հեռագրասյուները, կարծես դրանց ներսում ձիաբոռերի բներ են, և կուրծքս այնպես է ուռչում ուրախությունից: Ես ասում եմ՝ «Հեղափոխության պտուղներն են»: Գնում եմ առաջ, տեսնում եմ երկաթգիծը, գնացքը, որ սուզվում է հողի տակ,

Վալսանիայի տակի թունելի մեջ, ուղղակի կարծես երազ լինի, և ես ասում եմ՝ «Հեղափոխության պտուղներն են»: Գնում եմ իտալական սոճու տակ, նայում եմ ծովին, ցածում՝ արևմուտքում տեսնում եմ Պորտո-Էմպեդոկլեն, որտեղ այն ժամանակ, երբ ես գնացի Մալթա, միայն Ռաստիլյո աշտարակը կար: Հին ծովապատնեշը և չորս տնակներ, իսկ հիմա այն դարձել է գրեթե քաղաք. տեսնում եմ նոր նավահանգստի երկար պատնեշները, որոնք ինձ երկու ձեռքեր են թվում՝ պարզված աշխարհի բոլոր քաղաքակիրթ երկրների նավերին՝ կարծես նրա համար, որ ասեն. «Եկե՛ք, եկե՛ք: Իտալիան վերածնվել է: Իտալիան գրկում է բոլորին, բոլորին, տալիս է իր հարստությունը՝ ծծումբը և իր այգիների պտուղները»: Եվ ես մտածում եմ՝ այդ ամենը նույնպես հեղափոխության պարգևներն են, և, տեսնո՞ւմ եք, ես արդեն ուրախությունից լալիս եմ երեխայի նման...

Այս խոսքերն ասելով, նա կոպիտ մահուդե վերնաշապկի վզամասի բացվածքից դուրս քաշեց մի մեծ, կապույտ քաթանե թաշկինակ և սրբեց աչքերը, որ իրոք լիքն էին արցունքներով:

Դիանելլան զգում էր, որ իր աչքերը խոնավանում են: Այդ ծերունին, որը բոլորին այնպիսի սարսափ էր ներշնչում, որը մի մարդու սպանել էր հենց այնպես և մի ուրիշի կործանել միայն անմիտ կասկածանքի ստվերի պատճառով, որը շարունակ շրջում էր զինված՝ միշտ պատրաստ արյուն թափելու, միշտ պատրաստ զայրույթով բռնկվելու, խայթող ու կասկածամիտ, այդ ծերունին լալիս էր այստեղ երեխայի նման՝ ուրախանալով, որ կատարվել է այն գործը, որը նա համարում էր փառավոր ու անբասիր, լալիս էր հիացմունքից՝ իր գործով և հայրենիքի վեհությամբ, հայրենիք, որի համար տառապել էր ու մարտնչել՝ երբեք ոչինչ չպահանջելով, շռայլ ու կատաղի, շան նման հավատարիմ և առյուծի պես քաջ: Ո՛չ նրա աղավնիները, ո՛չ դաշտերի լռությունը, ո՛չ խաղողի այգին, որ լիովին տրված էր նրա տնօրինությանը, ո՛չ արտույտների երգը՝ ո՛չ մի բան այդ տարիներին պարզություն ու խաղաղություն չէր բերում նրա հոգուն. միայն այդ կամերոնեից, որը նրա համար անձնական եկեղեցու պես մի բան էր, նա ելնում էր կարծես արբած, թափառում էր այգիներում՝ նշենիների ու ձիթենիների տակ, ինքն իրեն պատմում ճակատամարտերի ու դավադրությունների մասին, չար նայում ծովին՝ Թունիսի կողմը, որտեղից սպասում էր ֆրանսիացիների հանկարծակի հարձակումը...

Բոժոժիկների զրնգոցը և կառքի անիվների թխկթխկոցը ընդհատեցին Դիանելլայի մտորումները և Մաուրոյի արցունքները:

— Ձեր հա՞յրն է,— հարցրեց Մաուրոն՝ հանկարծ մռայլվելով և թաշկինակը խցկելով վերնաշապիկի վզամասի բացվածքը:

Վշտացած Դիանելլան վեր թռավ ու վազեց պատուհանի մոտ, որ նայի ծածկոցափեղկերի ճեղքերից, և քարացավ: Մուտքի մոտ կանգ առած կառքից դուրս եկան հայրը և Աուրելիո Կոստան՝ նա՛, նա՛, աշխատանքային շորերով:

— Գնացե՛ք, գնացե՛ք,— ասաց Մաուրոն՝ գրեթե դուրս հրելով աղջկան:— Ես էլ կփակեմ ու կչքվեմ:

Դիանելլան ելավ միջանցք և միջանցքի վերջում տեսավ Կոստային ու հորը, որ գնացին առանձնասենյակ ու փակվեցին այնտեղ: Այդ ժամանակ Մաուրո Մորտարան գազանի նման, որին գտել էին իր որջում, լուռ, աննկատելի հեռացավ՝ թեթևակի կաղալով:

Դիանելլան կանգնել էր ապշած, խորապես հուզված՝ չիմանալով ինչ մտածել հոր այդ անսովոր, անսպասելի վերադարձի մասին: Մի բան պարզ էր. այդ վերադարձը, ինչպես և Աուրելիո Կոստայի գալը կապված էին Արագոնայի հուզումների մասին լուրերի հետ: Հավանաբար, ինչ-որ շատ լուրջ բան է կատարվել: Մի՞թե Աուրելիոն փախել է այնտեղից: Ո՛չ, Դիանելլան չէր ուզում նույնիսկ թույլ տալ այդպիսի միտք: Գուցե հայրն է մարդ ուղարկել նրա ետևից: Բայց հիմա ինչպե՞ս է վարվում նրա հետ:

Մի ակնթարթ Դիանելլան քիչ էր մնում ենթարկվեր գայթակղության՝ գնար իր սենյակը, որ կից էր հոր սենյակին, և գուցե որևէ բան լսեր պատի միջով, բայց հիշեց հոր հայացքը այսօր

առավոտյան, դրա համար էլ զսպեց իրեն. սակայն նախասենյակում նա կանգ առավ՝ չիմանալով ինչ որոշել:

— Ձեր հայրիկը,— հայտնեց նրան դոննա Սառա Ալայմոն՝ գլուխը դուրս հանելով խոհանոցի դռնից:

Ի պատասխան Դիանելլան գլխով արեց:

— Ինժեների հետ է,— շշուկով ավելացրեց դոննա Սառան:

Դիանելլան նորից գլխով արեց ու ելավ արտասանդուղքի հարթակը: Կառքը դեռ կանգնած էր մուտքի մոտ: Ուրեմն՝ հիմա հայրը նորից կգնա: Գուցե եկել է ինչ-որ թուղթ վերցնելու:

— Դուք գնալու եք Պորտո-Էմպեդոկլե՞,— հարցրեց Դիանելլան կառապանին:

— Այո՛, ձերդ ողորմածություն,— պատասխանեց նա:

Եվ ահա փութկոտ դուրս եկան հայրն ու Կոստան: Ֆլամինիո Սալվոն չէր սպասում, որ աղջկան կհանդիպի սանդղահարթակում. տեսնելով Դիանելլային, նա մի կողմ թեքվեց, հետո, չկանգնելով, ժպտաց ու ձեռքով արեց: Ետևից եկող Աուրելիո Կոստան մի ակնթարթ շփոթվեց, ուզում էր հանել ճամփորդական գլխարկը, բայց Սալվոն գոռաց նրան.

— Գնա՛նք, գնա՛նք:

Դիանելլան՝ գունատ, շունչը պահած, տեսավ՝ ինչպես նրանք նստեցին կառք ու գնացին առանց ետ նայելու. աղջիկը հայացքով հետևեց նրանց՝ մինչև որ ծածկվեցին ծառուղու խորքում:

Ինչպե՜ս էր փոխվել Աուրելիոն: Անհանգիստ, չսափրված՝ նա հիվանդ էր թվում, ծերացած... Դիանելլան հիշեց, թե նրա մասին ինչ ասաց Նիկոլետտա Կապոլինոն: Նա կուզենար, որ չնայած հոր հրամայական կանչին, Աուրելիոն կանգներ սանդղահարթակում և գոնե բարևեր իրեն... Բայց դրա փոխարեն Աուրելիոն իսկույն ենթարկվեց... Գուցե այդպիսի պահին... Ո՞վ իմանա, ինչ է կատարվել հանքահորերում...

Ֆլամինիո Սալվոն վերադարձավ ուշ երեկոյան, շատ լավ տրամադրությամբ, ինչպես լինում էր միշտ, երբ լուրջ որոշում էր ընդունում:

Ընթրիքի ժամանակ նա ներողություն խնդրեց դոն Կոսմոյից առավոտվա հանկարծակի պոռթկումի համար. ասաց, որ ինքը մինչև կոկորդը կուշտ է տհաճություններից, որ թափվում են իր գլխին Արագոնայի հանքահորերի պատճառով, և որ ինքը որոշել է փակել դրանք:

— Այսպիսով, պարոնայք հանքափորները որոշ ժամանակ գործադուլ կանեն այն պատճառով, որովհետև այդպես է իմ կամքը, և կարող են ազատ ժամանակ լսել իրենց մարդասեր մարգարեների քարոզները: Թո՛ղ սնվեն քարոզներով: Հիանալի բան է այդ մարդասիրական ավետարանը, դոն Կոսմո, եթե կարդաս միայն մի էջը: Բայց բավական է շրջես թերթը... Ասենք, նրանք չեն էլ պատրաստվում այդ բանն անելու: Եվ իրավացի են: Բայց նրանց իրավացիությունը ա՛յ այստեղ է,— և նա ցույց տվեց փորը:— Փորձեք բացատրել նրանց, որ իտալական կառավարության ընդունած մաքսային քաղաքականությունը առատության եղջյուր է եղել Վերին Իտալիայի արդյունաբերության ու արդյունաբերողների համար և հրեշավոր քայքայում Հարավի և մեր թշվառ կղզու համար, որ տարեցտարի աճում են հարկերն ու այլ պարհակները, և շարունակ իջնում է ու իջնում արտադրողականությունը, իսկ հիմա ծծմբի գինն այնքան է ընկել, որ ոչ միայն չի կարելի բարելավել բանվորների վիճակը, այլև նույնիսկ անխոհեմություն է դառնում արդյունահանությունը շարունակելը: Ես հանքահորերը չէի փակում նրանց պատճառով, որ գոնե մի կտոր հաց տամ նրանց: Իսկ նրանք գործադուլ են անում: Ահա շնորհակալությունը:

Սա նշանակում է, որ նրանք կարող են ապրել առանց աշխատելու: Բոլորը զվարճանում են: Ա՛յ թե ուրախություն է:

— Կյա՛նքը,— հառաչեց դոն Կոսմոն՝ դեմքը թախծալիորեն ծռմռելով:— Եթե ինչպես հարկն է մտածես... ծծումբը, իհա՛րկե... արդյունաբերությունը... այս ծաղկավոր սփռոցը, այս երեսակավոր բաժակը... բրոնզե լամպը... բոլոր այս չնչին բաները՝ սեղանին, և տանը... և փողոցներում... շոգենավերը ծովերում, երկաթուղիները, օդապարիկները... Մենք խենթեր ենք, ազնիվ խոսք: Այո՛, աշխատում ենք, աշխատում, որ լցնենք այս մեծագույն անհեթեթությունը, որ մենք կոչում ենք կյանք, որպեսզի նրան ինչ-որ տեսք տանք, ինչ-որ բովանդակություն: Եվ ես երբեմն չեմ հասկանում. ո՞վ է ավելի խենթ՝ ե՞ս, որ ոչինչ չեմ հասկանում, թե՞ նրանք, ովքեր լրջորեն գտնում են, թե ինչ-որ բանից գլուխ են հանում և՛ խոսում են, և՛ շարժվում այնպես՝ կարծես նրանց առաջ իսկապես կա ինչ-որ նպատակ, որը, եթե հասնեն նրան, չի թվա իրենց միանգամայն ավելորդ: Ես, թանկագին սինյոր, կսկսեի այն բանից, որ կջարդեի այս բաժակը: Հետո կքանդեի տունը... Եթե ամեն ինչ սկսել սկզբից, ո՞վ գիտե... Ա՛յ, դուք ասում եք, թե այդ դժբախտների իրավացությունն այստեղ է՝ իրենց փորում: Դա նրանց երջանկությունն է, թանկագին սինյոր: Եվ վա՛յ է, եթե նրանք կշտանան... Իսկ որտե՞ղ է ձեր իրավացիությունը: Իսկ որտե՞ղ է իմը:

Ընթրիքից հետո Ֆլամինիո Սալվոն ու Դիանելլան մոտեցան պատուհանին: Անթափանց խավար էր տիրում: Երկնային լայնարձակ տարածություններում անհամար վառ կետերով սփռված հեռավոր աստղերը չէին կարողանում լույս տալ երկրին: Հեռվում անդադար ճռռում էին ծղրիդները, և ժամանակ առ ժամանակ հովտի խորքից լսվում էր բուի թախծալի հառաչը, որ նման էր հեծկլտանքի: Երբեմն սուր, թրթռուն ճիչերով վիլլան պարուրող խավարն ու լռությունը ճեղքում էին անտեսանելի չղջիկները: Հետո երկնակամարում Մոնսերրատո վանքի հսկայական զանգվածի վրա հայտնվեց բոսորագույն լուսինը, և ամբողջ շրջանում ծառերի տերևներով անցավ թեթև թրթիռ: Ինչ-որ տեղ հաչաց մի շուն:

— Դու ոչինչ չունե՞ս ասելու քո հորը, բոլորովի՞ն ոչինչ,— հարցրեց Սալվոն տխուր եղանակով՝ չնայելով աղջկան, կարծես նրա հոգին թափառում էր այդ պատուհանից շատ հեռու:

— Ե՞ս,— անվստահ և գրեթե շփոթված հարցրեց Դիանելլան:— Ոչինչ... Իսկ ինչ կարող էի ասել:

— Ուրեմն՝ ոչինչ,— շարունակեց հայրը:— Ո՛չ մի գաղտնիք, նույնիսկ ամենաչնչին... Ոչինչ, հա՞: Ավելի լավ: Որովհետև դու, իմ խեղճ աղջնակ, ունես միայն հայր, իսկ ես չէ՞ որ այնքան զբաղված մարդ եմ... Ես այսօր... Ի՜նչ օր է... Գիտե՞ս ինչն է պակասում շատերին: Այն զգացողությունը, թե տվյալ պահին ինչն է տեղին, ինչը՝ ոչ: Ես չեմ ասի, թե կպատասխանեի «այո», եթե առաջարկությունն արվեր ուրիշ օր, ուրիշ ձևով, բայց կմերժեի շատ քաղաքավարի և, բացի այդ, նախապես կխոսեի քեզ հետ:

Լսելով հոր այդ հանդարտ, անշտապ խոսքերը, Դիանելլան վախենում էր, որ նա կարող է լսել իր սրտի բարձր զարկերը՝ լարված, տանջալի սպասման մեջ՝ այն ժամանակ, երբ ամբողջ արյունը փոթորկվում էր նրա երակներում:

— Ինձ խնդրեցին... դու ինձ հասկանում ես,— շարունակեց Սալվոն՝ շրջվելով և հետաքրքրությամբ նայելով աղջկա աչքերի մեջ:— Եվ ես՝ վստահ, որ իմ սիրելի դուստրը այնքան խելամիտ է, որ չի կարող նույնիսկ մի ակնթարթ ուշադրություն դարձնել այդ պատանուն, (օ՛, իհա՛րկե, նա լավն է և, այնուամենայնիվ, բազում պատճառներով քեզ համապատասխան և արժանի չէ), այն էլ այսպիսի անհարմար պահին... Մի խոսքով, ես նրան մերժեցի՝ առանց ավելորդ խոսակցությունների: Հապա տեսնենք դու գլխի չե՞ս ընկնում:

— Ո՛չ...— ավելի շուտ հառաչեց, քան ասաց Դիանելլան:

— Իսկապե՞ս գլխի չես ընկնում,— ժպտալով համառորեն պնդեց հայրը, կարծես գիտակցելով, թե ինչ տանջանքի է ենթարկում նրան:— Դե, փորձի՛ր...

— Ո՛չ... Չե՛մ կարող...— փնթփնթաց աղջիկը:

— Ուրեմն հարկ կլինի քեզ ասել,— ավարտեց հայրը,— որ դու իմանաս քեզ ինչպես պահել: Դը Վինչենտիսն է...

— Ա՛խ,— բացականչեց Դիանելլան և սկսեց անզուսպ քրքջալ:— Այդ խեղճ Նինին:

— Այդ խեղճ Նինին,— կրկնեց հայրը՝ ուսերը թոթվելով և նույնպես ժպտալով:— Ուրեմն դու այդ բանն սպասո՞ւմ էիր:

— Ո՛չ, երդվում եմ քեզ,— աշխուժորեն պատասխանեց Դիանելլան: Ես, իհարկե, նկատել եմ, բայց...

—-Բայց դու սպասում էիր մի ուրիշի՞,— արագ հարցրեց հայրը:

Դիանելլան քարացավ և հոր հայացքին դիմացավ սառցային ամրությամբ:

— Չէ՛ որ ես քեզ ասացի՝ ոչ:

Կասկածը, որ հոր սկսած խոսակցությունը թակարդ էր իր համար, դարձավ համոզվածություն: Գուցե Նինի դը Վինչենտիսը բնավ էլ ոչ մի առաջարկություն չի արել: Եվ այն մտքից, որ հայրը վկայակոչեց այդ խեղճ, չափազանց բարեհոգի պատանուն միայն այն նպատակով, որ ծիծաղի նրա վրա, Դիանելլան ցնցվեց նողկանքից, ավելի ևս, որ լավ գիտեր՝ այդ պատանին նույնպես իր հոր զոհն է:

Սալվոն այլևս ոչինչ չասաց. մի քիչ էլ կանգնեց պատուհանի մոտ՝ նայելով հեռուն, հետո հառաչելով հեռացավ ու բարի գիշեր մաղթեց աղջկան՝ մտադրվելով գնալ քնելու:

— Բարի գիշեր,— սառը պատասխանեց Դիանելլան:

Մենակ մնալով, նա ձեռքերով ծածկեց դեմքը և լաց եղավ: Նրան թվում էր, թե հայրը՝ քրքրելով իր սիրտը, զվարճանում է, ինչպես կատուն մկան հետ: Օ՛, աստված, ինչո՞ւ է նա այդքան չար նույնիսկ հարազատ աղջկա հանդեպ, երբ նրա համար այնպես հեշտ կլիներ բարի լինել բոլորի նկատմամբ: Եթե հայրն իսկապես ցանկանար, որ աղջիկը բացեր իր գաղտնիքը, և դրա համար հիշեցներ, որ նա իրենից բացի ոչ ոք չունի, որի առաջ կարողանա բացել սիրտը, հիշեցներ դաժան ճակատագրի մասին, ապա թակարդներ չէր լարի աղջկա համար: Հիմա Դիանելլան վերջնականապես համոզվեց՝ հայրը չի ուզում, որ ինքը սիրի Աուրելիոյին: Նա փակեց հանքերը, գուցե իրագործեց իր սպառնալիքը՝ «Կքշեմ բոլորին»: Եվ Աուրելիոյին՝ նույնպես: Բայց հիմա Աուրելիոն նրա կարիքը չունի: Կորցնելով այդ տեղը, նա կարող է ինչքան այդպիսի տեղեր գտնել, նույնիսկ ավելի լավերը: Եվ գուցե դա էր հարուցում հոր մեծ սրտնեղությունը, որովհետև նա ինքն էր պատանուն տվել իրենից կախում չունենալու հնարավորությունը, բայց գտնում էր, որ երախտագիտության պարտքը կապում է նրան իր հետ: Նա ուզում էր, որ բոլորը հնազանդ գործիքներ լինեին իր ձեռքերում, բայց հենց Աուրելիոն կարող էր խռովություն սերմանել այնտեղ, որտեղ Ֆլամինիո Սալվոն ամենից ավելի էր վախենում խռովությունից. իր աղջկա սրտում: Այո, այո, հայրը շատ լավ գիտեր, որ աղջիկը սիրում է պատանուն: Այդ մասին կիմանար նաև Աուրելիոն: Բայց հիմա ի՞նչ է լինելու, եթե հայրն իսկապես փակել է հանքերը և ազատել նրան: Աուրելիոն կգնա հեռու, գուցեև Սարդինիա՝ նույնիսկ չկասկածելով Դիանելլայի սիրո մասին, և գուցե այնտեղ...

Դիանելլան նորից ձեռքերով ծածկեց դեմքը: Այստեղ ամեն ինչ նրա համար դատարկ էր ու թախծալի. նա ակամա ունկնդրում էր ծղրիդների շարունակվող ճռռոցին, և նրան թվում էր, թե այդ ճռռոցը համընդհանուր լռության մեջ դառնում է ավելի ու ավելի լարված ու հնչյուն: Նա մի քիչ մտածեց Արագոնայի ու Կոմիտինիի հուզումների մասին, և ծղրիդների խելահեղ համերգը հանկարծ նրան թվաց ապստամբված ժողովրդի հեռավոր, անորոշ տրտունջը, ժողովուրդ, որի համար Աուրելիոն՝ նույնպես ապստամբ, կդառնա առաջնորդ ու վրիժառու: Իսկ ի՞նքը: Ի՞նքը:

Դիանելլան ձեռքերը հեռացրեց դեմքից. նրա առաջ խաղաղ ու անխռով տարածվել էին դաշտերը՝ ողողված լուսնի մեղմ, տամուկ լույսով: Այդ ամենը նրան երազ էր թվում: Եվ քնքշանքի անսպասելի ալիքը հաճելիորեն թարմացրեց նրա սիրտը, իսկ նրա աչքերում երևացող արցունքներն արդեն տխրության արցունքներ չէին:

Ա՛խ, այնուամենայնիվ, ի՜նչ հրաշալի էր լուսնկա գիշերի տեսարանը՝ դաշտերի վրա, ծեր ծառերի վրա, որ բարձրացել էին հողի ընդերքից և անշարժ էին իրենց սովորական թախծալի քնի մեջ, և այդ լեռները, որ մռայլ ուրվագծվելով երկնքի պաստառին, թվում էր՝ պահել են ամենահեռավոր ժամանակների գաղտնիքը, և շրջակա դաշտերի խոտերի մեջ ծղրիդների այդ թրթռուն, պարզ, համառ երգը, որ կարծես կոչ էր անում՝ մոռանալ աշխարհում ամեն ինչ:

Մի՞թե այդ ծղրիդների, ծառերի, լուսնի և լեռների միջև գոյություն չուներ մի խորհրդավոր միություն, որից արտաքսված էին մարդիկ: Այդպիսի գեղեցկությունը ստեղծված չէր մարդկանց համար, որոնք այդ ժամին հոգնած փակում էին իրենց կոպերը, որ քնեն. այն կտևի ամբողջ գիշերը, և երբ Դիանելլայի պատուհանը փակվի, էլ ոչ ոք չի տեսնի այդ գեղեցկությունը ամայի դաշտերում: Գուցե հենց այդ էլ ուզում էր աներևույթ չղջիկը, որ ճչում էր՝ թռչելով պատուհանի մոտով, գրգռված ու հմայված լույսով. գուցե նա ուզում էր, որ աղջիկն այլևս իր արթնությամբ չխանգարի բնության ներդաշնակությունը, որ օտարացած էր մարդուց:

Եվ Դիանելլան ծածկեց պատուհանը. նա միայն մի քիչ բաց թողեց փեղկերից մեկը և, միացրած ձեռքերն ամուր սեղմելով շրթունքներին, սկսեց նեղ ճեղքից անձայն աղոթել, որ միշտ լինի պատուհանից այն կողմ մնացած այդ գեղեցկությունը, որը, ինչպես հանկարծ թվաց նրան, տոգորված է աստծու ոգով և որը մարդիկ անարգում են իրենց մութ ու չնչին կրքերով: Վերջին անգամ նայելով վիլլայի առջևի ծառուղուն, Դիանելլան նկատեց ինչ-որ մարդու թխավուն, դանդաղ շարժվող կերպարանքը՝ լուսնի լույսից փայլող ճաղատով: Դոն Կոսմո՞ն էր: Նա՛ է:

Ա՛խ, նրա հոգին այնպես միաձուլվել է աստծուն, իսկ նա գուցե չէր էլ գիտակցում այդ: Նա միայն ետուառաջ էր քայլում ճանապարհով՝ ձեռքերը դրած մեջքին, հավանաբար, խորասուզված իր և՛ շփոթ, և՛ անպտուղ մտորումների մեջ:

Գլուխ VI

Ո՛չ գույնզգույն թղթերի վրա տպագրված հրավերներ կային ընտրողներին, ոչ էլ որևէ արտասովոր խլրտում կար հին քաղաքի նեղլիկ փողոցներում: Այնինչ պառլամենտական ընտրությունների համար նշանակված օրը մոտենում էր: Բայց ձանձրույթի քամին արդեն փչում էր ուղիղ քաղաքական շառլատանության կոկորդին, և նրա ձայնը կտրվել էր: Սանդուղքը, որի օգնությամբ պատերին էին փակցնում քաղաքական ազդերն ու լոզունգները, տակից փտել էր, իսկ շրեշի փոքրիկ խեցամանը՝ ջարդվել: Ջիրջենտիում շառլատանությունը փարաջա էր հագել և, կեղծ բարեպաշտորեն լրջախոհություն ու շրջահայացություն ձևացնելով, քայլում էր փողոցներում՝ զգեստի ծալքերում թաքցնելով թմբուկի փայտիկները, որ դարձրել էր ցողավրձին: Քաղաքացիները, սակայն, հեշտությամբ էին ճանաչում նրան այդ դիմակահանդեսային զգեստով, բայց լիովին հնարավորություն էին տալիս հանդարտ զբոսնելու և անելու իր գործը, նույնիսկ հարգանքով էին վերաբերվում նրան. չէ՞ որ քաղաքացիներին գոնե չէին ձանձրացնում ավելորդ քարոզներով, այլ սուսուփուս փող էին պարտք տալիս, ճի՜շտ է, տոկոսով, բայց տալիս էին. բացահայտ հիմնված էր ժողովրդական կաթոլիկական բանկ, որի բաժնետոմսերի մեծ մասը պատկանում էր Սալվոյին, իսկ մնացածը՝ ուրիշ մանր ավանդատուների, և տոկոս էր գանձվում, բայց մեր սուրբ մայր եկեղեցու թույլ տված չափերով: Որոշ ակտիվություն, թեև զուտ ինքնաբերաբար, նկատվում էր միայն հիմնարկներում՝ ոստիկանապետությունում, ֆինանսական վարչությունում, պետական դպրոցներում, դատարաններում, իսկ իսկական գործունեությունը եռում էր ուրիշ տեղերում: Արդյունաբերությունը, առևտուրը, մի խոսքով՝

իսկական կյանքը տեղափոխվել էր Պորտո-Էմպեդոկլե՝ ծծումբից՝ դեղին, կրակավից՝ սպիտակ, փոշոտ ու աղմկոտ ավանը, որը կարճ ժամանակում դարձել էր կղզու ամենամարդաշատ ու գործարար շուկաներից մեկը: Բայց նույնիսկ այդտեղ, այդ արդյունաբերության զարգացման համար քիչ հարմար պայմանների պատճառով, ծծումբի ավելցուկը, չիմանալն այն բանի, թե ինչպես կարելի է օգտագործել այդ հանածոն, և թե այն ինչ օգուտ կարող է բերել, խոշոր կապիտալների բացակայությունը, շատ շահույթ ստանալու պահանջը կամ էլ պարզապես ցանկությունը պատճառ էին դարձել, որ հողի ընդերքի այդ հարստությունը, որ կարող էր հարստություն դառնալ ամբողջ բնակչության համար, օրեցօր կլանվում էր անգլիական, ամերիկյան ու ֆրանսիական շոգենավերի նավամբարների կողմից, իսկ բոլոր նրանց, ովքեր ապրում էին այդ արդյունահանությամբ և այդ առևտրով, ոսկորները կոտրատվում էին հոգնությունից, գրպանները դատարկ էին մնում, իսկ հոգիները թունավորում էր դաժան ու կատաղի պայքարը, որին դիմել հարկադրում էին չափազանց ցածր գները կամ էլ չափազանց բարձր նավավարձը, կամ էլ պահումները իրենց իսկ փչացրած ապրանքի ցածր որակի համար: Ջիրջենտիում ինչպես հարկն է աշխատում էին միայն տրիբունալներն ու երդվյալների դատարանները. դրանք չէին փակվում ամբողջ տարին: Վերևում՝ Կուլմո-դել-Ֆորկեում, Սան-Վիտո բանտը միշտ լեփ-լեցուն էր կալանավորներով, որոնք երբեմն երեք-չորս տարով սպասում էին դատի: Եվ դեռ լավ էր, եթե այդ քաշքշուկից չէին տառապում անմեղները, որովհետև կալանավորների մեծ մասին բանտարկել էին միայն կասկածով: Քաղաքում բավական հանգիստ էր, բայց ավաններում ու գավառական շրջաններում շատ մեծ թվով արյունալի հանցագործություններ էին կատարվում, ընդ որում մարդասպանները գործում էին և՛ անձնական մղումներով, և՛ դրամի համար, իսկ պատճառ կարող էր լինել և՛ հանկարծակի բորբոքված վեճը, և՛ նախապես լավ մտածված վրեժը. բացի այդ, տարածված էին և՛ ձիագողությունը, և՛ մարդկանց առևանգումը, և՛ շորթումը, որ ծնունդ էին աղքատության, անհուսալի տգիտության, ուժից վեր աշխատանքի, որից մարդը գազանանում է, և այդ խանձված, մերկ, վատ մշակված հողերում մարդկանց պակասությամբ: Սանտա-Աննա հրապարակում՝ քաղաքի կենտրոնում, որտեղ գտնվում էին դատարանները, խռնվում էին այցելուներ ամբողջ գավառից՝ ամրակազմ, կոպիտ, արևառ մարդիկ, որ խոսելիս զանազան աշխույժ ու արտահայտիչ շարժումներ էին անում՝ ամեն մեկն իր ձևով. դաշտերի ու ծծմբահանքերի տերեր, որ գժտվել էին վարձակալների կամ Պորտո-Էմպեդոկլեի պահեստապետերի հետ, և՛ մակլերներ, և՛ գործամոլներ, և՛ փաստաբաններ, և՛ թղթատարներ. շփոթահար դեսուդեն էին նետվում Գրոտտեից կամ Ֆավարայից, Ռակալմատոյից կամ Ռաֆֆալդիից կամ էլ Մոնտապերտոյից եկած անտաշ գյուղացիներ. հանքափորներն ու գյուղացիները մեծ մասամբ հողագույն, նիհար դեմքերով էին, գայլային հայացքներով, հագած ունեին կապույտ մահուդից տոնական ծանր զգեստներ, տարօրինակ տեսքի թավշե, սրածայր գլխարկներ, թելե գուլպաներ, կրում էին ոսկե շղթայիկներ կամ էլ ականջօղեր: Նրանք գալիս էին որպես վկաներ կամ էլ նրա համար, որ օգնություն ցույց տան իրենց հարազատներին, որ բանտ էին նստած: Նրանց խոսվածքում գերակշռում էին ցածր, կոկորդային հնչյունները կամ էլ զիլ, ձիգ ճիչերը: Կոշտ կաշվից կարած նրանց մեխած սապոգները՝ խորդուբորդ ու ծանր, կայծեր էին հանում քարասալարկից: Նրանք իրենց հետ բերում էին կանանց՝ մայրերին, իրենց կանանց, դուստրերին ու քույրերին՝ վախեցած կամ էլ մռայլ, ամոթխած, տագնապից փայլող աչքերով, այծի բրդե տնայնագործ շորերով, մահուդե կարճ, սև կամ սպիտակ թիկնոցների մեջ փաթաթված. գլուխներին կային գույնզգույն գլխաշորեր՝ կզակների տակ կապած, ականջներին՝ գինդեր՝ օղերի, կախազարդերի, շիթերի տեսքով՝ այնքան ծանր, որ որոշ կանանց բլթակները պատռվել էին: Ոմանք սև էին հագած՝ սպանվածի ազգականները, և թվում էր, թե նրանց այտերը այրվել էին արցունքներից: Երբ տղամարդիկ հեռանում էին, կանանց միջև վազվզում էին կավատ պառավները, որ աչքի տակով, ուշադրությամբ զննում էին ավելի ջահելներին ու սիրուններին. դրանք ամոթից շառագունում էին, այնուամենայնիվ, երբեմն զիջում էին. և տանում էին նրանց՝ վախից ճնշված, դողահար, հարկադրված տալու իրենց մարմինը՝ դրանից ոչ մի հաճույք չստանալով, հանուն այն բանի, որ իրենց գյուղը չվերադառնան դատարկ ձեռքերով, որ այնտեղ անհայր մնացած երեխաների համար գնեն կոշիկներ, որևէ շոր: (Հաջողություն է: Խեղճ կինը պետք է օգտվի դրանից: Ոչ ոք չի իմանա... Արա՛գ, արա՛գ... Մեղք է, իհարկե, բայց աստված կարդում է մեր սրտերում...): Իսկ

բազմաթիվ քաղաքային դատարկապորտները՝ ձանձրույթից մեռնելով, խելագարների ավտոմատայնությամբ, թափառում էին միշտ նույն քայլվածքով՝ վեր ու վար, վեր ու վար՝ քաղաքի գլխավոր փողոցով, որ կոչվում էր գեղեցիկ հունական անունով՝ Վիա-Աթենեա, բայց այնպես նեղ էր ու ոլորուն, ինչպես մյուս բոլոր փողոցները: Վիա-Աթենեա, Ռուպե-Աթենեա, Էմպեդոկլե... անունների փայլ, որից ավելի մռայլ էր թվում փողոցների ու շինությունների աղքատությունն ու տգեղությունը: Հույների Ակրագանտը, հռոմեացիների Ագրիգենտումը վերածվել էր մուսուլմանների Կիրկենտի, և արաբական տիրապետության կնիքը անջնջելիորեն պահպանվել էր մարդկանց հոգիներում ու սովորույթներում: Լռին թախիծ, մռայլ կասկածամտություն խանդ: Անհայտացած հին քաղաքի սրտից, Չիվիտայի պուրակից դեպի բլուրը, որտեղ հիմա խղճուկ, անբովանդակ կյանք էր վարում նոր քաղաքը, մի ժամանակ բարձրանում էին սլացիկ ու հպարտ նոճիներ, կարծես որպես մեռածների ճանապարհի պահապաններ: Հիմա այդ ծառերից շատ քչերն էին մնացել, և դրանցից մեկը՝ ամենաբարձրն ու ամենամռայլը, դեռ բարձրանում էր քաղաքի միակ լայն ու գեղեցիկ փողոցում, որ կոչվում է Պասսեջատա. դրա վրայից բացվում էր ամբողջ ծովափի հոյակապ տեսարանը՝ բլուրներ, հովիտներ, մարգագետիններ և հեռվում՝ ծովը, որ կորչում էր հորիզոնի ոլորտի անսահմանության մեջ: Այդ նոճին իր սև ուրվապատկերով վեհորեն գծագրվում էր ափի վրա, որն արդեն ստվերվել էր իրիկնային կապույտով և, թվում էր, իր մեջ է ներծծել լռին թախիծը, որով շնչում էին այդ վայրերը, որտեղ մի ժամանակ զրնգում էր կյանքը: Հիմա այստեղ մահվան թագավորությունն էր: Ջիրջենտիին, որի վերևում՝ բլրի գլխին բարձրանում էին՝ սուրբ Ջերլանդոյի հնամենի նորմանդական տաճարը, եպիսկոպոսի աթոռանիստը և սեմինարիան, հոգևորականների և ամբողջ քաղաքը թաղման ղողանջներով լցնող եկեղեցական զանգերի քաղաք էր: Առավոտից մինչև երեկո երեսուն եկեղեցիների զանգերը դանդաղ, երկար փոխեփոխ ղողանջում էին, ողբում ու կանչում աղոթքի՝ ամենուր սփռելով ինչ-որ տանջալից թախիծ: Օր չէր անցնի, որ փողոցում չհայտնվեր «Որբի հացը» ապաստարանի գորշ հագնված որբ աղջիկների թաղման թափորը: Նրանք գնում էին՝ շղարշները գլուխներին, փոքրիկ կրծքանշաններով, մոմերը ձեռքներին, դալուկ-հողագույն, կորացած, և նրանց փոքրիկ, նիհարիկ երեսներին երևում էին միայն աչքերը: Բոլորն էլ փոքր վճարով կարող էին ստանալ այդպիսի ուղեկցություն. և չէր կարելի ավելի տխուր բան պատկերացնել, քան մահվան ուրվականից ճնշված այդ երեխաները, որոնք ամեն օր անցնում էին այստեղով՝ ձեռքներին մոմեր, որ խղճուկ առկայծում էին արեգակի շողերում:

Այդպիսի մտայնության պայմաններում ո՞ւմ կարող էին մտահոգել պառլամենտական ընտրությունները: Եվ, բացի այդ, ի՞նչ օգուտ դրանցից: Առաջ էլ ոչ ոք չէր հավատում այդ բոլոր կառավարական հիմնարկներին, հիմա էլ: Կաշառակերությունը տանում էին, ինչպես անխուսափելի քրոնիկ հիվանդություն, և նրան, ով բարձրաձայն վրդովվում էր, նայում էին որպես հիմարի կամ խենթի, զրպարտչի կամ փառամոլի:

Այդ օրերին դատարկապորտները շաղակրատում էին ոչ այնքան մոտալուտ պառլամենտական ընտրությունների, որքան Ինյացիո Կապոլինոյի և Գվիդո Վերոնիկայի մենամարտի մասին:

Ռոբերտո Աուրիտիի բուռն միջամտության պատճառով այդ պատվո գործը խիստ բարդացավ: Գվիդո Վերոնիկան իսկույն ընդունեց Կապոլինոյի մարտահրավերը, բայց խնդրեց մի քանի օրով հետաձգել, որ ինքը մարտավկա գտնի: Պալերմոյից եկավ Կորրադո Սելմին՝ մի ուրիշ սինյորի ուղեկցությամբ, որը համարվում էր նշանավոր մենամարտող Ռոբերտո Աուրիտին, որը չէր կարող մենամարտել Պրեոլայի հետ, չցանկանալով, որ իր հոր հիշատակը նողկալիորեն վիրավորելու համար վրեժ լուծեն ուրիշները, պահանջում էր, որ իրեն զիջեն Կապոլինոյի հետ առաջինը մենամարտելու իրավունքը: Բայց Կապոլինոյի մարտավկաները, նաև ինքը՝ Վերոնիկան, սկսեցին բողոքել: Մարտավկաները Կապոլինոյի անունից ազնվաբար հայտարարեցին, որ դատապարտում են Պրեոլայի հոդվածը, որը նա թաքուն է անցկացրել թերթի մեջ: Իր կողմնակիցներից դատապարտված՝ վիրավորանքի իսկական հեղինակը մենամարտելու անարժան էր համարվել և, բացի այդ, արտաքսվել է Ջիրջենտիից. Աուրիտին արդեն չի կարող ուրիշ բավարարություն պահանջել, և որպեսզի

գործն ավարտվի պատշաճ կերպով, պետք է կայանա միայն մի մենամարտ՝ Վերոնիկայի և Կապոլինոյի միջև՝ հարձակման համար, որ կատարվել է Վերոնիկայի կողմից, հասարակական վայրում: Լիովին արդարացի է:

Այդքան երկար քննարկված այդ դեպքը բորբոքել էր քաղաքացիների կրքերը, որոնց մեջ հանկարծ ի հայտ եկան պատվո հարցերի բազմաթիվ խանդավառ մասնագետներ: Առանձնապես կրքերի ծայրահեղ բորբոքում առաջացրեց այնպիսի նշանավոր մարդու մասնակցությունը մենամարտին, ինչպիսին Սելմին էր, նաև մասնակցությունը Վերոնիկայի մյուս մարտավկայի՝ նշանավոր մենամարտողի, որ հանդուգն, կռվարար տեսք ուներ:

Սակայն տեղական մարտիկը՝ Ինյացիո Կապոլինոն, նույնպես գործը վստահել էր փորձված ղեկավարի՝ ոմն դ'Ամբրոզիոյի, իր կնոջ հեռավոր ազգականին, որը գերազանց տիրապետում էր սուսերին և որին չէին կարող վախեցնել ո՛չ Սելմիի հեղինակությունը և ո՛չ էլ երկրորդ մարտավկայի ամբարտավանությունը: Բայց ավա՛ղ: Ըստ էության՝ նա մենակ էր, որովհետև Կապոլինոյի երկրորդ մարտավկան միայն ծիծաղ էր շարժում. Նինի դը Վինչենտիսն էր, մի երևակայեցեք, Է՛:

Խեղճ Նինիին ստիպելով ներքաշեցին այդ գործի մեջ: Սրեր, արյուն: Իսկ չէ՞ որ նա կարծես իսկական աղջիկ լիներ, այդպիսի մի սուրբ Լյուդովիկոս՝ շուշանը ձեռքին: Նա, իհա՛րկե, ուշագնաց կլինի հակառակորդների վճռական հանդիպման ժամանակ: Այդ ի՞նչ միտք եկավ Կապոլինոյի գլուխը՝ ընտրել հենց Նինիին, կարծես ուրիշները չկային, ավելի հարմար մարդիկ: Բայց գուցե դ'Ամբրոզիոն դիտմամբ է ընտրել նրան՝ հոխորտանքով, հեգնանքով՝ ի պատասխան այն բանի, որ հակառակորդ կողմը հրավիրել է նշանավոր մենամարտողի:

Նինին դեռ չգիտեր, որ Սալվոն կտրուկ մերժել է առաջարկությունը, որ եղբոր՝ Վինչենտեի թախանձանքով արել էր մոնսինյոր Մոնտորոն: Կապոլինոն ստիպեց նրան իր վրա վերցնել երկրորդ մարտավկայի՝ Նինիին հրեշավոր թվացող պարտականությունները՝ հասկացնել տալով, որ Սալվոն լիովին հավանություն կտա դրան: Գրողը տանի, երբևիցե պետք է ժխտվի՞, թե՞ ոչ կարծիքը նրա աղջկական երկչոտության մասին, որ տարածվել էր ողջ շրջանում: Չէ՞ որ նա տղամարդ է: Պետք է իրեն տղամարդ ցույց տա: Ի վերջո նրանից պահանջում են միայն «կյանքն ու ներկայությունը»: Կյա՞նքը: Ինչո՞ւ կյանքը: Չէ՞ որ ինքը չիմենամարտելու... Դե լավ, դա այդպիսի արտահայտություն է՝ «կյանքն ու ներկայությունը»: Բարետես, նրբագեղ, ինչպես իսկական փարիզյան պճնամոլ, նա հոյակապ տեսք կունենա:

Բոլոր չորս մարտավկաները բանակցությունների և տեղի ընտրության համար առավոտյան գնացին իշխան Լաուրենտանոյի վիլլան՝ Կոլիմբետրա, որտեղ պիտի տեղի ունենար մենամարտը: Այնտեղ ոչ ոք չէր կարող խանգարել հանդիպմանը: Հաջորդ առավոտյան, ինչպես այդ մասին պայմանավորվել էին, իշխանը պետք է գնար Վալսանիա՝ հարսնացուին ներկայանալու. մենամարտը պիտի կայանար նրա գնալուց անմիջապես հետո:

Շարունակ ճեմող դատարկապորտները Պասսեջատայի ծառուղում տեսան, ինչպես Կոլիմբետրայից վերադարձան չորս մարտավկաները:

Ինյացիո Կապոլինոն սպասում էր իր մարտավկաներին՝ կուսակցության առաջնորդների հետ անցուդարձ անելով ակումբի առջևի ընդարձակ տեռասում, որը, ինչպես և ուրիշ շատերը, կոչվում էր Էմպեդոկլե:

Այդ մենամարտը հենց ընտրությունների նախօրեին ավելացրել էր համակրանքը նրա նկատմամբ և նրան շրջապատել ինչ-որ լուսապսակով: Իր ամբողջ տեսքով նա ցույց էր տալիս, թե բոլորովին չի անհանգստանում, և այդ, ի դեպ, ամենևին ոչ շինծու անհոգությունը հարուցում էր հիացմունք ու կարեկցանք: Նա արդեն սկսել էր իր նախընտրական շրջագայությունը, և հիմա նկարագրում էր այն խանդավառ ողջույնները, որոնցով նրան նախորդ օրը դիմավորել էին հարևան քաղաքում՝ Ֆավարայում: Կապոլինոն ուզում էր այսօր գնալ մյուս փոքրիկ քաղաքը՝ Սիկուլիանա, որտեղ ընտրողներն անհամբեր սպասում էին նրան, բայց դ'Ամբրոզիոն, որը տվյալ պահին նրա տերն էր, նրա բռնապետը, կտրուկ արգելեց այդ՝ վախենալով, որ նա հանկարծ կարող է սաստիկ հուզվել:

Կապոլինոն անհարմար էր զգում սիկուլիանացի բարեկամների առաջ: Նրանք էլ էին նախապատրաստվել մեծ տոնի: Հաղթանակն ապահովված էր՝ չնայած իշխանության սպառնալիքներին ու բռնությանը, ոստիկանապետի հրամաններին ու ոստիկանական հետապնդումներին: Ռոբերտոն, թերևս մի քան ձայնի առավելությամբ, կարող է անցնել միայն Կոմիտինի փոքրիկ քաղաքում, այնտեղ Պոմպեո Ագրոն շատ բարեկամներ ուներ:

Կապոլինոն այդ ամենը հաղորդեց՝ լիովին անկեղծորեն խղճալով իր հակառակորդին, և այդ խղճահարությունը նույնքան անկեղծորեն բաժանում էին նրա ունկնդիրները: Քանի որ բոլորը գիտեին, որ Աուրիտին երբեք օգուտներ չի քաղել իր լիբերալ հայացքներից, որոնց համար մարտնչել է դեռ տակավին պատանի, և ոչ էլ այն հավատարմությունից, որ պահպանել է մշտապես. իհա՛րկե, հիմա էլ շահի համար չէր եկել՝ խնդրելու հայրենակիցների աջակցությունը. մի կողմից՝ նրան համոզել էին, թե դա իր պարտքն է, մյուս կողմից՝ հավատացրել էին նրան, թե իր համար բավական է խնդրել հայրենակիցներին՝ իր ազնվության հանդեպ այդ հարգանքի դրսևորման մասին: Ասես, ոչ ոք չէր էլ մերժում նրան հարգանքը, և բոլորը նույնիսկ տրամադրված էին պատշաճը հատուցելու նրա արժանիքներին: Բայց նրան պատգամավոր դարձնել՝ ո՛չ, ոչ մի դեպքում. նա չի եղել և չի կարող պատգամավոր լինել, և դրա ամենավառ ապացույցը հենց իր պատրանքների միամտությունն է:

Երբ մարտավկաները վերադարձան, Կապոլինոն նրանց հետ առանձնացավ ակումբի մեծ հյուրասենյակում:

Թվում էր, թե Նինի դը Վինչենտիսը գտնվում է մի տեսակ շշմած վիճակում. նրա դեմքը ծածկվել էր բծերով, կարծես ինչ-որ մեկը կսմթել էր. աչքերը, որ հառած էին մի կետի, փայլում էին, բայց, թվում էր, ոչինչ չէին տեսնում: Դ'Ամբրոզիոն, որ բարձրահասակ էր ու շիկահեր, կարճատես, անհանգիստ, ուսերի մեջ քաշված գլխով ու ձիու դեմքով, հզոր իրանով՝ չորուկ, երկար ոտքերի վրա, խոսում էր կցկտուր՝ կուլ տալով բառերը: Նա բռիներից բռի էր, բայց բոլորը հանդուրժում էին նրա բռիությունը՝ ոչ միայն վախենալով նրա կռվազանությունից, այլև այն պատճառով, որ հաճախ ծիծաղ էր շարժում: Նա հայհոյանքներ էր շաղ տալիս, բայց դրանց ամբողջ լեղին լուծվում էր ծիծաղի մեջ, որով ընդունվում էին դրանք. նա կարող էր բոլորին հայհոյել, բոլորի երեսներին շպրտել ամենակոպիտ վիրավորանքներ, բայց ոչ ոք իրեն վիրավորված կամ նեղացած չէր զգում:

— Բարի եղիր, ասա իմ զարմուհի Նիկոլետտային, որ նա այս երեկո քեզ հանգիստ թողնի, որովհետև դու պետք է մարտնչես հանուն սուրբ դևերի, ուզում էի ասել՝ հանուն սուրբ իդեալների: Դու արդեն ջահել չես, Նյացիո, պետք է դա հասկանաս: Հապա պարզիր ձեռքդ: Ուզում եմ տեսնել չի՞ դողում:

Կապոլինոն ժպտալով պարզեց ձեռքը:

— Լավ է,— շարունակեց դ'Ամբրոզիոն:— Մենք գնդակներ կմխենք նրա մեջ, թանկագինս: Լուրջ: Սկզբում ատրճանակներով: Երեք կրակոցների փոխանակում, տարածությունը՝ քսանհինգ քայլ: (Խորհուրդ եմ տալիս, Նինի, կրակոցի ժամանակ ականջներդ չփակես): Հետո՝ սրերով: Ինչ վերաբերում է սրերին, դու կատարելապես զինված ես, բայց ատրճանակի համար, իմ Նյացիս, դու ծեր ես, և ես վախենում եմ, որ... Բավակա՛ն է: Ինձ հետ գնանք մեր տուն: Այնտեղ բակ կա: Ուզում եմ տեսնել, թե դու ինչպես ես կրակում:

Կապոլինոն փորձեց առարկել, բայց ապարդյուն. նա պետք է գնա ստուգման, և Նինին՝ նույնպես, որին ինչպես հարկն է պետք է սովորեցնել ականջները չփակել կրակոցների ժամանակ:

Նրանք գնացին զառիվեր Լինե փողոցով, որտեղ խռնվել էր ժողովուրդը, ինչպես նրանց սկզբում թվաց՝ փողոցային երգչի շուրջը: Նման բան չկար: Այդ ակնորսներին էին, որ նոր էին վերադարձել ծովից, իջել էին իրենց որսով բարձած ջորիներից և բարձրաձայն, ուրախ ծոր տալով, իրենց թարմ ապրանքն էին առաջարկում անցորդներին: Երեք բարեկամները շարունակեցին բարձրանալ Բակ-Բակ փողոցով, որ ամեն քայլափոխում ավելի զառիվեր էր

դառնում, մինչև հասան քաղաքի ամենաբարձր մասում գտնվող հյուսիսային դարպասներին, որոնց անունը՝ նույնպես արաբերեն Bab-er-vjiah (Հողմերի դարպաս) դարձել էր Բիբերիա:

Դ'Ամբրոզիոն բնակվում էր այնտեղ՝ մի հին տան մեջ, որը բալյո (մեծ, սալարկած բակ) ուներ. բակի մեջտեղում ջրի գետնապահեստն էր: Նա ապրում էր իր շատ պառավ մոր հետ, որին պաշտում էր գրեթե ավելի, քան բոլոր սրբերին: Խեղճ պառավը բոլորովին խուլ էր և ապրում էր մշտական վախի, մշտական տագնապի մեջ իր կրակոտ որդու համար: Նա շարունակ նստում էր պատուհանի մոտ՝ գուլպան մշտապես փաթաթած վզին և նայում էր ապակու միջով: Նա տեսնում էր բլուրը, որի վրա փռված էր Ջիրջենտին, որը զառիվար լանջով իջնում էր Վալ-Սոլլանո՝ հովիտը, որ կտրտված էր փոշոտ ճանապարհներով: Նրա առաջ, գնալով դեպի հեռվի խորքը, փռված էր ամբողջ լեռնավայրը: Աջից բավական մոտիկ բարձրանում էր Կալտաֆարաչա լեռը, ավելի հեռվում, խորքում՝ Սան-Բենեդետտոն. այստեղից տարածվում էր Կոնսոլիդա դաշտավայրը, իսկ ավելի հեռվում, արևմուտքում՝ Կարապեցցա լեռից և փոքր-ինչ մոտիկ բարձրացող Մոնտապերտո լեռից սկսվում էր Կլերիչի հարթավայրը: Ուղիղ դիմացը՝ ավելի ցած, կրաքարե Սերրա-Ֆերլուչչան լայն բացել էր ծծմբահանքերի փչակավոր երախները և ամենքին ի ցույց դրել հանգած կրի չորացած կույտերը: Բոլորովին խորքում, գավառի սահմանի մոտ բարձրանում էր վեհատեսիլ ու մշուշապատ Մոնտե-Ջեմինին՝ Սիցիլիայի ամենաբարձր լեռներից մեկը: Երկաթ պարունակող այդ հողի գորշ, անպտուղ, խորդուբորդ մակերեսին հազվադեպ պատահում էին չորացած ծառեր:

Դ'Ամբրոզիոն երկու բարեկամներին առաջարկեց սպասել բակում, իսկ ինքը վերև բարձրացավ և իսկույն վերադարձավ՝ բերելով երկու խոշոր ատրճանակներ՝ այն տիպի, որով զինված է թեթև հեծելազորը, և փամփուշտների արկղը. նա դատարկ ախոռի մոտ պատին գծեց չորս կոտրատված գծեր՝ մարդու կերպարանք՝ Գվիդո Վերոնիկայի. հետո պատից չափեց քսանհինգ քայլ:

— Այստեղ, Նյացիո: Ես երեք անգամ ծափ կզարկեմ: Երրորդի ժամանակ կրակիր: Պատրաստվե՛լ:

Կապոլինոն այնքան էլ հաճույքով չհամաձայնեց այդ փորձին՝ աշխատելով ամեն ինչ վերածել կատակի: Բայց երբ նրա առաջ պատի վրա երևաց կորացած, անշարժ կերպարանքը, որը, թվում էր, սպասում է նրա կրակոցին, իսկ վաղը կիջնի պատից և կշարժվի իրեն ընդառաջ՝ մի ուրիշ ատրճանակի փողը ուղղած իրեն, նա՝ սառած ժպիտը շրթունքներին, բարձրացրեց հոնքերը և, խնամքով նշան բռնելով, կրակեց:

Դ'Ամբրոզիոն հայտարարեց, որ ինքը լիովին գոհ է փորձից, հետո ծիծաղի համար վճռեց Նինիին էլ ստիպել կրակել նշանակետին: Նինին համառում էր ջորու նման: Բայց դ'Ամբրոզիոն այնքան խոսեց, այնքան պնդեց, որ ստիպեց կրակել, հետո իսկույն էլ պոռթկաց նրա բարձր ծիծաղը:

— Ազնիվ խոսք, նա փակեց երկու աչքերն է, երկու աչքերն էլ: Մի բաժակ ջուր: Մի բաժակ ջուր:

Եվ դ'Ամբրոզիոն վազեց, որ բռնի նրան, կարծես Նինին ուր որ է պիտի ուշաթափվեր, և սկսեց իր ասածն անել տալ՝ շարունակելով այդ կատակը: Հետո մեծ խանդավառությամբ սկսեց խոսել Կորրադո Սելմիի մասին.

— Համակրելի մարդ է: Բոլորովին երիտասարդ է թվում, գիտե՞ս: Բայց չէ՛ որ նա եղել է ապրիլի չորսի գործում, լսել է Գանչիի զանգերը... Նա պետք է առնվազն հիսուն տարեկան լինի... Բայց երևում է երեսունհինգ, ամենաշատը՝ երեսունութ... Շատ խելոք է, շատ սիրալիր, առանց նախապաշարումների: Ասում են, թե նա ավելի շատ պարտքեր ունի, քան մազեր: Ես պատկերացնում եմ... Եվ... աքլորն է, օ՛: Խելքը թռցնում է հավերի համար: Նորին գերազանցություն պարոն մինիստր դ'Ատրին, թվում է, ինչ-որ բան գիտի այդ մասին:

Պայմանավորվելով հաջորդ առավոտվա հանդիպման մասին, Կապոլինոն գնաց Նինի դը Վինչենտիսի հետ:

— Ինձանից ողջույն Նիկոլետտային: Եվ խելամիտ եղեք,— նրանց ետևից գոռաց դ'Ամբրոզիոն բակի դռան մոտ կանգնած ու խողովակաձև արած ձեռքերը բերանին դրած. հետո, կարծես կատաղած շուն տեսնելով, ավելացրեց:— Մի կողմ քաշվի՛ր, Նյացիո, մի կողմ քաշվի՛ր:

Կապոլինոն ու Նինի դը Վինչենտիսը ծիծաղելով շրջվեցին և իրենց ետևում տեսան Նոչե Պինյային՝ Պրոպագանդային, որ իջնում էր նույն փողոցով: Պրոպագանդան էլ զայրացած շրջվեց դ'Ամբրոզիոյի կողմը, լռեց խելացնորությամբ փայլող աչքերը և, բարձրացնելով ձեռքը, գոռաց նրան մի բառ, որ համարում էր ամենավիրավորական հայհոյանքը.

— Տգե՛տ:

Պրոպագանդան հիմա ավելի, քան երբևէ, իրավունք ուներ այդ բառով նշավակելու իր բոլոր թշնամիներին՝ բուրժուաներին, հոգևորականներին, տիտղոսավոր ազնվականներին. նրան հաջողվել էր կազմակերպել միությունը՝ չնայած պրեֆեկտուրային ու մունիցիպալիտետին, ոստիկանությանն ու զինվորական պարետությանը:

Այո՛, սինյորներ, նույնիսկ Ջիրջենտիում՝ ագռավների թաղման զանգերի քաղաքում, մենք ամբողջ պատշաճ հանդիսակարգով միություն կազմակերպեցինք:

Նոչեն նայեց ցած՝ հպարտությունից փքվելով, կարծես Սան-Միքելե թաղամասի այդ հին ետնախորշերը, աղքատության անձավները, այդ նեղլիկ, ոլորուն փողոցները՝ կեղտոտ, փտող թափթփուկներից գարշահոտ, ամբողջովին խանդակներով ծածկված, հիմա գտնվում էին իր հովանավորության տակ, և նրա աչքերը շողացին: Հիմա նա սերտ կապ էր զգում ոչ այնքան մարդկանց հետ, որքան այդ ճյուղերի անհարթ ու սևացած քարե որմածքի հետ, գետաքարերով վատ սալարկած, զառիվեր ու գարշահոտ փոքրիկ փողոցների հետ և մտովի ասում էր նրանց իր անփոփոխ «բաիբաին»: Նա առաջ էլ էր պայքարում, հիմա էլ գլխավորապես հայրենի քաղաքի պատվի համար, որ չկարողանան ասել, թե միայն Ջիրջենտին է մնացել համր ու անկյանք՝ այն ժամանակ, երբ ամբողջ կղզին փոթորկվում է: Շուտով, շուտով այս տներում, այս փողոցներում էլ կեռա նոր կյանքը:

Ինչքան շատ հարկ եղավ խոսել, ինչքան ջանքեր գործ դնել՝ ուրիշներին համոզելու, որ պայքարեն իրենց սեփական բարեկեցության համար. և նա ստիպված եղավ այնքան աշխատանք թափել, այնքան ուժեր ծախսել այդ համոզումների վրա, որ, թերևս, կարելի էր կասկածել, թե ինքն էլ ինչ-որ օգուտի հույս ունի:

Ո՞վ նրան ստիպեց այդ բանն անել: Ինչպե՞ս թե՝ ով: Նրան դուրս նետեցին, վտարեցին հասարակությունից, նա ավելորդ դարձավ նույնիսկ սեփական տանը: Նրան և՛ հասկացնել տվեցին, և՛ ուղղակի ասացին՝ մերթ բարեկամաբար, մերթ չարությամբ, որ նա գնա կորչի, որ նրա կարիքը ոչ ոք չունի: Սկզբում նրան քամեցին լիմոնի նման, պատվազրկեցին նրա աղջկան կամ, ինչպես ինքն էր ասում՝ «ցեխ քսեցին իր ճերմակ մազերին», զրպարտեցին ու թքակոծեցին, իսկ հիմա դեռ ուզում էին շպրտել աղբափոսը: Դե ո՛չ: Դա չի անցնի: Պինյան ոչ միայն ավելորդ չի եղել, նա կդառնա անհրաժեշտ, գրողը տանի, անհրաժեշտ՝ ի հեճուկս ամենքի: Եվ շուտով դրանք՝ այդ տգետները, որ չէին ուզում ճանաչել նրան, կհամոզվեն դրանում: Եթե ուրիշներն աշխատել են, որ պահեն իրեն, ապա ինքն օգտվել է նրանց աշխատանքից միայն հանուն այն բանի, որ աշխատի բոլորի համար, և, բացի դրանից, նրա ստացած այդ օգնությունը չնչին էր ու հիմնականում ծախսվում էր կենսական մանր պահանջմունքները բավարարելու վրա՝ այն դեպքում, երբ այն օգնությունը, որ ինքն էր ցույց տալիս ուրիշներին, գործը, որ ինքն էր անում, մեծ գործ էր և զգալիորեն ավելի թանկ արժեր: Ի՞նչ է, ձեր կարծիքով դա հե՞շտ է ու հասարա՞կ: Համատարած վարդեր, ճիշտ չէ՞: Առավոտից երեկո դեսուդեն նետվել, այսուայնտեղ վազել այդ անիծյալ ոտքերով, որոնցով նրան օժտել էր աստված, կորցնել ձայնը, շնչասպառ լինել՝ թող ամեն մեկը պատկերացնի, թե դա ինչ հաճույք է:

Պաշարված ամրոցի նման, որն իր մեջ գտնվող բոլոր առարկաներից զենքեր է ստեղծում և ամրություններ, որ դիմագրավի արտաքին գրոհներին՝ մնալով ներքուստ դատարկ, Նոչի

Պինյան բոլոր կողմերից իրեն շրջապատել էր իր դժբախտություններով, ինչպես պաշտպանության զենքերով՝ ընդդեմ նրանց, ովքեր կատաղաբար ձգտում էին զրկել նրան ամեն տեսակ հարգանքից: Որքան շատ էր նա խոսում, այնքան զորանում էին նրա կիրքն ու համոզվածությունը: Բայց մոլուցքը, որով նա շարունակ կրկնում էր միևնույն բանը՝ միևնույն ծեծված արտահայտություններով, հասցրել էր այն բանին, որ այդ ամենը քարացել էր ինչ-որ ձևում և վաղուց կորցրել ազդեցության ուժը. այդ ամենը, կարելի է ասել, նրա բերանը դարձրել էին կրակե խառնարան, որը, իդեպ, ոչինչ դուրս չէր նետում՝ բացի դատարկ կրակոցներից ու ծխից: Նրա ներսում խոր բացված էր դատարկությունը: Նա մարդ էր, որը խոսում էր, և ուրիշ ոչինչ:

Բայց միությունը նա, այնուամենայնիվ, կազմակերպեց: Կարելի էր, իհարկե, կասկածել, որ դրա անդամները միայն բանվորներ են: Ինքը՝ Պրոպագանդան էլ հազիվ թե համարձակվեր պնդել, որ նույնիսկ ոչ բանվորները, որ գրվել էին միության մեջ, հիմա շատ էին: Բայց միայն սկիզբն է դժվար, ահա այսպես աստիճանաբար է արվում ամեն ինչ: Իհա՛րկե, լավ որս (մեկ օրվա ընթացքում հավաքագրելով, միության մեջ ընդունել միանգամից մի քանի հազար մարդ) կարող էր նրան բաժին ընկնել միայն Պորտո-Էմպեդոկլեում՝ «ծովի մարդկանց» շրջանում՝ սայլապանների, նավի փոքրավորների, բեռնողների, կշռավարների, պահեստների բանվորների բեռնակիրների մեջ: Բայց Պորտո-Էմպեդոկլեում... Տե՛ր իմ աստված: Նա՝ Նոչե Պինյան, չի կարող լսել անգամ այդ անունը. հիշողությունն այն մասին, թե ինքն այնտեղ ինչպիսի ծաղրուծանակի ենթարկվեց, մնացել էր նրա սրտում՝ որպես չապաքինվող վերք, և երբ թեկուզ մի քիչ դիպչում էին դրան, նա չէր կարող չգոռալ ամբողջ ձայնով: Շան որդիներ, քաղաքակիրթ հասարակության տականքներ: Մի երևակայեցեք, Է՛, շարունակ ապրել հենց ծովի կողքին՝ շատ հաճելի բան է. ծո՛վ, անսահմանություն... Իսկ նրանք տուն են շինել հենց ծովի ափին և սպասում են հեռավոր երկրների նավերին, այսինքն՝ իրենց կյանքը հանձնել են ուրիշ մարդկանց ողորմածությանը. մի երևակայեցեք, Է՛, համամարդկային եղբայրության թեկուզ ամենաչնչին ոգի լիներ: Նրանց առջև անընդգրկելի ազատ տարածություն է, բայց նրանք կարողացել են տեսնել միայն ափը և նույնիսկ՝ միայն ափի կեղտերը, իրենց սեփական արտաթորությունները, որ արտահոսում են կեղտաջրերի բաց խողովակներով: Այս ծովը, օ՛, այս ծովը պետք է զայրույթից ու վրդովմունքից ծառս լիներ, ափ շպրտեր ալիքները և ողողեր, կուլ տար այս հողը, որի վրա ապրում են այդպիսի սրիկաներ:

Համբերություն: Այստեղ՝ Ջիրջենտիում պետք է աշխատել, ինչպես աշխատում են մրջյունները: Նա արդեն բանակցություններ էր սկսել տեղական համքարությունների, որոշ ղեկավարների հետ. բայց ձեռքսեղմումով միացած այդ ձեռքերը՝ փոխադարձ օգնության ընկերության խորհրդանիշը, երկու դաստակներ են միայն՝ առանց արյան, այսինքն՝ առանց քաղաքական գունավորման, կամ էլ ձեռքերը՝ սրբազան համրիչով ու ձիթենու ոստով, որևէ կաթոլիկական ակումբի խորհրդանիշները, ընդունակ չեն բացվելու և եղբայրաբար պարզվելու ուրիշ համքարությունների և ուրիշ արհեստների բանվորներին, ինչպես այդ եղել է Կատանիայում և Պալերմոյում, որպեսզի կազմեն ավելի լայն շրջան՝ բոլոր պրոլետարական ուժերի միավորում, իր տեսակի Միությունների միություն: Լուկա Լիցիոն արդեն գրել էր Հռոմ՝ Լանդո Լաուրենտանոյին (նա իրենց հետ է, փա՛ռք քեզ, աստված, թեև իշխան է, բայց սոցիալիստ է), որ նա գործի դրդի բոլոր կասկածողներին ու տատանվողներին, նրա մի խոսքը, նրա մի նշանը բավական կլինի: Պատասխանը, որին սպասում էին օրեցօր, ուշանում էր, գուցե այն պատճառով, որ երիտասարդ իշխանը վշտացած էր հոր խեղկատակային ամուսնության լուրից: Իսկ նա՝ Նոչե Պինյան, իր կողմից ժամանակ չէր կորցնում և տեղի չէր տալիս դժվարությունների առաջ: Նա հասկանում էր, որ միամիտ բան կլինի չափազանց մեծ հույսեր կապել համքարային միավորումների հետ. այնպիսի մեռած երկրամասում, ինչպիսին Ջիրջենտին էր, որը չուներ ոչ մի արդյունաբերություն, որտեղ արդեն շատ տարիներ չէին կառուցվել նոր տներ, որտեղ ամեն ինչ դանդաղ ամայանում էր ու ավերվում, և մարդիկ ոչ միայն չէին ցանկանում ինչ-որ թանկ նստող զվարճություններ, այլև ջանում էին կրճատել նույնիսկ ամենահամեստ պահանջմունքները, որմնադիրներն ու դարբինները, դերձակներն ու գուլպայագործները չափազանց մեծ կախում ունեին սակավաթիվ, այսպես կոչված, պարոններից և նրանց թաքուն դժգոհությունը, իհա՛րկե, չէր

կարող բավարար արիություն ձեռք բերել հարկ եղած դեպքում իրեն բացահայտ դրսևորելու համար: Վաղը նրանք բոլորը Ֆլամինիո Սալվոյի նշանով կքվեարկեն այդ խարդախ Կապոլինոյի օգտին: Բայց, այդ ամենով հանդերձ, մտնելով կուսակցության մեջ, դառնալով նրա անդամները, բանվորները կարող էին օրինակ տալ գյուղացիներին. հարկավոր է քարշ տալ դրանց իրենց ետևից, այդպես է: Ոչխարի նման քարշ տալ դրանց՝ այդ դժբախտներին: ՉԷ՛ որ այդ ոչխարները, այնուամենայնիվ, լավ գիտեին գիշատիչ ձեռքերի դաժանությունը, որ խուզում ու կթում էին նրանց, և ձեռք բերելով իրենց ուժերի գիտակցությունը, թեկուզ մի քիչ համակվելով տխրահռչակ «իրենց ուժերի գիտակցությամբ», նրանք կարող էին մի ակնթարթում գայլեր դառնալ: Նրանց մեծ մասը ցրված էր գյուղերում, և միայն կիրակի օրերին էին նրանք բարձրանում քաղաք, որ փռված էր բարձր բլրի վրա: Դրանցից նրանք, ովքեր կոչվում էին գարցոնի և այնքան էլ չէին բթացել աղքատությունից, քանի որ մի քիչ աշխատավարձ էին ստանում ամբողջ տարվա ընթացքում, շատ էին վախենում ամեն տեսակ կառավարիչներից, հոգաբարձուներից ու վերակացուներից, տերերի կատաղի բանտապաններից: Մնում էին միայն օրավարձու բանվորները, որոնք տասնվեցժամյա աշխատանքից հետո (եթե բախտ էր վիճակվում աշխատանք գտնել) երեկոյան վերադառնում էին քաղաք՝ հողուրագներն ուսերին, հոգնությունից կորացած մեջքերով և տասնհինգ սոլդի ամեն մեկի գրպանում (ասենք, երբեմն էլ առանց դրա): Այդ մարդկանց վրա էր հույս դրել Նոչա Պինյան. նրանք առավել դյուրաթեք էին. բայց չէ որ դա կավ էր, կոշտացած կավ, որի մեջ աստված կամ չէր ներշնչել կյանքի կայծերը, կամ էլ այդ կայծերն արդեն վաղուց մարել էր աղքատությունը: Այդ արարածները կարող էին միայն խղճահարություն հարուցել ու զարմանք, եթե բացեին իրենց աչքերը, որ նայեին աշխարհին կամ էլ բացեին շրթունքները, որ ինչ-որ բան ասեին:

Նոչե Պինյան իր տան կողքին, Պիանո-դի-Գամեց հրապարակի վրա վարձել էր մակարոնե ապրանքների ֆաբրիկայի մեծ, լքված պահեստը, որը կարող էր տեղավորել հինգ հարյուր մարդուց ավելի: Այդ խոնավ ու խավար պահեստում նույնիսկ ցերեկը առանց երեք-չորս մոմերի ոչինչ չէր երևում, իսկ մոմերի լույսի տակ այն՝ վերևից կախված՝ եկեղեցու բեմի կամկայե հին ծածկոցներով, գերեզմանոցային մատուռ էր թվում: Մի ժամանակ այդ ծածկոցներով հանդիսավոր տոների օրերին զարդարում էին Սան Պյետրո եկեղեցին, որտեղ Նոչե Պինյան տիրացու էր. նա դրանք նվեր էր ստացել հայր-բենեֆիցիումից , երբ եկեղեցու համար նորերը պատրաստեցին. և այդ գանձերը, որ նրա համար հիմա բնավ էլ սրբազան չէին, նա թաքցրել էր հին սնդուկում: Հիմա դրանց վրա գրված էին տասը լոզունգներ՝ հինգը մի կողմից և հինգը՝ մյուս, կուսակցության նվիրական լոզունգները, և, Պինյայի տեսակետից, դրանք հոյակապ տեսք ունեին, ինչ էլ որ ասեր Լուկա Լիցիոն: Բացի այդ, նա ենթադրում էր, որ միության շենքի այդ փոքր-ինչ եկեղեցական կահավորումը կգրավի գյուղացիներին: Նախագահության սեղանին նա նույնիսկ խաչելություն էր դրել: Սեղանի ետևում կախված էր կարմիր դրոշը, որ կարել էր նրա դուստր Ռիտան՝ Լուկայի ընկերուհին: Լուկան առավոտից երեկո գտնվում էր այդտեղ և ուսումնասիրում էր Մարքսին (ինչպես Պինյան էր ասում՝ «Մարկիսին»), նշումներ էր անում, նամակագրություն ունենում մյուս գավառների միությունների նախագահների հետ և նրանց հետ միասին՝ ամբողջ կղզու հետ, և՛ Միլանի, և՛ Հռոմի: Ոմանք, անցնելով միության դարպասների մոտով, կարող էին մտածել, թե Լուկան զբաղված է բացառապես քիթը քչփորելով. բայց երբ մարդը ինքնամոռաց կերպով խորասուզվել է սեփական մտքերի մեջ, քթի մեջ խրած մատը ոչինչ չի նշանակում, ի՞նչ իմանաս երբ և որտեղ կարող են դրսևորվել վատ սովորությունները: Լուկան անգիտակցաբար տուրք էր տալիս դրանց և այդպիսի պահերին չէր լսում նույնիսկ որոտաձայն արտասանությունը հինգ եղբայրների, որոնք կրքոտ կերպով սիրում էին ճառախոսել և, ճշմարիտն ասած, իսկական աստծո պատիժներ էին: Բայց չէ՛ որ չի կարելի սառեցնել պատանեկան խանդավառությունը: Այդ հինգը տեխնիկական ուսումնարանի ուսանողներ էին և առաջինների թվում շտապեցին գրվել կուսակցության մեջ՝ Ռոկկո Վենտուրան, որն այդ տարի ստացել էր հաշվապահի դիպլոմ, Մոնդինո Միչչիկեն, Բեռնարդո Ռադդուզան, Տոտտո Լիկազին և Էմմանուելե Գարոֆալոն. Նրանք Լուկային օգնում էին նրա նամակագրություններում: Նրանք էլ գտան նաև «ցրիչ», ոմն Պիսպիզայի, որն իր վրա վերցրեց նաև գաղտնի գործակալի պարտականությունները, քանի որ ամբողջ օրերով թրև

էր գալիս ոստիկանական վարչության աշխատողների մեջ: Կուսակցության քառասուն անդամները, որ շուտով դառնալու էին չորս հարյուր, իսկ գուցեև չորս հազար, արդեն ընտրել էին իրենց դեկուրիոններին՝ ուսի վրայով գցած հպարտ, կարմիր ժապավեններով: Կանխատեսելով նախագահի, այսինքն՝ Լուկա Լիցիոյի հնարավոր ձերբակալությունը, ընտրված էր գաղտնի նախագահ Ռոկկո Վենտուրան, քանի որ և՛ նա՝ Պինյան, և՛ Լիցիոն միասին կանչվել էին կավալեր Ֆրանկոյի ոստիկանության կոմիսարի կողմից ad audiendum verbum : Ո՛ւֆ: Շատ սիրալիր, շիկահեր, ժպտուն կավալեր Ֆրանկոն՝ գեղեցիկ, թախծագորով աչքերը կկոցելով կամ էլ սպիտակ, գրեթե կանացի ձեռքերով շոյելով ոսկեգույն, երկճյուղ մորուքը, մի փոքրիկ ճառ արտասանեց, որը Պինյան շարունակ կրկնում էր բոլորին՝ նմանակելով նրա շարժուձևերն ու ձայնը: Կարմիր գույնը՝ առանձնապես կարմիր դրոշակները և կարմիր ֆասցիաները վիրավորում էին սինյոր կոմիսարին: Կարմիր գույնից ոստիկանության, ինչպես և ցուլերի աչքերը մթնում էին: Բայց կավալեր Ֆրանկոն ցասումով չլցվեց, բոլորովին ընդհակառակը. նա կամեցավ իմանալ, թե ինչո՞ւ հենց կարմիր. չէ որ կան նաև ուրիշ գեղեցիկ գույներ: Նա ցանկացավ իմանալ ևս մի բան. ինչո՞ւ այդ երկուսը՝ Լիցիոն ու Պինյան, սկսեցին զբաղվել այդ գործով: Նրանք ի՞նչ էին սպասում: Ինչի՞ վրա էին հույս դրել: Մունիցիպալիտետում պաշտո՞ն ստանալու, թե՞ գուցե ավելի բարձր՝ պառլամենտում: Նման բան չի լինի. ահա թե ինչ: Ուրեմն՝ ինչո՞ւ: Մերձավորի հանդեպ ունեցած անշահախնդիր կարեկցանքի՞ց: Մի երևակայեցեք, Է՛: Եվ նրանք համոզվա՞ծ են, որ ծառայություն են մատուցում ժողովրդին՝ բարձրացնելով նրան այն մակարդակից, որի վրա հիմա գտնվում է: Նա, ով ապրում է խավարում, միջոցներ չի ծախսում լուսավորության վրա, իսկ լույսը թանկ արժե, և նրա տակ տեսնում ես այն, ինչ առաջ չէր երևում. բացի այդ, մարդիկ ինչքան շատ են տեսնում, այնքան շատ են ցանկանում: Այսպիսով, ո՞րն է իսկական հարստությունը, իսկական երջանկությունը: Այն, որ ունենաս քիչ պահանջմունքներ: Եվ ուրեմն... ուրեմն... Ընդհանուր առմամբ՝ փիլիսոփայական դատողություններ, իսկ եզրակացությունն այս էր.

«Թանկագին սինյորներ, ես ձեզ չեմ ձերբակալի, նույնիսկ եթե դուք այդ ցանկանաք: Դուք ասում եք, որ անպայման ընդհարում կլինի, եթե չբարելավեն ձեր խնամակալության տակ գտնվողների կյանքի պայմանները: Լավ: Ես ձեզ խնդրում եմ հիշեք կժի մասին, որը գնում է ջրի... առայժմ... Եվ էլ ոչինչ չեմ ավելացնի»:

Կավալեր Ֆրանկոյին փոքր-ինչ սրտնեղություն էր պատճառում և վիրավորում Լուկայի լռությունը. արտասանելով իր ճառը, նա շարունակ դիմում էր Լուկային և դժվարությամբ էր թաքցնում դժգոհությունը՝ պատասխաններ ստանալով միայն Պինյայից: Բայց կարո՞ղ էր Լուկան բացատրել իր լռության պատճառը: Խե՜ղճ Լուկա, ի՞նչ տանջանք էր: Նույնիսկ կուրությունը նրա համար ավելի թեթև կլիներ: Նա բնածին հռետոր էր, որ ստեղծված էր ամբոխին համոզելու համար, տիպական հասարակական գործիչ, որ ամբողջովին նվիրված էր ուրիշների շահերին և ոչինչ չէր պահանջում իր համար, իսկ նրա լեզուն կարծես կնքված էր ճակատագրի խեղկատակային խաղով: Նա գրում էր, զայրույթը թափում գրածի մեջ՝ գրչից կրակ ժայթքելով, դժոխային բոցի կայծեր. հետո տանջվում էր թշվառը, կրծոտում էր ձեռքերը, բառաչում, երբ լսում էր, թե ինչպես են կարդում իր խոսքերը՝ ոչ ճիշտ տոնով, առանց անհրաժեշտ ոգևորության, առանց այն կրակի, որ ինքը վառել էր դրանց մեջ, երբ գրում էր: Նա ոչ ոքից գոհ չէր, նույնիսկ Չելսինայից, որը Պինյայի աղջիկների մեջ միակն էր, որ ամբողջապես այրվում էր նոր գաղափարներով: Ռիտան... այո, քիչ թե շատ, բայց մինչև այն ժամանակ, երբ երեխա ունեցավ: Սակայն ի՞նչ է Ռիտան Չելսինայի կողքին: Եվս մի փուշ, որի պատճառով արյուն էր ծորում Նոչե Պինյայի սրտից: Նա չկարողացավ համալսարան ուղարկել այդ աղջկան, որը պատվո դիպլոմով ավարտեց տեխնիկական ուսումնարանը, ապշեցնելով բոլորին՝ դիրեկցիային, դասատուներին, ընկերներին: Այդքան հիմարների՝ հարուստ սինյորների երեխաների առաջ բացվեց հարթ ճանապարհ, իսկ Չելսինայի համար փակված են բոլոր ուղիները: Չելսինան դատապարտված է բորբոսնելու այստեղ՝ տգետների այս ամբողջությամբ փտած երկրամասում: Ահա սոցիալական արդարությունը: Այնինչ այսօր երեկոյան՝ ընտրությունների նախօրյակին, պետք է կայանա Չելսինայի առաջին հրապարակային ելույթը. նա պետք է զեկուցում կարդա միության

շենքում: Այդ հանդիսավոր իրադարձության պատճառով Նոչե Պինյան վաղ առավոտից ետուառաջ էր վազվզում:

Աթոռները չէին բավականացնում:

Եթե միության ամեն մի անդամ իր հետ բերեր մի աթոռ կամ աթոռակ և թողներ շենքում... Նոչեն հիմա նույնիսկ չէր պահանջում, որ բավարար ճշտությամբ վճարեին շաբաթական չնչին անդամավճարը: Բայց գոնե մեկական աթոռ թողնեին, աստված իմ, չէ՞ որ հենց իրենց համար է: Բայց ո՛չ: Ամեն տեսակի արդար և անարդար միջոցներով նրան հաջողվեց ձեռք բերել քսան հատ: Եվ այդ ժամանակ հիշեց Սան-Պյետրո եկեղեցու բոլոր աթոռները, որ մի ժամանակ պահպանում էր. հիշեց, թե ամեն կիրակնօրյա երեկո ինչքան շատ աթոռներ էին բերում կիսաշրջանաձև շարում Պասսեջատա փողոցի վերջում, որտեղ նվագում էր զինվորական նվագախումբը: Վարձու աթոռներ եկեղեցում՝ կեղծ բարեպաշտների համար, Պասսեջատայում՝ պչրուհիների համար, իսկ միության շենքում՝ ոչինչ: Ասենք, մեղավոր են իրենք՝ միության անդամները, ուրեմն՝ ավելի վատ նրանց համար: Թող կանգնեն:

Նա արդեն գնում էր տուն, երբ հանկարծ լսեց, որ մեկը կամացուկ կանչում է իրեն, ինչ-որ մարդ, որ փաթաթվել էր թիկնոցի մեջ և թաքնվում էր հրապարակ ելնող նրբանցքներից մեկում:

— Սո՛ւս, սո՛ւմ...

Ինչ-որ գյուղացի էր: Նոչեի սիրտը այնպես թպրտաց կրծքի տակ: Նա պատրաստակամորեն մոտեցավ այդ մարդուն:

— Ձեր ծառան եմ,— շշնջաց գյուղացին:— Կարո՞ղ եմ ձեզ մի խոսք ասել:

— Դու ի՞նչ ասացիր,— հարցրեց Պինյան մոտենալով, որոշ չափով շփոթված կասկածամտությունից ու խորհրդավորությունից, որոնցով նրան մոտեցավ այդ մարդը, խոսելով թիկնոցի տակից՝ այնպես, որ հազիվ երևում էին միայն նրա աչքերը:— Դու ուզում ես խոսե՞լ ինձ հետ:

— Այո՛, սինյոր,— ասաց գյուղացին, և նրա գլխի հաստատական շարժումը ավելի հասկանալի եղավ, քան բառերը:

— Պատրաստ եմ քեզ ծառայելու, որդիս,— շտապով պատասխանեց Պինյան:— Արի այստեղ... մտնենք...— և նա ցույց տվեց միության շենքի դուռը:

Բայց գյուղացին բացասաբար օրորեց գլուխը և իսկույն քաշվեց ետ՝ դեպի նրբանցքը: Պինյան հետևեց նրան:

— Մի՛ վախենա: Ոչ ոք չկա: Դու ի՞նչ ես ուզում ինձ ասել:

Թիկնոցի մեջ փաթաթված մարդը պատասխանելուց առաջ փոքր-ինչ տատանվեց. նայեց կասկածոտ հայացքով, հետո մռթմռթաց՝ առաջվա նման թիկնոցի տակից.

— Ինձ ասացին՝ մենակ, առանձին... Մի հավատարիմ մարդ... Նա ասաց, որ...— և նա նորից լռեց:

— Խոսի՛ր, որդիս,— քաջալերեց նրան Պինյան:— Մենք այստեղ մենակ ենք... Քեզ ի՞նչ են ասել:

Թիկնոցի տակից նայող կասկածոտ հայացքը խոսում էր այն մասին, թե ինչպես տանջալիորեն դժվար է այդ մարդու համար իրենից թեկուզ մի բառ դուրս կորզել: Ի վերջո, ավելի ամուր սեղմվելով պատին, նա թիկնոցի տակից մի քիչ դուրս հանեց ձեռքը, դրեց Պինյայի ձեռքին և հազիվ լսելի շշուկով հարցրեց.

— Այստե՞ղ են բաժանում հողը:

Նոչի Պինյան գրեթե շշմած այդ խորհրդավորությունից, որոշ ժամանակ կանգնեց բերանը բաց, ծուռ նայելով նրան.

— Հո՞ղը,— հարցրեց:— Հողը՝ չէ, որդիս:

Այդ ժամանակ գյուղացին բարձրացրեց կզակը, փակեց աչքերը՝ ի նշան այն բանի, որ իր համար ամեն ինչ պարզ է, և հառաչեց.

— Հասկացա: Այդպես էլ մտածում էի: Հանաքով ծաղրել են ինձ:

Եվ նա արդեն շրջվում էր, որ գնա: Բայց այդ ժամանակ Նոչի Պինյան պահեց նրան.

— Ինչո՞ւ են ծաղրել... Չէ՛, որդիս... Լսի՛ր...

— Ներեցեք, ձերդ ողորմածություն,— ասաց գյուղացին՝ կանգնելով սպասողական, որ Պինյան մի կողմ քաշվի և իրեն ճանապարհ տա,— չարժե: Ես հասկացա: Բա՛ց թողեք ինձ:

— Բայց սպասի՛ր, թանկագինս, դու ինձ ժամանակ չես տալիս բացատրելու,— շտապեց ավելացնել Պինյան:— Հող էլ կլինի, բարեկամս, դա էլ կլինի: Բավական է ցանկանալ: Եթե մենք որևէ բան ցանկանում ենք... Բանն էլ հենց այդ է:

Գյուղացին շարունակում էր օրորել գլուխը դառն ու մռայլ անվստահությանց, հետո ասաց.

— Իսկ ի՞նչ պիտի ցանկանանք մենք՝ աղքատներս, ի՞նչ կարող ենք ցանկանալ:

Պինյան վիրավորված թոթվեց ուսերը.

— Դե, ասա, խնդրեմ, այդ ինչպե՞ս կլինի, ես այսպես քեզ իսկույն հող տա՞մ: Ամենից առաջ կամք պիտի լինի քո մեջ և բոլոր մյուսների, աներկյուղ կամք, հասկանո՞ւմ ես: Ոչ մի պատերազմ պետք չէ, դա լավ հասկացիր: Մենք պատրաստ ենք նույնիսկ հիմներ երգելու խաղաղությանը, թանկագինս: Միությունը նույն եկեղեցին է: Իսկ ով մտնում է միության մեջ...

— Ձերդ ողորմածություն, ինձ թույլ տվեք գնալ...

— Սպասի՛ր, ես ուզում եմ քեզ ասել ահա թե ինչ. ով մտնում է միության մեջ, նա դառնում է միավորության մի մասը, միավորություն, որը, կարող ես հաշվել, մարդկության չորս հինգերորդն է, հասկանո՞ւմ ես: Չորս հինգերորդը, էլ ուրիշ ոչինչ չեմ ասի:

Նա չորս մատները թափահարեց գյուղացու աչքերի առաջ ու շարունակեց.

— Միաբանություն, երդվում եմ աստծով, և մենք կդառնանք ամեն ինչ, կարող ենք ամեն ինչ: Օրենքները կթելադրենք մենք. նրանք ստիպված կլինեն կամա թե ակամա համաձայնության գալ մեզ հետ: Ո՞վ է աշխատում: Ո՞վ է հողը փորում: Ո՞վ է ցանում: Ո՞վ է հնձում: Կամ տվեք մեզ այս ու այն, կամ ինքներդ մեզանից ոչինչ չեք ստանա: Առայժմ միայն խոսքով: Մեր ծրագիրը... Գնա՛նք, ես քեզ ամեն ինչ կբացատրեմ:

— Ձերդ ողորմածություն, բաց թողեք... Այդ ամենն ինձ համար չի...

— Ինչպե՞ս թե քեզ համար չի, ավանակ: Երբ խոսքը գնում է քո մասին, քո կյանքի, քո իրավունքների: Մտածի՛ր, որդիս: Տե՛ս, միությունը գտնվում է այստեղ, և միշտ կարելի է այստեղ գտնել ինձ:

— Այո՛, սինյոր, համբուրում եմ ձեր ձեռքը... Աստծու սիրուն, հաշվեք, թե ես ոչինչ չեմ ասել...

Եվ, շրջվելով մեջքով, նա զգույշ գնաց ճանապարհի եզրով: Նոչե Պինյան որոշ ժամանակ հայացքով հետևում էր նրան՝ օրորելով գլուխը:

Տանն աղմկում էին սովորականից ավելի: Ըստ երևույթին սոցիալական հեղափոխությունը մոտենում էր օրեցօր ավելի ու ավելի արագ: Այնտեղ հավաքվել էին (այդ մասին կարելի էր

գլխի ընկնել դեռ փողոցում) հինգ ուսանողներ, որ մի ժամանակ սովորել էին Չելսինայի հետ: Այնտեղ էր նաև Անտոնիո Դել Ռեն՝ դոննա Կատերինա Լաուրենտանոյի թոռը, Ռոբերտո Աուրիտիի զարմիկը. նա նստել էր անկյունում՝ կծկված ու մռայլ: Բոլորը բարձր խոսում էին՝ ընդհատելով մեկմեկու: Հսկան, այսինքն՝ Էմմանուելե Գարոֆալոն, պստլիկ Միչչիկեն, որը շարունակ ցնցվում էր, թուքը ցայտեցնում, վեր թռչում, կարծես խաղալիք սատանայաճուտ լիներ զսպանակի վրա, և կարճլիկ-պնդակազմ, դյուրաբորբոք ռեկլամատիացի Բեռնարդո Ռադդուզան (նրանք ինչ-որ բան էին բղավում, թե ինչ՝ չէր կարելի հասկանալ) խռնվել էին Միտայի շուրջը՝ Պինյայի աղջկա, տանը մնացածների մեջ ավագի, որն ամբողջ օրերով ու երբեմն էլ գիշերները աշխատում էր նրա երրորդ աղջկա՝ Աննիկիայի հետ: Այդտեղ էլ ականջ ծակող ձայնով ճչում էին նրանց քույրերը՝ Տինան ու Լիլլան, վիճելով Տոտո Լիկազիի և Ռոկկո Վենտուրիայի հետ: Ռիտան փորձում էր հանգստացնել վախից լացող երեխային. Չելսինան զայրույթից բորբոքված վիճում էր Անտոնիո Դել Ռեի հետ, և կարծես այդ ամբողջ աղմուկ-աղաղակը բավական չէր, Նզուլուն էլ՝ ծեր, սև, կիսակույր պուդելը, որ դունչը ցցած մի կերպ տեղավորվել էր աթոռի վրա, երկար ու ձիգ կաղկանձում էր՝ բողոքելով շուրջը կատարվող անկարգության դեմ:

Լուկա Լիցիոն, մի կողմ կանգնած, երկու ձեռքով սեղմել էր գլուխը, կարծես վախենում էր, թե այդ աղմուկ-աղաղակից այն կարող է պոկվել:

— Թանկագին սինյորները, ի՞նչ է պատահել: Մենք որտե՞ղ ենք գտնվում,— ներս մտնելով, բացականչեց Նոչե Պինյան:

Բոլորը շրջվեցին, վազեցին նրա մոտ և բորբոքված սկսեցին խմբով պատասխանել: Նոչե Պինյան փակեց ականջները:

— Կամաց: Դուք ինձ խլացրիք: Թող խոսի որևէ մեկը:

— Այս ամենը Միտան ու Աննիկիան են,— ճչաց Տինան:

— Կոտրատվում են,— ավելացրեց Լիլլան:

Իսկ Էմմանուելե Գարոֆալոն՝ հսկան, ձեռքերը թափահարելով, գոռաց ամպրոպաձայն.

— Բոլորը՝ դեպի ցած, բոլորը՝ դեպի ցած:

— Խոսք տվեք հայրական հեղինակությանը,— բացականչեց Մոնդինո Միչչիկեն՝ ձեռնափայտով սուսերամարտելով օդում:

— Ոչինչ չեմ հասկանում: Լռություն,— սկսեց բղավել Նոչե Պինյան:

Եվ բոլորը լռեցին, բայց վերահաս լռության մեջ հանկարծ բարձր հնչեց՝ «Ենիչերի»: Չելսինան այդ բառը Անտոնիո Դել Ռեի երեսին շպրտեց այնպիսի լարված կատաղությամբ, որ բոլորը քրքջացին:

Չելսինան առաջ անցավ: Չնայած լայն ազդրերին, նրա մարմինը սլացիկ էր, բարձր կուրծքը փոքր-ինչ թրթռում էր, թուխ դեմքը շառագունել էր, աչքերը փայլում էին: Թեև շուրջը բոլորը ծիծաղում էին, հպարտ վրդովմունքի արտահայտությունը դեռ մի րոպե չէր հեռանում նրա դեմքից, հետո վառվող շրթունքները մի ակնթարթ բացվեցին ակամա ժպիտով, բայց նա անմիջապես իշխեց իրեն և արհամարհանքով հրամայաբար գոռաց.

— Գնացի՛նք: Գնացի՛նք: Գնացինք: Ով ուզում է, թող լսի: Իսկ ով չի ուզում, թքել եմ նրա վրա...

— Ի վերջո,— տնքաց Նոչե Պինյան՝ ափերն իրար միացնելով մատների ծայրերով,— ես կարո՞ղ եմ իմանալ, թե ինչ է պատահել:— Եվ իսկույն ավելացրեց աչքերը չռելով:— Թող միայն մեկնումեկը խոսի:

Նրան պատասխանեց Ռոկկո Վենտուրիան՝ փոքրիկ ու կլոր, հաստ ու լայնանիստ քթով և ցանցառ բեղիկներով, որ սկսվում էին բերանի անկյուններում և իսկույն էլ վերջանում երկու ստորակետների նման:

— Ոչինչ էլ չի պատահել,— ասաց նա,— պարզապես մենք բոլորին առաջարկեցինք ցած իջնել՝ Չելսինայի ելույթի գլխավոր փորձին: Ահա բոլորը:

— Իսկ Միտան ու Աննիկիան, ինչպես միշտ...— իր խոսքը մեջ գցեց սաստիկ հուզված Տինան:

— Կոտրատվում են,— կրկնեց Լիլլան:

— Նրանք չե՞ն ուզում իջնել: Դե, հանգիստ թողեք նրանց:— ասաց Չելսինան՝ արդեն շեմքից:— Նրանք մրջյուններ են, դա արդեն հայտնի է, իսկ ես ճպուռ եմ: Գնա՛նք, գնանք ցած ու վերջ:

Պինյան նայեց երկու աղջիկներին՝ Միտային ու Աննիկիային. սևեր հագած, դալուկ, տխուր աչքերով՝ նրանք չշարժվեցին տեղերից. հետո Պինյան նայեց Անտոնիո Դել Ռեին. նա էլ էր նստել՝ արմունկով ծնկին հենված ու կրծում էր եղունգները:

— Գնացե՛ք, գնացե՛ք,— ասաց Պինյան նրանց, ովքեր պատրաստվում էին Չելսինայի հետ գնալու ներքևի սենյակը:— Ես էլ հիմա կգամ... Ես պետք է մի երկու խոսք ասեմ դոն Նինո Դել Ռեին:

— Ամենևին,— բացականչեց Չելսինան: Նա նորից բարձրացավ փայտե փոքրիկ սանդուղքով և հիմա, ամբողջովին դողալով, կանգնել էր շեմքին:— Ես քեզ արգելում եմ, հայրիկ: Ես խոսել եմ Նինոյի հետ, ու բավական է: Ցած իջիր:

— Լա՛վ, լա՛վ,— ասաց Պինյան.— Այդ ի՞նչ մոլեգնություն է: Ես նրա հետ պիտի խոսեմ բոլորովին այլ բանի մասին... Կամա՛ց: Կամա՛ց:

Անտոնիո Դել Ռեն շտկվեց, վեր թռավ վրդովմունքի անսպասելի պոռթկումով, բայց իսկույն էլ զղջաց գնալու իր որոշման համար ու չշարժեց տեղից, այլ միայն հայացքով սենյակում փնտրեց գլխարկը:

— Ախ, տե՛ր աստված, դուք էլ չափազանց շուտ եք բորբոքվում: Մի շտապեք,— բացականչեց Նոչե Պինյան:

— Դե չէ՛, թող գնա, եթե ուզում է գնալ,— կծու միջամտեց Չելսինան:— Ես միայն ուրախ կլինեմ, եթե նա գնա. իրեն արդեն ասել եմ: Բայց սպասիր...

Նա վազեց հարևան սենյակը, որտեղ սովորաբար քնում էր, կոմոդի դարակից հանեց մի հին տիկնիկ՝ իր վերջին տիկնիկը, որին վաղուց չէր տեսել և որը վերջերս գտնվեց պատահաբար. դրանից հետո Գարոֆալոն՝ տխմար գլուխը, տիկնիկի դեմքին գրիչով նկարել էր ոստիկանի բեղերի նման ահագին բեղեր՝ չհասկանալով, թե դրանով ինչ վիշտ պատճառեց Չելսինային: Նա տիկնիկը դրեց Անտոնիո Դել Ռեի կրծքին, քաշելով նրա ձեռքը, ստիպեց բռնել խաղալիքը և ասաց.

— Ա՛ռ, վերցրո՛ւ, սա քեզ լիովին համապատասխան է, դու սրան կարող ես սիրել:

Եվ մի ակնթարթում ցած վազեց փոքրիկ սանդուղքով:

Անտոնիո Դել Ռեն տիկնիկը նետեց աշխատանքային խոշոր զամբյուղի մեջ, որ դրված էր Միտայի ու Աննիկիայի միջև: Նոչե Պինյան, խոժոռվելով, որոշ ժամանակ նայեց տիկնիկին, ապա կռացավ, որ լավ դիտի. հետո հարցրեց.

— Սա ի՞նչ է, բեղե՞ր:

Պատասխանի փոխարեն Նինոն վերցրեց տիկնիկը և գլխիվայր խցկեց գրպանը: Երկու ոտքերը՝ մեկը գուլպայով, մյուսը՝ առանց գուլպայի, ճոճվում էին դրսում:

— Այդպես դրա արյունը գլուխը կխփի,— ասաց Նոչի Պինյան։— Հանգստացեք, դոն Նինի, եկեք ամեն ինչ քննարկենք։ Եվ, իսկապես, ավելի լավ կլինի, եթե դուք գնաք։ Ձեր դրությունը այս պահին, երբ ձեր քեռին Ջիրջենտիում քվեարկվում է... Իսկ մենք պետք է աշխատենք այստեղ. ճիշտ է, քիչ բան կարող ենք անել, այնուամենայնիվ բողոքի ձայն կբարձրացնենք։ Ես լավ գիտեմ, թե ինչ է զգում հիմա ձեր սիրտը՝ ազգականի սիրտը, և հասկանում եմ ձեզ։ Դուք դեռ փոքր եք, ընդ որում՝ ազնվազարմ ընտանիքից. գիտեմ, թե դուք ինչ եք մտածում, որոշ բաներ կարող են ձեզ դուր չգալ։ Բայց դուք էլ պետք է հասկանաք իմ սիրտը՝ հոր սիրտը, հասկանաք իմ պատասխանատվությունը, ես կաշխատեմ բացատրել... Եվ, բացի այդ, դոն Նինի, ես խարանավոր մարդ եմ, դուք այդ գիտեք, դժբախտ եմ, զրպարտված՝ բոլոր կողմերից. ես դրա վրա ծիծաղում եմ, իսկ ինչ վերաբերում է ձեզ ու ձեր հարազատներին, հատկապես հարգանքից... ձեզ ի՞նչ է գալիս դոն Լանդո Լաուրենտանոն. քեռի՞, զարմի՞կ։ Քեռի, ճիշտ չէ՞։ Այո, նա ձեր մոր քեռու որդին է, այսպես ուրեմն, նրա նկատմամբ ունեցած հարգանքից, ես չէի ուզենա, որ կասկածեին... Ճի՞շտ եմ ասում, Միտինա...

Միտան մի քիչ բարձրացրեց աչքերը և իսկույն էլ իջեցրեց՝ շարունակելով կարել։ Անտոնիո Դել Ռեն մոտեցավ պատշգամբի ապակեպատ դռանը և դուրս նայեց՝ Պյանո-դի-Գամեց ամայի հրապարակին, շարունակելով կրծել եղունգները։

— Լսե՛ք,— շարունակեց Պինյան,— սա սուրբ ճշմարտություն է. ամենամեծ չարիքը ձեր տատիկը պատճառել է ո՛չ թե իրեն, ո՛չ թե ձեր ընտանիքին ու ձեզ...

Այդ պահին Դել Ռեն արագ շրջվեց, բռունցքները սեղմած գնաց ուղիղ նրա վրա և գոռաց.

— Բավակա՛ն է։ Բավակա՛ն է։ Բավակա՛ն է։

Որոշ ժամանակ Նոչե Պինյան զարմանքով նայեց Անտոնիոյին, հետո ասաց.

— Գիտե՞ք, իմ կարծիքով, այսօր դուք բոլորդ էլ այստեղ խելքներդ թռցրել եք։ Չէ որ ես ուզում էի ասել, թե ամենամեծ չարիքը նա պատճառել է մեր շրջանին՝ թողնելով այն ամբողջ ունեցվածքը, որի վրա իրավունք ուներ, իր այդ եղբոր ձեռքին... Դե լավ, դոն Նինի, թող կրքերը մի քիչ պաղեն, իսկ մենք եկեք համաձայնության գանք։ Դուք ի՞նչ գույնի եք։ Առանց դրանք մեզ մոտ ոչինչ չի ստացվի։ Ես ձեզ ոչ մի բանի չեմ հակադրում։ Բայց եկել է վճռելու ժամանակը, թանկագինս, կամ դուք այստեղ մեզ հետ եք, այսինքն՝ կուսակցության, առանց թաքցնելու, կամ դուք ձերոնց հետ եք։ Եթե նույնիսկ դուք ինքներդ չգիտեք...

— Դե՛, իսկ դուք ճի՞շտ եք անում։ Ճի՞շտ է,— ընդհատեց Անտոնիո Դել Ռեն՝ զայրույթից գրեթե լալով և նորից բռունցքները սեղմած գնաց Պինյայի վրա։ Նա նկատի ուներ Չելսինայիին։— Ինչո՞ւ նա։ Մի՞թե դուք չկաք, չկան այդ տխմարները՝ Ռադդուզան ու Գարոֆալոն։

— Դա զեկուցման պատճառով է,— հանդարտ ձայնով բացատրեց Աննիկիան։

— Ա՛, զեկուցմա՞ն։ Բանն ի՞նչ է։ Ախ, հա՛... Ներեցե՛ք ինձ, դոն Նինի։ Դա ձեր ի՞նչ գործն է։ Դուք ձեր քեռու հետ կգնաք Հռոմ, կշարունակեք ձեր ուսումը հրաշալի քաղաքում, կվերադառնաք և ամեն ինչ պատրաստի կունենաք. մուտքի վճարը, գրքերը՝ ամեն ինչ վճարված է... Բայց մտածեք, աստված իմ, որ իմ աղջիկն էլ... Դուք կարող եք պատկերացնել, թե նրա՝ իմ խեղճ աղջկա, արյունն ինչպես է եռ գալիս, երբ մտածում է, որ այսքան արել է, այսքան աշխատել, և ամեն ինչ ապարդյուն. ահա թե ինչով վերջացավ նրա սերը գիտության նկատմամբ, որևէ բանի հասնելու նրա ձգտումը։ Թող նա հոգին թեթևացնի։ Թող նա հրդեհի ամբողջ շրջանը։ Իսկ դուք ուզում եք՝ ի լրումն ամենի, դնչկա՛լ հագցնել նրան։ Այդ ի՞նչ իրավունքով, ներեցեք։ Դուք ի՞նչ կարող եք անել նրա համար։ Գիտե՞ք, ախր ես պարզապես կպայթեմ, եթե չհեռանամ...

Եվ նա, նույնպես խիստ զայրացած, ցած սլացավ փայտե սանդուղքով...

Անտոնիո Դել Ռեն դարձյալ սկսեց նայել պատուհանից։ Միտան ու Աննիկիան, գլուխները կախելով, շարունակեցին լուռ աշխատել։ Այդ լռության մեջ երեքն էլ սուր զգում էին իրենց

ներքին ցավը, իրենց հուսահատությունը այն մտքից, որ իրենք ոչինչ չեն կարող անել ստեղծված իրադրության մեջ, որն այնպես անհամապատասխան էր իրենց էությանը, իրենց հակումներին, իրենց ձգտումներին:

Ամենից վատ իրեն զգում էր Անտոնիո Դել Ռեն: Մանկությունից նա կարծես իր մեջ էր ներծծել տատի մռայլ մորմոքը, և այն թունավորել էր նրա արյունը. մոր գրեթե հիվանդագին, վախով ու խուճապով լի քնքշությունը նրան ցավ էր պատճառում, հարուցում սրտնեղություն ու նվաստացնող թախիծ: Նրան զայրացնում էր քեռու կամազրկությունը, որը հնազանդվում էր ճակատագրի փոփոխականությանը և ոչնչի չէր կարողանում հասնել, թեև պատանության ժամանակ դրսևորել էր այնպիսի խանդավառություն ու արիություն և նույնիսկ հիմա չէր ցանկանում իրեն պարտված ճանաչել ու ժպտում էր՝ ամեն կերպ ընդգծելով իր հավատը գաղափարների նկատմամբ, որոնք հենց ինքն էր մթագնել անթիվ սխալներով ու վրիպումներով: Անտոնիոն զգում էր, գիտեր, որ մերձավորների հանդեպ ունեցած ավելորդ կարեկցանքից Ռոբերտո Աուրիտին այդ ժպիտով ուզում էր քողարկել իր հոգու անբուժելի, թարախակալած վերքը: Բայց քեռի Ռոբերտոյին ինչո՞ւ է հարկավոր թաքցնել թարախապալարը, փոխանակ կտրելու այն, ինչպես անում է տատը, ինչպես այստեղ՝ Պինյայի տանը, անում են նրա բոլոր ընկերները՝ դեռ բոլորովին երիտասարդ մարդիկ: Ճիշտ է, այն միջոցը, որ նրանք ընտրել էին դրա համար, հարուցում էր Անտոնիոյի նողկանքն ու վրդովմունքը: Հանցագործությունների ու պատուհասների դեմ պետք է բարձրաձայն հանդես գային, հանուն իրենց կրած փորձությունների, իրենց թափած արյան՝ արդարություն ու վրեժխնդրություն պետք է պահանջեին նրանք, ովքեր պայքարել են, մարտնչել, տառապել, և ո՛չ թե այն մարդիկ, ովքեր ոչինչ չէին արել և ակնհայտորեն ոչինչ չէին կարող անել. կարող էին շաղակրատել միայն՝ ժամանակ անցկացնելու համար և բոլորին իրար խառնել՝ ազնիվներին անազնիվների հետ, նրա քեռուն՝ սրիկաների ու բանսարկուների հետ, այնքան շատ կեղծ կամ անձնական շահ փնտրող «հայրենասերների» հետ:

Եվ, այնուամենայնիվ, միայն այդ անարդարությունը չէ, որ Անտոնիո Դել Ռեին լարում էր ընկերների դեմ: Դաստիարակված մռայլ ու գոռոզ վշտի դպրոցում, վիշտ, որը երբեք չէր իջնում մինչև բառային զեղումները, ամեն տեսակի նախանձից զերծ, իր ինքնահրաժարման մեջ հպարտ՝ նա, եթե արհամարհելով բոլոր գաղափարական՝ կապերը մերձավորների հետ, մխրճվեր պայքարի մեջ, ապա չէր սկսի բառեր վատնել և իր համար ընկերներ փնտրել. նա իսկույն կդիմեր գործողության՝ գլուխը կախած, ատամները սեղմած, զենքը ձեռքին: Իսկ սրանք, ընդհակառակը, հավաքվել էին, որ շաղակրատեն ու զվարճանան Պինյայի աղջիկների հետ:

Անտոնիո Դել Ռեն չէր ուզում ինքն իրեն խոստովանել, որ իր նողկանքի ու վրդովմունքի պատճառը նշանակալից չափով կատաղի խանդն է:

Նույն լռին ավյունով, որով կնետվեր դաժան ճակատամարտի մեջ, Անտոնիո Դել Ռեն մոլուցքից գիտակցությունը կորցնելու չափ սիրահարվեց Չելսինային հենց առաջին օրը, երբ նա՝ դեռ մինչև ծնկները հասնող կարճ զգեստով մի աղջնակ, հայտնվեց արական տեխնիկական ուսումնարանում: Ու թեև սկսեցին Չելսինայի ետևից քարշ գալ բոլոր ընկերները, աղջիկը պատասխանեց նրա սիրուն՝ սկզբում թաքուն, ապա թույլ տվեց, որ ուրիշները գլխի ընկնեն, իսկ հետո՝ բացահայտ, մարտահրավեր նետելով հիասթափված երկրպագուների ծաղրանքին: Բայց նա չէր ներփակվում իր սիրո մեջ, չէր կպչում իր զգացմունքին և իրեն չէր կապում Անտոնիոյի հետ այնպես, ինչպես պատանին կկամենար. աղջիկը մնում էր այստեղ՝ յուրայինների մեջ, նրա սիրտը լայն բաց էր, մտքերը ձգտում էին բոլոր կողմերը: Նա շռայլորեն ցրում էր բառեր, հայացքներ, ժպիտներ՝ արբելով իր հաջողություններով, խռովարարի իր էժան փառքով, ըմբոստանալով ամեն տեսակի նախապաշարումների դեմ, հպարտանալով իր արժանիքներով և ձգտելով նկատելի լինել, հարուցել համընդհանուր հիացում և ստանալ գովասանքներ:

Որքան ընդգծված էին արտահայտվում աղջկա բնավորության այդ գծերը, Անտոնիո Դել Ռեն այնքան ավելի պարզ էր հասկանում, որ չպետք է սիրի Չելսինային՝ ոչ միայն այն

պատճառով, որ դա հակասում էր իր հայացքներին, այլև այն պատճառով, որ, մտածելով մոր ու տատի մասին, հասկանում էր, որ առաջինը նողկանք կզգա աղջկա նկատմամբ, իսկ երկրորդը կհամարի նրան դատարկ ու հիմար: Այնինչ իրականում Չելսինան ո՛չ դատարկ էր, ո՛չ հիմար, Անտոնիոն այդ լավ գիտեր. և եթե նա ունկնդրեր իր սրտի գաղտնի ձայնին, որը խեղդվում էր յուրայինների հանդեպ ունեցած հարգանքով ու հնազանդությամբ, նա նույնպես կհասկանար Չելսինայի բացահայտ խռովությունը և կդատապարտեր տատի չափազանց մեծամիտ հպարտությունը, մոր չափազանց հնազանդ հաշտվողությունը:

— Դոն Նինի,— փաղաքուշ ձայնով կանչեց Միտան,— եկեք, խնդրեմ, այստեղ:

Անտոնիոն թափ տվեց իրեն և մոտեցավ աղջկան, բայց տեսնելով, որ նա կարի վրա թեքված՝ բարձրացնում է գլուխը, կարծես ուզում է իր լափը վերցնել, վիրավորված ցնցվեց ու ետ քաշվեց.

— Ո՛չ... ո՛չ... հիմա չէ...

— Թանկագին Նինի,— հառաչեց Միտան,— համբերե՛ք: Հարկավոր է շտապել: Դուք շուտով կմեկնեք... Բախտավոր մարդ:

Միտան ու քույրը նրա համար սպիտակեղեն էին կարում, որ նա պետք է իր հետ տաներ Հռոմ:

Քաղաքի բոլոր լավագույն ընտանիքները, նաև Անտոնիոյի տատն ու մայրը, աշխատանք էին տալիս այդ երկու աղքատ քույրերին, որոնք երբեմն օրավարձով աշխատում էին մերթ այստեղ, մերթ այնտեղ: Նրանց կարեկցում էին, նրանց նույնիսկ խղճում էին, նրանք այդ լավ էին հասկանում և օրեցօր ավելի համեստ էին դառնում, որ ավելի վստահորեն արժանանան այդ խղճահարությանը, ցույց տան իրենց երախտագիտությունը և մերժում չստանան: Նրանք լավ էին հասկանում՝ որպեսզի իրենց օգնեն, մարդիկ պիտի շատ բաների վրա ուշադրություն չդարձնեն, շատ այնպիսի բաների, որ հայրն ու քույրերը ո՛չ միայն չէին փորձում հարթել, այլև, ընդհակառակը, ամեն կերպ սրում էին, կարծես ուզում էին ըմբոստանալ ամբողջ քաղաքի դեմ և սպառել մերձավորների համբերությունն ու գթասրտությունը: Եվ եթե դա պատահի, մի՞թե նրանք ինքները չեն լինի մեղավորը: Ի՞նչ պիտի ասեն մարդիկ, մենք՝ օտարներս, ստիպված ենք մտածել ձեր մասին, օգնել ձեզ, իսկ ձեր ծնողները, որոնց դուք պահում եք մեր օգնությամբ, պայքար են մղում մեր դեմ: Անկարգություններ, սկանդալներ, թշնամություն:

Որպեսզի որևէ արդարացում գտնեն հոր համար, Միտան ու Աննիկիան ձգտում էին հավատացնել իրենց, որ իրենց ավագ քրոջը՝ Ռոզային, պատահած դժբախտությունից հետո հայրը մի քիչ ցնդել է: Իհա՛րկե, հենց այդ ժամանակից նրանց տանը սկսվեց դժոխքը: Բայց Է՛լ ավելի, քան հորից, Միտան ու Աննիկիան տրտնջում էին իրենց քույրերից և վշտանում էին նրանց պատճառով: Նրանք ինչպե՞ս չեն հասկանում, որ միայն լռությունը, միայն ինքնանվաստացումը, միայն ծայրահեղ համեստությունը կարող են եթե ոչ վերջնականապես ջնջել, ապա գոնե մի քիչ սքողել խայտառակության կնիքը, որով հիմա նշված է իրենց տունը: Երբ Ռիտային հաջողվում էր երեխայի խնամքից ազատ մի քիչ ժամանակ գտնել, նա, ինչպես նաև Տինան ու Լիլլան, օգնում էր նրանց կարել, շուլալել կամ թակալել՝ այն հազվադեպ օրերին, երբ շատ աշխատանք էր լինում, բայց նրանք աշխատում էին՝ սեր չունենալով գործի հանդեպ, ցրված, առանձնապես Տինան ու Լիլլան, որովհետև այն դժբախտությունից հետո դրանք չէին հաշտվել ամեն տեսակ հույսերից և ամեն տեսակ ցանկություններից հրաժարվելու անհրաժեշտության հետ: Տեսնելով, թե ամեն առավոտ նրանք ինչպես են հագնվում ու զուգվում-զարդարվում, ավագ քույրերի սրտերը ճմլվում էին, ազնիվ մտադրություններով չեն նրանք իրենց գեղեցկացնում, չէ որ նրանք չեն կարող չհասկանալ, որ հիմա ոչ ոք չի ցանկանա սիրով գործ ունենալ իրենց հետ: Եվ ավագ քույրերն օր առ օր սպասում էին, թե Տինան ու Լիլլան կարող են չդիմանալ այդ բոլոր պատանիների առաջ, որ պտտվում էին նրանց շուրջը և կվերջացնեն այնպես, ինչպես Ռոզան: Բայց այդ դեպքում գոնե գտնեն այնպիսի լավ տղաների, ինչպիսին Լուկան է: Ռիտան կարող էր ավելի վատ վերջացնել... Դրա համար էլ հոգու խորքում նրանք պետք է խոստովանեին, որ Լուկան

կարգին մարդ է: Մի բան միայն նրանք չէին կարողանում ներել Լուկային՝ այն, որ նա համառորեն չէր ցանկանում օրենքի և աստծու առաջ ձևակերպել իր միությունը Ռիտայի հետ: Նա այնպես բարի էր բոլորի նկատմամբ, այնպես սիրում էր երեխային և բոլորովին բեռ չէր տան համար: Իհա՛րկե, եթե նա այդքան շատ թշնամիներ չվաստակեր իր այդ գաղափարների պատճառով, եթե այդքան խղճուկ չլիներ, կկարողանար շատ օգնել ընտանիքին, որովհետև աշխատանքից չէր վախենում և, հավանաբար, շատ գիտուն էր, եթե դատեին այն գրքերով, որոնք նա արդեն կարդացել էր և որոնք շարունակում էր կարդալ:

Հարգանքի որոշ բաժին, որ նրանց ներշնչում էին խելքն ու գիտունությունը, Միտան ու Աննիկիան տարածում էին նաև Չելսինայի վրա, քանի որ նա, քույրերի կարծիքով, մեկ անգամ չի ապացուցել, որ նման չէ ուրիշներին և, համաձայնելով իրենց հոր հետ, նրանք էլ էին գտնում, որ մի ուրիշ տեղում, ուրիշ պայմաններում նա ցույց կտար, թե ինքն ինչ արժե: Քույրերը տեսնում էին, թե Չելսինան ինչպես է արհամարհում տղամարդկանց, և դա որոշ իմաստով հանգստացնում էր նրանց: Օ՛, այդ տղամարդիկ: Չելսինան նրանց մարտահրավեր էր նետել գիտություններում, որ նախատեսված էր միայն նրանց համար, և բոլորին գերազանցել էր: Սակայն քույրերն այնքան էլ հավանություն չէին տալիս այդ մարտահրավերին. նա կարող էր մեծ օգուտով, թեկուզ ավելի պակաս ներքին բավականությամբ, սովորել իգական դպրոցում և դառնալ ուսուցչուհի: Իսկ հիմա մնացել է առանց մասնագիտության: Բայց նրանք չէին վախենում ապագայից. Չելսինան կկարողանա որևէ ճանապարհ գտնել իր համար կամ այստեղ, կամ ուրիշ տեղում: Իսկ այդ խղճուկ դոն Նինին, որ սիրահարվել է նրան և խանդում է: Լավ մարդ է: Բայց Չելսինան նրա համար չէ: Դժբախտություն կլինի, եթե նրա հարազատները իմանան: Գոնե նա շուտ գնա Հռոմ:

Աննիկիան կամացուկ դիպավ Միտայի ձեռքին և նրան ցույց տվեց տիկնիկի ոտքերը, որ դուրս էին ցցվել պատշգամբի ապակեպատ դռան ետևում կանգնած պատանու գրպանից: Քրոջ ժպիտին Միտան պատասխանեց տխուր ժպիտով. հետո, հիշելով խնդիրքի մասին, որով դեռ գիշերն էր մտածել դիմել պատանուն, վեր կացավ և, ձեռքի գործը գցելով զամբյուղի մեջ, երկչոտ մոտեցավ նրան:

— Դոն Նինի,— կամացուկ ասաց Միտան,— Հռոմ գնալուց առաջ վերջին անգամ ինձ մի լավություն արեք, եթե...

— Ո՛չ, ո՛չ, աղաչում եմ ձեզ, ո՛չ, Միտա, մի՛ ասեք ինձ այդ մասին,— կտրուկ ընդհատեց նրան Անտոնիո Դել Ռեն՝ ձեռքերով սեղմելով քունքերը և փակելով աչքերը:

— Դուք դա ձեզ համար նվաստացուցիչ եք համարում, ճիշտ չէ՞,— աչքերը խոնարհելով, տխուր ասաց Միտան:

— Ո՛չ, ո՛չ այդ պատճառով,— շտապով ավելացրեց Անտոնիոն:— Բայց այս պահին ես չեմ կարող... չեմ կարող ոչ մի բանի մասին լսել, Միտա:

Սարսափելի բաներ ուզեց նրանից այդ թշվառը և հիմա նրա մեջ արթնացրեց տանջալից հիշողություններ: Նա նայեց Միտային՝ վախենալով, որ իր մերժման մեջ հնչող սարսափը կարող է աղջկա մեջ ինչ-որ կասկած հարուցել: Բայց նա միայն էլ ավելի վշտալի ու հլու արտահայտություն տեսավ այդ գեղեցիկ աչքերում, որ այնքան արցունք էին թափել, որ խամրել էին և առհավետ պատել մշուշաքողով: Եվ, իսկապես, չէ՞ որ ամեն գիշեր, հոգին հուսահատությամբ լի՝ Միտան լալիս էր Ռոզայի համար, իր դժբախտ քրոջ, իր կործանված քրոջ, որն ընկել էր մինչև խայտառակության հատակը: Շատ անգամներ, հնարավորություն չունենալով գնալ այն նողկալի տեղը, որտեղ փակված էր քույրը, Անտոնիոյին խնդրում էր իր փոխարեն գնալ այնտեղ: Եվ երբ Անտոնիոն վերջին անգամ եղավ այնտեղ, տեսավ Ռոզային, նա հարբած էր, նա Անտոնիոյին խաբելով տարավ իր հետ և...

Այդ պահին ներքևի սենյակից լսվեց ծափահարությունների ու գոռգոռոցների որոտ՝ խառնված երեխայի լացին ու շան հաչոցին, և քիչ անց Նզուլուն՝ ծեր պուդելը, որին ոտքի հարվածով դուրս էին քշել ներքևի սենյակից, ամբողջ մարմնով դողալով, ծալվող ետևի թաթերով (կարծես աշխատում էր պոչի փնջիկով ավլել հատակը) մոտեցավ ու բեղավոր

դունչը դրեց Միտայի ծնկներին, որը նորից նստել էր իր տեղում: Երկու քույրերը՝ տեսնելով, որ խեղճ կենդանին իրենցից օգնություն ու կարեկցանք է խնդրում, սկսեցին լալ: Եվ երբ Անտոնիո Դել Ռեն, այլևս ուժ չունենալով իրեն զսպելու, հագավ գլխարկը, բացեց պատշգամբի ապակեպատ դուռը և քայլ արեց, անցավ երկաթե ճաղաշարքի վրայով, վախեցած Միտան ու Աննիկիան հասցրեցին միայն ճչալ. «Օ՜, աստված, դոն Նինի... Դուք ի՞նչ եք անում»: Նա կախվեց օդում՝ ձեռքերով բռնելով երկաթե վանդակի երկու ձողիկներից, հետո ցատկեց ցած՝ հրապարակ:

Լսվեց գետնին դիպչող խուլ հարվածի ձայն, ապա՝ ջարդվող ապակու զրնգոց, Միտան վազեց նայելու և տեսավ՝ ինչպես Անտոնիոն, կռանալով ու կույրի նման ձեռքերն առաջ պարզելով, փնտրում է կողքին ընկած գլխարկը:

— Դոն Նինի, դուք չվնասվեցի՞ք:

— Ոչինչ,— անմիջապես պատասխանեց Անտոնիո Դել Ռեն:— Ակնոցս... Ակնոցս ջարդվեց:

Եվ, վերցնելով գլխարկը, փախավ:

Վազելով Գամեց փողոցով, Անտոնիո Դել Ռեն, որն առանց ակնոցի երկու քայլի վրա ոչինչ չէր տեսնում, Աթենեա փողոցի անկյունում անսպասելիորեն հանդիպեց ինչ-որ մեկին:

— Ա՛խ, Նինո:

Նա ձայնից ճանաչեց Կորրադո Սելմիին:

— Թողե՛ք ինձ,— գոռաց՝ զայրալից ցնցվելով:

Կորրադո Սելմին Վերոնիկային թողեց հյուրանոցում՝ մյուս մարտավկայի հետ և ուղևորվեց Ռոբերտոյի տուն, որտեղ իջևանել էր:

Բոլոր այդ չորս օրերին հենց որ նա հայտնվում էր փողոցում, անցորդներն աչք չէին հեռացնում նրանից. որոշ հետաքրքրասերներ նույնիսկ կանգնում էին ու բերանները բաց նայում նրա ետևից, մյուսները գլուխները դուրս էին հանում կրպակներից և, իրար վրա թափվելով, խռնվում էին տների շեմքերին: Այդ համընդհանուր հետաքրքրությունը նրան ստիպում էր սովորականին հակառակ իրեն ծանր պահել: Բայց երբեմն չէր կարողանում զսպել ծիծաղը: Նա չգիտեր որ կողմը նայել, որ իր սովորաբար ուրախ աչքերը, բաց, կարմրագույն դեմքը չհարուցեր անպարկեշտության կեղծ տպավորություն: Նա իրեն զգում էր (և այդպես էր ըստ էության) շատ երիտասարդ՝ և՛ հոգով, և՛ մարմնով՝ չնայած տարիքին, ճակատագրի անակնկալներին և անթիվ մարտերին, որոնց նա մասնակցել էր: Բայց նա ոչ մի սպիտակ մազ չուներ, և բոլորովին չէր խամրել բեղերի ոսկեգույն երանգը: Նա հագնվում էր բնական պճնագեղությամբ, և նրա ամբողջ էությունը, ամեն մի շարժումը, ամեն մի հայացքը տոգորված էին այնպիսի թարմությամբ ու վայելչագեղությամբ, որ ակամա հմայում էին: Այդ անանց երիտասարդությունը Կորրադո Սելմի դի Ռոզարիան առնում էր կյանքի հանդեպ ունեցած իր մշտական ու կրակոտ սիրուց և դրա հետ մեկտեղ հենց այն բանից, որ մեծ նշանակություն չէր տալիս կյանքին: Նա չէր ուզում իրեն ծանրաբեռնել ո՛չ հիշողություններով, ո՛չ չափից ավելի գործերով, ո՛չ ավելորդ խղճմտությամբ, ոչ համառ նպատակասլացությամբ, ինչպես անում էին շատերը, որոնց ոտքերը պիտի ծռվեին այդպիսի ծանրությունից, և մեջքերը կորանային: Նա սիրում էր իրեն կոչել՝ ճանապարհորդ առանց ուղեբեռի: Եվ միշտ ճանապարհորդում էր այդպես՝ ազատ ու թեթև, նույնիսկ ամենից երկար ու դժվար, արկածներով լի ճանապարհներին: Կորցնելու բան չկա, առա՛ջ: Երբ ապրիլի չորսի ապստամբությունը տապալվեց, նրան հրաշքով հաջողվեց փախչել Գանչա վանքից: Նա սկզբում կռվում էր Պալերմոյի շուրջը գործող ջոկատներում, հետո հազար ութ հարյուր վաթսուն թվականի պատերազմին մասնակցեց Գարիբալդիի հետ՝ մինչև Վոլտուրնո , բայց ինչպե՞ս. առանց հանդերձանքի, Մալթայում վեց դուկատով գնված մի հրացանով, որից անհնար էր կրակել: Պալատում, ընկերների մեջ, որոնց գլուխները ծանրաբեռնված էին

մտքերով, իսկ թղթապանակները լեփ-լեցուն էին նշումներով և ուրվագծերով, նա աշխատում էր ամենակարևոր հանձնաժողովներում՝ չօգտագործելով ո՛չ մատիտ, ո՛չ ծոցատետր: Նա միշտ ինչ-որ բանով զբաղված էր, բայց մի տեսակ անկաշկանդ և առանց լարվածության, և ամեն ինչ նրա մոտ ստացվում էր հեշտ ու հաջող, թեև նա երբեք չէր ձգտում խուսափել դժվարություններից, անվախ գնում էր դրանց ընդառաջ՝ մարտահրավեր նետելով ամենալուրջ վտանգներին, ամենաբարդ ձեռնարկումներին, ամենախառնակ արկածներին: Նա հնարավոր չէր համարում այն միտքը, որ այնպիսի մարդը, ինչպիսին ինքն է՝ մշտապես պատրաստ ամեն ինչի, կարող է բախվել անհաղթահարելի դժվարությունների: Նա չէր գնում կյանքին ընդառաջ, նա առաջ էր անցնում կյանքից և գնում ավելի հեռուն: Գնում էր՝ զինաթափելով ամենքին իր ինքնավստահությամբ և ուրախ հանգստությամբ, Կատոնների խիստ առաքինությունից խլելով հռետորական սնապարծությունը, կանացի պատվից՝ ամոթն ու խղճի խայթը: Իր ամբողջ կյանքի ընթացքում նա ոչ մի ակնթարթ չէր վարանել այն բանի համար, թե ինքը լա՞վ է վարվում, թե՞ վատ: Հարկ չկա ժամանակ վատնել դատողությունների վրա, սեփական արարքները կշռադատելու վրա: Այսօր վատ է, վաղը լավ կլինի: Անօգուտ էր պահանջել, որ նա ետ նայի, որպեսզի համոզվի իր այս կամ այն արարքի դատապարտելիության մեջ. նա թոթվում էր ուսերը և գնում առաջ, առաջ՝ ինչ ուզում է լինի, ամեն մի ճանապարհով, ոչ մի տեղ չհապաղելով, չարությունից մաքրվելով անընդհատ գործունեությամբ ու կյանքի հանդեպ ունեցած սիրով և միշտ մնալով հաջողակ, անկեղծ, բոլորի հանդեպ շռայլ, բոլորի նկատմամբ բարեհաճ: Կյանքը նրա համար լի էր հրապուրանքներով, որ քաշում էին նրան տարբեր կողմեր: Կարթել նրան մի որևէ խայծով, որպեսզի հրապարակեին նրա դատավճիռը, դաժան անարդարություն կլիներ:

Բայց հիմա Կորրադո Սելմին հասկանում էր, որ վրա է հասնում հենց այդպիսի անարդարություն. նրան ուզում են կարթը գցել. անհաշիվ պարտքեր, որ նա ստիպված է եղել վերցնել, բազմաթիվ չվճարված մուրհակներ, որ ուր որ է կներկայացվեն բռնագանձման: Սկանդալը կարող է պայթել արդեն նոր պալատի բացման ժամանակ: Նա կանխատեսում էր, թե ինչ ներկայացում կսարքեն բոլոր այդ փութեռանդ, փքված պատվո պահապանները, որոնց հանկարծ ոչ բոլորովին ճիշտ վարվելու վախը խանգարում է ընդհանրապես որևէ բանով զբաղվել, բացի անիմաստ հռետորական շաղակրատանքից. մանր, կարճատես եսասերներ, որոնք ջանասիրությամբ խնամում են մանրախնդրության փշե ցանկապատով շրջապատված իրենց բարոյական գաղափարների անպտուղ պարտեզը. բայց այդ ցանկապատը պաշտպանելու ոչինչ չուներ, քանի որ այդ պարտեզը երբեք ոչինչ չէր տվել՝ բացի անհամ պտուղներից և փարթամ, բայց անբույր ծաղիկներից: Պարտքե՞ր: Մուրհակնե՞ր: Մե՛ծ բան է: Նա միշտ էլ ստորագրել է մուրհակների տակ, իր ամբողջ կյանքում: Պալերմոյում հազար ութ հարյուր վաթսուն թվականի առաջին ամիսներին, երբ նա տասնութ տարեկան էր, հեղափոխական կոմիտեն չգիտեր ինչ ձեռնարկել. հույս էին դնում Գարիբալդիի վրա, հույս էին դնում Վիկտոր Էմմանուիլի և Պյեմոնտի վրա, հույս էին դնում Մաձինիի վրա , բայց ո՛չ փող կար, ո՛չ զենք, ո՛չ ռազմական հանդերձանք: Եվ ի՞նչ: Ո՞վ առաջարկեց Սիցիլիական բանկի մուրհակների զեղչման դրամարկղից վերցնել վեց հազար դուկատ՝ առավել նշանավոր քաղաքացիների ստորագրությամբ: Ոչ թե մեկ ուրիշը, այլ նա: Եվ ինքը, գրպանում ոչ մի կառլինո չունենալով, առաջինն ստորագրեց երկու հարյուր դուկատի դիմաց: Ժամանակավոր կառավարությունը բոլորը կվճարի: Ինչպե՞ս իրականացվեց ապրիլի չորսի ապստամբությունը: Ճի՛շտ այդպես: Եվ ինչպե՞ս նա կազմակերպեց ճահճացած հողերի ցամաքեցման աշխատանքները, հողեր, որտեղից՝ ճահճատենդը տարածվում էր այն շրջանի մեծ մասում, որը հանդիսանում էր նրա ընտրական շրջանը: Դե, իհա՛րկե, մուրհակների օգնությամբ: Ճի՛շտ է, շրջանն ազատվեց ճահճատենդից, բայց պարտքերը, իհարկե, մնացին նրա վրա, որովհետև այդ հողերի մշակությունից ոչինչ չստացվեց. Սելմին այն հանձնեց ազգականներին, որոնք ոչինչ չէին հասկանում՝ այդ գործից, և ի վերջո նրա աշխատանքի պտուղներից օգտվեցին գլխավորապես օտար մարդիկ՝ նրան տալով միայն թեփը՝ երբ և ինչքան ցանկանում էին, բայց դրա փոխարեն միշտ պատիվ էին անում նրան և պատգամավոր էին ընտրում: Ինչ որ ճիշտ է, ճիշտ է. բացի այն փողերից, որ Սելմին վերցրել էր բանկից այդ և ուրիշ ձեռնարկումների համար, որ ուրիշների համար շահավետ էին, իսկ նրա համար՝ անհաջող,

նա վերցրել էր և ոչ քիչ՝ անձնական կարիքների համար: ՉԷ՞ որ հարկավոր էր ապրել, իսկ նա չէր կարողանում և չէր ուզում գործշ, անբովանդակ կյանք վարել աղքատի նման: Սելմին պատանի էր, երբ թողեց ուսումը, որ մասնակցի հեղափոխությանը: Տասնմեկ տարվա ընթացքում՝ քանի դեռ Հռոմը չէր գրավված, նա ոչ մի րոպե իրեն հանգիստ չէր տվել: Երբ եկավ խաղաղությունը, նա ո՛չ մասնագիտություն ուներ, ո՛չ էլ կյանքում հաստատուն տեղ (իսկ չԷ՞ որ նրա կյանքի լավագույն տարիները ծախսված էին ուրիշների համար). նրան էլ ի՞նչ էր մնում անելու: Կախվե՞լ: Գործերում ճակատագիրը նրա նկատմամբ բարեհաճություն չէր ցուցաբերում, իսկ նրա բարեհաճությունը ուրիշ ասպարեզներում բավական թանկ նստող դուրս եկավ, ընդ որում՝ որոշ բաներ՝ ամենալավ և ամենավատը, թանկ նստեցին ո՛չ միայն նրա գրպանի համար:

Կորրադո Սելմին արգելել էր իրեն ամեն մի ափսոսանք: Եվ, այնուամենայնիվ, ժամանակ առ ժամանակ ափսոսանքը դոննա Ջաննետա դ'Ատրի Մոնտալտոյի սիրո համար համակում էր նրան ու քրքրում սիրտը: Բայց ավելի, քան կորցրած սիրո ցավը, նրան տանջում էր զայրույթը, որ ինքը կուրորեն հնազանդվում էր այդ կնոջը, որի պատճառով նրա անունը շատ տարիներ ծամծմում էին ամբողջ Հռոմում, քանի որ այդ կինն ստիպում էր նրան կատարել ամենաիսկական խենթություններ: Թվում էր, թե այդ կինը կարծես համակված էր սկանդալի ծարավով, ինչ-որ ուխտ էր արել ամեն կերպ վարկաբեկելու և իրեն, և իր սիրեկանին: Սկզբում Սելմին փորձեց մի քիչ զսպել նրան՝ ավելի շատ հենց նրա համար, քան իր, բայց հետո ինքն էլ իրեն թույլ թողեց՝ վախենալով, որ իր զսպվածությունը կվիրավորի նրան, իսկ զգուշությունը երկչոտություն կթվա: Ամենամեծ պարտքերը նա վերցրել էր հենց այդ ժամանակ՝ թեև ոչ իր անունով, որ կասկածից դուրս մնա այդ կինը, որ նրան ստիպում էր վատնել փողերը: Ռոբերտո Աուրիտին եղբայրական անձնուրացությամբ համաձայնեց նրա համար մի մեծ գումար վերցնել բանկից՝ նախապես համաձայնության գալով կառավարչի հետ: Եվ Կորրադո Սելմին վախենում էր չարաշահումների մերկացումից ոչ այնքան իր համար, որքան Ռոբերտո Աուրիտիի: Սակայն այդ տագնապը որոշ չափով մեղմանում էր այն վստահությունից, որ կառավարությունը բազում պատճառներով շահագրգռված է, որ սկանդալը կանխվի: Նա լավ էր հասկանում, որ բանկի սնանկացումը կդառնա միաժամանակ որոշակի ընդունված կարգի սնանկացում:

Այդ վստահությունը նրա մեջ պահպանում էր այն հանգամանքը, որ թեև դոննա Ջաննետայի ամուսինը ղեկավար դիրք ուներ, առաջիկա ընտրություններում կառավարությունը պաշտպանում է իր թեկնածությունը, ինչպես և Ռոբերտո Աուրիտիի թեկնածությունը: Դեռ Հռոմից մեկնելուց առաջ նա Ռոբերտո Աուրիտիին խոստացավ գալ Ջիրջենտի, որ պայքարում աջակցի նրան: Շտապ կանչվելով Վերոնիկայի հեռագրով, Սելմին իսկույն եկավ ու հասկացավ, թե ինչպիսի դժվարին վիճակում է գտնվում Ռոբերտոն իր հակառակորդների առաջ, և որքան է ամեն ինչ ավելի բարդացել մենամարտի պատճառով: Նա պատրաստ էր ամեն ինչ անելու, որ Ռոբերտոյին ազատի նրան ճնշող անախորժություններից, դուրս քաշի այդ մթնոլորտից, հնարավորություն տա ուրիշ օդ շնչելու, բարձրացնի նրան մինչև այն դիրքը, որին նա արժանի էր ոչ միայն իր խելքի ու սրտի համար, այլև այն ամենի, ինչ կատարել էր երիտասարդ տարիներին. բայց երբ Կորրադո Սելմին եկավ Ջիրջենտի և ծանոթացավ Ռոբերտոյի մոր ու քրոջ հետ, նա հուսահատվեց. նրա համար իսկույն պարզվեց, թե ինչու է Աուրիտին անհաջողակ դարձել կյանքում: Այդ տունը նրան զնդան թվաց: Հնարավո՞ր է արդյոք, որ երկու մարդկային էակներ կարողանային կամավոր կերպով քարշ տալ իրենց կյանքը իրենց սեփական դառն ու գոռոզ թախծի մռայլ հովանու տակ, այդպիսի անուրախ պատկերացում կազմեին կյանքի մասին: Սելմին չկարողացավ դիմանալ այդ մասին Ռոբերտոյի մոր հետ խոսելու գայթակղությանը, որպեսզի մի քիչ սթափեցնի նրան:

— Բայց չԷ՞ որ կյանքը փետուր է, դոննա Կատերինա: Կփչես, և չկա: Իսկ դուք ուզում եք, որ այդ փետուրը այսպես ծանր լինի:

— Ե՞ս եմ ուզում, թանկագին Սելմի,— նրան հարցով պատասխանեց դոննա Կատերինան:— Ես չեմ այդ ուզել... Ձեզ համար կյանքը փետուր է: Կփչես, և չկա: Իսկ ինձ համար կապարի նման է դարձել, թանկագինս:

— Ա՛յ, հենց դա էլ վատ է,— անմիջապես առարկեց Սելմին: — Փետուրը կապա՞ր դարձնել:— Ներեցե՛ք, մենք պետք է ապրենք, ուրեմն՝ մեզ հարկավոր է մեր հոգին պահել այնպիսի վիճակում... դե, ասենք, մշտական հալվածության: Ինչո՞ւ սառեցնել այդ հալվածությունը, սեղմել իր հոգին, կաշկանդել, ձուլել այլ՝ տխրալի կապարի ձևի մեջ:

Դոննա Կատերինան թեթևակի օրորեց գլուխը, և մի դառն ժպիտ հայտնվեց նրա շթունքներին:

— Հալվածություն... այո՛: Բայց որպեսզի հոգին պահեն, ինչպես դուք եք ասում՝ հալվածության վիճակում, կրակ է հարկավոր, թանկագին բարեկամ: Իսկ եթե ձեր մեջ մարե՞լ է հնոցը:

— Այդ չի կարելի թույլ տալ, գրողը տանի:

— Է՛հ, թանկագինս: Իսկ եթե քամին չափազանց սառն է, եթե գալիս է մահը և իր շնչով մարում կրակը, եթե դուք փնտրում եք, թե ինչ գցեք հնոցի մեջ և նույնիսկ մի տաշեղ չեք գտնում:

— Բայց որտե՞ղ եք փնտրում: Այստե՞ղ: Չորս պատերի մեջ փակված, ինչպես զնդանում: Սինյորա Աննան... ներեցե՛ք, հնարավոր է, որ սինյորա Աննան... չգիտեմ ինչպես ասել...

Նա լռեց՝ հանկարծ շփոթվելով, քանի որ նկատեց, որ Ռոբերտոյի քույրը, որ ամենից քիչ էր սպասում, թե Սելմին կխոսի իր մասին, շիկնեց: Առաջին իսկ հայացքից Կորրադո Սելմին հիացած էր սինյորա Աննայի մաքուր ու նուրբ գեղեցկությամբ և նրան խորապես վշտացնում էր, որ այդ գեղեցկությունը խամրել է չընդհատվող սգից, որ այն ոչ միայն անտեսում են, այլև արհամարհում: Տեսնելով այդ հանկարծ բռնկված շառագույնը, նա վախեցավ, որ շատ հեռուն է գնացել, բայց հետո, հաղթահարելով շփոթությունը, ավելացրեց.

— Մի՞թե դուք որդի չունեք: Դուք պարտավոր եք ապրել նրա համար և նույնիսկ սիրել կյանքը, այնպես չէ՞: Ասենք, չգիտեմ, գուցե ես չափազանց բուռն եմ արտահայտում այն, ինչ մտածում եմ՝ տեսնելով, թե ինչպես դուք բոլորդ ապրում եք մռայլության մեջ, և դա ինձ բոլորովին էլ բնական չի թվում: Իսկ դուք ի՞նչ եք կարծում, սինյորա Աննա:

Սինյորա Աննան նորից շիկնեց, սակայն իրեն ստիպեց՝ թեև դժվարությամբ չխոնարհել հայացքը և թեթևակի թոթվելով ուսերը, շփոթված տեսքով ու ջղային ժպիտը շրթունքներին, պատասխանեց՝ նկատի ունենալով որդուն.

— Նա երիտասարդ է... Ինքը կդասավորի իր կյանքը:

— Իսկ դո՞ւք... Մի՞թե դուք պառավ եք:

Նրա շրթունքներից գրեթե ակամա դուրս պրծած այդ հարցով ավարտվեց առաջին զրույցը: Հիմա Կորրադո Սելմին Ռոբերտոյի տուն էր վերադառնում Կոլիմբետրայից՝ ներքուստ ծիծաղելով այն ամենի վրա, ինչ տեսել էր այնտեղ: Բուրբոնյան համազգեստով այդ բոլոր խամաճիկները, որ պատիվ էին տալիս իրեն: Կատարյալ խելագարություն է: Բայց ի՞նչ հոյակապ վիլլա է: Իշխանը... ո՛չ, նա չհայտնվեց: Սելմին այնպես էր ուզում ծանոթանալ նրա հետ: Ահա ևս մեկը՝ անցած ժամանակների մեջ խորասուզված, ներփակված այն ամենի մեջ, ինչ սրտին մոտ է եղել... Բայց նա, այնուամենայնիվ, դեռ ապրում էր, թեև ապրում էր ներկայից դուրս, կյանքից դուրս... ապրում էր շատ հետաքրքիր ձևով, և դրանում կար իր հմայքը. նա անցյալից ներկայի մեջ էր փոխադրել պատկերներ, որոնք ժամանակակից իրականության մեջ չէին կարող չթվալ անհեթեթ, դիմակահանդես, խաղ, բայց կար, հմայք կար այդ խամաճիկների մեջ:

— Այո՛, խամաճիկներ, թանկագին Սելմի, որոնք ձեր ծիծաղն են շարժում,— ասաց նրան դոննա Կատերինան:— Բայց վաղվա ընտրություններում նրանք կհաղթեն ձեզ, ձեր բարեկամ Ռոբերտոյին, սինյոր ոստիկանապետին, ձեր կառավարությանը և բոլոր մյուսներին: Դեռ կծիծաղեք, եթե դա ձեզ հաջողվի: Ստվերնե՛ր: Ստվերները մենք ենք:

— Ի՞նչ եք ասում, դոննա Կատերինա, ես ստվեր չեմ,— ծիծաղելով և իրեն շոշափելով, ասաց Սելմին։— Ինձ թողեք գոնե այդ պատրանքը: Համեմատեք իշխանին և ինձ. այդ նա է դարձել ստվեր: Ես թանկ կվճարեի, որպեսզի տեսնեի, թե նա ինչպես է գալիս ինձ ընդառաջ, որ վարձահատույց լինի... Դե, Ռոբերտոն գիտի... որ վարձահատույց լինի մի հանդիպման համար՝ իր որդու հետ, Հռոմում, երբ հարկ եղավ ակամա խաղալ ստվերի դեր... Դե լավ: Բայց դուք լավ ասացիք, դոննա Կատերինա. այստեղ՝ Սիցիլիայում, մենք չափազանց համառորեն ենք ձգտում ուրվականներ լինել: Մերթ անհեթեթ, մերթ հիասթափված, մերթ ստորաքարշ: Դրա մեղավորը մասամբ արևն է: Արևն այստեղ թմրեցնում է ամեն ինչ, նույնիսկ բառերը թմրում են բերանի մեջ: Սիցիլիան իտալական մեծ ընտանիքի մեջ մտավ ութսուներկու միլիոն լիրայից ոչ ավելի պետական պարտքով և քսաներկու միլիոն բավական լավ հաշվեկշռով: Բացի դրանից, նա բերեց դարերով կուտակված ամբողջ եկեղեցական գույքը: Եվ, ըստ որում, եղել է գրեթե առանց արդյունաբերության, առանց ճանապարհների, առանց նավահանգիստների , առանց որևէ հողաբարելավման: Գիտե՞ք ինչպես էր իրականացվում պետական հողերը վաճառքը և վանքապատկան հողերի հարկադրումը: Այդ ամենը ունեցել է որոշակի հասարակական նպատակ՝ հողագործ բնակչության տնտեսական վերելքը: Ինչպե՞ս չէ. իրականում այն շրջվեց վաշխառուների ու խոշոր դրամատերերի օգտին: Եվ մենք մեր վանքապատկան ու պետական հողերի դիմաց պետք է վճարեինք հսկայական գումար՝ մոտ հարյուր միլիոն լիրա, զոհելով այն միջոցները, որ նախատեսված էին մեր մյուս հողերի բարելավման համար: Իսկ վանքապատկան գույքի նշանավոր քառո՞րդը, որ հանձնվեց մեզ հազար ութ հարյուր վաթսունվեց թվականի հուլիսի յոթի օրենքով: Ի՜նչ ծաղր: Ամենից առաջ այդ գույքի արժեքը հաշվարկվեց սիցիլիական հոգևորականության կեղծ ցուցմունքների հիման վրա, իսկ հոգևորականությունը շահագրգռված էր այն բանում, որ ավելի քիչ տուրք վճարի անօտարելի գույքի համար, և այդ անվանական արժեքից, նկատի առեք, հանվեցին բոլոր տոկոսները, որ ենթակա էին վճարվելու պետությանը՝ և՛ հարկերը, և՛ վարչական ծախսերը: Իսկ հետո բոլոր այդ պահումները սահմանվում էին ըստ իսկական արժեքի և, բացի այդ, հանվում էին թոշակները, որ պետք է ստանային ոչնչացված կոոպերատիվների անդամները: Այսպիսով, մինչև հիմա մեր քաղաքային գյուղական համայնքները ոչինչ չեն ստացել, գրեթե ոչինչ: Այնինչ մեր կղզին իր վրա է վերցրել ու կատարել այնքան զոհաբերություններ՝ հանուն հայրենասիրության. մի՞թե նա իրավունք չունի իր բարօրությամբ հավասարեցված լինելու Իտալիայի մյուս մարզերի հետ, նրանց հետ բաժանելու բոլոր այն բարելավումները, որոնցից նրանք օգտվում են: Ես ինչքան էլ ձգտեցի, երբեք ինձ չհաջողվեց մի գործունյա, ակտիվ խմբի մեջ միավորել սիցիլիական բոլոր պատգամավորներին: Այո՛, այո՛, այդ մասին չխոսենք, դոննա Կատերինա: Միայն արյունս եմ պղտորում: Ես անում եմ, ինչ կարող եմ: Հետո թոթվում եմ ուսերս և ասում՝ երևի այդպես էլ պետք է մեզ:

Նա շրջվեց Ռոբերտոյի կողմը և, որպեսզի փոխի թեման, ասաց.

— Գիտե՞ս: Ես երեկ փողոցում տեսա քո հակառակորդի կնոջը: Թանկագինս, դու պարզապես իրերի բերումով պետք է տանուլ տաս: Այդ ի՜նչ գեղեցկուհի է: Ներեցե՛ք ինձ, թանկագին տիկնայք, իմ այս խոսքերի համար, բայց իմ արիությունը չէր բավականացնի հաղթելու նույնիսկ հանուն Հայրենիքի և Ազատության, եթե այդ հաղթանակը արցունքներ կքամեր այդ գեղեցկուհու աչքերից:

Գլուխ VII

Նիկոլետտա Կասոլինոն ամուսնու առանձնասենյակը մտավ արդեն հագնված և ինչ-որ արտասովոր ֆետրե լայնեզր գլխարկով, որ զարդարված էր փետուրներով և չէր թաքցնում նրա գեղեցիկ, ագռավի թևի գույնի մազերը: Սլացիկ, ծաղկուն, գրգռիչ, վառ աչքերով ու շրթունքներով, նա կարողանում էր այնպես լավ ու աննկատելի հոգ տանել իր արտաքինի մասին, որ նրա ամբողջ էությունը շնչում էր արբեցնող թովչանքով: Ներկա պահին

ամուսինների միջև կատարվում էր կատակերգության դրամատիկական ինտերմեցցոյի նման ինչ-որ բան, այն կատակերգության, որ նրանք խաղում էին մեկմեկու առաջ ամեն օր՝ արդեն երկու տարի, նույնիսկ իրենց տանը՝ բավականություն ստանալով սեփական ճարպկությունից և արվեստից: Նրանք շատ լավ գիտեին, որ իրենք չեն կարող մեկմեկու խաբել և չէին էլ ձգտում դրան: Չի կարելի ասել, թե նրանք այդ ամենը կատարում էին միայն թատերականության հանդեպ ունեցած սիրուց, քանի որ ներքուստ նրանց երկուսի համար էլ նողկալի էր ձևանալու անհրաժեշտությունը: Բայց եթե նրանք ուզում էին ապրել միասին՝ առանց բացահայտ սկանդալի, առանց չափազանց մեծ նողկանքի՝ հենց իրենց նկատմամբ, նրանց ուրիշ ելք չէր մնում: Եվ ահա նրանք ջանում էին զգեստավորել, ավելի ճիշտ՝ քողարկել, իրենց փոխադարձ անբարյացկամությունը հմուտ ու նրբին ստով՝ այդ ստին տալով մեկմեկու հանդեպ համակրանքի անուրախ ու թանկ նստող վարժության հանդերձանք: Նրանք հասել էին գրեթե մինչև հոգատարության մի յուրատեսակ մրցման և, ի վերջո, երկուսն էլ ոչ միայն զգում էին սրտագին հարգանք մեկմեկու արժանիքների նկատմամբ, այլև անկեղծ փոխադարձ երախտագիտություն: Հիմա նրանք գրեթե սիրում էին իրար:

— Նյացիո, ես չեմ կարող հանգիստ գնալ,— ասաց կինը՝ ներս մտնելով այնպիսի թախծալի տեսքով, կարծես նրան շփոթեցնում ու վշտացնում էր կասկածը, թե ամուսինը մտադրվել է ինչ-որ բանում խաբել իրեն:— Երդվի՛ր, որ այս առավոտ դու չես գնում մենամարտելու:

— Օ՛, աստվա՛ծ իմ, Լելլե, չէ՞ որ ես քեզ ասացի՝ գնում եմ Սիկուլյանա,— պատասխանեց Կապոլինոն՝ ձեռքով թեթևակի դիպչելով նրա ուսին:— Ես դեռ երեկ պիտի գնայի. չէ՞ որ դու գիտես: Հանգիստ եղիր, թանկագինս: Մենամարտը հետաձգված է մինչև ընտրությունների ավարտը:

— Դու իսկապե՞ս ինձ չես խաբում,— համառորեն պնդեց կինը՝ աշխատելով միաժամանակ կոճկել ձեռնոցը այն ձեռքով, որի ձեռնոցն արդեն հագել էի:

Կապոլինոն շատ էր ուզում կոպտաբար ընդհատել նրան՝ ի պատասխան այդ համառության, սակայն ժպտաց, հոգատարությամբ մոտեցավ ու կոճկեց նրա ձեռնոցը՝ ընդ որում, այդ անելիս իրեն պահում էր սիրահարվածի պես:

— Եթե իմանայիր, թե ինչպես չեմ ուզում գնալ Վալսանիա,— թախծագորով շշնջաց կինը գրեթե ամուսնու ականջին:

— Ո՛չ, ո՛չ, գնա՛,— բացականչեց Կապոլինոն՝ նայելով ուղիղ նրա աչքերի մեջ, կարծես ուզում էր հասկացնել տալ, որ քնքուշ տոնը (ի դեպ՝ շատ սիրալիր ու հաճելի) տվյալ պահին անպատեհ էր և անժամանակ:

— Երդվում եմ քեզ,— ասաց կինը կամակոր կերպով, այնուամենայնիվ, ժպիտին ժպիտով պատասխանելով:

Կապոլինոն բարձր ծիծաղեց:

— Գնա՛, գնա՛: Այնտեղ շատ զվարճալի կլինի: Կտեսնես, թե ինչպես է այդ դանդաղաշարժ Ադելաիդան ներկայանում փեսացուին... Դա չտեսնված ներկայացում կլինի: Լուրջ, Լելլե:

— Միայն թե սիրտս հանգիստ լիներ...— կրկնեց Նիկոլետան:— Երեկ երեկոյան դու ինչ-որ տեղ ուշացար և այնքան երկար... Ես չեմ լսել, թե երբ ես պառկել...

— Դու, ի՞նչ է, չե՞ս տեսնում այս ամբողջ նախընտրական գրագրությունը,— ասաց Կապոլինոն՝ ցույց տալով գրասեղանը:— Իսկապես, քեռի Սալեզիոն գոնե այս գործում կարող էր օգնել ինձ...

— Ինչպե՞ս չէ, կօգնի քեռի Սալեզիոն... Չէ՞ որ դա կարկանդակ ուտել չի:

— Դե, բավակա՛ն է: Ժամանակ մի՛ կորցնի: Գնա՛, գնա՛: Դու կառքի՞ ես սպասում:

Նիկոլետան նրան հառեց հայացքը, որ նշանակում էր՝ թեև իրեն չհամոզեցին նրա խոսքերը, ինքն, այնուամենայնիվ, ենթարկվում է, և հառաչեց.

— Եթե ճիշտ է, որ դու գնում ես Սիկուլյանա, ապա մի՞թե երեկոյան վերադառնալիս չէիր կարող մի ոչ մեծ շրջերթ կատարել և գալ Վալսանիա՝ իմ ետևից:

— Բանն էլ հենց այն է, որ հազիվ թե կարողանամ: Ինձ հետ կլինեն բարեկամներս... Վերադարձին մենակ չեմ լինի... Եթե ինձ հաջողվի գլուխս ազատել նրանցից...

Նա պարզեց շրթունքները, որ համբուրի կնոջը: Նիկոլետան ակամա ետ գցեց գլուխը՝ վախենալով փչացնել սանրվածքը:

— Այդ ինչո՞ւ:

— Նրա համար, որ դու ինձ դուր ես գալիս... Դե, արի համբուրվենք:

— Միայն թե զգույշ...

Նրանց համբուրվելիս գտավ պառավ աղախինը, որ եկել էր զեկուցելու, թե Սալվոյի կառքը եկել է: Նիկոլետան ետ ցատկեց ամուսնուց:

— Հիմա գալիս եմ,— ասաց նա աղախնին. հետո ձեռքը պարզելով ամուսնուն, ավելացրեց:— Ուրեմն՝ ցտեսություն:

— Դե, զվարճացի՛ր,— մաղթեց նրան Կապոլինոն:

Այնպիսի փոքր քաղաքի համար, ինչպիսին Ջիրջենտին էր, կառքը բացարձակապես ավելորդ էր, դա սեփական հարստությունը ցուցադրելու ծիծաղաշարժ ձգտում էր, որն այստեղ ներվում էր միայն Սալվոյին: Ռաբատո արվարձանից, որտեղ ապրում էր Կապոլինոն, մինչև Պասսեջատա ծառուղին, որտեղ Սալվոն մի քանի տարի առաջ գեղեցիկ վիլլա էր կառուցել, ոտքով կարելի էր հասնել կես ժամում:

Նիկոլետան բոլորովին չէր կասկածում, որ ամուսինը կմենամարտի այդ առավոտ: Բայց որպեսզի զվարճանալու իրավունք ունենա, նա չպետք է դա իմանա: Եվ էլի ինչքան բաներ չպիտի իմանա, որպեսզի մնա այդպես ուրախ ու կյանքին սիրահարված: Կամքի լարումի շնորհիվ դա հաճախ հաջողվում էր նրան՝ ո՛չ թե իսկապես չիմանալ (դա անհնար էր), այլ ձևացնել՝ իբր չգիտի: Երբեմն, երբ նա մենակ էր մնում ինքն իր հետ, և այդ ամբողջ սուտը բռնում էր կոկորդը, նրա մեջ կարծես ինչ-որ բան էր պայթում, և նրա հոգին ընդվզում էր ամեն տեսակ գարշելի ու մթյունների դեմ, որոնք միշտ ճնշում էին նրան՝ հենց ծննդյան օրից: Նա չպետք է իմանար, օրինակ, որ մայրն է սպանել հորը՝ եթե ոչ թույնով, ինչպես չարախոսում էին շրջանում, ապա գոնե հասցնելով նրան սրտի պայթումի, որ հնարավորություն ունենա երկրորդ անգամ ամուսնանալու նրա հետ, ում Լելլեն ու ամուսինը հիմա կոչում էին քեռի Սալեզիո, Սպոտո բանկի նախկին գրասենյակային ծառայողի հետ: Լելլեի հինգ տարին նոր էր լրացել, երբ մեռավ հայրը, բայց աղջիկը լավ էր հիշում նրան, այնքան լավ, որ մայրը չկարողացավ աղջկան ստիպել «հայրիկ» կոչել իր երկրորդ ամուսնուն, որը նրանից շատ էր ջահել: Քեռի Սալեզիոն վատ մարդ չէր, բայց դատարկ էր և վերին աստիճանի սնափառ: Հենց որ դարձավ Բաղդասարե Սպոտոյի այրու ամուսինը, նա լրջորեն հավատաց, թե այդ ամուսնությունը ազնվականի կոչման նման մի բան է. քմահաճ և ունայն անուրջները մշուշեցին նրա խելքը, լցրեցին նրա ամբողջ հոգին: Սակայն այդ անուրջները ծնող հողը փախավ նրա ոտքերի տակից: Նա խենթորեն վատնում էր փողերը: Բայց գոնե դրանից հաճույք ստանար: Ի՜նչ չինական պատիժ էին, հավանաբար, նրա համար լաքած կոշիկները, որոնց պատճառով նա ստիպված էր մանրիկ քայլեր անել գրեթե ոտքերի մատների վրա՝ կարծես ճնճղուկի նման ցատկոտելով: Չար լեզուներն ասում էին, թե նա բաճկոնի տակ սեղմիրան է կրում կնոջ նման: Ո՛չ, սեղմիրան չկար, բայց մարմնի շուրջը մի քանի տակ փաթաթած էր բրդե ժապավեն՝ գլխավորապես արդեն կորացող մեջքը շտկելու համար: Տարիքով քեռի Սալեզիոն այնքան էլ ծեր չէր, հազիվ մի քանի տարով մեծ լիներ Կապոլինոյից, բայց չնայած իր բոլոր, ամենափութեռանդ, թեև ապարդյուն խնամքին, նա

շուտ սկսեց զառամել: Հիմա նա լարովի տիկնիկ էր թվում. նրա մեջ ամեն ինչ արհեստականորեն հարմարեցված էր, ամեն ինչ ամրացված էր, ամեն ինչ կեղծ էր՝ և՛ ատամները, և՛ վարդագույն այտերը, և՛ սև ներկած բեղերը, և՛ փետած հոնքերը, և՛ ցանցառ մազերը. նա քայլում էր կարծես զսպանակների վրա, պատանու նման: Այնինչ, չնայած այդ ամբողջ գրիմին, նրա աչքերում, որ գրեթե բոլորովին ծածկված էին պարկանման, ուռած և այտուցված կոպերի տակ, անսահման տառապանք կար, քանի որ կնոջ մահից հետո նրա գլխին թափվեցին բոլոր դժբախտությունները: Նիկոլետան կարող էր ազատվել նրանից, բայց խղճահարություն էր զգում նրա նկատմամբ. ասենք, կառավարումն այն քչի, որ դեռ մնացել էր, Նիկոլետան վերցրել էր իր վրա, բայց արտաքին պատշաճությունն ուզում էր պահպանել, և քեռի Սալեզիոն, որ հիմա գրեթե մումիա էր դարձել, շարունակում էր ոտքերի մատների վրա քայլելով, պճնամոլաբար, անհոգ զբոսնել փողոցներում՝ որպես նրբագեղության հրաշք՝ միշտ մետաքսե գուլպաներով ու լաքած կոշիկներով, բայց տանը, օ՛, տանը պահպանվում էր ամենախիստ խնայողություն: Այնքան խիստ, որ մի անգամ նա եկավ Նիկոլետայի մոտ՝ թևի տակ բերելով թղթազանգվածից պատրաստված երկու կաղապարվածք, որ պատկերում էին տապակած բտահավեր: Այո՛, հենց այդպես. թղթազանգվածից պատրաստված այդ երկու տապակած բտահավերը կանխորոշված էին այն բանի համար, որ ցուցադրվեին նրա սեղանին՝ մետաղացանցե կափարիչի տակ, որ դրանք պաշտպանում էր ճանճերից: Եվ ամեն օր խեղճ ծերունին դրանք դնում էր սեղանին՝ իր առաջ, որ խաբի ինքն իրեն. դրանից նա չէր կարող իրեն զրկել: Եվ այդ երկու թղթազանգվածե բտահավերը՝ մի կտոր չոր հացի հետ, որ իսկական էր, բայց չափազանց չոր նրա արհեստական ծնոտի համար, կազմում էին նրա միակ ամենօրյա ճաշը: Կապոլինոն չուզեց նրան իր մոտ վերցնել, և քեռի Սալեզիո Մարուլլոն մենակ մնաց հին, մռայլ տանը, որ Նիկոլետան տվել էր նրան այն քչի հետ, որ իրեն հաջողվել էր փրկել սնանկացումից. բայց հաճախ քեռի Սալեզիոն չկարողանալով սահմանափակել իր ծախսերը, չէր կարողանում իրեն զսպել, որ չդնի մի գեղեցիկ փողկապ կամ գեղեցիկ ձեռնափայտ, և սոված էր մնում, եթե ճաշի ժամանակ չէր հայտնվում Ֆլամինիո Սալվոյի տանը՝ իմանալով, որ իր խորթ աղջիկը միշտ այնտեղ է: Եվ Նիկոլետան, տառապելով ամոթից և նրա աչքերը ճանկռել հանելու ու այծամորուքը փետելու ցանկությունից, ստիպված էր ժպիտով դիմավորել նրան:

Նիկոլետան հասկանում էր, որ ըստ էության կարող էր բարի լինել, և նրան թվում էր, թե իր կյանքի որոշ պահերին ինքը իսկական բարություն է դրսևորում, բայց նենգավոր ճակատագիրը իրեն հնարավորություն չի տալիս դառնալու իսկապես բարի: Նրան ստիպում էին չար լինել: Նրա մեջ ամեն ինչ կեղծ էր՝ և՛ ներքուստ, և՛ արտաքուստ, և՛ շրջապատում: Եվ նա պետք է շարունակ գաղտնի պայքար մղեր՝ հաղթահարելով իրեն խեղդող նողկանքը, աշխատելով չզգալ իր դեմքի դիմակը, թեև այդ դիմակն առանց այդ էլ դարձել էր մաշկի նման բարակ և կարծես սերտաճել էր դեմքի հետ: Բայց Նիկոլետա Կապոլինոյի ճակատի վրա ոլորվում էր անհնազանդ մազափունջը, և լինում էին այնպիսի րոպեներ, երբ նա վախենում էր, որ իր սիրտը այսքան տարիների լռությունից հետո, միևնույն է, կըմբոստանա և դուրս կթռչի կրծքից:

Եվ ահա հիմա ամուսինը գնում էր մենամարտելու, իսկ կինը՝ տոնահանդեսի:

Որպեսզի չտեսներ մարդկանց, և որպեսզի մարդիկ չտեսնեին իրեն, Նիկոլետա Կապոլինոն կառապանին հրամայեց թեքվել Աթենեա փողոցից և գնալ Սանտա-Լյուչիա արվարձանով: Նա արդեն դադարել էր հոգալ այն մասին, թե ինչ կմտածեն մարդիկ՝ տեսնելով իրեն Սալվոյի կառքում: Նրանց հարաբերություններն արդեն վաղուց ոչ ոքի համար գաղտնիք չէին: Չէ՞ որ այստեղ էլ պատշաճությունը որոշ չափով պահպանվում էր՝ Կապոլինոյի Սալվոյի ազգակցական կապերի և այն պարտականությունների շնորհիվ, որ կատարում էր Նիկոլետան դոն Ֆլամինիոյի դստեր հանդեպ: Նրա հանդգնությունը մարտահրավեր էր նետում չարախոսություններին և եթե լիովին չէր հաղթում, ապա մարդկանց ստիպում էր լռել ու գլուխ տալ նրան հասարակական վայրերում և բամբասել միայն մասնավոր տներում՝ այն էլ փիլիսոփայական ներողամտությամբ: Փիլիսոփայության մեջ մի լավ բան կա. այն միշտ հաստատում է նրանց իրավացիությունը, ովքեր կարողանում են ամեն միջոցով ներկայացնել իրենց:

Սալվոյի վիլլան գտնվում էր բաց տեղում, բլրի հարավային լանջով անցնող ճանապարհից վերև: Վիլլա կարելի էր բարձրանալ լայն ու դիք սանդուղքով: Ամեն մի սանդղահարթակում պատվանդանների վրա կանգնած էին չորսական մռայլ-անճոռնի արձաններ, որոնք այնքան էլ սիրալիր չէին դիմավորում այցելուներին և հակված չէին ուրախանալու նրանց հետ, որ մի սանդղաբազուկն էլ է հաղթահարված: Բայց վերևից բացվում էր ամբողջ շրջանի կախարդական տեսարանը՝ դաշտերի, հովիտների և հեռավոր ծովի:

Վիլլայի վերին հարկը բարձրանալուց առաջ Նիկոլետան կարճ ճանապարհով վազեց Սալվոյի առանձնասենյակը, որ առաջին հարկում էր, բայց հանկարծ կանգնեց շեմքին՝ տեսնելով, որ տանտերը մենակ չէ:

— Մտե՛ք, մտե՛ք,— ասաց Ֆլամինիո Սալվոն՝ գլուխ տալով. նա կանգնած էր գրասեղանի առաջ, որի մոտ նստած ինչ-որ բան էր գրում մի երիտասարդ՝ Աուրելիո Կոստան:

— Ներումն եմ խնդրում, եթե...— սկսեց Նիկոլետան՝ նայելով Կոստային, որ վեր կացավ աթոռից:

— Ի՞նչ եք ասում,— բեղերը շոյելով, ընդհատեց Սալվոն իր սառը ժպիտով, որին թեթև հեգնանքի արտահայտություն էր տալիս ծանր կոպերի տակից նայող հանդարտ հայացքը:— Մտե՛ք... Ես այստեղ զրուցում էի իմ ինժեների հետ:

Հետո՝ տեսնելով, որ տիկնոջ ներկայությունը շփոթեցնում է Կոստային, ավելացրեց.

— Մի՞թե դուք ծանոթ չեք:

— Դե, մենք լսել ենք մեկմեկու մասին,— անկաշկանդ պատասխանեց Նիկոլետան:— Բայց, եթե չեմ սխալվում, մեզ չեն ծանոթացրել...

— Ախ, այդ դեպքում,— շարունակեց Սալվոն,— ձևականությունը պահպանած լինելու համար. ինժեներ Աուրելիո Կոստա, սինյորա Լելլե Կապոլինո-Սպոտո:

Աուրելիո Կոստան իջեցրեց հայացքը և, հեռանալով գրասեղանի մոտից, թեթևակի խոնարհեց գլուխը: Նա լավ էր հագնված, թեև առանց նրբաճաշակության, զուսպ էր ու գոռոզ իր առնական գեղեցկությամբ, որին չէր համապատասխանում բոլորովին նոր կոստյումը. դրանով Աուրելիոն փոքր-ինչ կոպտավուն տեսք ուներ:

— Ադելաիդան պատրա՞ստ է,— հարցրեց Նիկոլետան Սալվոյին՝ նայելով պատանուն և նրա խոնարհումին պատասխանելով թեթևակի ժպիտով:

— Մի րոպե,— ասաց Սալվոն:— Նստեցե՛ք, նստեցե՛ք, դոննա Լելե: Ես հիմա կվերադառնամ: Կարծում եմ, որ Ադելաիդան պատրաստ է:

— Գուցե ե՞ս էլ գամ ձեզ հետ,— նրա ետևից բղավեց Նիկոլետան:

— Ո՛չ, ինչո՞ւ,— ասաց Սալվոն՝ շեմքին շրջվելով:— Ադելաիդան հենց հիմա կիջնի ցած:

Եվ դուրս եկավ:

Նիկոլետան չցանկացավ նստել. նա անփույթ տեսքով ետուառաջ էր քայլում մեծ սենյակում, որ կահավորված էր շքեղ, բայց խստորեն: Աուրելիոն շարունակում էր կանգնած մնալ, չիմանալով՝ կարո՞ղ է արդյոք նստել. նա վախենում էր անքաղաքավարի վարվել, մյուս կողմից նրան զայրացնում էր այն, որ ինքն ստիպված է կանգնած մնալ ծառայի նման, որն սպասում է հրամանների: Նիկոլետան իսկապես այստեղ իրեն տիրուհի էր զգում, այո՛, բայց ի՞նչ գնով: Մի մտածեցեք, Է՛, Աուրելիոն երկար տարիներ երազել է տիրանալ այդ կնոջը: Հիմա նա էլ է Սալվոյի ծառայության մեջ, ինչպես Նիկոլետան, ինչպես Կապոլինոն, ինչպես բոլորը. բայց եթե Նիկոլետան լիներ իր՝ Աուրելիոյի կինը, Սալվոն, իհարկե, չէր համարձակվի նույնիսկ մտածել, որ նա կարող է դառնալ իր ծերունական հաճույքների առարկան: Իսկ հիմա Նիկոլետան՝ այդքան ծաղկուն, գայթակղիչ գեղեցիկ, ապրում էր երկու ծերունիների կողմից խայտառակված: Արդյոք գո՞հ էր նա. թե՞ պարզապես շինծու անբռնազբոսիկությամբ

պարծենում էր իր տիրական դիրքով: Արդյոք նա բավականությո՞ւն էր ստանում այդ շքեղությունից. պատիվների՞ց, որով նրան վճարում էին կորցրած պատվի դիմաց: Իհա՛րկե: Չէ՞ որ նրա ամուսինը շուտով պատգամավոր կդառնա: Եվ ինքը՝ պատգամավորի կին: Իսկ ի՞նչ կդառնար Աուրելիոյի հետ, եթե կարողանար հաղթահարել սարսափը (այո՛, հենց սարսափը), որ ինքը կապված կլինի այդքան ցածր ծագումի մարդու հետ: Ազնվություն, ջահելություն, մաքուր, սուրբ սեր: Բայց չէ՞ որ նրա համար ավելի թանկ էին գլխարկի վրա ծածանվող փետուրներն ու շղարշը:

Վրդովմունքն ու հոգնությունը հաղթեցին. Աուրելիոն նստեց:

— Ա՛յ լավ է,— այդ ժամանակ բացականչեց Նիկոլետան՝ շրջվելով նրա կողմը:— Ներեցեք, որ ես ինքս չասացի ձեզ... մտածմունքի մեջ էի ընկել, գիտե՞ք:

Նա մոտեցավ ու կանգնեց ուղիղ Աուրելիոյի դիմաց՝ հանկարծակի, վճռական ու մարտահրավեր արտահայտող շարժումով հենվելով գրասեղանին:

— Դուք հիմա այստե՞ղ եք ապրելու, սինյոր ինժեներ:

— Գուցե... Չգիտեմ...— պատասխանեց Աուրելիոն՝ նույնպես նայելով նրան՝ առանց նույնիսկ ամենաաննշան վեհերոտության:— Առայժմ միայն ծրագիրն ենք նախագծում... Եթե գործը գնա...

— Դուք կմնաք այստե՞ղ:

— Հարկավոր կլինի դիրեկտոր...

Նիկոլետան որոշ ժամանակ մտախոհ նայեց նրան, հետո թեթևակի շտկելով ճակատի վրայի մազերը, ասաց.

— Դուք սովորել եք Փարիզում, ճիշտ չէ՞:

— Այո՛,— կարճ պատասխանեց Աուրելիոն, թեև նրան արդեն հուզում էր զրուցակցուհու օծանելիքի գայթակղիչ բուրմունքը:

— Փարի՛զ,— բացականչեց Նիկոլետա Կապոլինոն՝ բարձրացնելով գլուխը և թեթևակի կկոցելով աչքերը:— Ես այնտեղ եղել եմ հարսանեկան ճանապարհորդության ժամանակ: Ասացե՛ք, եթե դուք կամենաք, էլի՞ կարող եք ինժեներ դառնալ պետական ծառայության մեջ:

Աուրելիոն նայեց տիկնոջը՝ զարմացած խոսակցության այդ անսպասելի շրջադարձից: Նա բարձրացրեց հոնքերը և պատասխանեց.

¬— Չգիտեմ: Չեմ մտածում: Չեմ էլ փորձի: Ես լիովին հնարավորություն ունեմ վերադառնալու Սարդինիա և ոչ պետական պաշտոնի: Այստեղ եմ գտնվում Սալվոյի խնդրանքով, բայց ոչինչ չեմ կորցնի, եթե գնամ:

— Օ՛, ես գիտեմ,— անմիջապես պատասխանեց Նիկոլետան:— Ձեր ընդունակություններով... Ես հենց այդ էի ուզում ասել: Բայց սինյոր Սալվոն, իհա՛րկե, բաց չի թողնի ձեզ, եթե, ինչպես դուք եք ասում, նրա մտքում ինչ-որ ծրագիր կա:

Նա թեթևակի աչքով արեց՝ մատը դնելով շրթունքներին և որոշ ժամանակ կանգնեց մտասուզված, հետո խոսեց բոլորովին ուրիշ եղանակով.

— Եվ, այնուամենայնիվ, ես ձեզ լավ եմ հիշում, գիտե՞ք: Այն ժամանակից, երբ դուք ուսանող էիք ու եկել էիք այստեղ... Դուք շատ ջահել էիք... Այո՛, հիմա ես ձեզ շատ լավ հիշեցի...

Աուրելիոն մեծ ճիգով հաղթահարեց հուզմունքը, որ անսպասելիորեն հարուցեցին Նիկոլետայի խոսքերը, որ ասվեցին այդպիսի հանդգնությամբ: Ի՞նչ է ուզում իրենից այդ կինը: Ինչո՞ւ էր այդպես խոսում իր հետ:

Դժվար էր գուշակել, իսկ Աուրելիոյի համար՝ պարզապես անհնար: Անակնկալ, անսպասելի հանդիպումը. տպավորությունը, որ Նիկոլետան գործեց. նրա մտքերը, որ ակնթարթապես կարդաց Նիկոլետայի թռուցիկ կանացի հայացքը՝ այն բանից հետո, երբ այնպես անկաշկանդ մտավ Սալվոյի առանձնասենյակը և հետո, երբ նրանք այնտեղ մնացին երկուսով. իր վիճակից ծնված վիրավորածության թաքուն զգացումը, որ չէր կարող չծագել այս երիտասարդի առաջ, որը մի ժամանակ սիրում էր իրեն և ազնվորեն խնդրել էր իր ձեռքը. ու նաև այն միտքը, որ Աուրելիոն հիմա մնալու է այստեղ՝ Սալվոյի տանը, որտեղ նրան թաքուն սիրում է Դիանելլան, որ նա, ապրելով աղջկա կողքին, կարող է շուտով հասկանալ դա, և, հետևաբար, որոշ ժամանակ անց, եթե Դիանելլան բավականաչափ համառ լինի որպեսզի հաղթահարի հոր առարկությունները, ինքը՝ Լելլեն, համոթ իրեն, ստիպված կլինի ներկա լինել Աուրելիոյի և նրա տիրոջ աղջկա հարսանիքին...— այդ ամենը շփոթություն սերմանեցին Նիկոլետա Կապոլինոյի հոգում: Չէ՞ որ այն ժամանակ ինքը պետք է հսկի նշանվածներին, հետևի նրանց: Եվ այս երիտասարդի համար, որ դեռ վիրավորված է մերժումից, որով ինքը արհամարհաբար պատասխանեց նրա առաջարկությանը, կգա հատուցման ժամը, չէ՞ որ ամուսնանալով այդ Դիանելլայի հետ, որը արհամարհում և ատում է իրեն, նա էլ կլինի իր տերերի թվում: Իսկ նա գեղեցիկ էր, և՛ ուժեղ, և՛ հպարտ: Եվ դեռ (Նիկոլետան այդ պարզ տեսնում էր) գտնվում էր իր հմայքի իշխանության տակ՝ չնայած վիրավորվածությանն ու վրդովմունքին: Իսկ ինչո՞ւ Ֆլամինիո Սալվոն, որն այդ ամենը շատ լավ էր հասկանում, իսկույն գնաց և իրեն թողեց այստեղ՝ նրա հետ մենակ:

Նիկոլետան նորից կկոցեց աչքերը, կարծես ուզում էր թաքցնել իր գաղտնի մտքերի կայծերը, և ավելացրեց բազմանշանակ եղանակով.

— Գուցե դուք էլ հիշեք...

Հուզված Աուրելիոն բարձրացրեց հայացքը և մռայլ ու խստորեն նայեց նրան:

— Մի՛ բարկացեք ինձ վրա,— այդ ժամանակ փաղաքուշ ու տխուր ասաց Նիկոլետան՝ գլուխը կողքի թեքելով:— Քանի որ դուք մնում եք այստեղ և մեզ հարկ կլինի հաճախ տեսակցել, օգտագործենք այս առաջին հանդիպումը, խոսենք լիակատար անկեղծությամբ, որ մեր միջև չմնա ոչ մի ստվեր: Ինձ համարում են թեթևամիտ, ի՞նչ կա որ, չեմ ժխտում, բայց ես տանել չեմ կարող կեղծիքը, թերասածությունները, գաղտնի մտքերը: Դառնա՞նք լավ բարեկամներ:

Այսպես ասելով, նա պարզեց իր գեղեցիկ ձեռքը, որ կորած էր մատանիների մեջ, սեղմեց Աուրելիոյի ձեռքը և պահեց մի ակնթարթ:

— Հավատացե՛ք, ես այս ասում եմ ոչ թե պչրանքով, ոչ թե նրա համար, որ հաճոյախոսություն լսեմ: Դուք դեռ լիովին ազատ եք, ոչինչ չեք կորցրել և ափսոսալու բան չունեք: Ուրեմն՝ մենք բարեկամնե՞ր ենք:

Եվ, լսելով դոննա Ադելաիդա Սալվոյի ծանր շնչառությունն ու մետաքսե շրջազգեստի շրշյունը, Նիկոլետան նորից փութկոտ սեղմեց Աուրելիոյի ձեռքը՝ կարծես նրա համար, որ այդ զրույցին տա իմաստ և գաղտնի դավադրության ինչ-որ տարրեր:

— Դեպի տոնավաճա՛ռ: Դեպի տոնավաճառ,— ձեռքերը թափահարելով բացականչեց բորբոքված ու շնչակտուր դոննա Ադելաիդան:— Նայեցե՛ք, Լելլե, նայեցե՛ք, սինյոր ինժեներ, որդիս, թե ինձ ինչպես են զուգել: Օ՛, սուրբ Մարիամ, ես հիմա նման եմ փառահեղ պառավ զամբիկի, որին զարդարում են ժապավեններով և ուղարկում տոնավաճառ... Բայց Ֆլամինիոյի հետ չի կարելի վիճել, երեխաներ, հարկավոր է հնազանդվել: Դե՛, ծաղրածո՛ւ, ողջունի՛ր արքային: Նրան պետք է միշտ ասել «այո», միայն «այո»: Դուք ծիծաղո՞ւմ եք: Դե լա՛վ, ծիծաղե՛ք:

Իրոք, և՛ Նիկոլետա Կապոլինոն, և՛ Աուրելիո Կոստան ծիծաղում էին՝ քանի դեռ դոննա Ադելաիդան, ձեռքերը տարածած, հոլի նման պտտվում էր նրանց առաջ. նրանք անզուսպ ծիծաղում էին բավականությունից, որ իրենց թաքուն մտքերը նրա կողմից արտահայտվեցին այդպես ազատ և այդպես հումորով, քանի որ իրենք կզգուշանային ո՛չ

միայն արտահայտել, այլև այդպես ուղղակի և անկեղծորեն մտածել այն, ինչ զգում էին իրենց հոգու խորքում: Բայց դոննա Ադելաիդային հենց այդ էլ պետք էր: Նա շատ լավ էր հասկանում իշխանի հետ իր տարօրինակ, ուշացած ամուսնության ողջ ծիծաղելիությունը և իր անկեղծությամբ զինաթափում էր կողմնակի մարդկանց չարախոսությունը: Զուրկ լինելով ողջամտությունից ու, թերևս, նույնիսկ խելքից, նա գտնում էր, որ կարող է հանգիստ օգտվել իր սեփական և փեսացուի արտոնյալ վիճակից՝ ամբարտավան շքեղությամբ քողարկելով այն, ինչ անօրինական էր իրենց ամուսնության մեջ: Բայց դոննա Ադելաիդան համաձայնել էր այդ ամուսնությանը առանց որևէ բերկրանքի և ավելի շատ եղբոր համար, քան՝ իր: Նա գիտեր, որ իշխանը շատ գեղեցիկ է և շատ սիրալիր: Այն բանից հետո, երբ Սալվոյի տուն մտավ այդ առինքնող Նիկոլետան և այդպիսի իշխանություն ձեռք բերեց Ֆլամինիոյի վրա (լիովին արդարացի, այդքան գեղեցիկ աղջնակ, իսկ խեղճը զոհ էր բերված իր շառլատան ամուսնուն), Ադելաիդան՝ արդեն տարեց կին, հոգնած իր «մղձավանջային օրիորդությունից», ինչպես ինքն էր ասում, համաձայնություն տվեց:

— Դե՛, ծաղրածու, ողջունի՛ր արքային:

Առանց քաղաքացիական գրանցման, միայն եկեղեցում: Իսկ միևնույն չէ՞: Նա պառավ է և, իհա՛րկե, երեխաներ չի ունենա: Քահանայի օրհնությունը բավական էր նրա համար, բավական էր բարեկամների ու հարազատների համար, ուրեմն՝ առաջ, դեպի տոնավաճառ: Ավելի՛ ուրախ: Մի բան միայն դոննա Ադելաիդան տանել չէր կարողանում՝ խստությունը, ավելորդ խստությունը: Նա մտածում էր միայն մի բանի մասին. նրան ասել էին, թե իշխանը երկար մորուք ունի: Երկար մորուքավոր տղամարդը պետք է շատ լուրջ լինի կամ էլ գոնե իրեն շատ լուրջ պահի: Դոննա Ադելաիդան հույս ուներ, որ իշխանին կստիպի կարճացնել մորուքը: Սո՛ւրբ տիրամայր, նրա համբերությունը հերիք չի անի շփելով հարդարելու գետի նման երկար մազերը: Կարճացնե՛լ մորուքը, կարճացնե՛լ... Կարճ ոտքերով, բարձր կրծքով, գրեթե անվիզ դոննա Ադելաիդան, այնուամենայնիվ, անճոռնի չէր. նրա դեմքը նույնիսկ գեղեցիկ էր, բայց չափազանց վառ էին աչքերը՝ ուժեղ, գրեթե արծնապակյա փայլով, չափազանց փայլուն էին ատամները, որ կարծես ի ցույց էին դրվում, երբ նա հաճախ բարձր ծիծաղում էր: Նա շարունակ մոլեգնում էր, որովհետև նրան ճնշում էին ու տանջում ահագին ստինքները՝ հենց կզակի տակ, որոնք նա կոչում էր «անպատկառ պալարներ»: Եվ շոգում էր, շոգում էր, նա շարունակ շոգում էր, ու չէր բավականացնում օդը, օդը, օդը:

Վալսանիայի հին վիլլայի համար, որն այդքան տարիներ եղել էր տխուր լքվածության մեջ, բոլորովին անսպասելի էին բոլոր այդ կտորներն ու փետրափնջերը, բոլոր այդ շքեղ զարդարանքները, որ արդեն առավոտից նրա վրա կախում էին պաստառագործները: Թվում էր, թե տունը թախիծով ու փոքր-ինչ զարմանքով է նայում դրանց իր պատուհանների աչքերով: Օհո՛-հո՛: Ա՛յ, հիմա մանյակի նման կախեցին նաև երկար դրասանգ՝ դափնիներից, իսկ տանիքի կարկասի տակ՝ մի ուրիշ մանյակ՝ մրտենուց, նաև թղթե վարդերից, որ վախեցնում էին տանիքում ապրող ճնճղուկներին: Խե՛ղճ, սիրելի պստլիկներ, որոնց այնպես սիրում էր այդ տունը՝ հյուրընկալ ծերունին: Ահա նրանք բոլորը թռան-գնացին, վախեցած թաքնվեցին շրջակա ծառերի մեջ, և այնտեղից տուն թռավ բարձր ճռվողյունը, որ կարծես ասում էր.

— Օ՛հ, աստվա՛ծ իմ, քեզ ի՞նչ արեցին, ծերունի, քեզ ի՞նչ արեցին:

Բայց ի՞նչ: Նա՝ ծերունին, արդեն վաղուց-վաղուց քուն էր մտել դաշտերի լռության մեջ: Ետ մնալով կյանքից, գրեթե լքված լինելով նրանից, դոն Կոսմոն որոշ ժամանակից ի վեր սկսել էր իրեն զգալ բնության մի մասը. նրա քարերը երազում նորից զգում էին իրենց ազգակցությունը լեռան հետ, որտեղից կտրել-հանել էին շինության համար. խոնավությունը բարձրանում էր հողի խորքերից և սողալով տարածվում պատերի մեջ, ինչպես հյութը ծառերի ճյուղերում. այս ու այնտեղ ճեղքերում աճել էին խոտերի փնջիկներ, և կտուրի կղմինդրները ծածկվել էին մամռով: Երազում հին տունը հաճույք էր վայելում՝ զգալով, ինչպես է հողը տիրանում իրեն, ինչպես է ինքը սկսում ապրել լեռան կյանքով, բույսերի

կյանքով, և դրա համար ավելի լավ է ընկալում քամիների ձայնը, մոտակա ծովի ձայնը, հեռավոր աստղերի առկայծումը և լուսնի զով փաղաքշանքը: Ի՜նչ գեղեցիկ, նոր, վառ կարմիր գորգ է փռած գյուղական հին սանդուղքին, որտեղ ճաղաշարքի փոխարեն երկու կանաչ ձողեր կային: Դափնիների ու բամբուկների ինչպիսի՜ շարք է ձգվում սանդուղքների երկարությամբ և ապա՝ հարթակում, ինչքա՜ն ծաղկավոր ծալազարդարանքներ կան պատուհանների գոգերում և արևելյան պատշգամբում, որպեսզի թաքցնեին ժանգոտված վանդակը: Ի՜նչ գորգ է և այստեղ՝ պատշգամբում, ինչպիսի՜ եղեգնյա բազկաթոռներ, սեղանիկներ և ծաղիկներով լի սկահակներ... Ա՛յ հիմա ամրացնում են ծանր վարագույրները ծածկի հետ: Փեսացուի ու հարսնացուի ընդունելությունը և նրանց մեկմեկու ներկայացնելը պետք է կատարվեր այդտեղ, որովհետև անհնար էր Մաուրո Մորտարայից կորզել կամերոնեի բանալին: Դեռ արշալույսից նա թաքնվել էր ինչ-որ խուլ տեղում, հայտնի չէ որտեղ: Դոն Կոսմոն առանց պիջակի, ջղային ետուառաջ էր վազվզում կարգի չբերված սենյակում՝ այն ժամանակ, երբ դոննա Սառա Ալայմոն՝ դեռ չսանրված՝ վայելուչ զգեստ էր փնտրում հին, դագաղի նման նեղ ու երկար հաճարենու արկղում, որ նա կարողանա լավ տեսք ունենալ հանդիսավոր արարողության պահին: Այդ արկղից, որ լեցուն էր հին շորերով, կամֆորայի թունդ, սուր հոտ էր գալիս:

— Դուք գոնե կափարիչը բռնեք, տե՛ր իմ աստված,— շնչահեղձ լինելով, կարծես գետնի տակից տրտնջաց խեղճ տնտեսուհին: Արդեն երկու անգամ կափարիչն ընկել էր նրա մեջքին:

Իսկ դոն Կոսմոն.

— Վե՛րջ տվեք, սինյորա: Ախր մենք գյուղում ենք ապրում: Եվ ինձ հանգիստ թողեք:

— Թողեք ձեզ հագցնեմ...— շարունակեց արկղի մեջ տնքալ դոննա Սառան:— Կգա մոնսինյոր եպիսկոպոսը... կգա հարսնացուն... Իսկ դուք ուզում եք ներկայանալ պիջակո՞վ: Թողեք փնտրեմ... Գիտեմ, որ կա:

— Իսկ ես ձեզ ասում եմ՝ չկա:

— Ախր ես տեսել եմ: Կա՛, կա՛:

Դոննա Սառան փնտրում էր հնաձև սերթուկը, որ դոն Կոսմոն երկու թե երեք անգամ էր հագել անհիշելի ժամանակներում. իհա՛րկե, այն վաղուց էր նորաձևությունից դուրս եկել, բայց գոնե տոնական էր:

— Ահա՛,— վերջապես հաղթական բացականչեց դոննա Սառան շտկելով ընդարմացած մեջքը: Եվ նա սկսեց քաշե՛լ, քաշե՛լ, քաշե՛լ...— Աստվա՛ծ իմ, այս ինչքան երկար է:

Բայց այստեղ դոննա Սառայի թևերը թուլացան: Պարզվեց, որ դա փարաջա է. դոն Կոսմո Լաուրենտանոյի փարաջան, որ մնացել էր այն ժամանակից, երբ նա սովորում էր սեմինարիայում: Վերջապես դոննա Սառան այն դուրս քաշեց ամբողջությամբ, որպեսզի ծալի՝ ինչպես հարկն է և նորից թաղի պատշաճ զգուշությամբ: Հետո օրորեց գլուխը և հառաչեց.

— Շա՛տ ափսոս: Ո՞վ իմանա, գուցե դուք կդառնայիք Ջիրջենտիի եպիսկոպոսը՝ մոնսինյոր Մոնտորոյի փոխարեն:

— Ա՛յ թե բախտավորություն կլիներ թեմի համար,— փնթփնթաց դոն Կոսմոն:— Դա գցեք այնտեղ, ցա՛ծ:

Նա հուզվեց՝ անսպասելիորեն տեսնելով այդ փարաջան՝ իր նախկին պատանեկան հավատի ուրվականը: Այդ փարաջայի նման դատարկ ու սև մնաց նրա հոգին: Ի՜նչ տառապանք, ի՜նչ տանջանքներ հայտնվեցին նրա հիշողության մեջ: Շրթունքների անկյունները կախելով և փակելով աչքերը, դոն Կոսմոն խորասուզվեց հեռավոր և, այնուամենայնիվ, մինչև այժմ թախծալի հիշողությունների մեջ՝ իր տանջալից՝ պատանության մասին, բանականության ու

հավատի միջև պայքարի երկար տարիների մասին: Բանականությունը հաղթեց հավատին, իսկ հետո նա ընկղմվեց սև, սառը և խոր հիասթափության մեջ:

— Հը՞, այնտե՞ղ էր, թե՞ չէ,— ի վերջո ասաց դոննա Սառան պարզելով ձեռքերը, որոնց վրա գտնվում էր սերթուկը:

Դոն Կոսմոն հազիվ հասցրեց հագնել սերթուկը: Իշխանական «գվարդիականներից» մեկը (Կոլիմբետրայից եկել էին նրանցից ութը. ճիշտ է, նրանք քայլում էին ոչ թե շարքով, այլ ում խելքին ինչպես փչեր) վազեց սենյակ՝ զեկուցելու մոնսինյորի գալու մասին: Դոն Կոսմոն նորից փնթփնթաց. նա ուզում էր ձեռքերը բարձրացնել երկինք, որ արտահայտի իր սրտնեղությունը, որ պատճառեց իրեն այդ լուրը, բայց չկարողացավ, սերթուկը...

— Իսկը տեղին է: Իսկևիսկ, ինչպես նկարում,— հայտարարեց դոննա Սառան:

— Հենց ինչպես նկարում, գրողը տանի,— գոռաց դոն Կոսմոն:— Սեղմում է թևերիս տակ, շունչս կտրում է:— Եվ դուրս վազեց:

Նա հույս ուներ, թե եպիսկոպոսը կգա վերջինը, և ինքը ստիպված չի լինի ընդունել նրան ու նստել նրա հետ մինչև մյուս հյուրերի գալը: Նրան ջղայնացնում էին հյուրերը, նրան սաստիկ ջղայնացնում էր այդ ամբողջ ճոխ տիկնիկային կատակերգությունը, բայց ամենից ավելի՝ մոնսինյոր եպիսկոպոսի գալը, որ բարձրաստիճան ներկայացուցիչն էր այն աշխարհի, որտեղից հեռացել էր այնպիսի ցավով՝ առանձնապես ծանր ապրելով կեղծավորությունը այնքան ընկերների, որոնք չհամարձակվեցին կապերը խզել, թեև թաքուն համակված էին նույն տարակույսներով, որ ուներ նա: Մոնսինյոր Մոնտորոն հենց դրանց թվում էր: Դոն Կոսմոն ըստ ամենայնի ներողամտությամբ էր վերաբերվում անգիտակից պատրանքներին, անիրական պատկերացումներին, որ անմիջականորեն ծնվում էին մարդկային ոգում և այնքան անհրաժեշտ էին նրան: Դոն Կոսմոն խղճում էր նրանց, ովքեր խաբվում էին այդ ամենին, և կարեկցում էր նրանց. բայց գիտակցաբար ձևանալը՝ ո՛չ, հատկապես այդքան բարձր սահմանակարգում, ինչպիսին եկեղեցին է, կյանքի ու մահու այդ ծառայությունում:

— Ի՜նչ գեղեցիկ է: Ի՜նչ լավն է,— հանդարտ խոսում էր եպիսկոպոսը՝ ելևելով կառքից. նա ուշադիր դիտում էր տեղանքը՝ կանգնած Դիանելլա Սալվոյի և իր քարտուղարի միջև, որը մի երիտասարդ հոգևորական էր, սմքած ու շատ դալուկ, խոր խելոք հայացքով:— Եվ ծովն էլ կողքին... Ի՜նչ գեղեցիկ է: Ի՜նչ լավ է... Եվ հովիտը... հովիտը... և...

Եպիսկոպոսն ընդհատեց իր բացականչությունները՝ տեսնելով, որ հին վիլլայի սանդուղքով իջնում է դոն Կոսմոն:

— Ահա և նա: Իմ թանկագի՜ն դոն Կոսմո:

— Ամենապատվելի մոնսինյոր,— պատասխանեց դոն Կոսմոն՝ անշնորհք կերպով գլուխ տալով:

— Թանկագի՜նս, թանկագի՜նս,— կրկնեց մոնսինյորը՝ գրեթե գրկելով նրան և ձեռքով զարկելով ուսին:— Քանի՛ տարի մենք իրար չենք տեսել: Ծերունիներ ենք, այո՛, ծերունիներ... Դու (հուսով եմ՝ մենք իրար «դու» կասենք, ինչպես հին ժամանակներում)... Դու, եթե չեմ սխալվում, պետք է որ մի քանի տարով մեծ լինես...

— Հնարավոր է, այո՛, մեծ եմ,— հառաչեց դոն Կոսմոն:— Բայց ո՞վ է հիմա տարիները հաշվում, թանկագին Մոնտորո: Գիտեմ, որ ետևում շատ են, առջևում՝ քիչ, բայց մնացած տարիներն էլ ծանր են ինձ համար և թվում են անչափ երկար: Էլ ի՞նչ ասել այստեղ:

Նայելով դոն Կոսմոյին, Դիանելլան ակամա ժպտաց՝ տեսնելով նրա հնաձև սերթուկը, որ սեղմում էր նրա թիկունքն ու ուսերը: Թաքուն ժպտաց նաև երիտասարդ, գունատ հոգևորականը, իսկ պահակախմբի ութ անդամները, որ լարի նման ձգված, կանգնած էին սանդուղքի ստորոտում՝ ո՛չ այն է նեղացած, ո՛չ այն է վշտացած նայում էին, թե ինչ տեսք կունենա իշխանի՝ իրենց տիրոջ եղբայրը այդ հանդիսավոր ընդունելության ժամանակ:

Դոննա Սառա Ալայմոն, որ ինչքան կարողացել՝ լավ էր հարդարել մազերը շորագլխարկի տակ, ցած շտապեց և, մի ծնկին իջնելով, պաչպչեց եպիսկոպոսի ձեռքը. նրա ետևից եկան երկու աղախինները, խոհարարն ու ծառան, մոտեցավ նաև կառավարիչ Վաննի դի Նինֆայի կինը՝ երեք ծուռոտն ու հետևաբաց փոքրիկների հետ: Մոնսինյորը պարզեց ձեռքը, որ համբուրեն, և, գլխով անելով, ժպտաց ամենքին: Հետո նա դոն Կոսմոյին ներկայացրեց իր քարտուղարին և, բարձրանալով վիլլայի սանդուղքով, պատմեց, որ ուղեգնացության ժամանակ այցելել է Սետայի փոքրիկ եկեղեցին. ինչպե՜ս դիմավորեցին իրեն այդ գյուղի բոլոր բնակիչները:

— Ի՜նչ փառավոր մարդիկ են... Ի՜նչ փառավոր մարդիկ են...— Եվ նա Դիանելլային ու դոննա Սառային հարցրեց, թե կիրակի օրերը գնո՞ւմ են այդ եկեղեցին՝ պատարագի:— Գիտեմ, որ Պորտո-Էմպեդոկլեից հատուկ այնտեղ է գալիս մի քահանա, և բարի քաղաքացիները ամբողջ շաբաթը ծխականներից փող են հավաքում՝ ճանապարհածախսը վճարելու համար:

Տուն մտնելով, նա շրջվեց Դիանելլայի կողմն ու հարցրեց.

— Մայրիկդ ինչպե՞ս է:

Ի պատասխան Դիանելլան տխուր տարածեց ձեռքերը և, գունատվելով, դառն կսկիծով նայեց նրա աչքերի մեջ:

— Ի՜նչ ողբերգություն,— հառաչեց մոնսինյորը և նստեց արդեն զարդարված պատշգամբում:— Բայց նա հանգի՞ստ է, գոնե հանգի՞ստ է:

— Ձայնն էլ չի լսվում ,— բացականչեց դոննա Սառան:

— Եվ շարունակում է աղոթել, ճիշտ չէ՞,–ավելացրեց եպիսկոպոսը:

— Շարունակ աղոթում է,— պատասխանեց Դիանելլան:

— Ձեզ համար սփոփանք է, որ մարած բանականության մեջ վառվում է գոնե հավատի լույսը,— նկատեց մոնսինյորը՝ թեթևակի օրորելով գլուխը և փակելով դուրս պրծած աչքերը:— Աստվածային ողորմածություն...

— Կորցնել բանականությունը,— փնթփնթաց դոն Կոսմոն:

Մոնսինյորը շրջվեց ու նայեց նրան՝ փոքր-ինչ վիրավորված: Բայց դոն Կոսմոն, մտածմունքի մեջ ընկած, չնկատեց այդ. նա մտածում էր իր մասին:

— Ես խոսում եմ այն մասին, որ նա, կորցնելով բանականությունը, պահպանել է հավատը,— պարզաբանեց մոնսինյորը:

— Այո՛, այո՛,— հառաչեց դոն Կոսմոն՝ սթափվելով:— Բայց շատ ավելի դժվար է հակառակը, շատ սիրելի մոնսինյոր:

— Կարծում եմ, որ անզգուշություն կլինի երևալ նրան, ճիշտ չէ՞,— հարցրեց եպիսկոպոսը՝ շրջվելով Դիանելլայի կողմը և կարծես չլսելով դոն Կոսմոյի խոսքերը:— Հանգիստ թողնենք, հանգիստ թողնենք նրան: Իսկ քեզ հետ,— հանդարտ, բարեհաճ ժպիտով դիմեց նա դոն Կոսմոյին,— ես կցանկանայի վերսկսել մեր անցած օրերի կրակոտ վեճերը, բայց ո՛չ հիմա և ո՛չ այստեղ... Եթե դուք համաձայնեիք գալ ինձ մոտ...

— Վիճե՞լ: Ախր ես բացարձակապես հիմար եմ,— բացականչեց դոն Կոսմոն:— Ես կատարյալ ապուշ եմ դարձել, իմ թանկագին Մոնտորո: Չեմ կարողանում դատել: Եթե մեկն ինձ ասում է, որ երկու անգամ երկու վեց է, իսկ մյուսը հաստատում է, որ երեք է...

— Ահա՛ և իշխանը,— ընդհատեց նրան դոննա Սառան, որը պատշգամբի ճաղաշարի մոտ կանգնած՝ նայում էր ճանապարհին:

Մոնսինյորը վեր կացավ Դիանելլայի ու դոն Կոսմոյի հետ, որ տեսնի, թե ինչպես է ներս մտնում իշխան Իպոլիտոն: Դոն Կոսմոն սանդուղքով ցած վազեց, որ նրան դիմավորի հենց

կառքի մոտ: Կառքի երկու կողմերով գալիս էին երկու ձիավորներ՝ կապիտան Շարալլան և մի ուրիշ պահնորդ աստիճանով ավելի ցածր, նույնպես տոնական համազգեստով: Նրանց վառ-կարմիր շալվարները երբեմն ուրախ փայլկտում էին ծառերի կանաչի մեջ, երկնքի կապույտի տակ: Կառքը փակ էր: Քարտուղարը՝ Լիզի Պրեոլան, նստել էր իշխանի դիմաց:

Դոննա Սառան գնաց պատշգամբից, որտեղ մնացին միայն մոնսինյորը, նրա քարտուղարն ու Դիանելլա Սալվոն: Ձևավոր ճաղաշարի մոտ կանգնած՝ նրանք նայում էին, թե ինչպես են եղբայրները գրկախառնվում:

Դոն Իպոլիտո Լաուրենտանոն պատանեկան թեթևությամբ դուրս ցատկեց կառքից: Նրա հագին առավոտյան կոստյում էր և լայնեզր, դարչնագույն գլխարկ: Համբուրելով եղբորը, դոն Իպոլիտոն անմիջապես ետ քաշվեց, որ նայի նրան:

— Կոսմո, այդ ինչպե՞ս ես հագնված,— հարցրեց իշխանը ժպտալով:— Ո՛չ, ո՛չ, հենց հիմա գնա և փոխիր այդ հնության հուշարձանը:

Դոն Կոսմոն նայեց իր տոնական սերթուկին, որի մասին արդեն մոռացել էր, թեև այն շարունակում էր սեղմել թևատակերում:

— Այո՛, իսկապես,— ասաց նա,— ինչ-որ հոտ է զգացվում:

— Հո՞տ: Բայց քեզանից է այդ հոտը փչում, թանկագինս,— բացականչեց դոն Իպոլիտոն:— Կամֆորայի սուր հոտ է տարածվում շուրջդ մի ամբողջ մղոն:

Նա ժպտաց մոնսինյորին, հանեց գլխարկը՝ ողջունելով Դիանելլա Սալվոյին, որ կանգնած էր պատշգամբում, հետո սկսեց բարձրանալ սանդուղքով:

— Կարող եմ ձեզ հաճելի բան հաղորդել. դուք ինձանից հիմար եք: Եվ շատ ավելի հիմար, շատ ավելի,— որոշ ժամանակ անց ասաց դոն Կոսմոն նվաստացած ու ջղայնացած «տնտեսուհուն», թեև նա չէր համոզվում, որ այդ տոնական զգեստը անպատեհ էր այդպիսի իրադարձության համար, այն էլ մոնսինյորի ներկայությամբ:— Դուք իմ գլուխն էլ պտտեցրիք,— շարունակեց դոն Կոսմոն,— շմեցրիք ինձ ձեր կամֆորայով... Հանեք իմ վրայից սա, իսկույն հանեք... Ես ինքս չեմ կարող ազատվել սրանից: Եվ ինձ տվեք իմ պիջակը:

Երբ նա նորից հայտնվեց պատշգամբում, դոն Իպոլիտոն ուրախ ձեռքերն իրար զարկեց.

— Ա՛, փա՛ռք քեզ, աստված: Ա՛յ, այդպես լավ է:

Մոնսինյորն ու Դիանելլան ծիծաղեցին:

— Այդ ամենը դոննա Սառան էր: Ի՞նչ կարող էի անել,— ուսերը թոթվելով, հառաչեց դոն Կոսմոն:— Հավատացնում եմ ձեզ. նա շատ ավելի հիմար է ինձանից:

— Դե, դա ինքնին հասկանալի է,— սկսեց ծիծաղել իշխանը:— Ասա՛ ինձ, որտե՞ղ է Մաուրոն: Նա չի՞ երևում:

— Հը՛մ,— փնչացրեց դոն Կոսմոն:— Չքացել է: Ես արդեն քանի օր է՝ ոչինչ չգիտեմ նրա մասին՝ այն ժամանակից, երբ մենք պատիվ ունեցանք...

— Ես գիտեմ որտեղ է նա,— միջամտեց Դիանելլան, նազանքով խոնարհելով գլուխը՝ ի պատասխան այն հաճոյախոսությունների, որ դոն Կոսմոն մտադրվել էր ասել նրան, և որոնք նա ուզում էր ընդհատել:— Եղջերենու տակ, ցածում, հովտում: Բայց խնդրում եմ, ոչ ոք չպետք է իմանա այդ: Չէ՞ որ մենք բարեկամացել ենք:

— Ա՛խ, ահա թե ինչ,— ասաց դոն Իպոլիտոն, և նրա աչքերը ծիծաղեցին՝ հիանալով աղջկա հմայքով ու նրբագեղությամբ:— Այդ արջի՞ հետ:

— Նա վաղուց արդեն խելքը թռցրել է,— լուրջ հայտարարեց դոն Կոսմոն:

— Ո՛չ, ինչո՞ւ,— պատասխանեց աղջիկը:

— Հապա տեսեք, թե ով է այդ ասում, մոնսինյոր,— բացականչեց իշխանը:— Չգիտեմ ինչ կտայի, որպեսզի, աներևույթ մնալով, տեսնեի այն պատկերները, որ խաղացվում են նրանց միջև, երբ նրանք մենակ են:

Դոն Կոսմոն գլխով արեց ու ծիծաղեց իր սովորական ծիծաղով՝ երեք անգամ քրքջալով՝ «Հո՛, հո՛, հո՛»:

— Դա պետք է որ տեսարան լինի,— ավելացրեց դոն Իպոլիտոն:

Դիանելլան բավականությամբ, մի տեսակ տարօրինակ բավականությամբ էր, նայում այդ ծերունուն, որի առնական գեղեցկությունը, զուսպ ուժը և վստահ ինքնատիրապետումը նրան տալիս էին այնպիսի հպարտ և միաժամանակ այնպիսի անխռով վեհություն: Դիանելլան գլխի էր ընկնում, որ շարժուձևի վայելչագեղությունը նա ձեռք է բերել առանց որևէ ջանքի և առանց որևէ անբնականության և աղջիկը ցավ էր զգում, երբ մտովի իրար կողքի էր դնում իշխանին ու հորաքույր Ադելաիդային, որն այնպես նման չէր նրան, նույնիսկ բոլորովին ուրիշ էր՝ պարզամիտ, բորբոքվող: Ինչ տպավորություն կգործի հարսնացուն իշխանի վրա:

Երբ բոժոժիկների արծաթե ղողանջը հայտնեց, որ ծառուղով գալիս է Ֆլամինիո Սալվոյի կառքը, բոլորը, բացի մոնսինյորից ու նրա քարտուղարից, որ մնացել էին սանդղահարթակում, դռների մոտ, պատշգամբից իջան սանդուղքի ստորոտը: Դոն Իպոլիտոն առաջ անցավ, որ տիկիններին օգնի իջնել, ու լսեց, ինչպես հարսնացուն արագ վրա բերեց. «Ահա՛ և մենք այստեղ ենք», և միաժամանակ ձեռքերը վերև նետեց՝ մինչև կառքի կտուրը, կարծես ջանում էր իր մարմնից պոկել դրանք: Իշխանը ձևացրեց, թե չնկատեց այդ չափից ավելի ազատ շարժումը, խոր գլուխս տվեց, համբուրեց նրա, ապա Նիկոլետա Կապոլինոյի ձեռքը՝ այն ժամանակ, երբ երկու կանայք ուրախությամբ գրկում էին Դիանելլային, իսկ դոն Կոսմոն կանգնել էր լիովին շփոթահար՝ չհամարձակվելով մոտենալ կանանց: Կապիտան Շարալլան արծանի նման քարացել էր սպիտակ զամբիկի վրա՝ պատվի առած ջոկատի առաջ:

— Ախ, զորականնե՛րը: Թողե՛ք նայեմ զորականներին,— բացականչեց դոննա Ադելաիդան՝ սագի նման օրորվելով և նույնիսկ չնկատելով, որ սանդուղքի վերին հարթակից, դափնիների ու բամբուկի չաների արանքից մոնսինյորն արդեն երրորդ անգամ իզուր գլուխ էր տալիս նրան՝ բարեհաճ ու ներողամիտ ժպիտով:

Վերջապես ուշադրություն դարձնելով դոն Կոսմոյի շփոթության վրա, Դիանելլան ընդհատեց Նիկոլետա Կապոլինոյի բուռն զեղումները և պահեց հորաքրոջը, որ ծանոթացնի նրա ապագա տագրոջ հետ:

— Ախ, այդ դուք եք,— ասաց դոննա Ադելաիդան՝ ծիծաղելով ու սեղմելով նրա ձեռքը:— Շատ հաճելի է: Վալսանիայի ճգնավորն եք, ճիշտ չէ՞: Շա՛տ, շա՛տ հաճելի է: Եվ ի՛նչ գեղեցիկ եք զարդարել վիլլան: Մի նայեցե՛ք, նայեցե՛ք, մոնսինյորն արդեն այստեղ է... Եվ ոչ ոք ինձ չի ասել:

Նա փութկոտ քայլերով գնաց սանդուղքով. իշխանն իսկույն հասավ նրան և առաջարկեց իր ձեռքը. դոն Կոսմոն ձեռքը տվեց Նիկոլետային, իսկ Դիանելլան գնաց հոր հետ:

— Այս զորականներն իսկապես գեղեցիկ են հագնված,— դոննա Ադելաիդան իշխանին և ազատ ձեռքով մի փոքր բարձրացրեց զգեստի փեշը, որ չսայթաքի սանդուղքի աստիճաններին:— Ճիշտ եմ ասում, նրանք շատ սիրուն են: Իսկական շաքարե տիկնիկներ:

Հետո, դեռ սանդուղքի վերին հարթակը չհասած, բացականչեց.

— Սրբազան մոնսինյոր: Ես մտածում էի, թե ձերդ սրբազնությունը կգաք, երբ ձեզ համար հարմար կլինի, իսկ դուք արդեն այստեղ եք... Ճշտապահորեն:

Եպիսկոպոսը ժպտաց, պարզեց ձեռքը, որ դոննա Ադելաիդան համբուրի մատանին, և ասաց նրան.

— Շատ էի ուզում շուտ տեսնել ձեզ իշխանի հետ թևանցուկ, դոննա Ադելաիդա, ուրախանալ և ասել ձեզ՝ բարի գալուստ Լաուրենտանոյի տիրույթները:

— Ինչքան բարի եք, շնորհակալություն, շնորհակալություն, ձերդ սրբազնություն,— պատասխանեց դոննա Ադելաիդան, որի առաջ իշխանն արդեն բացել էր վիլլայի դուռը:

Ներս մտավ մոնսինյորը, ապա՝ դոննա Նիկոլետան, հետո՝ Դիանելլամ ու Սալվոն, եպիսկոպոսի քարտուղարն ու դոն Կոսմոն: Իշխանը ցանկացավ ներս մտնել վերջինը: Բարձրանալով պատշգամբ, նա որսաց Դիանելլայի փաղաքուշ աչքերի զննող հայացքը և իսկույն էլ պատասխանեց հազիվ նկատելի ժպիտով:

— Գեղեցիկ տղամարդ է, ճիշտ չէ՞,— կամացուկ ասաց Նիկոլետա Կապոլինոն Դիանելլային:— Եվ նրան բոլորովին էլ պետք չէ կարճացնել մորուքը, ինչպես հավատացնում էր Ադելաիդան:

— Կարճացնե՞լ մորուքը,— հարցրեց Դիանելլան:

— Այո՛,— պատասխանեց Նիկոլետան:— Նա մեզ այնպես ծիծաղեցրեց կառքում՝ անդադար կրկնելով, որ վախենում է իշխանի մորուքից:

— Այդ ինչի՞ մասին եք խոսում այդտեղ,— հանկարծ հարցրեց դոննա Ադելաիդան:— Ծիծաղո՞ւմ եք մեզ վրա: Ինձ վրա են ծիծաղում և ձեզ վրա, թանկագին իշխան: Աղջնակներ: Բայց ոչինչ չես կարող անել. մենք դրա համար ենք այստեղ. այսօր մեր օրն է... ինչպես տոնավաճառում: Ֆլամինիո, սիրելի բարեկամս, աչքերով մի՛ ուտի ինձ: Ավելի լավ է մի քիչ քաջալերես: Ես քո ամեն ասածին պատասխանում եմ՝ «այո», միշտ «այո»: Թույլ տուր ինձ ուրախ լինել: Ախր ես հիմար բաներ եմ ասում, որովհետև հուզվում եմ... Գնա՛նք, Նիկոլետա: Ձեր թույլտվությամբ, իշխան, ես կգնամ բարևելու իմ խեղճ հարսին:

Եվ գնաց. նրան հետևեցին զարմուհին ու Նիկոլետան:

Որպեսզի մեղմի իշխանի հոգում տիաճ տպավորությունը, որ թողել էր քրոջ հանկարծակի փախուստը, Սալվոն անմիջապես խորհրդավոր տեսքով բացատրեց, որ սինյորա Կապոլինոն չգիտի այն մասին, որ իր ամուսինը հենց այդ պահին մենամարտում է, այլ մտածում է, թե նա գնացել է Սիկուլիանա՝ ընտրությունների գործերով:

— Աղոթենք աստծուն, որ ամեն ինչ լավ լինի,— վշտալի հառաչեց եպիսկոպոսը՝ աչքերը բարձրացնելով դեպի երկինք:

— Օ՛, այստեղ կասկածելու հարկ չի լինի,— ժպտաց Սալվոն:— Ծիծաղելի հակառակորդ է, որին միշտ բոլորը հաղթել են. կարճահասակ է, հաստլիկ, խիստ կարճատես: Իսկ ինչ վերաբերում է մեր Կապոլինոյին...

— Հենց որ ես դուրս եկա դարպասից, հեռու ճանապարհին տեսա երկու կառք, որ գնում էին դեպի Կոլիմբետրա:

— Այո՛, այո՛,— ավելացրեց Սալվոն,— հիմա արդեն ամեն ինչ վերջացել է...

Նա լռեց: Բոլորը նույնպես լռեցին մի ակնթարթ, իրենց կամքին հակառակ համակվելով տագնապով, և նրանց մտքերը սլացան հեռավոր վիլլան, ուր տեղի էր ունենում մենամարտը: Այնտեղ բոլորովին այն չէր, ինչ այստեղ. այնտեղ երկու մարդ կանգնել էին իրար դիմաց՝ թափահարելով արևի տակ շողացող սրերը, իսկ այստեղ գյուղական լռության մեջ հյուրերը խաղաղ զրուցում էին շքեղ զարդարանքների մեջ, որ կախված էին ամենուր՝ տոնահանդեսի համար և հիմա բոլորին տարօրինակ կերպով անպատեհ էին թվում: Իրականում հենց գալու պահից բոլորի հոգում կար ինչ-որ անորոշ սառնություն, որ և՛ իշխանը, և՛ Սալվոն ձգտում էին թաքցնել: Այդ սառնությունն առաջացել էր այն պատճառով, որ վերջապես եկել էր Լանդոյի պատասխանը հոր նամակին՝ սովորական շնորհավորանքներ, սովորական

բարեմաղթություններ, ուրախության նրբաճաշակ արտահայտություններ այն առթիվ, որ հայրը գտել է լավ, սիրող կյանքի ընկերուհի, բայց ոչ մի խոսք այն մասին, թե արդյոք կգա՞ ինքը հարսանիքին: Թողնելով Կոլիմբետրան, դոն Իպոլիտոն մտադրվել էր Հռոմ ուղարկել Մաուրո Մորտարային, որ նա Լանդինոյին բացատրի, թե որքան է վշտացած հայրը նրա վարմունքից, և ստիպի նրան վերադառնալ Սիցիլիա: Իշխանը գիտեր, որ վաղ մանկությունից Լանդինոն խորապես կապված էր ծեր Մաուրոյի հետ, քնքշորեն սիրում էր նրան և հիանում էր նրա հաստատակամությամբ, արտասովոր նվիրվածությամբ պապի գաղափարներին ու հիշատակին, գրեթե արհամարհական վերաբերմունքով, որ նա հենց սկզբից դրսևորեց և հիմա էլ դրսևորում էր դոն Իպոլիտոյի նկատմամբ, թեև սա նրա տերն էր: Մաուրոն կլիներ ամենահարմար պատվիրակը. ո՛չ ոք չէր կարող ավելի մեծ հաջողության հասնել, քանի որ այդ ծեր վայրենին արմատներով էր ներաճել ընտանիքի սրտում: Իշխանը հարմար պահ որսաց, երբ երկու կանայք հեռացել էին, դուրս եկավ սանդղահարթակ և Շարալլային հրամայեց՝ Վաննի դի Նինֆային ուղարկել ցած՝ ձորը, որ գտնի Մաուրոյին ու հայտնի, որ իշխանն ուզում է խոսել իր հետ: Վերադառնալով պատշգամբ, նա այնտեղ գտավ դոննա Ադելաիդային ու դոննա Նիկոլետային՝ առանց գլխարկի, ինչպես և Դիանելլային: Դոննա Ադելաիդայի աչքերը կարմրել էին արցունքներից, Դիանելլան ավելի էր գունատվել, իսկ Սալվոն դարձել էր ավելի ողբերգական:

— Ես ձեզ չխնդրեցի, դոն Ֆլամինիո,— տխուր ասաց իշխանը,— որ ինձ ներկայացնեք ձեր տիկնոջը, որովհետև լավ գիտեմ...

— Օ՛, շնորհակալ եմ, շնորհակալ եմ,— ընդհատեց նրան Սալվոն՝ պարփակվելով իր վշտի մեջ, փակեց աչքերը և կամացուկ օրորեց գլուխը, կարծես ուզում էր ասել. «Այո, այո... նա գոյություն ունի, ինչպես՝ եթե չլիներ»:

Դոննա Ադելաիդան կանգնել էր ձևավոր ճաղաշարի մոտ՝ թիկունքով դեպի մյուսները և, աչքերը սրբելով ու բարձր խնչելով, խոսում էր Նիկոլետա Կապոլինոյի հետ, որն աշխատում էր հանգստացնել նրան:

— Գիտեմ, ես պառավ հիմար եմ... Բայց ի՞նչ կարող եմ անել: Երբ տեսնում եմ նրան, երբ տեսնում եմ նրա աչքերը... այնպիսի ցավ եմ զգում: Այնպիսի ցավ եմ զգում:

Հանկարծ, իր վրա ճիգ գործ դնելով, նա շտկվեց, ցնցեց գլուխը և բարձր շունչ քաշեց.

— Ո՛ւֆ-ֆ, դե՛, հերի՛ք է:— Եվ ժպտալով շրջվեց հավաքվածների կողմը:

Պատշգամբում հայտնվեցին շքազգեստով երկու ծառա, որ սկուտեղ-ների վրա բերեցին թեյով լի գավաթներ ու քաղցր խմորեղեն: Այն բանից հետո, երբ բոլորը լավ կերան ու խմեցին, մոնսինյոր Մոնտորոն խոսք վերցրեց, որ մի փոքրիկ, վայելուչ քարոզով (որը նա ուզում էր հրամցնել որպես հենց նոր, հանպատրաստից հորինված) պաշտոնապես հայտնի մոտ ապագայում նշանակված հարսանիքի մասին և, իհա՛րկե, հիշեցնի այն բարի ժամանակները, երբ հասարակությունը բավարարվում էր նրանով, որ մարդիկ ամուսնական դաշինքը կնքում էին աստծո առաջ, քանի որ միայն կրոնը կարող է սրբազան ու ազնվաբարո դարձնել ամուսնությունը, որը ստորացված է ու պղծված, եթե կնքվում է մարդկային օրենքով կամ, ինչպես հիմա են ասում, քաղաքացիական: Բոլորը, հայացքները խոնարհած, բարեպաշտական լարվածությամբ լսում էին եպիսկոպոսի հղկած պարբերությունները: Միայն դոն Կոսմոն էր մռայլվել և ամուր սեղմել կոպերը, կարծես ամեն բառի մեջ փիլիսոփայական վեճի առիթ էր փնտրում: Տեսնելով նրա դիրքը և դեմքի արտահայտությունը, դոն Իպոլիտոն ինքն էլ լրջորեն մտածմունքի մեջ ընկավ: Ֆլամինիո Սալվոն իր հերթին մտածում էր Հռոմից եկած այդ խիստ տհաճ նամակի մասին. իհա՛րկե, եպիսկոպոսի բոլոր նկատառումներն ազնիվ էին ու գեղեցիկ, մինչդեռ սինյոր իշխանորդին խուլ մնաց հոր խնդիրքին և, այսպիսով, գլխավոր պայմանը չի կատարված, և նրա՝ Սալվոյի քույրը՝ համաձայնվում է կոմպրոմիսի՝ ոչ մի երաշխիք ստանալով: Դոննա Ադելաիդան ներկա էր այդ փոքրիկ քարոզին, ինչպես եկեղեցական արարողության, կարծես պատարագ էր լսում, հասարակ ձևականություն: Նիկոլետա Կապոլինոյի համար այդ ամենը

կատակերգություն էր տվյալ պահին ոչ այնքան զվարճալի, իսկ Դիանելլայի համար, որը նայում էր Նիկոլետային և պարզ կարդում նրա մտքերը, պարզապես նողկալի էր:

Ծովից բարձրացավ թեթև քամի, և պատշգամբի վրայի կտավե ծածկը երբեմն ուռչում էր, իսկ ծաղկավոր ծալազարդման մի պաստառ, որ քողարկում էր ճաղաշարը, թափով զարկվում էր դրա ձողիկներին: Այդ ձայնը ի վերջո դոննա Ադելաիդայի առանց այդ էլ ոչ այնքան խորին ուշադրությունը շեղեց քարոզից, որը, նրա կարծիքով, չափից ավելի ձգձգված էր, իսկ երբ քամու բերած ամպը հանկարծ ծածկեց արևը, դոննա Ադելաիդան թեքվեց, որ ծանր վարագույրի տակից նայի երկնքին, և չկարողացավ զսպել իրեն, որ չփնթփնթա.

— Միայն թե անձրև չգա...

Այդ մի քանի բառը, որ թեև ասվել էին շշուկով, ուժեղ ազդեցություն գործեցին, կարծես բոլորը (բացի, իհա՛րկե, մոնսինյորից) անհաղթահարելիորեն զգում էին ինչ-որ անմիջական կապ անձրևի սպառնալիքի և այդ խիստ երկարաձիգ, անվերջանալի քարոզի միջև: Դոն Կոսմոն զարմացած չռեց աչքերը, դոննա Նիկոլետան չկարողացավ զսպել իրեն և փնչացրեց, դոն Ֆլամինիոն մռայլվեց, շփոթված մոնսինյորը կիսատ թողեց խոսքը և ասաց.

— Հուսանք, որ չի լինի,— և իսկույն ավելացրեց:— Ես վերջացնում եմ:

Նա ավարտեց երջանկության մաղթանքներով ու շնորհավորանքներով, և բոլորը վեր կացան: Դոննա Ադելաիդան պարզապես շնչահեղձ էր լինում այդ առագաստի տակ. նա առաջարկեց իջնել և զբոսնել ծառուղում: Իշխանը նորից ձեռքը տվեց նրան, Նիկոլետան ցած իջավ Դիանելլայի հետ, իսկ մոնսինյորը, Սալվոն, դոն Կոսմոն ու քարտուղարը քայլեցին նրանց ետևից:

Դոն Իպոլիտո Լաուրենտանոն զգում էր, որ բերանը ցամաքել է, ու լեզուն՝ կապվել: Նրա մեջ դաժան ներքին պայքար էր մղվում ասպետական զգացումի, որը նրանից պահանջում էր ուշադրություն ու նրբակիրթ վերաբերմունք կնոջ նկատմամբ, և հիասթափության ու անհաղթահարելի զզվանքի զգացումի միջև, որ իսկույն հարուցեցին դոննա Ադելաիդայի իրեն պահելու ձևերը, շարժումները, ձայնը, ծիծաղը. մի կողմից՝ նրա մեջ ծագեց բնազդական, ճնշող, անհաղթահարելի պահանջ՝ որքան կարելի է շուտ ազատվել այդ կնոջից՝ ջնջելով այդ ծրագիրը, որը հիմա, երբ սկսել էր իրականանալ, նրան պատկերանում էր անտանելի և շատ ավելի խղճուկ, քան նախնական պատկերացումը, որ կազմել էր դրա մասին, մյուս կողմից՝ նրան տանջում էր այն միտքը, թե որքան դժվար է այդ բանն անել հիմա, երբ կայացել է նախնական համաձայնությունը, և, բացի այդ, նրա հոգին կրծում էր թաքուն ու դառն սրտնեղությունը ինչ-որ տեղ հեռվում ապրող որդու հանդեպ, որի առաջև իշխանն իրեն պարտվածի նման էր զգում այն բանից հետո, երբ այնքան նվաստացավ, որ գրեթե թույլտվություն խնդրեց նրանից այդ հարսանիքի համար: Վերջապես նրա մեջ եփ էր գալիս դառն վիրավորվածությունը մոնսինյորից, որն այնպես սուտ էր նկարագրել հարսնացուին. զվարթ է, մեծ սրտով, բաց հոգով, անկեղծ, աշխույժ, զիջող: Հիմա ի՞նչ ասել հարսնացուին, ի՞նչ խոսել նրա հետ: Բարեբախտաբար, հայտնվեց կապիտան Շարալլան և, պատվի առնելով, զեկուցեց, որ Մորտարան բարձրացել է «հովտից»:

— Իսկ որտե՞ղ է նա,— խստորեն հարցրեց իշխանը:— Թո՛ղ գա այստեղ:

— Մաուրո՞ն,— հարցրեց դոն Կոսմոն:— Ո՛չ, թող նրան, թշվառին: Չէ՞ որ դու գիտես, թե նա ինչպիսի...

— Ա՛խ, այդ նա է, ում կոչում են Վանական,— բացականչեց դոննա Ադելաիդան:— Գնանք տեսնենք նրան, գնա՛նք հենց հիմա, իշխան, խնդրում եմ:

— Ո՛չ հորաքույր,— սկսեց աղերսել Դիանելլան՝ զղջալով, որ ցույց է տվել նրա գաղտնարանը:— Նրա համար տհաճ կլինի...

— Բայց նա իսկապե՞ս այդպիսի արջն է,— զարմանքով հարցրեց դոննա Ադելաիդան:

— Բոլոր արջերից արջ,— հաստատեց դոն Կոսմոն:

— Պատկերացրեք,— ավելացրեց Ֆլամինիո Սալվոն,— ես արդեն քանի օր է այստեղ եմ և ոչ մի անգամ չեմ կարողացել տեսնել նրան:

Իսկ Նիկոլետան հարցրեց.

— Ճի՞շտ է, որ նա այծի մորթի է դնում գլխին և մինչև ատամները զինված է:

— Եկեք երկուսով գնանք, իշխան,— նորից առաջարկեց դոննա Ադելաիդան:— Այնպես եմ ուզում տեսնել նրան, պարզապես դիմանալու ուժ չկա, գնա՛նք:

Մաուրոն կանգնած էր առաջին հարկի իր սենյակի դռան առաջ և մռայլ նայում էր խաղողի այգուն ու ծովին: Տեսնելով իշխանին ու սինյորային, նա է՛լ ավելի մռայլվեց, բայց երբ դոն Իպոլիտոն փաղաքուշ ձայնով կանչեց նրան, նա մոտեցավ ու համբուրեց տիրոջ կուրծքը: Համբույրին հետևեց թույլ հեծկլտանքի նման մի բան:

— Իմ սիրելի ծերուկ,— ասաց դոն Իպոլիտոն՝ մինչև սրտի խորքը հուզված այդ համբույրից:— Գիտե՞ս ով է այս սինյորան:

— Գլխի եմ ընկնում. թող աստված ձեզ բախտավորություն տա,— պատասխանեց Մաուրոն՝ լուրջ նայելով դոննա Ադելաիդային, որ դիտում էր նրան լայն բացված, փայլուն աչքերով, ժպիտով, որից նրա բերանը ձգվում էր մինչև ականջները:

— Ես կուզենայի քեզ էլ բախտավոր դարձնել,— շարունակեց իշխանը:— Ուզո՞ւմ ես գնալ Հռոմ:

— Հռո՞մ: Ե՞ս,— զարմացած բացականչեց Մաուրոն:— Հռո՞մ: Եվ դուք հարցնո՞ւմ եք: Քանի անգամ եմ ուզել այնտեղ գնալ ոտքով ուխտավորի պես, եթե իմ ոտքերը...

— Լավ,— ընդհատեց նրան իշխանը,— դու այնտեղ կգնաս շոգենավով ու երկաթուղով: Ես ուզում եմ քեզ հանձնարարությամբ ուղարկել Լանդոյի մոտ: Վաղն արի Կոլիմբետրա... ո՛չ, սպասիր... Վաղը չի կարելի: Թող մտածեմ: Շաբաթվա մեջ ես մարդ կուղարկեմ քո ետևից: Մեր խոսակցությունը երկար կլինի:

— Իսկ հետո՝ շուտով Հռո՞մ:

— Շատ շուտով:

— Ախր ես արդեն ծեր եմ,— ավելացրեց Մաուրոն:— Երկու յոթի շեմքին... Ես միշտ վախենում էի, որ այսպես էլ կմեռնեմ՝ չտեսնելով Հռոմը:

— Եվ դուք Հռոմ կգնաք ձեր այդ հագուստո՞վ,— հարցրեց դոննա Ադելաիդան:

— Ո՛չ, սինյորա,— պատասխանեց Մաուրոն:— Ես լավ զգեստ ունեմ, մահուդե և լավ, սև գլխարկ, ձեր փեսացուի գլխարկի նման:

— Իսկ այդ փրչոտ փափախը,— շարունակեց դոննա Ադելաիդան,— դուք ինչպե՞ս կարող եք հագնել: Օ՛, աստված, ես տառապում եմ հենց միայն դրա տեսքից:

— Այս փափախը...— սկսեց բացատրել Մաուրոն, բայց նրան ընդհատեց ինչ-որ մեկի բարձր ճիչը, որ լսվեց տան մյուս կեսից:

Արագ քայլերով նրանց մոտեցավ անհանգստացած Ֆլամինիո Սալվոն:

— Դոն Իպոլիտո՛: Արա՛գ, արա՛գ: Մեր Կապոլինոն...

— Ի՞նչ է պատահել,— բացականչեց դոննա Ադելաիդան:

— Վիրավորվա՞ծ է,— հարցրեց իշխանը:

— Այո՛, և թվում է՝ լուրջ,— պատասխանեց Սալվոն:— Գնա՛նք:

— Բայց այդ ո՞վ ասաց:

— Ձեր մարդկանցից մեկը, որ վազել-եկել է Կոլիմբետրայից: Կապոլինոյին տարել են ձեզ մոտ՝ վերև, կրծքից է վիրավորվել... Չգիտես սրո՞վ, թե՞ ատրճանակով... Իսկ խեղճ սինյորա Նիկոլետան այստեղ է, մեզ հետ:

Բարձրանալով տուն, նրանք տեսան Նիկոլետային, որն աշխատում էր դուրս պրծնել իրեն բռնող մոնսինյորի ու Դիանելլայի ձեռքերից և անդադար հեծեծում էր.

— Դա ինձ սիրտս հուշեց... Սիրտս ինձ ասաց: Որտե՞ղ է գլխարկս... Գնալ, շուտ... Սրիկանե՛ր, մարդասպաննե՛ր... Օ՛, իմ Նյացիո:

— Կառքը մատուցված է,— տեղեկացրեց պատշգամբում հայտնված կապիտան Շարալլան:

Ոչ ոքի հրաժեշտ չտալով, Նիկոլետան ցած սլացավ:

— Իսկ դո՞ւք, իշխան,— ասաց Սալվոն:

— Ե՞ս էլ պետք է գամ,— հարցրեց դոն Իպոլիտան:

— Այդպես ավելի լավ կլինի: Ադելաիդա՛, դու այս երեկո կմնաս այստեղ: Գնա՛նք, գնա՛նք:

Կառքը, որ տանում էր Նիկոլետային, իշխանին ու Սալվոյին, սլացավ քառատրոփ:

— Օ՛, սուրբ տիրամայր, ի՛նչ դժբախտություն,— ձեռքերն իրար զարկելով, բացականչեց սանդղահարթակում մնացած դոննա Ադելաիդան:— Եվ ինչո՞ւ էր պետք մենամարտ սարքել հենց այսօր: Մի՞թե այդպիսի բան արվում է: Աստծուն հանգիստ թողեք, մոնսինյոր: Շնորհ արեք: Դա ո՞ւմ է պետք: Ներեցե՛ք, ձերդ սրբազնություն, բայց մի՞թե կարելի է այդպես վարվել ինձ նման թշվառ կնոջ հետ:

Գլուխ VIII

Ընտրությունների օրը դոննա Կատերինա Լաուրենտանոյի տանը՝ Ռոբերտոյի մոտ հավաքվեցին մի քանի բարեկամներ, որոնք հավատարիմ էին մնացել նրան, որոնց հետ հիմա հանդիպեց նորից, և որոնք, ինչպես և ինքը շատ էին փոխվել և՛ ժամանակից, և՛ կյանքի ձախորդություններից: Երբ գրկում էր բարեկամին, նրանցից յուրաքանչյուրի աչքերում մի ակնթարթ առկայծում էր պատանության ցոլքը, այն հեռավոր օրերի ցոլքը, երբ նրանք չգիտեին, թե ճակատագիրն ինչ է պատրաստել իրենց համար. հետո՝ գլխի թեթևակի շարժում, և հուզմունքից մշուշվում էին նրանց աչքերը, իսկ շրթունքները ծռվում էին թախծալի ժպիտից: «Ո՞վ կարող էր պատկերացնել,— ասում էին այդ մշուշված հայացքն ու այդ ժպիտը,— որ մի գեղեցիկ օր մենք կհանդիպենք ա՛յ այսպես, ինչպես հիմա: Որ մենք կկորցնենք այն ամենը, ինչով ապրում էինք այն ժամանակ և ինչից, թվում էր, անհնար է զրկել մեզ: Եվ, սակայն, մենք այդ ամենը կորցրեցինք, և ուրիշ ոչինչ չկա մեր կյանքում»: Ավելի ցավալի էր տեսնել նրանց, ովքեր չէին նկատում կամ ձևացնում էին, թե չեն նկատում իրենց կորուստները, փութաջանորեն ընդգծում էին այդ՝ առանձնապես ջանադիր հոգացողությամբ իրենց արտաքինի մասին, այնպես որ ծերացող մարդու նկարագրում կարելի էր երբեմն կռահել այն արտահայտությունն ու վարքագիծը, որ հատուկ էին նրան երիտասարդ տարիներին: Ամեն մեկը հարմարվել էր իրադրությանը, ինչպես կարողացել էր, հարմարավետ բույն էր սարքել իր համար, ստեղծել որոշ դիրք: Սեբաստիանո Չերաուլոն՝ թերուս փաստաբան, հայրենասիրական ոտանավորների բոցաշունչ, հանպատրաստից հորինող հեղափոխության տարիներին, քաջարի, կրակոտ պատանի՝ գզգզված մազերի դեզով, հիմա հովանավորության շնորհիվ որպես քարտուղար ընդունվել էր գավառի գրասենյակը և խնամքով, բայց բավական անհույս կերպով որոշ ձևով սանրվածք էր շինում գանգի վրա դեռ չթափված մի քանի երկար, ներկած մազերով: Նա անասելի հաստացել էր, ամուսնացել, աշխարհ բերել հինգ աղջիկներ, որոնք ձգտում էին մարդու գնալ: Մյուսը՝ Մարկո Սալան, որ Բուրբոնների կառավարության կողմից հեռակա կարգով

դատապարտված էր մահվան և, չնայած դրան, մի քանի անգամ վանականի զգեստով վերադարձել էր Սիցիլիա, որ գաղտնի տարածի Մաձինիի թռուցիկները, Իտալիայի միավորումից հետո զբաղվեց ծծմբի վաճառքով. մի քանի տարի բախտը բերեց, հետո նա սնանկացավ և որոշ ժամանակ ընտանիքը պահում էր մոլեխաղերում շահածով. վերջապես նրան հաջողվել էր պահեստապետի պաշտոն ստանալ ծխախոտի ֆիրմայում: Ռոզարի Տրիգոնան ժամանակին՝ հազար ութ հարյուր վաթսուն թվականի մայիսի տասնհինգին, երբ Գարիբալդին մարտնչում էր Կատալաֆիմիում, իր մի քանի ընկերների հետ Ջիրջենտիում խենթի նման դուրս եկավ բուրբոնյան կայազորի երեք հազար զինվորներին ընդառաջ՝ մի ձեռքին եռագույն դրոշ, մյուս ձեռքին, ահագին մի սուր: Հետապնդվելով, գնդակների տարափի տակ նա հրաշքով փրկվեց և ոտքով հասավ հաղթական Գարիբալդիի ջոկատներին. նա վազում էր գիշեր ու ցերեկ՝ ազատվելով արքայական զինվորներից, որոնք ամբողջ Սիցիլիայում փնտրում էին Ավանտյուրիստին , որն այդ ժամանակ արդեն գտնվում էր Ջիբիլռոսսայում, Պալերմոյի մոտ: Իսկ հիմա Ռոզարիո Տրիգոնան՝ տառապելով նեֆրիտից, ուռած, ճաղատ, անատամ և գրեթե կույր, նույնպես ընտանիքով ծանրաբեռնված, աղքատի գորշ, անբովանդակ կյանք էր վարում առևտրական պալատի քարտուղարի տեղակալի քիչ աշխատավարձով: Իսկ Մատտիա Գանջին, որն անցյալում վրայից դեն էր նետել փարաջան, որ մասնակցի հեղափոխությանը, հիմա դարձել էր չարացած ասթմահար. նրա մորուքը, մազերը և փրչոտ հոնքերը դարձել էին մի տեսակ գազարի գույնի: Նա դասավանդում էր գիմնազիայի առաջին դասարաններում՝ alauda est laeta և, աչքերը չռելով, տղաներին ասում էր. «Ուրախ է, գրողը տանի: Ինչպե՞ս չէ: Երգում է, որովհետև սոված է: Երգում է, որ իրեն ուտելիք տան: Ուրախ է, գրողը տանի»: Բոլորովին ուրիշ տեսակ էր Ֆլամինիո Նոտոն՝ բարձրահասակ, նիհար, դալուկ, բայց դեռևս բաց խարտյաշ էին մազերը, և գեղեցիկ էր հագնված: Մի ժամանակ՝ դեռ հազար ութ հարյուր վաթսուն թվականից առաջ, նա կնոջ պատճառով մենամարտել էր բուրբոնյան մի սպայի հետ ու ենթարկվել հալածանքների. այդ սիրային արկածը նրա համար հայրենասիրական ելույթների առիթ դարձավ, բայց նա քիչ էր հետաքրքրվում քաղաքականությամբ: Նա շատ էր սովորել և կարողացել էր չխորտակվել, մնալ մակերեսին, նորանալ ժամանակի հետ միասին՝ այնուամենայնիվ մնալով «մոլոշ», պահպանողական: Նա համարվում էր Սիցիլիայի առավել փորձված փաստաբաններից մեկը, և նրան հաճախ էին որպես դատապաշտպան հրավիրում առավել կարևոր քաղաքացիական գործերի քննության ժամանակ՝ նույնիսկ Պալերմո, Մեսսինա, Կատանիա:

Այդ հինգ բարեկամներն ու կանոնիկոս Ագրոն աշխատում էին շարունակել աշխույժ զրույցը. նրանք խոսում էին կողմնակի թեմաներով, հիշում էին վաղեմի իրադարձություններն ու զվարճալի դեպքեր, որ զուսպ ծիծաղ էին հարուցում: Նրանք չէին ուզում, որ տխուր լռությունից ավելի մռայլ դառնա ճնշված տրամադրությունը, որ առանց այդ էլ համակել էր բոլորին, որ կանխատեսում էին պարտությունը ընտրություններում: Բայց բարեկամին հանդիպելիս առաջին պոռթկումից հետո և ապա հեռավոր պատանեկան հուշերից շարունակ աճող հուզմունքի պատճառով սկսում էր աստիճանաբար փոխվել պատկերացումը ներկայի մասին: Նրանք թաքուն խռովքով, ինչ-որ ներքին խանդաղատանքով նորից զգացին իրենց այնպիսին, ինչպիսին էին շատ-շատ տարիներ առաջ՝ նույն մտքերով ու զգացմունքներով, որոնք հիմա այնքան էին մոռացված, որ նրանց թվում էին արդեն աղոտացած, մարած, ջնջված: Նրանցից յուրաքանչյուրի մեջ հանկարծ արթնացավ մի այլ արարած՝ նա, որ ինքն էր երեսուն տարի առաջ: Բայց այդ արարածը այնպես լարվածաբար էր ապրում, որ մեկմեկու նայելով, նրանք տարօրինակ տպավորություն էին զգում՝ թախծոտ և միաժամանակ զվարճալի՝ նրա այժմյան տեսքի պատճառով, որը նույնիսկ նրանց մի տեսակ ո՛չ իրական էր թվում, ո՛չ կենդանի: Ժամանակ առ ժամանակ հյուրասենյակ էր մտնում Անտոնիո Դել Ռեն. իսկ պատանին նրանց տեսնում էր այնպես, ինչպես կային իրականում՝ ծերունիներ: Լսելով նրանց զրույցները, Անտոնիոն զգում էր այն տարօրինակ թախիծը, որին միշտ տրվում ես, երբ տեսնում ես, թե ինչպես ծերունիների մեջ, որ մի ակնթարթ մոռանում են իրենց տարիքը, վերակենդանանում են կրքերը վաղուց անցած օրերի, որոնց մասին մենք արդեն ոչինչ չգիտեինք:

— Մենք այն ժամանակ ուշացանք Սան-Ջերլանդոյում,— պատմում էր Մարկո Սալան,— գրեթե մինչև կեսգիշեր խաղում էինք Ջաչինտո Լումիայի տանը, փառավոր մարդ էր նա:

— Խե՜ղճ Ջաչինտո,— գլուխն օրորելով, հառաչեց Տրիգոնան:

— Մեզ հետ էր նաև Վինչենցո Գուարնոտտան, Սիկուլյանայից,— շարունակեց Սալան:

¬— Նա՞ էլ է մեռել:

— Դե, արդեն ինը թե տասը տարի առաջ:

Եվ նա, որ շարունակ ժպտում էր ո՛չ այնքան շրթունքներով, որքան աչքերով... աչքերը ջինջ՝ ծովի նման... թրծակավի գույնի մաքուր սափրած դեմք... «Ah, sti cazzi! Chi mi piglia pi fissa?» . Նա էլ է հեռացել կյանքից:

— Մեռել է,— կրկնեց Սալան և շարունակեց պատմել անցյալի մասին:— Գուարնոտտան այն ժամանակ գործով եկել էր Ջիրջենտի և սովորականի պես իջևանել Սանտա-Աննա վանքում, քանի որ այն ժամանակ դեռ հյուրանոց չկար: Իսկ հիմա վանքն էլ չկա: Գիշերն ահավոր էր. քամի, կայծակ, ամպրոպ և տեղատարափ անձրև, այնպիսի անձրև, որ թվում էր՝ ուր որ է տանիքը կփլվի: Ի վերջո Ջաչինտո Լումիան բոլորին առաջարկեց գիշերել իր մոտ: Մի կերպ կտեղավորվենք: Ինձանից բացի, բոլորն ամուրի էին: Գուարնոտտան տեղացի չէր: Նրանք ընդունեցին հրավերը: Չնայած համառ հորդորներին, ես վճռեցի գնալ տուն, որ մայրս (երկնային արքայություն նրան) և կինս չանհանգստանային: Իմ գնալուց առաջ Գուարնոտտան՝ իմանալով, որ ճանապարհին ես պետք է անցնեմ Սանտա-Աննայի նրբանցքով, խնդրեց բախել վանքի դուռը և հայր դռնապանին նախազգուշացնել, որ ինքն այդ օրը ուրիշ տեղ կգիշերի: Ես խոստացա ու գնացի: Երդվում եմ ձեզ, որ հազիվ էի դուրս եկել, երբ արդեն զղջում էի, որ չեմ ընդունել Լումիայի հյուրընկալությունը: Ա՛յ թե քամի էր: Ոտքի վրա կանգնած մնալ չէր լինում: Մտրակում էր կապարի նման ծանր անձրևը, և ցուրտ էր ու խավար, խավար, որը նույնիսկ մի տեսակ թանձրանում էր կայծակի սոսկալի բռնկումներից հետո: Անցնելով Սանտա-Աննայի նրբանցքով, ես, այնուամենայնիվ, հիշեցի Գուարնոտտայի խնդիրքը և կանգնեցի, որ թակեմ վանքի դարպասը: Թակում եմ, թակում՝ ոչ մի պատասխան: Ոչ ոք ինձ չի լսում: Հրաշք էր, որ չջարդեցի դուռը: Ես խիստ զայրացած՝ արդեն ուզում էի գնալ, երբ հանկարծ վերին հարկում բացվեց վանդակապատ մի պատուհան, և հնչեց բարձր մի ձայն. «Ո՞վ է»: «Սալան է,— ասացի,— Մարկո Սալան»: «Լավ», պատասխանեց ձայնը վերևից, և ես անմիջապես լսեցի՝ ինչպես նորից շրխկոցով ծածկվեց ու փակվեց պատուհանը: Կանգնել էի հիմարի պես: Նրանք ինձ չթողեցին նույնիսկ մի խոսք ասել: Ես պարզապես դողում էի զայրույթից, երբ մտածում էի, որ ցանկանալով ծառայություն մատուցել Գուարնոտտային, որը գտնվում է ծածկի տակ, ինձ մրսելու վտանգին եմ ենթարկում, և, բացի այդ, ինձ դրեցին խելագարի կամ հարբածի տեղ: Մի քանի քայլ անելով, ես լսեցի՝ ինչպես նրբանցքի վրայով անցավ զանգի հանդարտ ղողանջը՝ «դի՛ն»: Ես ցնցվեցի: Քամին մռայլ այդ ղողանջը քշեց տարավ գիշերային խավարի մեջ, իսկ հետո նորից՝ «դի՛ն», «դի՛ն», և էլի. հնչեց տասնհինգ զարկ: Ես դադարեցի ուշադրություն դարձնել դրանց վրա: Տուն գալով, վրայիցս պոկեցի շորերս, որ կարծես կպել էին մարմնիս, ինչպես պետք է սրբվեցի, նետվեցի անկողին և՝ բարի գիշեր: Հաջորդ առավոտյան իմ սովորության համաձայն վաղ վեր կացա, բացեցի դուռը և պատկերացրեք, թե ինչ տեսա իմ առաջ: Դագաղ բերող բեռնակիրների: Տեսնելով ինձ, նրանք ձեռքներն իրար զարկեցին ու ետ ցատկեցին: Եվ այդպես էլ տեղերում քարացան՝ բերանները բաց. «Դոն Մարկո՞: Ինչպե՞ս թե: Ձերդ ողորմածությունը չի՞ մեռել»: «Ա՛խ դուք, շան որդիներ», գոռացի ես՝ բարձրացնելով ձեռնափայտս:

Իսկ նրանք պատասխանեցին.

«Ճիշտ այդպես, ճիշտ այդպես: Այս գիշեր եկան վանք հայտնելու, որ ձերդ ողորմածությունը վախճանվել է»:

Հասկանո՞ւմ եք, այդ զանգը ղողանջում էր ինձ համար: Եվ ինքս էի հայտնել այն մասին, որ մեռել եմ:

Թեև դա ուրախ պատմություններից չէր, Սալայի եզրափակիչ խոսքերը ընդհանուր ծիծաղ շարժեցին:

— Ծիծաղո՞ւմ եք,— ասաց նա:— Եվ, այնուամենայնիվ, ո՞վ գիտե, արդյոք ես իսկապես չե՞մ մեռել այն ժամանակ, թանկագիններս: Ես կարող եմ ասել, որ դա եղել է իմ պատանության վերջին ուրախ գիշերը: Հիմա, երբ հիշում եմ, ինձ թվում է, թե այդ զանգահարությունը հնչեց որպես վատ կանխանշան, և հենց այդ ժամանակից ինձ վրա թափվեցին ամեն տեսակ աղետներ, իմ կյանքը դարձավ Սանտա-Աննայի նրբանցքի այն ահավոր գիշերվա նման, և այդ թաղման զանգահարությունը, այդ տխուր «դի՛ն, դի՛ն»-ը ուղեկցեց իմ ամեն քայլին:

Այդ պահին վերադարձավ Անտոնիո Դել Ռեն՝ ձեռքին մի հեռագիր: Դրանից առաջ մի քանի հեռագրեր էին եկել շրջանի տարբեր ընտրական տեղամասերից: Կանոնիկոս Ագրոն բացեց հեռագիրը, լուռ կարդաց ու նետեց անկյունը՝ օթոցի մոտի աթոռի տակ: Ո՛չ Ռոբերտոն, ո՛չ էլ մյուսները նույնիսկ չհետաքրքրվեցին, թե որ տեղամասից է ուղարկված հեռագիրը և ինչ արդյունքի մասին է հայտնում: Ագրոյի շարժումն ու լռությունը բավական պերճախոս էին: Պարտությունը, որ հիմա կրում էր Աուրիտին, է՛լ ավելի պարզորոշ ընդգծեց մյուս՝ շատ ավելի լուրջ պարտությունը, որ ժամանակն ու կյանքը հասցրել էին նրանց: Այն կարծես այստեղ մարմնավորվում էր դոննա Կատերինա Աուրիտի Լաուրենտանոյի մռայլ ու լռին կերպարանքով: Երբեմն Ռոբերտոյի բարեկամները մի թռուցիկ հայացք էին նետում նրա վրա, ինչպես ուրվականի, որը ելել է այն ժամանակներից, որի ավելորդ բեկորներն էին նաև իրենք: Հիմա՝ նոր ժամանակներում, արդեն ուրիշ ձայներ էին հնչում, որ արձագանք չէին գտնում նրանց սրտերում, ծնվում էին ուրիշ մտքեր, որ չէին հասնում նրանց գիտակցությանը, ուրիշ ձգտումներ ու իդեալներ, որոնց համար պինդ փակված էին նրանց հոգիները: Եվ այդ մասին ամենից ակնառու վկայում էր աթոռի տակի հեռագրերի կույտը: Վերջին օրերին անսպասելի հայտնվել էր ևս մի թեկնածություն, որն, անկասկած, գաղտնի նախապատրաստված էր, ոմն Ջապպալայի՝ Գրոտեի լավագույն հանքափորներից մեկի թեկնածությունը: Դա առաջադրված էր ի նշան բողոքի և ի հաստատումն իրենց կամքի՝ ծծմբահանքերի հանքափորների և գավառի գյուղացիների կողմից, որոնք արդեն միավորվել էին միություններում: Ռոբերտո Աուրիտին երրորդ տեղում էր: Գրեթե բոլոր տեղամասերում Ջապպալան ավելի շատ ձայներ էր ստացել, քան նա, և հենց դրանով իր հակառակորդին պայքարից դուրս գցել արագ և արհամարհանքով, ինչպես ոտքով դեն են նետում անպետք լաթը: Աուրիտին նույնիսկ արգելք չէր նրա համար, այլ պարզապես մանր խոչընդոտ: Երբ Գրոտեից՝ գավառի ամենամեծ հանքափորական կենտրոններից մեկից, հեռագիր եկավ, որտեղ հաղորդվում էր, որ այնտեղ գրեթե միահամուռ կերպով քվեարկել են Ջապպալայի օգտին, թվում էր, թե հանքափորների թեկնածուն ընդունակ է լրջորեն վիճարկելու հաղթանակը Կապոլինոյի հետ և անցնել՝ չնայած այն եռանդուն աջակցությանը, որ Ջիրջենտիում ցույց էր տրվում կղերական կուսակցության կողմից՝ կարծես որպես փոխհատուցում լուրջ վերքի դիմաց, որ Կապոլինոն ստացել էր մենամարտում: Որպեսզի գոնե որևէ կերպ մեղմացնի տխուր ճշմարտությունը, Տրիգոնան փորձում էր Աուրիտիի պարտությունը բացատրել անխոհեմ մենամարտով, օտարականի՝ Վերոնիկայի չափազանց կոպիտ բնավորությամբ և նրա մարտավկաներից մեկի զայրացուցիչ վարքագծով: Այդ մոլի մենամարտիկն իսկապես վրդովել էր Ջիրջենտիի բոլոր քաղաքացիներին, թեև Սելմին, որ հիմա արդեն գնացել էր իր ընտրական շրջանը, ամեն ինչ արել էր, որ մեղմացնի նրանց վրդովմունքը: Ի պատասխան բոլոր այդ նկատառումների, կանոնիկոս Ագրոն լուռ գլխով էր անում: Նա չէր կարող ներել Վերոնիկային, որը հրապարակում կատարած իր անվայել արարքով խորտակեց իր ամբողջ ստրատեգիական ծրագիրը, որն այնպես հմտորեն ու նրբորեն մտածված էր ու մշակված: Իսկ մյուս օգնակա՞նը. կավալեր Ջովան Բատտիստա Մատտինան: Ուղարկված լինելով Գրոտե՝ Աուրիտիի թեկնածությունը պաշտպանելու, նա խաղաց Հուդայի դերը՝ վերջին պահին համաձայնության գալով հասարակ ժողովրդի հետ:

— Իսկ ո՞վ է նա, ո՞վ է,— հարցրեց Մատտիա Գանջին՝ իր սովորական կատաղի արտահայտությամբ:— Նա ո՞ւմ է ներկայացնում: Ինչպե՞ս է ապրում: Ի՞նչ է անում: Ո՞ր աղբանոցից է դուրս սողացել: Մաքուր, վայելչագեղ, տիրակալ իշխանի տեսքով:

Կանոնիկոս Ագրոն թեթև քմծիծաղով կամացուկ օրորեց գլուխը, հետո ասաց.

— Թղթե օդապարուկներ են, թանկագին բարեկամներ, թղթե օձեր: Ե՛վ այդ Վերոնիկան, և՛ ուրիշ շատերը: Թղթե օձեր... Դուք տեսնում եք նրանց բարձր-բարձր և բերաններդ բաց հիանում եք. իսկ ո՞վ գիտե ինչ ձեռք է պահում դրանց պարանը: Գուցե որևէ պոռնկուհու ձեռքն է, գուցե պարանի ծայրը քվեստուրայում է, իսկ գուցե որևէ խաղատան մեջ... Ոչ ոք չի կարող իմանալ այդ: Իսկ թղթե օձը հայտնվում է անսպասելիորեն. նրան վեր է բարձրացնում քամին: Եվ ահա նա սլանում է, պարտվում, սկսում է սրընթաց ընկնել գետին: Այդ ժամանակ աներևույթ ձեռքը ցածից անմիջապես սկսում է կառավարել նրան՝ թեթև, հմուտ ցնցումներով կամ էլ եռանդուն ձգտումներով ուղղություն տալով քամուն համընթաց, ավելի ու ավելի թուլացնելով պարանը: Թղթե օձեր են, թանկագիններս: Ի՜նչ շատ են դրանք: Եվ ամեն մեկը պոչ ունի, et in cauda venenum:

Վեց գլուխներ տարուբերվեցին՝ ի նշան լռին, դառնությամբ լի համաձայնության կանոնիկոս Ագրոյի պերճախոս համեմատությանը. թվում էր, թե մի րոպե նա ինքն էլ զարմացավ իր սրամտությունից, հետո թեթևացած շունչ քաշեց՝ կարծես հոգու վրայից նետելով պարտության ծանրությունը:

Ռոբերտո Աուրիտին ամենից ավելի տառապում էր մոր համառ ու մռայլ լռությունից: Իր սովորությանը հակառակ, դոննա Կատերինան շատ էր խոսում ընտրություններից առաջ՝ աշխատելով համոզել որդուն մասնակցություն չունենալ այդ գործին. նրա խոսքերն անողոք էին, իսկ լռությունը հիմա՝ ավելի անողոք: Նա կարծես ուզում էր, որ հիմա այն ժամանակվա իր խոսքերին հաստատում ծառայեն միայն մերկ փաստերը: Ռոբերտոն գրգռվածություն էր զգում և ասաց.

— Ի վերջո, թանկագին բարեկամներ, թղթե թե սովորական օձեր են... չարժե խոսել այդ մասին: Երբ դուք այդպես եք խոսում, կարելի է մտածել, թե համաձայնելով գալ Սիցիլիա, ես ինչ-որ պատրանքներ եմ ունեցել: Իսկ ես չեմ ունեցել, իմացե՛ք այդ: Ինձ այստեղ է ուղարկել մի մարդ, որին ես չէի կարող մերժել... ես ինձ դասալիք կզգայի:

— Խե՛ղճ մարդ,— բացականչեց Մատտի Գանջին:— Դու եկար խաչի չարչարանքի:

— Դե, ի՞նչ խաչի չարչարանք. դա չափազանց ուժեղ է ասված,— ժպտաց Ռոբերտոն:— Ես եկել եմ նրա համար, որ իմ առաջարկները մերժվեն իմ համաքաղաքացիների կողմից, ու պարզ դառնա, թե ինչ արժեն դրանք ներկա իրադրության մեջ, և որպեսզի իմ մերժված անունը կառավարության համար հնչի որպես ժողովրդի պատասխան, ու նա հասկանա, որ հինը արդեն բավական է, հիմա այստեղ ուրիշ բան են ուզում:

— Ձապպալա, Ձապպալա է պետք այստեղ,— ի պատասխան չար քմծիծաղ տվեց Մատտիա Գանջին:— Ես ինչքան ուրախ կլինեի, եթե ընտրեին Ձապպալային:

— Մայրիկ,— կամացուկ ասաց Ռոբերտոն՝ ձեռքով դիպչելով մոր ձեռքին ու ժպտալով դառն հնազանդությամբ,— ծեր ավանակները...

Մայրը սեղմեց շրթունքներն ու մռայլվեց, մյուսները հավանության բացականչություններով քաջալերեցին Մատտիա Գանջիին: Այո՛, ընտրել Ձապպալային: Միայն մի՞ Ձապպալայի: Ո՛չ: Հինգ հարյուր ութ Ձապպալաների, թերակղզու ամեն տեղամասից մեկը: Ի՜նչ նիստեր կլինեն պալատում: Անմիջապես փակե՛լ բոլոր դպրոցները: Վերացնե՛լ բոլոր հարկերը: Վերացնե՛լ զորքն ու ոստիկանությունը: Ոստիկանությունն ու կարգուկանոնը: Ո՛չ մի սահման, և բոլոր մարդիկ եղբայրներ են: Ախ, այո՛, այո՛: Քանդե՛լ լեռները և վերածել դրանք հավասար բարձրության բլուրների:

Մատտիա Գանջին վեր կացավ և սկսեց արտասանել:

Այս քնարի հնչյուններով հոգեպարար

Կփաթաթենք մի կծիկում աշխարհն արար՝

Ժողովուրդներն, ազգություններն ամեն տեսակ:

Խտրությունները կջնջվեն, և մի օրենք,

Մի սովորույթ միշտ կլինի ամենուրեք,

Մնացածը ցնորք է լոկ ու սին պատրանք:

Ինչքան ծովեր, անապատներ ու լեռներ կան,

Խաբեական նախշեր են լոկ անիրական,

Սին ու պատիր երազները գիտունների:

Սթափվի՛ր դու և խաղաղվի՛ր, ո՛վ իմ մուսա,

Տաղտուկ բեռ են հայրենիքի մասին ասված

Բոլոր, բոլոր քարոզները այն անհամար:

Եվ ես՝ որպես քաղաքացին տիեզերքի,

Գտնում եմ, որ տեղին չէ ու ժամանակին

Ջանքեր թափել Իտալիայի փառքի համար:

Բոլորը, բացի Պոմպեր Ագրոյից, ոտքի կանգնեցին ու ջերմորեն ծափահարեցին:

— Ախ պարոններ, պարոններ,— ասաց Ֆիլիպո Նոտոն՝ դուրս քաշելով թևքածալերը:— Արդարացի լինենք, հարգելի սինյորներ: Չսկսենք կռվել նրանց հետ, որովհետև մենք ինքներս ենք ամեն ինչում մեղավոր՝ մեր սիրելի քրիստոնեությամբ: Երբ լսում ենք՝ «Յուրաքանչյուրին ըստ իր աշխատանքի: Կորչի մարդկային անհատականության կաշկանդվածությունը նյութական հոգսերով: Յուրաքանչյուրին հաց և աշխատանք», մենք՝ տգետ մանր բուրժուաներս, մենք, որ սովոր ենք ծեծված ճշմարտություններին, առաջինը կծափահարենք:

— Դե, անպայման,— բացականչեց Չերաուլոն:— Համընդհանուր երջանկության ձգտման մեջ բոլոր ազնիվ մարդիկ, իհա՛րկե, միաբան են:

— Այստեղ սոցիալիստները բացում են բերանները և՝ հա՛մփ, կուլ են տալիս ձեզ,— ձայնակցելով շարունակեց Ֆիլիպո Նոտոն:— Նրանք իրենցն են երգում՝ մարդկայնության և արդարության իդեալի մասին, որն, իհա՛րկե, բոլորին դուր է գալիս, ընդունակ է բոլորին բավարարելու և, այսպիսով, կողմնակիցներ է գտնում նրանց մեջ, ովքեր վերացական դատողությունները չեն տարբերում հասարակական կյանքի փորձից, թանկագին Չերաուլո. ովքեր նույնիսկ չեն հարցնում իրենց՝ նոր մեթոդները մեր արցունքի հովիտը չե՞ն բերի արդյոք հազար անգամ ավելի անարդարություններ ու դառնություններ: Մի՞թե ես իրավացի չեմ, մոնսինյոր:

Պոմպեո Ադրոն մի քանի անգամ գլխով արեց՝ ի նշան համաձայնության:

— Իսկական վտանգը, թանկագին սինյորներ, հենց դրանում է,— է՛լ ավելի բորբոքված շարունակեց Նոտոն,— մեր բարեհոգի քրիստոնեական համոզվածության մեջ, որ այսպես կոչված չորրորդ դասի շարժումը անխուսափելի է և անհաղթահարելի...

— Այո՛, այո՛, այո՛, իհա՛րկե,— նորից ընդհատեց նրան Չերաուլոն:

— Բնավ էլ այդպես չէ: Բացարձակապես դատարկ բան է: Բարբաջանք է, բարբաջանք,— բացականչեց Ֆիլիպո Նոտոն:— Սոցիալիստական տեսություններին պակասում են գիտական հիմքերը, տրամաբանությունը, բարոյախոսությունը, ինչպես նաև իսկական կուլտուրան. դրանք չեն կանգնում ոտքերի վրա և անպայման կտապալվեն, կանցնեն,

ինչպես խելացնոր երազ, ինչպես հարբածի զառանցանք: Ես ուզում եմ դա ապացուցել քեզ և ամենից առաջ կառավարության անդամներին, որոնք մեզ ներկայացնում են անողնաշար, թուլակամ պետության մի խղճալի տեսարան, պետություն, որ խճճվում է և իրեն կորցնում այնպիսի գործերում, որոնց մեջ շփոթվել չի կարելի:

Հետո նա հանգստացավ, իջեցրեց ձեռքերը և սկսեց ուրիշ եղանակով.

— Ինձ թույլ տվեք այդ ամենը բացատրել ձեզ մի քանի խոսքով: Այդպիսի քաղաքականությունը սխալ է սկզբից մինչև վերջ: Ա՛յ, տեսեք: Ծերերի, կանանց, լքված երեխաների հաշմանդամների ապահովումը իսկապես կարող է լինել հասարակության համար կարևոր գործ:

— Ամբողջ մարդկության համար,— ասաց Տրիգոնան:

— Հոյակապ է: Համաձայն եմ,— շարունակեց Նոտոն:— Բայց աղքատներին օգնելուց, ապաստաններ, գիշերօթևաններ, էժան սնունդ կազմակերպելուց հեշտությամբ և աննկատելիորեն, սինյորներ, կանցնենք պրոլետարիատի պաշտպանությանը...

— Այսպես կոչված՝ պրոլետարիատի,— սեղմված ատամների արանքից փնթփնթաց Գանջին:

— ... կարիքից՝ ո՛չ միայն ներկայում, այլև ապագայում,— շարունակեց Նոտոն,— աշխատանքում դժբախտ դեպքերից պարտադիր ապահովագրման ուղիով՝ բանվորի տարիքի կամ հիվանդության հետ կապված ապագա անաշխատունակության դեպքում: Հիմա, երբ արված են այդ առաջին քայլերը, թանկագիններս, դժվար չի լինի անել և հաջորդները, որոնք մեզ կտանեն ավելի առաջ՝ դեպի տխրահռչակ Պետություն-Նախախնամությունը, որն առավել աչքի ընկնող մտածողների կողմից դատապարտված է պրակտիցիզմի դիրքերից: Եթե մարդկանց գիտակցության մեջ արմատավորվի այն համոզմունքը, որ հասարակությունը պետք է իր վրա վերցնի նրանց հոգսը, ովքեր մարմնական տկարության պատճառով ի վիճակի չեն աշխատելու, շատ հեշտ կլինի անցնել սահմանը, որ բաժանում է մեզ սոցիալիզմից՝ բառի ուղղակի իմաստով, տարածելով այդ մեծահոգի սկզբունքները նաև աշխատունակ, բայց գործազուրկ մարդկանց վրա: Բայց ճշմարտությունն ասենք: Եթե աշխատունակ մարդիկ, իրենց ողջ ցանկությամբ հանդերձ, աշխատանք չեն գտնում, կամ նրանց աշխատանքն անբավարար է վարձատրվում, մի՞թե նրանք պակաս չափով են արժանի կարեկցության, քան այն մարդիկ, ովքեր ի վիճակի չեն աշխատելու մարմնական տկարության պատճառով: Ե՛վ մեկ, և՛ մյուս դեպքում, պարոններ, արդյունքը նույնն է՝ նրանք անիրավացիորեն դատապարտված են քաղցի: Բայց եթե հռչակվի աշխատանքի իրավունքը, հեշտ է կռահել, թե դա ինչով կվերջանա. դե՛, ի վերջո բոլորը տեսան հազար ութ հարյուր քառասունութ թվականի Ֆրանսիան...

Բայց այստեղ Ֆիլիպո Նոտոյի ճառը, որն սկսել էր ձեռք բերել իսկական հրապարակային ելույթի տոն ու չափեր, հանկարծ ընդհատեց կանոնիկոսի զայրալից բացականչությունը:

Կոմիտինիից՝ Ագրոյի հայրենիքից, նամակ էր եկել, որը հայտնում էր ևս մի դավաճանության մասին: Ռոզարիո Տրիգոնայի որդին ծախվել էր Կապոլինոյի կուսակցությանը՝ լուր տարածելով, թե Ռոբերտո Աուրիտին դուրս է եկել պայքարից և բարեկամներին խնդրել է քվեարկել կղերական կուսակցության թեկնածուի օգտին, ընդդեմ սոցիալիստ Զապպալայի: Ագրոն չկարողացավ զսպել իրեն, չխնայելով թշվառ, կիսակույր հորը, որ նստած էր այդտեղ, նա խիստ խոսքերով նշավակեց սրիկային, որը պատճառ էր դարձել այդպիսի խայտառակ անհաջողության՝ նրա սեփական միջնաբերդում: Ռոբերտո Աուրիտին մի քանի անգամ փորձեց ընդհատել նրան, հետո սկսեց սփոփել բարեկամին, որ սկզբում վեր կացավ սարսափած և ուզում էր նետվել Ագրոյի վրա, որ նրանից խլի նամակը, հետո ծանրորեն ընկավ աթոռին և, ձեռքերով ծածկելով երեսը, սկսեց հեկեկալ:

— Դա զրպարտություն է, Ռոզարիո... զրպարտություն է, կտեսնես: Քո որդին, հավանաբար, գործել է խղճի մտոք՝ գտնելով, որ հասկացել է իմ մտադրությունները: Իսկապես, եթե

ընտրություն կատարենք Կապոլինոյի և այդ Զապպալայի միջև, ի՞նչ կա որ: Ավելի լավ է ձայներն անցնեն Կապոլինոյին: Նա գտել է, որ ես չեմ կարող հաղթել պայքարում... և...

— Ո՛չ... ո՛չ...— հեկեկանքի միջից մռթմռթաց անմխիթար Ռոզարիո Տրիգոնան:— Սրիկա՛, սրիկա՛:

Բարեբախտաբար, եկավ Մաուրո Մորտարան, որը Վալսանիայից գնում էր Կոլիմբետրա, որպեսզի իշխանի հետ պայմանավորվի Հռոմ ուղևորվելու մասին: Ուրախ ընդունելություն գտնելով Մարկո Սալայի, Չերաուլոյի, Գանջիի կողմից, որոնք այնքան վաղուց չէին տեսել նրան, Մաուրոն հրմշտելով նրանց բոլորին, ճանապարհ բացեց, արագ հասավ դռննա Կատերինայի մոտ և, գրեթե ծնկների վրա ընկնելով, նրա ձեռքը ծածկեց անթիվ համբույրներով. հետո գրկեց Ռոբերտոյին և, իր սովորության համաձայն, համբուրեց նրա կուրծքը, հենց սրտի վրա:

— Հռոմ,— ասաց նա:— Գիտե՞ք: Ես գնում եմ Հռոմ:

Բայց նրա հրճվանքը արձագանք չգտավ. բոլորը տխուր էին ու վշտացած Տրիգոնայի արցունքներից:

— Ախ, դոն Ռոզարի,— բացականչեց Մաուրոն:— Ձեզ ի՞նչ է պատահել: Ինչո՞ւ եք լալիս:— Նա հերթով ուշադիր նայեց բոլորին և հայացքը պահեց կանոնիկոս Ագրոյի վրա, որը մռայլ էր ու հուզված մյուսներից ավելի:

— Ոչինչ,— անմիջապես միջամտեց Ռոբերտոն:— Տհաճ լուր է և, անկասկած, սուտ: Թանկագին սինյորներ, խնդրում եմ ձեզ: Ինձ ընկճում է... ավելի ընկճում է ձեր վիշտը, քան իմ սեփականը: Ուզո՞ւմ եք ինձ հանգստացնել: Այդ մասին այլևս չխոսենք: Ինչ եղել է, անցել է: Բավական է: ՉԷ՞ որ դուք գիտեք, թե որքան թանկ եք ինձ համար և ինչու: Ես ձեզ շնորհակալություն չեմ հայտնում այն ամենի համար, ինչ արեցիք ինձ համար այս պայմաններում, որովհետև գիտեմ, որ եթե ժամանակները փոխվել են, ապա ձեր սրտերը մնացել են առաջվանը, և դուք չէիք կարող այլ կերպ վարվել: Իհարկե, ամեն ինչում մենք ինքներս ենք մեղավոր: Ուրեմն... ուրեմն բավակա՛ն է: Ինչի՞ համար վշտանալ հիմա: ՉԷ՞ որ սա միայն մի ավելորդ ապացույց էր, որ անձամբ ինձ բացարձակապես հարկավոր չէր: Եվ բավական է:

Ռոբերտո Աուրիտին էլ ուժ չուներ: Ամեն ինչ նրա համար անտանելի էր դարձել. և՛ հին բարեկամների տեսքը, և՛ մոր լռությունը, և՛ Տրիգոնայի լացը, և Ագրոյի դառն սրտնեղությունը, և՛ Նոտոյի սառն իմաստակումը:

Նա ուզում էր իսկույն գրել Հռոմ, տանուլ տված ճակատամարտի մասին հայտնել իր ընկերուհուն՝ այն կնոջը, որի հետ մոռանում էր իր հույսերն ու իր սրտմտությունները և հագեցնում էր իր կոպիտ զգայական քաղցը՝ անհոգաբար դեն նետելով այն ամենը, ինչ անմիջաբար չէր վերաբերում այդ կնոջը, բոլորին զանց առնելով և մտածելով միայն նրա մասին: Մոր վեհանձնությունը, քրոջ մաքրությունը նրան ստիպում էին մի տեսակ անգիտակցաբար նույնիսկ ինքն իրենից թաքցնել ստրկական կապվածությունն այդ կնոջ հետ, որը լավ գիտեր նրա բոլոր վշտերը, և նա այդ կնոջը գրում էր գիշերները: Քողարկելով իր սեփական զգացմունքները, որ չվիճի այդ կնոջ հետ, որպեսզի նա փաղաքուշ լինի ու ենթարկվի իր ցանկություններին, Ռոբերտոն մեկնելուց առաջ չհամարձակվեց բացատրել նրան իսկական պատճառը, որի համար համաձայնել էր մասնակցել այդ պայքարին. նա հասկացնել տվեց, որ հույս ունի բարելավելու իր նյութական վիճակը՝ պատգամավոր դառնալով և այդպիսով ընդլայնելով իր փաստաբանական գործունեությունը: Եվ առաջին նամակներում Ռոբերտոն հույս էր արթնացնում այդ կնոջ մեջ, որ հաղթանակն, այնուամենայնիվ, հնարավոր է. հետո աստիճանաբար սկսեց կասկածներ ներշնչել նրան և ի վերջո գրեց, որ ինքն ուզում է միայն որքան հնարավոր է շուտ վերադառնալ նրա մոտ: Այդ նամակները Ռոբերտոն ինքն էր ուղարկում, մնացած բոլորը զարմիկն էր տանում փոստ: Մինչդեռ նա չէր մոռանում, որ մոտակա օրերին զարմիկը կգա իր հետ, որ սկսի պարապմունքները Հռոմի համալսարանում, և կապրի իր մոտ, հետևաբար՝ ամեն ինչ

կտեսնի ու կիմանա: Բայց նա ուզում էր առայժմ պահպանել գաղտնիքը: Այդ խայթող, ցցուն ոսկորներով պատանին անկեղծորեն չէր տրամադրում: Ռոբերտոն տանջվում էր այն բանի համար, որ նրան պիտի տանի իր հետ, և պատանուն, իսկ նրա միջոցով նաև մորն ու քրոջը, հայտնի կդառնա, թե ինքն ինչպիսի կյանք է վարում Հռոմում: Բայց ի՞նչ կարելի էր անել:

Այդ ժամանակ դոննա Կատերինան Մաուրոյին հարցուփորձ էր անում իր եղբոր՝ դոն Կոսմոյի, «այդ խենթի» և դոննա Սառա Ալայմոյի մասին:

— Ինձ հետ մի՛ խոսեք, խնդրեմ, նրա մասին,— բացականչեց Մաուրոն:— Ես գնում եմ Հռոմ, ձեզ արդեն ասացի, և ուրիշ ոչինչ չգիտեմ ու հիմա չեմ ուզում իմանալ:

— Իմ թանկագին Մաուրո,— պատասխանեց դոննա Կատերինան,— եթե դա այդպես է, փակի՛ր աչքերդ, ինչպես հարկն է խցկի՛ր ականջներդ և շուտ, շուտ վերադարձիր գյուղ: Լսիր իմ խորհուրդը:

Երբ բարեկամները Բադիա-Գրանդեից իջան Աթենեա փողոցը, հայտնվեցին ամբոխի ամենախիտ տեղում, որն իր ուրախ հուզմունքն էր արտահայտում Ինյացիո Կապոլինոյի ընտրության կապակցությամբ:

Կանոնիկոս Ագրոյի կառքը ստիպված եղավ կանգնել: Ծեր, ծուռոտն լակեյ-կառապանը շրխկացրեց մտրակը:

— Է՛-հե՛յ, զգուշացիր: Է՛-հե՛յ, զգուշացիր:— Նրա մտքովն էլ չէր անցնում, որ իր տիրոջը կարելի է ճանապարհ չտալ կամ էլ կարելի է նրան վախեցնել: Եվ ճիչերի իրարանցման մեջ նա չլսեց կանոնիկոսի ձայնը, որ գոռում էր.

— Ե՛տ, Կոլա, ե՛տ: Պուրգատորիո փողոցով:

Հնչեց սուլոց, մի անգամ էլ, հետո՝ էլի... Շան որդիներ: Ապաքինվող Կապոլինոն դեռ պառկած էր անկողնում, և նրա հաղթանակի առթիվ աղմկոտ ցնծությունը, որ ձգտում էր դրսևորել իրեն որևէ գործողությամբ, արդեն պատրաստ էր վերածվելու բողոքի ցույցի կանոնիկոս Ագրոյի դեմ: Բարեբախտաբար, պարագլուխներին հաջողվեց փոթորկի առաջն առնել, որն սպառնում էր սրընթաց հարձակվել անժամանակ հայտնված կառքի վրա, սակայն բնավ ոչ Ագրոյի նկատմամբ ունեցած հարգանքից, որը նա չէր վաստակել, այլ պատկառանքից նրա զգեստավորության նկատմամբ, որը նա արժանի չէր կրելու: Այո՛, կարելի է թերևս, մի քիչ սուլել նրա ետևից, իսկ հետո՝ շո՛ւտ, շո՛ւտ, դեպի Պասսեջատա, դեպի Սալվոյի վիլլան:

— Ուռա՛, Ինյացիո Կապոլինո՛-ո՛-ո՛:

— Ուռ-ռա՛-ա՛-ա՛:

— Ուռա՛ մեր պատգամավորին:

— Ուռ-ռա՛-ա՛-ա՛:

Իրիկնային աղջամուղջում, լապտերների դալուկ լույսի տակ, նեղլիկ փողոցով աղմկոտ հոսանքով հորդում էր ամբոխը, որը, սակայն, ոչ թե իսկական խանդավառություն էր դրսևորում, այլ գնում էր մայող հոտի նման՝ հնազանդվելով երկու թե երեք կաշառված պարագլուխների կամքին: Ֆլամինիո Սալվոյի վիլլան հոյակապ լուսազարդված էր՝ որպես հեռավոր Կոլիմբետրայի հաղթանակի խորհրդանշան: Այնտեղ էր հավաքվել կուսակցության վերնախավը. հենց որ ցածում՝ ծառուղում, հնչեցին ցուցարարների բացականչությունները, նրանք ելան մարմարե ձևավոր ճաղաշարով մեծ պատշգամբը:

— Կեցցե Ֆլամինիո Սպլվո՛-ո՛-ո՛-ո՛ն:

— Ուռա՛-ա՛-ա՛:

— Կեցցե Ինյացիո Կապոլինո՛-ո՛-ո՛ն:

— Ուռա՛-ա՛-ա՛:

Դեպի վիլլա բարձրացավ ցուցարարների պատգամավորությունը, և Սալվոն այն ընդունեց իր սովորական սառը ժպիտով, որին նրա հանդարտ հայացքը ուռած կոպերի տակից տալիս էր թեթև հեգնանքի արտահայտություն: Եվ իսկապես այդ տասնհինգ-տասնվեց մարդը՝ տաքացած, հենց նոր դուրս եկած անդեմ ամբոխից, որ այնտեղ՝ ծառուղու մութի մեջ այնպես պատկառելի էր թվում, այստեղ, որտեղ ամեն մեկն ստացավ իր անունն ու կերպարանքը, երևացին վեհերոտ, անճարակ, շփոթահար ու ստրկամիտ. և հոյակապ հյուրասենյակի շքեղության մեջ իրենցից ներկայացնում էին խղճուկ մի խմբակ: Ֆլամինիո Սալվոն հայտարարեց, որ համաքաղաքացիներից շնորհակալ է ժողովրդական զգացմունքների այդ անկեղծ դրսևորման համար: Նա տեղեկություն հաղորդեց մեծարգո Կապոլինոյի առողջական վիճակի մասին և պատվիրակության ներկայությամբ ինժեներ Կոստային խնդրեց՝ անմիջապես մեկնել Կոլիմբետրա՝ իշխանի վիլլան, որ նրան տեղեկացնի պատգամավորության հայտարարության ու Ջիրջենտիի ամբողջ բնակչության ցնծության մասին: Տասնհինգից մեկը ելավ պատշգամբ և ջահերի լույսի տակ, որ բռնել էին երկու ծառա, ոգևորությամբ դիմեց ամբոխին:

Ոչ ոք ուշադրություն չէր դարձնում ծառուղու խեղճ չղջիկների խուճապի վրա. լույսից կուրացած՝ նրանք վերևից ընկնում էին ցուցարարների գլուխներին, իսկ հետո, աղմուկից ու ծափահարություններից վախեցած, հուսահատ թռչում էին վեր՝ արձակելով սուր ծվծվոց, կարծես օգնություն էին խնդրում ու վրեժխնդրություն էին պահանջում աստղերից, որ ուրախ շողում էին երկնքում: Հանպատրաստից հռետորը հայտարարեց, որ Կապոլինոյի ընտրությունը ամենանշանավոր իրադարձությունն է ժամանակակից Իտալիայի կյանքում, բայց, իհա՛րկե, ոչ ոք չէր կարող չղջիկների գլխից վանել այն միտքը, որ այդ երեկո ամբողջ քաղաքը հավաքվել է միայն նրա համար, որ առանց առիթի պատերազմ սկսի իրենց դեմ: Հռետորը դեռ շարունակում էր խոսել, երբ Աուրելիո Կոստան աշխետով՝ Սալվոյի շտապ թամբած ձիով, քառատրոփ սլացավ Կոլիմբետրա:

Ցածում՝ ամբոխի պոչում, երևաց նաև Պինյան: Ամբողջ ճանապարհին նրան բռնությամբ քարշ էին տալիս, սեղմում, մաքրում, հղկում: Կամայականություն: Բռնություն: Նա գնում էր իր գործերով և Աթենեա փողոցն անցնում էր այն պահին, երբ հեղեղի պես հորդեց ամբոխը: Պինյան չհասցրեց արագ մի կողմ քաշվել, և այդ ժամանակ նրանք, ովքեր քայլում էին առջևից չէին ցանկանում նրա պատճառով ուշանալ, նրան ետ մղեցին, և նա կլանվեց մարդկային հոսանքի կողմից: Պարզ է, որ նրա ոտքերով ու թիկունքով այդ ալիքին դիմանալն անհնար էր, և որպեսզի ճեղքեր-անցներ ու դուրս գար բազմության միջից, Պինյան, կատաղորեն մռնչալով, խփում էր ում և ինչպես պատահեր՝ բռունցքներով, արմունկներով ու ոտքերով, բայց ցուցարարներին հաճույք էր պատճառում քարշ տալ նրան իրենց հետ՝ որպես պատանդ, և նրանք կատաղաբար նետվում էին խեղճի վրա՝ գոռալով. «Ահա՛ Պինյան, Պինյան: Կեցցե՛ Պինյան: Կորչի՛ Պրոպագանդան: Ո՛չ, չկորչի, ուռա՛ : Արի՛, արի՛ մեզ հետ»: Մի քանի անգամ խփեցին նրա գլխին, հասցրեցին վզակոթին, և նա՝ շների ոհմակով շրջապատված վարազի նման մոլեգնած, նույնիսկ մի քանի անգամ կծոտեց նրանց, ովքեր ավելի մոտիկ էին: Պինյան ամբողջ ուժով գործում էր ոտքերով և ուսերով, որպեսզի ետ մղի ինչ-որ մեկի ձեռքը, և, հուսալով, որ իր ետևում մարդիկ հենակետ կծառայեն իր համար, շատ անգամներ հայտնվում էր դատարկության մեջ, որովհետև մարդիկ, ընդհակառակը, աշխատում էին ետ քաշվել, և այդ ժամանակ Պինյան քիչ էր մնում ընկներ, բայց իսկույն ևեթ ուրիշներն էին հասնում-բռնում նրան և նորից հրում, գցում առջևինների վրա: Ճզմված, բոլոր կողմերից սեղմված, նա բերանով օդ էր որսում ձկան նման՝ հարուցելով շարունակ նորանոր ծաղրանքներ, ստանալով շարունակ նորանոր հարվածներ, զարկեր վզակոթին. փորձիր այստեղ ճանապարհ բանալով դուրս գալ, եթե այդպես նեղում են չորս կողմից՝ հարձակվելով և՛ առջևից, և՛ հետևից: Տրորված, տանջահար Պինյան որոշեց գնալ հոսանքի հետ՝ միայն թե առանց ոտքերը շարժելու, ո՛չ, ո՛չ, այլ՝ ա՛յ, այսպես, թող քարշ տան: Վայրենիներ: Սրիկաներ: Ծախու անասուններ: Ինչ անամոթություն է: Օ՛, Ջիրջենտի, Սիցիլիայի և ամբողջ մարդկության խայտառակություն, աղբատեղ, ամոթ: Վաղը նրանք բոլորը կգնան խորան, այո՛, այո՛, որպեսզի հաղորդության նշխարների հետ ստանան երկու

մարդուն հինգ լիրանոց մի թղթադրամ... Ճի՛շտ է, կեցցե՛ Կապոլինոն: Կեցցե՛ Սալվոն: Կեցցե՛ Բաքոսը և կեցցե՛ Մամոնան: Աղաղակելով բոլոր այդ խոսքերը և Սալվոյի վիլլայի ստորոտում հավաքված ամբոխի վրա նետելով զայրալից արհամարհանքով լի հայացքներ, Պինյան մերթ շփում էր ուսը, մերթ հևում ու ֆսֆսում, մերթ խնչում. «Թո՛ւ: Մարդկության տականքներ: Թո՛ւհ: Ստոր տգետներ»:

— Լռի՛ր, Պրոպագա, լռի՛ր,— գոռացին նրան մի քանիսը:— Վաղը մենք բոլորս կգրվենք միության մեջ: Իսկ այսօր այստեղ՝ ուռա՛ Կապոլինոյին: Ախր սա լուրջ չէ, այլ հենց այնպես, զվարճության համար: Ուռա՛-ա՛: Ուռա՛-ա՛:

Պինյայի համար այսպես ավարտվեց ճակատամարտի օրը. դա էր պարգևը այն բոլոր արշավների համար, որ նա կատարում էր վաղ առավոտից մի ընտրական տեղամասից մյուսը՝ ընկերներին տալով հանձնարարություններ ու ցուցումներ, այստեղ բացատրելով ու համոզելով, այնտեղ խնդրելով՝ նայած հանգամանքներին, որպեսզի բոլոր աշխատավորները սատարեն իրենց նման մի աշխատավորի, իրենց ընկերոջը, գրողը տանի: Անջելո Զապպալան էլ կօգնի նրանց, կպաշտպանի նրանց շահերը պառլամենտում:

Այո՛, եթե այդ ժողովրդական թեկնածությունը թեկուզ միայն բողոք նշանակեր, Պինյան հոգու խորքում կարող էր գոհ լինել պայքարի ելքից, որին, ճիշտ է, հասան այն ձայների շնորհիվ, որ տրվեցին հարևան բնակավայրերում: Բայց նրա սրտից արյուն էր կաթում ամոթից՝ Ջիրջենտիի, գավառի գլխավոր քաղաքի, իր հայրենի քաղաքի համար: Ի՜նչ խայտառակություն...

Երբ վերջապես Պինյան՝ ձայնից զրկված, բզկտված, դժվարությամբ հասավ տուն՝ Պյանո դի Գամեց, որ ընթրիքին կուլ տա լեղիով թունավորված իր պատառը, նա, բարձրանալով ներքևի սենյակը վերևինի հետ կապող փայտե սանդուղքի առաջին աստիճանները, խավարում տեսավ Չելսինային և Անտոնիո Դել Ռեին, որ նստել էին՝ ամուր սեղմված իրար:

— Այդ դուք եք, ի՞նչ է:

— Գնա՛ վերև, հայրիկ, մի՛ խանգարիր,— նետեց նրան Չելսինան, ինչպես շանը:— Մենք հրաժեշտ ենք տալիս իրար: Նա վաղը մեկնում է:

— Ա՛, այդ դեպքում՝ բարի գիշեր,— ասաց Պինյան:— Այսինքն՝ բարի ճանապարհ.... Ուրեմն մեկնո՞ւմ եք: Նախանձում եմ ձեզ, թանկագինս: Դուք, իհա՛րկե, Հռոմում կտեսնեք... Ձեզ ի՞նչ է գալիս դոն Լանդո Լաուրենտանոն... Ասենք, հա, նա ձեր քեռին է: Նրան բարև հաղորդեք իմ կողմից և ասացեք, որ Ջիրջենտին նրա կարիքն ունի... Ջիրջենիտին հիմա խայտառակում է մեր կղզին...

— Ամեն ինչ հասկանալի է, հայրի՛կ,— սրտնեղած ընդհատեց նրան Չելսինան:— Թող մենք խոսենք: Գնա՛:

— Սրիկայական քաղաք,— մռթմռթաց Պինյան՝ դժվարությամբ բարձրանալով աստիճաններով:— Ստորնե՛ր... Օ՛յ, օ՛յ... Տգետնե՛ր...

Եվ գնաց: Նրանք անմիջապես նորից գրկախառնվեցին: Անտոնիոն ի վիճակի չէր իրեն զսպելու. արբելով, գլուխը կորցնելով, նա չէր կարողանում պոկվել Չելսինայից, փնտրում էր աղջկա շուրթերը՝ ծարավից մեռնողի նման. էլի՛, էլի՛ մի համբույր, որը կթափանցի նրա էության ամենախորքերը. էլի մի համբույր՝ խենթ, այրող, անվերջանալի, այնպես, որ իրեն ամբողջովին տա նրան և նրան ամբողջովին վերցնի կրքոտ ցանկության ջղաձգությամբ:

— Բավակա՛ն է,— տնքած Չելսինան ուժասպառ՝ գլուխն իջեցնելով նրա կրծքին:

Բայց Անտոնիոն սեղմում էր աղջկան ավելի ու ավելի բուռն կերպով, ամբողջ մարմնով դողալով, շարունակելով փնտրել նրա շուրթերը:

— Ո՛չ, բավակա՛ն է, Նինո,— այդ ժամանակ ասաց Չելսինան՝ իշխելով իրեն։— Բավակա՛ն է, բավակա՛ն է...

Նա պինդ սեղմեց պատանու ձեռքերը, դրեց իր կրծքին, որ ուժգնորեն բարձրանում-իջնում էր, և, առանց մատները թուլացնելու, ավելացրեց.

— Ա՛յ, այսպես։ Ուրեմն՝ լսի՛ր... Դու կնայես, ճիշտ չէ՞։ Կփնտրես... Դու պիտի ամեն ինչ անես...

— Այո՛...

— Դու լսո՞ւմ ես ինձ։

— Այո՛...

— Ո՛չ, չես լսում։ Բավակա՛ն է, Նինո։ Ես քեզ ասացի՝ բավակա՛ն է։ Դու ինձ չես լսում...

— Այո՛, ես կփնտրեմ...

— Դու ի՞նչ կփնտրես։ Թո՛ղ ինձ, խնդրեմ։

— Չգիտեմ... Ես ամեն ինչ կանեմ... Հավատա ինձ... Համբուրի՛ր ինձ... մի անգամ էլ...

— Ո՛չ։ Դու որտե՞ղ կփնտրես։

— Դե, ամեն տեղ, ամեն տեղ...

— Այո՛, փնտրիր գոնե որևէ փոքր գործ, սկզբի համար թեկուզ ամենաաննախանձելին, հասկանո՞ւմ ես... Չէ՛ որ դու գիտես, թե ես ինչ կարող եմ... ես կհարմարվեմ ամեն ինչի։ Ես պետք է, պետք է լինեմ Հռոմում՝ ինչքան կարելի է շուտ, դու լսո՞ւմ ես։

— Այո՛, սե՛ր... սե՛ր... սե՛ր իմ...— պատանին շունչ քաշեց, հետո սեղմելով աղջկա ձեռքերը, ջղաձգորեն շշնջաց.— Ես ինչպե՞ս պիտի ապրեմ։ Օ՛, իմ Չելսինա։ Ես ինչպե՞ս պիտի ապրեմ։

— Կամա՛ց,— հրամայաբար ասաց Չելսինան։— Ես չեմ ուզում, որ վերևում լսեն քեզ։

— Ես կգնամ... Ես էլ չեմ կարող...

— Այո՛, գնա՛, գնա՛ ... Արդեն ուշ է։ Ինձ կանչում են։ Անմիջապես կգրես ինձ, հիշի՛ր։

— Այո...

— Գնաս բարով, գնաս բարով։

Բայց Անտոնիոն ոչ մի կերպ չէր կարողանում թողնել աղջկա ձեռքը և, գրեթե երեսը սեղմելով նրա երեսին, հարցրեց.

— Դու ինձ ի՞նչ կտաս։

— Իսկ դու ի՞նչ ես ուզում։

— Քեզ ամբողջովին։ Գնա՛նք, գնա՛նք ինձ հետ։

— Եթե ես կարողանայի։ Հիմա։

— Օ՛, իմ սեր... Դու ինձ ի՞նչ կտաս։ Որևէ բան, քոնը...

— Ինձ մոտ ոչինչ չկա, սիրելի Նինո։

— Բայց ինձ մոտ մի բան կա քեզանից, գիտե՞ս, չէ՛ որ դու ես տվել ինձ։

— Ե՞ս։

— Ուրեմն դու ինձ ոչինչ չե՞ս տվել։ Նույնիսկ մի քի՞չ քո սրտից։

— Ախ, դա՛...

— Եվ էլի ինչ-որ բան, չե՞ս հիշում:

— Ո՛չ:

— Իսկ տիկնի՞կը...

— Ա՛,— ժպտաց Չելսինան:— Այն, բեղավո՞րը:

— Մի՛ ծիծաղիր, մի՛ ծիծաղիր: Ես մաքրել եմ բեղերը: Եվ տիկնիկն ինձ մոտ եմ պահում:

— Երեխա՛:

— Գիտե՞ս, այս գիշեր տիկնիկը քնել է ինձ հետ, իմ գրկում, անկողնում: Եվ միշտ...

— Եվ իզուր: Չէ՛ որ դա ես չեմ:

— Գիտեմ, բայց նա քոնն է, քոնն է եղել: Մի՞թե դու նրան չես համբուրել:

— Շատ անգամներ, երբ փոքր եմ եղել:

— Ուրեմն...

— Գնա՛, գնա՛, Նինո: Ինձ կանչում են: Գնաս բարով: Հիշիր քեզ ինչ ասացի: Գրի՛ր: Գնաս բարով:

Եվս մի երկա՛ր, երկա՛ր համբույր դռների մեջ, և Անտոնիոն գնաց: Նա կանգնեց Պյանո դի Գամեց ամայի հրապարակում, մոլորվածի պես նայեց շուրջը, նայեց վեր՝ երկնքի անշարժ ամայությանը, և նրան համակեց մի տարօրինակ զարմանք, կարծես արթմնի երազ էր տեսնում: Նա լսեց, ինչպես բացվեց պատշգամբի դուռը: Չելսինան էր:

— Գնաս բարով, հիշի՛ր:

— Հիշում եմ, մնաս բարով:

Չելսինան արդեն հեռու էր. հեռու էր ձայնը, հեռու էր դեմքը. և սև ու խոնավ Պյանո հրապարակում այդ տնակը, որի լուսավոր ճակատին արտացոլվում էր լուսինը. և՛ ինքը՝ այդ Պյանոն, և՛ փոքրիկ շատրվանի կարկաչը, և՛ նեղ, ծուռ փողոցները, և՛ գիշերում անշարժացած ամբողջ ավանը՝ բարձր բլրի վրա. աստղերի տակ. ամեն ինչ հիմա նրան թվում էր այնպես հեռու: Ու թվում էր, թե նա ինքը ինչ-որ հեռու տեղից անսահման թախիծով և անասելի կարոտով նայում է իր կյանքին, որ կտրել է իրենից ու թողել այստեղ:

Երբ Աուրելիո Կոստան եկավ Կոլիմբետրա, դոն Իպոլիտո Լաուրենտանոն արդեն գիտեր Կապոլինոյի ընտրվելու մասին. նա հյուրասենյակում հենց այդ մասին էր խոսում դոն Սալեզիո Մարուլլոյի և Նինի դը Վինչենտիսի հետ. առաջինն իսկույն վազել-եկել էր Ջիրջենտիից՝ հենց որ իմացել էր մենամարտի ելքի մասին. երկրորդը մենամարտից հետո, որին մասնակցել էր որպես մարտավկա, մնացել էր Կոլիմբետրայում, վիրավորի անկողնու մոտ:

Քեռի Սալեզիոն իշխանին լսում էր զուսպ արժանապատվությամբ, կարծես հենց ինքն էր ընտրել Կապոլինոյին: Այո՛, իհարկե, մի՞թե ինքը չի նրան կնության տվել իր խորթ աղջկան: Հինգ օր առաջ քեռի Սալեզիոն կարծես նորից ծնվեց Կոլիմբետրայի շքեղության մեջ, որտեղ նա լուծվեց և վերագտավ իրեն այնպես, ինչպես եթե այդ ամենը պատկաներ իրեն: Նա ոտքերի մատների վրա առանձնապես ջանադրությամբ էր քայլում փափուկ գորգերի վրայով, շրթունքները կլորաձև հավաքելով աչքին ընկնող ամեն մի գեղեցիկ կամ թանկարժեք իրի առաջ. սեղանի մոտ քիչ էր մնում գիտակցությունը կորցներ հաճույքից, երբ իր առջև տեսնում էր շատ նուրբ, փայլեցնելու չափ արդուկած անձեռոցիկներ, կամ էլ երբ Լիբորիոն՝ ֆրակով ու սպիտակ ձեռնոցներով, նրան առաջարկում էր նրբընտիր ճաշատեսակներ: Իսկ

մայրամուտին, թեև ոտքերը շատ էին ցավում, նա իջնում էր փոքրիկ հրապարակը և քայլում մինչև ցանկապատը, որ իր առաջ ձգվեր ու պատվի առներ կարմիր շալվարով ու կապույտ համազգեստով պահակ-ժամապահը: Պատվի առնելով, ժամապահը նույնպիսի հաճույք էր ստանում. և երկուսն էլ ողջույնից հետո նայում էին իրար ու ժպտում մեկմեկու:

Թվում էր, թե Նինի դը Վինչենտիսը դեռ լրիվ ուշքի չի եկել այն սարսափից, որ նա զգաց, տեսնելով, թե ինչպես թեքվեց Կապոլինոն, երբ Վերոնիկան երկրորդ կրակոցով վիրավորեց նրա կուրծքը: Այդ վերքը բոլորի համար սարսափելի անակնկալ էր: Մարտավկաների միջև կայացած լուռ համաձայնությամբ ատրճանակների մեջ ճիշտ այնքան վառոդ էր լցված, որ այդ կրակոցները չկարողանան հասցնել վճռական ելքի, քանի որ ցանկալի էր, որ իսկական մենամարտը կատարվի սրերով: Եվ դեռ բախտ է, որ այնքան էլ թափով չթռչող գնդակը դիպել է միայն կողոսկրին ու չի վնասել սիրտը: Բայց խեղճ Նինին խորին վհատության շփոթության մեջ էր՝ ոչ միայն ապրած վախից. Նիկոլետա Կապոլինոն նրան պարզ հասկացնել էր տվել, որ Դիանելլա Սալվոն երբեք չի դառնա նրա կինը՝ նույնիսկ եթե աղջկա հայրը այնքան էլ վճռական մերժումով չի պատասխանել նրա առաջարկությանը: Առաջին գիշերը Նիկոլետան հերթապահեց ամուսնու անկողնու մոտ՝ չնայած բժշկի հավաստիացումներին, թե ամեն վտանգ, բարեբախտաբար, անցել է, բայց հետո նա վճռեց, որ հիմա կարիք չունի խաղալու վշտաբեկ կնոջ դերը, ինչ արեց Վալսանիայում՝ «իր Նյացիոյի» վիրավորվելու լուրն ստանալիս: Հիմա նա իր խեղճ, վիրավոր ասպետի նկատմամբ քնքուշ ու սրտալի ոգացողությունը փոխարինել էր շատ հմուտ խաղով, որի նպատակն այն էր, որ ինքն այստեղ՝ Կոլիմբետրայում դոն Իպոլիտո Լաուրենտանոյի հիշողության մեջ մնա որպես ամենացանկալի հյուրը: Ախ, եթե ինքը լիներ այդ ծանրաշարժ Ադելաիդա Սալվոյի տեղը, շատ շուտով կդառնար այդ փոքրիկ պետության թագուհին: Ի՜նչ ազատ կդրսևորեր իրեն լավագույն դերերում, որոնք պարզապես կոչված էր կատարելու, եթե բախտը չկամենար խեղդել ու ճնշել դրանք նրա մեջ, ի՞նչ ուժով կհաղթանակեր նրա մեջ ամբողջ ամենալավը: Եվ, իհա՜րկե, նա կկարողանար իսկական երջանկությամբ զարդարել վերջին օրերն այդ հպարտ, գեղեցիկ ծերունու, որ դեռ այնքան եռանդով լի էր ու ջահելատես: Նիկոլետան գլխի էր ընկնում, որ իշխանը դառն հիասթափություն էր զգում՝ ծանոթանալով իր ապագա կնոջ հետ, բայց հասկանում էր նաև, որ ոչ մի հմուտ գայթակղություն չի ազդի այդ մարդու վրա, որի համար հավատարմությունը տված խոսքին գրեթե կրոն էր: Նիկոլետան իրեն թույլ չէր տալիս նույնիսկ պչրանքի նշույլ, բայց բոլոր այդ օրերին առանց ամենաչնչին շինծու և անբնական շարժուձևի, նա իշխանի հետ մրցում էր սիրալիրության ու քաղաքավարության մեջ: Եվ առանձին խրատներ էր կարդում քեռի Սալեզիոյին, որը ոչ մի կերպ չէր կարողանում հասկանալ, որ ինքը ոչ մի հիմք չունի ավելի երկար մնալու Կոլիմբետրայում: Նա՝ քեռի Սալեզիոն, գիտեր իր տեղը, այո, շատ լավ գիտեր, բայց... բայց... բայց... Նիկոլետան իր բոլոր հիասթափությունների համար, բարի լինելու չիրականացած երազանքի համար, այն մղձավանջի համար, ինչպիսին էր հենց միայն խորթ հոր տեսքը՝ նրբաճաշակ քաղաքավարի և ծիծաղելի, ամուսնու հանդեպ քնքուշ զգացմունքների երկար, տաղտկալի, նողկալի խաղի համար, որ լիովին արժանի էր իր նկարագրի վատթար կողմերին,— այդ ամենի համար վրեժ էր լուծում՝ տանջելով Նինի դը Վինչենտիսին, հատկապես երեկոները՝ այստեղ, վերին պատշգամբում, որ բարձրանում էր շքամուտքի սյուների վրա: Նա Նինիի հետ խոսում էր Դիանելլայի մասին: Եվ գրեթե հեշտանքով տանջում էր պատանուն՝ շատ լավ իմանալով, որ ոչ մի ցավ, ոչ մի անարդարություն ոչ միայն չի ստիպի գայթակղության համար անմատչելի այդ պատանուն՝ որևէ վատ բան անել, այլև նույնիսկ նրա շրթունքներից չի պոկի ոչ մի դառն խոսք. այնքան նա իր բարության իշխանության տակ էր և այնքան ընդունակ չէր նույնիսկ վրդովվելու իր սեփական թուլության համար: Նիկոլետան նրա հետ խոսում էր խորհրդավոր, կցկտուր՝ կարծես ցանկանալով, որ նա միանգամից, մի կումով ըմպի իր ամբողջ տառապանքը: Նինին ուզում էր իմանալ, թե ինչու է նա գտնում, որ Դիանելլա Սալվոն երբեք չի պատկանել իրեն, նույնիսկ եթե հայրը համաձայնի:

— Ինչո՞ւ… Օ՜, թանկագին Նինի... Պատճառ կա, պատճառ, որը ցավալի է ո՛չ միայն քեզ համար:

— Ցավալի է նաև ո՞ւմ համար:

— Ինձ համար էլ, Նինի:

— Ձե՞զ համար,— զարմանքով հարցրեց Նինին:

Եվ Նիկոլետան ժպտալով պատասխանեց.

— Իհա՛րկե: Դուք չեք տեսնում պատճառը, բայց այն կա: Կա կապ իմ, ձեր և... նրա միջև: Ի՞նչ կապ: Ի՞նչը կարող է ընդհանուր լինել իմ և ձեր մեջ: Մինչդեռ կա, Նինի: Չէ՞ որ ես ու դու որոշ բաներով կապված ենք: Դա անհավանական է թվում, ճիշտ չէ՞: Բայց այդպես է:

Նինի դը Վինչենտիսը խորասուզվեց մտորումների մեջ՝ այդ խորհրդավոր պատճառի մասին և տանջում էր ինքն իրեն:

Երբ Լիբորիոն զեկուցեց Աուրելիո Կոստայի մասին, և նա մտավ հյուրասենյակ, Նիկոլետան դեռ գտնվում էր ամուսնու մոտ, բայց քիչ անց նա էլ եկավ, և նրա համար վերին աստիճանի հաճելի էր, որ Աուրելիոն իրեն տեսնում է այդ իշխանական տանը՝ շրջապատված բոլորի հարգանքով ու պաշտամունքով: Դոն Իպոլիտոն շտապեց հայտնել նրան ժողովրդական ցույցի մասին:

— Հիմա Նյացիոն քնած է,— ասաց Նիկոլետան:— Վախենում եմ, որ նա շատ կհուզվի... Բայց եթե ուզում եք...

— Ո՛չ, ո՛չ,— անմիջապես ասաց իշխանը:— Դուք հնարավորություն կգտնեք այդ մասին նրան հայտնելու վաղը:

— Իհա՛րկե,— ավելացրեց Աուրելիո Կոստան,— ես կարծում եմ, որ դոն Ֆլամինիոն այսքան շտապով, այս ժամին ինձ ուղարկեց այստեղ, որ կարելի լինի իսկույն հաղորդել ընտրողներին, որ մեծարգո Կապոլինոյին ու իշխանին անմիջապես հայտնել են ցույցի մասին:

— Ես շատ եմ ափսոսում, սինյոր ինժեներ,— այդ ժամանակ ասաց Նիկոլետան,— որ դուք ստիպված եք եղել կատարելու այս ուղևորությունը...

— Ի՛նչ եք ասում, ի՛նչ եք ասում,— նրան ընդհատեց Կոստան:— Ընդհակառակը, ինձ համար նույնիսկ հաճելի էր:

— Պատրաստ եմ գրազ գալու, որ նաև այն պատճառով,— միջամտեց քեռի Սալեզիոն,— որ դուք երբեք չէիք եղել Կոլիմբետրայում, հը՞: Հեքիաթային դղյակ է, թանկագին ինժեներ... հեքիաթա՛յին: Երկրային դրա՛խտ:

Իշխանը ժպտաց՝ թեթևակի թեքելով գլուխը և Աուրելիո Կոստային հրավիրեց մնալ ընթրելու:

Այդ երեկո Նիկոլետան հանգիստ թողեց Նինի դը Վինչենտիսին, բայց պատանին դրա համար երախտապարտ չէր նրան: Տանջանքն սկսել էր դուր գալ Նինիին: Ամբողջ երեկոյի ընթացքում Նիկոլետան հատուկ ուշադրություն էր ցուցաբերում Աուրելիո Կոստայի նկատմամբ, ուզում էր արբեցնել նրան, ուզում էր, որ նա գաղտնի հասկանա, որ իր ամբողջ հոգացողությունը, բոլոր հայացքները, ժպիտները ինքը նվիրում է նրան՝ որպես հատուցում այն տհաճ հանձնարարության համար, որ նրա վզին էր փաթաթել Սալվոն՝ գալ Կոլիմբետրա հայտնելու Կապոլինոյի հաղթանակի մասին: Նիկոլետան կուզենար, որ Աուրելիոն զգա, որ պարգև շնորհելով նրան, ինքն ինչ-որ չափով վրեժ է լուծում հենց Սալվոյից, որը, իմանալով նրա զգացմունքները, նրան ուղարկել է Կոլիմբետրա՝ որպես հասարակ ծառայի: Մի՞թե Սալվոն բոլորին դիտում է որպես իր գնած ստրուկների: Չէ՞ որ կարող է պատահել և այնպես, որ այդ ստրուկները, հուսահատության հասցվելով նրա վերաբերմունքից, իրար հետ պայմանավորվեն և ընդունեն մարտահրավերը: Մի՞թե նրանք արդեն չեն հասկացել մեկմեկու: Մի՞թե նրանց միջև արդեն համաձայնություն չի կայացել: Մի՞թե նրանք չեն պայմանավորվել, չեն կնքել գաղտնի միություն: Եվ Նիկոլետա Կապոլինոյի հայացքը, որ

սևեռած էր Աուրելոյի ուղիղ աչքերի մեջ, մերթ շողում էր կրակոտ ու գրգռիչ, մերթ դառնում էր թախծագորով ու տագնապալի և մշուշվում էր՝ կարծես խոստանալով ինչ-որ անասելի հաճույքներ: Նա էլ է ստրուկ, ինչպես և ինքը, և իրենք ամեն ինչի համար վրեժ կլուծեն այդ ծերունիներից, որոնք ուզում են, որ իրենք՝ երիտասարդները, ստրուկներ լինեն: Հիմա Նիկոլետայի պատճառով նա կսիրի իր ստրկությունը և չի ձգտի տեր դառնալու, նույնիսկ եթե Դիանելլա Սալվոն սեր խոստովանի: Ստրուկներ են, ստրուկներ նրանք երկուսն էլ:

Երբ Աուրելիո Կոստան ուշ երեկոյան գնաց Կոլիմբետրայից, կարծես հարբած լիներ. նրա դեմքը վառվում էր բերկրալից երախտագիտությունից այդ կնոջ նկատմամբ: Նա չգիտեր ինչ մտածել: Արյունը եռում էր երակներում, քունքերը զարկում էին: Արդյոք մի՞շտ է Նիկոլետան եղել այդպիսին՝ սովորությա՞մբ, ի բնե, շողոմքոր է բոլորի հետ, թե՞ միայն իր համար է գտել այդպիսի ժպիտներ, այդպիսի հայացքներ՝ և այդպիսի փաղաքուշ խոսքեր: Պե՞տք է, թե՞ պետք չէ հավատ ընծայել դրանց: Իսկ եթե ինքը կարող է հավատալ, ապա ի՞նչ է պատահել, ինչո՞ւ հանկարծ Նիկոլետան սկսեց այդպես բացահայտ գայթակղել իրեն, Նիկոլետան, որ մի քանի տարի առաջ այնպիսի վճռական և արհամարհական մերժումով պատասխանեց իր ազնիվ առաջարկությանը: Գուցե զղջացե՞լ է: Գուցե հոգնե՞լ է, և հիմա նրա համար նողկալի է այն ամոթալի դերը, որ ամուսինն էր նախորոշել նրա համար, և նա ցանկացել է ըմբոստանալ ու վրեժ լուծել՝ վրեժի զենք ընտրելով այն մարդուն, որը մի ժամանակ ձգտում էր ազնվորեն ամուսնանալ նրա հետ: Գուցե Նիկոլետան ուզում էր, որ Աուրելիոն էլ փոխվրեժ լուծի նրանցից, ում համար ինքը մերժել էր նրան: Կամ էլ, ընդհակառակը, գուցե դա որոգա՞յթ է: Թեև տվյալ պահին այդ կասկածը Աուրելիոյին անվայել թվաց, սակայն այն թափանցեց նրա գիտակցության մեջ՝ նրան պաշարած ուրիշ ենթադրությունների հետ: Չէ՞ որ նա հիմքեր չուներ հարգելու Նիկոլետային: Բայց ի՞նչ որոգայթ կարող էր լինել: Ստիպել իրեն սիրահարվել և գլուխը կորցնել մինչև այն աստիճան, որ շարժի Սալվոյի խանդը և հարկադրի նրան վռնդե՞լ Աուրելիոյին: Բայց չէ՞ որ Նիկոլետան ինքն ասաց, որ հեռանալով Սալվոյից, ինժեները վճռականապես ոչինչ չի կորցնում: Եվ հետո՝ Նիկոլետայի ինչի՞ն է պետք, որ Սալվոն վռնդի իրեն: Մի՞թե ինքը ինչ-որ բանով խանգարում է նրան: Գուցե իր պատճառով Նիկոլետան իր այսօրվա նվաստացման մեջ վերհիշե՞ց անցյալը: Բայց չէ՞ որ նա ինքը՝ թաքուն, ամուր սեղմելով Աուրելիոյի ձեռքը, աշխատում էր հիշեցնել անցյալի մասին, որ ջնջի այն ամբողջ վատը, ինչ եղել է իրենց միջև: Եվ Նիկոլետան անկեղծ թվաց Աուրելիոյին: Այո՛, անկեղծ ու սրտաբաց: Եվ ի՛նչ գեղեցիկ էր նա: Ի՛նչ թովչանք էր բխում նրա ամբողջ էությունից: Օ՛, սիրված լինել նրա կողմից:

Հասնելով Ֆլամինիո Սալվոյի վիլլան, որ հիմա լուռ էր ու խավար, Աուրելիո Կոստան ձին տարավ ախոռ ու բարձրացավ առանձնասենյակ, որտեղ նրան սպասում էր Սալվոն: Երբ երիտասարդն սկսեց ներողություն խնդրել ուշանալու համար (իշխանը նրան ստիպել էր ընդունել ընթրիքի հրավերը), Ֆլամինիոն իսկույն նկատեց և՛ նրա շփոթությունը, և՛ արտասովոր հուզմունքը: Սալվոն լսում էր ու նայում նրան սուր խորաթափանցությամբ, և հազիվ էր Աուրելիոն խոնարհել հայացքը, երբ նրա սովորական ժպիտն սկսեց հետզհետե ավելի լայն տարածվել, կարծես հավաքվելով նրա բոլոր դիմագծերից, որ այդ երեկո ավելի թարշամած էին թվում թեթև հոգնության պատճառով:

— Ես այդպես էլ մտածում էի,— ասաց նա՝ շոյելով բեղերը:

— Դուք մտածում եք, թե...— փորձեց նրա խոսքն ավարտել Աուրելիոն:

— Այո՛, դու լավ վարվեցիր,— անմիջապես ընդհատեց Սալվոն:— Քեզ հետ միասին այստեղ թափանցեց իրիկնային թարմ օդ: Հավանաբար, օգտակար է այսպիսի ժամին ձիով շրջել դաշտերում... Հրաշալի երեկո է: Իսկ այստեղ կարելի է շնչահեղձ լինել... Երբ ծերանաս, դու կհիշես այդ մասին...

— Ե՞ս,— հարցրեց Աուրելիոն՝ ակամա ժպտալով ի պատասխան այն փաղաքուշ տոնի, որով նրա հետ խոսում էր Սալվոն, թեև ճանապարհին ծագած մտորումներից հետո տիրոջ խոսքերը նրա մեջ կասկածներ էին հարուցում:— Ինչո՞ւ:

— Դե, ես խոսում եմ այնպես, ենթադրաբար...— հառաչեց Սավոն՝ ուսերը թոթվելով ու ձեռքով անորոշ մի շարժում անելով:— Չէ՞ որ դու սովոր ես... գիշեր, ցերեկ՝ միշտ թափառումների մեջ... Քո կյանքը շարժում է: Բայց գուցե այս ուղևորությունը քեզ համար բոլորովին առանձնահատուկ էր: Երբ ծերանում ենք, մեր մեջ հանկարծակի բռնկումներով ծագում են հիշողությունները, մեր իսկ հեռավոր կերպարները, ինչպիսին ենք եղել այս կամ այն րոպեին... և մենք չգիտենք, թե ինչու հատկապես այդ և ոչ թե ուրիշ ակնթարթ է դրոշմված մնացել, իսկ հետո հանկարծ համակում է ինչ-որ հոգնածություն, և դու մոլորվածի նման դեգերում ես հիշողությունների մեջ: Գուցե այդտեղ պետք է հայտնվեր ավելի լայն հիշողություն, կյանքի ամբողջ մի հատված: Բայց ամեն ինչ բաժանվել է առանձին օղակների, և կենդանի է մնացել միայն մի հատիկ պատկեր, միայն մի պատ, մի ակնթարթ... Եվ ահա դու տեսնում ես ինքդ քեզ՝ ձիու վրա, պայծառ գիշերին, աստղերի տակ և գուցե զուր կփորձես հիշել, թե ինչ մտքեր են եղել այն ժամանակ քո գլխում, ինչ զգացմունքներ՝ քո սրտում...

— Բայց չէ՞ որ այդ լինում է ոչ միայն ծերերի մոտ,— նկատեց Աուրելիոն:

— Դա բոլորովին ուրիշ բան է,— պատասխանեց Սալվոն,— դու կտեսնես:

Եվ որոշ ժամանակ նա նստեց անշարժ, հայացքը հառած մի կետի, չնկատելով շրջապատը: Իսկապես այդ երեկո Սալվոյի մեջ ինչ-որ տարօրինակ բան կար, և Աուրելիոն այդ նկատեց, կարծես նրա բացակայության ժամանակ Ֆլամինիոն իր անհարմարավետ առանձնասենյակում նստած՝ մտորել է, և այդ մտորումները ծնել են նրա մեջ ինչ-որ նոր թախիծ: Ինչի՞ մասին է մտածել նա: Համենայն դեպս, պարզ էր, որ նստել էր մենակ՝ արմունկներով գրասեղանին հենված ու գլուխն առած ձեռքերի մեջ, որովհետև, թեև նրա գագաթը ճաղատացել էր, ճակատի վրա դեռ կային ցանցառ, սպիտակ մազեր, և հիմա դրանք խճճված էին: Աուրելիոն գիտեր, որ այդ մռայլ տիրական հոգու խորքում թաքնվում է թախիծը, որ խիստ տոնը, պոռթկունությունն ու դյուրաբորբոքությունը կարծես պոռթկումն էին այդ վաղուց զսպված զգացմունքի՝ գաղտնի, խեղդված, անհույս: Բայց ինչո՞ւ նա այդպես տրվեց այդ զգացմունքին հենց այս երեկո, երբ թվում էր, թե պետք է ուրախանա հաղթանակով:

— Այնտեղ ամեն ինչ բարեհաջո՞ղ է,— ցնցվելով, հարցրեց Սալվոն:— Իսկ դու նրան տեսա՞ր:

— Ո՛չ,— պատասխանեց Աուրելիոն՝ աշխատելով թաքցնել շփոթություն ու հուզմունքը, որ գուցե դեռ արտացոլվում էր նրա դեմքին, և վախենալով, որ բավականաչափ լավ չի կատարել հանձնարարությունը: Նա կարմրեց և ավելացրեց որպես արդարացում.

— Սինյորան ասաց, թե նա հանգստանում է:

— Հանգչում է դափնիների վրա, հա՞,— ավելացրեց Սալվոն: Հետո նա բարձրացրեց գլուխը և, արդեն բացահայտ ժպտալով, հարցրեց:— Հը՞, ինչպե՞ս էր... Գո՞հ էր նա... սինյորան:

Աուրելիոն տարածեց ձեռքերը, որովհետև չէր սպասում այդ հարցը, և պատասխանեց.

— Ինձ չթվաց: Իսկ ինչո՞ւ եք հարցնում:

— Նա պետք է գոհ լինի: Գնում է Հռոմ...

— Այո՛, և ամուսնու հետ...

— Պատգամավոր, պատգամավոր,— ավարտեց Սալվոն՝ գլուխն օրորելով:— Դա անհրաժեշտ էր: Պատգամավոր:

Եվ նա վեր կացավ.

— Տեսնո՞ւմ ես, թանկագինս, որոնք են մեր աններելի սխալները: Հետո էլ գանգատվում ենք: Այնպիսի պահին, ինչպիսին հիմա է, երբ ես մտածում էի իրականացնել մի մեծ գործ, որն այնքան հետազոտություններ է պահանջել մեզանից և ինձ ենթարկել է բավական մեծ ռիսկի, ինձ հաջողվեց հասնել Կապոլինոյի պատգամավոր ընտրվելուն: Հենց այդպիսի մարդ

էր ինձ պետք, ճիշտ չէ՞: Որ վաղը նա կարողանա բարձր ձայնով խոսել արդյունաբերության և առևտրի մինիստրությունում... Դա անհրաժեշտ էր... Դու կտեսնես, որ Ինյացիոն լավ կլինի Հռոմում. այդ տեղն էլ նրա համար է: Այստեղ նա խանգարում էր ինձ... Հիմա տեղն ազատված է, այո, տեղն ազատված է: Եթե հարկ լինի, ես ինքս կգնամ Հռոմ՝ խոսելու սինյոր մինիստրի հետ: Բայց նախ հարկավոր է, որ այստեղ ստորագրեն բոլոր ծծմբահանքերի տերերը, մեծ ու մանր, ուզում եմ, որ բոլորն ստորագրեն, ուզում եմ նաև, որ նրանք համաձայնեն՝ եթե հարկ լինի, սահմանափակել ծծմբի հանույթը և ընդհանուր պահեստներում պահել արդյունահանված ամբողջ հանածոն: Եթե դա չհաջողվի, ապա ամբողջ ձեռնարկումն իմաստ չունի: Ես վտանգի եմ ենթարկում իմ կապիտալները, որ փրկեմ սիցիլիական արդյունաբերությունը: Ես իրավունք ունեմ պահանջելու, որ բոլոր շահագրգռված մարդիկ գործեն համաձայնեցված ու միասնաբար և, եթե հարկ լինի, կատարեն որոշ ոչ մեծ զոհաբերություններ: Այնինչ՝ քանի դեռ մենք ինչպես հարկն է ուսումնասիրում էինք բոլորի հարմար հուսահատական դրությունը բարելավելու հնարավորությունը, դու լսեցի՞ր, թե ինչ են սկսել Գրոտտեում: Նրանք ուզում են հաղթել իրենց քանակությամբ... Հիմարներ: Ո՞ւմ հաղթել և ինչո՞ւ: Քայքայումն ավելի ուժեղ է խփում նրանց, ովքեր ունեն, քան չունեցողներին: Քանակությո՞ւն: Ի՞նչ ուժ ունի քանակությունը: Այն կարող է հասցնել միայն կոպիտ հարված, բայց ձյան հյուս է, որ թափով ընկնում է հողին և նույն ժամանակ ցրիվ գալիս: Դա նողկալի է, նողկալի է: Նրանք մենակ վախենում են, հասկանո՞ւմ ես: Եվ միավորվում են հազարներով, որ քայլ անեն, որը չէր համարձակվի անել նրանցից յուրաքանչյուրն առանձին: Երբ նրանք ցրված են, նրանց մոտ չի հայտնվում ոչ մի միտք: Իսկ միավորվելով, հազարավոր դատարկագլուխները երևակայում են, թե իրենց մոտ մտքեր են հայտնվում, ու չեն նկատում, որ դրանք իրենց պարագլխի՝ խենթի կամ խարդավանողի, մտքերն են: Իսկ այստեղ, այստեղ ուրիշ տեսարան է, Է՛լ ավելի նողկալի: Գուցե ես ծերանում եմ, Աուրելիո:

— Դո՞ւք:

— Այո՛, ծերանում եմ. ես կորցնում եմ ձգտումը դեպի իշխանությունը: Ես կորցնում եմ այն՝ բոլորի մեջ տեսնելով ստրկական նվաստություն: Ես կուզենայի տեսնել մարդկանց: Իսկ շուրջս միայն մարդ-մեքենաներ են, խամաճիկներ. դրանց պետք է դասավորել այս կամ այն կերպ, և դրանք ջղայնացնում են ինձ, քանի որ կանգնում են իմ առաջ այնպիսի կեցվածքներով, որ ես եմ նրանց տվել, ու մնում են այդպես՝ մինչև ես ձեռքի շարժումով չեմ փոխում այդ կեցվածքները: Բայց կա միայն արտաքուստ, հասկանո՞ւմ ես... իսկ ներքուստ... Օ՛, ներքուստ նրանք մնում են աներեր՝ իրենց թաքուն մտքերով, ներքուստ նրանք թշնամիներ են, որ ապրում են միայն իրենց համար: Նրանց հետ ի՞նչ կարելի է անել: Արտաքուստ հնազանդ, հեզ, դյուրաթեք, մեջքները հաճոյակատար կռացրած՝ նրանք միշտ համաձայն են քեզ հետ: Ի՛նչ գարշանք է այդ ամենը: Կուզենայի իմանալ, թե ես ինչո՞ւ եմ այսպես ջանք թափում: Ինչո՞ւ և ո՞ւմ համար եմ այդ անում... Վաղը ես կմեռնեմ: Ես ունեցել եմ իշխանություն, այո՛, դա ճիշտ է: Ես էի դերեր նախորոշում սրա ու նրա համար, շատերի, որոնք իմ մեջ ուրիշ ոչինչ չէին տեսնում, բացի այն դերից, որը ես խաղում էի նրանց առաջ: Իսկ իմ մյուս կյանքի մասին՝ իմ հակումների, գաղափարների, ամեն ինչի մասին, որ խորապես հետաքրքրում ու հուզում են ինձ, ոչ ոք ամենաչնչին պատկերացում իսկ չունի: Ո՞ւմ հետ կարող եմ խոսել այդ մասին: Չէ՛ որ ես, ըստ էության, դուրս եմ այն դերից, որը պետք է խաղամ: Երբեմն, երբ որևէ մեկը գալիս է ինձ մոտ, այստեղ, որ շողոքորթի ինձ, ես զվարճանում եմ այն բանով, որ նրա վրա նետում եմ մի առանձնահատուկ հայացք. հայացք, որը քանդում է պատը, և այդ ժամանակ մի ակնթարթ նրան համակում է տագնապը. նա շփոթվում է, դառնում ծիծաղելի: Միայն աստված գիտե, թե ես ինչ ճիգ եմ անում, որ չքրքջամ նրա երեսին: Նա ինձ խելագար կհամարեր, և դու էլ, թանկագինս, եթե տեսնեիր, թե ինչ աչքերով ես հիմա նայում ինձ:

— Ես՝ ո՛չ,— իսկույն պատասխանեց Աուրելիոն ցնցվելով:

Ֆլամինիո Սալվոն, գլուխն օրորելով, ծիծաղեց:

— Դո՛ւ էլ, դո՛ւ էլ... Այդպես է որ կա, և այդպես է ստացվում ինքնիրեն: Լսիր, գիտե՞ս, թե իսկապես ես ինչ կուզենայի քեզանից: Ես կուզենայի, որ դու ինձ ուրախություն պատճառեիր՝ վարվեիր այնպես, ինչպես, հնարավոր է, ես կվարվեի քո տեղում:

— Իսկ ինչո՞ւ ոչ,— հարցրեց Աուրելիոն վեր կենալով:— Ասացե՛ք ինձ...

— Նրա համար ոչ,— իսկույն պատասխանեց Սալվոն՝ ուսերը թոթվելով,— որ ես չեմ կարող ասել, թե ինչպես կվարվեի... Չէ՞ որ դու ինքդ էլ չես կարող ասել ինձ, թե ինչ ես մտածում, ինչ ես զգում, ինչ կյանք է եռում քո մեջ այս պահին: Չե՛ս կարող... Դու հիմա կանգնած ես իմ առաջ որպես մի անձ, որն ինձ հետ գտնվում է որոշակի հարաբերությունների մեջ. դու իմ ինժեներն ես, իմ փառավոր որդին, որին ես սիրում եմ, որին այս երեկո քսան խամաճիկների առաջ հանձնարարություն տվեցի՝ մեկնել Կոլիմբետրա որպես հաղթանակի համբավաբեր: Ու վերջ: Ես էլ ի՞նչ կարող եմ ասել քեզ: Միայն այս և գուցե քո բարօրության համար...

Եվ Ֆլամինիո Սալվոն ձեռքը դրեց Աուրելիոյի ուսին.

— Նախապես մի՛ ընտրիր ուղիներ, որոնցով պիտի գնաս, կուրորեն մի՛ ենթարկվիր սովորություններին ու պարտականություններին, գնա՛, գնա՛, միշտ եղիր շարժման մեջ. ժամանակ առ ժամանակ վրայիցդ նետի՛ր ամեն տեսակ կանխակալ գաղափարների հին մաշկը, փնտրի՛ր ինքնաբավարարվածություն, մի՛ վախենա ուրիշների կարծիքից և նույնիսկ քո սեփականից. չէ որ այն այսօր քեզ ճշմարիտ է թվում, բայց վաղը կարող է սուտ դուրս գալ: Դու գիտե՞ս դոն Կոսմո Լաուրենտանոյին: Եթե իմանայիր՝ ինչքան իմաստնություն ունի այդ խենթը: Իսկ հիմա գնա՛, արդեն ուշ է, քնելու ժամն է: Գնաս բարով:

Ելնելով Պասսեջատա փողոցը, ծառերի տակ, որոնցից դեռ անձրև էր կաթում, Աուրելիո Կոստան զգաց, որ մի տեսակ կորցրել է իրեն, և կանգնեց՝ կարծես նրա համար, որ վերագտնի իր «ես»-ը: Ապագայի մասին նրան հուզող մտքերը՝ կապված Սալվոյի ընդարձակ ծրագրերի հետ. Նիկոլետայի գրգռիչ հայացքները, խոսքերն ու սիրալիրությունը՝ այսօր, Կոլիմբետրայում, և այստեղ, հենց նոր՝ Սալվոյի թախծալի, հանելուկային ու անսպասելի խոսքերը. այդ ամենը կարծես երկատել, նույնիսկ տարբեր կողմեր էին ցրել նրա էությունը: Ինչ-որ մաս մնաց այնտեղ՝ Կոլիմբետրայում, մյուսը՝ այստեղ՝ վիլլայում: Շփոթահար, կասկածներով համակված, նա հիշեց Սալվոյի խոսքերը: Ուրեմն՝ Նիկոլետան մեկնում է Հռոմ: Այդ դեպքում՝ էլ ի՞նչ: Սալվոն ուզում էր ազատվե՞լ Կապոլինոյից: Այո՛, նա բացարձակապես պարզ ասաց. «Տեղն ազատված է»: Գուցե նա ակնարկում էր Նիկոլետայի՞ն: Նրա ձայնում հեգնանք հնչեց, երբ հարցրեց. «Իսկ սինյորան գո՞հ է»: Ի՞նչ է, նա ուզում Նիկոլետայի՞ն էլ հեռացնել տանից: Թե՞ գուցե Նիկոլետան ըմբոստացել է նրա դեմ: Եվ նա դրա պատճառով էր այդպես տխուր, այդպիսի անսովոր տրամադրության մեջ: Իսկ Սալվոն ի՞նչ է ուզում իրենից: Ինչպե՞ս հասկանալ այն տարօրինակ խոսքերի իմաստը, որ նա ասաց իրեն: «Ես կուզենայի, որ դու ինձ ուրախություն պատճառեիր՝ վարվեիր այնպես, ինչպես, հնարավոր է, ես կվարվեի քո տեղում»: Ի՞նչ ուրախություն: Նա ի՞նչ է ուզում ասել: Ի՞նչ գաղտնի ցանկություն էր ակնարկում, որ չի կարելի խոստովանել: Թե՞ նա խոսում էր հենց այնպես, առհասարակ: Նա գանգատվում էր, որ իր շուրջը մարդ-մեքենաներ են, խամաճիկներ: Իսկ նրա խորհուրդնե՞րը: Ինչքան էլ ջանում էր Աուրելիոն, չէր կարողանում թափանցել դրանց էության մեջ: Եվ այդ ժամանակ, կարծես թողնելով, որ մտքերն ու տարակույսները հածեն սեփական կամքով, նա ներփակվեց իր խղճի հուսալի կեղևի մեջ, սահմանափակելով իրեն այն համեստ, հարմար ու հաստատուն պատկերացմամբ, որ ինքն ուներ իր մասին: Անսպասելի պատահականության շնորհիվ, երբ նա մի անգամ, գրեթե իր կամքից անկախ, Սալվոյին խլեց մահվան ձեռքերից, Աուրելիոն բարձրացավ նախանձելի վիճակի և իր բնածին ընդունակությունների ու բարի կամքի շնորհիվ կարողացավ դրան արժանի դառնալ: Ճակատագրի բարեհաճությունը, որ բոլորը արժանի էին համարում, չափազանցված լուրերը հաջողությունների մասին, որոնց նա հասել էր գիտության մեջ, մրցույթներում, իր մասնագիտության մեջ, նրան տալիս էին այնպիսի կարևորություն, որ ինքը չափազանց էր համարում, և որը հաճախ նրան շփոթմունքի մեջ էր գցում: Այն, թե ինչպես էին լսում նրան և ինչպես էին դիմում, այն, ինչ խոսում էին նրա մասին, շարունակ ապացուցում էր, որ նա ուրիշների աչքին ինչ-որ բանով ավելի մեծ է, քան ինքն իր համար.

ինչ-որ ուրիշ Աուրելիո Կոստա էր, որին ինքը այնքան էլ լավ չէր ճանաչում ու հասկանում. ահա թե ինչու, մտնելով որևէ հարաբերության մեջ ուրիշ մարդկանց հետ, նա միշտ գտնվում էր ինչ-որ հոգեկան տագնապի մեջ, մշտական տագնապալից վախի մեջ, թե հանկարծ չի արդարացնի սպասելիքները և կվնասի իր համբավին: Նա կարողանում էր պատշաճ ձևով գրավել իր տեղը, բայց ուզում էր միաժամանակ լինել վստահ ու հանգիստ, մինչդեռ՝ քանի որ նա հասարակական սանդուղքով իր վերելքն սկսել էր դեռ երեխա ժամանակ, նրան թվում էր, թե ուրիշները շարունակ համառորեն պնդում են, որ նա գրավի Է՛լ ավելի բարձր դիրք և գործի են մղում ու չեն թողնում հանգիստ ապրել: Նա բոլորովին երկչոտ չէր, բայց նրան հատուկ էր մի բացառիկ զսպվածություն, որը նրա համար դժվարացնում էր շփումը մարդկանց հետ, որի պատճառով նա զայրույթ էր զգում ուրիշների կամ էլ հենց իր դեմ: Նա շարունակ զգում էր նաև ինչ-որ շփոթություն, որի պատճառով հաճախ զանազան վրիպումներ էր անում՝ հենց որ դուրս էր գալիս իր գիտելիքների ոլորտից, որտեղ իրեն վստահ էր զգում, կամ էլ թողնում էր այն տեղը, որտեղ համարում էր թե գտնվում է իրավացիորեն, տեղը, որին հասել էր իր ուժերով՝ իր սեփական արժանիքների շնորհիվ: Զայրույթն իր դեմ նրա մեջ գլուխ էր բարձրացնում նաև այն ժամանակ, երբ նա տեսնում էր, ինչպես շատերը, որոնց ինքը համարում էր բոլոր տեսակետներից իրենից ցածր կանգնած, առանց որևէ տագնապի գնում էին առաջ, և նրան ճանապարհ էին տալիս այն դեպքում, երբ ինքը, որի մասին բոլորը նույնիսկ ավելի բարձր կարծիք ունեին, քան ինքը, ետ էր նահանջում և, եթե իրեն գործի էին դրդում, հաճախ իրեն կաշկանդված էր զգում՝ չգտնելով հարկավոր բառերը ու երբեմն էլ շիկնելով աղջկա նման:

Այդ երեկո Աուրելիո Կոստան ավելի, քան երբևէ, զգում էր այդ անբացատրելի զայրույթը, որ ծնում էր նրա մեջ սեփական ստվերը, որ հետզհետե դառնում էր այնքան ավելի երկար ու բարակ, որքան նա հեռանում էր վառվող լապտերներից: Ժողովրդական ցույցի աղմուկից հետո քնած քաղաքի լռությունը, որտեղ արթուն էին միայն լապտերները, նրան մռայլ թախիծ էր ներշնչում:

Հասնելով մինչև ամայի Աթենեա փողոցի մեջտեղը, նա տեսավ Ռոբերտո Աուրիստիին, որ գնում էր մենակ: Աուրելիոն շրջվեց, նայեց նրան խորին կարեկցանքով. հետո հայացքով ուղեկցեց Ռոբերտոյին՝ մինչև սա թեքվեց ձախ՝ նեղլիկ, զառիվեր փողոցներից մեկը, որ տանում էր դեպի Բադիա Գրանդե:

Դոննա Կատերինա Լաուրենտանոյի տանը այդ գիշեր չքնեցին, քանի որ Ռոբերտոն ու նրա զարմիկը պիտի մեկնեին լուսաբացից առաջ՝ առավոտվա ժամը չորսին: Տանը էլեկտրականություն չկար, և վառած նավթի լամպը տանում էին սենյակից սենյակ:

Աննա Դել Ռեն սիրով էր զբաղվում որդու մեկնման վերջին նախապատրաստություններով: Ի՞նչ վիշտ էր նրա համար այդ մեկնումը: Շատ տարիների ընթացքում նրա ամբողջ աշխարհը, նրա ամբողջ կյանքը կենտրոնացած էին որդու հանդեպ ունեցած այդ սիրո մեջ, իր միակ գանձի հանդեպ հոգատարության մեջ: Հիմա ինչպե՞ս կարող է ապրել առանց որդու: Եվ նա լուռ լալիս էր: Նա մեծացրել էր որդուն, ջերմացրել իր տաք շնչառությամբ՝ անտեսելով մոր կշտամբանքները, որը վախենում էր, թե նա շփացնում է որդուն: Ո՛չ, ո՛չ: Ի՞նչ շփացնել: Նա ինչքա՜ն էր մտածել ու տանջվել՝ տեսնելով, որ որդին մեծանում է այդպես սառն ու մռայլ, միշտ պինդ ներփակված ինքն իր մեջ, և փորձում էր իր քնքշությամբ, իր մշտական հոգացողությամբ մեղմացնել տղային, այո՛, ջերմացնել նրան մայրական սիրով, հասնել այն բանին, որ նա դառնա անկեղծ ու վստահող:

Մայրը չգիտեր, թե որդին ինչ էր թաքցնում հոգու խորքում, որը առանձնացնում էր նրան նույնիսկ հասակակիցներից: Տղան շատ էր սովորում, թերևս չափազանց շատ՝ գրեթե վնասելով առողջությանը, իսկ եթե չէր պարապում ապա միշտ գտնվում էր ինչ-որ մտքերի իշխանության տակ, որոնցից բիզ-բիզ էին կանգնում հոնքերը, և ակնոցի ապակիների տակից կարճատես աչքերի հայացքը դառնում էր համառ ու խիստ:

— Օ՛, աստված, Նինուչչո՛, եթե դու տեսնեիր, թե ինչքան տգեղ ես դառնում:

Ի պատասխան տղան միայն թոթվում էր ուսերը:

Գուցե նրա Նինուչչոն տառապում էր ընտանիքի նյութական նեղ վիճակի պատճառով. գուցե մտածում էր, թե տատը կարող էր հարուստ լինել՝ նույնիսկ չդավաճանելով իրեն, իր զգացմունքներին: Իհա՛րկե, տղայի մանկությունն ու վաղ պատանության տարիները մռայլված էին այնքան դժբախտությունների ստվերով՝ այդ հին, մեծ, միշտ լռին տանը, որտեղ, թվում էր, նույնիսկ արևը չի բերում ո՛չ լույս, ո՛չ ջերմություն: Սա ի՛նչ տուն է: Այս գիշեր դոննա Աննան հասկացավ այդ և զգաց, թե ինչքան խղճուկ կթվա տունը վաղը: Խարխլված կահույք, սևացած առաստաղներ, մաշված հատակ, ճաքճքված ու պլոկված պատուհանների շրջանակներ ու ծածկոցափեղկեր, բոլոր սենյակներում գունաթափված պաստառներ: Թեև տունը միշտ մաքրած էր, լվացած ու կարգի բերված, բայց թվում էր, թե նա էլ է զգում այդ կյանքի ողջ տխրությունը: Կորրարդո Սելմին իրավացի էր. նա լավ հասկացավ Աննայի գաղտնի զգացմունքները: Աննան արդեն վաղուց հնազանդվել էր ճակատագրին, բայց նա, այնուամենայնիվ, ուզում էր մի քիչ հոգեկան անդորր՝ եթե ոչ իր, ապա գոնե որդու համար, թեկուզ մի քիչ հոգեկան անդորր՝ որ ցրեր ծանր հիշողությունների խավարը, որ ճնշում էր դոննա Կատերինային, նրա մռայլ վիրավորվածությունը կյանքից, նրա լռին, անհուսալի վիշտը:

Ո՛չ, ոչ թե նույնիսկ անդորր, այլ միայն հանգիստ: Դոննա Կատերինա Լաուրենտանոյի հոգին չէր կարող հաշտվել. գուցե այն պատճառով, որ նա այլևս ոչ մի բանի չէր հավատում: Իսկ ինքը՝ Աննան հավատում էր, ջերմեռանդորեն հավատում էր աստծուն, թեև չէր կատարում ոչ մի կրոնական ծես: Հարևանները երբեք եկեղեցում պատարագի ժամանակ չէին տեսնում նրան, ինչպես և մորը: Եվ այնուամենայնիվ, հասկանում էին տարբերությունը նրանց միջև, գլխի էին ընկնում, որ երիտասարդ սինյորան հավատացյալ է, ու երբեմն՝ հեռվից տեսնելով նրան այդքան հեզ ու գեղեցիկ, մշտապես սևեր հագած, մեկմեկու ցույց էին տալիս նրան՝ որպես սրբի:

Աննան ամենից ավելի տագնապում էր, թե ինչպես պիտի ապրի որդին նոր իրադրության պայմաններում՝ եղբոր տանը, Հռոմում: Նա չէր կասկածում, որ Ռոբերտոն զարմիկին կշրջապատի հոգատարությամբ և ուշադրությամբ, բայց այն կի՞նը, որի հետ նա ապրում է: Ազգականնե՞րը, բարեկամնե՞րը: Այդ Կորրադո Սելմի՞ն, որին հաջողվեց իր արտասովոր հմայքով խռովել նույնիսկ Աննայի հոգին: Ի՞նչ իմանաս, թե այդ ամենը ինչ տպավորություն կգործեն իր Նինուչչոյի վրա, որն այստեղ մշտապես ապրել է այնպիսի փակ կյանքով՝ իր և տատի հետ: Նրանք երկուսն էլ հաճախ ու երկար դառնությամբ խոսում էին Ռոբերտոյի ձախողված կյանքի մասին, ընտանիքի այն նմանակման մասին, որով նա բավարարվում էր. այդ ամենը այն տեղեկությունների հիման վրա, որ ստանում էին Ջուլիոյից՝ դոննա Կատերինայի կրտսեր որդուց: Ճիշտ է, այդ տեղեկությունները բավական մշուշոտ էին, քանի որ Ջուլիոն, որ մեծացել էր Հռոմում, կորցրել էր ամեն կապ ընտանիքի հետ, և նրա մեջ գրեթե ոչինչ չէր մնացել սիցիլիացուց. գուցե նա նույնիսկ արդարացնում էր ավագ եղբորը. համենայն դեպս, նշանակություն էր տալիս շատ բաների, որոնք և՛ Աննային, և՛ մորը թվում էին սարսափելի:

Ռոբերտոյի ընկերուհին երգեցողության դասատու էր, ձայնը կորցրած տենորի կին: Եվ Ջուլիոն ծիծաղելով ասում էր, թե այդ տենորը՝ մի բարի մարդ, ամեն օր ճաշում է Ռոբերտոյի մոտ ու երեկոյան գնում է քնելու կնոջ եղբոր տանը, որը երաժշտական դպրոցի նման մի բան ուներ, մասնավոր կոնսերվատորիայի նման մի բան, որտեղ կինը երգեցողություն էր պարապում, իսկ ամուսինը կատարում էր վերակացուի պարտականությունները: Ռոբերտոն կարծես թե պանսիոնաբնակ էր այդ ընտանիքում, որտեղ երբեմն՝ այն տարիներին, երբ մեծ թվով սովորողներ էին լինում, բնակվում էր նաև որևէ սան, որի համար տեղ չէր գտնվում դպրոցին կից բնակարանում: Շուտով իր որդին ստիպված կլինի ապրել ահա այդպիսի մարդկանց մեջ: Աննան մեկ անգամ չէ, որ փորձել էր համոզել մորը, որ նա խոսի Ռոբերտոյի հետ՝ իրենց Հռոմ տեղափոխվելու մասին: Նա կվաճառեր տունը՝ այդքան դժբախտությունների ապաստարանը, և իրենք շատ լավ կհարմարվեին Հռոմի կյանքին՝ բնակվելով եղբայրներից առանձին կամ էլ միայն Ջուլիոյի հետ: Ի՞նչ իմանաս, գուցե հետզհետե, ժամանակի ընթացքում մորը հաջողվի դուրս քաշել Ռոբերտոյին այդ

միջավայրից... Եվ մի՞թե բոլորի համար ապրուստն ավելի էժան չէր լինի, եթե երեք տները միավորվեին մեկում: Եվ ամբողջ ընտանիքը հավաքվեր մեկտեղ...

— Երազանքնե՛ր,— պատասխանեց մայրը և նույնիսկ չցանկացավ քննարկել այդ առաջարկը:

Նա գիտեր, որ Ջուլիոն չի ուզենա կորցնել ազատությունը, իսկ Ռոբերտոն՝ ազատվել այդ կնոջ ստրկությունից: Եվ ինքը՝ Կատերինան էլ իր տարիքում չի կարող հարմարվել կյանքի ու սովորույթների այդպիսի արմատական փոփոխությանը:

— Երազանքներ են: Երբ ես մեռնեմ, իսկ Նինոն մեծանա, դու կգնաս նրա հետ... Եվ նա կհոգա այն մասին, որ քեզ համար նոր կյանք ստեղծի:

— Դե, իսկ առայժմ... հառաչեց Աննան ու նայեց որդուն, որը մյուս սենյակում, առաստաղից կախված լամպի տակ նստած, ձեռքերը մազերի մեջ խրած և արմունկով սեղանին հենված՝ լսում էր տատի ու քեռու զրույցը: Ահա թե ինչպիսին է որդին: Նա չդրսևորեց ո՛չ վիշտ, այն բանի համար, որ բաժանվում է մորից գրեթե մեկ տարով, ո՛չ ուրախություն՝ Հռոմի կյանքի կանխավայելումից: Եվ միշտ այդպես է եղել: Միայն մի անգամ, այս տարվա սկզբին նրան գրավեց ու հափշտակեց մի մտահղացում. նրան թվում էր, թե գտել է ինչ-որ առանձնահատուկ մեխանիզմ, որի օգնությամբ, հավատացնում էր նա, կարելի է էլեկտրաէներգիա ստանալ ծովի ալիքներից (այդ տարին նրանց տեխնիկական ուսումնարանն էր եկել ֆիզիկայի մի հիանալի դասատու, որը կարողացել էր բոլոր աշակերտներին վարակել սիրով իր առարկայի նկատմամբ), և այն ժամանակ նա խոսում էր իսկական խանդավառությամբ, համոզում էր մորը՝ տատին ստիպել մի քանի հազար լիրա պարտք վերցնել՝ ոչ թե բուրբոնյան քեռուց, ո՛չ, այլ քեռի Կոսմոյից, թեկուզ հազար լիրա պարտք, որ հնարավորին չափ լավ կառուցի փորձի համար անհրաժեշտ սարքերը, որոնք նա կարող է փորձարկել Վալսանիայի լողափին: Խե՛ղճ տղա: Մոր պատասխանից նա իսկույն թևաթափ եղավ: Տա՞տը: Որ նա պարտքով փող խնդրի՞ եղբայրներից: Մի՞թե թոռը նրան չի ճանաչում: Եվ Անտոնիոն անմիջապես ներփակվեց իր մռայլ լռության մեջ ու չցանկացավ նույնիսկ բացատրել մորը այդ փայլուն հայտնագործության իմաստը: Ո՞վ գիտե, կա՞ր այդտեղ գոնե ճշմարտության հատիկ... Գուցե պարզապես մանկական պատրա՞նք էր: Բայց չէ՞ որ նա ամբողջ տարին համառորեն զբաղվում էր այդ գիտությամբ և հիմա, մեկնելով Հռոմ, մտադիր էր ամբողջովին նվիրվելու դրան: Ու թեև նա դեռ բոլորովին պատանի էր, թվում էր, թե ուրիշ հոգսեր չուներ, ուրիշ համակրություններ, ուրիշ ցանկություններ:

— Նինուչչո,— կանչեց մայրը:

Նա իրերը դարսել էր ճամպրուկի մեջ և ուզում էր, որ որդին օգնի իրեն՝ փակելու: Անտոնիոն անմիջապես մոտ վազեց:

— Շատ է լցված, ճի՞շտ է,— հարցրեց մայրը,— բայց չէ՞ որ դու ուզում էիր քեզ հետ վերցնել այս բոլոր գրքերը... Ավելի լավ չի՞ լինի դրանք հանել ճամպրուկից ու դնել արկղի մեջ, մանավանդ որ մենք այն հենց հիմա կուղարկենք քեզ:

— Ես արկղը կվերցնեմ ինձ հետ,— ասաց Անտոնիոն:— Չեմ վստահում: Ի՞նչ իմանաս, թե երբ տեղ կհասցնեն:

— Ի՛նչ ես ասում, որդիս, չէ՞ որ քեզ համար շատ ծանր կլինի: Դա անհնար է... Մի՛ անհանգստանա: Դու անմիջապես կստանաս արկղը: Ես կհոգամ այդ մասին:

— Այդ դեպքում այդ գրքերը թողեք այստեղ՝ ճամպրուկում: Փակե՞մ:

— Իսկ տատը քեռի Ռոբերտոյին ոչինչ չասա՞ց այն բանի մասին,— հարցրեց Աննան՝ ակնարկելով իր առաջարկը:

— Ոչինչ,— պատասխանեց որդին:

— Ես էլ եմ հասկանում,— հառաչեց Աննան,— որ դա գրեթե անհնար է: Ես դա ուզում էի քեզ համար: Ի՞նչ կարող ենք անել: Բայց խնդրում եմ, Նինուչչո, դու ինձ պիտի գրես ամեն ինչի մասին, հայտնես, եթե քեզ որևէ բան հարկավոր լինի... և ինչպես ես ապրում... արդյոք քեզ լավ ես զգում... Այսքանը: Ես ուրախ կլինեմ նույնիսկ մի քանի տողի համար... Բայց խնդրում եմ քեզ, գոնե առաջին նամակները երկար գրիր, ամենաառաջին նամակները: Ես ուզում եմ ամեն ինչ իմանալ: Եվ հիշի՛ր, Նինուչչո, գոնե մի քիչ հոգ տար կարգուկանոնի մասին: Քեռի Ռոբերտը սիրում է կարգուկանոնը, դու այդ գիտես: Դու էլ կարգուկանոն պահպանիր: Ես քեզ էլ ոչինչ չեմ ասի... Գիտեմ, որ դու կկատարես քո պարտքը տատիդ հանդեպ, որ մնում են այստեղ... մենակ: Դե, բավական է... Բավական է... Արդեն շուտով պիտի գնաս:

Նրանք մտան ճաշասենյակ, որտեղ տատն ու Ռոբերտոն իրար կողքի նստած էին բազմոցին:

— Դու կտեսնես,— ասաց դոննա Կատերինան:— Ես կուզենայի դրանից առաջ փակել աչքերս առհավետ: Բայց գուցե ինձ էլ վիճակվի, ի լրումն ամենի, տեսնել այդ տեսարանը: Այդ ամենը կլինի. ես չեմ ասում, թե որևէ մեկը դիտմամբ չարիք է տարածում, բայց այդ ամենի համար հողը նախապատրաստվել է տարիներով: Դուք ապրում եք Հռոմում և ոչինչ չեք լսում ու չեք տեսնում: Ես կուզենայի սխալվել: Բայց չեմ սխալվում:

Նա բարձրացրեց գլուխը, որ նայի աղջկան ու թոռանը, արցունքներ տեսավ Աննայի աչքերում և, ձեռքը թափահարելով, բացականչեց.

— Թո՛ղ նա գնա: Թո՛ղ հեռանա մեզանից: Նրան օդ է պետք: Օ՛դ: Թո՛ղ օդ շնչի... Ջարդի՛ր կճեպը, որդիս, իսկ մեզ թող նստենք այստեղ ու սպասենք երկնային մանանայի: Գիտե՞ս, սիրելի Ռոբերտո, թե մենք այստեղ ինչ արեցինք վաթսուն թվականին: Մենք տասնյակ գավաթների մեջ լուծեցինք մեր հոգիները՝ օճառի կտորների պես. պետությունը մեզ նվեր ուղարկեց՝ ամեն մեկիս մի ծղոտ, և այդ ժամանակ մենք՝ դժբախտ հիմարներս, սկսեցինք փչել օճառաջրի մեջ. ինչքա՜ն պղպջակներ հայտնվեցին, ինչքա՜ն պղպջակներ՝ մեկը մեկից գեղեցիկ ու գունագեղ: Բայց հետո ժողովուրդն սկսեց քաղցից հորանջել, և այդ հորանջներից՝ փ՛ըը2, մեկը մյուսի ետևից պայթեցին այդ պղպջակները և, ների՛ր որդիս, կոպիտ արտահայտության համար, վերածվեցին թքի... Այս է ճշմարտությունը:

Եկավ աղախինը և հայտնեց, որ կառքը եկել է. կառապանը, որ փոքր-ինչ ուշացել է, խնդրում է շտապել: Ջիրջենտիից մինչև Վալ Սոլլանո երկաթուղային կայարանը պետք էր գնալ մոտավորապես կես ժամ:

Աննան մոմը ձեռքին կանգնել էր դռների մոտ, մոր կողքին, ընկճված ու կարծես չհագեցած որդու վերջին փութկոտ գրկախառնությունից, իսկ որդին հիմա ցայգի մշուշում քեռու կողքին ցած էր վազում նեղլիկ, զառիվար փողոցի աստիճաններով:

— Որդի՛ս, որդի՛ս,— անձայն հեծեծում էր Աննան:

— Դու դեռ կտեսնես քո Նինուչչոյին,— կամացուկ ասաց մայրը:— Իսկ ես Ռոբերտոյին՝ ո՞վ գիտի:

Խորին անդորրում նրանք լսեցին հեռացող կառքի անիվների դղրդյունը: Եվ Աննան արցունքներով լի աչքերը բարձրացրեց երկինք, որտեղ, ինչպես իրեն թվում էր, երկյուղած լռության մեջ իր վերևում հսկում էին աստղերը:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Գլուխ I

Նստած մեծ գրասեղանի ետևում, որի վրա դասավորված էին թվերով ծածկված դիագրամներ ու հաշվետվություններ, քարտուղարն սպասում էր, որ նորին գերազանցություն սինյոր մինիստրը հիշի, որ ժամանակն է շարունակելու թելադրելը: Արդեն երրորդ գիշերն էր, ինչ կավալեր Կառն... իհա՛րկե, աշխատանքը շատ լավ բան է և այնուամենայնիվ, այնուամենայնիվ... ամբողջ օրը մեջքը ծռած նստել մինիստրությունում, հետո էլ՝ երեկոյան այստեղ, նորին գերազանցության առանձնատանը, և, միևնույն է, այս ֆինանսական հաշվետվությունը ոչ մի կերպ չի ավարտվում: Այնուամենայնիվ մի քանի օր անց այն պետք է ընթերցվի պատգամավորների պալատում: Էլ ուժ չկար: Իրականում նրան խանգարում էր ոչ այնքան հոգնությունը, որքան դառնությունը, որ նա վերջին ժամանակներս զգում էր՝ տեսնելով բոլորի կողմից հարգված այդ մարդու վիճակը, քանի որ եթե չէր էլ հիանում նրանով, ինչպես առաջ, ապա, համենայն դեպս, նրա նկատմամբ զգում էր խոր ու անկեղծ համակրություն: Կավալեր Կառն շատ բան էր տեսել հեռվից, իսկ հիմա որոշ բաներ տեսնում էր նաև մոտիկից: Չէ՞ որ ճիշտ է. անհնար է, որ մարդ ապրի յոթանասուն տարուց ավելի և միաժամանակ շարունակ հերոսական գործեր կատարի: Ժամանակ առ ժամանակ անխուսափելիորեն որևէ հիմարություն ես անում՝ մեծ կամ փոքր: Մեկը՝ այսօր, մյուսը՝ վաղը, և ի վերջո մենք հանրագումարի ենք բերում... Մտորելով այդ մասին, կավալեր Կառն բեղից քաշում էր մի անհնազանդ, անասելի երկար մազ: Գրողը տանի: Այն կարելի է ձգելով հասցնել մինչև ճակատը... Մի հատիկ մազ: Բացարձակապես սև: Որպեսզի այնքան էլ զգալի չլինի այդ սպասման հոգնությունն ու թախիծը, կավալեր Կառն անձնատուր եղավ երևակայություններին: Նորին գերազանցության ակնոցը գրասեղանի վրա թվում էր երկու փոքրիկ, երկվորյակ լճակներ. գրչածայրեր մաքրելու փոքրիկ խոզանակը՝ փշարմավի խիտ պուրակ. գրասեղանի տախտակը այն տեղերում, որտեղ բաց էր մնացել՝ անվերջանալի հարթավայր, որտեղ գուցե թափառում էին վայրի ցեղեր: Նորին գերազանցությունը քայլում էր առանձնասենյակում՝ մռայլ, գլուխը կախ, ձեռքերը մեջքին դրած: Կավալեր Կառն՝ բարձրացնելով հայացքը, որ նայի նրան, և դեռ իր առաջ տեսնելով գրչածայրեր մաքրելու փոքրիկ խոզանակը, հիշեց, որ նորին գերազանցության թիկունքը մազոտ է: Մազոտ թիկունք ու մազոտ կուրծք: Նա մի անգամ տեսել էր մինիստրին լողանալու ժամանակ: Իսկական արջ էր, ազնիվ խոսք: Ա՛խ, որքան գծեր, որքան ծիծաղելի առանձնահատկություններ հայտնաբերեց կավալեր Կառն նորին գերազանցության անձի մեջ՝ այն ժամանակից, երբ դադարեց հիանալ նրանով, ինչպես առաջ: Նրա ծոծրակը, օրինակ, այնպես է ճարպակալած, հարթ, փայլուն, քիթը ծածկված է սև կետերով, և հոնքերը... մեկը, մյուսը, կարծես երկու ստորակետեր լինեն: Եվ վերջապես աչքերը... աչքերում, որ մի ժամանակ այնպես ուժեղ տպավորություն էին գործում նրա վրա, կավալեր Կառն նկատեց տարօրինակ մանրիկ բծեր, որ կարծես ծակում էին կանաչավուն եղջերաթաղանթը: Ճիշտ է ասված՝ «minuit praesentia famam» : Եվ կավալեր Կառն զարմանում էր միաժամանակ վշտանում, որ հիմա իր առաջ այդպիսի տեսքով է երևում այն մարդը, որ մի ժամանակ շլացրել էր իրեն՝ հարուցելով հիացական խանդաղատանքը բոլոր նրանց, ովքեր պատմում էին նրա գարիբալդիական անցյալի և պառլամենտում խիզախաբար շահած նշանավոր ճակատամարտերի մասին: Ի՞նչ կարող ես անել: Հիմա Ֆրանչեսկո Դ'Ատրին զբաղված էր միայն մի բանով. անհամարձակ փորձերով՝ վառ դեղին ներկով ապականելու ցանցառ մազերը, որ մնացել էին ճաղատի շուրջը, և երկար մորուքը, որն այնպես գեղեցիկ կլիներ, եթե մնար սպիտակ: Ճի՛շտ է, ինքը՝ կավալեր Կառն էլ արդեն մի քանի տարի է, ինչ... բայց քիչ-քիչ, միայն բեղերը: Պարզապես, որ խայտաբղետ չլինեն, սև ու սպիտակ: Դա նրան ջղայնացնում էր: Եվ հետո, ի վերջո, դա նրա համար երբեք չի ունեցել այնքան ողբալի հետևանքներ, որքան նորին գերազանցության համար: Այո, և բացի այդ, նա դեռ քառասուն տարեկան էլ չկար... ա՛խ, ո՛չ, քառասունն արդեն լրացել էր երեք օր առաջ, դե լավ, թող լինի քառասուն. նա հիմա էլ չէր ամուսնանա: Իսկ Ֆրանչեսկո Դ'Ատրին, ընդհակառակը, ամուսնացել է յո-թա-նա-սուն-յոթ տարեկանում և, ի լրումն ամենի, ջահել աղջկա հետ: Դա ակնհայտորեն ուղեղի կակղում է: Ժամանակն է, որ նա հրաժարական տա (կյանքն իր օրենքներն ունի), հրաժարական տա՝ առանց տատանվելու և ափսոսանքի: Թերևս կարող է ափսոսանք զգալ ինքը՝ Կառն, որովհետև տեսնում էր, թե ինչպես է նա լռելյայն, ծանրորեն տառապում իր գործած անասելի հիմարությունից. բայց այդ խղճահարությանը արհամարհանք էր խառնվում. սինյոր մինիստրն այնպես էր նվաստանում

կնոջ առաջ, որը հարսանիքից հետո գրեթե անմիջապես սկսեց ոտնատակ տալ նրա ամուսնական պատիվը: Հեղափոխության բոլոր կամ գրեթե բոլոր այդ հերոսները ամուսնացան ուշ և անհաջող: Հասկանալի է, երբ նրանք երիտասարդ էին, ստիպված էին մտածել ուրիշ բաների մասին: Սիրելը սիրել էին... «գեղեցկուհի Ջիգոդին»... համբույր և՝

Մնա՛ս բարով, գեղեցկուհի, մնա՛ս բարով,

Մեր գունդն ահա դուրս է գալիս նոր արշավի...

Եթե անկեղծ ասենք, ապա, ըստ էության, նրանք ոչ մի գործ չեն կարողացել անել լավ ու ժամանակին. և՛ ուսումը չեն ավարտել, և՛ մնացած ամեն ինչը մի տեսակ չի ստացվել: Դավադրություններում, մարտերում նրանք իրենց տարերքի մեջ էին, խաղաղ ժամանակ տանջվում էին ափ նետված ձկների պես: Ե՛վ գտնվել էին ամենանշանավոր պաշտոններում, բայց կայուն դիրք չէին ունեցել, և՛ արդեն տարիք էին առել, բայց ընտանիք չէին կազմել: Եվ հիմա, ուշանալով, նրանք ընկել էին անհեթեթ վիճակի մեջ՝ անելով այն բոլոր հիմարությունները, որոնց համար ժամանակ չէր եղել պատանության տարիներին, երբ նրանց շատ բան կարելի էր ներել տարիքի պատճառով… Եվ հետո՝ նույնիսկ...

Այդ պահին կավալեր Կաոն նորից ցնցվեց, կարծես մարմնով դող անցավ: Արդեն մի քանի օր էր, նա իսկապես անհանգստացած էր ապրվող պահի լրջությամբ ու ողբերգականությամբ: Ամեն առավոտ և ամեն երեկո լրագրավաճառները Հռոմի փողոցներում աղաղակում էին պառլամենտի հերթական պատգամավորի անունը, որին բարձրաձայն մեղադրում էին կամ խարդախության մեջ, կամ խաբեբայական արարքների՝ ի վնաս այս կամ այն բանկի: Այդպիսի պահերին ի՞նչ պիտի անի ամեն մի գիտակից քաղաքացի, որը չի ուզում խառնվել ամբոխին: Նա կենտրոնանում է, կշռադատում, ընտրում իր հայացքներին համապատասխան այս կամ այն վարքագիծը և հետևում դրան: Այդպես էլ արել էր կավալեր Կաոն: Նա իր վրա էր վերցրել դերն այն մարդու, որը խորապես վրդովված է, և խաղում էր այն: Սակայն նա չէր կարող ինքն իրեն չխոստովանել, որ այդ վիթխարի սկանդալը բավականություն է պատճառում իրեն: Եվ ամենամեծ բավականությունը նրան պատճառում էր այն, որ, գերազանց խաղալով իր դերը, նա այդ օրերին իր մեջ նկատեց մի նոր, գրեթե արբեցնող ունակություն՝ հեշտությամբ խոսել. իր արտասանած որոշ խոսքեր նրան թվում էին զարմանալի արտահայտիչ և հոգին լցնում էին զարմանքով ու հիացմունքով: Այո՛, այո՛, այդ օրերին Իտալիայի երկնքից ցեխ էր թափվում, և մարդիկ ցեխագնդեր էին շպրտում իրար վրա. ցեխը ծածկել էր ամեն ինչ՝ հարձակվողների ու հարձակման ենթարկվողների գունատ, կատաղի դեմքերը. մարտադաշտերում նվաճած մեդալները (գոնե դրանք, գրողը տանի, պետք է մնային անձեռնմխելի). Շքանշաններն ու աստիճանները. եզրակարած համազգեստները. հասարակական հիմնարկների ու բոլոր թերթերի խմբագրությունների ցուցանակները: Կեղտը հոսում էր հեղեղի պես, թվում էր, թե քաղաքի կոյուղու բոլոր խողովակները դուրս էին նետում իրենց պարունակությունը, և նոր ազգային կյանքը: Երրորդ Հռոմը պիտի խեղդվեն կեղտի այդ գարշահոտ հոսանքում, որի վրա ականջ ծակող ճիչերով թռչում էին կասկածի ու զրպարտության սև թռչունները: Կապարե երկնքի տակ, թանձր, ծխոտ օդում, գորշ, մռայլ աղջամուղջում բզզալով վառվում էին էլեկտրական լամպերը, ինչպես գունաթափված լուսիններ. հովանոցներն օրորվում էին չընդհատվող մանրամաղ անձրևի տակ, ամենուր խռնվում էր ամբոխը, և կավալեր Կաոն համոզվում էր, որ այդ օրերին քաղաքի յուրաքանչյուր հրապարակում անարգանքի սյուն էր կանգնեցվում. դահիճ էր դառնում ամեն մի արատավորված լրագրող, որը զենքի նման թափահարում էր շանտաժիստական խմբագրությունների կոյանոցից հանված կեղտոտ թերթուկը և հեշտանքով բերանից թափում ամենանողկալի մեղադրանքներ: Բայց ավելի նողկալի էին փաստերը: Կավալեր Կաոն, որ կարգուկանոնի մարդ էր, ուզում էր՝ ինչ էլ որ լինի, պաշտպանել կառավարությանը, մամուլում ու պառլամենտում թույլ չտալ մինիստրների, բանկերի ու բորսայի խայտառակ համաձայնության մերկացումները: Նա չէր ուզում

հավատալ, որ բանկերը շռայլորեն ֆինանսավորել են կառավարությանը՝ ընտրությունների անցկացման և ուրիշ Է՛լ ավելի կասկածելի նպատակների համար. որ լավությանը լավությամբ պատասխանելով, կառավարությունը առաջադրել է օրենքներ, որոնք արտոնություններ են ապահովում բանկերի համար, և պաշտպանել է օրենքը խախտողներին՝ տալով նրանց պատվավոր պաշտոններ և անցկացնելով սենատ: Նա չէր կարող ժխտել, որ բանկերը վարկ են բացել որոշ, առավել ականավոր քաղաքական գործիչների համար, որոնք, երկրին խաբելով, մամուլում կամ պառլամենտում պայքարել են խարդախ-բանկիրների շահերի համար. որ բոլոր այդ խրախճասեր մարդիկ սկզբում ձգտել են թաքցնել այն, ինչ արդեն հայտնի էր կամ կարող էր հայտնի դառնալ, իսկ հիմա, երբ նրանց վրա տեղացին հարվածներ, նրանք իրենք սկսեցին մերկացնել՝ հուսալով, որ հարվածելով ավելի թույլերին, կարելի կլինի փրկել նրանց, ովքեր ավելի ուժեղ են: Երբ ամբողջ երկիրն արատավորված տեսավ այն հասարակական գործիչներին, ովքեր հերոսական պայքարի փառավոր տարիներին մարտնչել էին հանուն հայրենիքի, նրա վրդովմունքն ու դառնությունը շրջվեցին նաև հենց այդ փառավոր հեղափոխության դեմ. նույնիսկ այնտեղ էին կեղտ հայտնաբերում: Կավալեր Կաոն ֆիզիկապես զգում էր, ինչպես արյուն էր գնում իր սրտից: Չէ՞ որ դա, գրողը տանի, հայրենասիրության սնանկացում էր: Եվ նա դողում էր՝ տեսնելով, թե վիրավորանքների ինչպիսի տեղատարափ է թափվում Հռոմի վրա, որը ներկայացնում էին որպես ժանտահոտ լեշերի մի կույտ: Նեապոլյան մի թերթում նա կարդացել էր, որ երկրի բոլոր ուժերը թոշնում են ու հյուծվում այդ հրեշավոր դիակին շփվելով. ամեն տեսակ խանդավառություն պայթում է օճառի պղպջակի պես, ամեն տեսակ արիություն վարակվում է փտախտով: Շատ ավելի լավ էր, երբ պապական Հռոմն ապրում էր ինդուլգենցիաներով, հոբելյաններով, ուխտավորներին սենյակներ վարձու տալով, պսակներ և օրհնած սրբապատկերներ վաճառելով հավատացյալներին: Այդ խոսքերը կավալեր Կաոյին դող պատճառեցին, քանի որ կղերականների համար դրանք, ընդհակառակը, մեծագույն ուրախություն էին: Երբեմն նորին գերազանցությանն ուղեկցելով Մոնտոչիտերիո, նա միջանցքներում ու դահլիճներում տեսնում էր բոլոր պառլամենտական պատգամավորներին՝ երիտասարդներին ու ծերերին, նորերին ու նախկիններին, մինիստրության բարեկամներին և հակառակորդներին, և նրանք բոլորը կարծես պարուրված էին անվստահության ու կասկածանքի մշուշով: Կավալեր Կաոյին թվում էր, թե նրանք բոլորն զգում են, որ կարծես լրտեսում են իրենց, ետևում. ոմանք ցուցադրաբար ծիծաղում էին, ուրիշները՝ ճնշված այն մտքից, որ իրենց դեմքերը գունատվում են երկյուղից, ձևացնում էին, թե գլխովին խորասուզվել են հափշտակող ընթերցանության մեջ: Չնայած տարվա սառն եղանակին, ոմանց համար չափազանց շոգ էր. նրանց կարծիքով օդաջեռուցիչները վատ էին կարգավորված: Ո՞վ գիտե, թե ինչքան մարդկանց էր համակել այն սարսափելի միտքը, որ ամեն րոպե քննիչի հայացքը՝ զինված ամենաանողոք ոսպնյակներով, կթափանցի իրենց մեջ, կսկսի հետազոտել ու շոշափել: Նախորդ օրը կավալեր Կաոյին թվաց, թե որոշ պատգամավորներ, որ տաք-տաք վիճում էին դահլիճներից մեկում, կտրուկ ընդհատեցին խոսակցությունը՝ տեսնելով, որ անցնում է նորին գերազանցություն Ֆրանչեսկո Դ'Ատրին: Կավալեր Կաոն հապաղեց մի քիչ և, խոժոռվելով, նայեց այդ պատգամավորներից մեկին, որն անմիջապես շրջվեց, և Կաոն պարզորոշ լսեց՝ ինչպես այդ խմբում հուզված ու զայրալից շշուկով արտասանվեց Կորրադո Սելմիի անունը. տվյալ պահին այդ անունը բոլորի շուրթերին էր: Կավալեր Կաոն հիանալի գիտեր, որ ոչ ոք չի համարձակվի կասկածի տակ առնել Ֆրանչեսկո Դ'Ատրիի անբասիր ազնվությունը, բայց կարող է պատահել, որ կնոջ պատճառով նրան էլ խառնեն Սելմիի անկմանը, որը հիմա բոլորին թվում է անխուսափելի:

Եվ, այնուամենայնիվ, նորին գերազանցությունն այստեղ է. նա քայլում է առանձնասենյակում՝ ամենայն հավանականությամբ, մոռանալով, որ սպասում են իրեն, մոռանալով ֆինանսական հաշվետվությունը, և թվում է՝ միայն ականջ է դնում մանկական տանջալից լացին. տանը լռություն էր տիրում, և, չնայած որ դռները փակ էին, լացը հեռավոր սենյակից հասնում էր նույնիսկ այստեղ՝ առանձնասենյակ: Մինիստրն արդեն մի քանի անգամ գնացել էր տեսնելու, թե ինչ է պատահել աղջկան: Կավալեր Կաոն այլևս

չկարողացավ զսպել վրդովմունքը (որովհետև, աստվա՜ծ իմ, ամբողջ Հռոմը գիտեր, որ այդ աղջիկը... այդ աղջիկը...), նա վեր թռավ, կարծես նրան խոցեցին, և աղմուկով շունչ քաշեց:

Նորին գերազանցությունը կանգնեց ու շրջվեց, որ նայի նրան: Կավալեր Կաոն իսկույն կնճռոտվեց, կարծես հանկարծակի, ուժեղ ջղաձգությունից և, ժպտալով ու ոտքը տրորելով, ասաց.

— Ջղաձգություն է, ձերդ գերազանցություն...

— Այո՛... Դուք երկար սպասեցիք: Ներեցե՛ք, կավալեր: Ես շեղվեցի... Այս երեկո բավական է, հա՞: Դուք, հավանաբար, հոգնել եք, ես էլ ինձ առողջ չեմ զգում: Հիմա արդեն տասնմեկն է, ճիշտ չէ՞:

— Տասներկուսն է, ձերդ գերազանցություն: Տեսնում եք, տասներկուսն անց է տասը րոպե...

— Ահա թե ի՛նչ: Իսկ... այդ թատրոնը ե՞րբ է վերջանում:

— Ի՞նչ թատրոն, ձերդ գերազանցություն:

— Չգիտեմ... «Կոնստանցի»... կարծեմ: Ես դա ասում եմ... աղջնակի պատճառով... Լսո՞ւմ եք, ինչպես է ճչում: Գուցե, եթե մայրը տանը լիներ...

— Դուք ուզում եք, որ ես գնամ «Կոնստանցի»՝ հայտնելո՞ւ սինյորային:

— Ո՛, ո՛չ, շնորհակալություն... Մանավանդ որ նա հիմա, այսպես թե այնպես, շուտով կվերադառնա... Բայց ինձ համար, գիտե՞ք, առանձնապես կարևոր է շուտ խոսել Աուրիտիի հետ:

— Կավալեր Ջուլիոյի՞:

— Այո՛: Նա իմ կնոջ հետ է: Բայց գուցե ներկայացումից հետո ներս չմտնի մեզ մոտ: Դուք ինձ շատ կպարտավորեցնեք, եթե ասեք նրան:

— Որ նա վերև բարձրանա: Հենց հիմա կգնամ, ձերդ գերազանցություն:

— Շնորհակալություն: Բարի գիշեր, կավալեր: Մինչև վաղը:

Կավալեր Կաոն խոր գլուխ տվեց և քթով ներշնչեց բավական շատ օդ. հազիվ անցնելով շեմքը, նա արտաշնչեց զայրալից ծամածռությամբ, որը փոխվեց սիրալիր ժպիտի՝ հենց որ նա տեսավ իրեն ընդառաջ եկող շքազգեստով ծառային:

Մենակ մնալով, Ֆրանչեսկո Դ'Ատրին ձեռքերն ուժգին սեղմեց դեմքին: Նրա փայլուն գանգը կարծես հուրհրատում էր առաստաղից իջնող ջահի էլեկտրական լամպերի տակ: Նա էլի մի քիչ քայլեց առանձնասենյակում՝ տառապանքի արտահայտությունը հոգնած դեմքին, որ ծամածռված էր մռայլ մտքերից, որոնց մեջ խորասուզվել էր: Իր փոքրիկ ձեռքով, որ ծերությունից կնճռոտ էր ու ոսկրոտ, նա շոյում էր իր երկար, վառ դեղին մորուքը, որ այնպիսի վիրավորական ու ծիծաղելի հակադրություն էր կազմում պատկառելի արտաքինի հետ: Նա ինչպես կարող էր չնկատել, որ այդ վատ ներկված մորուքը թվում էր ինչ-որ նողկալի ծաղրուծանակ: Ֆրանչեսկո Դ'Ատրին չէր նկատում այդ, որովհետև կորցրել էր իշխանությունն իր վրա և արդեն չէր կարողանում կառավարել իր արարքները: Նա իրեն տեսնում էր մի տեսակ կարծես դրսից. նրան նայում էին ուրիշ Ֆրանչեսկո Դ'Ատրիի աչքերը, որի հետ ամեն առավոտ հանդիպում էր հայելու մոտ, և որը նրան զայրալից արհամարհանքով էր նայում այն պատճառով, որ տեսնում էր իր նվաստացումը, որ իր առաջ հայտնվում են ուռած ու կնճռոտ կոպեր, խորշոմներ դեմքին ու ճերմակ մազեր: Սակայն նրա մեջ ապրում էր ոչ միայն այդ Ֆրանչեսկո Դ'Ատրին, որը պահանջում էր, որ նա, չնայած իր մտքի ծերունական ուժասպառությանը, շարունակի մտածել, զգալ, շարժվել այնպես, ինչպես արդեն չէր կարող հիմա, երբ նրա մարմնի բոլոր անդամները, ուղեղն ու սիրտը հիմարացել էին ծերությունից: Չէ որ նա հիմա իրականում միայն մի խեղճ ծերունի է, որը հիմա

հաճույքով կթաքնվեր մի խուլ անկյունում և անշարժ կնստեր այնտեղ. բայց նրա մյուս բոլոր անողորմ «ես»-երը շարունակում էին ապրել նրա մեջ՝ օգտվելով նրա շվարածությունից ու չէին կամենում նրան հանգիստ թողնել. այդ տարբեր «ես»-երը վիճարկում էին նրան մեկմեկուց, խաղում էին նրանով, արգելում էին խոստովանել, որ ինքը հոգնած է, հայտարարել, որ էլ ոչ մի բան չի հիշում. և դրանով ստիպում էին նրան՝ ստել առանց որևէ կարիքի, ժպտալ, երբ նա բոլորովին այդ չէր ցանկանում, մի փոքր զարդարել իրեն և անել շատ այնպիսի բաներ, որ նրան ավելորդ էին թվում: Այդ «ես»-երից մեկը ծիծաղելիորեն ներկում էր նրա մորուքը. մի ուրիշը նրան ստիպեց ամուսնանալ, թեև նա լավ գիտեր, որ ամուսնության ժամանակն անցել է. էլի մի ուրիշը նրան ստիպում էր մնալ այդ բարձր պաշտոնում, թեև նա գիտակցում էր, որ դա արդեն իր ուժերից վեր է. էլի մի «ես» նրան ստիպում էր անսահման ցավով սիրել աղջնակին, թեև նրան, ինչպես և ուրիշներին հայտնի էր, որ այդ երեխան իր աղջիկը չէր, և այդ սիրո համար նա հորինել էր շինծու արդարացում. չէ՛ որ ինքն էլ է երիտասարդ ժամանակ աղջիկ ունեցել, որին ուրիշն է տվել անուն, սեր, խնամք և ապրուստի միջոցներ. և որպես փոխհատուցում դրա համար, և որպես անցյալի մեղքի քավում, ինքը պետք է անուն, սեր, խնամք ու ապրուստի միջոցներ տար այս երեխային, ինչպես եթե սա իսկապես եկած լիներ իր հեռավոր անցյալից և լիներ հենց այն խեղճ փոքրիկը: Զիջելով այդ զգացմունքին, ուրիշների առաջ ճանաչելով այդ աղջնակին՝ որպես իրենը, Ֆրանչեսկո Դ'Ատրին ունկնդրում էր այն, ինչ շշնջում էր վրձնիկով ներկով զինված իր «ես»-ը. «Եթե դու, թանկագինս, ուզում ես, որ ուրիշները հավատան քո հայրությանը, երբ կողքիդ, քեզ հետ երիտասարդ կին է, պետք է, որ մազերդ ներկես վառ դեղին ներկով». դա հիմար խորհուրդ էր, որի դեմ առարկելու ցանկություն էր զգում, որպեսզի ոչ միայն չարատավորի իր պատվարժան տեսքը, այլև նույնիսկ իր իսկական զգացմունքը այդ աղջնակի նկատմամբ: Բայց հիմա նա կարող էր առարկել միայն խիստ երկչոտաբար: Եվ այդ տանջալից, ծիծաղելի երկչոտությունն էր հենց դրսևորվում ներկած մորուքում: Գտնվելով այդ «ես»-երի բազմության մեջ, որոնք կարծես ինքնուրույն էին գործում, և ինքն այդտեղ կապ չուներ, նա տարակուսում էր, թե սկզբում որ ուղղությամբ գնա. նրան այլևս ոչինչ չէր գրավում, և նա վախենում էր շարժվել այս կամ այն ուղղությամբ, որ անբավականություն չպատճառի իր դաժան տերերից մեկին կամ մյուսին. և ամեն մի, անգամ ամենաչնչին, որոշումը չէր կարող ընդունել առանց ցավի ու ջանքի: Նա հիանալի հասկանում էր, թե ինչ անանցանելի թավուտ է ընկել իր կամքին հակառակ, բայց այդտեղից դուրս գալ չէր կարող: Ամեն ինչ այստեղ տակնուվրա էր: Ամեն ինչ այստեղ՝ Հռոմում, անպարկեշտ խառնակռիվ էր, հսկայական հանցագործ խարդախություն: Սիցիլիայում խռովություն էր հասունանում: Մի՞թե ստորագույն կրքերի սանձարձակության մեջ, կրքեր, որոնք դուրս էին ժայթքել ազգային ինքնագիտակցության թուլացման պատճառով, նա չլսեց հեռավոր կրակոցների որոտը, առաջին պոռթկումը կործանարար փոթորկի, որը վրա էր հասնում ցնցող արագությամբ: Պառլամենտում հնչեց միայն մի ձայն, որը մեղադրում էր կառավարությանը և կարծես նրանց առաջ բեմ կանչում Սիցիլիայում՝ Կալտավուտուրոյում սպանված գյուղացիների արնաշաղախ ուրվականները, ձայն, որը հպարտ սպառնալիքով հայտարարեց, թե որքան վտանգավոր է ամրապնդել երկրում կործանարար համոզվածությունը, թե կարելի է անպատիժ կեղեքել աղքատներին ու փրկել կաշառակերներին, որ ապաստանել են Մոնտեչիտորիոյում: Այո՛, այդ սիցիլիացի պատգամավորը ճշմարտորեն շարադրեց փաստերը. զայրացած սիցիլիական գյուղացիները արիություն են ունեցել բռնի կերպով հաստատելու իրենց իրավունքը, և սկսել են վարել պետական հողերը, որ զավթել էին այդ երկրամասի տեր ու տիրականները, համայնքի ժառանգական տիրույթների կարգադրիչ-հափշտակիչները: Զինվորների միջամտությունից վախեցած՝ գյուղացիները դադարեցրել են աշխատանքները և գնացել են մունիցիպալիտետ՝ պահանջելու այդ հողերի բաժանումը. քանի որ պետը բացակայում էր, պատշգամբ է ելել նրա ստորադրյալներից մեկը, որ աղմուկը դադարեցնելու համար խորհուրդ է տվել շարունակել հողերի մշակումը, բայց ճանապարհին այդ բազմությանը դիմավորել է ուժեղացված ոստիկանական ջոկատը: Փորձելով դիմադրություն ցույց տալ և վախեցնել հարձակվողներին, գյուղացիներն սկսել են թափահարել հողուրագները, բայց ի պատասխան նրանց վրա են գրոհել սվիններով, իսկ հետո հնչել են նաև կրակոցները: Տասներկու մարդ սպանվել են, հիսունից ավելի՝ վիրավորվել, այդ թվում՝ մի քանի երեխաներ. մեկի մարմնի

վրա սվինի յոթ վերք կար: Սարսափելի մանրամասնությունն այնպես կենդանի պատկերացավ Ֆրաչեսկո Դ'Ատրիի աչքերի առաջ, որ չնայած իր բոլոր հոգսերին, երեք օրվա ընթացքում նա ժամանակ առ ժամանակ հիշում էր այդ մասին՝ զգալով սուր խղճահարություն: Զինվորի կատաղությունը, որ թափվել էր անմեղ երեխայի վրա, նրան թվում էր ապրված ժամանակի ամենաճիշտ արտահայտությունը. այդ կատաղությունն էր նա տեսնում շրջապատի բոլոր մարդկանց մեջ և շշմած էր դրանից: Նույնիսկ ամենասրբազան բաները այլևս չէին հարուցում ո՛չ հարգանք, ո՛չ գթասրտություն. միայն կույր կատաղություն, ատելության պոռթկումներ, ամենաստոր վրեժի վայրի ծարավ: Նա շարունակ սպասում էր, թե որևէ մեկը կբռնի իր կոկորդից և հաշիվ կպահանջի իր բոլոր հին ու նոր սխալների համար: Սխալնե՛ր: Իսկ ո՞վ սխալներ չի ունեցել: Բայց նույնիսկ դրանցից ամենաչնչինները, որոնց կողքով ուրիշ ժամանակ անփութորեն կանցնեին, հիմա աչքի էին զարկում՝ ստանում էին տվյալ պահի մռայլ գունավորումը, ինչ-որ կոպիտ ցայտունություն ու միաժամանակ խորհրդավորության երանգ, որ արթնացնում էր կրքոտ ցանկություն՝ փորփրել մինչև հատակը, որպեսզի նողկալի բավականություն ստանան կամ էլ չար սփոփանք այն բանից, որ բացահայտվել են ուրիշ, Է՛լ ավելի լուրջ գաղտնի մեղքեր: Առաջ մարդիկ այդպես հեշտությամբ չէին արիություն ձեռք բերում հրապարակայնորեն դատապարտելու համար. նրանց զսպում էր այն համոզմունքը, որ այդպիսի գործերում անհրաժեշտ է շրջահայացություն. իսկ այժմ, երբ բոլորը կարծես խոսքները մեկ էին արել, այդ արիությունը չափը կորցնում էր. այն արհամարհում էր ամեն տեսակ հասարակական ողջամտություն ու վերածվել էր չլսված սանձարձակության. և հիմա նույնիսկ ամենամաքուր խղճով մարդիկ չէին կարող իրենց վստահ զգալ: Ֆրանչեսկո Դ'Ատրիի ուշ ամուսնությունը երիտասարդ կնոջ հետ, պատրանքները, որ իր անցյալի վեհությունը, բարձր պատիվները, որոնց ինքը հասել է, կարող են հարգանք ծնել կնոջ սրտում, որն ընդունակ կլինի նրա խոր ազնիվ կապվածության մեջ փոխհատուցում գտնել պատանեկան կրակոտության պակասի փոխարեն. անխոհեմ շքեղությունը, որով Դ'Ատրին շրջապատել էր կնոջը, կնոջ սկանդալային կապը Սելմիի հետ, այդ աղջնակը...— այդ ամենը կարող են հանկարծ դառնալ մեղադրանքի աղբյուր, չարամիտ ակնարկների, աստված գիտի, թե ինչ վիրավորական կասկածների պատճառ: Ֆրանչեսկո Դ'Ատրիին թվում էր, թե ինքը դեգերում է իրեն շրջապատող իրականության դատարկության ու խավարի մեջ, ուրվականների մեջ, որ ծնունդ են առել իր դիրքի անկայունությունից, և նրա շփոթվածությունը շարունակ աճում էր, հատկապես հիմա, երբ ավելի ու ավելի բարձր էին հնչում ձայները, որ մեղադրում էին կառավարությանն այն բանում, որ նա իր ամբողջ կարողությամբ ջանում է պաշտպանել որոշ պառլամենտականների՝ առավել նշանավորներին և առավել արատավորվածներին: Դրանց մեջ էր նաև Սելմին, որը շարունակ, մինչև ամենավերջին օրերը իրեն պահում էր խայտառակ ձևով: Մինստրների կաբինետի կոլեգաները ոչինչ չէին ասում Ֆրանչեսկո Դ'Ատրիին, բայց իրենց ամբողջ տեսքով ուզում էին նրան հասկացնել տալ, որ Սելմիին պաշտպանում են հանուն նրա: Դա ճիշտ չէր: Ճիշտն ասած, ոչ թե հանուն նրա, այլ որովհետև նա իրենց հետ էր, և նրա անկումն այդ պահին կարող էր հասցնել կառավարության տապալմանը: Բայց մի՞թե փրկության այդպիսի միջոցը ավելի վատ չէր կործանումից: Սակայն նա չէր համարձակվում հակազդել: Նա՝ Դ'Ատրին, երբեք չէր կատարել ոչ մի հանցանք, միշտ ազնիվ էր եղել, իսկ հիմա իր միակ թուլության պատճառով, այդ արագ կորցրած պատրանքի պատճառով կինը նրան իր ետևից քարշ տվեց փողոցի ցեխի մեջ, որտեղ նրան անհամբեր սպասում էր քաղցած ոհմակը, որ պատրաստ է պատառ-պատառ անելու նրա մարմինը, կնոջ ու Սելմիի մարմինները և վերածելու խառնախյուսի: Ճիշտ է, հիմա, այնուամենայնիվ, հաջողվեց նրան դուրս կորզել ծախու գրչակների ձեռքից, բայց ոչ մենակ, այլ Սելմիի, որը կարծես կախված էր մնացել նրա ու նրա կնոջ վրա, և Սելմիին կառչած բոլոր խարդախների հետ միասին: Նրան թվում էր, թե ինքը այստեղ՝ այս տունն է վերադարձել ոչ թե մենակ, այլ այդ ամբողջ գռմռացող, ծանակող, իր վրա հայհոյանքներ թափող ամբոխի հետ: Բոլորը, հիմա բոլորը կհավատան, որ նա Սելմիին փրկում է ոչ թե մեծահոգությունից, այլ վախից: Եվ գուցե նաև ինքը՝ Սելմին... Բայց իրականում ինքն ինչո՞ւ պիտի վախենա: Դ'Ատրին թերևս մեծահոգաբար փրկեր նրան, որովհետև հիշում էր մի ուրիշ Սելմիի՝ խիզախ ու ազնիվ, որ վտանգի պահին արհամարհում էր մահը և խանդավառված էր Հայրենիքի սրբազան գաղափարով: Ո՛չ, ո՛չ, նա այդ բանը չէր

անի նույնիսկ մեծահոգությունից. չափազանց շատ էին տանջում նրան ոչ միայն ատելությունն ու վրդովմունքը դավաճանության համար (թեև այդ բանում նա ավելի շատ մեղադրում էր կնոջը), որքան այն տանջալից միտքը, թե այդ վախը կա իր մեջ: Այն դեպքում, եթե թաքցնեին փաստաթղթերը, որոնք կարող են կործանել Սելմիին, անպաշտպան ու վարկաբեկված կմնա ոչ մի բանում մեղք չունեցող Ռոբերտո Աուրիտին: Նրա անունով մոտ քառասուն հազար լիրա պարտք կա. և, որ ավելի վատ է, կան մեկից ավելի կարճառոտ, խորհրդավոր գրություններ, որոնք ակնարկում են ինչ-որ բարեկամի, որը պատրաստ է երաշխավորելու բանկի դիրեկտորի առաջ, կամ էլ խոստանում է, թե ինքն ինչպես կվարվի, կխոսի կամ կգրի՝ ստացած հրահանգներին համապատասխան: Այդ գրություններն ընկել են քննչական մարմինների ձեռքը, և այդ մասին մինիստրը շուտով պետք է հայտնի Ջուլիո Աուրիտիին՝ Ռոբերտոյի եղբորը:

Նա արդեն հաշտվել էր դրության սարսափի հետ, նրա մեջ նույնիսկ ծնվել էր ճակատագրական անխուսափելիության զգացում, և նրա տագնապը լի էր թախիծով, զզվանքով ու ծանրանում էր վշտալի հոգնությամբ: Ոչ մի սփոփանք չէր գտնում նաև անցյալի հիշողություններում. արթնացնելով դրանք ինչ-որ ակնթարթ, նա միայն է՛լ ավելի սուր էր զգում ներկայի խայտառակությունն ու ստորությունը: Եվ այդ տխրությունից բոլոր իրերը, նույնիսկ սենյակի մանր զարդարանքները նրան թվում էին մի տեսակ անտանելի ծանր: Ա՛խ, խավա՛ր, խավա՛ր, որջե՛ր, որտեղ կարելի լինի հանգստանալ. մա՛հ, այո՛, մա՛հ: Ամբողջ պատերազմի ընթացքում նա իր մեջ հաղթահարում էր մահվան երկյուղը: Ի՜նչ դաժանություն: Չէ որ շուտով կմեռնի... Քիչ օրեր են մնացել, և վերջին կումի համար նրան մատուցում են այդպիսի գարշանքով լեցուն մի բաժակ...

Ֆրանչեսկո Դ'Ատրին կանգնեց. նրա հայացքը դատարկ էր ու անշարժ: Նա պատկերացրեց, թե ինչ կլինի իր մահից հետո. կգա ժամանակ, որ արդեն կպատկանի ուրիշներին… Ահա վերադարձավ անդորրը... ուրիշների համար: Բարիացան ալիքները, անցավ փոթորկի սարսափը, և ո՛չ խղճահարություն, ո՛չ ափսոսանք, ո՛չ մի հիշողություն այն մասին, թե ով ընկավ խութերի մեջ ու զոհվեց:

Դ'Ատրիի հայացքը, որ մեքենաբար հառած էր սեղանին, ընկավ փոքրիկ, ճենապակե կապիկի վրա, որը հանդգնորեն ծիծաղում էր նրա երեսին. նրան համակեց այդ կապիկը ջարդելու ցանկությունը. նա շրջվեց, նորից լսեց աղջկա տանջալից լացը և գնաց հեռու սենյակը:

Դա ստնտուի սենյակն էր: Այն հազիվ էր լուսավորում կոմոդի վրայի գիշերալամպը, որ ծածկվում էր թղթե ճառագայթապաշտպան վահանով: Պառավ, նիհար, կարգասեր դայակը քայլում էր՝ գրկած փոքրիկ աղջկան, որը գալարվում էր ցավից, և թվում էր, թե ուզում է դուրս սահել նրա ձեռքերից. դայակը ջանում էր պահել նրան՝ սեղմելով կրծքին, կարծես ի պատասխան նրա տնքտնքոցներին, ամբողջ մարմնով համաչափ օրորվելով, կրկնում էր՝ «դե՛-ե՛, դե՛-ե՛», և անդադար թեթևակի թփթփացնում էր նրա մեջքին:

Ստնտուն, որ դուրս էր գցել ահագին ստինքներից մեկը, նույնպես լալիս էր. լալիս էր ու երդվում կողքին նստած աղախնին, որ ոչ մի այնպիսի բան չի կերել, որ կարողանար ծակոցներ պատճառել երեխային:

Ֆրանչեսկո Դ'Ատրին որոշ ժամանակ անշարժ նայում էր չտեսնող աչքերով, ու թեև նրա մտքերը թափառում էին հեռվում, նրա դիմագծերը լարվեցին գրեթե բնազդական ջանքից՝ հասկանալու, թե արցունքներ թափելով ինչ է ասում ստնտուն: Նա զզվանքով էր նայում այդ անճոռնի ստինքին, որի բաց մանուշակագույն պտուկին մի կաթիլ կաթ կար: Աղախնի գլուխը մի երջանիկ միտք եկավ՝ բարձրացնել ստնտուի կրծկալը և ծածկել այդ տեսարանը: Եվ այդ ժամանակ Ֆրանչեսկո Դ'Ատրին շրջվեց ու նայեց դայակին: Տանջահար երեխայի ճիչերից խլացած՝ նա լայն բացեց աչքերը. հետո մոտեցավ, գիշերային սեղանիկից վերցրեց զանգակը և սկսեց կամացուկ զանգահարել փոքրիկի վերևում, որ մոռանալ տա ցավը. նա գնում էր դայակի կողքով, որը, շարունակ օրորվելով, քայլում էր ու քայլում սենյակում:

Մետաքսե զգեստը խշխշացնելով վերադառնալով թատրոնից, ամուսնուն այդպես էլ գտավ դոննա Ջաննետան: Տեսնելով այդ գիշերային ընտանեկան պատկերը, նա բարձրացրեց հոնքերը, թեթև, ծաղրական ժպիտով փոքր-ինչ բացեց բերանը՝ մտածելով, թե նորին գերազանցությանը հաճույք է պատճառում պետական ծանր հոգսերից հետո ծառաներին ցուցադրել այդ ծիծաղելի հայրական քնքշությունը: Մոտ վազեց աղախինը, որ վերցնի արծաթե փայլազարդերով շողացող սև շղարշը, որ սինյորան հանել էր գլխից, և ընդունի կնգուղով վերարկուն. նա շշուկով պատմեց տիրուհուն, թե ինչ է պատահել:

— Ահա թե ի՞նչ: Խղճա՛ւկս,— պատասխանեց սինյորան ընդգծված անտարբերությամբ, բայց այնպիսի ձայնով, որ հնչում էր ջերմ ու մեղեդային, տարածելով օծանելիքի բուրմունքն ու խշխշացնելով խիստ լանջաբաց զգեստը, նա մոտեցավ դայակին: Դ'Ատրին նրան նշան արեց լռելու: Երեխան վերջապես հանգստացել էր: Դոննա Ջաննետան հոգնած, թեթև հառաչանքով գնաց դեպի իր սենյակը: Նա կանգնեց շեմքին և, գրեթե երգելով, ասաց ամուսնուն.

— Ախ, հա՛: Այնտեղ սպասում է Ջուլիո Աուրիտին:

Ֆրանչեսկո Դ'Ատրին գլխով արեց. հետո մոտեցավ կնոջը և, չնայելով նրան, կամացուկ, բայց լուրջ ասաց.

— Սպասի՛ր ինձ, ես պետք է խոսեմ քեզ հետ:

— Խոսակցությունը երկա՞ր կլինի,— հարցրեց կինը:— Չի՞ կարելի վաղը: Վախենում եմ, որ շատ եմ հոգնել, և քունս տանում է: Ես սաստիկ ձանձրացա:

— Շնորհ արա և սպասիր ինձ,— հաստատուն ձայնով ասաց Դ'Ատրին:

Եվ գնաց դեպի իր առանձնասենյակը, որտեղ սպասում էր Աուրիտին:

Ա՛խ, նա ինչպե՛ս կուզենար հիմա չհանդիպել երիտասարդին, որին պիտի հաղորդեր սարսափելի նորություն: Նա արդեն գրեթե մոռացել էր այդ մասին: Անցած բոլոր օրերի ընթացքում նա շարժվում էր, կարգադրություններ անում, ցուցումներ տալիս, ստիպում իրեն՝ անել, խոսել, վճռել այն, ինչի մեջ իսկույնևեթ դադարում էր գտնել իմաստ, անհրաժեշտություն, նպատակ: Նա փակեց աչքերը և խոր շնչեց՝ զգալով, ինչպես իր ճակատին իջնում է մի մռայլ ծանրություն: Նա հենց նոր կնոջն ասաց, որ սպասի իրեն, որովհետև ինքը պետք է խոսի նրա հետ: Բայց ինչի՞ մասին: Ի՞նչ նպատակով: Եվ նա ինքն էր որոշ ժամանակ առաջ խնդրել քարտուղարին՝ թատրոնից ելնելիս Աուրիտիին նախազգուշացնել, որ բարձրանա իր մոտ, քանի որ ստիպողական անհրաժեշտություն կար նրա հետ հանդիպելու: Իհա՛րկե, անհրաժեշտ էր, որ թշվառ երիտասարդը որքան կարելի է շուտ իմանար, թե ինչ սարսափելի դժբախտություն է կախվել իր գլխին: Ոչ ոք չէր կարող հայտնել նրան, բացի մինիստրից: Բարձրացնելով ծանր վարագույրը և տեսնելով նրան, Դ'Ատրին ջղայնության պես ինչ-որ բան զգաց, որ կարեկցանք էր տածում Աուրիտիի նկատմամբ և խղճահարություն:

Ջուլիո Աուրիտին բոլորովին նման չէր եղբորը. բարձրահասակ էր, բարեկազմ, շատ նրբագեղ: Նրա շարժումների զուսպ աշխուժությունը ճառագում էր ուժ ու եռանդ, որ թեթևակի մեղմացվում էր գորշ պողպատագույն աչքերի հույլ-գոռոզ հայացքով: Հենց որ նկատեց իրեն ընդառաջ եկող մինիստրի մռայլությունը, նրա դեմքի արտահայտությունն անմիջապես փոխվեց: Ձեռնոցներից մեկը, որ նա բռնել էր ձեռքին, ընկավ գորգին:

— Ուրե՞մն,— հարցրեց նա:

Ֆրանչեսկո Դ'Ատրին կկոցեց աչքերը, որպեսզի խլացնի ցավը, որ հարուցեց նրա մեջ Աուրիտիի դեմքին արտացոլվող տանջալից երկյուղը: Նա տարածեց ձեռքերը և, գլուխն օրորելով, մռթմռթաց.

— Չի գտնվել:

— Ախ, ահա թե ի՛նչ,— բորբոքվեց Աուրիտին, և հանկարծ նրա դեմքը նորից այլայլվեց՝ արտահայտելով արհամարհանք, զայրույթ և միաժամանակ հաստատուն վճռականություն՝ ելնելու անարդարության դեմ՝ հիմա այլևս ոչ մի բան հաշվի չառնելով:— Ո՛չ, ներեցե՛ք , ձերդ գերազանցություն, թուղթը գոյություն ունի և պետք է գտնվի: Դուք գիտեք, որ իմ եղբայր Ռոբերտոն...

— Գիտե՛մ, գիտե՛մ...— փորձեց նրան ընդհատել Դ'Ատրին:

— Էլ բանն ի՞նչ է,— հարցրեց Աուրիտին:— Միայն այդ դիմումը կարող է փրկել նրան և այն չպետք է չքանա: Կամ էլ պետք է վերացնել այն ամենը, ինչ կարող է վարկաբեկել Ռոբերտոյին:

Դ'Ատրին նստեց, նորից ձեռքով ծածկեց դեմքը և փնթփնթաց.

— Բանն այն է, որ դատական իշխանությունները...

— Դե ո՛չ, ձերդ գերազանցություն: Դատական իշխանություններն իրենց տրամադրության տակ ունեն միայն այն, ինչ նրանց տալիս է կառավարությունը: Դա հիմա բոլորին է հայտնի:

Դ'Ատրին այնպես նայեց Աուրիտիին, կարծես ինքը չգիտեր այդ մասին, նա շտկվեց, դեմքի արտահայտությունը խստացավ, կարծես նա նախազգուշացնում էր Աուրիտիին, որ իր ներկայությամբ չպետք է վկայակոչել այդպիսի սկանդալային լուրերը: Բայց Աուրիտին կորցնելով ինքնատիրապետումը, հուսահատ շարժումներ անելով, շարունակեց.

— Իսկ ես... ես հանգիստ էի... Այդ ինչպե՞ս կլինի, ձերդ գերազանցություն, ես հանգիստ էի, որովհետև հույս էի դրել ձեզ վրա:

Դ'Ատրին թուլություն զգաց. բայց և անմիջապես, կարծես ինչ-որ ներքին մղումից, վեր թռավ և, ատելությամբ նայելով պատանուն, զայրացած գոռաց.

— Ես ի՞նչ կապ ունեմ: Ես ի՞նչ կարող եմ:

— Ինչպե՞ս,— բացականչեց Աուրիտին:— Բայց Սելմին...

— Սելմի՞ն,— մռնչաց Ֆրանչեսկո Դ'Ատրին՝ բռունցքներն այնպես սեղմելով, կարծես ուզում էր եղունգները խրել նրա ասած մարդու կոկորդը:

— Այո՛, այո՛, չէ՞ որ դուք նրան եք փրկում,— բացականչեց Ջուլիո Աուրիտին:— Բայց որպեսզի փրկեք նրան...

— Ահա թե ինչ: Դու էլ ես մտածում, թե նրան ես եմ փրկում,— դանդաղ ասաց Դ'Ատրին՝ դառն արհամարհանքով օրորելով գլուխը:

— Բայց նաև ինքը՝ Սելմին, ձերդ գերազանցություն,— իսկույն կտրուկ պատասխանեց Աուրիտին, և նրա ձայնում նույնպես արհամարհանք հնչեց, միայն թե ուրիշ:— Դուք կտեսնեք, որ ինքը՝ Սելմին չի հանդուրժի, որ իրեն փրկեն իմ եղբոր բարոյական սպանության գնով: Եվ հետո, ձերդ գերազանցություն, եթե նա չխոսի, եթե լռի Ռոբերտոն, ես կգոռամ: Այստեղ խոսքն իմ մոր մասին է, ձերդ գերազանցություն: Ռոբերտոյի ձերբակալությո՞ւնը: Իմ մայրը կմեռնի: Իսկ մեր անո՞ւնը:

Այստեղ Ֆրանչեսկո Դ'Ատրիի դեմքը ծռմռվեց:

— Քո մայրը... այո՛... քո մայրը...— մռթմռթաց նա՝ կորանալով և նորից երեսը ծածկեց ձեռքերով. որոշ ժամանակ նա չշարժվեց, հետո սկսեց ջղաձգորեն հառաչել՝ կարծես սկսվող խեղդված հեկեկանքից: Երիտասարդ ժամանակ Ֆրանչեսկո Դ'Ատրին Տուրինում ծանոթացել էր դոննա Կատերինա Լաուրենտանոյի և Ստեֆանո Աուրիտիի հետ, որին այնպես հիշեցնում էր այս պատանին. նա մտածեց այն հեռավոր տարիների մասին, իրեն տեսավ այնպիսին, ինչպիսին էր այն ժամանակ, տեսավ Ռոբերտոյին՝ դեռ տղա. մտածեց

ծովի վրա անցկացրած մի գիշերվա մասին, երբ այդ տղային պահում էր ծնկների վրա՝ Կուարտոյից մեկնելուց մեկ ժամ հետո... այո՛, այն գիշերի և այս գիշերի միջև անդունդ կա:

Ջուլիո Աուրիտին հուզված էր՝ տեսնելով, թե ինչպես են ցնցվում ծեր մինիստրի հզոր ուսերը:

Վերջապես Դ'Ատրին բացեց դեմքը և, առանց ուղղվելու, հայացքը հատակին հառած և ամեն բառի հետ ձեռքերը թափահարելով, ասաց.

— Ինչի՞ մասին ես գոռում: Ինչի՞ մասին: Համընդհանուր խայտառակությա՞ն: Բոլորն էլ մասնակից են: Դու ուզում ես ասել, որ գիտես, թե Սելմիին ինչի համար են պետք եղել այդ փողերը, որ վերցված են եղբոր անունով: Եվ դու այդպես էլ կգոռաս իմ խայտառակության մասին:

— Ո՛չ, ձերդ գերազանցություն,— իսկույն, սարսափելով, իր խոսքերից հրաժարվեց Աուրիտին:

— Այո՛, այո՛,— պատասխանեց Ֆրանչեսկո Դ'Ատրին՝ վեր կենալով:— Մասնակից են բոլորը, ես քեզ ասում եմ: Բոլո՛րը... բոլո՛րը... Ես մեռնում եմ նողկանքից... Կեղտ է, ա՛յ, մինչև այստեղ,— և նա երկու ձեռքով բռնեց կոկորդը:— Ես խեղդվում եմ: Եվ այդ ամենը պիտի տեսնեմ: Ամենաազնիվ անունները... Դու տեսնում ես միայն քո եղբորը: Այո՛, նրա ձեռքը ոչինչ չի ընկել, բայց նա երաշխավորել է մյուսի համար... Եվ մի՞թե դա խայտառակություն չէ: Դու ինչպե՞ս կարող ես արդարացնել նրան: Դու ի՞նչ պիտի գոռաս: Որ քո եղբայրը ծածկում է բարեկամի կեղտոտ գործերը, քո սինյոր եղբայրը այդ մուրհակներով նրա փոխարեն երաշխավորություն է տալիս...

— Եվ, ընդ որում, չի տալիս նրա անունը,— սեղմված ատամների արանքից ասաց Ջուլիո Աուրիտին՝ ծիծաղելով զայրույթից, ամոթից ու սրտնեղությունից:— Ահա թե ինչու դրանք չեն վերացրել:

— Այո՛, չէ՞ որ սարսափը պատել է բոլորին,— խզվող ձայնով նրա երեսին գոռաց Դ'Ատրին:— Գողախումբ է, գողեր, որոնք խավարում դողացող ձեռքերով պրպտում են կույրերի նման, ջուր են պղտորում, խարդախում, գողանում ծածուկ, մինչդեռ գողոնը չքանում է պարկերից, գրպաններից: Եվ տուրուդմփոցի ժամանակ շուրջը թրև են գալիս գողերից գողացողները, ճանկում են ընկած թղթերը, որ առևտուր անեն դրանցով. «Ահա՛, սինյորներ, Իտալիայի լավագույն մարդիկ: Ահա՛ պատիվը: Ահա՛ հայրենիքի փառքը»: Ինձ մի՛ ստիպիր խոսել... Ես գիտեմ ում հետ գործ ունեմ, բայց հիմա... այնքան բան կա, որ կուշտ եմ մինչև կոկորդս... Ես ինքս էլ եմ հասկանում, որ անմարդկային բան կլինի Ռոբերտոյից լռություն պահանջել, անմարդկային կլինի և՛ նրա պատճառով, և՛ մոր պատճառով, և՛ քո պատճառով, և՛ ընդհանրապես ձեր անվան պատճառով...

— Ռոբերտո՞ն,— ասաց Աուրիտին:— Բայց Ռոբերտոն, դուք նրան գիտեք, ձերդ գերազանցություն: Նա ընդունակ է լռելու: Բայց նույնիսկ ինքը՝ Սելմին...

— Ռոբերտոն կլռի՞,— հարցրեց Դ'Ատրին, կարծես կասկածում էր դրանում:

— Բայց ես չեմ լռի, ձերդ գերազանցություն,— շտապով կրկնեց Աուրիտին:— Ես ձեզ նախազգուշացնում եմ՝ չեմ լռի, թեկուզ հանուն իմ մոր:

— Սպասի՛ր,— շարունակեց՝ Դ'Ատրին՝ գրեթե հրամայելով նրան լռել:— Քանի որ քեզ կանչել եմ, ուրեմն ուզում եմ ինչ-որ բան ասել:

Ջուլիո Աուրիտին տագնապով նայեց նրա աչքերի մեջ: Բայց Դ'Ատրին չկարողացավ դիմանալ այդ հայացքին. նա տհաճություն զգաց, նույնիսկ սրտնեղություն. նա նկատեց երիտասարդի ձեռնոցը, որ ընկել էր խոսակցության հենց սկզբում, և նրան համակեց անտանելի ծանրության զգացում, որ պատճառում էր նրան ամբողջ շրջապատի տեսքը: Նա փակեց աչքերը և մռայլ ասաց.

— Դու հասկանում ես, որ ես չեմ կարող ձեռքերս կեղտոտել բոլոր այդ գործերում...

Նա նայեց իր ձեռքերին և զզվանքով թաքցրեց դրանք:

— Եվ, այնուամենայնիվ,— շարունակեց նա,— ես խոսել եմ Ռոբերտոյի մասին այսօր երեկոյան... ես ասել եմ... ես հիշեցրել եմ... հիշեցրել եմ նրա ծառայությունները... Գուցե... ուշադիր լսիր... այդ վարկաբեկող թղթերը, որոնց պատճառով արդեն ստորագրված է ձերբակալման հրամանը... այո՛: Բայց... ուշադիր լսիր... այդ թղթերը...

Նա չէր ուզում խոսել, բայց ձեռքի արագ, արտահայտիչ շարժումով կարծես ասաց. «Կորչեն»:

— Թեև,— շարունակեց նա անմիջապես,— դու գիտես, որ թերթերն արդեն տպագրել են եղբորդ անունը... Որպեսզի վերացվի խարդախ համաձայնության ամեն մի կասկած, և որպեսզի ամենաչնչին հետք էլ չմնա, ոչ մի նշույլ, հարկ կլինի...

— Վճարե՞լ,— սրտի թալկացումով հարցրեց Աուրիտին:— Եվ որտեղի՞ց... ինչպե՞ս:

Դ'Ատրին զայրույթով թոթվեց ուսերը:

— Ախր դա քառասուն հազար լիրա է, ձերդ գերազանցություն:

— Ես չեմ կարող այդքան փող տալ քեզ... Ճարի՛ր... Եվ շուտ... Դու հասկանում ես, դա միակ միջոցն է...

— Ուրիշների վերցրած փողե՛րը,— տնքաց Աուրիտին:

— Բայց դրանք ինչպե՞ս են վերցված,— բարկացած հարցրեց Դ'Ատրին:— Դու դա պիտի հասկանաս:

— Բայց ո՛չ իր համար,— զայրացավ Ջուլիոն:

— Դու, ի՞նչ է, երեխա՞ ես:

— Ո՛չ, ձերդ գերազանցություն, բայց դա շատ դժվար է... Որտեղի՞ց ճարել: Եվ ինչպե՞ս:

— Փնտրի՛ր... Դու հարուստ ազգականներ ունես... քո զարմիկը...

— Լանդո՞ն:

— Կամ էլ քեռիներդ...

Ջուլիո Աուրիտին մտախոհ կշռադատում էր, թե որքանով ճիշտ կարող է լինել ցույց տրված ուղին՝ այն բոլոր խոչընդոտների մեջ, որ նա տեսնում էր իր առաջ. Լանդոյին դիմել խանգարում էր Սելմիի ատելի ուրվականը, քեռիներին դիմել՝ մոր աննկուն հպարտությունը: Հնարավո՞ր է արդյոք համոզել նրան դրամական օգնություն խնդրել եղբորից՝ որդու կասկածելի պարտքը վճարելու համար: Նրան հակել այդ բանին՝ կնշանակի ջարդել: Եվ Ջուլիո Աուրիտին որոշեց փորձել ամենից առաջ դիմել Լանդոյին. ավելի լավ է նա, ամեն գնով, միայն թե մորն ազատի այդ վերջին զոհաբերությունից:

— Ե՞րբ,— հարցրեց նա:

— Շուտով...— ասաց Դ'Ատրին:— Ինքդ հասկացիր. հինգ-վեց օր:

Ջուլիո Աուրիտին՝ կորցնելով ժամանակի հասկացողությունը, հափշտակված այն մտքով, թե ինքն ինչ է անելու, հրաժեշտ տվեց և, մռայլվելով, արագ հեռացավ, կարծես թե իսկույնևեթ պիտի վազեր զարմիկի տուն:

Ֆրանչեսկո Դ'Ատրին հայացքով հետևեց պատանուն մինչև շեմքը. նա նստեց շփոթահար, ջղային՝ մի ձեռքի ափով մերթ-մերթ շփելով մյուսի երեսը, կարծես աշխատում էր հիշել, թե էլի ինչ պիտի անի ինքը: Հանկարծ կարմիր գորգի վրա նորից տեսավ սպիտակ ձեռնոցը, որ ընկել էր Աուրիտիի ձեռքից: Այդ ձեռնոցը, որ մոռացվել էր այստեղ, նրան թվում էր նշան այն բանի, որ ինքն այլևս չի կարող իրենից վանել իրերը, մարդկանց մտքերը, որոնցից շնչահեղձ

է լինում. միշտ մնում է մի հետք՝ նորից հայտնվող կամ էլ անջնջելի, ինչպես մղձավանջային երազում: Ֆրանչեսկո Դ'Ատրին զգույշ կռացավ, զզվանքով բարձրացրեց ձեռնոցը և արագ խցկեց գրպանը, կարծես այդ ձեռնոցի մեջ կարելի էր նկատել նրա թույլ տված փոխզիջումը:

Դոննա Ջաննետան՝ ցայգազգեստով, ժանյակահյուս, ժապավեններով զարդարված, նրբագեղ շորագլխարկով, սպասում էր իր սենյակում՝ նստած խոր, ցածրիկ բազկաթոռին, որ պաստառված էր գորշ կաշվով: Նա ոտքը գցել էր ոտքի վրա և անհանգիստ մատներով մերթ-մերթ կսմթում էր ստորին շրթունքը: Նրա սուր հայացքը սևեռված էր կարմիր թավշե կոշիկի ծայրին, որը երևում էր ցայգազգեստի փեշի տակից ու չքանում՝ ոտքի թեթև ճոճման տակտով:

Առաջին անգամ էր ամուսինն այդպիսի եղանակով և այդպիսի տեսքով հայտարարում, թե ուզում է խոսել կնոջ հետ: Առաջ, երբ նա բոլոր հիմքերն ուներ, ոչ մի բանի մասին նույնիսկ ծպտուն չէր հանում: Ի՞նչ կարող է ասել հիմա:

Դոննա Ջաննետան նկատել էր, որ արդեն մի քանի ամիս է՝ ամուսինը և՛ ավելի մռայլ է, և՛ մի տեսակ ավելի ընկճված, քան սովորաբար, բայց, իհա՛րկե, ո՛չ իր պատճառով. գուցե զանազան պառլամենտական դժվարությունների՞ պատճառով: Դոննա Ջաննետան երբեք ոչինչ չէր կամեցել իմանալ քաղաքականության մասին. նա միշտ բարեկամներին արգելել էր այդ մասին խոսել իր ներկայությամբ. ինքը թերթեր չէր կարդում և հպարտանում էր իր անտեղյակությամբ, բավականություն էր ստանում ծիծաղից, որով ընդունում էին իր որոշ հայտարարությունները. օրինակ՝ երբ ասաց, որ չգիտի, թե ովքեր են ամուսնու կոլեգաները մինիստրների խորհրդում: Գուցե ամուսինն ուզում է հայտնել՝ ինչպես իրենց ամուսնության առաջին տարվանից հետո, թե որոշել է հեռանալ «իշխանությունից»: Հիմա թող հեռանա, հիմա իր համար եղած-չեղած մի հաշիվ է:

Ահա և նա... Դոննա Ջաննետան իսկույն փոխեց դիրքը և, աչքերը փակ, մեջքով հենվեց բազկաթոռի թիկնակին՝ աշխատելով քնած ձևանալ. այնուամենայնիվ, երբ Դ'Ատրին լայն բաց արեց դուռը, կինը բացեց աչքերը՝ քնքշանվաղ հոգնածությամբ, ինչպես եթե իսկապես քնած լիներ:

— Վաղը չի՞ կարելի,— թախծագորով ծոր տվեց նա:— Ես իսկապես ուզում եմ քնել, Ֆրանչեսկո: Վախենում եմ, որ չեմ հետևի քո դատողությունների ընթացքին:

— Կհետևես,— ասաց Դ'Ատրին՝ մռայլվելով ու դողացող ձեռքով շոյելով մորուքը:— Ի վերջո, եթե դու ուզում ես, ես կարող եմ կարճ խոսել:

— Դու հրաժարակա՞ն ես տալիս,— անհոգաբար հարցրեց կինը:

Ֆրանչեսկո Դ'Ատրին զարմանքով նայեց կնոջը:

— Ոչ...— ասաց նա:— Ինչո՞ւ:

— Ես մտածեցի...— Դոննա Ջաննետան հորանջեց՝ ձեռքով ծածկելով բերանը:

— Ո՛չ, ո՛չ, ես քեզ հետ պիտի խոսեմ մեր տնային գործերի մասին,— շարունակեց Դ'Ատրին:— Մի քիչ դիմացիր: Ես էլ եմ շատ հոգնել: Եթե դու իսկապես ուզում ես, որ ես կարճ խոսեմ, չնեղանաս:

Դոննա Ջաննետան լայն բացեց աչքերը.

— Իսկ ինչո՞ւ պիտի նեղանամ:

— Որովհետև եթե ես պիտի կարճ խոսեմ, ապա հարկ կլինի խոսել կտրուկ, ուղղակի,— պատասխանեց Դ'Ատրին:— Թող ես խոսեմ, հետո, հուսով եմ, դու կանես այն, ինչ կասեմ քեզ. և դա բավական կլինի: Հիմա լսիր:

— Լսո՛ւմ եմ,— հառաչեց դոննա Ջաննետան՝ կոպերն իջեցնելով:

Ֆրանչեսկո Դ'Ատրին նրա աչքերին մոտեցրեց երկու մատները և մի քանի անգամ դժվարությամբ շարժեց:

— Քեզ պատահել է երկու դժբախտություն,— սկսեց նա:

Դոննա Ջաննետան ցնցվեց:

— Երկու դժբախտությո՞ւն: Ի՞նձ:

— Մեկը դու ինքդ ես կամեցել,— շարունակեց ամուսինը:— Հին դժբախտություն է: Այդ ես եմ:

— Օ՛,— բացականչեց կինը՝ նորից թիկունքով հենվելով բազկաթոռի թիկնակին:— Դու ինձ վախեցրիր:

Ժպտալով ու ձեռքերը գլխի տակ դնելով, նա ավելացրեց.

— Ի՛նչ ես ասում... Բոլորովին էլ այդպես չէ...

Ցայգազգեստի լայն թևերը ցած սահեցին ու մերկացրին նրա գեղեցիկ ձեռքերը:

— Մինչև վերջին ժամանակներս իսկապես այդպես չէր,— պատասխանեց Դ'Ատրին:— Դու չէիր նկատում քո դժբախտությունը, որովհետև այն անբավականությունը, որ ես էի հարուցում քո մեջ ժամանակ առ ժամանակ...

— Ֆրանչեսկո, ես այնպե՛ս եմ ուզում քնել,— տնքաց կինը:

— Թո՛ւյլ տուր... թո՛ւյլ տուր, թո՛ւյլ տուր,— ասաց Դ'Ատրին սրտնեղությամբ:— Ուզում եմ քեզ ասել, որ այդ անբավականության դիմաց դու ստացել ես ամենամեծ փոխհատուցումը իմ... իմ... դե, ինչպե՞ս ասել, փիլիսոփայության մեջ...

— Դու ինձ միանգամից ասա, թե որն է երկրորդ դժբախտությունը, խնդրում եմ քեզ,— գրեթե ննջելով, շունչ քաշեց դոննա Ջաննետան:

Ֆրանչեսկո Դ'Ատրին նստեց: Հիմա պետք էր շոշափել ամենադժվարին հարցը, և նա ուզում էր այդ անել հնարավորին չափ ավելի մեղմաբար: Նա արմունկներով հենվեց ծնկներին, գլուխն առավ ափերի մեջ, որ ավելի լավ կենտրոնանա, և հայացքը հառելով հատակին, խոսեց.

— Հիմա: Սպասի՛ր: Ես ինքս եմ... ստիպված եղել դրա համար հատուցել: Բայց այստեղ դու բոլորովին մեղավոր չես: Բնական է, որ ընտրություն կատարելով երիտասարդության իրավունքների ու կնոջ պարտականությունների միջև, դու նախապատվությունը տվել ես երիտասարդության իրավունքներին: Ես կարող էի քեզ վաղուց բացատրել, որ դու ինքդ մի անգամ ընդունելով... և նույնիսկ... նույնիսկ ուրախությամբ՝ այդ պարտականությունները ծերունու հանդեպ, անխուսափելիորեն պետք է հրաժարվեիր իրավունքներից, բայց դրա համար էլ ես քեզ չեմ մեղադրում, որովհետև այն ժամանակ գուցե դու էլ էիր կարծում, թե...

Այդ պահին Ֆրանչեսկո Դ'Ատրին բարձրացրեց գլուխը և լռեց: Դոննա Ջաննետան քնած էր՝ մի ձեռքը գլխի տակ դրած, մյուսը՝ նրան պարզած, կարծես խնդրում էր խնայել:

— Ջաննա՛,— կանչեց Դ'Ատրին ոչ շատ բարձր՝ զսպելով սրտնեղությունն ու վրդովմունքը, կարծես նրա ինքնասիրությունը խոցել էր այն միտքը, որ կինը, արթնանալով իր կանչից, ստիպված կլինի խոստովանել, որ քնել է, թեև ինքը նրան ասում էր շատ կարևոր բաներ: Նա նորից կախեց գլուխը և բարձրաձայն ավարտեց ընդհատված խոսքը:— Դու էլ էիր կարծում, թե... այո՛... թե քեզ համար հեշտ կլինի կատարել քո պարտականությունները:

Դոննա Ջաննետան չարթնացավ. մյուս ձեռքը կամացուկ ցած սահեց և ծանր ու անկամորեն ընկավ նրա ծնկին: Ամբողջ մարմնով դողալով, Ֆրանչեսկոն ոտքի ելավ. նա քիչ էր մնում բռներ այդ ձեռքը, որ թափով ցնցի և ամենակոպիտ հայհոյանքներ շպրտի կնոջ երեսին: Թեև կնոջ քնի բնազդական հանգստությունը նրան անամոթ թվաց և գրգռիչ, բայց հենց դա

զսպեց նրան: Թվում էր, թե կինը քնի մեջ ասում է նրան. «Տե՛ս, ես ի՛նչ երիտասարդ եմ ու գեղեցիկ: Դու, ծերունի, ի՞նչ ես ուզում ինձանից»:

Այո՛, նա ի՞նչ էր ուզում: Նա ի՞նչ արեց կնոջ գեղեցկության հետ: Եվ ի՞նչ արեց կնոջ երիտասարդության հետ: Նողկալի անարգում: Այո՛, կինը իրեն հանձնեց նրան՝ ծերունուն: Բայց այն ժամանակ նա գոնե կարող էր երախտագիտությամբ լեցուն հոգով պաշտել կնոջ երիտասարդության գանձերը: Իսկ կինը ամոթալի արհամարհանքով, իրեն հաշիվ չտվող դաժանությամբ ոտքի տակ տվեց ամեն ինչ: Եվ հիմա ոչինչ չի կարող սրբագործել այդ գեղեցկությունը և այդ երիտասարդությունը, քանի որ պղծված են անարժանաբար:

Նա օրորեց գլուխը և կամացուկ դուրս եկավ սենյակից:

Դոննա Ջաննետան, ծանր շունչ քաշելով, իսկույն վեր թռավ տեղից:

Ո՛ւֆ: Իսկապես, այս ուշ ժամին, և հանկարծ՝ բացատրություն: Իսկ ինչո՞ւ: Նա լռում էր, երբ պիտի խոսեր: Իսկ հիմա, երբ կինը միայն մեռնում է ձանձրույթից, նա բացատրություն է պահանջում : Բավական է: Չափազանց ուշ է: Չէ՞ որ, ի վերջո, ինքն է կնոջը մտցրել նոր կյանքի մեջ՝ անխուսափելի նոր ծանոթություններով, նոր գայթակղություններով, որ այդ կյանքն է առաջարկել նրան, այն օրինակներով, որ նա հիմա տեսնում էր. այդ ինքն է կնոջն ստիպել (իհա՛րկե, չցանկանալով այդ) չափազանց միամիտ, երեխայական ու ծաղրանք հարուցող համարել այն գեղեցիկ երազանքը, որ փայփայել էր նա, և որը դրդել էր նրան ամուսնանալու Դ'Ատրիի հետ:

Դոննա Ջաննետան ամբողջ անկեղծությամբ երազում էր իր երիտասարդության ժպիտով թարմացնել Ֆրանչեսկո Դ'Ատրիի՝ իր հոր հին բարեկամի ու զենքի ընկերոջ, հերոսական կյանքի վերջին տարիները:

Գուցե Դ'Ատրիին թվում էր, թե Ջաննետան չափազանց հապճեպորեն վճռեց ամուսնանալ իր հետ այն՝ հիմա արդեն հեռու երեկոյան, երբ նրա հոր տանը, զրուցելով կանանց, ծերունիների, ամուսնական կապերի մասին, Ջաննետայի ինչ-որ հարցին ինքը պատասխանեց տխուր ժպիտով.

— Է՛, գեղեցկուհիս, եթե դու ամուսնանայիր ինձ հետ…

Գուցե Ֆրանչեսկո Դ'Ատրին աղջկա մեջ կռահում էր միևիստրի կին դառնալու սնափառ ցանկությունը: Չէ՞ որ Ջաննետան սերում էր գրեթե աղքատ ընտանիքից, և նրա բոլոր ազգականներն էլ հարուստ չէին:

Բայց Ֆրանչեսկո Դ'Ատրին պետք է իմանար, որ նրա ընտանիքում ամենալուրջ որոշումներն ընդունվում էին հենց այնպես, և շտապողականությունը, որով դրանք ընդունվում էին, երբեք չէին թուլացնում դրանք իրականացնելու հաստատակամությունը: Նրա հայրը՝ Էմմանուելե Մոնտալտոն, երիտասարդ ժամանակ մի ամբողջ խումբ պալերմոցի ուրախ ու անխոհեմ արիստոկրատների հետ սկսեց խռովություն բարձրացնել, կարծես ի հեճուկս Բուրբոններին նվիրված իր ընտանիքի այդ խռովության պատճառով նա ոչ միայն հալածանքների ենթարկվեց բռնակալական կառավարության կողմից, բանտ դրվեց և վերջապես աքսորվեց , այլև հոր կողմից զրկվեց ժառանգությունից՝ հօգուտ ավագ եղբոր և քրոջ՝ Թերեզայի, որ Դոն Իպոլիտո Լաուրենտանոյի կինն էր ու Լանդոյի մայրը: Եվ Ջաննան էլ հենց այնպես, առանց որևէ պատճառի կապերը խզեց զարմիկ Լանդոյի հետ, որն ապրելով Պալերմոյում, իր քեռու՝ իշխան Մոնտալտոյի տանը, թաքուն այցելում էր նրանց և սիրատածում էր հերետիկոսական զարմուհուն՝ դստերը հերետիկոս քեռու, որին իշխանն այնքան գումար էր տալիս, որ հազիվ էր բավարարում ապրելու համար, տալիս էր գաղտնի, կարծես ողորմություն էր, որ պետք էր թաքցնել: Եվ նրանք իսկույն խզեցին հարաբերությունները մեկընդմիշտ. զարմուհին այլևս լսել անգամ չէր ուզում զարմիկի մասին և հորը համոզեց Պալերմոյից մեկնել Հռոմ՝ հուսալով, որ Սիցիլիայից հեռու, ավելի լայն և պակաս նախապաշարված հասարակության մեջ, հայրը վերջապես թույլ կտա աղջկան՝ գնալ այն ուղիով, որով նրան գրավում էր մայրական արյունը: Ջաննայի մայրը՝ Լա Բերիոն, որ դերասանուհի էր Պյեմոնտում, հոր հետ ծանոթացել էր Տուրինում՝ նրա աքսորի ժամանակ և այնտեղ էլ ամուսնացել էր նրա հետ: Արյունը, հենց

արյունն էր հրապուրում, տանում Ջաննային, որովհետև նա նույնիսկ չէր ճանաչել մորը. մայրը մեռել էր նրա ծնվելու ժամանակ. և բոլորը Պալերմոյում, հատկապես հայրը, նրանից թաքցնում էին, թե ով է եղել իր մայրը: Մոնտալտո ընտանիքի աղջիկը բեմո՞ւմ: Սարսափելի՜ է: Եվ նույնիսկ ինքը (էլ ինչո՞ւ թաքցնել) այդ մտքից նողկանքի նման մի բան էր զգում հոգու խորքում: Եվ, այնուամենայնիվ, որպեսզի մարտահրավեր նետի զարմիկ Լանդոյին և խայտառակի հորեղբորը, որն ամաչում էր նույնիսկ թաքուն օգնել նրանց, նա կարողացավ հաղթահարել իր մեջ ոչ միայն նողկանքը, այլև ուրիշ շատ բաներ: Շուտով Լանդոն էլ բնակություն հաստատեց Հռոմում և նրա հոր հետ փորձում էր մեղմել Ջաննային, սիրաշահել: Ո՛չ, ո՛չ, ու ո՛չ: Նա արդեն սիրահարված էր իր երազանքին՝ Ֆրանչեսկո Դ'Ատրիի մասին, որն առաջին իսկ հայացքից կարծես շլացել էր նրանով: Հետո էլ ինչո՞ւ Ֆրանչեսկո Դ'Ատրին կնոջն ընդունակ չէր համարում մնալու այդ երազանքի բարձրության վրա: Նա ինչպե՞ս չէր հասկանում, որ իր կասկածները, իր վախը, որ դրսևորվում էին աղերսական հայացքներում, թախծոտ կիսաժպիտներում, պետք է դառնորեն վիրավորեին կնոջը՝ այնպես, ինչպես և ազատությունը, որը ոչ միայն թույլատրված, այլև կնոջը գրեթե պարտադրված էր նրա կողմից՝ չնայած այդ կասկածներին և այդ վախին: Ուրեմն նրա համար կնոջ անկումն անխուսափելի էր, և նա դրա հետ հաշտվե՞լ էր: Իսկ եթե նա չէր հավատում, ապա էլ ի՞նչ արժանիք այն բանում, որ կինն իրեն պահի անկումից, և ի՞նչ իմաստ: Հենց ի՞ր համար: Ախ, այո՜, հենց իր համար: Ոչ այնքան վաղուց մեռել էր Ջաննայի հայրը: Տրտմության մեջ ընկած, խորապես վշտացած՝ նա պետք է սիրալիր լիներ բոլորի հետ, և սգի այդ օրերին տեսնում էր, թե Լանդոն ինչպես է հետևում իրեն սառն արհամարհական հայացքով: Սուր ցավի հուսահատության պահին, իսկական խենթության ակնթարթում այն բանի համար, որպեսզի այդ աչքերի արհամարհանքը ուղղվի նաև հենց իր՝ Լանդոյի դեմ, զարմուհին իրեն առաջարկեց նրան: Ազնիվ, մաքուր անսխալական Լանդոն վանեց զարմուհուն... Եվ այդ ժամանակ ավելի շուտ նրանից վրեժ լուծելու, քան ծեր ամուսնու թախծոտ, լռին անվստահության պատճառով, Ջաննետան նետվեց Կորրադո Սելմիի գիրկը և. . . գնա՜ց... գնա՜ց... սարսափելի է, այո՜... հարբեցողի նման, խենթի նման նա մի ամբողջ տարի լողաց խայտառակության մեջ:

Բայց բավական է: Մի՞թե ծերունին հիմա նրան չասաց, որ ոչինչ չունի առարկելու: Էլ ինչո՞ւ պիտի ինքը տանջվի: Այնքան էլ շատ բավականություն չի պատճառել իրեն այդ կապը Սելմիի հետ: Հիմա իրենից ի՞նչ է ուզում ամուսինը:

Դոննա Ջաննետան թոթվեց ուսերը և իսկույն այդ շարժումը տեսավ դրսից, ինչպես եթե դա նրա առաջ աներ մի ուրիշը: Նրա մեջ անսովոր կերպով զարգացած էր իրեն դրսից հետևելու արտասովոր ընդունակությունը՝ նույնիսկ առանձնապես ուժեղ հուզմունքի պահերին տեսնել իր շարժումները, լսել իր խոսքերը կամ ծիծաղը. և դրանից նա գրեթե նողկանք էր զգում ու երբեմն էլ սրտնեղություն: Նա վախենում էր, որ իր կեցվածքները, շարժումները, ձայնի հնչյունները, ծիծաղի պոռթկումները կարող են շինծու թվալ. նա տառապում էր այդ անսպասելի ընդարմացումից՝ իր ամենաանմիջական և ամենաքիչ կշռադատված գործողությունների ժամանակ, որոնք նա տեսնում էր իր մեջ հենց դրանց ծնունդի պահին: Եվ ահա հիմա նա մի քանի անգամ ձեռքով շփեց ճակատը և փորձեց կենտրոնանալ այն մտքի վրա, որն իրեն դուրս կբերեր այդ տանջալից ինքնահայեցումից: Այդ ի՞նչ երկրորդ դժբախտություն է, որի մասին ամուսինն ուզում էր խոսել իր հետ: Նրա աչքերի առաջ հայտնվեց Սելմիի պատկերը. կամ հուսալով վերջ դնել խելահեղ սկանդալին, կամ էլ նրան կորցնելու վախից, որովհետև զգում էր, որ արդեն սկսել է ձանձրացնել նրան, կամ էլ այն հույսով, որ նրան ավելի ամուր կապի իրեն, իսկ գուցե վրեժից՝ Սելմին չկարողացավ կամ էլ չցանկացավ կանխել նրա հղիությունը: Այո՜, իհա՜րկե, կասկած չկա, մյուս դժբախտությունը , որ ակնարկում էր ծերունին, նրա դուստրն է՝ այս աղջնակը...

«Երկու դժբախտություն պատահեցին քեզ... Մեկը դու ինքդ ցանկացար»:

Ուրեմն երկրորդը նա չի ցանկացել: Ամուսինն իրավացի էր. այդ երկրորդ դժբախտությունը նա իսկապես չէր ցանկանում:

Բայց եթե ամուսինն ամեն ինչ գիտեր և գիտեր, որ կինը չի կարող որևէ կապվածություն զգալ այդ արարածի նկատմամբ, որը նրան հիշեցնում էր ատելի սիրեկանին, էլ ինչո՞ւ քիչ առաջ ամուսնուն տեսավ զանգակը ձեռքին, լացող երեխայի մոտ: Որտեղի՞ց այդպիսի ցուցադրական քնքշություն այդ արարածի նկատմամբ: Ինչո՞ւ է նա ուզում իրեն ընտելացնել երեխային, կարծես այն նպատակով, որ երեխայի հետ մեկտեղ կանգնի կնոջ առաջ և հայտարարի, որ երկուսը (նա և աղջնակը), այդ երկուսն են կնոջ ամենամեծ դժբախտությունները: Դա նրան ինչո՞ւ է պետք:

Դոննա Ջաննետան արդեն ափսոսում էր, որ քնած ձևացավ: Որոշ ժամանակ նա շարունակեց մտորել, հետո ոտքերի մատների վրա դուրս եկավ սենյակից և խավարում, շունչը պահած, հասավ ամուսնու սենյակի դռանը: Նա ականջ դրեց, հետո կռացավ ու նայեց բանալու անցքից:

Ֆրանչեսկո Դ'Ատրին նստել էր իր սենյակում, ինչպես քիչ առաջ նստել էր կնոջ մոտ. արմունկներով ծնկներին հենված, գլուխն ափերի մեջ առած՝ նա լալիս էր:

Դոննա Ջաննետան զգաց՝ ինչպես սարսուռ է անցնում իր թիկունքով, և խռովահույզ, համակված զարմանքով, որ նման էր վախի, հեռացավ դռնից:

— Նա լալիս է...

Դոննա Ջաննետան կանգնել էր դողահար, ի վիճակի չլինելով կենտրոնանալու: Հետո, վախենալով, որ ամուսինը կբացի դուռը և կտեսնի իրեն, շտապեց իր սենյակը: Բայց աշխատելով աննկատելիորեն, արագ անցնել այն դռան մոտով, որի ետևում քնած էր երեխան, նա կանգ առավ:

Այնտեղ՝ սենյակում փոքրիկը նույնպես լալիս էր... Ուրեմն երկուսն էլ. . .

Բնազդաբար, կարծես ձգտելով փախչել ինքն իրենից, նա բացեց դուռը և ներս մտավ:

Ստնտուն՝ նստած անկողնում, բոլորովին հուսահատված, հառաչում էր ու տնքում: Կարճատև քնից հետո երեխան նորից էր սկսել ջղակծկվել ցավից ու լալ:

Դոննա Ջաննետան սկզբում լրիվ չհասկացավ, թե ինչ է ասում ստնտուն. նա ձեռքը պարզեց լացող աղջկան և իսկույն էլ գրեթե զզվանքով, արագ ետ քաշեց: Ի՜նչ սառն էր երեխան: Բայց պետք է, որ նա լռի: Այդ լացն անտանելի էր... Նա չի ուզում կուրծք ուտել: Գուցե շատ ձիգ են բարուրել : Դոննա Ջաննետան որոշեց իր ձեռքերով երեխայի բարուրն արձակել: Ի՜նչ խղճալի կապտած տոտիկներ են... և ինչպե՜ս են դողում՝ ցնցվելով ցավից: Դոննա Ջաննետան փորձեց ձեռքերում պահել այդ տոտիկները, բայց դրանք շատ սառն էին: Խե՜ղճ փոքրիկ, նա ամբողջովին սառել էր: Գոնե տղա լիներ, բայց ո՜չ, աղջնակ է: Ինչո՞վ ծածկել նրան.. Ահա այստեղ օրորոցի փոքրիկ վերմակն է: Դե՛, դե՛: Դոննա Ջաննետան գրկեց երեխային, ամուր ու զգույշ սեղմեց կրծքին և, ամբողջ մարմնով օրորվելով ու նանիկ ասելով աղջկան, սկսեց քայլել սենյակում, ինչպես երբեք չէր արել: Նա կրծքի մոտ զգում էր փոքրիկ, ցավից տանջահար փորիկի ջղաձգությունները, զգում էր ինչպես այդ քնքուշ, սառը, փոքրիկ մարմնի մեջ թպրտում էր լացը: Եվ այդ ժամանակ, իր կամքին հակառակ, դոննա Ջաննետան էլ սկսեց լալ՝ ոչ թե փոքրիկի հանդեպ խղճահարությունից, ո՜չ... իսկ գուցե, այնուամենայնիվ, այո՜, որովհետև տեսնում էր, թե երեխան ինչպես է տառապում... բայց նա լալիս էր նաև այն պատճառով... նույնիսկ ինքն էլ չէր կարող հասկանալ, թե ինչու:

Փոքրիկը հետզհետե հանգստացավ, կարծես զգաց առաջին անգամ Ջաննետան իրեն տաքացնող մայրական սիրո ջերմությունը: Դոննա հոգնել էր, շատ էր հոգնել, սակայն որոշ ժամանակ շարունակեց քայլել և ամեն մի հեծկլտոցի հետ ձեռքի ափով թեթևակի խփել փոքրիկի թիկունքին: Հետո կանգնեց և մեծ զգուշությամբ, որ չարթնացնի, հեռացրեց կրծքից, նստեց ու երեխային դրեց ծնկներին. նա ստնտուին նշան արեց, որ վեր չկենա անկողնուց, և գիշերալամպի լույսի տակ սկսեց ուշադիր դիտել երեխային: Նա տեսավ այդ փոքրիկ արարածին այնպիսին, ինչպիսին երբեք առիթ չէր եղել, որ տեսնի: Ինչո՞ւ: Գուցե այն պատճառով, որ մինչև հիմա դեռ ոչինչ չէր արել նրա համար, և խեղճ փոքրիկը մեծանում էր

առանց սիրո, առանց ուշադրության: Իսկ ո՞րն է նրա մեղքը: Դոննա Ջաննետան կկոցեց աչքերը, կարծես ուզում էր վանել չարության զգացումը... Դե ոչ, մի՞թե փոքրիկը մեղավոր է, որ ծնվել է:

Եվ հանկարծ, նայելով աղջկան, դոննա Ջաննետան հասկացավ, թե իրեն ինչ էր ուզում ասել ամուսինը: Նա ծեր էր, իրեն այդպես էլ զգում էր և գիտեր, որ չի կարող լիքը լցնել կնոջ կյանքը, բայց կինը հիմա երեխա ունի, իսկ երեխան կարող է և պետք է լցնի մոր կյանքը: Նա կարող էր մերկացնել կնոջ սկանդալային կապը և չարեց այդ. նա այս աղջկան, որ իր դուստրը չէր, տվեց նաև իր ազնիվ անունը, իր դիրքը և նույնիսկ. . . նույնիսկ քնքշությունը: Իսկ հիմա նաև ինքը՝ մայրը, կարող է իր դստերը տալ սեր, խնամք և անբասիր վարքի օրինակ:

Կասկած չկա, որ այդ, հենց այդ էր ուզում ասել իրեն ամուսինը: Իսկ ինքը քնած ձևացավ...

Դոննա Ջաննետան երկար մտածեց այդ գիշեր՝ երեխային ծնկներին պահած: Նա դառն ափսոսանքով էր մտածում իր աղջկական երազանքի մասին և նողկանքով այն ամենի մասին, ինչ իրեն առաջարկեցին տղամարդիկ այդ երազանքի փոխարեն... Հիմար կեղծավորություն, նողկալի գռեհկություն... Նա աննկատելիորեն քնեց:

Լուսաբացին Ֆրանչեսկո Դ'Ատրին, երբ միջանցքով գնում էր իր առանձնասենյակը, տեսավ ստնտուի սենյակի բաց դուռը և գլուխը ներս խցկեց: Նա զարմացավ՝ տեսնելով կնոջը երեխան գրկին, բազմոցին քնած: Նա կամացուկ մոտեցավ, որ նայի կնոջը, և զգաց, որ իր զարմանքը չքանում է, ու ջղերով անցավ անսահման քնքշության թրթիռը:

Դոննա Ջաննետան արթնացավ. սկզբում նրան էլ համակեց զարմանքը, որ ինքը նստած է այստեղ՝ փոքրիկին ծնկներին պահած. հետո ժպտաց, տեսավ իր ժպիտը և, ձեռքը պարզելով ամուսնուն ու նայելով դեռ անսովոր ուրախությամբ լեցուն աչքերով, հարցրեց.

— Հը՞, այսպես լա՞վ է:

Գլուխ II

Մոտավորապես քսան օրերի ընթացքում բոլոր անցորդները, նույնիսկ նրանք, որ գնում էին փութկոտ կամ մտասուզված, ետ էին շրջվում ու կանգնում, որ նայեն նիհար, կոշտուկոպիտ ծերունուն՝ փոքրիկ ուսապարկը թիկունքին, չորս մեդալներ կրծքին, սև, լայնեզր գլխարկով, որի տակից դուրս էին թափվել մազափնջերը՝ դեղին ծվեններով խառնվելով խոշոր, թավամազ խճճված մորուքին: Այդ ծերունին քայլում էր կարծես երազում՝ շողացող, ուրախ և արցունքներով լի աչքերով, նույնիսկ չկասկածելով, թե բոլորի համար ինչ արտասովոր բան է իր հայտնվելը Հռոմի փողոցներում ու հրապարակներում և հուզված վայրենու իր ամբողջ զավեշտական տեսքը: Բայց նա Վալսանիայում էր թողել իր բրդոտ փափախը, մեխած կոշիկներն ու հրացանը, հագնելով նոր զգեստ՝ կապույտ մահուդից, և կոպիտ, բաց մանուշակագույն մահուդե վերնաշապիկի տակ էլի մի ուրիշը՝ բամբակե, սպիտակ, որը երևում էր նրա օձի թևքերի տակից. նա վստահ էր, որ սև, լայնեզր գլխարկով ու լավ մաքրած սապոգներով ինքն իսկական քաղաքացու տեսք ունի: Ճիշտ է, պիջակի կողքերին անսովոր ուռած տեղեր կային՝ ատրճանակները, բայց չէ՞ որ նա երդվել էր երբեք չբաժանվել դրանցից: Մահուդե վերնաշապիկի կրծքին կախած չորս մեդալները նա փակցրել էր (թույլտվություն խնդրելով գեներալից) միայն ցույց տալու համար, որ արժանի է Հռոմի փողոցներով քայլելու, որ վաստակել է այդ ողորմածությունը և նվաճել քաղաքը տեսնելու պատիվը: Բոլոր փաստաթղթերը գտնվում էին նրա ուսապարկում:

Նա ինչպե՞ս կարող էր ենթադրել, որ իր մեդալներն այստեղ՝ Հռոմում, ատելությամբ համակված և կեղտով շաղախված այդ օրերին կարող են միայն արհամարհական քմծիծաղ շարժել, իսկ «հին հայրենասեր» մականունը հնչում է գրեթե որպես ամոթալի ծաղրանուն: Նույնիսկ հեռավոր կերպով չկասկածելով, որ իրեն ձեռք են առնում, Մաուրո Մորտարան ժպտում էր բոլորի երեսին, ով իր վրա ծիծաղում էր, վստահ, որ նրանք բաժանում են

արցունքներով ողողված իր ուրախությունը, որ լուսապսակի պես շրջապատում էր նրան՝ թույլ չտալով որևէ բան դիտել ինչպես հարկն է: Նա ոչինչ չէր տեսնում Հռոմում. ամեն ինչ մթագնվում էր այն ուրախ գիտակցությամբ, որ ինքն այստեղ է, և այդ պատրանքների բոցում Հռոմը նրան թվում էր կախարդական ու մշուշոտ, և կարծես ոտքերը գետնին չէին դիպչում: Քայլելով, նա երեք-չորս անգամ սայթաքեց մայթից և քիչ էր մնում ընկներ: Գնում էր հարբածի նման՝ միևնույն է, թե ուր՝ խռովահույզ, երանության մեջ ընկղմված. և հենց որ նրա առաջ հայտնվում էր որևէ վիթխարի շենք, դարձյալ արցունքներով լցվում էին աչքերը:

Լանդո Լաուրենտանոն ուզում էր ուղեկցող տալ, բայց նրան ինչ ուղեկցող: Նա նույնիսկ լսել չէր ուզում այդ մասին. նա բնազդաբար վախենում էր, որ ամեն մի դիտում, ամեն մի տվյալ, ամեն մի տեղեկություն՝ նույնիսկ ամենաընդհանուր բնույթի, մի տեսակ կնսեմացնեն վեհության անսահման, անորոշ պատկերը, որ ստեղծել էր նրա երևակայությունը: Հռոմը պիտի նրա համար մնար ծովի նման անսահման: Երեկոյան՝ հոգնած, բայց չհագեցած, նա վերադառնում էր Սոմմակամպանիա վիլլան, որտեղ ապրում էր Լանդոն, և հարցերին, թե արդյոք տեսա՞վ Կոլիզեյը, Ֆորումը, Կապիտոլիումը, շտապով պատասխանում էր.

— Տեսա՛: Տեսա՛: Ինձ ոչինչ մի՛ ասեք: Տեսա՛:

— Իսկ սուրբ Պետրոսի տաճա՞րը:

— Օ՛, սուրբ տիրամայր: Ախր ես ձեզ ասացի, որ տեսա: Ես ոչինչ չեմ ուզում իմանալ: Սա... մյուսը... Ի՞նչ տարբերություն: Այդ ամենը Հռոմն է:

Նրա ինչի՞ն էր պետք իմանալ, թե ով է մերկ ոտքերով ու պսակը գլխին այն հեծյալը, որ նստած էր բրոնզե ձիու վրա, հրապարակի կենտրոնում, որ բլրի գագաթին է, որտեղ բարձրանում է աշտարակը, աջից ու ձախից սյունազարդ նախասրահներ կան, իսկ ներքևից մինչև վերև պահապանների նման կանգնած են արձանները: Դա Հոռոմն է: Ուրեմն այդ հեծյալը եղել է որևէ մեծ մարդ, հին ժամանակների հերոս, հաղթանակող, աշխարհի տիրակալ: Իսկ ա՛յ, ա՛յս արձանը, որ կարմիր է, նստած շատրվանի վրա, գունդը ձեռքին: Հռո՛մը... Դա Հռոմն է՝ ամբողջ աշխարհը բռնած ձեռքին, ու վերջ: Եթե այդ հրապարակով անդադար չանցնեին այդքան շատ մարդիկ, նա կկռանար, որ համբուրի այդ շատրվանի եզրը, կմոտենար, որ համբուրի մերկ ոտքերով հեծյալի արձանի պատվանդանը: Իսկ ինչո՞վ էին զբաղված բոլոր այդ մարդիկ: Նրանք աշխատում էին, որ Է՛լ ավելի բարձրացնեն Հռոմի փառքն ու պատիվը. Ահա թե ինչով: Իսկ Հռոմը, Հռոմը՝ ահա՛ նա. և շատ շուտով նա դարձյալ ա՛յ այդպես ձեռքին կբռնի ամբողջ աշխարհը:

Մի՞թե այս ինքն է՝ Մաուրո Մորտարան, հիմա Հռոմում է: Այս ի՞նքն է այստեղ՝ բարձր հրապարակում, շնչում Հռոմի օդը: Ի՞նքն է տեսել այս ամբողջ վեհությունը: Այո՛, հիմա, այսպիսի երջանկությունից հետո նա կարող էր փակել աչքերը: Տեսնելով Հռոմը, նա տեսել էր ամեն ինչ: Թողնելով իր ստորագրությունը Պանթեոնում, թագավորի շիրիմի մոտ, այցելուների գրքում, նա կարող էր մեռնել. նա թողել էր այս կյանքում իր գոյության վկայականը, պատասխանել էր պատմության կոչին: Նա ինչպես էր ապշել, երբ իր առաջ տեսավ այդ մուգ, վեհասքանչ սյուները: Կասկածելով, թե դա եկեղեցի չէ՞ արդյոք, նա սկզբում հապաղեց մտնել պարսպի կիսաբաց դռնակով, ինչպես անում էին շատ մարդիկ: Մեկնելով Հռոմ, նա իրեն խոսք էր տվել հեռու մնալ եկեղեցիներից: Պաշտել աստծուն, այո՛, բայց երկնքում: Եվ նա նույնիսկ չմտավ սուրբ Պետրոսի տաճարը: Ընկնել տերտերների ճա՞նկը: Սուրբ տիրամայր: Նա մռայլ հայացքով նայեց Վատիկանին՝ ձեռքերը սեղմելով իր ատրճանակների փողերին: Այսպես, ուրեմն, սա՞ էլ է եկեղեցի: Մաուրոն արդեն պատրաստվում էր հարցնելու, երբ նրան մոտեցավ Հռոմի տեսարաններով բացիկներ վաճառողը. Պանթեոնն է… թագավորի դամբարանը...

— Այնտե՞ղ, ներսում:

Նա իսկույն ներս մտավ: Գմբեթում՝ կլոր, բաց աչք, որտեղից երևում էր երկինքը, խորքում՝ բեմ, որը փոքր-ինչ շփոթեցրեց նրան: Իսկ որտե՞ղ է թագավորի գերեզմանը: Ահա այն՝ բրոնզե, աջ կողմում, բարձրության վրա: Եվ նա երկչոտ մոտեցավ, դամբարանի

պատվանդանի մոտ տեսավ երկու պահապան վետերանների՝ մեդալները կրծքներին, և այցելուների հաշվառման գիրքը: Նրա աչքերը ծիծաղում էին ու մշուշվում արցունքներից, և նա փոքր-ինչ բացեց պիջակի եզրերը, որ ցույց տա, թե ինքն էլ իրավունք ունի ստորագրելու: Այդ վետերանները գուցե այնքան էլ լավ չհասկացան, թե նա ինչ է ուզում ասել, և տեսնելով, որ նա լալիս է ու ծիծաղում միաժամանակ, կարող էին նրան խելագարի տեղ դնել: Սակայն նրանցից մեկը, համենայն դեպս, ձեռքի շարժումով հարցրեց՝ ստորագրե՞լ: Այո՛, պատասխանեց Մաուրոն նրանց՝ գլխով անելով, հիմա, բոլորից հետո. ձեռքը սովոր չի, աչքերը ծեր են, հուզմունքը... ո՞վ իմանա ինչքան ժամանակ զբաղվի դրանով: Ի վերջո, մենակ մնալով վետերանների առաջ, գրքում տառ առ տառ, ինչքան կարող էր լավ խզմզելով իր անունը, ազգանունը, ծննդավայրը, նա լսեց, թե ինչպես պահապաններից մեկը, որ շարունակ հետևում էր իր գրչին, հարցրեց.

— Ա՛, Ջիրջենտիից... սիցիլիացի՞ եք: Մասնակցել եք վաթսունի պատերազմի՞ն:

— Ահա՛,— պատասխանեց Մաուրոն՝ հրճվանքով ցույց տալով մեդալները:— Իսկ ա՛յ սա քառասունութի համար է:

— Ա՛, քառասունութի վետերա՞ն եք... Տուժածների՞ց:

— Ինչպե՞ս թե տուժածներից: Դա ի՞նչ է նշանակում:

— Թոշա՞կ եք ստանում քաղաքական գործունեության պատճառով տուժելու համար:

— Ի՞նչ թոշակ: Ի՞նքը: Ինչո՞ւ թոշակ: Ո՛չ, ինքը ոչինչ չի ստանում: Ինքը նույնիսկ չգիտեր, որ գոյություն ունի այդպիսի թոշակ, բայց եթե իմանար էլ, երբեք չէր խնդրի: Փո՞ղ վերցնել այն բանի համար, ինչ ինքն է արել: Դե, իր ձեռքերը կչորանային:

Իսկ վետերանները, երկուսն էլ պյեմոնտցի, սկսեցին ծիծաղել ու հայացքներ փոխանակել: Նրանք իր հետ համաձայն են, մտածեց Մաուրոն, պարզ բան է: Այնպես, ինչպես վիլլայում ամեն երեկո նրա հետ համաձայնում էին լակեյ Ռաֆայելեն ու մանր գործերի սպասավոր Տորելլոն՝ տիրոջ խիստ նկատողությունից հետո, որը նրանց գտավ այն պահին, երբ նրանք խենթորեն զվարճանում էին՝ ձեռք առնելով Մաուրոյին: Թեև Լանդո Լաուրենտանոն այդ օրերին լի էր արհամարհանքով ու նողկանքի զգացումով ամեն ինչի նկատմամբ, նա երբեք չէր առարկում՝ լսելով Մաուրոյի ուրախ, զարմացական, հիացական բացականչությունները, պարզունակ դատողությունները հայրենիքի վեհության մասին. նա ժպիտը զսպեց նույնիսկ այն ժամանակ, երբ թանկագին ծերունին մի անգամ վերադարձավ երեկոյան ու հրճվանքով հայտնեց.

— Ես տեսա թագավորին, ես տեսա թագավորին: Օ՛, սիրելի որդիս, դե, ես կարո՞ղ էի այս բանը հուսալ: Ամբողջովին ճերմակած էր... ճերմակած, ինչպես ես… Ի՞նչ իմանաս, թե նրա համար ինչքան դժվար է նստել այնտեղ՝ վերևում: Նա ստիպված է ինչքան մտածել: Չէ՛ որ նա հիմքն է: Եվ ինչպիսի՛: Նրա վրա է կանգուն մնում ամեն ինչ... Եվ գիտե՞ք, նա ինձ գլխով արեց: Եթե կառքը դանդաղ գնար, ես ծնկի կիջնեի: Վկա է աստված:

«Թեկուզ մի ակնթարթ իր կրծքի տակ ունենալ այսպիսի սիրտ,— քնքշությամբ ու նախանձով մտածեց Լանդո Լաուրենտանոն:— Հենց այսպիսի հավատով, մտադրությունների այսպիսի մաքրությամբ փայփայել է՛լ ավելի վեհ երազանք, հանուն դրա ելնել է՛լ ավելի ծանր պայքարի և հաղթել, որպեսզի հետո ուրախություն զգաս է՛լ ավելի մաքուր ու վսեմ, քան նրանն է»:

Ձգտելով բարձրացնել ոգին, մաքրել նրանից ազգային կյանքի այդ օրերի ամբողջ կեղտն ու գարշանքը, Լանդոն ծերունու, թեկուզ նույնիսկ խենթավուն խոսքերն ընկալում էր որպես լվացում մաքրության ու հավատի մկրտության ավազանում: Հենց միայն Մաուրոյի տեսքից, միայն նրա ներկայությունից Հռոմում ավելի կեղտոտ ու նողկալի էին թվում բոլոր նրանք, ովքեր վաշխառու-առևտրականների և սպեկուլյանտ-գողերի նման օգտագործում էին վեհ ու փառավոր ժամանակներում ծնված լինելու իրենց բացառիկ բախտը: Ի՞նչ գիտեր, այդ մասին ի՞նչ կարող էր իմանալ ծերունին, որ հայրենիքին էր տվել իր ուժեղ և անմիջական բնավորության բոլոր լավագույն հատկությունները, ծերունին, որ ամփոփվել էր

մենակության մեջ, որ անրջի այն պտուղների մասին, որ անպայման պիտի բերած լինի իր սխրագործությունը, քանի որ նա համոզված էր, թե բոլոր մյուսներն էլ այնպես են արել, ինչպես ինքը: Նա չէր մտածում, նա միայն զգում էր. նա վառած ջահ էր, որ լուսավորում էր իր շուրջն ամեն ինչ: Եվ, իհա՛րկե, հենց այնպես, ինչպես հիմա այստեղ, նա չէր նկատում կեղտի բուռն հոսանքը, որի միջով քայլում էր՝ շողալով ուրախությունից ու հիացմունքից, այդպես էլ ամբողջ երեսուն տարվա ընթացքում Սիցիլիայում նա չէր տեսել կատարվող բոլոր անարդարությունների սարսափը, չէր նկատել զրկվածների հուսահատությունը, պատրանքների խորտակումը, աղքատության սպառնալիքներն ու աղաղակները: Սիցիլիայից գալիս էին հետզհետե ավելի ու ավելի տխուր նորություններ, և ծայր աստիճան տագնապախռով Լանդոն կուզենար Մաուրոյից գոնե մի հանգստացնող բան լսել՝ գոնե Ջիրջենտիի գավառից. բայց նա այդ մասին նույնիսկ չկնարկեց Մաուրոյին՝ համոզված լինելով, որ դրանով իսկույն կփչացնի ծերունու ամբողջ տոնը: Եթե Մաուրոն իմանար, որ Լանդոն՝ գեներալի թոռը, նրանց կողմում է, ում ինքը իր ամբողջ անկեղծությամբ պիտի համարեր հայրենիքի թշնամիներ, նա կվճռեր, որ լանդոն նույնպես հայրենիքի թշնամի է: Դրա փոխարեն երիտասարդ իշխանը խնդրեց նրան պատմել իր հոր մասին:

— Դուք պետք է ինձ հետ գաք այնտեղ,— վճռականաբար ասաց Մաուրոն:— Դուք գող եք, իսկ ես՝ ոստիկան: Եվ գոհացեք աստծուց, որ իշխանն ինձ է ուղարկել: Նա կարող էր ուղարկել իր գարշելի խեղկատակների ջոկատը՝ այդ Շարալլայի գլխավորությամբ:

Լանդոն տխուր ժպտաց: Եվ այդ ժամանակ Մաուրոն ձեռքը զարկեց ճակատին.

— Մի պատկերացրե՛ք, Է՛: Նրա վրա անկարելի է ազդել: Նա դրանց այդպիսի համազգեստով ուղարկում է նաև Վալսանիա՝ իր հոր տուն: Երբեմն սիրտս տակնուվրա է լինում, և աչքերս լցվում են արյունով, երդվում եմ ձեզ: Դե լավ, հերիք է, ինչի՞ մասին էինք խոսում: Հա՛… Ուրեմն դա ձեզ նվաստացո՞ւմ է թվում: Նորից ամուսնանալ այդ տարիքում, այն էլ այդ ընտանիքի կնոջ հետ: Աստվա՛ծ, աստվա՛ծ, աստվա՛ծ: Այդ կնոջ մասին ես մի կարգին բան չգիտեմ, բայց երբ ձեր պապն ուղարկվեց աքսոր, նրա հայրը, հավատացնում եմ ձեզ, գնաց եկեղեցի ՝ «Te Deum» երգելու: Իսկ նա՝ այդ Ֆլամինիո Սալվոն... Գրողը տանի, գիտե՞ք արդյոք Դուք, որ ես մի ամբողջ ամիս պիտի հանդուրժեի նրան Վալսանիայում: Ախ, ի՛նչ դմբոն է ձեր այդ հորեղբայր դոն Կոսմոն: Նա պիտի ասեր. «Ի՛նչ: Ֆլամինիո Սալվոն Վալսանիայում»: Բայց նա լռեց: Եղե՛ք տանտերեր: Իսկ գիտե՞ք, թե ես ինչպես եմ ապրել այդ ամիսը: Գազանի նման, որ փնտրում է, թե որ որջում կամ բնում թաքնվի... Եթե ես նրան տեսնեի... սատանա՛… Ասում եմ ձեզ, ես կբռնեի նրա կոկորդից և հետո ՝ գոռա, ինչքան ուզում ես, բռունցքներով, բռունցքներով՝ որտեղ պատահեր: Գիտե՞ք, երբ զայրանում եմ, ես գազանի նման... Դե լավ: Իսկ ի՞նչ արեց այդ Ֆլամինիո Սալվոն քառասունութին: Ես ձեզ կասեմ, թե ինչ արեց. նա ուղիղ գնաց բուրբոնյան ժանդարմներին մատնելու, թե որտեղ են թաքնվել Ստեֆանո Աուրիտին ու ձեր հորաքույր դոննա Կատերինան: Իսկ հիմա նա Ջիրջենտիում բռի մեջ է պահում բոլոր տերտերներին: Բայց աստված նրան պատժեց: Կինը խելագարվեց: Մե՛ղք է աղջիկը, նա լավն է, լավն է ու գեղեցիկ: Բայց աստված չանի ձեր մտքով անցնի ամուսնանալ նրա հետ: Դուք, թանկագինս, ձեր պապի անունն եք կրում, հիշեցե՛ք դա: Ջերլանդո Լաուրենտանոյի անունը ձեզ համար պիտի լինի... ես ի՞նչ եմ ասում: Չէ՛, թանկագինս, մի՛ ծիծաղեք... դրա վրա: Իմ ներկայությամբ դուք չպիտի ծիծաղեք:

— Ես ծիծաղում եմ նրա համար,— պատասխանեց Լանդոն,— որ հայրս այսպիսի հարմար պատվիրակ է ուղարկել, որ ինձ համոզի մասնակցել հարսանիքին:

Իսկ Մաուրոն ձեռքերն առաջ պարզեց.

— Չէ՛, չէ՛: Դա ի՞նչ կապ ունի: Չէ՛ որ ես բոլոր այդ պապական օյինների մասին հենց նրա երեսին եմ ասում: Իսկ եթե չեմ էլ ասում, ապա ամեն մեկն էլ դա կարող է կարդալ իմ դեմքին: Ամեն մեկն իր զգացմունքներն ունի, բայց դուք պիտի գաք ինձ հետ, որովհետև ձեր հայրն է ձեր գլխավորը, թանկագինս: Այստեղ դուք չեք կարող գործել ձեր կամքով: Նա ինչպես սկսել է, այնպես էլ պիտի վերջացնի: Քանի որ նա գնացել է այդ ճամփով, դուք ի՞նչ կարող եք անել: Մի քանի օրով կգաք Վալսանիա, որ հանգստանաք: Մի քիչ կկռվշտեք այդ խենթի՝ ձեր

հորեղբայր դոն Կոսմոյի հետ. բայց չէ՛ որ ես էլ եմ այնտեղ ապրում, այնտեղ է գեներալի կամերոնեն՝ անձեռնմխելի, ինչպես եղել է. կմտնենք այդտեղ, և ձեր կուրծքը կսկսի շնչել, ու սիրտը կզարկի այնպես... Չգիտեմ ինչպես ասել, բայց ինձ թվում է, թե դուք... ձեր թույլտվությամբ ես կլսեմ ձեր ժամացույցը։— Մաուրոն մոտեցավ Լանդոյին, ականջը դրեց նրա կրծքին՝ սրտի վրա, և խորամանկ ծիծաղելով, ավարտեց.

— Հասկանալի է: Ուրեմն ձեզ համար եկել է կնիկներով զբաղվելու ժամանակը:

Արտաքուստ հանգիստ ու սառն Լանդո Լաուրենտանոն իր մեջ թաքցնում էր դառն ու այրող վրդովմունք այն ժամանակի դեմ, որի մեջ նետել էր իրեն ճակատագիրը. վրդովմունք, որ երբեք չէր խեղվում ո՛չ մեղադրանքներում, ո՛չ էլ կշտամբանքներում, քանի որ նա շատ լավ գիտեր, որ եթե նույնիսկ արձագանք գտնի ուրիշների մոտ, ինչպես գտնում էին շատերը՝ անկեղծորեն կամ դժգոհ ձևանալով, դա ոչ մի բանի չէր հասցնի: Նրա վրդովմունքը կարծես քաղցուի համար մակարդ լիներ մի տակառի մեջ, որը, նա գիտեր, արդեն չորացել է:

Խաղողն արդեն քաղած էր: Վազերի բոլոր տերևները դեղնել, չորացել, ոլորվել, թափվել էին, մերկացած վազերը կծկվել էին աշնանային մառախուղում, կարծես ճմլկոտելով ձանձրույթի երկար ու լռին ջղաձգությամբ: Դաշտերի գորշ, լայնարձակ տարածությունների վրա տամուկ խավարում էլ ոչինչ չկար, բացի այդ թեթև, անկյանք, կարծես դանդաղ ինչ-որ տեղ սողացող շյուղերից:

Ժամանակն արդեն հասցրել էր իր պտուղները: Իսկ նա եկել էր, երբ բերքահավաքն ավարտվել էր: Շռայլ և ուժեղ մակարդով նոր գինին, որ լուռն ուրախությամբ քամված էր Սիցիլիայում, խառնված դառն ու տտիպ Պյեմոնտի, հետո փրփրուն ու թունդ Տոսկանիայի և վերջապես տիրոջ խաղողի այգիներում գրեթե թաքուն և ուշ ճզմած, թեթևակի փչացած քաղցուի հետ, որ բավականաչափ չէր խմորվել երեք մեծ տակառներում ու փոքր տակառիկներում և վատ էր զտված լորու մազաթելերով ու շիբով, անհուսալիորեն թթվել էր:

Լանդոյի ժամանակն անպտուղ դուրս եկավ, ինչպես ամեն մի դարաշրջան հասարակական ուժերի բուռն հորդումից հետո: Պետք է տրտմորեն ու ոչինչ չանելով դիտեր նրանց գործունեությունը, ովքեր մասնակցել էին պայքարին և հիմա ուզում էին մենակ կարգ հաստատել. այդ մարդկանցից ոմանք, այնուամենայնիվ, գտնվում էին գրեթե ցնորական գրգռվածության մեջ, ուրիշներն արդեն հոգնել էին, սովորել փափկակեցության, ինքնագոհ, ծերունաբար ժպտալով, գտնում էին, թե տքնության ժամն ավարտվել է և, աչքները փակելով իրենց գործունեության թերությունների վրա, չէին ուզում, որ ուրիշներն էլ դրանք նկատեն:

Հիրավի ողբալի է ճակատագիրը հերոսի, որը չի մեռել, դեռ կենդանի կորցրել է իր փառքը: Ասենք, հերոսը միշտ մեռնում է իր սխրագործության հետ. ողջ է մնում միայն մարդը, և ավելի վատ նրա համար: Վա՛յ նրան, եթե հոգին չի թրթռում՝ բռնված համընթաց քամուց, որ ուռցնում է այն առագաստի նման և տանում իր հետ՝ հագցնելով նրա երեսին մեծության ահեղ դիմակ: Բայց այդ ջանքերից հետո, երբ քամին մեղմանում է, նա, որ արտաքին պոռթկումով հասցվել էր իրեն ոչ հատուկ բարձրության, արդեն չի կարող վերադառնալ բնական մակարդակին. հարկ եղած հավասարակշռությունը չի գտնում. այստեղ նա դեռ փքված է, այնտեղ՝ արդեն փափկած, տափակած, պատռտվում է բոլոր կողմերից, ինչպես օդապարիկ, որի խցանը կարգին վիճակում չէ, և ծվեն-ծվեն կախվում է կյանքի ամեն ճյուղից, որոնց վրայով առաջ ազատ թռչում էր:

Լանդո Լաուրենտանոն ելք չէր գտնում իր վրդովմունքի համար, քանի որ սկզբում անգործունեության էր դատապարտված իր պատանեկան հասակի պատճառով, իսկ հիմա՝ դարաշրջանի քար անտարբերությամբ և միաժամանակ անպատշաճ էր համարում խոսել, որ ուրիշները վատ են անում, քանի որ դա չափազանց հեշտ էր: Գործել... այո՛, հենց գործել՝ առանց ավելորդ խոսակցությունների: Չէ որ մի ժամանակ ուրիշները գործել են: Իսկ հիմա եկել է խոսքերի ժամանակը: Այնքան են դատարկ խոսքեր ասվել ուրիշների կողմից, որ ինքը կարող է զսպել իրեն ու լռել: Նա տեսնում էր, որ այն մարդիկ, ովքեր պիտի գործեին, երկար

ժամանակ թպրտում էին երկու ըմբռնումների միջև. մեկը անհեթեթ էր, իսկ մյուսը՝ ստրկորեն-նմանվողական. առաջինը դասական Իտալիան էր, երկրորդը՝ ռոմանտիկական Իտալիան. մեկը պատմուճանով էր, մյուսը՝ խրտվիլակ, որին պետք էր ուրիշի շքազգեստ հագցնել՝ օտարերկրացիների բարեհաճ թույլտվությամբ. ճարտասանական Իտալիա, որն ստեղծված էր դպրոցական հիշողություններից, հենց այն, որի մասին գուցե երազում էր Պետրարկան, և ինչպիսին ձգտում էր մարմնավորել Կոլա դի Ռիենցին. հանրապետական Իտալիա, և Իտալիա՝ օտարերկրյա ձևով կամ ամբողջովին օտարերկրացված՝ և՛ իր հոգով, և՛ իր կարգերով: Այդ վերջինն էլ ծնվեց պատմական անհրաժեշտության շնորհիվ: Բայց ըստ էության կատարվեց միայն մի ճարտասանության փոխարինում մյուսով, անտիկ աշխարհի դպրոցական նմանակման փոխարեն հիմար ընդօրինակում օտարերկրացիներին: Շարունակ ընդօրինակել: «Օ՛, իտալացինե՛ր,— ֆլորենտական «Մուրատներից» գոչեց Գվերացցին,— կապիկներ եք դուք և ոչ թե մարդիկ»:

Այսպես կոչված, պետական նկատառումներով ճնշելով ամենամեծահոգի պոռթկումները, ազգը շարունակ ուժերը ջլատել է համաձայնություններով ու կոմպրոմիսներով, զիջումներով ու զանցանքներով: Միասնական կրակ, միասնական բոց պիտի անցներ Իտալիայի մի ծայրից մյուսը, որպեսզի միաձուլեր ու զոդեր նրա տեսակ-տեսակ անդամները մի կենդանի մարմնի մեջ: Համաձուլումը չհաջողվեց նրանց մեղքով, ովքեր վտանգավոր էին համարում բոցը և ավելի պիտանի իրենց խոհեմ, հաշվենկատ խելքերի սառը լույսը: Եվ եթե հաջողվեց մարել այդ բոցը, ապա պատճառն այն չէ՞ր, որ հենց նրա մեջ պակասում էին հարկ եղած ուժերը և հարկ եղած ջերմությունը: Ի՜նչ զվարթ, պայծառ հրացոլք բոցավառվեց Սիցիլիայից մինչև Նեապոլ: Այնտեղ կրակը նորից բորբոքվեց ու հասավ Հռոմ... Իսկ այնտեղ, որտեղ բոցը նվազեցված էր ու մարել էր՝ Ասպրոմենտեում կամ Տրենտինոյի ժայռերի վրա, մնացել էր խուլ ամայություն, փլուզում:

Մի՞թե չէր կարող Իտալիան այլ կերպ վարվել: Դա նշան էր այն բանի, որ պատմական պայմանները դեռ չէին հասունացել կամ էլ, որ որոշ մարդկանց պակասում էին եռանդն ու արիությունը՝ հետևելու պատմության ընթացքին: Չափազանց շատ են եղել և՛ հաշվենկատություն, և՛ մռայլ դատողականություն, և՛ վարանումներ, և՛ ավելորդ փափկանկատություն ու զսպվածություն. այդ ամենը վիրավորական ստվեր էին գցել հայրենիքի արարման գործի վրա:

Ի՞նչ անել հիմա: Նրա համար, ով կամենում է, միշտ լինում է բարի գործ անելու հնարավորություն: Բայց բարի գործը համեստ է, խոնարհ, համբերություն պահանջող. Լանդո Լաուրենտանոն զգում էր, որ դա իր համար չէ: Վերջին համընդհանուր ընտրությունների ժամանակ Պալերմոյի ընտրական կոլեգիաներից մեկը առաջադրեց նրա թեկնածությունը, բայց ո՛չ հորդորները, ո՛չ ճնշումը, ո՛չ կուսակցական կարգապահությունը վկայակոչելը նրան չստիպեցին ետ վերցնել իր հրաժարականը: Մոնտեչիտորիո ընկնել այսպիսի՞ պահին: Ավելի լավ է խեղդվել կեղտաջրի առվում:

Դեռ երեխա ժամանակ Լանդոն սովորել էր շատ ու լրջորեն՝ ոչ այնքան լայն կուլտուրայի տիրապետելու ցանկությունից կամ էլ գիտության հանդեպ ունեցած բուռն սիրուց, որքան նրա համար, որ իրավունք ունենա մտածել ու դատել իր ձևով և դրա շնորհիվ ուրիշների հետ խոսելիս պահպանի ոգու անկախությունը: Այստեղ՝ Սոմմակամպանիա փողոցի մենավոր վիլլայում նա ուներ հարուստ գրադարան, որտեղ սովորաբար ամեն օր անց էր կացնում մի քանի ժամ: Բայց երբ կարդում էր, ուզում էր գործողության վերածել, կենդանի իրականության մեջ մարմնավորել այն, ինչ կարդացել էր. և եթե նրա ձեռքին պատմական գիրք էր լինում, նա ունենում էր տանջալից թախծի անբացատրելի զգացում, տեսնելով՝ ինչպես է խոսքի վերածվում այն, ինչ մի ժամանակ կյանք է եղել, ինչպես խիստ կարգով շարված տասը-քսան տպագրական տողերի մեջ սեղմված այն, ինչ եղել է անկարգ, խռովահույզ, բուռն շարժում: Վրդովմունքի պոռթկման պահին նա դեն նետեց ձեռքի գիրքը և սկսեց քայլել սենյակում: Ի՞նչ տարօրինակ տպավորություն էին գործում նրա վրա բոլոր այդ գրքերը՝ բարձր, ընդարձակ պահարանների զնդաններում, որոնցով ամբողջապես ծածկված էին բոլոր չորս պատերը: Երկու փոքրիկ պատուհաններից, որ նայում էին այգուն, ներս էր խուժում անհամար թռչունների փութկոտ, համառ, խլացուցիչ ճռվողյունը,

թռչուններ, որ ամեն առավոտ ժամադրություն էին նշանակում սոճու վրա, որը թրթռում էր ո՛չ թե իր փշատերևներով, այլ թռչունների թևերով: Այդ անընդմեջ, անխոնջ թրթռոցը, կենդանի ձայների այդ հարբած աղմուկը նա համեմատում էր համր գրքերում փակված խոսքերի հետ, և նրա մեջ աճում էր արհամարհանքը: Արհեստական զուգորդումներ, քարացած կյանք՝ պարփակված չփոփոխվող ձևերում, տրամաբանական հորինվածքներ, մտավոր ճարտարապետություն, մակածություն, արտածում. կորչե՛ն, կորչե՛ն, կորչե՛ն:

Շարժվե՛լ, ապրե՛լ, չմտածե՛լ:

Ի՛նչ թախիծ, ի՛նչ տառապանք էր զգում Լանդոն, երբ նրան համակում էր այն միտքը, որ ինքն էլ՝ ստեղծելով իր հայացքների համակարգերը և կարծիքները մարդկանց ու իրերի մասին, իր երևակայության մեջ կերտելով պատրանքներ, այրվելով ինչ-որ ցանկություններով, նույնպես կանգնեցնում էր կյանքի անընդմեջ, հարափոփոխ հոսանքը, անջնջելի դրոշմում իր մեջ և իր շուրջը՝ ինչ-որ անփոփոխ, քարացած ձևերում: Բայց ի՞նչ կարող էր անել, եթե ինքն էլ իր մարմնով հաստատուն ձև էր, ինչ-որ ձև, որը, ճի՛շտ է, կարող էր որոշ չափով հետևել այդ ընդհանուր կենդանի հոսանքին, մինչև այն պահը, երբ այդ շարժումը, հետզհետե դանդաղելով ու ծանրանալով, կդադարի բոլորովին: Եվ ահա երբեմն նա սկսում էր տարօրինակ հակակրանք զգալ իր երկար ու բարակ մարմնի նկատմամբ, իր գունատ, թուխ դեմքի՝ չափազանց մեծ ճակատով, սև, քառակուսի մորուքով, սուր կերպով գծագրված քթով, որն այնքան տարօրինակ հակադրություն էր կազմում արաբի կիսաքուն, ցանկասեր աչքերի հետ: Նա իրեն նայում էր հայելում, ինչպես ուրիշ մարդու: Իսկ նրա էության խորքում՝ այնտեղ, որտեղ թաքնվում է այն, ինչ ընդունված է կոչել հոգի, սույն հոսանքը էր աննկատելիորեն տարածվում ամբարտակների տակ, բոլոր սահմաններից այն կողմ, որ նա դնում էր իր համար, որպեսզի վերջնական ձև տա իր գիտակցությանը, կազմավորի իր անհատականությունը: Բայց եթե այդ բոլոր արհեստականորեն ստեղծված ձևերը ողողվեին մոլեգին հեղեղով, դրանք կարող էին փլվել. նույնիսկ այն ջրերը, որ չէին հոսում պարագծված հուների ու ամբարտակների խորքում, այլ պարզորոշ կերպով երևում էին նրան, և որոնք նա խնամքով մտցնում էր իր կապվածությունների, պարտականությունների սովորույթների ջրանցքների մեջ. նույնիսկ այդ ջրերը կարող էին հորդացման պահին ելնել ափերից և տապալել ամեն ինչ:

Իսկ Լանդո Լաուրենտանոն տենչում էր այդ հորդացումը: Ահա թե ինչու նա խորասուզվեց նոր սոցիալական պրոբլեմների ուսումնասիրության մեջ՝ միանալով նրանց տեսակետին, ովքեր զորավոր փաստարկներով զինված՝ փորձում էին մինչև հիմքերը կործանել ընդունված կարգը, որը հարմար է մի քանիսի, վնասակար՝ մեծամասնության համար, և միևնույն ժամանակ այդ մեծամասնության մեջ արթնացնել ձգտումներ ու զգացմունքներ, որոնք ստեղծեցին անզսպելի պոռթկում՝ խորտակելու, ոչնչացնելու դարերով ստեղծված բոլոր ձևերը, որոնց մեջ ծանրորեն քարացել էր կյանքը: Արդյոք կեռա՞ն զանգվածների մեջ այդ ձգտումներն ու ուժերը՝ այնքան ուժգնորեն, որ ոչնչացնեն ամբողջ հինը: Նրանց դեռ պակասում է գիտակցությունը, նրանք դեռ պատրաստ չեն: Արթնացնել նրանց գիտակցությունը, դաստիարակել, նախապատրաստել նրանց՝ ահա դա իդեալ է: Բայց դա ե՞րբ կարող է իրականանալ: Հարկ կլինի աշխատել երկար, դանդաղ, համբերատար:

Պալերմո գավառի իր ընդարձակ սիցիլիական տիրույթներում, որ ժառանգել էր մորից, նա գյուղացիների համար սահմանել էր ավելի արդարացի կիսարարություն՝ իր կառավարիչներին կտրականապես արգելելով թեկուզ նվազագույն տոկոսներով ծանրացնել այն կանխավճարները, որ առատորեն տրվում էր գյուղացիներին՝ սերմերի և դաշտերի մշակության բոլոր անհրաժեշտ կարիքների համար: Նա հիմնել էր և իր միջոցներով պահում էր մի քանի գյուղական դպրոցներ. շատ անգամներ (բավական էր դիմեին նրան) նա մեծագումար մուծումներ էր կատարում հանքափորների օգնության ֆոնդին՝ հողատերերի և ծծմբահանքերի տերերի դեմ նրանց պայքարի համար: Նա էր վճարում «Նուովա Էտա» սոցիալիստական թերթի ծախսերը, թերթ, որ լույս էր տեսնում Պալերմոյում, կիրակի օրերը: Ամեն ամիս կառավարիչ Ռոզարիո Պիրոն ընդարձակ նամակներում, որ լիքն էին առողջ դատողությամբ և ուղղագրական սխալներով, բողոքում էր այդ ամենի դեմ: Բողոքում էր ու ձեռքերը լվանում: Խե՛ղճ Պիրո: Ի՞նչ իմանաս, թե ինչ էին դարձել նրա ձեռքերը մշտական

լվացումներից: Լանդոն գուցե նույնիսկ ինքն էլ չնկատելով կամ էլ գտնելով, որ շատ համեստ է ապրում, շատ էր ծախսում իր վրա: Նա սեփական փորձից գիտեր, թե որքան դատարկ ու անիմաստ է կյանքը բոլոր նրանց, ովքեր իրենց դիրքով ուզում են աչքի ընկնել բարձրաշխարհիկ հասարակությունում՝ ակումբներում, մեծ հյուրանոցների դահլիճներում, խաղասրահներում, ձիարշավարաններում, որսի ժամանակ, բայց նա այդ փորձը ձեռք էր բերել ոչ այն պատճառով, որ այդպիսի կյանքը նրա ճաշակով էր, այլ որպեսզի մյուսներից չառանձնանա այն բանում, ինչը նրա համար այնքան քիչ նշանակություն ուներ և ոչ մի ջանք չէր արժենում. չէ որ նա ուներ իր արիստոկրատական սովորություններն ու կապերը հասարակության մեջ և հարկ չէր լինում հարկադրելու իրեն բարձրաշխարհիկ կյանքի. երբեմն նա նույնիսկ շատ ուժեր ու միջոցներ էր ծախսում այդպիսի կյանքի վրա. այդ պատահում էր այնպիսի րոպեներին, երբ նա առանձնապես սուր էր զգում մարդու կենդանական բնույթի մեջ որևէ ամուր հենարան գտնելու պահանջը, որպեսզի հաջողությամբ պայքարի իր երևակայության անհասկանալի ձգտումների ու քմահաճությունների հետ, իր բանականությանը տիրող տանջալից տագնապների հետ: Այդ ժամանակ նա սկսում էր անձնատուր լինել ամեն տեսակ ֆիզիկական վարժություններին, խաղերին (բուռն և միաժամանակ մի տեսակ սառնությամբ, որ հենց իր մեջ հարուցում էր սարսափի նման մի բան) կամ էլ զգայական հաճույքներին, թեև ո՛չ նրանց հաճելի բուրմունքը, ո՛չ արտաքին շքեղությունը չէին կարող ծածկել նրանից, թե որքան տխրալի ու գռեհիկ են այդ կանայք: Ապրելով հարկադրական անգործության մեջ, նա տանջում էր ինքն իրեն, տառապում էր, շնչահեղձ լինում այնքան ավելի ուժեղ, որքան եռանդուն էր ջանում թաքցնել այդ տառապանքը, որպեսզի այն, աստված մի՛ արասցե, չնկատեն ուրիշները: Երբ նա ոտքը, ճոճելով կամ մորուքը շոյելով ժպտում էր՝ ակումբում կամ որևէ այլ տեղում լսելով ծանոթների հիմարություններն ու տափակությունները, այդ ժամանակ նրա սառն երևակայությունը պատկերացնում էր որևէ անսպասելի պայթյուն, որ այդ ամբողջ փոքրիկ աշխարհը կգցեր զավեշտական և դրա հետ մեկտեղ սարսափելի խուճապի մեջ, աշխարհ, որն այնպես դատարկ էր ու շինծու, որ նրան պարզապես անհավանական էր թվում, թե ուրիշներն ինչպես են կարողանում ապրել այնտեղ ու բավարարվել դրանով: Ուրիշնե՞րը: Իսկ ի՞նքը: Ինքն ինչո՞վ էր ապրում: Ճիշտ է, նա բավարարված չէր, բայց ի՞նչ օգուտ այդ անբավարարվածությունից: Հենց միայն տառապանքներ: Այդ աշխարհում ոչինչ չէր գրավում նրա զգացմունքներն ու ցանկությունները. այդտեղ նրա համար չկար ոչ մի չնչին գայթակղություն. նրա համար ոչինչ չարժեր հրաժարվել դրանցից. ընդհակառակը, նա նույնիսկ պետք է հարկադրեր իրեն մնալու այդ հասարակության մեջ, կարծես պիտի կատարեր ինչ-որ ծանր պարտականություն կամ էլ պատիժ կրեր: Բայց, մյուս կողմից, մի՞թե նա չէր խելագարվի, եթե մենակ մնար ինքն իր հետ: Չէ՞ որ նրան այնքան քիչ էր ուրախացնում այն կյանքը, որով ապրում էր՝ անպտուղ, անընդունակ առաջացնելու որևէ ուժեղ ցանկության նույնիսկ սաղմ: Երբեմն գիշերները, երբ նա տուն էր վերադառնում ամենամռայլ թախիծով, նրան հանկարծ թվում էր, թե ահա ինքը մեն-մենակ մտնում է իր վիլլան, իսկ այնտեղ գտնում է իր կրկնորդը, իր սեփական ոգին, որն իրեն չի լքել, որը ծաղրանքով կհանդիպի իրեն հայելու մեջ ու կհարցնի՝ արդյոք լա՞վ է եղանակը, արդյոք շողո՞ւմ է լուսինը, արդյոք փողոցում չի՞ պայթել որևէ էլեկտրական լապտեր, արդյոք կանգնելուց չի՞ հոգնել սուրբ Պողոսը և չի՞ նստել Անտոնիանոսի հուշասյան վրա. և այնքան ուժեղ էր լինում այդ տպավորությունը, որ նա ետ էր դառնում, որ իր իսկական «ես»-ը չմտնի տուն ու չենթարկվի այդպիսի ծաղրուծանակի: Ահա՛, ահա՛ նրա հիանալի մարմինը՝ լավ խնամված, կոկված, զուգված… Ո՞վ է ուզում այն վերցնել իրեն այդ գիշերային ժամին: Նա մի պահ կանգնում էր, որ զգա իր շուրջը գիշերային լռությունը. նրան թվում էր, թե այդ լռությունը գնում է ժամանակի խորքը, Հռոմի անցյալը և դառնում է ահեղ: Նրա դողը բռնում էր: Գիշերը տարածվել էր հազարամյա քաղաքի վրա, որի միջով հիմա քայլում է ինքը՝ ունայն, չնչին ստվեր, որին կարող է ցրել ամենաթեթև քամու շունչը:

Այդպիսի վիճակից, իսկ դա այնքան էլ հազվադեպ չէր, Լանդոյին դուրս բերեց բարեկամը, գուցե միակ անկեղծ բարեկամը՝ Լիևո Ապեսը՝ «Նուովա Էտա»-ի գլխավոր խմբագիրը: Լանդոն նրան կոչում էր Սոկրատես, և Լիևո Ապեսն իսկապես նման էր Սոկրատեսին իր և՛ բնավորությամբ, և՛ տգեղությամբ. բարձրահասակ էր, երկար վզով ու նեղ ուսերով,

կապկային ձեռքերով, որ հասնում էին գրեթե մինչև ծնկները, ուրախ ու սուր աչքերով, որ արցունքոտվում էին, երբ նա ծիծաղում էր, և գրեթե ամբողջովին ծածկված էին ցած կախված գզգզնակ հոնքերի տակ: Նա շատ աղքատ էր և, չնայած անասելի զրկանքներին, որոնք, սակայն, տանում էր ուրախ, կարողացել էր առանց որևէ աջակցության կրթություն ստանալ և դիպլոմ՝ գրականության ու փիլիսոփայության գծով. զերծ լինելով ամեն տեսակի փառասիրությունից, նա դասավանդում էր պրոգիմնազիայում՝ սեփական մեթոդով, որը մեծ բավականություն էր պատճառում երեխաներին և ոչ քիչ անհանգստություն՝ դիրեկտորին, որը, սակայն, որևէ հիմք չուներ նրան կշտամբելու: Օրվա մնացած մասը նա անց էր կացնում զրույցներով՝ շռայլելով գաղափարների անսպառ հարստությունը, գաղափարներ, որոնք երկար թափառումներից հետո վերադառնում էին նրա մոտ գրեթե անճանաչելի՝ յուրաքանչյուրը դրանք յուրացրած մարդկանց հիմարության կամ սնափառության կնիքով: Նրա խոսքն իրենից ներկայացնում էր յուրահատուկ դատողությունների հոսանք, դատողություններ, որոնցից երբեմն ճառագում էր մի զարմանալի լույս, որ ամեն ինչ դարձնում էր պարզ ու հասկանալի: Լինո Ապեսը շատ անգամներ էր Լանդո Լաուրենտանոյին ապացուցել, որ, իրեն սոցիալիստ կոչելով, նա ստում է ամենամիամիտ անկեղծությամբ. նա տեսնում է իրեն ո՛չ թե այնպիսին, ինչպիսին կա, այլ այնպիսին, ինչպիսին կուզենար լինել: Դա, պնդում էր Լինոն, պատահում է բոլորին և, իմիջիայլոց, հանդիսանում է բոլոր ծիծաղելի վիճակների սկզբնապատճառը: Կարգապահություն չճանաչո՞ղ սոցիալիստ: Սոցիալիստ, որը թշնամի է ոչ միայն այս կամ այն հասարակարգին, այլ ընդհանրապես հասարակարգին, ամեն մի հավասարակշռված ձևի: Նա սոցիալիստ է մի ինչ-որ որոշակի պահի, հորդացման պահի, որի մասին կրքոտ կերպով երազում է: Ասենք, ի վերջո, հենց այդպիսին է սոցիալիստների մեծամասնությունը. թող դա նրան սփոփանք ծառայի կամ էլ (այդպես նույնիսկ ավելի լավ կլինի) վրդովմունք առաջացնի: Համենայն դեպս մի դեր միշտ մնում է նրան. լինել հարուստ մարդ և բոլորին թույլ տալ ծծելու իր արյունը, այդ թվում նաև իրեն՝ Լինո Ապեսին՝ «Նուովա Էտա»-ի խմբագրին և նորին պայծառափայլություն երիտասարդ իշխան Լաուրենտանոյի միջոցներով բացված գյուղական դպրոցների տեսչին:

Լանդոն հաճույքով էր լսում Լինո Ապեսին: Այն ամենը, ինչ ասում էին ուրիշները, նրան չէր բավարարում ու ջղայնացնում էր, ինչպես և այն ամենը, ինչ ասում էր ինքը, թեև խոստովանում էր նաև, որ հաճախ ասվում էին բաներ, որ զուրկ չէին իմաստից: Նա խոստովանում էր նաև, որ բավական շատերն էին իրենից լավ խոսում. բայց ի՞նչ արժեին բոլոր այդ բառերը, բոլոր այդ դատողությունները, բոլոր այդ ճիշտ գաղափարները, բոլոր այդ խելամիտ բաները: Նրա մեջ աճում էր հուսահատությամբ լեցուն մի բողոք. ո՛չ, ո՛չ, այն չէ: Իսկ հետո նա ինքն էլ չէր կարող ասել, թե ինչը ճիշտ կլիներ դրա փոխարեն: Սակայն մնացած ամեն ինչը՝ լույսի հանկարծական բռնկումները, կայծակները, որ շողում էին նրա գիտակցության մեջ, անհնար էր արտահայտել. նրան խելագար կհամարեին, եթե աշխատեր այդ անել: Իսկ ահա Լինո Ապեսը՝ Սոկրատեսը, այդպիսի հատկություն ուներ. կարողանում էր արտահայտել ամեն ինչ և համարվում էր իմաստուն:

Այդ օրերին Լանդոն նրանից ստանում էր նամակ նամակի ետևից, և յուրաքանչյուրի մեջ նա վճռական ու կտրուկ արտահայտություններով պահանջում էր Լանդոյի շուտափույթ ժամանումը Սիցիլիա: Արևից խանձված կալատեղերում սիցիլիական աքաղաղները երբեք չեն ունեցել այդքան կարմիր և այդքան վեր ցցված կատարներ, երբեք այդքան հանդգնորեն չեն նետել դաշտերին իրենց կանչը՝ ողջունելով նոր արևին, որ դարավոր գիշերից հետո առաջին անգամ է ծագել բանվորների գիտակցության մեջ: Գիտակցությա՞ն մեջ: Կարելի՞ է արդյոք դա այդպես կոչել: Նրանք եկեղեցին փոխարինել էին աշխատավորների միությամբ և դրանից էին սպասում բոլոր հրաշքները, որ իզուր էին աղերսում եկեղեցուց: Մոլեռանդությունը շիկացել էր ծայր աստիճան, և, հետևաբար, հնարավոր էին հրաշքները, ու հեշտ էր կախարդների խնդիրը: Հորդացումը կարող էր ամեն ինչ ողողել և մի ակնթարթում խորտակել «բուրժուական տիրապետության կեղտոտ հիմքերը», քանի դեռ գործին չէին խառնվել զինվորները: Հարկավոր է գալ և սկսել գործել՝ նախքան զորքեր կմտցնեն Սիցիլիա, և կսկսվեն պատիժները:

Լանդոն սաստիկ հուզվեց, բայց հենց այդ պահին նա չէր կարող դուրս գալ Հռոմից: Բանկային սկանդալը կրակե հորձանուտի պես եռում էր ազգային պառլամենտի առաջ. մեկը մյուսի ետևից այնտեղ ընկնում էին հին հայրենասիրության ամբողջությամբ փտած հիմնակմախքները, և այդ կրակը, լափելով դրանք, պիտի մաքրեր հայրենիքը: Դա սարսափելի տեսարան էր, անամոթ և միաժամանակ ուրախ: Բայց գուցե դա Լանդոյի աչքին այդքան ուրախ չթվար, եթե նա վայրի տենչանքով չսպասեր, թե այդ հորձանուտը վերջապես երբ կկլանի Կորրադո Սելմի անունով մարդուն:

Ախ, վերջապե՛ս: Լանդոյի երևակայությանը Սելմին պատկերանում էր ծառի նման, որի բոլոր տերևներն այրել է մոտեցող լավայի կիզիչ շնչառությունը. գուցե այդ ծառը ճարճատյունով կբռնկվի նախքան այն, որ նրան կդիպչի հրահեղուկ, ամենակուլ հոսանքը: Եվ Լանդոն հույս ուներ, թե այդ բռնկումը պայծառ կլուսավորի իր հոգին: Այո, կլուսավորի, թեկուզև մի ակնթարթ: Չարիքը, որ այդ մարդը պատճառել էր նրան, անուղղելի էր. այն ընդմիշտ դառնացրել էր նրա կյանքը, ընդմիշտ խլել այն էակին մոտենալու հույսը, ով վաղ պատանության ժամանակ նրան ճանաչել տվեց հավերժությունը լույսի ակնթարթային բռնկման մեջ, երբ նրան հանկարծ շլացրին երկու սև աչքեր ու թեթևակի մարմրող ժպիտը. դա պատահեց մայիսյան մի երեկո, երբ նրանք քայլում էին Պալերմոյի՝ լապտերներով վառ լուսավորված առափնյա փողոցով, անցնող կառքերի աղմուկի մեջ, ծովից եկող ջրիմուռների հոտի և այգիներից եկող թուրինջենիների բուրմունքի մեջ: Այնպես հրաշալի, անմոռանալի էր հիշողությունն այդ րոպեի մասին, որ Լանդոն, իմա՛րկե, նորից կմոտենար զարմուհուն՝ առանց մի հատիկ կշտամբանքի և բոլոր դեպքերում բնավ չցանկանալով արատավորել նրան. Լանդոն զարմուհուն կկոչեր իրենը միայն ծեր ամուսնու մահից հետո: Հենց դրա պատճառով էլ վանեց նրան, երբ նա, գլուխը կորցնելով, ուզում էր զայրալից հուսահատությամբ կառչել զարմիկից: Իսկ այդ մարդը ստորաբար օգուտ քաղեց նրա խենթ պոռթկումից:

Ո՛չ, Լանդոն չէր կարող հիմա գնալ Հռոմից:

Հիմա, երը նրան Սիցիլիայից կանչել էին այդպիսի կարևոր պատճառով, այն նպատակը, որի համար եկել էր Մաուրո Մորտարան, նրան ծաղր թվաց: Նա գլխի ընկավ, որ հարսանեկան տոնակատարությանը իր ներկայությունը պահանջվում է բոլորովին էլ ոչ իրեն տեսնելու հաճույքի համար. ամբողջ հարցը Սալվոյի, նրա կարծիքով՝ վիրավորական, անվստահությունն էր: Եվ որպեսզի խուսափի ուղևորությունից, Լանդոն որոշեց Սալվոյին նամակ գրել, որը կարող է լիովին հանգստացնել նրան և իրեն հնարավորություն տալ չմասնակցելու հարսանիքին: Իսկ Լինո Ապեսին պատասխանեց, որ նախքան ճանապարհ ընկնելը կուզենար խորհրդակցել իր բոլոր ընկերների հետ, որոնք, ուղևորվելով Ռեջո-Էմիլիա՝ կոնգրեսի, շուտով ուղանցաբար պիտի լինեն Հռոմում: Ինքը իր տանը խորհրդակցություն կկազմակերպի, որին հարկ կլինի, որ նա՝ Սոկրատեսն էլ մասնակցի, իր վրա է վերցնում ինչպես Լինո Ապեսի, այնպես էլ խոշոր միությունների ներկայացուցիչների ճանապարհածախսը: Ինքը կուզենար նրանից ստույգ տեղեկություններ ստանալ այն հանգամանքների մասին, որոնց առկայությամբ կարող է սկսվել պայքարը, իսկ եթե պայմաններն իսկապես բարենպաստ են, ինքը, ոչ մի րոպե չտատանվելով, կմիանա ապստամբներին, կդիմի ամեն ռիսկի, կգնա այնտեղ, և թող գրողի ծոցը կորչի ամեն ինչ: Այդ նամակն ուղարկելուց երկու օր հետո Լանդոյին լուր հասավ Սելմիին փրկելու համար կառավարության ձեռնարկած սկանդալային փորձի մասին: Կարծես նրա ամբողջ էությունը տակնուվրա եղավ, և վրդովմունքի կատաղի նոպայի պահին նա վճռեց անհապաղ մեկնել, որ վառի Սիցիլիայում պատրաստված վառոդը: Հաջորդ օրը երբ նա Մաուրո Մորտարայի հետ քննարկում էր իրեն արդեն պարզապես անխուսափելի թվացող ուղևորության մանրամասները, ծառան հայտնեց զարմիկ Ջուլիո Աուրիտիի գալու մասին:

Մաուրոն երկու անգամ գնացել էր Ռոբերտոյի մոտ՝ Կոլոնետտի փողոցի տունը, բայց նրան տանը չէր գտել: Մեկնելուց առաջ ուզում էր հրաժեշտ տալ նրան: Մաուրոն չէր ճանաչում Ջուլիոյին, որվհետև տեսել էր միայն երկու-երեք անգամ, երբ նա փոքր տղա էր. բայց նոր էր նա ներս մտել, երբ ծերունին վեր թռավ տեղից:

— Դոն Ստեֆանո՛,— բացականչեց Մաուրոն։— Օ՛, որդիս։ Իսկը դոն Ստեֆանոն է... Կատարելապե՛ս, կատարելապես նա է... նո՛ւյն դեմքը... նո՛ւյն կազմվածքը...

Բայց տեսնելով, որ պատանին, ամբողջապես իր տագնապով կլանված, կանգնել է իր առաջ սառն, շվարած մռայլ, նա ավելացրեց.

— Դուք չգիտեք, թե ով եմ ես։ Ես Մաուրո Մորտարան եմ։ Իմ ձեռքերի վրա է մեռել ձեր հայրը՝ գնդակը կրծքում, ա՛յ այստեղ, հենց կոկորդի մոտ։ Նրա կոկորդը կապած էր թաշկինակով, և թաշկինակի ծայրն ընկել էր վերքի մեջ. նա չէր կարողանում խոսել։ Ես բռնել էի նրան, և նա հոգեվարքի մեջ աչքերով, ձեր աչքերով, ինձ ցույց տվեց տղային՝ իր որդուն ու ձեր եղբորը՝ հանձնելով նրան ինձ, և ես արմունկով հրեցի Ռոբերտոյին ու իմ մարմնով ծածկեցի ձեր հոր մարմինը, որ տղան չտեսնի նրան։

Ջուլիո Աուրիտին ձեռքերն ամուր սեղմեց երեսին ու փղձկաց։

Իմանալով զարմիկի խիստ բնավորությունը և սառն ինքնատիրապետումը, Լանդոն հուզված ու վշտացած շրջվեց ու նայեց նրան։ Հետո մոտեցավ ձեռքը դրեց նրա ուսին.

— Ջուլիո՛։

— Ավելի լավ կլիներ թողնեիք, որ նա տեսներ,— այդ ժամանակ ասաց Ջուլիոն՝ դառնալով Մաուրոյին և իսկույն էլ տիրապետեց իրեն։— Դա խոր կդրոշմվեր նրա հոգում։ Ձեր կարծիքով, նա դեռ շատ էր փոքր։ Դե, նա այդպես փոքր էլ մնաց։ Փոքր կույր։— Ես պետք է խոսեմ քեզ հետ,— ավելացրեց նա՝ դառնալով Լանդոյին և մատները սեղմեց աչքերին, կարծես ուզում էր սրբել արցունքների հետքերը։

Մաուրոն չլսեց նրա խոսքերը և ոչինչ չհասկացավ. նրա աչքերի առաջ դեռ հեռավոր ճակատամարտի պատկերն էր։ Նա երկար օրորեց գլուխը և հետո հառաչեց.

— Լա՛վ մահ էր։ Լա՛վ մահ էր։ Որդին կարող է ողբալ հոր մահը. բայց եթե լավ մտածես, դա լիակատար հաջողություն էր։ Իսկ մենք ինչպե՞ս կմեռնենք հիմա։ Ծերունիներ ենք, անկողին կաղտոտենք միայն։ Դե, հերիք է, ես գնացի։ Ռոբերտոն տա՛նն է։ Ես պիտի հրաժեշտ տամ նրան։ Ես տեսա Հռոմը և հիմա կարող եմ հանգիստ մեռնել։ Եվ հետո, որտեղ կուզի լինի, թող ինձ խժռեն ճանճերը...

Նա անփույթ թափահարեց ձեռքը և գնաց։

Ֆրանչեսկո Դ'Ատրիի հետ զրուցելուց հետո Ջուլիո Աուրիտին պետք է լավ մտածեր, թե ինչ է ասելու զարմիկին, որ ստանա այն օգնությունը, որ ուզում էր խնդրել. նա գիտեր, որ այդ խնդիրքը Լանդոյի համար հաճելի չի լինի։ Բայց դրա փոխարեն նա, որպեսզի իր մեջ քաջություն գտնի, ամբողջ գիշերը ինքն իր ջղերը գրգռելով, երկար որոնելով, գտնում էր ամեն տեսակ մտքեր ու փաստարկներ՝ հենց այնպիսիք, որոնք չպետք է բերեր, սփոփանք էր գտնում նրանում, որ ինքն իրեն ասում էր բաներ, որ չէր կարող ասել Լանդոյին, փորձում էր իրեն համոզել, որ ինքն ունի այդ օգնության իրավունքը։ Եվ այդ ժամանակ նա նկատեց, որ իր հարաբերությունները Լանդոյի հետ սրտագին էին միայն արտաքուստ։ Օգնության համար զարմիկին դիմելու այդ սուր անհրաժեշտությունից անսպասելիորեն ինչքան նախանձ ու անբարյացակամություն բարձրացան նրա հոգու գաղտնարաններից։ Մինչև այժմ նա մտածում էր, թե մինիստրությունում ծառայողի իր դիրքի չնչինությունը, որը ոչ քիչ զոհաբերությունների գնով թաքցվում էր պճնագեղ հագուստի տակ, չի կարող նվաստացնել իրեն՝ հարուստ, տիտղոսավոր զարմիկի առաջ. չէ՞ որ Լանդոն պիտի իմանար, որ այդ ամենը իր մոր հպարտորեն և արհամարհանքով ժառանգությունից հրաժարվելու հետևանք է, իսկ ինչ վերաբերում է ծագումին, ապա հոր կողմից ևս ինքը բոլորովին էլ ցածր չէ։ Իսկ հիմա՞։ Երբ Ռոբերտոն այդպես անվայել կերպով իրեն վարկաբեկեց, և ինքն ստիպված է օգնություն խնդրել, հպարտության բոլոր հիմքերը փլվել են և դրա հետ մեկտեղ՝ նաև սրտակցությունը իր ու զարմիկի փոխհարաբերություններում։ Եվ Ջուլիոն պատրաստվում էր նրա հետ

ունենալիք խոսակցությանը, ինչպես թշնամու վրա հարձակումի: Իհա՛րկե, թշնամու, որովհետև Լանդոն անպայման կհրաժարվի օգնել՝ իմանալով, որ Ռոբերտոն փողերը ձեռք է բերել Սելմիի համար: Իսկ նրան անպատճառ հարկ կլինի ասել այդ մասին: Լանդոն պետք է հասկանա, գրողը տանի, որ ո՛չ Ռոբերտոն կույրի նման այդպիսի ծառայություն կմատուցեր Սելմիին՝ այլ ծառայությունների փոխարեն, ո՛չ էլ ինքը՝ Ջուլիոն, հիմա օգնություն կխնդրեր Լանդոյից, եթե մայրը չհրաժարվեր հայրական ժառանգությունից: Փողերը, որ ինքը եկել է խնդրելու, ըստ էության, չնչին մասն են ժառանգության այն բաժնի, որն իր մայրը արհամարհանքով թողել է ավագ եղբորը. և ինքը, դաժան անհրաժեշտությունից մղված, կարող է պահանջել այդ փողերը՝ որպես պարտքի հատուցում: Զոհաբերությունը, որին ինքը դիմում է՝ օգնություն խնդրելով, փոքր չէ, քան Լանդոյի զոհաբերությունը, եթե նա համաձայնի կատարել այդ խնդիրքը:

Հիմա, երբ գնաց Մաուրոն, որ նրա հոր հերոսական մահվան մասին հիշողությամբ հարուցել էր այդ անսպասելի հուզմունքը, Ջուլիոն՝ կանգնած զարմիկի առաջ, որը նրան էր նայում մի տեսակ երկյուղով, բայց միևնույն ժամանակ ամենաբարի զգացմունքներով, սկզբում շվարած լռեց՝ լիովին դաժան գրգռմունքի իշխանության տակ: Նրա դեմքը ծռմռվել էր զայրույթից ու տառապանքից և նա այնպես սեղմեց ձեռքերը, որ քիչ էր մնում մատները ջարդեր:

— Դու ինձ պետք ես, Լանդո,— ասաց նա:— Սա ինձ համար սարսափելի պահ է, և միայն դու կարող ես օգնել ինձ, բայց... նախազգուշացնում եմ քեզ, դա քեզանից մեծ զոհաբերություն կպահանջի՝ և՛ բարոյական, և՛ նյութական:

Լանդոն ցնցված զարմիկի խռովահույզ տեսքից, արդեն նրա այդ խոսքերից համակվեց լրջությամբ այն բանի, ինչ նա խնդրելու էր, և, ձեռքերը տարածելով, մռթմռթաց.

— Խոսի՛ր... Ամենը, ինչ կարող եմ...

— Ախ, ո՛չ,— անմիջապես ընդհատեց Ջուլիոն՝ ծամծմված արտահայտությունից վրդովված:— Դա դժվար է, շատ դժվար, ինչպես ինձ համար, այնպես էլ քեզ համար, իմացի՛ր այդ: Բայց դու պետք է հասկանաս, Լանդո, որ իմ կյանքը, մորս կյանքը, մեր պատիվը, ամեն ինչ... ամեն ինչ քո ձեռքում է, ահա՛: Մտածի՛ր այդ մասին, և այն ժամանակ գուցե... ես հուսով եմ... դու ուժ կգտնես քո մեջ կատարելու այն զոհաբերությունը, որ ես քեզանից խնդրում եմ:

— Դու ինձ վախեցնում ես,— բացականչեց Լանդոն:— Ասա՛, քեզ ի՞նչ է պատահել:

Ջուլիոն նորից ջղաձգորեն սեղմեց ձեռքերը և, աչքերը փակելով, մի քանի անգամ հարվածեց իր բերանին: Նրա խոժոռված ճակատին երակներն այնպես փքվեցին, որ միայն դրանից պարզ էր, թե ինչպիսի ուժեղ ճնշում է գործ դնում նա իր վրա:

— Եթե ես ամեն ինչ ասեմ,— կրքոտաբար բացականչեց նա,— դու ինձ կօգնե՞ս:

— Իսկ ինչո՞ւ ոչ,— ճիգով հարցրեց Լանդոն:— Բանն ի՞նչ է: Չէ՞ որ ես նույնիսկ չգիտեմ, թե խոսքն ինչի մասին է:

— Իմ մասին,— արագ պատասխանեց Ջուլիոն:— Մտածիր, խոսքն իմ մասին է կամ նույնիսկ՝ ավելի շուտ մորս մասին: Հիշիր մորս և մեր ընտանիքի բոլոր դժբախտությունները: Չէ որ դու հարգում ու սիրում ես մորս, ճիշտ չէ՞:

— Դե, իհա՛րկե, չէ՞ որ դու գիտես,— հաստատեց Լանդոն անկեղծ զգացմունքով: Հերիք է սպասումով տանջես ինձ:

— Սպասի՛ր, սպասի՛ր...— թախանձեց Աուրիտին, կարծես իրեն խեղդող հոգեկան դառն կսկիծի հորձանուտում կառչելով այդ եղբայրական քնքշությունից:— Մեզ համար, ինձ համար դրա մեջ է ամեն ինչ. մորս հպարտությունը, նրա զգացմունքը... որի պատճառով, երբեք չգանգատվելով, մենք հասանք... հասանք մինչև այսպիսի... չգիտեմ, ուղղակի չգիտեմ

քեզ ինչպես ասեմ, բայց մենք ոչինչ չունենք, երբեք ոչինչ չենք ունեցել, բացի այդ հպարտությունից... և հիմա... հիմա...

— Հանգստացի՛ր, Ջուլիո,— նորից ասաց Լանդոն՝ արդեն փոքր-ինչ սրտնեղած:— Չեմ Հասկանում... Ես պետք եմ քեզ: Ասա ... Քո մայրը...

— Ես պետք է փրկեմ նրա կյանքը,— գոչեց Ջուլիոն:— Ամեն գնով: Եվ դու պետք է օգնես ինձ, Լանդո, և որպեսզի օգնես ինձ, պետք է զոհաբերություն կատարես, հաղթահարես վիրավորանքը, հաղթահարես ատելությունը այն մարդու նկատմամբ, որն այս ամբողջ դժբախտության պատճառն է, որին ես ատում եմ ու նզովում, ինչպես և դու, և որին ես կուզենայի տեսնել սատկելիս այնպիսի տառապանքներում, ինչպիսիք նա պատճառեց մեզ:

Լանդոն հանկարծ մռայլվեց ու բարձրացրեց հոնքերը:

— Սելմի՞ն,— հարցրեց նա:— Ռոբերտոն... Սելմիի՞ հետ:

Ջուլիոն մի քանի անգամ գլխով արեց, հետո կարճ, սեղմ շարադրեց եղբոր վիճակը և այն, թե ինչ պետք է անել նրան փրկելու համար՝ լռության մատնելով նորին գերազանցություն մինիստր Դ'Ատրիի հետ նախորդ օրն ունեցած խոսակցությունը:

Բայց Լանդոն արդեն նախատրամադրված էր. նրա միտքն ուղղված էր մի կետի, և զարմիկի հուզմունքով լի խոսքերից նա սկզբում հասկացավ միայն մի բան՝ որ փրկել Ռոբերտոյին, կնշանակի միաժամանակ փրկել նաև Սելմիին և որ Սելմիի փրկությունը կարող է կախում ունենալ զարմիկի փրկությունից: Լանդոն նայեց Ջուլիոյի ուղիղ աչքերի մեջ, կարծես միայն նոր տեսավ զարմիկին:

— Ինչպե՞ս,— բացականչեց նա զարմանքով:— Դու գալիս ես դրա համար ի՞նձ մոտ: Հենց ի՞նձ մոտ:

Այդ հարցում հնչող զարմանքից ճնշված, Ջուլիոն մի ակնթարթ շվարեց և կարծես նրա մեջ հուզմունքը փոխվեց թունավոր դառնության. նա մռթմռթաց.

— Իսկ ո՞ւմ մոտ... ուրիշ ո՞ւմ մոտ: Դու գիտես, որ իմ ընտանիքը. . . Եվ հետո՝ հիշի՛ր.. Չէ՞ որ հենց սկզբից ես քեզանից զոհաբերություն խնդրեցի...

— Ի՞նչ զոհաբերություն: Ո՛չ,— բացականչեց Լանդոն:— Դա անմարդկային է: Եվ դրանո՞վ ես դու եկել ինձ մոտ: Ինչպե՞ս թե: Մի՞թե դու չգիտես, թե այդ մարդն ինչ է ինձ համար:

— Դրա համար էլ ես ասացի...— փորձեց ընդհատել Ջուլիոն:

— Դու ինձ ի՞նչ ասացիր: Ո՛չ,— նորից բորբոքվեց Լանդոն:— Դու եկար, Ջուլիո, ինձ ասելու՝ ահա զենքը, միակ զենքը, որով դու կարող ես ոչնչացնել թշնամուդ, որ քիչ էր մնում խույս տալով ճողոպրեր քո վրեժից. բայց դու չպետք է օգտվես այդ զենքից, դու պետք է նույնիսկ ինձ օգնես թաքցնելու այն, մեջտեղից վերացնելու այն, որ փրկվի այդ թշնամին: Ահա թե դու ինչի համար ես եկել ինձ մոտ:

— Որովհետև դու տեսնում ես միայն Սելմիին, միայն Սելմիին և ուրիշ ոչինչ չես ուզում տեսնել,— հուսահատ բացականչեց Աուրիտին:— Ես այդ գիտեի: Գիտեի, որ եթե ես քեզ ամեն ինչ ասեմ, դու ինձ կմերժես օգնությունը:

— Դե, ի՞նչ օգնություն,— նորից գոչեց Լանդոն:— Ահա թե դու ինչն ես կոչում օգնություն: Դա իմ կողմից կլիներ մեղսակցություն: Դու ուզում ես, որ ես մասնակցություն ունենամ Սելմիի՞ն փրկելու գործում:

— Ի՞նչ ես ասում,— գոռաց Ջուլիոն:— Ռոբերտոյի՞ն: Ես ուզում եմ փրկել Ռոբերտոյին: Մորս: Ես ի՞նչ գործ ունեմ Սելմիի հետ: Ես ատում եմ նրան, ասացի քեզ, ատում եմ ավելի, քան դու: Բայց ես պիտի փրկեմ Ռոբերտոյին...

— Ների՛ր,— ասաց Լանդոն։— Լսի՛ր... Լսիր, Ջուլիո, պատասխանիր ինձ: Ռոբերտոն մեղա՞վոր է: Դու նրան մեղա՞վոր ես համարում:

— Մեղավոր է նա, թե մեղավոր չէ,— պատասխանեց Ջուլիոն՝ ամբողջ մարմնով դողալով,— բանն այդ չէ: Բայց նա վարկաբեկված է:

— Բայց նա կարող է պաշտպանվել, գրողը տանի,— իսկույն պատասխանեց Լանդան:

— Շնորհակալ եմ: Ես այդ գիտեմ: Բայց ես պիտի խանգարեմ այն բանին, որ նրան մեղադրեն, ձերբակալեն, հասկանո՞ւմ ես,— բացատրեց Աուրիտին։— Գիտեմ, որ կարող է պաշտպանվել: Իսկ եթե նա ինքը չցանկանա պաշտպանվել...

— Ահա, ահա, և հրաշալի է,— հաստատեց Լանդոն։— Այստեղ ես քեզ հետ եմ. . .

— Դե ո՛չ, շնորհակալ եմ,— դարձյալ արհամարհանքով ասաց Ջուլիոն։— Խոսքերով օգնություն, շնորհակալ եմ: Մեկն ինձ բավական է: Ես քեզ չէի էլ դիմի:

— Ների՛ ր,— նեղացած ասաց Լանդոն։— Ազնիվ օգնությունը... իսկական, վեհանձն՝ կարող է լինել միայն այդպես: Վճարել՝ կնշանակի մեղսակից դառնալ: Ռոբերտոն պիտի խոսի և ոչ թե իրեն Սելմիին մեղսակից դուրս բերի, լռի ու վճարի նրա փոխարեն:

— Իսկ դու, ուրեմն, ուզում ես,— Հարցրեց Ջուլիոն,— որ նա կրի՞ ձերբակալության խայտառակությունն ու բա՞նտ ընկնի, երբ ես դեռ կարող եմ նրան փրկել դրանից:

— Փողերո՞վ:

— Փողերով, փողերով,— կրկնեց Ջուլիոն,— ազնիվ է, անազնիվ... հիմա ես դրա՞ մասին պիտի մտածեմ: Ինձ բավական է այն համոզմունքը, որ նա ազնիվ է: Բայց վաղը ո՞վ կհավատա նրան, եթե այսօր ձերբակալեն: Ո՞վ է հավատում բանտում եղած մարդու խոսքերին: Լավ, ի սեր աստծո, փորձենք համաձայնության գալ: Մտածի՛ր միայն Ռոբերտոյի մասին: Դու հիմա հրաժարվում ես ինձ օգնել, որովհետև ուզում ես Ռոբերտոյին դարձնել քո վրեժի միջոցը:

— Ո՛չ, դա այդպես չէ,— վճռականորեն ասաց Լանդոն։— Բայց ես չեմ կարող ինձ դարձնել Սելմիի փրկության միջոց, հասկանո՞ւմ ես: Դու ինձ ենթարկում ես անմարդկային տանջանքի: Ես չեմ կարող և պարտավոր չեմ կրելու այդ Ռոբերտոյի համար՝ ամեն բան, ինչ կամենաք: Բայց եթե Ռոբերտոն կապված է Սելմիի հետ, և նա կօգտվի իմ այդ օգնությունից՝ ո՛չ, ես չեմ կարող քեզ օգնություն ցույց տալ, դու չես կարող այն պահանջել:

Ջուլիո Աուրիտին որոշ ժամանակ լռեց՝ մռայլ մտորելով:

— Ուրեմն՝ ո՞չ,— հետո հարցրեց նա՝ բարձրացնելով գլուխը և նայելով ուղիղ զարմիկի աչքերի մեջ:

Խորին խղճահարությամբ համակված Լանդոն այդ կտրուկ հարցին կարող է պատասխանել միայն նոր, վճռական մերժումով: Նա խաչեց ձեռքերը և, մոտենալով Աուրիտիին, ասաց.

— Բայց այդ անձնական պատճառներից բացի, Ջուլիո, մտածի՛ր իմ կապերի մասին, իմ համոզմունքների, գաղափարների մասին, որոնց համար ես պայքարում եմ... Այդ դեպքում վաղը ես չէի կարողանա ընկերներիս հետ միասին մասնակցել մաքրման գործին, որ մենք ձեռնարկել ենք:

Նա իսկույն էլ հասկացավ, որ չպետք է ասեր այդ, այնուամենայնիվ, չկարողացավ զսպել իրեն, թեև գրեթե սարսափով նկատում էր, թե ինչպես է փոխվում զարմիկի դեմքը ամեն բառի հետ, որ ինքն ասում էր: Ի վերջո Ջուլիոն վեր թռավ, նրա դեմքը ծռմռվեց:

— Մաքրում, ահա թե ի՞նչ,— գոչեց նա դաժան ծաղրանքով։— Դե, դու կարող ես մաքրել: Օ՛, դուք բոլորդ մաքուր եք: Իսկ մենք՝ ես, Ռոբերտոն, իմ հայրը, եթե ողջ լիներ... դոն:

— Ջուլիո՛, Ջուլիո՛,— փորձեց նրան հանգստացնել սրտաբեկ Լանդոն:

Աուրիտին, իրեն կորցրած, շարունակեց.

— Մենք բոլորս աղտոտված ենք, բոլորս: Եվ ես պատրաստ եմ դրամանենգ դառնալու, գողանալու այդ քառասուն հազար լիրան, որ դու ունես, իսկ ես չունեմ: Եվ քանի որ ես չունեմ, ես կեղտոտ եմ: Դու ունես և դու մաքուր ես: Բայց մտածիր, որ իմ մայրը չի ցանկացել վերցնել այդ փողերը, որովհետև կեղտոտ է համարել:

Լանդոն ձգվեց ամբողջ հասակով և, կանգնելով սենյակի կենտրոնում, զարմիկին նայեց սառը գոռոզությամբ:

— Փողերն իմն են,— ասաց նա,— չէ՞ որ դու գիտես, որ միայն իմ մոր փողերն են:

Բայց իսկույն էլ զղջաց, և նրա դեմքին երևաց նողկանքի արտահայտություն՝ այն գռեհիկ կոպտության նկատմամբ, որին հասցրեց իրենց վեճը: Ակնթարթապես հիշեց, որ իր մոր ընտանիքում էլ մեկը հատուցել է իր վեհանձն բողոքի համար. նա մտածեց, որ պատճառներից մեկը, որի համար ուզում էր Ջաննետա Մոնտալտոյին դարձնել իրենը, ցանկությունն էր թեկուզ մասամբ նրան վերադարձնելու այն, ինչ խլված էր ժառանգությունից զրկված նրա հորից: Լանդոն կռահում էր, թե ինչ կպատասխանի զարմիկն իր գոռոզ և անզգույշ նկատողությանը, և ամոթալի վեճը կդառնա է՛լ ավելի նողկալի: Եվ, իսկապես, Ջուլիո Աուրիտին, մռայլ խոժոռվելով, սեղմված բռունցքները զարկեց իրար, իսկ հետո, ծաղրական փայլով շողացող աչքերի առաջ բացելով ձեռքերը, արհամարհանքով ասաց.

— Դե, քո մոր փողերը՝ նույնպես:

Եվ Լանդոն, ի պատասխան այդ մարտահրավերին, դարձյալ չկարողացավ զսպել իրեն:

— Իմ մո՞ր փողերը,— հարցրեց նա՝ գնալով զարմիկի վրա:

Ջուլիո Աուրիտին ձեռքը քսեց ճակատին, որ պատած էր սառը քրտինքով, փակեց աչքերը և տխուր հոգնած պատասխանեց.

— Ինձ մի՛ ստիպիր ասել ավելին:

Լանդոն նայեց նրան կամ, ավելը ճիշտ, մի հայացք գցեց նրա հոգու մեջ. հետո շատ սառը տոնով, ատամների արանքից կամացուկ, գրեթե վանկ առ վանկ ասաց.

— Եվ եթե նույնիսկ համաձայնեմ այն բանի հետ, ինչ դու մտածում ես, ապա դու ինչպե՞ս կարող ես ցանկանալ, որ ես վճարեմ Սելմիի պարտքերը, որ նա արել էր մի կնոջ համար, որը կարող էր հավակնություն ունենալ իմ մոր փողերի նկատմամբ: Գնա՛, գնա՛, ի սեր աստծո, գնա՛:— Եվ հետո, նույնպես աչքերը փակելով, բացականչեց:— Ես էլ չեմ կարող տեսնել քեզ:

Նա լսեց՝ ինչպես գնաց զարմիկը, և էլի երկար կանգնեց՝ երեսը ձեռքերով ծածկած, զզվանքով համակված, քանի որ զգում էր, որ դիպել էր իրականության կեղտոտ խորքին՝ մինչև որտեղ երբեք չէր մտածել իջնել, և որից իր հոգում ընդմիշտ կմնա գարշանքի զգացումը: Մի՞թե հիմա, երբ նա բարձրացել է այդ հատակից, որտեղ սահելով ընկել էր մի ակնթարթ, շուրջն ամեն ինչ իրեն չի թվում դատարկ, կեղծ, աղտոտված: Մի՞թե ամեն մի զգացմունքի մեջ, ամեն մի մտքի մեջ, ամեն մի արարքի մեջ, ամեն մի բառի մեջ չի մնում հետքը կեղտի, որին նա դիպել է:

Աչքերը փակելով, ատամները սեղմելով, կիսաբաց անելով չոր, դառնահամ շրթունքները, Լանդոն ուժգին տրորեց ձեռքերը: Հետո բացեց աչքերն ու դիտեց սենյակը. զգալով, որ շնչահեղձ է լինում, նա մոտեցավ այգուն նայող պատուհանին:

Ախ, ամեն ինչ, ամեն ինչ այդպես էլ կա: Հիմա ամեն ինչ համատարած խայտառակություն է: Հենց օդը ժանտախտ է շնչում: Հասարակական կյանքի ամբողջ հենքը քայքայվում է, և իր հոգին, իր ամեն մի միտքը, ամեն մի զգացմունքը... ամեն ինչ աղտոտված է:

Երեք օր անց գրադարանի դահլիճում հավաքվեցին ընկերները, որոնք պիտի մեկնեին Ռեջո-Էմիլիա՝ սոցիալիստների կոնգրեսին. առավել խոշոր միությունների ներկայացուցիչները, որոնց հրավիրել էր Լանդոն, մի քանի պատգամավորներ՝ նրա բարեկամները, չորս միլանցիներ՝ Իտալական բանվորական կուսակցությունից և Լինո Ապեսը:

Բոլոր պատվիրակները տղամարդիկ էին, և նրանց մեջ միայն մի աղջիկ կար՝ կարմիր ժակետով թեք դրած բերետով, որի վրա կտրիճորեն ցցված էր աքաղաղի փետուրը. դա Չելսինա Պինյան էր, որ եկել էր Լուկա Լիցիոյի փոխարեն ներկայացնելու Ջիրջենտիի միությունը: Բոլորն աշխատում էին թաքցնել իրենց զարմանքը. բայց Չելսինան շատ լավ էր տեսնում գաղտագողի, թռուցիկ հայացքները, որ նետում էին իր վրա՝ հատկապես տարեց տղամարդիկ, և նա, ինքն իրեն ծիծաղելով, նկատում էր այն քչերին, որոնք համառորեն արգելում էին իրենց՝ նայել աղջկան, իր առաջ ընդունում էին թախծագորով կամ էլ անմատչելի գոռոզ տեսք և խոսում էին ինչ-որ հատուկ ձայնի ելևէջներով, մերթ հուլաբար, մերթ՝ դիտավորյալ աշխույժ. դա նշան էր հուզմունքի, որ սովորաբար հարուցում է կնոջ ներկայությունը: Չելսինան նկատում էր նաև, որ ոմանք այստեղ դրսևորում են դիտումնավոր համարձակություն կամ էլ արհամարհական տեսք են ընդունում. և՛ այդ, և՛ մյուսը մատնում էին թաքուն շփոթությունն այն բանից, որ նրանք գտնվում են հարուստ ու լավ կահավորված տան մեջ:

Լանդո Լաուրենտանոն դեռ չկար: Լինո Ապեսը բարեկամներին նրա անունից խնդրեց մի քիչ սպասել. տանտերը շուտով կգա: Սպասման ընթացքում կազմվեցին մի քանի խմբեր. երկուսը՝ այգուն նայող պատուհանների մոտ, երրորդը՝ սեղանի մոտ, որ դրված էր դահլիճի վերին մասում ապագա նախագահության համար: Ոմանք մտախոհ քայլում էին սենյակում, ուրիշները դարակներին շարված գրքերի կռնակներին կարդում էին անունները՝ աշխատելով աննկատելի լսել, թե ինչ են խոսում այս կամ այն խմբում: Ոմանք, խեթ-խեթ նայելով, հետևում էին պատվիրակներից մեկին, որ մատները բաճկոնի գրպանները խրած, անցուդարձ էր անում դահլիճում, ժամանակ առ ժամանակ թոթվում էր ուսերը, ձգում էր վիզը և, ի նշան զարմանքի կամ հավանության, բացում էր բերանը՝ կոշտ, կարմրաշիկավուն, կիսով չափ գունաթափված բեղերի տակ: Դա պառլամենտի հանրապետական պատգամավոր Սպիրիդոնե Կովացցան էր, որն այդ օրերին ֆրանսիական մի թերթում վատ կարծիք էր հայտնել Սիցիլիայում պրոլետարական ուժերի կազմակերպման մասին: Տեսնելով, որ բոլորն իրենից խուսափում են, նա այդ շարժումով կարծես ասում էր. «Դե, հնարավո՞ր բան է սա»: Բայց չէ՛ որ նա պիտի հասկանար իր մեղքը, իսկ մեղավոր էր նրանում, որ շատ բան էր տեսնում և տեսածին նշանակություն էր տալիս, որ ուրիշները չէին տալիս. կրքերի բորբոքման պահին ամեն մեկին թվում էր, թե սկսվում է այն, ինչի մասին երազում էր: Պատրանքները օճառի պղպջակներ են, որոնք ակնթարթապես կարող են փոխվել կապարե գնդակների: Այդ մասին շատ լավ գիտեին Կալտավուտուրոյում գնդակահարված դժբախտ գյուղացիները: Կովացցան ֆրանսիական թերթում գրել էր այն, ինչ խղճի մտոք ճշմարիտ էր համարում. գրել էր իր սովորության համաձայն խիստ ու բացեիբաց: Բայց նրանք ուզում էին ասել, թե նրան դառն բավականություն է պատճառում՝ հաշվի չառնելով ո՛չ ժամանակը, ո՛չ էլ տեղը, ամենքին ի ցույց դնել ամենատհաճ ճշմարտությունները և իր փաստարկների սառույցով մարել ամեն խանդավառություն, իդեալիզմի ամեն բոց, դեպի որը նա, այնուամենայնիվ, անհաղթահարելիորեն ձգտում էր: «Սևուտիճ ՝ գիշերային թիթեռնիկի թևերով»,— բնորոշել էր նրան Լինո Ապեսը «Նուվա էտա»-ում. երբ նա մոտեցել է բոցին, թևերն այրվել են, մնացել է սևուտիճը: Զրպարտություն և ապերախտություն: Ընդհակառակը, նա իր պարտքն էր համարում պահպանել սառնասրտությունը այդ ամբողջ պատանեկան խանդավառության մեջ. եթե դա պարզապես վառած ծղոտի բռնկում չէ, ի վերջո ինքը կբոցավառվի, իսկ եթե միայն ծղոտ է, ապա կհանգցնի այն համընդհանուր բարօրության համար: Գուցե հենց նրա դեմքը՝ գեր և, այնուամենայնիվ, կոշտ, ապակենման աչքերը՝ ակնոցի տակից նայող շատ սուր հայացքով, բուի քիթը, նրա ձայնի հնչյունները բոլորի մեջ նողկանք էին հարուցում և ավելի ևս ջղայնացնում էին այն պատճառով, որ գրեթե միշտ ժամանակի ընթացքում իրադարձությունները ցույց էին տալիս նրա իրավացիությունը, և բոլորն ստիպված էին լինում ընդունել նրա լայն ու խոր իմացությունը, խելքի ու խղճի անկեղծությունը,

մտադրությունների ազնվությունը, և հետզհետե հարգանք էր առաջանում նրա խիստ ու արհամարհական անկեղծության և արիության նկատմամբ, որով նա ընդունում էր այն հանգամանքը, որ ինքը համակրանք չի վայելում: Իսկ առայժմ դեռ այդ թշնամական ընդունելության համար Սպիրիդոնե Կովացցան պարտական էր գլխավորապես երեք երիտասարդ սիցիլիացիների, որոնք գտնվում էին դահլիճում և այդ պահին շրջապատված էին բոլորի ջերմ համակրանքով՝ Բիկսիո Բրունոյին, Կատալդո Սկլաֆանիին և Նիկազիո Ինգրաոյին, որոնք մյուսներից ավելի էին վիրավորված նրա քննադատությունից: Նրանցից յուրաքանչյուրը կանգնած էր դահլիճում կազմված երեք խմբակներից մեկի կենտրոնում: Բիկսիո Բրունոն, որ բարեկազմ էր, ձիթապտղի գույնի եռանդուն դեմքով ու նեգրի նման խիտ, գանգուր մազերով, ինքնագոհ կիսաժպիտով ծռելով կարմիր, մսեղ շրթունքները, պատկերավոր, տպավորիչ լեզվով բացատրում էր, թե ինչպես հաջողվեց կարճ ժամանակում մի կազմակերպության մեջ միավորել քսանվեց բանվորական միություններ՝ իրար հետ չհամաձայնող համքարություններ, իջեցված դրոշները հիմա պահվում են ժողովների դահլիճում՝ որպես հաղթանակի մարտավար: Նա լի էր հավատով ու համոզված էր, որ մոտ է լիակատար հաղթանակը: Սպասվում էր և նույնիսկ անխուսափելի էր համարվում կառավարության պատասխան ելույթը. միությունների արձակումը, ձերբակալությունները, զորքեր մտցնելը: Բայց բարի սերմերն արդեն ցանված են: Ամեն մի բռնություն, ամեն մի հալածանք հաղթանակը կդարձնի Է՛լ ավելի նշանակալից: Մի՞թե կարելի է ձերբակալել երեք հարյուր հազար մարդու: Ո՛չ: Միայն առաջնորդներին, ծայրահեղ դեպքում՝ մի քանի տասնյակ անդամների: Բայց ի՞նչ արած, գաղտնի նախապատրաստված են նոր առաջնորդներ, որոնք դեռ հայտնի չեն ոստիկանությանը, և պրոպագանդան կշարունակվի՝ Է՛լ ավելի գործուն, քան առաջ: Կատալդո Սկլաֆանին՝ թիկնավետ, փոքր-ինչ շեղ աչքերով ու մեծ մորուքով, որ մամխենու փունջ էր թվում, մարգարեաբար ոգևորված ելույթ էր ունենում մյուս խմբակում, նա ուրախ հուզմունքով ասում էր, թե այնտեղ, որտեղ ծագել է հայրենիքի միավորման արշալույսը, հիմա անխուսափելիորեն կբռնկվի նաև ճնշվածների վրեժխնդրության ավելի դաժան ու շլացուցիչ արշալույսը: Նա, իհա՛րկե, գիտեր, որ դեռ սիցիլիական իրադարձություններից առաջ Ռոմանիեում, Մոդենեի, Ռեջո-Էմիլիայի և Պարմի գավառներում, Կրեմոնայի, Մանուտուի և Պոլեզինայի շրջաններում իտալական սոցիալիզմը տվել էր իր առաջին ճակատամարտը. բայց Սիցիլիայում սկսվել էր ինչ-որ այլ բան: Հանկարծակի, հրաշալի արթնացում: Լսելով նրան, Լինո Ապեսը ժպիտը զսպելու համար բեղերն այնպես էր ձգում, որ քիչ էր մնում պոկեր: Լանդոյին ուղղված իր նամակներում նա Կատալդո Սկլաֆանիին կոչում էր «միությունների մեսիա»: Երրորդ խմբակում Նիկազիո Ինգրաոն էր՝ կարճահասակ, կոպիտ, կարմրասև խալով, որ ծածկում էր դեմքի կեսը. աշխատելով ինչքան կարելի է գրական արտահայտվել իր մայրենի բարբառով, նա պատվիրակների հետ խոսում էր՝ որևէ մանկական-միամիտ բացականչության առթիվ անպարկեշտ հայհոյանքից տարօրինակ ծամածռությամբ վեր թռչելով. նա խոսում էր Սիցիլիայի արդյունաբերության ճգնաժամի մասին և հանքափորների զարհուրելի աղքատության մասին, որոնք արդեն մի քանի ամիս մնացել էին առանց աշխատանքի: Մի ընկեր՝ Կոմիտինիի միության ղեկավարը, փորձեց տեղեկացնել պատվիրակներին, թե այդ հանքափորների համար ինչքան բան է արել և անում է Ինգրաոն՝ Արագոնայում հողերի ու տների սեփականատերը, որպեսզի խանգարի նրանց ջարդեր, հրդեհներ և արյունալի ընդհարումներ սարքել, բայց Ինգրաոն նետվեց նրա վրա, փակեց նրա բերանը և բռունցքով սպառնաց, որ նա իսկույն լռի. Չելսինա Պինյան, որ մի կողմ էր նստած, նայելով այդ ծիծաղելի տեսարանին, բարձր ծիծաղեց, և Ինգրաոն, նույնպես ծիծաղելով, հարցրեց.

— Ես ձեզ հուզեցի՞, սինյորինա:

Ուննկնդրելով այդ երեք առավել նշանավոր առաջնորդների խոսքերին, մյուս բոլոր կղզեցիները բոլոր երեք խմբերում՝ քսանից երեսուն տարեկան երիտասարդներ, գոռոզանում էին՝ գրեթե արտասվելու չափ սրտաշարժված: Իրենց պատանեկան անկեղծ սնափառությամբ նրանք համոզված էին, որ հենց այստեղ՝ Հռոմում, նոր, պատմական դեր են խաղում: Նրանք տեսել էին, ինչպես հազարավոր կանայք, հազարավոր գյուղացիներ, ժողովրդի բազմություններ, բերկրանքով համակված, ծաղիկներ էին նետում, փռվում էին

գետնին, լալիս էին ու գոռում կենտրոնական կոմիտեից եկած այդ երեք առաջնորդների առաջ, ինչպես նախկինում իրենց սրբերի պատկերների առաջ:

Բոլորը հանկարծ շրջվեցին և առաջ շարժվեցին. փութկոտ քայլերով դահլիճ մտավ Լանդո Լաուրենտանոն: Ուշանալու համար ներողություն խնդրելով, նա սեղմեց առաջին մոտեցողների ձեռքերը, հետո բոլորին խնդրեց նստել և, հենց որ լռություն տիրեց, ասաց.

— Ես ուշացա, սինյորներ, մի պատճառով, որ գուցե օտար չէ ձեր շահերին, հատկապես մեր այն ընկերների շահերին, որոնք, ես կարծում եմ, այս պահին մյուսներից ավելի օգնության կարիք ունեն այնտեղ՝ Սիցիլիայում:

— Հանքափորնե՛րը,— վեր թռչելով, բացականչեց Ինգրաոն, կարծես ինքն էր հանդիսանում նրանց ամենաօրինական պաշտպանը:— Ես հասկացա,— ավելացրեց նա:— Խոսքը, հավանաբար, ինժեներ Աուրելիո Կոստայի՞ մասին է: Ես հասկացա: Է՛-է՛, նա ինձ հետ է եկել, այդ սինյորը: Մենք երկար խոսեցինք և...

Լանդոն ձեռքի շարժումով նրան խնդրեց լռել:

— Այո՛, իսկապես, ինժեներ Աուրելիո Կոստան,— շարունակեց նա,— Սալվոյի՝ Ջիրջենտիի գավառի ամենահարուստ ձեռնարկատերերից մեկի, ծծմբահանքերի դիրեկտորը եկել է Հռոմ, որ սիցիլիական պատգամավորներին շահագրգռի մի ծրագրով...

— Թույլ տվեք,— նորից ընդհատեց Ինգրաոն:— Ժամանակ չկորցնենք, սինյորներ: Ես ձեզ կբացատրեմ գործի էությունը: Սինյոր Սալվոն պատրաստվում է քրոջ միջոցով ազգական դառնալ իշխան Լաուրենտանոյի հետ...

Լսվեց բողոքի քրթմնջոց կոպիտ անտակտության դեմ, որ թույլ տվեց Ինգրաոն Լանդոյի նկատմամբ, որի կողմն էին դարձել հիմա բոլորի հայացքները՝ կարծես ներողություն խնդրելով: Բայց Լանդոն ժպտալով, արագ պատասխանեց.

— Միայն թե ոչ ինձ հետ, ի սեր աստծո, միայն թե ոչ ինձ հետ:

Եվ այդ ժամանակ Ինգրաոն, զայրույթով թոթվելով ուսերը, բղավեց.

— Սուրբ տիրամա՛յր, դուք ինձ ինչի՞ տեղ եք դնում: Չէ որ ես ասացի «իշխան»: Մի՞թե ես իշխան կկոչեի մեր հարգելի բարեկամին, տանտիրոջն ու ամենասիրելի ընկերոջը: Ինչո՞ւ: Նա գիտի, որ ավելի վեր չի բարձրանա, եթե մենք իրեն իշխան կոչենք, և գիտի, որ մենք չենք ուզում նվաստացնել նրան՝ կոչելով պարզապես Լաուրենտանո: Ես նկատի ունեմ իշխանին՝ նրա հորը, իսկ Լանդո Լաուրենտանոն չի կարող նեղանալ իմ խոսքերից: Եվ նեղանալն էլ հիմարություն կլիներ: Ես խոսում եմ նրա փոխարեն, որովհետև նա ապրում է Հռոմում, իսկ ես՝ հանքերում և գիտեմ, որ սինյոր Սալվոյի ծրագրի միակ իսկական նպատակն է՝ գրավել իշխանի որդու համակրանքը, ցույց տալ, որ ինքը՝ Սալվոն, նույնպես սրտին մոտ է ընդունում ծծմբահանքերի բանվորների բախտը: Դատարկաբանությո՛ւն: Բարբաջա՛նք: Փոշի՝ աչքերին: Սինյոր Սալվոն ինձանից լավ գիտի, որ իր նախագիծը լոկ ծաղր է: Այո՛, սինյորներ, ես խոսում եմ առանց ակնարկների, ա՛յ այսպես: Եթե սինյոր Սալվոն ուզում է ինչ-որ բան անել իր հանքափորների համար, թող մեջտեղից վերացնի, այսպես կոչված, փոքրիկ կրպակները, որտեղ բանվորներն ստիպված են հարյուր տոկոս հավելումով ձեռք բերել առաջին անհրաժեշտության ապրանքներ՝ քացախի նման թթու գինի և քարի նման կոշտ հաց:

Սպիրիդոնե Կովացցան ձայն խնդրեց, և բոլորը շրջվեցին նրա կողմը ու նայեցին թշնամաբար:

— Հիմա դուք կսկսեք պաշտպանել նրա կրպակնե՞րը,— գոռաց Ինգրաոն:

Կովացցան նույնիսկ չնայեց նրա կողմը:

— Ես կուզենայի ծանոթանալ այդ նախագծի հիմնական գաղափարներին:

— Ես ձեզ ասացի, որ դա ծաղր է,— նորից գոռաց Ինգրաոն:

Կովացցան, հանգստությունը չկորցնելով, ձեռքն առաջ պարզեց:

— Խնդրում եմ,— ասաց նա,— գոռալով ոչինչ չես ապացուցի: Ես էլ եմ հանքերում եղել. ես ուշադիր ուսումնասիրել եմ ծծմբարդյունաբերության զարգացման պայմանները, նրա ճգնաժամի բարդ պատճառները. և կարող եմ ձեզ ասել, որ եթե ներկա պայմաններում հանքափորները, հանքահատներն ու բեռնակիրները ոչ մի բանի վրա հույս դնել չեն կարող, ապա վերահսկիչների ու տերերի հեռանկարները ոչ պակաս ողբալի են. և եթե այդ ծրագիրը...

Նա չկարողացավ շարունակել. բոլոր միությունների ներկայացուցիչները բողոքելով վեր թռան տեղերից: Լանդոն միջամտեց, փորձեց հանգստացնել նրանց՝ համոզելով, որ պետք է հարգել յուրաքանչյուրի կարծիքը, և առաջարկեց, որ բանավեճը վարելու համար հենց հիմա նախագահ ընտրեն:

— Բրունո՜ն: Բրունո՜ն: Բիկսիո Բրունո՜ն,— գոռացին բոլոր կողմերից:

Եվ Բիկսիո Բրունոն՝ արդեն սովոր այն բանին, որ իրեն ընտրում են այդ պաշտոնում, երկու ոստյունով հայտնվեց սեղանի մոտ, որ դրված էր դահլիճի վերին կողմում՝ խորհրդակցության համար:

— Սինյորնե՛ր,— ասաց նա,— մենք անսպասելիորեն դիպել ենք բանավեճի հենց նյարդին: Մեծարգո Կովացցան վերջերս լույս տեսած մի հոդվածում...

— Արտասահմանում հրապարակված,— ընդհատեց ինչ-որ մեկը դահլիճի խորքից:

— Արտասահմանում թե Իտալիայում՝ կարևոր չէ,— պատասխանեց Բրունոն:— Մեր գաղափարները, մեր կուսակցությունը ազգային սահմաններ չեն ճանաչում: Այդ հոդվածում մեծարգո Կովացցան քննադատել էր իմ և իմ ընկերների գործերը:

Սպիրիդոնե Կովացցան, ձեռքերը խաչելով կրծքին, մի քանի անգամ գլուխն օրորեց բացասաբար:

— Ո՛չ,— հարցրեց Բրունոն:— Ինչպե՞ս թե՝ ոչ: Մի՞թե դուք չեք ասել, թե մեր պրոպագանդան լոկ համատարած մտապատրանք է:

— Ես նկատի ունեի,— պատասխանեց Կովացցան՝ ոտքի ելնելով,— որ ձեր ազնիվ ասույթները ազատության մասին, որը պետք է ապահովի կենսական պահանջմունքների լրիվ բավարարման հնարավորությունը, ձեր ճառերը դասակարգերի պայքարի մասին, այսինքն՝ շահագործողների դեմ շահագործվողների պայքարի մասին, ընդհանրապես, մարքսիստական դպրոցի ծրագրի մասին և այն նվազագույնի մասին, որ դուք ձեզ համար ուրվագծել եք, անխուսափելիորեն ու ցավալիորեն վերածվում են մտապատրանքի՝ նրանց տգիտության պատճառով, ում ուղղված են: Ու նաև ավելացրել եմ...

Դահլիճից լսվեց բողոքի նոր քրթմնջոց: Բայց Բրունոն բռունցքը զարկեց սեղանին և լռություն պահանջեց.

— Թողեք, որ խոսի:

— Ու նաև ավելացրել եմ,— շարունակեց Կովացցան,— որ դուք, ձեր անկեղծ պատանեկան հավատի կույր խանդավառությամբ համակված, մտածում եք, թե ձեր ապացույցներն ու բացատրություններն իսկապես հասկանալի են:

— Հասկանալի՛ են, հասկանալի՛ են,— գոռացին շատերը:

— Ո՛չ, դրանք չեն կարող հասկանալի լինել,— հաստատապես հայտարարեց Կովացցան:— Ինչպե՞ս եք ցանկանում, որ դրանք հասկանալի լինեն, եթե դուք ինքներդ այնքան էլ լավ չեք հասկանում:

Այստեղ մի ամբողջ փոթորիկ բարձրացավ:

Լանդո Լաուրենտանոն, Բրունոն, Լինո Ապեսը և մյուս պատվիրակները դժվարությամբ վերականգնեցին հանգստությունը: Սպիրիդոնե Կովացցան՝ գլուխը խոնարհած և աչքերը փակ, սպասում էր, որ աղմուկը դադարի, հետո հարմար պահ ընտրելով, սեղմեց ձեռքերը և բարձրացրեց շատ վեր, Է՛լ ավելի խոնարհեց գլուխը, դժվարությամբ թեքեց իր ծանրաշարժ մարմինը, ապա այն շարժումով տարածեց ձեռքերը, ուղղվեց և, գրեթե լալով, սկսեց աղերսել.

— Ինձ մի ստիպեք, սինյորներ, ձեր կեղծ ինքնասիրության հանդեպ երեսպաշտ հարգանքի պատճառով ինձ մի՛ ստիպեք թեկուզ նույնիսկ մի քիչ մեղմել ճշմարտությունը զիջումներով, որոնցից և՛ դուք, և՛ ես պիտի ամաչենք, և որոնք այս պահին կարող են կործանարար լինել: Ձեր մեջ քանի՞ մարդ իսկապես գիտի Մարքսին: Չորսը, հինգը, ո՛չ ավելի: Անկեղծ եղեք: Բոլոր մյուսները պարզ չեն տեսնում, թե ինչ են ուզում, այո՛, այո՛, հենց այդպես է. հմայված սենտիմենտալ սոցիալիզմով, որն իրեն զարդարում է արդարության ու հավասարության մոգական խոստումներով, նրանք չեն տեսնում և այն միջոցները, որ հարկավոր են նպատակին հասնելու համար: Բայց գիտե՞ք արդյոք դուք, թե ինչ բան է արդարությունը սիցիլիական գյուղացիների ու հանքափորների համար: Դա բռնություն է, արյուն, դա կոտորած է: Որովհետև օրինական արդարությանը նրանք երբեք չեն հավատացել. չէ՛ որ միշտ տեսել են, որ այն գործում է ի վնաս իրենց: Ես լավ եմ ճանաչում նրանց՝ սիցիլիական գյուղացիներին ու հանքափորներին, այո՛, այո՛, իհա՛րկե, ձեզանից շատ ավելի լավ: Դուք ինքներդ եք ձեզ մոլորության մեջ գցում: Դուք նրանց ասում եք հողի ընդհանուր օգտագործման մասին, իսկ նրանք թարգմանում են՝ հողի բաժանում, այսքանը՝ ինձ, այնքանը՝ քեզ: Դուք նրանց ասում եք՝ աշխատավարձի վերացո՞ւմ, Իսկ նրանք թարգմանում են՝ Է՛յ դուք, տերեր, բացեք ձեր քսակները, հաշվենք փողերը, այսքանը՝ քեզ, այսքանը՝ ինձ:

— Ճիշտ չէ՛, ճիշտ չէ՛,— գոռաց ինչ-որ մեկը:

— Թույլ տվեք ավարտել,— շնչահեղձ լինելով, բացականչեց Կովացցան:— Մյուս պատրանքը, որ դուք ձեզ համար ստեղծում եք, ձեր միություններում ցուցակագրվածների թիվն է. երեք հազար՝ այստեղ, չորս հազար՝ այնտեղ, ութ հարյուր, հազար, տասը հազար... Դուք ինչպե՞ս եք հաշվում նրանց: Որտե՞ղ են նրանք՝ այդ մարդիկ: Նրանք անմարմին ստվերներ են, սինյորներ, անունների շարք ոչինչ ավելի: Այո՛, ես էլ գիտեմ, հենց որ սկսվում է ցուցակագրումը, մեկը օրինակ է տալիս, և բոլորը ոչխարների նման նրա ետևից: Իսկ դուք ուզում եք դրան լուրջ նշանակություն տալ, հենվել այն բանի վրա, ինչը հանդիսանում է հոտային բնազդի արդյունք: Իրականում ինչքա՞ն ժողովուրդ կմնա ձեր միություններում այն բանից հետո, երբ եռալով կգոլորշիանա առաջին խանդավառությունը: Հենց որ պահանջում եք շաբաթական չնչին անդամավճարը, մեծ մասը մաղվում է: Իսկ այսօր ստեղծված միություններից քանի՞սը չեն կազմալուծվի վաղը: Թույլ տվեք, սինյորնե՛ր, այդ ասել այն մարդուն, որը չի խաբում ձեզ և չի խաբվում ինքը: Գիտեմ, որ դուք այսօր ուզում եք վճռել՝ պե՞տք է, թե՞ պետք չէ խրախուսել զանգվածների անհապաղ գործողությունների դիմելու միտումը: Գիտեմ, որ ձեզանից ոմանք դեմ են դրան, և ես նրանց խելամիտ եմ համարում ու պաշտպանում եմ: Իսկական ժողովրդական շարժում, ինչպես դուք եք այն հասկանում, Սիցիլիայում դեռ չի կարող ծագել: Եթե գտնում եք, որ ձեր ջանքերով այն արդեն սկսվել է, դուք մոլորված եք: Իմ կարծիքով, դա ավելին չէ, քան ժամանակավոր տենդ, անգիտակից մարդկանց զառացանք:

Սպիրիդոնե Կովացցան նստեց՝ բորբոքված դեմքից սրբելով քրտինքը, այն ժամանակ, երբ տասը-տասնհինգ մարդ վեր կացան միաժամանակ, որ ձայն խնդրեն:

Կատալդո Սկլաֆանին դիտումնավոր կերպով սկսեց խոսել բարձր ձայնով, նրա դեմքը ծռմռվում էր ավելի շատ դառնությունից, քան վրդովմունքից. մեղադրանքն անձամբ նրան չէր դիպչում, բայց նա տառապում էր այն մտքից, թե որևէ մեկը կարող է մեղադրել իրեն և իր հետ նաև իր ընկերներին:

— Ես չեմ պաշտպանվում,— ասաց նա,— ես պարզապես զեկուցում եմ: Ինչքա՞ն միություններ գոյություն ունեն: Այստեղ ներկա են ամենանշանակալից միությունների ղեկավարները, և նրանցից յուրաքանչյուրը կարող է հայտնել մեծարգո Կովացցային, թե ինչպես են հաշվվել անդամները և որքան են նրանք: Կենտրոնական կոմիտեի վերջին տվյալների համաձայն, եղել են հարյուր վաթսուներեք հաստատուն կերպով կազմակերպված միություններ և հիսունհինգը՝ կազմակերպման փուլում: Հետևաբար, դա Սիցիլիայի աշխատավորների մեծ բանակ է, և չի կարելի նույնիսկ ասել, թե այդ բանակում ամենից ավելի ինչով պիտի հիանալ՝ խանդավառությա՞մբ, գիտակցականությա՞մբ, թե՞ կարգապահությամբ, որով բոլորը ենթարկվում են կենտրոնական կոմիտեի ամեն մի նշանին, Յուրաքանչյուր միության ղեկավար կարգադրությունները հաղորդում է մասնաճյուղերի անդամներին, սրանք էլ իրենց հերթին՝ շրջանների ղեկավարներին, իսկ նրանք՝ փողոցների ղեկավարներին. մի ակնթարթում, գիշեր թե ցերեկ, միության բոլոր անդամները կարող են տեղեկանալ: Եվ եթե վաղը աշխատավորները ոտքի ելնեն, ամբողջ սիցիլիական ժողովուրդը կարծես համակված կլինի կրակե հոսանքով: Քանի որ արդեն երկար տարիներ Սիցիլիայում ծածուկ մարմրում է կրակը՝ հենց այն ժամանակից, երբ պարզվեց, որ նա քար է, որին Իտալական սապոգը հարված հասցրեց՝ իբն հատուցում այն ամենի դիմաց, ինչ նա արել էր հայրենիքի, այսպես կոչված, միասնության և անկախության համար: Ինչո՞ւ ասել, թե Սիցիլիայում ընդամենը ինչ-որ մի տարի է, ինչ սկսվել են խոսակցությունները սոցիալիզմի մասին: Մի՞թե տասնութ տարի առաջ այնտեղ կազմակերպված չի եղել Ինտերնացիոնալի մասնաճյուղ: Եվ մի՞թե այն ժամանակից մշտապես չեն տպագրվում կուսակցական թերթերը. մի՞թե չեն ստեղծվում ակումբներ, խմբակներ, բջիջներ, և հենց որ ծնունդ առավ միությունների ստեղծման գաղափարը, մի՞թե հին համախոհ ընկերները իսկույնևեթ չսկսեցին միավորվել: Ուրեմն ՝ ճիշտ չէ ասել, թե միությունների արագ կազմակերպումն արդյունք է միայն երիտասարդների համառ ու բոցաշունչ պրոպագանդայի, հողն արդեն վաղուց էր նախապատրաստված. մնում էր միայն միավորումը, ուղղությունը: Իսկ երիտասարդներին բավական էր կանչել նրանց և ցույց տալ ուղին, որով արդեն քանի տարի ընթանում էր ուրիշ երկրների բանվորները պարզած պրոլետարիատը: Սիցիլիայի գյուղացիներն ու ձեռքերով մոտ վազեցին՝ գոչելով. «Դո՛ւք եք, դո՛ւք եք մեր իսկական բարեկամները», և հետևեցին նրանց՝ ուրախ սրտով ու լի գիտակցությամբ այն բանի, ինչ պատրաստվում էին անել:— Եվ այդ գիտակցությունն ապացուցելու համար Կատալդո Սկլաֆանին հուզմունքով խոսեց այն ճառերի մասին, որ Պալերմոյի վերջին կոնգրեսում արտասանել էին Պյանադել-Գրեչիից ու Կառլեոնեից եկած մի քանի կանայք. այդ ճառերն ակնհայտորեն ապացուցում էին, որ գիտակցության զարթոնքի համար հարկավոր են ո՛չ թե ակադեմիական կուլտուրայի արհեստական լույս, ո՛չ թե դպրոցական տեսաբանումներ, այլ վշտի ու անարդարության ամենօրյա պրակտիկան, և այդքան չարիքների դեմ ամենահասարակ ու ամենագործուն միջոցը միավորումն է: Սենտիմենտա՞լ սոցիալիզմ: Բայց ստեղծարար ուժը հենց զգացմունքն է, ոչ թե դոկտրինայով զինված սառն դատողությունը: Ի՞նչ կարող էր նշանակել իրավունքի վերացական գաղափարը, երբ կար անհրաժեշտության անմիջական ու ճնշող զգացողությունը: Զգալ իր իրավունքը այն ուժով, ինչ ուժով զգում են քաղցը. դա այդ իրավունքի տեսական ապացուցումից հազար անգամ ավելի է նշանակում: Բացի այս, հիմա այդ զգացումը դարձել է պարզ ու հաստատ գիտակցություն և դրսևորվում է ամենատարբեր միջոցներով: Իսկական եղբայրական զգացմունք է արթնացել գյուղացիների ու բանվորների մեջ, երբ վերջին ժամանակների բազմաթիվ ձերբակալություններից հետո ազատության մեջ մնացած ընկերներն սկսեցին հոգ տանել և՛ կալանավորների, և՛ նրանց ընտանիքների մասին. դժբախտության մեջ ընկած մեկին բոլորի շուտափույթ օգնությունը, և՛ ուշադրությունը, և՛ եղբայրական հոգացողությունը: Իսկ երեկոները հերթապահների շրջագայությունները քաղաքների ու գյուղերի փողոցներում ու գինետներում, որ գինուց գրգռված եղբայրները չիջնեն մինչև բռնություն:

— Ահա թե ինչպիսիք են այդ խռովարարները, մեծարգո Կովացցա,— կարծես որպես եզրափակում բացականչեց Կատալդո Սկլաֆանին՝ վրդովմունքից ու հուզմունքից շողացող աչքերով:— Ամաչե՛ք ձեր մեղադրանքներից: Ահա այսօր մենք՝ երկու սերունդ, երես առ երես

հանդիպել ենք այստեղ՝ Հռոմում: Նայեցեք ինչ տեսարան են ներկայացնում ծերերը և նայեցեք մեզ՝ երիտասարդներիս: Վաղը կառավարությունը, որը հովանավորում է նրանց, ովքեր հայրենիքի հանդեպ իրենց սահմանափակ ու ցուցադրական սերը դարձրել են վահան, որպեսզի պաշտպանվեն ժողովրդի զայրույթի քարերից, զորքեր կուղարկի Սիցիլիա, որպեսզի խեղդի մեր՝ երիտասարդների կողմից արթնացված նոր կյանքի թրթիռը: Մինչև այսօր կենտրոնական կոմիտեի մեծ մասը, այդ թվում՝ նաև ես, դեմ էր անհապաղ գործողություններին: Բայց շուտով, ես այդ նախազգում եմ, կգա օրը, երբ այսքան երկար զսպված ցասումը կպոռթկա, և մենք՝ ղեկավարներս, չենք կարողանա զսպել այն՝ ինքներս մեզ չկործանելով:

Լանդո Լաուրենտանոն, որ նստած էր Լինո Ապեսի կողքին, Սկլաֆանիի երկար ճառը լսում էր՝ գլուխը կախած, ջղային մատներով քաշքշելով մորուքը և արագ հայացքներ նետելով շուրջը: Այդ ժողովն իր տանը նրան թվում էր ինչ-որ ներկայացման գլխավոր փորձ: Բոլոր այդ պատանիները իրենց համար դերեր էին հորինել, և Լանդոյին թվում էր, թե նրանք այնքան հաճախ են կրկնել այն, որ անգիր էին հիշում և արտասանում էին շինծու խանդավառությամբ: Պակասում էր միայն անտիկ երգչախումբը, որ մնացել էր Սիցիլիայում: Օ՛, այո՛, Կատալդո Սկլաֆանին լավ էր խոսում, առաքելական խանդավառությամբ. նա, թերևս, արժանի էր ջերմ ծափահարությունների, երգչախմբի գովասանքին, եթե այն ներկա լիներ այստեղ, ինչպես հունական ողբերգությունում: Սիրահարված լինելով իր դերին, նա կարող էր խաղալ այն ամբողջ հետևողականությամբ, նույնիսկ հրապարակում հրացանների փողերի առաջ, և եթե ձերբակալվեր, ապա՝ դատավորների առաջ դատավարության ժամանակ: Ինչո՞ւ միայն ինքը՝ Լանդոն, չի կարողանում իր համար դեր ընտրել: Ինչո՞ւ նորից ու նորից իր կրծքի տակ բարձրանում է բողոքը, հուսահատական ներքին բողոքը. ոչ, սա այն չէ: Եվ, իսկապես, ի՞նչ էին ուզում նրա բոլոր ընկերները: Հիմա Սիցիլիայում՝ շատ քիչ բան: Նրանք ուզում էին, որ դիմադրության համար միավորված աշխատավորները, հողերի և հանքահորերի տերերի դեմ պայքարելով, կարողանան հասնել կյանքի ավելի մարդկային պայմանների. ուզում էին ոչնչացնել սովի դատապարտող վարձատրությունը, վաշխառությունը, կաշառքները, անարդարացի կոմունալ հարկերի կեղեքումը. ուզում էին, որ բանվորների համար ապահովվի նույնիսկ ո՛չ թե բարեկեցություն, այլ թեկուզ ամենակենսական պահանջների բավարարումը: Համեստորեն հարմարվելով տեղական պայմաններին, նրանք ուզում էին կազմակերպել արտադրական ու սպառողական կոոպերատիվներ, որպեսզի մի քանի տարի անց հաղթեն կղզու քաղաքային ու շրջանային ընտրություններում, հաղթեն թեկուզ մի ընտրական շրջանում, որպեսզի քաղաքային ու գյուղական ինքնավարության մարմիններում և պատգամավորների պալատում ունենան աղքատների պաշտպաններ և նրանց ամենասուր կարիքների ազդարարներ: Ահա թե ինչ էին ուզում նրանք: Հիացմունքի արժանի հավատ, հաստատունություն, որով նրանք վարում էին պաշտպանության ու հատուցման այդ գործը: Իսկ ի՞նչ էր ուզում ինքը: Հիմա ուրիշ ոչինչ չէր կարելի ո՛չ ցանկանալ, ո՛չ անել: Ուրեմն այդ ամբողջ կիրքը, այդ ամբողջ այրումը մի բանի համար էր՝ հասնել արդյունքների, որոնց մայրցամաքում գուցե բոլորն արդեն ձեռք բերված էին համարում. որ աշխատանքից վերադարձած տանջահար ընտանիքի հայրերը հարթավայրերում ցրված տնակներում, ձեթի ճրագների լույսի տակ չտեսնեն օջախը մարած և իրենց դալուկ-հողագույն երեխաներին՝ սոված փորով քուն մտած, որ նրանք, ովքեր աղքատությունից կորցրել են մարդկային կերպարանքը, կարողանան շտկվել և իրենց մարդ զգալ: Արդարացի ագրարային օրենքը, հողային պայմանագրերի նույնիսկ ոչ վատ արմատական բարենորոգումը, չնչին աշխատավարձերի որոշ հավելումը, ազնիվ պայմաններով կիսարարությունը, ինչպես Տոսկանիայում, Լոմբարդիայում և ինչպես իր տիրույթներում, կարող էին բավարարել ու հանգստացնել այդ թշվառներին՝ առանց ամպագոռգոռ սպառնալիքների, առանց այն բանի, որ ղեկավարներն իրենց առաքյալներ, մարգարեներ, քաջարի ասպետներ ներկայացնեին: Գրեթե ավետարանական հեզությամբ ազնիվ, համեստ ձգտումներ, որոնք պետք է իրականացնել քայլ առ քայլ, հետզհետե և իրենց ոտնահարված իրավունքների պարզ գիտակցությամբ: Կարո՞ղ էր նա բավարարվել այդպիսի փշրանքներով և չմտածել ուրիշ բանի մասին, Ո՛չ: Ո՛չ: Դա նրա համար չափազանց քիչ էր: Եթե կարողանար դրանով բավարարվել, նա կտար իր ամբողջ հարստությունը և, ի՞նչ

իմանաս, գուցե այդ ժամանակ, աղքատ դառնալով, իր զոհաբերության մեջ գոհացում գտներ իր անհանգիստ հոգու համար: Բայց հիմա՝ ո՛չ, դա նրա համար բավական չէր: Նա հանկարծակի շրջվեց Լինո Ապեսի կողմը, և այդ ժամանակ նրա սրտում դաժան ծաղրանքով հնչեցին Լեոպարդիի տողերը «Երգեր առ Իտալիա»-ից.

Ձե՛նք: Ձե՛նք: Ձե՛նք: Կկռվեմ

Ես մենակ և մենակ կմեռնեմ:

Հենց այդ պահին դահլիճում որոտացին ծափահարությունները, որ պսակում էին Կատալդո Սկլաֆանիի պերճախոս մենախոսությունը, և Լանդոն ակամա վեր թռավ իր տեղից ու բոլորի հետ գնաց սեղմելու հռետորի ձեռքը:

Բայց Լինո Ապեսը՝ սոկրատյան ժպիտը շրթունքներին ու աչքերում, տեղից բարձրաձայն հարցրեց.

— Իսկ ի՞նչ ենք որոշում, սինյորներ:

Թվում էր՝ ամեն ինչ վերջացած է. խնդիրը կատարված էր, և ամեն մեկն իրեն ոգևորված էր զգում, կարծես ուսերից նետել էր ինչ-որ ծանրություն: Ապեսի հարցից հետո բոլորը զարմացած նայեցին մեկ-մեկու աչքերի և տանջալից ճիգով, մի տեսակ երկչոտ վերադարձան իրենց տեղերը:

— Բնությունը, սինյորներ,— շարունակեց Լինո Ապեսը՝ հենց որ նրանք նստեցին,— բնությունը իր մշտնջենական գոյության մեջ կարող է ոչինչ չվճռել և նույնիսկ ոչինչ չի կարող վճռել, որովհետև, եթե վճռի, ապա ամեն ինչ վերջացած կլինի: Իսկ մարդը, ընդհակառակը, պետք է վճռի. նրան անհրաժեշտ է վճռել կամ գոնե հավատալ, որ ինքը ինչ-որ բան վճռել է: Այսպիսով, սինյորներ, մենք ի՞նչ վճռեցինք: Մենք մարդիկ ենք և դրա համար էլ հավաքվել ենք այստեղ: Բայց ես կարդում եմ ձեր աչքերում: Դուք ոչ մի ցանկություն չունեք վճիռ ընդունելու, թեև մշտնջենական էլ չեք: Դուք ուղևորություն եք կատարել, շատերը կշարունակեն այն մինչև Ռեջո-Էմիլիա: Այստեղ՝ Հռոմում (իսկ ոմանք այստեղ են եկել առաջին անգամ), կարելի է այնքան բան տեսնել, բայց ժամանակը քիչ է: Ներեցե՛ք, որ ես այսպես եմ խոսում. դուք գիտեք, որ ես հակված եմ բծախնդրության և չեմ թաքցնում այդ: Ես քիչ եմ հավատում մարդկանց վճիռներին, որովհետև բոլորն էլ մի որոշ պահի, ետ նայելով, դառնությամբ օրորում են իրենց գլուխները խոստովանում՝ «Այո՛, մենք հարստացել ենք», կամ էլ՝ «Այո՛, մենք արել ենք այս ու այն, բայց ի վերջո ի՞նչ վճռի ենք հանգել»: Իրականում, ճիշտն ասած, մենք երբեք ոչինչ չենք վճռում, որովհետև մենք մասն ենք հավերժական բնության: Բայց այդ չի նշանակում, որ այստեղ այսօր՝ այս պահին չպետք է հանգենք որևէ, թեկուզև պատրանքային վճռի: Ես ձեզ ասում եմ, որ դա անհրաժեշտ է, որովհետև այլապես քաղաքի, գյուղերի ու ծծմբահանքերի բանվորներն իրենք կվճռեն՝ առանց ձեր լուսավորյալ ղեկավարության և առանց ձեր համաձայնության: Բայց դա կլինի կույր խառնակչություն, վայրի խռովություն, իսկ այն կարող է դառնալ կազմակերպված, շրջահայաց, կանոնավոր շարժում: Հետևանքնե՞րը: Սինյորներ, դրանք սովորաբար կանխատեսում է նա, ով ծնված չէ գործելու համար: Դուք գտնո՞ւմ եք, որ հիմա գործելու համար բավականաչափ հիմքեր կան: Այդ դեպքում մտածենք գործելու եղանակների ու միջոցների մասին: Հիմա ամբողջ Սիցիլիայում չկան զինված ուժեր: Երեք-չորս վաշտ հետևակ, որ օպերետային ժանդարմների նման, ըստ անհրաժեշտության, այսօր այստեղ են, վաղը՝ այնտեղ: Եվ նրանց դեմ, ինչպես դուք եք ասում, աշխատավորների մի ամբողջ համախմբված բանակ է: Նույնիսկ անհրաժեշտություն չկա զինելու այն. բավական է զինաթափել այդ աննշան թվով զինվորներին, և դուք կդառնաք դրության տերը: Ո՞չ: Դուք ասում եք՝ ո՞չ: Սպասեք: Թողեք ես ասեմ... աստվա՛ծ իմ, թողե՛ք ինձ հանգել թեկուզ որևէ վճռի:

Բայց նա այլևս չկարողացավ խոսել: Երբ գորտերը խաղաղ ու անշարժ նստում են ճահճի եզերքին, և նրանցից մեկը հանկարծ շրմփում է ջրի մեջ, բոլոր մյուսները նույնպես երկու-երկու, երեք-երեք սկսում են սուզվել՝ շարունակ ուժեղացող կռկռոցով ու ճողփյունով. այդպես էլ Ապեսի ունկնդիրները. սկզբում հմայված էին նրա տպավորիչ խոսքերով, բայց ահա գտնվեց նրան առաջին առարկողը, և այդ ժամանակ նրա ճառն սկսեցին ընդհատել երկուսը, երեքը միասին, և գրեթե իսկույնևեթ Լինոյի կողմնակիցների ու նրա հակառակորդների միջև բռնկվեցին բուռն վեճեր:

Մի կողմից Լանդո Լաուրենտանոն աղերսագին գոչում էր.

— Ճի՛շտ է, չէ՞ որ պետք է ինչ-որ բան անել, բարեկամներ. . .

Մյուս կողմից՝ Բիկսիո Բրունոն ու Կատալդո Սկլաֆանին բղավում էին.

— Ո՛չ: Ո՞չ: Դա խենթություն է: Ի՞նչ եք ասում: Բոլորի կործանումն է:

Եվ այդ ժամանակ դահլիճում քաոս տիրեց. ճիչեր, մեղադրանքներ, առաջարկներ: Ոմանք, և դրանց թվում՝ Կովացցան, վրդովված հեռացան ժողովից:

Հետո հանկարծ ներկաներից մեկը սաստիկ վախեցած ներխուժեց այն խմբի մեջ, որտեղ ամենից ուժեղ էր բորբոքվում վեճը, և՝ «շը՛շշ» ասելով, ձեռքերը վեր բարձրացրած, հայտարարեց.

— Սինյորներ, մեզ հետևում են:

Բոլորի հայացքները ուղղվեցին պատուհաններին:

Այգու ցանկապատից այն կողմ իսկապես կանգնած էին երկու տղամարդ և, փորձելով թաքնվել ծառերի ետևում, նայում էին պատուհաններին: Չելսինա Պինյան նույնպես նայեց պատուհանին և, հենց որ տեսավ այդ երկուսին, բռնկվեց կրակի պես:

— Դե ո՛չ,— դուրս թռավ նրա բերանից:— Ես նրանց գիտեմ... Նրանք ինձ են սպասում:

Այդ պայծառ ժպիտից ու շողացող աչքերից վեճը դադարեց, կարծես բոլորին անհնար թվաց շարունակել այն, երբ այդ ծաղկուն աղջիկը, որի վրա նրանք բոլորը իբր ուշադրություն չէին դարձնում, հանկարծ առաջ եկավ, կարծես ցանկանալով հայտարարել՝ ահա՛ և ես, վերջացնելու ժամանակն է, ինձ սպասում են...

Քիչ անց, երբ, բացի Լինո Ապեսից, բոլորը գնացին, Չելսինան մոտեցավ Լանդո Լաուրենտանոյին և, ցույց տալով նրանցից մեկին, ովքեր իրեն սպասում էին ցանկապատից այն կողմ, հարցրեց.

— Դուք նրան չե՞ք ճանաչում: Նա ձեր ազգականն է:

— Իմ ազգակա՞նը,— զարմացած հարցրեց Լանդոն, որը չէր էլ կասկածում այդպիսի ազգականի գոյության մասին:

— Այո՛, Անտոնիո Դել Ռեն,— հաստատեց Չելսինան:— Ձեր զարմուհի Աննայի՝ սինյոր Ռոբերտո Աուրիտիի քրոջ որդին:

— Ինչպե՞ս,— բացականչեց Լանդոն:— Իսկ ինչո՞ւ նա ներս չմտավ:

Չելսինան նկատեց, որ այդ հարցը տալով, Լաուրենտանոն անմիջապես շփոթվեց, և աղջիկն այդ շփոթությունը բացատրեց յուրովի, այսինքն՝ որ Լանդոն, անցողիկ սիրային կապ կասկածելով նրա և իր զարմիկի միջև, ափսոսաց, որ տհաճ հարց տվեց, և Չելսինան շտապով պատասխանեց.

— Գիտե՞ք, նա մերոնցից չի: Նա ապրում է այստեղ՝ Հռոմում, դոն Ռոբերտոյի տանը և սովորում է համալսարանում: Բայց վախենում եմ, որ...

Չելսինան լռեց, նկատելով, որ Լաուրենտանոն՝ ցրված, մտահոգ, իրեն չի լսում, և փոխեց թեման.

— Ես ձեզ ողջույններ եմ բերել Լիցիոյից, Ջիրջենտիի միությունների նախագահներից և իմ հորից: Ես էլ եմ գտնում, եթե կարող եմ արտահայտել իմ կարծիքը, որ հիմա դեռ գործելու ժամանակը չէ: Ջիրջենտիի միություններում մոտ ութ հարյուր մարդ կա: Բայց դրանք միայն անուններ են. քչերն են գալիս, քչերն են վճարում:

— Այո՛, այո՛, իհա՛րկե,— իր ամբողջ տգեղ դեմքով ժպտալով, միջամտեց Լինո Ապեսը, կարծես ուզում էր աղջկան հասկացնել տալ, որ ինքը խոսեց բոլորին այստեղից քշելու միակ մտադրությամբ:— Գործե՞լ: Դա խենթություն կլինի: Ես դա կատակով ասացի, սինյորինա:

Չելսինայի աչքերը փայլատակեցին: Նա պատրաստ էր Լինո Ապեսին ապտակ հասցնել, բայց ժպտաց: Հետո ձեռքը պարզեց Լանդո Լաուրենտանոյին, և ասաց.

— Ցտեսություն: Ձեզ ազատում եմ իմ ներկայությունից:

Օլինդո Պասսալակուան, որ quondam տենոր էր, առերևույթ՝ երգեցողության ուսուցչուհի Լելլա Պասսալակուա-Բոնոմեի ամուսինը, իսկ ըստ էության՝ վերակացու Բոնոմեի մասնավոր երաժշտական դպրոցում, երկու ժամվա ընթացքում բոլոր միջոցներով փորձում էր զսպել Անտոնիո Դել Ռեի համր, զայրալից անհամբերությունը: Նա խոսում էր կիսաձայն, և եթե Անտոնիո Դել Ռեն ժամանակ առ ժամանակ փնչացնելով ուրիշ կողմ էր նայում, նա աճապարանքով հանում էր կնոջ ժամացույցը և աչքերի, հոնքերի, բերանի արտահայտիչ դիմախաղով ասում. «Խե՛ղճ մարդ, նա իրավացի է». և իսկույն էլ դրա ետևից՝ արդեն ուրիշ դիմախաղով, «Ես այստեղ եմ: Մի՛ վախենա: Դիմացի՛ր»: Ու շարունակում էր խոսե՛լ, խոսե՛լ, խոսե՛լ՝ կարծես պատվերով, բայց բոլորովին առանձնահատուկ, խիստ զվարճալի և գրեթե դժվար հասկանալի ձևով՝ ինչ-որ պոռթկումներով, ոստյուններով՝ ակնարկների խորխորատների վրայով, որոնք վերաբերում էին նրա անկանոն գոյության հեռավոր ու արտասովոր իրադարձություններին: Եվ ամեն մի ոստյունը, ամեն մի պոռթկումը ուղեկցվում էր դեմքի ու ձայնի հանկարծակի փոփոխություններով՝ բացականչություններով, ծամածռություններով ու ձեռքերի շարժումներով՝ արտահայտելով մերթ զայրույթ, մերթ ուրախություն, մերթ սպառնալիք, մերթ կարեկցանք, մերթ քամահրանք, որոնք շշմեցնում ու զարմացնում էին ամեն մեկին, ով թեկուզև չգիտեր, թե այդ ամենն ինչին է վերաբերում, այնուամենայնիվ, որոշ ժամանակ առանց ծիծաղելու ականջ էր դնում նրա խոսքերին: Ունկնդրի այդ զարմանքը լիովին բավարարում էր Օլինդո Պասսալակուային, նա դրա մեջ տեսնում էր արդյունքն այն բանի, որ իր խոսքը տպավորություն է գործել: Եվ հովհարի պես բացելով մատները, նա քաշում էր, քաշում, քաշքշում իր երկար, գանգուր, սպիտակ մազերը՝ աշխատելով ծածկել գագաթի լերկ տեղերը, իսկ հետո պարզած ցուցամատով թեթևակի դիպչում էր բեղերի սև ներկած աղեղներին, կարծես այդ սովորական շարժումով վերջակետ էր դնում կամ էլ ցանկանում էր համոզվել, որ խոսակցության բորբոքված պահին դրանք չեն պոկվել...

— Բավական կլինի մի չնչին գումար, բացարձակապես չնչին գումար,— ասաց նա:— Մտածի՛ր, դե, ի՞նչ մեծ բան է, ի՞նչ մեծ բան է օրական երկու խղճուկ լիրան: Այո՛, գուցե ավելի պակաս: Նա ինչքան է քամուն տալիս այս խարդախների համար, որոնք ցեխ են շպրտում, դե, այդ ինչպե՞ս է կոչվում... այո՛, իհա՛րկե... նրա տոհմական զինանշանին: Խոզե՛ր: Իսկ իմ աները միասնական Իտալիայի համար կործանեց «Կարոլինո» թատրոնը Պալերմոյում: Իսկ դա գանձ էր: Բավական էր պարզապես «Իոնե»-ն... Խե՛ղճ Պետրելլա... Իսկ դա իմ հաղթաձին էր... Այնտեղ ամեն ինչ ոչնչացավ այդ խոզերի պատճառով: Լսո՞ւմ ես ինչպես են գոռում: Իսկ չէ՞ որ նա իշխան է, այո՛, սինյորներս... Անամոթնե՛ր... Ես ասում եմ՝ օրը երկու լիրա արժանավոր գործի համար... Ամենազոր աստվա՛ծ, այնպիսի հարստություն, ինչպիսին նրանն է: Իսկ նա ամեն ինչ բաշխում է: Դու այդ մասին գիտե՞ս: Ստրկական պայմանագրեր, ստրկություն՝ ամբողջ կյանքում... Ես տասը տարվա ընթացքում եղել եմ և՛ հաղթաերոս, և՛ ստրուկ.. Իսկ չէ՞ որ բավական է, որ նա միայն ասի՝ «այո»: Ես գործի կանցնեմ, Նինո, և

հանձն կառնեմ մի տարուց էլ պակաս ժամանակում նրան դուրս բերել Իտալիայի լավագույն բեմերը: Դու ինձ գիտես, Նինո, ես ոչ մի ջանք չեմ խնայի, ինձ... ինձ չեն ընկճի... այդ ինչպե՞ս է ասվում: Frangar: Ախր ես դա լատիներեն գիտեի: Խոսք... բայց եթե ես խոսք եմ տալիս... Իսկ ինձ ի՞նչ է մնում: Դա միակ բանն է, որին ես տիրապետում եմ: Սկզբնական շրջանում հարկ կլինի նրան կերակրել մի քիչ ավելի լավ, դա արդեն անպայման: Բայց եթե նա կարողանա... Իսկ այստեղ նաև այդ անպետք ժամանակակից երաժշտությունը:

Հենց որ Օլինդո Պասսալակուան լսեց, թե ինչպես է խոսում Չելսինան, իսկույնևեթ նրա մեջ հայտնաբերեց հրաշալի սոպրանո:

— Եվ այդպիսի երեսիկով՝ դա արդեն հանաք բան չէ: Աղմկալից հաջողություն, երդվում եմ ձեզ: Նա աղմկալից հաջողություն կունենա: Ռոբերտոյի և քո հանդեպ ունեցած հարգանքից՝ իմ աներձագին բավական կլինի մի չնչին վճար, թեկուզև օրական կես լիրա՝ սննդի համար... Լավ կերակրել նրան... և մի տարուց էլ պակաս ժամանակում... կասես՝ ո՞չ:

Անտոնիո Դել Ռեն զայրալից ցնցվում էր՝ հենց որ Պասսալակուայի խոսքերից թեկուզ մեկը ճեղքում անցնում էր նրան տանջող մտքերի եռքի միջով: Նախորդ օրը ճաշի ժամանակ Չելսինան անսպասելիորեն եկել էր նրա մոտ՝ քեռի Ռոբերտոյի տուն: Շշմած ու խլացած մեծ քաղաքի կյանքից, նոր տպավորություններից, շրջապատի մարդկանց սովորություններից, որ նրա համար տարօրինակ էին, Անտոնիոն, իհա՛րկե, չէր էլ կարող փորձել կատարելու իր խոստումը, որ տվել էր աղջկան մեկնելուց առաջ՝ նրա համար անմիջապես որևէ աշխատանք գտնել Հռոմում: Այնուամենայնիվ գրել էր աղջկան, որ շուտով, հենց որ մի քիչ շրջապատին ծանոթանա, կսկսի փնտրել. սակայն հոգու խորքում նա համոզված էր, որ դա իրեն ոչ միայն չի հաջողվի, այլև ինքը ո՛չ եռանդ կգտնի, ո՛չ միջոց նույնիսկ փորձելու համար կատարել իր խոստումը, քանի որ ինքն իրեն բացարձակապես մոլորված էր զգում և մտածում էր, թե այդպես էլ չի անցնի իր շփոթությունը, որից գրեթե կտրվում էր շունչը, և շուրջն ամեն ինչ դառնում էր երերուն ու անշոշափելի: Եվ այն, իսկապես, ոչ միայն չէր անցնում, այլև հետզհետե աճում էր՝ քեռու տանը տիրող անկայունության, արտառոց վիճակի և անկարգության մեջ: Ինչպե՞ս է կարողացել քեռին հարմարվել այդպիսի կյանքին, որոշակի կարգուկանոն ստեղծել իր համար այդ իրարանցման մեջ, ամուր հող գտնել և արմատներ գցել նրա մեջ: Ռոբերտոն հասկանում էր Օլինդո Պասսալակուային, սինյոր Լալլային (Նաննային, ինչպես կոչում էին նրան) ու նրա եղբայր Պիլադ Բոնոմեին. նրանք գնչուներ են. առաջինը ո՞վ իմանա որտեղից էր հայտնվել, մյուս երկուսը թատերական իմպրեսարիոյի երեխաներ էին. նրանք Պալերմո էին ընկել հազար ութ հարյուր վաթսուն թվականից առաջ և ներքաշվել լիբերալ շարժման մեջ, որ համակել էր երիտասարդ սինյորներին՝ Պալերմոյի արիստոկրատ ընտանիքներից, որոնք «Կարլինո» թատրոնի մշտական այցելուներն էին: Մի քանի տարի անց թատրոնը վառվեց, և այդ ժամանակ՝ յոթանասուն թվականի դեպքերից քիչ անց, նրանք՝ «հեղափոխության թշվառ զոհերը», ինչպես ասում էր Օլինդո Պասսալակուան, որը ձայնից զրկվեց այն բանից անմիջապես հետո՝ հենց որ ամուսնացավ իմպրեսարիոյի աղջկա հետ, վերադարձան Հռոմ և պալերմոցի մի բարեկամի հանձնարարականով հանկարծ հայտնվեցին քեռի Ռոբերտոյի մոտ: Կուրորեն գնալ ամենաանհայտ ճակատագրին ընդառաջ, նետվել ամեն մի արտասովոր ձեռնարկության մեջ, ամեն րոպե խելացնոր վճիռներ ընդունել՝ այս ամենը նրանց համար նույնն էր, ինչ մի բաժակ ջուր խմելը: Այսօր՝ այստեղ, վաղը՝ այնտեղ, այսօր՝ առատ, վաղը՝ աղքատ, միայն թե որևէ կերպ ապրել օրը մինչև երեկո՝ չնահանջելով բազմապիսի արգելքների առաջ, ամենածանր զոհաբերությունների առաջ, բալաստի նման ծովը նետելով ամենաթանկագին և ամենասրբազան բաները, միայն թե փրկեն նավը, որն առանց կողմնացույցի, առանց խարիսխի, առանց ղեկի այս ու այն կողմ էին նետում փոթորկալի ծովի ալիքները՝ նրանց խառնափնթոր կյանքը: Եվ, սակայն, ամենազարմանալին, ծիծաղելին ու միաժամանակ հուզիչն այն էր, որ ոչ մի բանի լուրջ չվերաբերվելով, նրանք հոգով մնում էին մաքուր, կենսուրախ, միշտ համակված բարի պոռթկումներով, գթասիրտ, շռայլ, պատրաստ ամեն ինչ անելու ուրիշների համար, սփոփելու, օգնելու, բռնկվելու խանդավառությամբ՝ հանուն ամեն մի ազնիվ գործի: Իսկ այն ամենի համար, ինչ նրանց կյանքում արատավոր էր, այլանդակ, ամոթալի, նրանք, հավանաբար, լիովին անկեղծորեն,

իրենց պատասխանատու չէին համարում: Անհրաժեշտություն է, ոչինչ չես կարող անել. պետք է պարզապես թեթևակի կկոցել մի աչքը, իսկ եթե այդ քիչ է, ապա և երկուսը: Ի՜նչ արժանապատվությամբ էր, օրինակ, Օլինդո Պասսալակուան, ճաշելով Ռոբերտոյի սեղանին, հիշեցնում նրան, որ չմոռանա Նաննային կաթիլներ տալ սրտի համար կամ էլ սեղանից շուտ վերցնել մրգերով լի սկահակը, որպեսզի Նաննան դեղձի կլեպը շնչափողն ընկնելուց չհազա և, աստված մի՛ արասցե, արյուն չգա նրա քթից, ինչպես դա մեկ անգամ չէ, որ պատահել է, իսկ հետ ամուսնական մահիճը հանձնում էր Ռոբերտոյին՝ բարի գիշեր մաղթելով կնոջն ու բոլորին ընդհանրապես՝ բարի երազներ, և՛ դեղձանիկներին, և՛ վանդակի կեռնեխին, և՛ Կոկո թութակին, որ նստած էր իր ձողին, և՛ օղակի վրայի թոքախտավոր Տիտի կապկին, և՛ Ռանիետա կատվին, և՛ երկու ծեր շներին՝ Բոբբիին ու Պիչչինիին, հաշմանդամներին, որ երկուսով ապրում էին զամբյուղում, մեկը կույր էր, իսկ մյուսի սրբանոսկրն էր վնասված. հետո ցուցամատերով թեթևակի դիպչում էր բեղերի ծայրերին և, բարոյականության անհողդողդ պահապանի խիստ տեսք ընդունելով, գնում էր քնելու իր աներձագ Բոնոմեի երաժշտական դպրոցում, որ Պանտեֆիչի փողոցում էր: Եվ ի՜նչ արտասովոր հավաքույթ էր այդ սեղանը, որի շուրջն ամեն երեկո նստում էին չորս կամ հինգ կողմնակի մարդիկ՝ հենց նոր հրավիրված կամ էլ իրենք իրենց հրավիրած՝ պատգամավորներ, քեռի Ռոբերտոյի կամ Կորրադո Սելմիի բարեկամները, երաժշտության երկարամազ ուսուցիչներ և երգիչներ ու երգչուհիներ: Ինչպիսի՜ խոսակցություններ էին վարում այնտեղ, ինչպիսի՜ կատակներ էին թռցնում բերաններից: Եվ ի՜նչ ցավալի էր նրանց մեջ տեսնել քեռի Ռոբերտոյին, այն քեռի Ռոբերտոյին, որի մեջ իր հեռվից նա նկատել էր նույն հայացքներն ու զգացմունքները, որ ունեին տատն ու մայրը (և ոչ իզուր, որովհետև հիմա քեռին ամեն ժամ ապացուցում էր այդ՝ ցուցաբերելով նրա նկատմամբ ամենաքնքուշ հայրական ուշադրություն ու հոգատարություն), ի՜նչ ցավալի էր քեռի Ռոբերտոյին տեսնել այդ մարդկանց մեջ՝ այդ խոսակցություններին, այդ կատակներին մասնակից, և ժամանակ առ ժամանակ, երբ զարմիկի թախծալի, զարմացած, ոչինչ բաց չթողնող հայացքը հանդիպում էր նրա հայացքին, նշմարել այդ դեմքին սրտնեղության արտահայտություն կամ շփոթված ժպիտ: Մի՞թե այդպիսի քեռին կարող էր ղեկավարել նրան: Անտոնիոն կարող էր իրեն ամեն ինչ թույլ տալ՝ վստահ, որ քեռու կողմից ո՛չ դիտողություն կլինի, ո՛չ կշտամբանք: Նա ցուցակագրվել էր ճշգրիտ գիտությունների ֆակուլտետում, բայց ինչպե՞ս պարապել այդ տանը, որը առավոտից մինչև երեկո ճռվողում էր, եռում, աղմկում՝ դայլայլներով ու գեղգեղանքներով, սոլֆեջիոյով ու վոկալիզներով: Եվ, ի վերջո, համալսարանն այնքան հեռու էր նրանց տանից, բազմաթիվ ուրախ անհոգ ուսանողները հենց առաջին օրվանից ներշնչել էին նրան անհաղթահարելի զզվանք, ձանձրույթ, ճնշվածության զգացում ու սրտնեղություն. և ամեն պատրվակով նա չէր հաճախում դասախոսություններին: Նա երևակայում էր և իսկույն էլ դրանում համոզվում, թե այդ տղաներից որևէ մեկի մտքով կանցնի ծիծաղել իր վրա, որ այնպես լուրջ է և նման չէ նրանց. այդ ժամանակ ի՞նչ կկատարվի: Այդ մտքից սեղմվում էին նրա բռունցքները: Մի որևէ ակնարկ, մի կայծ, և այդպիսի ջանքերով զսպված կատաղությունը բուռն կերպով կպոռթկա: Նա այնպիսի զգացողություն ուներ, որ կարծես իր ներքին կյանքը փակվել էր բոլոր կողմերից, և ահա անգործության համար խղճի խայթերից գրգռված և իր համար որևէ թեթևացում գտնելու հրամայական անհրաժեշտությունից՝ կբռնկվի: Բայց ինչպե՞ս դուրս գալ այդ անգործությունից, եթե հիմա նա համոզված էր, որ այլևս ոչինչ չի կարող անել, որովհետև իր ուղեղում ամեն ինչ խճճվել է խառնվել: Եվ որտե՞ղ գտնել սրտի թեթևացում: Նա խենթի նման չափչփեց Հռոմը ծայրից ծայր՝ գրեթե ոչինչ չտեսնելով, խորասուզված ինքն իր մեջ , մռայլ անբավականության մեջ՝ ամենքից և ամեն ինչից. մտքերը բուռն մնում էր փոթորկվում էին նրա գլխում՝ չհասցնելով պարզվել. և նա ամայացած ու մի տեսակ խենթացած. նրա դիմագծերը սրվում էին, ու բռունցքները սեղմվում էին այնպես, որ եղունգները խրվում էին ափերի մեջ:

Վերջապես նրան մաշող խուլ զայրույթից, այդ դառն, մռայլ անգործունեությունից նրա ուղեղում դանդաղ սկսեց ծլարձակել մի հրեշավոր գաղափար, որ ագահաբար սնվում էր կյանքի հանդեպ ունեցած նրա ամբողջ վիրավորվածությունից, որ ծնունդ էր առել նրա մեջ և աճել մանկությունից: Այդ գաղափարը նրա գլխում ծագեց, երբ մի անգամ երեկոյան սեղանի շուրջն սկսեցին խոսել ռումբերի տեսակների մասին, որ Ֆրանչեսկո Կրիսպին բերել էր

Սիցիլիա հազար ութ հարյուր վաթսուն թվականի հեղափոխության նախօրեին, և դրանց պատրաստման մեթոդների մասին: Կորրադո Սելմին ասաց, թե ինքն անձամբ գիշերը մի քանի հատ պատրաստել է մի ցախանոցում, որ վարձել էր Ֆրանչեսկո Ռիզոն Գանչա վանքի մոտ: Լավ ծանոթ լինելով ժամանակակից քիմիային, նա ծիծաղում էր և ապացուցում, թե ինչքան պարզունակ էր դա պատրաստված, ինչքան ավելի մահաբեր արդյունքի կարելի է հասնել հիմա շատ ավելի փոքր ծավալի ռումբերի օգնությամբ:

— Է՛հ,— այդ ժամանակ բացականչեց Կորրադո Սելմին:— Ա՛յ, կարելի կլիներ զվարճալի տեսարան սարքել՝ պառլամենտում այդպիսի մի բան նետել ամբիոնից նիստերի դահլիճը:

Անտոնիոն հանկարծ զգաց, որ այդ գաղափարը հափշտակեց իրեն, տիրեց ամբողջությամբ: Փողոցներում վրդովմունքի աղաղակները՝ բանակում հայտնաբերված խարդախության առթիվ, և նախ՝ կասկածանքը, իսկ հետո՝ նաև համոզվածությունը, որ և՛ քեռի Ռոբերտոն, և՛ Սելմին խառնված են այդ սկանդալային գործին, հետզհետե ավելի ու ավելի մռայլ լուրերը, որ գալիս էին Սիցիլիայից, նրան ստիպում էին որոշում ընդունել. հարկավոր է ձևեր ու միջոցներ փնտրել՝ շուտափույթ կերպով ի կատար ածելու այդ մտահղացումը: Այսպիսով, գոնե իր համար ամեն ինչ վերջացած կլինի: Եթե քեռի Ջուլիոն, որ շտապ մեկնել է Սիցիլիա, չկարողանա տատի եղբորից փող ստանալ, քեռի Ռոբերտոն կձերբակալվի. և այդ ժամանակ՝ կործանում, անդունդ... Թող այդպես լինի, բայց նախ... Այո՛, այո՛, դա արդարացի վրեժ կլինի, դա ելք կտա ամբողջ դառնությանը, որ թունավորել է նրա ու նրա մերձավորների կյանքը. իսկ այնտեղի՝ Սիցիլիայի, իր ընկերներին՝ շատախոսներին, նա ցույց կտա, որ մենակ կարողացավ անել այն, ինչ նրանք բոլորը միասին երբեք չէին հանդգնի:

Եվ ի՞նչ: Հենց այդ պահին Չելսինան հայտնվեց Հռոմում: Երբ աղջիկը կանգնեց նրա առաջ՝ ժպիտը շփոթությունից շառագունած դեմքին, նա շատ խիստ սրտնեղություն զգաց: Նրան թվում էր, թե հիմա ոչինչ չի կարող կատարվել, ոչինչ չպետք է շարժվի՝ մինչև որ ինքը չտա առաջին մղումը. և բոլորը պիտի անշարժ կանգնեն իրենց տեղերում, կարծես քարացած՝ սպասումի մեջ մի վիթխարի ու սարսափելի գործի, որ ինքը պիտի անի: Բացի այդ, ի՞նչ միջոցներով է եկել Չելսինան, եթե ինքը ոչինչ չի արել, որ կանչի նրան, Լանդոյի փողերով. . . այո՛, այն փողերով, որ նա մերժեց քեռի Ռոբերտոյին... Ջիրջենտիի միությունները... Հիմարությո՛ւն: Եվ նա կատաղում էր՝ տեսնելով, թե ինչպիսի սրտագին ընդունելություն է գտել Չելսինան այդ Պասսալակուաների կողմից, որոնք լիովին բնական են համարում, որ աղջիկը այդպիսի պատրվակով մենակ ճանապարհորդում է մինչև Հռոմ ու, փնտրելով, գտնում է իր սիրեցյալին՝ հաստատ վճռելով այլևս երբեք չվերադառնալ Սիցիլիա: Անտոնիոն մերթ կարմրում էր, մերթ գունատվում, երբ նրանք նայում էին իրեն խորամանկ ու ներողամտորեն ծիծաղող աչքերով, որոնց մեջ պարզ ընթերցվում էր. «Այստեղ ի՞նչ վատ բան կա: Ամեն ինչ հասկանալի է: Դու ամաչելու բան չունես»: Եվ նույնիսկ քեռի Ռոբերտոն ժպտաց իր սովորական թախծալի ժպիտով, որով նա ուզում էր թաքցնել ձանձրույթը, որ հարուցում էր նրա մեջ ամեն մի նոր իրադարձություն, միայն ձանձրույթը: Եվ նա էլ ոչինչ վատ չէր տեսնում այն բանում, որ աղջիկը եկել է իր տուն, իր զարմիկի մոտ և այն էլ այնպիսի պահի, երբ ուր որ է լայն կբացվի անդունդը, որ պատրաստ է կուլ տալու նրանց բոլորին: Պասսալակուա զույգի համար այդ անդունդը միանգամայն դատարկ բան էր, մեկն այն բազմաթիվ կենսական դժվարություններից, որ պետք է հաղթահարել. և այստեղ նրանք կուրորեն հույս էին դնում Կորրադո Սելմիի վրա: Նրանց համար լիովին բավական էր այն հանգստությունը, որին հարկադրում էր իրեն քեռի Ռոբերտոն, որպեսզի չհուզի իր Նաննայի հիվանդ սիրտը: Կորչե՛ն, կորչե՛ն այդ «սինյոր Անտոնիո»-ն ու «դուք»-ը, որոնցով Չելսինան սկսել է դիմել իր սիրեցյալին: Նա ո՞ւմ աչքերին է ձգտում թոզ փչել: Ավելի լավ կլիներ մեկմեկու «դու» ասեին: Ի՞նչ հմայիչ է նա... Այո՛, գեղեցկուհի, ծիծաղի՛ր... Էլ ե՞րբ ծիծաղել ամբողջ սրտով, եթե ոչ այդ հասակում՝ այն էլ այդպիսի աչքերով և այդպիսի սիրունիկ դեմքով... Ո՞ւ, ի՞նչ ձայն է: Հապա լսե՛ք... զանգա՞կ է: Նա երբեք չի՞ փորձել իր ձայնը: Երբեք չի՞ երգել, նույնիսկ այնպես, կատակով: Երբե՞ք: Երբե՞ք: Ուրեմն հարկավոր է փորձել հիմա, այս րոպեին... Չի կարող պատահել, որ ձայն չունենա, երբ այսքան նրբերանգներ կան, այսքան ելևէջումներ... Դե՛, դե՛, որևէ երգ, այնտեղ՝ հյուրասենյակում, արա՛գ, արա՛ գ... Ահա հաջողությունը: Ամենալավ միջոցը, որպեսզի այլևս Սիցիլիա չվերադառնա: Միջոցնե՞ր

սովորելու համար: Բայց չէ՞ որ այստեղ է սինյորա Լալլան և Բոնոմեի երաժշտական դպրոցը: Դասերը՝ ձրի, նոտաներն ու դաշնամուրը՝ ձրի... միայն մի փոքրիկ գումար՝ սնվելու համար: Եվ Օլինդո Պասսալակուան, իմանալով, որ Չելսինան սոցիալիստ է, Լանդո Լաուրենտանոյի համախոհը, առաջարկեց նրանից խնդրել այդ գումարը: Ո՞չ: Իսկ ինչո՞ւ ոչ: Սա արժանավոր գործ է: Գրողի ծոցը ավելորդ փափկանկատությունն ու ամաչկոտությունը, որ մարդկային խղճին խանգարում են բարիք գործել: Կարելի կլինի Լաուրենտանոյին առաջարկել այդ փոխատվության հատուցումը առաջին հոնորարից. բայց ո՛չ, սինյորներ, դա շահագործողների համար է, վաշխառուների, ազնվականին այդպիսի բան չի սազի... Մանրություն է: Լսելով այդ խոսքերը, Անտոնիոն ամբողջովին կծկվել էր աթոռի վրա: Նա ուզում էր բռնել Չելսինայի ձեռքն ու գոռալ աղջկա երեսին. «Հեռացի՛ր, վերադարձի՛ր այնտեղ, որտեղից եկել ես: Միայն խենթերն են պարում անդունդի եզրին: Հեռացի՛ր , հեռացի՛ր: Իսկ անդունդը լայն կբացվի իմ կամքով: Աշխարհին ամայացել է, ես ինքս էլ չկամ: Ամեն ինչ վերջացած է»: Եվ, չնայած դրան, նա Պասսալակուայի հետ Չելսինային ուղեկցեց մինչև Լանդոյի վիլլան. հիմա էլ սպասում էր, որ ժողովը վերջանա, և աղջիկը դուրս գա: Չելսինան հանգիստ կերպով խոստացել էր Անտոնիոյին, որ ինքը Լաուրենտանոյին նույնիսկ չի ակնարկի փոխատվության այդ անհեթեթ գաղափարի մասին. ինքը կուզենար միայն խնդրել նրան, որ այդպիսի կապեր ունի Հռոմում, որևէ գործ գտնել իր համար, Չելսինան որոշել էր փոխատվություն խնդրել նրա՝ Անտոնիոյի համար: Պատանին նախորդ երեկոյան հայտնել էր աղջկան, թե ինչ սարսափելի վիճակում է գտնվում իր քեռին:

— Իսկ դո՞ւ,— հարցրել էր աղջիկը:

Պատասխանը եղել էր ձեռքի հուսահատական, զայրալից շարժումը: Աղջկա մտքում կասկած ծագեց, թե նա թաքցնում է ինչ-որ սարսափելի մտադրություն, բայց հենց իր դեմ, և փորձեց սթափեցնել, սրտապնդել նրան: Չելսինան եկել էր վառ երազանքներով ու հույսերով, լի հավատով իր նկատմամբ, պատրաստ հաղթահարելու ամեն մի խոչընդոտ: Դե ի՞նչ, հիմա նրանք երկուսով կդիմագրավեն բոլոր դժվարություններին ու միասին կպայքարեն դրանց դեմ. աղջիկը նրան կոգևորի իր խանդավառությամբ: Հնարավո՞ր է արդյոք, որ նա, այդպիսի ազգականներ ունենալով, կործանվի: Սո՛ւտ է: Բարբաջանք: Բոլոր դժվարությունները բաժին կընկնեն իրեն: Իսկ ահա ինքը դրանց վրա ծիծաղում է:

Բայց վիլլայից Չելսինան դուրս եկավ խիստ զայրացած:

— Շաղակրատություն է ամեն ինչ: Խեղկատակնե՛ր... Գնացի՛նք, գնացի՛նք,— ասաց նա՝ թեթևակի հրելով իր ուղեկիցներին:

— Դուք չխոսեցի՞ք,— զգուշավոր ու վշտացած հարցրեց Պասսալակուան:

— Իսկ ինչի՞ մասին խոսեի,— միանգամից վրա բերեց Չելսինան,— Նրանք բոլորը խենթեր են, տխմարներ, հիմարներ, բթամիտներ... Շաղակրատություն, շաղակրատություն, արտասանություն, տափակ կատակներ, որ փորձում են սրամտության տեղ հրամցնել... Բավակա՛ն է: Բավակա՛ն է: Ես գոնե ինչ-որ բան շահել եմ, ընկել եմ այստեղ՝ Հռոմ: Ի սեր աստծո, Նինո, այդպիսի արտահայտություն մի՛ տուր դեմքիդ: Գնա՛, Նինո... այո՛, այո՛, ավելի լավ է գնաս, քան այսպես վշտացնես ինձ:

Օլինդո Պասսալակուան վազեց Անտոնիոյի ետևից, որը՝ զայրույթից բորբոքված, մազերն ամբողջապես գզգզված, արագացրեց քայլերը: Պասսալակուան բռնեց նրան, ձեռքով կանչեց Չելսինային, որ շուտ մոտենա, շարժումներով ցույց տվեց, թե պետք է հանգիստ լինել և զգույշ: Բայց աղջիկը քայլում էր անշտապ և ժպտալով օրորում գլուխը՝ նրան հասկացնել տալով, թե ավելի լավ է թողնել, որ Անտոնիոն գնա:

— Բայց, ներեցե՛ք, դա խենթություն է... հանգստացե՛ք, երեխաներ: Դուք ինքներդ ձեզ միայն հիմարացնում եք... Ե՞լք: Ախր, իսկապես, չի կարելի չարանալ մինչև այդ աստիճան: Այդպես դուք, հավանաբար, ելք չեք գտնի: Բայց միշտ ելք կա, թանկագին բարեկամներ, ամեն ինչի դեմ դեղ կա՝ շատ կամ քիչ դառն, շատ կամ քիչ արմատական... բայց միշտ կա: Վախենալու բան չունեք... Սկզբում ասում են՝ «Ի՞նչ: Դա՞: Դա՝ երբեք, ո՛չ մի դեպքում»: Հետո...

թանկագիններս, ես հո գիտեմ: Դա էլ պետք կգա և էլի շատ բաներ... Եվ դրա համար էլ, դրա համար էլ, դրա համար էլ ես առաջարկում եմ՝ պայմանավորվենք, օրենքների համաձայն... ինչի՞ օրենքների... օրենքների՞... Մենք օրինավոր մարդիկ ենք, Նինո, չէ՞ որ դու գիտես, ես ձեզ խոսելու հերթ չեմ տալիս... ո՛չ... ո՛չ...

— Դու ի՞նչ ես անում: Դու ի՞նչ ես ուզում: Էլի ի՞նչ ես հորինել,— հարցրեց Չելսինան Նինոյին, որը կանգնել էր շնչակտուր, կատաղի տեսքով:— Վե՛րջ տուր: Դե, ինչո՞ւ ես գազազել... Իսկ ես, օրինակ, գոհ եմ ու հանգիստ: Դե՛, դե՛ ինչի՞ց սկսել, սինյոր Օլինդո: Իսկ դու. . . դու նայիր ինձ... չէ՛, չէ՛, նայիր ուղիղ աչքերիս... ա՛յ այդպես, ուղիղ աչքերիս... Դու հիշո՞ւմ ես, մեկնելուց առաջ:

Նինոյի ամբողջ դեմքը ծռմռվեց դաժան հուզմունքից, և նա միայն քիթը վեր քաշեց՝ բռունցքներն ամուր սեղմելով բերանին:

— Իսկ հիմա բավական է, գնա՛նք,— շարունակեց Չելսինան: Իսկ դուք, սինյոր Օլինդո, դուք պետք է ինձ ասեք միայն մի բան, բայց ասացեք մաքուր խղճով: Ես ձայն ունե՞մ:

Օլինդո Պասսալակուան մի քայլ ետ գնաց՝ ձեռքերի ափերը սեղմելով կրծքին.

— Բայց ես երգել եմ Պաստայի հետ, դուք գիտե՞ք: Լուկկայի հետ եմ երգել. ես երգել եմ զույգ Բրամբիլլաների հետ. . .

— Լա՛վ, լա՛վ,— ընդհատեց նրան Չելսինան:— Դուք ուրեմն վստա՞հ եք, որ ես ձայն ունեմ:

— Ոսկի ձայն,— բացականչեց Պասսալակուան:— Ոսկի՛, ոսկի՛, ոսկի՛, ասում եմ ձեզ: Եվ մի տարուց էլ պակաս ժամանակում դուք...

— Լա՛վ,— ընդհատեց նրան Չելսինան:— Դե, այդ դեպքում լսեցեք... ևս մի լավություն: Այն մասին, որ ձեռք բերենք մի փոքրիկ փոխատվություն, ինչպես դուք եք ասում, ես ինքս կհոգամ: Ես կարող եմ իմ ծառայություններն առաջարկել բոլոր կրպակներին, հյուրանոցներին, գրասենյակներին, բանկերին, սրճարաններին, որտեղ պետք է հաշվետար, վաճառող, թարգմանիչ և սատանան գիտի, թե էլի ինչ: Ես հաշվետարի վկայական ունեմ, գերազանցության վկայական, խոսում եմ երկու լեզվով՝ անգլերեն ու ֆրանսերեն... Բայց պատրաստ եմ դառնալու կարող, դերձակուհի: Չեմ կարողանում ձեռքս ասեղ բռնել: Ոչինչ, կսովորեմ... Կարող եմ դառնալ դպրոցական ուսուցչուհի, տնային դաստիարակչուհի, լեզուներ դասավանդել... Թույլ տվեք ինձ գործել: Իսկ հիմա գնացեք: Ինձ մենակ թողեք այս հմայիչ արարածի հետ: Ցտեսություն:

Եվ, Անտոնիոյին թևանցուկ անելով, վազեց.

— Ինձ ցույց տուր Հռոմը:

Բայց ի՞նչ տեսնել: Չելսինան, միևնույն է, ոչինչ չէր տեսնում, գլուխը պտտվում էր: Նա խոսում էր, խոսում, և աչքերը պայծառ շողում էին կտրիճաբար վեր ցցված փետուրով գլխարկի տակ. այրվող շուրթերը դողում էին, և նա անհոգ ծիծաղում էր այն մարդկանց երեսին, ովքեր շրջվում էին, որ նայեն իրեն:

— Նինո, լսի՛ր,— կամացուկ ասաց Չելսինան պատանու ականջին:— Տար ինձ հեռու, մի ամայի տեղ... շա՛տ հեռու... Ես ուզում եմ երգել... Ես պիտի լսեմ, թե ինչպես եմ երգում... Եթե դա ճիշտ լինի, սիրելի Նինո: Գնա՛նք: Գնա՛նք:

Ամբողջ ճանապարհին նա ճռվողում էր: Նախքան նշանավոր սոպրանո կամ կոնտրալտո դառնալը իրեն անհրաժեշտ է, իրեն անպայման պետք է ամուսին գտնել. չէ՞ որ իր անճոռնի ազգանունը բանի պետք չէ:

— Չելսա՝ այդ ոչինչ: Բայց Պինյա: Քո կարծիքով ինչպե՞ս է: Մտածենք... Դե՛, ասենք, Չելսա... հետո ինչպե՞ս... Չելսա Դել Ռե՞: Օ՛, աստված իմ, ո՛չ: Իմ քաղաքական համոզմունքները... Դել Ռե : Անհնար է, Նինո: Ես չեմ կարող դառնալ քո կինը, եթե դու այդպիսի թագավորական

ազգանուն ունես: Դե, դու ինքդ էլ չես ուզում... Թո՛ղ, իմ ձեռքին կապտուկ կլինի: Դու ուզո՞ւմ ես: Դե այդ դեպքում՝ Չելսինա Դել Ռե, և այլևս չխոսենք այդ մասին: Նորին մեծություն Չելսինան, զվարճալի է, գիտե՞ս: Նորին մեծություն Անտոնիո Առաջինի:

Երբ նրանք կանգնեցին, արևն արդեն մայր էր մտել Տիբերի աջ ափի հրաձգարանի մոտի զորանոցների ետևում: Նոճիներով պսակված Մոնտե Մարիոն բարձրանում էր ծիրանեգույն ու ծխոտ երկնքում, և՛ լայնարձակ հարթավայրը, որ ծառայում էր որպես ուսումնական զորաշարժերի դաշտ, և՛ գետի խոտածածկ ափերը բաց մանուշակագույն ստվերում արծնապակյա էին թվում: Ամեն ինչ կարծես քարացել էր լռին զարմանքով, և մարդկային ձայնից պարզորոշ լսվում էր խոխոջը ծանր ջրի, որ մեռելային կանաչ գույն ուներ ու մի քիչ ներկված էր երկնքի վարդագույն ցոլքերով, իսկ որոշ տեղերում՝ ծածկված լողացող տորֆի սև կտորների բծերով:

— Գեղեցի՜կ է,— շունչ քաշեց Չելսինան՝ շուրջը նայելով: Նրան համակեց այնպիսի զգացում, կարծես իսկական կյանքը հեռացել էր այդտեղից՝ իրենից հետո թողնելով միայն քնքուշ ու թախծալի պատրանք՝ հիշողություն կամ երազանք. և նա կամացուկ ավելացրեց:— Որտե՞ղ ենք գտնվում:

Հետո, շրջվելով Անտոնիոյի կողմը, որ կորացած նստել էր մի մեծ քարի և, ձեռքերը ծնկների արանքում սեղմած, նայում էր գետնին, Չելսինան հարցրեց.

— Քեզ ի՞նչ պատահեց: Մի՞թե դու ոչինչ չես տեսնում, էլ ոչինչ չես զգում: Գլուխդ բարձրացրո՜ւ, նայի՜ր... այս լռությո՜ւնը... գե՜տը... և Հռոմը... և ես այստեղ եմ, քեզ հետ:

Աղջիկը մոտեցավ նրան, ձեռքը դրեց գլխին, թեքվեց, որ նայի դեմքին, և ասաց.

— Դու դեռ քսան էլ չկաս, իսկ ես տասնութ եմ:

Անտոնիոն զայրացած շտկվեց, հրեց նրան, և այդ ժամանակ Չելսինան ջղային թոթվեց ուսերը և հեռացավ:

Լռություն տիրեց, և շուտով այդ լռության մեջ հեռվից Անտոնիոյին հասավ աղջկա հստակ, կրքոտ ձայնը: Նա երգում էր:

Խանդոտ կատաղությամբ սեղմելով բռունցքները, Անտոնիոն հուսահատությամբ պատկերացրեց նրան բեմում՝ գրիմավորված, ռամպայի լույսերի մեջ: Նա վեր կացավ և, ամբողջ մարմնով դողալով, մոտեցավ աղջկան.

— Գնա՛նք: Գնա՛նք: Գնա՛նք:

— Քեզ ինչպե՞ս թվաց,— հարցրեց Չելսինան՝ վստահող, երջանիկ ժպիտով:

Անտոնիոն սեղմեց աղջկա ձեռքերը և, ատելությամբ նայելով նրա աչքերի մեջ, ատամների արանքից տնքալով ասաց.

— Դու կկործանես քեզ:

Չելսինան բարձր ծիծաղեց:

— Ե՞ս,— ասաց նա:— Քանի որ ես քեզ պետք չեմ, ուրիշները կգան, նրանք էլ, թանկագինս, կկործանվեն: Իսկ ես թևեր ունեմ... Թևեր... Ես կթռչեմ:

Գլուխ III

Մեծարգո Ինյացիո Կապոլինոն ուրախությունից իրեն կորցրել էր: Նրա ընտրական տեղամասում հազարավոր բանվորներ՝ գազազելով քաղցից այն պատճառով, որ Սալվոն փակել էր հանքերը, սպառնում էին խռովությամբ, ավերածություններով,

արյունահեղությամբ: Աուրելիո Կոստան, որ հարվածի տակ էր ընկել այն խոստումների համար, որ տվել էր Սալվոյի անունից, հիմա հողագործության մինիստրությունում, լսելով պետական քարտուղարի օգնականի կատակային շաղակրատանքը, վրդովմունքից դողում էր, իսկ Կապոլինոն երանությամբ հրճվում էր այն անսպասելի սիրալիրությունից, որով նրան ընդունեց այդ գրեթե գերազանցության տիտղոս կրող սինյորը, որը նրա հետ խոսում էր վստահող եղանակով, ինչպես էին բարեկամի հետ:

Կոստայի համար կազմակերպելով այդ ընդունելությունը, Կապոլինոն վախենում էր. ինչպես անել, որ իր ցուցադրական հեղինակությունը՝ կառավարության անդամների հետ ունեցած անձնական բարեկամությամբ պարծենալը իրականում ծանրագույն վնաս չկրի, իսկ այստեղ՝ ընդհակառակը... Հասկանալի է, հասկանալի է, խենթեր են, որոնց պետք է զսպաշապիկ հագցնել: Հենց այդպե՛ս: Գոյություն ունեցող վարչակարգի թշնամիներն են այդ հանքափորները: Հանցագործ տարրեր, այո՛, իհա՛րկե, հրահրված՝ կախաղանի արժանի երկու-երեք ինքնակոչների կողմից: Ծայրահեղ միջոցնե՞ր: Ծայրահեղ խստությո՞ւն: Իհա՛րկե, շատ լավ է: Ուրիշ ոչինչ չի պահանջվում: Գործել անհողդողդ, սառնարյուն: Մարդկայնություն... Այո՛, իհա՛րկե... քանի դեռ այդ հնարավոր է... Այո՛, այո՛, թանկագին բարեկամ... Ուրիշ էլ ինչպե՞ս: Ուրիշ էլ ինչպե՞ս:

Եվ Կապոլինոն վատ թաքցված երկչոտությամբ մտադրվեց պարզել ձեռքը, որ ափով թեթև խփի պետական քարտուղարի օգնականի ծնկին կամ ուսին, ինչպես շնիկ, որը նախ՝ պոչը շարժելով, ողջունում է տիրոջը՝ վախենալով, որ նա տրամադրություն չունի, իսկ վերջում վճռում է պարզել թաթը՝ համոզվելու համար, որ նա հանգստացել է:

Իսկ ինչ վերաբերում է միավորում ստեղծելու ծրագրին, միավորում, որի մեջ անպայման պիտի մտնեն բոլոր ծծմբահանքերի տերերը... Այդ ծրագիրը կազմել է այստեղ ներկա ինժեները... արտակարգ բանիմաց մի երիտասարդ և ինչպիսի՛ համեստություն... լեռնային ինժեներների ազգային կորպորացիայի անդամ է, ավարտել է Փարիզի Ecole des mines-ը... ինչ վերաբերում է այդ ծրագրին, եթե նորին գերազանցություն պարոն մինիստրը արժանի համարի մի հայացք գցել... Ո՛չ... Այդ անհնա՛ր է: Ահա թե ի՛նչ... Հիմա ժամանակը չէ, այո՛, այո՛: Անհարմար պահ է, այո՛, այո՛: Միայն կրակին յուղ կլցնի, իհա՛րկե: Ուրիշ բան է պետք... Այո՛, իհա՛րկե, շատ լավ: Թանկագին բարեկամ, ուրիշ էլ ինչպե՞ս: Ուրիշ էլ ինչպե՞ս:

Կապոլինոն մինիստրության շենքից դուրս եկավ գրգռված ու գոռոզ՝ հնդկահավի պես, այնինչ Աուրելիո Կոստան, որպեսզի չենթարկվի նրան ապտակ հասցնելու կամ երեսին թքելու գայթակղությանը, ետ թողնելով նրան, արագացրեց քայլերը:

— Սինյոր ինժենե՛ր:

Կոստան չշրջվեց, միայն զայրույթով թափահարեց ձեռքը:

— Սինյոր ինժենե՛ր,— խոժոռված Կապոլինոն հասավ նրան:— Ներեցե՛ք, դուք ի՞նչ է, խելագարվե՞լ եք: Մի՞թե ավելի շատ բանի հույս ունեիք:

— Բաց թողեք ինձ, ի սեր աստծո,— պատասխանեց Աուրելիո Կոստան՝ ամբողջ մարմնով դողալով:— Ես վազում եմ հեռագրատուն: Թող այստեղ գա ինքը՝ դոն Ֆլամինիոն: Ես վաղը ետ եմ վերադառնում:

— Դե հանգստացե՛ք: Դուք, ի՞նչ է, լո՞ւրջ եք խոսում,— շարունակեց Կապոլինոն լկտի և դրա հետ մեկտեղ կատակային եղանակով:— Դուք ի՞նչ էիք սպասում պետական քարտուղարի օգնականից: Որ նա ձեր վի՞զը նետվեր: Չգիտեմ ավելի լավ էլ ինչպե՞ս պիտի լիներ: Ես այդպիսի ընդունելություն չէի սպասում...

— Է՛ է՛, գրողը տանի,— չար քմծիծաղ տվեց Կոստան՝ ամբողջ մարմնով դողալով:— Եթե դուք...

— Ես ի՞նչ,— արագ ընդհատեց Կապոլինոն:— Դուք ուզում էիք անորոշ խոստումնե՞ր: Մշո՞ւշ: Նա վարվում էր ինձ հետ, խոսում էր ինձ հետ, ինչպես բարեկամ, ինչպես իսկական

բարեկամ: Բայց չէ՞ որ ես օպոզիցիայի պատգամավոր եմ, և կառավարությունը ընտրությունների ժամանակ կատաղի կերպով հանդես եկավ իմ դեմ: Դուք այդ լավ գիտեք:

— Ես ոչինչ չգիտեմ,— գազազած պատասխանեց Կոստան:— Գիտեմ միայն մի բան՝ ես հրաման եմ ստացել, վերջնական հրաման, որ ծրագիրը հենց հիմա գոնե ներկայացվի կառավարության քննարկմանը: Իսկ դուք նույնիսկ մի խոսք չասացիք, դուք միայն հավանություն էիք տալիս...

Կապոլինոն կանգնեցրեց նրան և զննեց ոտքից գլուխ:

— Ես տղամարդո՞ւ հետ եմ խոսում, թե՞ երեխայի: Դուք որտե՞ղ եք ապրում: Դուք լրջորեն գտնում եք, որ այնպիսի պահին, ինչպիսին հիմա է, այս խառնաշփոթում կարելի՞ է սպասել ձեր ծրագրի քննարկմանը: Հրաման: Համբերե՛ք: Դուք ե՞րբ եք այդ հրամանն ստացել Ֆլամինիո Սալվոյից: Մեկնելուց առաջ, ճի՞շտ չէ՞: Բայց ներեցե՛ք, հիմա... ա՛խ, ահա՛ այն:

Կապոլինոն արհամարհանքի զայրալից շարժումով թղթերի կապից, որ պահում էր թևի տակ, դուրս քաշեց նորին պայծառափայլություն իշխան դոն Իպոլիտո Լաուրենտանոյի՝ դոննա Ադելաիդա Սալվոյի հետ պսակադրության հանդիսավոր արարողության հրավերը:

— Հավանաբար դուք էլ կստանաք,— ասաց նա:— Միայն թե հանգիստ նստեք և այլևս մի՛ մտածեք հրամանների ու ծրագրերի մասին:

— Ա՛խ, այդպես ուրեմն, դա խա՞ղ էր,— բացականչեց Աուրելիո Կոստան:— Խաղ ուրիշի կյանքի՞ հետ:

— Ո՞ւմ կյանքի հետ,— հարցրեց Կապոլինոն՝ ուսերը թոթվելով:

— Իմ կյանքի հետ: Իմ կյանքի հետ, այո՛, սինյոր,— զայրագին կրկնեց Կոստան:— Իմ կյանքի հետ, որովհետև ես պետք է վերադառնամ այնտեղ՝ Արագոնա, հանքափորների մոտ: Գիտե՞ք, թե նրանք ինձ ինչպես կդիմավորեն յոթ ամսվա հարկադրական գործազրկությունից հետո: Նրանք քաղցած գայլեր կլինեն: Բայց ինչո՞ւ Սալվոն ինձ ստիպեց խոստանալ բոլորին... նույնիսկ այստեղ, նույնիսկ հիմա՝ Նիկազիո Ինգրաոյին և իշխանի որդուն: Եվ ինչո՞ւ էր պետք այդքան հետազոտություններ անել:

— Թանկագին ինժեներ, ներեցե՛ք,— հանգիստ ասաց Կապոլինոն՝ կկոցելով աչքերն ու զսպելով ժպիտը,— դուք այսքան տարիներ շփվում եք Ֆլամինիոյի հետ և չեք նկատել, որ նա ո՛չ միայն գործարար մարդ է, այլև քաղաքագետ: Իսկ քաղաքականությունը հիմա (հասկանո՞ւմ եք, չէ՞ որ պետք է մի քիչ ապրել այդ միջավայրում), քաղաքականությունը, սինյորս, ըստ էության, ի՞նչ բան է: Աճպարարություն՝ խոստումներով, ու վերջ: Իսկ դուք, ներեցե՛ք, տնկվում եք ձեր ծրագրով հենց այնպիսի պահի...

— Ե՞ս,— բացականչեց Աուրելիո Կոստան՝ ձեռքերը սեղմելով կրծքին:— Ե՞ս: Տնկվո՞ւմ եմ:

— Այո՛, դո՛ւք,— վճռականորեն հաստատեց Կապոլինոն:— Կույրի նման, ներեցե՛ք: Եվ ես ասում եմ ոչ միայն այդ գործի մասին, ծրագրի: Դուք ոչինչ չեք տեսնում, ոչինչ չեք հասկանում... Շատ բան չեք հասկանում: Լսե՛ք ինձ, սինյոր ինժեներ. ոչ մի բանի մի՛ խառնվեք, վերադարձե՛ք այնտեղ, որտեղ դուք ձեր տեղում եք... Ինձ համար ցավալի է, հավատացե՛ք, ես անկեղծ եմ ասում, տեսնել, որ այնպիսի մարդը, ինչպիսին դուք եք, որի հանդեպ ես մեծ հարգանք եմ տածում, խաղում է մի դեր՝ այնքան... աննախանձելի, իսկապես, աննախանձելի դեր:

Աուրելիո Կոստան այդ ամենը լսում էր սկզբում մի տեսակ շշմած, բերանը բաց կանգնած. հետո նա գունատվեց և մի ակնթարթ խոնարհեց աչքերը. վերջապես, ի վիճակի չլինելով զսպելու վրդովմունքի պոռթկումը, սկսեց մռթմռթալ.

— Ինձ: Դուք այդ ի՞նձ եք ասում: Ի՞նձ... Բայց ես... Ախր ես ե՞րբ եմ. . . որևէ բանի խառնվել իմ սեփական կամքով: Ինձ միշտ քաշել-տարել են... քաշել են... մազերիցս, և դա ինձ

զզվեցրել է, եթե ուզում եք իմանալ: Ինձ զզվեցրել են բոլոր այդ ծրագրերը, խարդավանքները, քմահաճույքներն ու այլանդակությունները...

— Նույնիսկ այլանդակություննե՞րը,— ասաց Կապոլինոն:

— Այո՛, սինյո՛ր, այլանդակությունները,— շարունակեց Աուրելիոն՝ չկարողանալով իրեն զսպել:— Հենց այդպես, և եթե դուք դրանք չեք տեսնում, ապա ես տեսնում եմ: Ես երբեք ոչինչ չեմ ցանկացել, երբեք ոչնչի չեմ ձգտել, բացի մի բանից՝ աշխարհում հանգիստ ապրել, սեփական խղճով, անել այն, ինչ կարողանում եմ անել: Եվ բավակա՛ն է: Թող նա գա այստեղ և ինքը մտածի, թե իր տված այնքան խոստումներից հետո ինչպե՞ս ամեն ինչ կարգի բերել, որովհետև, կրկնում եմ, այնտեղ պետք է վերադառնամ ես, իսկ ինձ բոլորովին չի ժպտում այդ գործում սեփական կաշիս կորցնելու հեռանկարը: Ողջ լինեք:

Ինյացիո Կապոլինոն որոշ ժամանակ հայացքով հետևեց նրան, հետո, քմծիծաղ տալով, ցնցեց ուսերը և երկար օրորեց գլուխը: Եթե Կապոլինոն իմանա՛ր, որ իսկական պատճառը, որի համար Աուրելիո Կոստան ուզում էր, որ Ֆլամինիոն գա Հռոմ, հենց նույնն էր, որի համար ինքն ուզում էր, նա չգա. այսինքն՝ իր կինը:

Կիրքը, որով Կոստան պաշտպանում էր այդ ծրագիրը՝ մշակված այնպիսի խղճամիտ ջանադրությամբ, որ նա ներդնում էր ամեն ինչի մեջ, ինչ անում էր, և սրտնեղությունը այն բանից, որ այդ ծրագիրը չի իրականացվում, դեն է նետվում՝ առանց որևէ ուշադրության և գրեթե ծաղրված, ունեին իրենց աղբյուրը՝ ըստ էության, մի ուրիշ կիրք, սրտնեղություն՝ ուրիշ անարգանքից, որը նա գերադասում էր չնկատել՝ չցանկանալով նվաստանալ սեփական աչքերում: Այդ ծրագրի պատրվակով Ֆլամինիո Սալվոյի կողմից Ջիրջենտիից հեռացված՝ հենց այն ժամանակ, երբ Սալվոյի դստերը հայտնի դարձավ, որ Նիկոլետա Կապոլինոն ամուսնու հետ Հռոմում է, Աուրելիոն սլացավ այնտեղ, ինչպես ծարավից մեռնողն է վազում աղբյուրի մոտ: Նա հույս ուներ Նիկոլետային տեսնել այնպիսին, ինչպիսին տեսել էր վերջին անգամ Կոլիմբետրայում՝ իր նկատմամբ ուշադրությամբ լեցուն, խանդավառ ու գրգռիչ: Իսկ դրա փոխարեն... հրաշք է դեռ, որ Նիկոլետան չծաղրեց էլ: Նրա հայացքի խորքում կարդալով հիշողություն այն անմոռանալի երեկոյի մասին:

Կապոլինոն, որ վերջին օրերին բավականաչափ հիմքեր էր ստացել կնոջ վարքից գանգատվելու համար, կարող էր այդ նկատել. բայց ինչպես այն ժամանակ Կոլիմբետրայում՝ վիրավորվելուց հետո դեռ վիրակապված կրծքով, նա զգաց, որ իրեն ակնոց է պետք, այնպես էլ այստեղ նա ոչինչ չէր կարող տեսնել առաջվա պարզությամբ՝ ո՛չ իր մեջ, ո՛չ էլ իր շուրջը: Այդ հաճելի կատակը՝ գնդակը, որ անսպասելի ուժով դուրս թռավ Վերոնիկայի ատրճանակից, փոխեց Կապոլինոյի բոլոր պատկերացումները կյանքի մասին: Մինչև հիմա նրան թվում էր, թե ինքն է կատակով ծաղրում ուրիշներին, և կատակներն իրեն շատ լավ են հաջողվում. իսկ հիմա առիթ ունեցավ անսպասելիորեն և ամբողջ լրջությամբ զգալու, որ չնայած բոլոր ջանքերին, և ամեն տեսակ կանխատեսումներին հակառակ, կույր դիպվածը՝ ծաղրելով մարդկային ամեն հմտություն և ամեն տեսակ մարդկային պաշտպանություն, նույնպես կարողանում է կատակել այնպես, որ ուրիշներից խլում է կատակներով զբաղվելու ամեն մի ցանկություն: Եվ Կապոլինոն փոխվեց, դարձավ բավական լուրջ մարդ: Անմիջապես, կամ հուզմունքի պատճառով, կամ արյան կորստի, նրա տեսողությունը թուլացավ: Իշխան դոն Իպոլիտոն սիրալիր կերպով նրան ակնոց նվիրեց, մի լավորակ ակնոց՝ կրեոսկրե աղեղնակներով, շրջանակով ու թամբիկով: Եվ կյանքը, որ նա տեսնում էր այդ ակնոցի միջով որպես պատգամավոր, նրա վրա տարօրինակ տպավորություն էր գործում. իր ձեռքերը, շրջապատի բոլոր առարկաները, իր կինը, իր անցյալը, իր ապագան նրա առաջ պատկերանում էին ուրիշ ուրվագծերով , նոր լույսով գույնով, և այդ ամենից նա գրեթե հարկադրված էր անմիջապես ընդունել դեմքի ուրիշ, ավելի մռայլ արտահայտություն՝ ո՛չ այն է սառն, ո՛չ այն է՝ խիստ, որը հենց առաջին անգամից հարուցեց կնոջ ծիծաղի պոռթկումը.

— Օ՛, իմ խեղճ Նյացիո:

Եվ, իսկապես, նրա կինը արդեն ոչ մի կերպ չէր կարող իր կողքին տեսնել առաջվա Կապոլինոյին. այդ նոր ակնոցի ետևում Նիկոլետան փնտրում էր ամուսնու աչքերը և ոչ մի կերպ չէր կարողանում լրջորեն ընդունել նրան:

Ամուսնու հետ Հռոմ գալով տասնհինգ-քսան օրով, ամենաշատը՝ մեկ ամսով, Լելլեն այստեղ էր ապրում արդեն երեք ամիս և ոչ մի անգամ նույնիսկ չէր ակնարկել, թե պատրաստվում է մեկնելու: Խելագարվե՞լ էր նա, ի՞նչ է: Լելլեն զվարճանում էր: Նա վերջապես ընկել էր իր տարերքի մեջ: Վելլաների՝ Ֆլամինիո Սավոյի, նաև՝ առաջին կնոջ միջոցով որոշ չափով նրա ամուսնու ազգականների, տանը Նիկոլետան յուրային էր դարձել: Ֆրանչեսկո Վելլան սիրում էր շքեղությունը, դոննա Ռոզա Վելլան այնպիսին էր, ինչպիսին իր կրտսեր քույր Ադելաիդան էր՝ պարզամիտ, ծիծաղասեր, իսկ նրանց երկու երեխաները՝ Չիչչինոն ու Լիլիանան, այնպիսիները դուրս եկան, կարծես Նիկոլետան հատուկ պատվիրած լիներ նրանց. քույր ու եղբայր չէին կարող ավելի նրա ճաշակով լինել: Ի՞նչ սքանչելիք է այդ Լիլիանան: Չամուսնացած, թեև արդեն լիովին հասուն, զվարճալիորեն ոչ գեղեցիկ, ամբողջովին՝ պղպեղ, նա անբաժան էր իր եղբորից. քույրն ավելի խորամանկ էր, համարձակ, աշխույժ, քան եղբայրը և օգնում էր նրան, պաշտպանում էր նրան, ղեկավարում էր նրան, գիտեր նրա ամենախոր գաղտնիքները: Եղբայր ու քույր մտածում էին միայն զվարճությունների մասին, և Նիկոլետան նրանց շնորհիվ դարձել էր հոյակապ ձիավարուհի, արդեն երեք անգամ մասնակցել էր աղվեսի որսի. և՛ թատրոններ, և՛ տոնակատարություններ, և զբոսախնջույքներ՝ իսկական դրախտ: Լիլիանան միշտ լավ գիտեր, թե երբ պետք է սկսվի իր թեթև գլխացավը կամ որևէ այլ տկարություն, որպեսզի կարելի լինի լիակատար ազատություն տալ Չիչչինոյին և իրենց նոր ընկերուհի Լելլեին:

Ինչքան էլ մեծ լիներ Հռոմը, Կապոլինոն՝ որպես պատգամավոր, իր պատկառելի ակնոցով իրեն զգում էր որոշակի չափով նշանակալից դեմք և վախենում էր, որ կնոջ շվայտությունը կարող է ոմանց աչքին զարնել: Բացի այդ, նրան չէր կարելի հաշտվել դրա հետ այն պատճառով, թե ինչ կարող են մտածել ուրիշները, որքան հենց ոչ այնքան իր համար: Դառնալով պատգամավոր և ակնոց դնելով, նա ուզում էր, որ իր կինն էլ ծանրաբարո դառնա: Հռոմում՝ այդ Վելլաների միջավայրում, այն ազատության պայմաններում, որ ինքն ստիպված էր տալ կնոջը, դա անհնար էր: Հիմա, երբ դոննա Ադելաիդան ամուսնանում է, Ֆլամինիո Սալվոն, անկասկած, Նիկոլետայի կարիքը կունենա տանը՝ Ջիրջենտիում: Ինքնին հասկանալի է՝ դստեր համար, այդ հաճելի Դիանելլայի, որը մայր չունի: Եթե ոչ այսօր, ապա վաղը Սալվոն կգրի և Նիկոլետային կխնդրի վերադառնալ: Մեծարգո Ինյացիո Կապոլինոն անհամբեր սպասում էր այդ ժամին: Բայց ահա հիմա եկավ այդ և ամեն ինչ կփչացնի: Կկտրի արմատից: Նրա կյանքը... Վախենում է իր կաշվի համար... Ավանա՛կ: Բայց եթե այսքան տարիների ընթացքում նա նույնիսկ չի կարողացել նկատել, որ Դիանելլան սիրում է իրեն, որ իր ձեռքն է տրվում հարստություն և ի՛նչ հարստություն, ինչպես պիտի հասկանար, որ օպոզիցիայի պատգամավորը չէր կարող ավելի լավ ընդունված լինել պետական քարտուղարի օգնականի կողմից: Եվ Կոստան համարձակվեց մեղադրել իրեն հավանություն տալու մեջ... Դե, իհա՛րկե, նրան հաճույք պատճառելու համար ինքը պիտի պաշտպաներ հանքափորներին, կարծես վերջին ընտրությունների ժամանակ ինքը ջրի երես դուրս եկավ այդ պարոնների աջակցության շնորհիվ: Մի՞թե օպոզիցիայի պատգամավորը, պահպանողականը, գտնվելով կառավարության ու սոցիալիստների միջև, կարող է տատանվել, թե ում կողմը լինի: Բայց փորձեք այդպիսի բաների մասին դատողություններ անել մի մարդու հետ, որին բախտը հաճույքով տալիս է յուղոտ պատառ՝ լավ իմանալով, որ նա ատամներ չունի: Իսկ հիմա Ֆլամինիո Սալվոն՝ նախ այն բանի համար, որ շարունակի այդ ծրագրի հետ կապված կատակերգությունը, և երկրորդ՝ որպեսզի ծանոթանա Լանդո Լաուրենտանոյի հետ, որը չցանկացավ մասնակցել հոր հարսանիքին, անկասկած, կհայտնվի Կոստայի կոչով և իր հետ կբերի Դիանելլային, որը չի կարող մենակ մնալ Ջիրջենտիում: Եվ գուցե Դիանելլան որոշ ժամանակ մնա Հռոմում, հորաքրոջ մոտ, որպեսզի զվարճանա և... ո՞վ գիտի: Ֆլամինիո Սալվոյի աչքերը կարողանում են հեռուն տեսնել: Լանդոն երբեմն լինում է Վելլաների տանը և... ո՞վ գիտի: Եթե Դիանելլան մնա Հռոմում, հարկ կլինի հրաժարվել Լելլեի Ջիրջենտի վերադառնալու մտքից: Մտածելով այդ մասին,

Կապոլինոն բարկացած փնչացնում էր, իսկ նրա պատկառելի ակնոցը՝ կրեոսկրե շրջանակով, աղեղնակներով ու թամբիկով, քրտնում էր:

Մի շաբաթ էլ չանցավ, երբ Կապոլինոյի կանխատեսությունն իրականացավ. Ֆլամինիո Սալվոն Դիանելլայի հետ հայտնվեց Հռոմում:

Դիանելլան կարծես մեռել լիներ. Ֆլամինիո Սալվոն իր սովորության համաձայն լիակատար ինքնավստահություն էր դրսևորում. նրա շրթունքներին խաղում էր սառը ժպիտը, որ թեթևակի հեգնական էր թվում՝ կիսով չափ ցած կախված, մսոտ կոպերի տակից նայող հանդարտ հայացքի շնորհիվ: Նրանք իջևանեցին Վելլայի մոտ, որի ամբողջ ընտանիքը, Կապոլինո ամուսինների ու Կոստայի հետ, կայարանում դիմավորեցին նրանց: Դոննա Ռոզան, Չիչչինոն ու Լիլիանան դեռ երբեք չէին տեսել Դիանելլային:

— Աղջնա՛կս, դու երևի միայն օդով ես սնվում,— անմիջապես հարցրեց դոննա Ռոզան՝ տեսնելով նրա մոմեղեն դեմքը և շվարած, թախծալի հայացքը:— Ասենք, դա ինձ համար հասկանալի է: Այնպիսի անհեթեթ մարդու հետ, ինչպիսին քո հայրն է, այնքան էլ հեշտ չի: Ես դա ուղղակի նրա երեսին եմ ասում: Չէ՞ որ ես քո հորաքույր Ադալաիդայի նման չեմ և ամեն մեկին չեմ ենթարկվի: Ես մեծ եմ քո հորից, և նա պետք է ինձ հարգի:

— Ես միշտ համբուրում եմ քո ձեռքը,— ասաց դոն Ֆլամինիոն՝ խոնարհվելով:

— Հասկանալի է: Ահա՛ ձեռքս, համբուրի՛ր, համբուրի՛ր,— շարունակեց դոննա Ռոզան՝ պարզելով նրան իր կարճլիկ, թմբլիկ ձեռքը:— Իհա՛րկե, դու պետք է իմ ձեռքը համբուրես: Աղջի՛կս, մեզ հետ մի քիչ կապրես Հռոմում և կտեսնես՝ ես քեզ Սիցիլիա կվերադարձնեմ գեղեցիկ, հաստլիկ, քո աբբայուհի մոր նման: Նայի՛ր այս սինյորինային,— ավելացրեց նա՝ ցույց տալով Նիկոլետա Կապոլինոյին:— Նա քեզ ինչպե՞ս է թվում: Թաքցնելու բան չկա, լավ տեսք չունի, բայց այն ժամանակից, ինչ Չիչչինոն ու Լիլիանան բուժում են նրան ձիավարությամբ, տեսնո՞ւմ ես նրա աչքերը: Ինչքան կյանք կա այդ աչքերում: Վստահի՛ր քո զարմիկներին, թանկագինս: Ծիծաղի՛ր, ծիծաղի՛ր... Չէ՞ որ կյանքը հրաշալի բան է:

Տանը դոն Ֆլամինիոն քրոջը, փեսային, ազգականներին ու բարեկամներին երկար պատմում էր ամեն տեսակ հրաշքներ իշխանի դոննա Ադելաիդայի պսակադրության մասին, որ կատարել էր մոնսինյոր Մոնտորոն Կոլիմբետրայի մատուռում, Ջիրջենտիի հասարակության ամբողջ ծաղկի ներկայությամբ: Նորին արքայական մեծություն կոմս դի Կազերտան արժանի է համարել Լազուր ծովափից շնորհավորանքներով ու բարի ցանկություններով նամակ ուղարկել ինքնաձեռագիր ստորագրությամբ:

— Իսկ դա ո՞վ է,— հարցրեց դոննա Ռոզան՝ նայելով բոլորին, հետո ձեռքը զարկեց ճակատին:— Ախ, հա՛, հասկանալի է, դա Չիկկո Ռումբի եղբայրն է... Հիմա իմ փեսան բուրբոնյան է՝ մի ամբողջ զորքով: Ադելաիդան ինձ գրել է այդ մասին: Դե, պարզ է, որ խեղճ աղջնակի համար չի կարող ուրախ լինել բոլոր այդ արքայական մեծությունների հետ, որ նամակներ են գրում նրա հորաքրոջ հարսանիքի առթիվ: Շարունակի՛ր... շարունակի՛ր... Ախ, եթե այնտեղ կլինեի ես: Քո այդ իշխան Լաուրենտանոն...

Շարունակելով իր պատմությունը, դոն Ֆլամինիոն հայտարարեց, որ ինքն ամբողջ հոգով երախտապարտ է դոն Կոսմոյին՝ փեսայի եղբորը՝ հարսանիքին մասնակցելու համար և Լանդոյին՝ խորթ մորը շատ թանկարժեք նվեր ուղարկելու համար:

— Ես տեսել եմ այն,— ասաց Չիչչինոն:

— Նա մեզ հետ միասին է գնել,— ավելացրեց Լիլիանան:

— Ա՛խ, ուրեմն դուք լա՞վ եք ճանաչում երիտասարդ իշխանին,— հարցրեց դոն Ֆլամինիոն՝ շատ գոհ:

Եվ սկսեց հարձուփորձ անել ազգականներին, թե ի՞նչ փոխհարաբերությունների մեջ են նրա հետ, նա ինչպիսի՞ տեսք ունի, ինչպիսի՞ բնավորություն ունի, և, աշխատելով դստեր ուշադրությունը դարձնել նրանց խոսքերի վրա, չէր դադարում բարձրաձայն զարմանալ ու հիանալ այն ամենով, ինչ նրանք ասում էին: Բայց այնպիսի տխրություն էր համակել Դիանելլային, և աչքերում արտացոլվում էր այնպիսի անհասկանալի երկյուղ, որ հայրն իսկույն փոխեց թեման ու տոնը և ձևացրեց, որ զարմանում է, թե ներկա պահին, Սիցիլիայում կատարվող իրադարձությունների լրջության պայմաններում, իրադարձություններ, որոնց, ըստ լուրերի, մի քիչ խառնված է նաև երիտասարդ իշխանը, նա ինչպե՞ս կարող է գտնվել այնպիսի ուրախ տրամադրության մեջ, որի մասին ասում են ազգականները: Եվ Սալվոն բավական վշտալի տեսքով սկսեց պատմել դեպքերի մասին, որ վերջերս կատարվել են Սիցիլիայում՝ Սերրոդիֆալկոյում, Կատենանուովայում, Ալկամոյում, Կազալե-Ֆլորեստայում, և ակնհայտորեն վկայում են, որ ամբողջ Սիցիլիայում ուր որ է մեծ հրդեհ կբռնկվի: Նա Սիցիլիան նմանեցրեց փայտի հսկայական դարսակույտի, որ շարված է երաշտից չորացած ծառերից, որոնք անգթորեն կտրել են կացնով, որովհետև բարերարության անձրևը ողողեց ամբողջ Հյուսիսային Իտալիան, իսկ կղզու ծարաված հողերի վրա այդպես էլ չընկավ ոչ մի կաթիլ: Հիմա պատանիները զվարճանում են նրանով, որ այդ դարսակույտի տակ վառում են իրենց սոցիալիստական հայացքների ծղոտե խրձիկները, և ահա արդեն սկսել են մարմրել ծեր բները: Առայժմ դեռ միայն թույլ ճրթճրթոցներ են լսվում, բռնկումներ այս ու այնտեղ, երբեմն տարբեր վայրերում բարձրանում են բոցերի սպառնալից լեզուները, բայց օդում արդեն ամպի նման խտանում է խեղդող ծուխը: Իսկ ամենավատն այն է, որ կառավարությունը չի շտապում հանգցնել կրակը, այլ ուղարկում է զինվորներ, որոնք իրենց հրացանների կրակոցներով Է՛լ ավելի են բորբոքում բոցը: Գոնե բավականաչափ զինվորներ լինեին, որ կարողանային դիմակայել մոլեգնած ժողովրդի ճնշումին: Իսկ ի՞նչ է ստացվել. փոքրաթիվ ջոկատները, ենթարկվելով հիմար հրամանին՝ կրակել անզեն ամբոխի վրա, ստիպված են եղել դրանից անմիջապես հետո թաքնվել զորանոցներում. և այդ ժամանակ ամբոխը, այդ դատաստանից գազազած, դարձել է դրության տերը և կատաղությամբ հարձակվել է մունիցիպալիտետների վրա ու հրդեհել: Հուզումները շարունակվում են տարածվել ամբողջ կղզում. սինդակոները, ոստիկանապետերն ու ոստիկանական կոմիսարները գլուխները կորցրել են. այս ամենն ինչո՞վ կարող է վերջանալ:

Այսպիսի խոսքերով նա դիմում էր գլխավորապես իր փեսա Ֆրանչեսկո Վելլային, Կապոլինոյին և Աուրելիո Կոստային: Իսկ կանանց պատմում էր Սիցիլիայի խորքում գտնվող Միլոկկա փոքրիկ գյուղի հինգ հարյուր կանանց սխրանքի մասին: Կեղծ մատնությամբ, իբր՝ գոմաղբի կույտը չարամտորեն ցրիվ են տվել կալվածատիրոջ հողերում, որը չէր ցանկացել համաձայնել միության անդամ գյուղացիների կողմից դրված վարձակալության նոր պայմաններին, իշխանությունները ձերբակալել են միության նախագահին ու չորս անդամների և դատի են տվել այդ հանցագործությանը մասնակցելու համար: Եվ ահա այդ ժամանակ Միլոկկա գյուղից հինգ հարյուր կանայք, անարդարությունից ու բռնությունից վրդովված, ֆուրիաների նման նետվել են կարաբինակիրների զորանոցի վրա, ջարդել են դռները և դուրս բերել հինգ կալանավորներին. հետո արբելով ուրախությունից, որ իրենց հաջողվել է ազատել կալանավորներին, նրանք՝ որպես հաղթանակի նշան, ձեռքերի վրա են բարձրացրել մի կարաբինակրի ու զորանոցում խլած զենքը և տարել են գյուղի փողոցներով:

Դոննա Ռոզան, Նիկոլետա Կապոլինոն ու Լիլիանան աղմուկով հավանություն տվեցին այդ խիզախ կանանց հաղթանակին. բայց դոն Ֆլամինիոն բարձրացրեց ձեռքը և գոռաց.

— Լռությո՛ւն: Լռությո՛ւն: Սպասե՛ք: Ուրախությունը երկար չի տևել... Միլոկկայի բնակիչները, ես խոսում եմ տղամարդկանց մասին, չեն մասնակցել իրենց կանանց ապստամբությանը. իմանալով, որ գավառի ոստիկանապետը Միլոկկա է ուղարկել ևս մի զորամաս, ինչպես նաև դատական կատարածուներ ու դատավորներ, նրանք թամբել են իրենց ջորիները և, հրացաններն առնելով, փախել են: Նրանք մինչև հիմա թաքնվում են ինչ-որ տեղ՝ բնակավայրերից հեռու, վճռելով թանկ ծախել իրենց ազատությունը: Բայց սինյոր

դատավորները ձերբակալել են երեսուներկու կանանց. դրանցից ոմանք հղի էին, մյուսները՝ ծծկեր երեխաները գրկներին, և ձեռնաշղթաներով քարշ են տվել Մուսսոմելի բանտը:

— Ա՛յ քեզ արիություն,— բացականչեց դոննա Ռոզան:— Բայց ինչպե՞ս կարելի է: Եվ դուք, Նյացիո, սիցիլիական պատգամավոր, պառլամենտում ձայն չեք բարձրացնում գոնե հղի կանանց ծծկեր երեխաներ ունեցողների ձերբակալության դեմ:

Շոյելով բեղիկները, դոն Ֆլամինիոն ժպտաց:

— Նրան չի կարելի,— ասաց:— Չէ՞ որ այդ հղի կանայք ու մայրերը սոցիալիստներ են: Իսկ ինքը պահպանողական է: Ասենք, գիտե՞ք, ոմանք փորձեցին. դոն Իպոլիտո Լաուրենտանոն ուզում էր, որ կղերական կուսակցությունը պաշտպանի պրոլետարական շարժումը և օգտագործի այն՝ նրա հետ գաղտնի համաձայնություն կնքելով: Բայց հանգստացե՛ք, մոնսինյոր Մոնտորոն դեմ է դրան՝ գուցե այն պատճառով, որ կանոնիկոս Պոմպեո Ագրոն Կոմիտինիում հանքափորների մեջ ոչ այնքան ավետարանական պրոպագանդա է մղում իմ դեմ: Բավակա՛ն է: Տեսնենք, թե ինչպես կհանդիպեն հայրն ու որդին: Վաղը ես կգնամ երիտասարդ իշխան-սոցիալիստի մոտ և կթողնեմ այցետոմսս:

Կապոլինոն Ֆլամինիո Սալվոյին ուղեկցեց Սոմմակամպանիա փողոցի վիլլան և նրա հետ ետ վերադարձավ: Տարօրինակ, ծանր տպավորությունը, որ թողել էր Դիանելլան Կասոլինոյի վրա, երբ նրանք եկան, Է՛լ ավելի ամրապնդվեց այն խոսակցությունից, որ Սալվոն ճանապարհին վարեց նրա հետ:

Ինչպես միշտ, Սալվոն խոսում էր ակնարկներով, նրա խոսքը լի էր թերասումներով ու ծածուկ ակնարկություններով, բայց Կապոլինոյին թվաց, թե ինքը կարող է անել հետևյալ եզրակացությունները. Սալվոն, իսկապես, խիստ անհանգստացած է, բայց ո՛չ Սիցիլիայի քաղաքական դրությամբ, այլ աղջկա հոգեկան վիճակով, որին պետք է հատուկ ուշադրություն հատկացնել. չէ՞ որ նրա մայրը խելագար է: Եթե ուղևորությունը Հռոմ չտա այն արդյունքները, որ Սալվոն սպասում է, նա թերևս ընդառաջ գնա աղջկա ցանկություններին. այդ անհրաժեշտ է ամենից առաջ այն պատճառով, որ տանից քրոջ գնալուց հետո Սալվոն ոչ ոք չի ունենա, որի հույսին թողնի աղջկան, որը կարիք ունի հոգատարության, հաճելի ընկերակցության ու զվարճությունների, իսկ եթե նա ինքն զբաղվի դրանով, ստիպված կլինի զոհաբերել գործերը, իսկ այդ բանն անել չի կարող (և Կասոլինոյին թվաց, թե այդ խոսքերում լուրջ կշտամբանք կա իր կնոջ հասցեին, որը համարձակվել է հարսանիքի ժամանակ մենակ թողնել նաև դոննա Ադելաիդային). հարկավոր է կարգավորել աղջկա բախտը և միևնույն ժամանակ ըստ արժանվույն պարգևատրել Աուրելիո Կոստային (որը շուտով՝ երկու-երեք օրից պիտի վերադառնա Սիցիլիա), եթե նրան հաջողվի խելքի բերել ծծմբահանքերի բանվորներին:

Սալվոյի այդ երկար, խճճված խոսքից պարզորոշ եզրակացություններ հանելը այնպիսի լուրջ ջանքեր պահանջեց Կապոլինոյից, որ նրա ակնոցի ապակիներից մեկը (դրանք շարունակ քրտնում էին նրա հևոցից, և նա հաճախ մաքրում էր) ի վերջո կոտրվեց նրա անհանգիստ մատների մեջ: Դեռ բախտ էր, որ բեկորները մնացին թաշկինակի մեջ ու չվիրավորեցին նրա մատները: Բայց երեկոյան, արդեն առանց ակնոցի, նա պիտի խոսեր կնոջ հետ և շատ լուրջ:

Նիկոլետան գիտեր, որ Ֆլամինիո Սալվոյի ու Դիանելլայի հանկարծակի Հռոմ գալու պատճառը Կոստան էր: Նա շատ ավելի խորաթափանց էր ամուսնուց և իսկույն էլ հասկացավ, որ նրանց գալը նշանակում է իր դրախտային կյանքի վերջը, և դրա համար էլ ատելությամբ էր լցված Աուրելիոյի դեմ, որին կսպաներ առանց վարանելու, թե ապահովեին իր անպատժելիությունը: Նա արդեն իր վրա զգացել էր Դիանելլայի գալու առաջին հետևանքը. Չիչչինո ու Լիլիանա Վելլաները գնացին զբոսնելու Հռոմում իրենց դալուկ ու շվարած զարմուհու հետ, առաջին իսկ օրից մի կողմ հրելով իրեն՝ Նիկոլետային: Այսպիսով, լուրջ խոսակցության համար պահը վատ էր ընտրված:

— Ես պիտի մեկնե՞մ,— հարցրեց Նիկոլետան, որպեսզի շուտ ավարտի խոսակցությունը:— Թեկուզ հենց վաղը: Առանց որևէ խոսակցության: Բայց մենակ՝ ո՛չ մի դեպքում:

— Իսկ ո՞ւմ հետ,— հարցրեց Կապոլինոն։— Ես...

— Դե, իհա՛րկե, քո ձեռքերում է Իտալիայի բախտը,— բացականչեց Նիկոլետան։— Վաղն ինչպե՞ս պիտի պալատը նիստ անի, եթե դու չլինես:

— Խնդրում եմ քեզ,— ասաց Կապոլինոն՝ ձեռքով մի շարժում անելով, որ մի կողմից նշանակում էր՝ իրեն սանձած պահելու ճիգ և զգուշության դրսևորում, իսկ մյուս կողմից՝ մատնում էր նրա դժգոհությունն այն բանից, որ ստիպված էր աննպատակ խոսակցությունն ուղղել դեպի զառիկող, թեև սայթաքուն վայրէջքը։— Ես այստեղ կատարում եմ իմ պարտքը:

— Ես էլ,— արագ պատասխանեց Նիկոլետան։— Դու համաձայն չե՞ս: Դու՝ որպես պատգամավոր, իսկ ես՝ որպես պատգամավորի կին: Դա նույնիսկ սինդակոն է ասում քաղաքացիական ամուսնական արարողության ժամանակ՝ կինը պետք է հետևի ամուսնուն: Թանկագինս, եթե դու սկսես այդ երգը... Հանգիստ թո՛ղ պարտքը, մի՛ ծիծաղեցնի ինձ: Ես քեզ ասում եմ՝ դու, թանկագինս, գլուխդ կորցրել ես: Խոսենք, ինչպես առաջ կամ, ավելի ճիշտ, համաձայնության գանք՝ առանց որևէ խոսքի, քո և իմ բարօրության համար: Բավակա՛ն է, Նյացիո, քեզ ձանձրացրել է, բայց ինձ՝ է՛լ ավելի, և ես ընդունակ եմ որևէ խենթություն անելու: Նախազգուշացնում եմ քեզ:

— Աստվա՛ծ իմ, բայց ինչո՞ւ,— տնքալով ասաց Կապոլինոն՝ ձեռքերը սեղմելով իրար:

— Ախ, ինչո՞ւ,— բացականչեց Նիկոլետան և սկսեց հարձակվել ամուսնու վրա՝ զայրույթից ու արհամարհանքից կարմրատակած։— Դու ինձ հարցնում ես՝ ինչո՞ւ: Դու ուզում ես, որ ես գնամ, վերադառնամ այնտեղ և ինձ հարցնում ես՝ ինչո՞ւ:

— Լսի՛ր, լսի՛ր,— փորձեց ընդհատել նրան Կապոլինոն՝ ձեռքերը պարզելով, որպեսզի ոչ միայն խոսքերով, այլև այդ շարժումով զսպի կնոջ մոլեգին պոռթկումը,— մեր... քո սեփական շահերից ելնելով, ների՛ր: Ախր դու ինձ չես թողնում ասել...

— Դու ի՞նչ կարող ես ասել: Վե՛րջ տուր,— բացականչեց Նիկոլետան:

— Ես գիտեմ, թե ինչ պիտի ասեմ, մի՛ կասկածիր,— շարունակեց Կապոլինոն՝ լուրջ տոնով, խոնարհելով հայացքը։— Մտքովդ էլ չի անցնում, թե ինչ ասաց ինձ Ֆլամինիոն այսօր առավոտյան: Ես քեզ դեռ ոչինչ չե՞մ ասել Հռոմում քո այսքան երկար մնալու կապակցությամբ: Ոչի՛նչ... Եվ դու ինքդ էիր կշտամբում քեզ, որ չգնացիր հարսանիքի ժամանակ Ադելաիդային օգնելու: Այսպես, ուրեմն, գիտե՞ս, թե ինչի է հասցրել քո մեկնումը Ջիրջենտիից: Ֆլամինիո Սալվոն, մենակ մնալով ու հոգնելով այդ ամենից, վերջապես վճռել է կարգավորել աղջկա բախտը:

Նիկոլետան քարացավ այդ լուրը լսելիս:

— Ախ, այդպե՞ս,— ասաց նա և կծեց շրթունքը՝ ատելությամբ նայելով տարածության մեջ:

— Հասկանո՞ւմ ես,— ասաց Կապոլինոն,— նա վախենում է, որ հանկարծ մի բան չպատահի աղջկա գլխին, ինչպես մորը պատահեց: Եվ ինձ թվում է՝ նա հիմքեր ունի վախենալու համար: Դու տեսա՞ր Դիանելլային: Նա խղճահարություն է հարուցում...

— Զզվա՛նք,— կտրուկ պատասխանեց Նիկոլետան։— Ավելի լավ կաներ՝ ամաչեր:

— Սե՛րը...— հառաչեց Կապոլինոն՝ ուսերը թոթվելով ու կկոցելով աչքերը։— Եվ գուցե Ֆլամինիոն մտածում է, թե՝ նկատի առնելով մոր խելագարությունը, հեշտ չի լինի արժանավոր ամուսին գտնել աղջկա համար: Բացի այդ, նա Կոստային խիստ ծանր վիճակի մեջ է դրել հանքափորների առաջ և ուզում է վարձահատույց լինել նվիրվածության, անձնուրացության համար:

— Ինչքա՛ն հոգատարություն... ինչքա՛ն քնքշություն,— ասաց Նիկոլետան։— Իսկ ես, ճիշտ չէ՞, այդ ամենով հանդերձ, պիտի ինձ զգամ, ինչպես ձուկը ջրում...

— Դո՞ւ: Ինչո՞ւ,— հարցրեց Կապոլինոն:

— Բայց մի՞թե ես չպիտի խնամք տանեմ դստերը,— կծու պատասխանեց Նիկոլետան:— Մի՞թե ես չպիտի հետևեմ սիրահար զույգին: Ներկա լինեմ նրանց փաղաքշանքներին: Նրանց զրույցների ժամանակ: Լսեմ ապաքինվող երկչոտ աղավնյակի զեղումները:

Կապոլինոն թոթվեց ուսերը, կարծես ուզում էր ասել. «Դե ի՞նչ կա որ: Իսկ ի՞նչ վատ բան կա այդտեղ»:

— Ախ, չկա՛, թանկագինս,— բորբոքված շարունակեց կինը:— Ինձ համար միևնույն կլիներ, եթե ես ստիպված չլինեի խաղալ այդ դերը, ինչպես դու ես ասում՝ իմ անձնական շահերից ելնելով: Բայց դու մոռանում ես մի բան: Մոռանում ես, որ այդ սինյոր ինժեները մի ժամանակ խնդրել է իմ ձեռքը, և ես նրան մերժել եմ, որովհետև ինձ արժանի չեմ համարել: Հիմա սա նրա համար հոյակապ վրեժ է՝ իմ աչքերի առաջ դառնալ Ֆլամինիո Սալվոյի դստեր փեսացուն:

— Բայց քանի որ դու մերժել ես,— նկատեց Կապոլինոն,— դա կարող է նվաստացուցիչ լինել միայն Ֆլամինիո Սալվոյի դստեր համար...

— Այո՛,— բացականչեց Նիկոլետան՝ վեր կենալով:— Որովհետև ես հիմա մեծարգո պատգամավոր Ինյացիո Կապոլինոյի կինն եմ:

— Որը նաև ավելին արժե, վստահ եղիր,— բացականչեց Կապոլինոն՝ բռունցքով հարվածելով սեղանին ու հպարտորեն ձգվելով:

Նիկոլետան հայացքով հանգիստ չափեց նրան, իսկ հետո ասաց.

— Դե, ինչ վերաբերում է արժանիքներին, ապա ես չեմ համարձակվի կասկածել: Այնուամենայնիվ ... այնուամենայնիվ, ես պիտի մեկնեմ ՝ ինչպես միշտ, ելնելով իմ սեփական շահերից, հենց քո խոսքերով. . . Ի՞նչ արած: Արժանիքները, թանկագինս, միշտ չէ, որ հաջողություն են բերում...

— Ինձ էլ է կատաղեցնում,— այդ ժամանակ ասաց Կապոլինոն,— որ բթամիտը, բացարձակապես հիմարը կարող է այդպես բարձրանալ, երբ պարզապես նրա բախտը բերում է, և նրան առաջ են քշում հրելով, ինչպես կապված աչքերով համառ անասունի... Որովհետև, գիտե՞ս, նա ինքն ինձ ասաց, որ ոչինչ չի ուզում. . . Ա՛յ, հրաշալի է: Նա ոչինչ չի նկատում, ոչինչ չի հասկանում, իսկ բախտը նրան օգնում է: Վաղը նա կդառնա Սալվոյի փեսան:

— Դե ո՛չ,— բացականչեց Նիկոլետան:— Այդ հարսանիքը չի կայանա: Ես քեզ հավատացնում եմ՝ չի կա-յա-նա:

Կապոլինոն նորից թոթվեց ուսերը և կկոցեց աչքերը:

— Եթե Ֆլամինիոն ցանկանա, դու ինչպե՞ս կարող ես խանգարել:

— Ինչպե՞ս,— պատասխանեց Նիկոլետան:— Ինչպե՞ս: Չգիտեմ: Բայց ամեն գնով, ամեն գնով: Կարող ես վստահ լինել:

— Իսկ ինչո՞ւ: Դու գտնում ես, որ Կոստան ընդունակ է վրեժ լուծելու, ինչպես ինքդ ես ասում, քո մերժումի՞ համար: Դե ո՛չ, նա ընդունակ չէ նույնիսկ դրան: Ես նրան ուսումնասիրել եմ: Նա քո հանդեպ ուշադիր է, հաճոյակատար... նույնիսկ սաստիկ շփոթվում է քո ներկայությամբ... Դա նրա մտքովն էլ չի անցնում: Իսկ ա՛յ, եթե դու... եթե դու կարողանաս հաղթահարել քո արհամարհանքը և նրա հետ վարվել... դե, ես կասեի՝ նրա հետ վարվել որոշ... դե՛, անփույթ քաղաքավարությամբ...

Կնոջ հայացքի տակ, որը նայում էր սառն ու հանգիստ արհամարհանքով, մարեց ծուռ ժպիտը, որով Կապոլինոն արտասանեց վերջին բառերը:

— Դե, ի վերջո, այնպես, ինչպես նրա հետ վարվել ես մինչև հիմա,— արժանապատվությամբ ավելացրեց Կապոլինոն և արագ փոխեց թեման:— Հա՛, ես հենց ուզում էի քեզ առաջարկել դուրս գալ: Կընթրենք որևէ տեղ... Համաձա՞յն ես:

Տուն վերադառնալով ուշ գիշերին, Նիկոլետան, պառկելով անկողնում, ամուսնուն հարցրեց.

— Թվում է՝ ինժեներ Կոստան երեք-չորս օրից պիտի վերադառնա Սիցիլիա:

— Այո՛,— պատասխանեց Կապոլինոն,— այդ մասին Ֆլամինիոն ինձ ասաց այսօր առավոտյան:

— Իսկ դու կարող էիր Ֆլամինիոյին ասել,— շարունակեց Նիկոլետան՝ ծածկվելով վերմակի տակ,— որ ես էլ եմ պատրաստ գնալու, միայն թե ոչ մենակ: Քանի որ ինժեները մեկնում է...

— Այո՛,— բացականչեց Կապոլինոն:— Հոյակապ է: Նա կարող է ուղեկցել քեզ:

— Բարի գիշեր, թանկագինս:

— Բարի գիշեր:

Հաստատ համոզված այն բանում, որ ճակատագիրը միշտ, ծնված օրից թշնամաբար է վերաբերվել իրեն, Ֆլամինիո Սալվոն գտնում էր, որ մինչև հիմա կարողացել է հաղթել՝ միայն համառորեն պաշտպանվելով նրանից իր մշտարթուն և անկոտրում կամքով ու պատասխան տալով բոլոր նրանց, ովքեր այդ ճակատագրի կույր գործիքներն էին դարձել կամ պատրաստվում էին դառնալու իրենց արարքներով, որ իրենք էլ դաժան էին համարում: Բայց ճակատագրի թշնամությունը, իշխանություն չունենալով Սալվոյի վրա, կատաղաբար հարձակվում էր նրա մերձավորների՝ կնոջ, որդու վրա, իսկ այժմ էլ՝ այդ անհաղթահարելի կրքի օգնությամբ՝ աղջկա վրա: Այդ դժբախտությունների մեջ նա կարծես թե վրեժ էր տեսնում՝ ստոր ու դաժան. և այդ զգացումը ոչ միայն մարում էր ափսոսանքը այն ամբողջ չարիքի համար, որ ինքը գործել էր գիտակցաբար, այլև նրան նույնիսկ ամոթանք էր ներշնչում ամեն մի պատահական թուլության համար, նույնիսկ դրդում էր նրան գործելու նոր չարիքներ՝ կամ այն է, որ իր հերթին վրեժ լուծի ճակատագրից, կամ այն է, որ չճզմվի նրա կողմից: Սալվոն նույնիսկ հեռավոր կերպով իրեն թույլ չէր տալիս երկմտել, որ աղջկա՝ Աուրելիո Կոստայի հանդեպ ունեցած այդ բուռն զգացմունքի մեջ, ըստ էության, ոչ մի վատ բան չկա: Նրա համար դա անտարակուսելի չարիք էր՝ և ոչ միայն ծննդյամբ ու սոցիալական դրությամբ նրանց անհավասարության պատճառով (դատարկ բաներ), այլև այն պատճառով, որ դրա հիմքում ընկած էր իր թուլությունը՝ շատ տարիներ դրսևորած երախտագիտությունը փոքրիկ փրկարարի նկատմամբ: Նրա համար բարի գործից կարող է ծագել միայն չարիք: Դա նրա դավանանքն էր: Եվ ոչ մի փիլիսոփա չէր կարող նրան ստիպել ընդունելու, որ նախապաշարմունքի վրա հիմնված դատողությունը սխալ էր: Տրամաբանությո՞ւնը: Բայց ի՞նչ կարող է տրամաբանությունը մի ամբողջ կյանքի փորձի դեմ: Եվ հետո՝ եթե նա մի դեպքում ստիպված լինի ընդունել իր դատողության անճշտությունը, ուրեմն՝ մնաս բարով, չարիքի արդարացում, այն չարիքի, որ նա գործել էր մյուս բոլոր դեպքերում: Ամեն անգամ, երբ որևէ գործ, որևէ ձեռնարկում հենց սկզբից խոստանում էր լավ ընթանալ, Սալվոն, դրա համար ուրախանալու փոխարեն, մռայլվում էր՝ իսկույնևեթ ծուղակ կասկածելով, և պատրաստվում էր դիմադրության:

Դրա համար էլ նա տհաճությամբ ընդունեց Կապոլինոյի հայտնած տեղեկությունն այն մասին, որ Նիկոլետան պատրաստ է մեկնելու հաջորդ օրը և ուզում է, որ իրեն ուղեկցի Աուրելիո Կոստան, այնպես էլ Չիչչինոյի ու Լիլիանայի բերած լուրը, թե Լանդոն, որն ամբողջ առավոտը զբոսնել է իրենց ու Դիանելլայի հետ, հենց այդ երեկո կգա Սալվոյի հետ ծանոթանալու: Նրանք Լանդոյին հանդիպել էին պատահաբար, ու թեև սկզբում նա շատ էր ջղայնացած առավոտյան թերթի ինչ-որ հոդվածից, հետո՝ իրենց ընկերակցությամբ զվարթացավ և շնորհակալություն հայտնեց, որ իրեն մոռանալ տվին տխուր մտքերը: Ֆլամինիո Սալվոն գտնվում էր Վելլայի առանձնասենյակում և վերջին հրահանգներն էր տալիս Աուրելիո Կոստային՝ Սիցիլիա վերադառնալու կապակցությամբ, որ նշանակված էր հաջորդ առավոտը, երբ ազգականներն աղմուկով ներխուժելով սենյակ և իրենց հետ քաշել-

բերելով Դիանելլային, հայտնեցին այդ նորությունը: Նա նկատեց, ինչպես անսովոր կերպով փոխվեց դստեր դեմքը, երբ տեսավ Աուրելիո Կոստային և մի ակնթարթ գրեթե շշմած էր, երբ զարմիկն ու զարմուհին խոսում էին Լաուրենտանոյի հաճելի սիրալիրության մասին, իսկ Դիանելլան դողացող և կարծես ոչ իր ձայնով հաստատեց՝ մարտահրավեր արտահայտող տեսքով.

— Այո՛, շատ հաճելի է: Իսկապես, շատ հաճելի է:

— Շատ ուրախ եմ...— սառը պատասխանեց Սալվոն՝ ակնոցի վերևից նայելով աղջկան:— Բայց ներեցե՛ք, հիմա ես...

Եվ նա Կոստային ցույց տվեց ձեռքի շարժումով, որը նշանակում էր. «Ես հիմա պիտի մտածեմ այլ բանի մասին ...»:

Ասենք, այդպես էլ կար: Խոսքը գնում էր այն մասին, որ մահացու վտանգի ենթարկեն այդ հիանալի պատանուն, որը մինչև վերջ չէր գիտակցում, թե ինքն ստիպված կլինի ինչ դեր կատարել. չէ՞ որ նրան սպասվում էր հոշոտման հանձնվել մի ամբողջ շրջանի սովատանջ գազանացած բնակչությանը: Սալվոյի հոգում ինքն իր առաջ ձևանալու ինչ-որ խաղ էր կատարվում: Նրան հաղորդած տեղեկությունից ստացած բավականությունը պետք է փոխվեր սրտնեղության, հույսը՝ անվստահության, դրա համար էլ նա իր համար ոչ միայն հաջողություն չպիտի համարեր հանդիպումը Լաուրենտանոյի հետ և լավ տպավորությունը, որ երիտասարդ իշխանը կարծես թե թողել էր դստեր վրա, այլև դրան պիտի նայեր որպես իսկական և անկասկածելի խոչընդոտի. չէ՞ որ այդ պահին Սալվոն, որպեսզի կարգավորի աղջկա բախտը, հասկացնել տվեց այդ հիանալի պատանի Կոստային, որ իրեն հանձնարարված չափազանց վտանգավոր գործի համար նա կարող է պարգևի հույս ունենալ: Եվ նա շարունակում էր ինքն իր առաջ անձնատուր լինել կեղծիքին՝ զայրույթով համակված դստեր դեմ, որը հարկադրելով նրան գնալ այդ բանին, հիմա էլ հասկացնել տվեց (չէ՞ որ նա իսկույն նկատեց, թե ինչպես փոխվեց աղջկա դեմքի արտահայտությունը), որ երիտասարդ իշխան Լաուրենտանոն իր համար տհաճ չէ: Ասենք, դրանով չդադարեց բարդ խաղն ինքն իր հետ, որ վարում էր Սալվոն: Նա այնպես ձևացրեց, թե իսկապես չի հասկանում դստեր դեմքի այդ նոր արտահայտությունը, թեև շատ լավ էր հասկանում. նրա համար պարզ էր, որ Դիանելլան, Կոստայի ներկայությամբ գովելով Լաուրենտանոյին, ինչ-որ մարտահրավեր էր նետում Աուրելիոյին, իսկ հիմա այնտեղ՝ իր սենյակում, իհա՛րկե, թաքուն լալիս է ու տառապում: Կեղծ զայրույթը պարգևի պատճառով, որի մասին նա ակնարկեց Կոստային, ըստ էության, անկեղծ էր՝ այնքան, որ որպեսզի խղճի խայթ չզգա այն տառապանքի համար, որ պատճառել էր աղջկան, նա շարունակում էր ձևանալ, որ լրջորեն որոշել է Դիանելլային տալ Աուրելիոյին, եթե ինժեներին հաջողվի խաղաղեցնել սիցիլիական հանքափորներին: Իսկ առայժմ դեռ նա հաջորդ օրը Աուրելիոյին ուղարկեց Սիցիլիա՝ Նիկոլետա Կապոլինոյի ընկերակցությամբ:

Երեկոյան Սալվոն սիրալիր, թեև փոքր-ինչ զուսպ էր Լանդո Լաուրենտանոյի նկատմամբ, որին ուրախությամբ ընդունեց Վելլաների ընտանիքը, հատկապես Չիչչինոն ու Լիլիանան: Դիանելլան շատ գունատ էր և, որպեսզի մի կերպ իրեն պահի մարդկանց մեջ, ջանք էր գործ դնում իր վրա, որը հարուցում էր խղճահարություն ու երկյուղ: Նրա փաղաքուշ աչքերը մերթ համակվում էին ինչ-որ տագնապալից վախով, մերթ գրեթե մարում էին՝ ծածկվելով պղտոր մռայլությամբ. Նիկոլետա Կապոլինոն, որին Վելլաները հրաժեշտին հրավիրել էին ճաշի, հայտնել էր նրան, որ հաջորդ օրը մեկնում է Կոստայի հետ: Հիմա Նիկոլետան դարձյալ այստեղ էր և առանց ձանձրացուցիչ պչրանքի, բայց իր համար սովորական ազատ անբռնազբոսությամբ երիտասարդ իշխան Լաուրենտանոյին պատմում էր այն նրբին սիրալիրության մասին, որ ցուցաբերեց իրենց նկատմամբ դոն Իպոլիտոն այնտեղ՝ Կոլիմբետրայում, ամուսնու չարաբաստիկ մենամարտի ժամանակ:

Դիանելլայի ու Նիկոլետայի համար դա տանջալից լարվածության պահ էր: Որքան լուրջ ու կենտրոնացած տեսք ուներ մեծարգո Ինյացիո Կապոլինոն իր տրտմալի ակնոցով, այնքան անհանգիստ, շփոթահար ու գրգռված էր թվում Աուրելիո Կոստան: Նրա դեմքին

արտացոլվում էր խորին հուզմունքը, որ հարուցել էր Նիկոլետայի հետ մոտալուտ մեկնելու լուրը: Նա հողը չէր զգում ոտքերի տակ, չէր կարողանում արտասանել ոչ մի բառ: Տեսնելով, որ Աուրելիոն մտնում է հյուրասենյակ, Նիկոլետան սարսափի նման մի բան զգաց: Չնայելով նրան, Նիկոլետան զգաց, որ նա, ոչ ոքի վրա ուշադրություն չդարձնելով, փնտրում է իրեն, սակայն շուտով թեթևացած շունչ քաշեց՝ լսելով, թե ինչպես է նա աշխուժորեն վիճում Լաուրենտանոյի հետ Սիցիլիայի միությունների շարժման մասին: Հիմա Աուրելիո Կոստան չէր զգում ո՛չ վիշտ, ո՛չ էլ խղճահարություն Արագոնայի սովահար հանքափորների նկատմամբ. չքացել էր վրդովմունքը իր մշակած ծրագրի տապալման համար: Հիմա նա պատրաստ էր ապստամբներին ընդառաջ գնալու մտրակը ձեռքին: Ֆլամինիո Սալվոն զգուշավորությունից նրան կոչեց ավելի խաղաղ մտադրությունների:

— Ինչո՞ւ են նրանք հրդեհներ սարքում հանքահորերում,— հարցրեց նրան բորբոքված Կոստան:— Ես գիտեմ դրանց՝ այդ անասուններին: Վա՛յ քեզ, եթե ցույց տաս, թե վախենում ես նրանցից: Նրանց խելքի կբերի միայն մտրակը: Թույլ տվեք ես գործեմ... Ինձ թողել են բախտի քմահաճույքին, իմ ծրագիրը նույնիսկ թռուցիկ հայացքի չարժանացրին: Դե, ի՞նչ արած, ես մենակ կգնամ այնտեղ... և մենք կնայենք մեկմեկու երեսի:

Գրգռված լինելով, նա չնկատեց այդ մարտական հայտարարության անտակտությունը և նույնիսկ չվիրավորվեց՝ նկատելով, որ ոչ ոք իրեն չի լսում. նա առանց առարկության Կապոլինոյի ետևից գնաց հյուրասենյակին կից մեծ պատշգամբը՝ այն ժամանակ, երբ Ֆլամինիո Սալվոն, Ֆրանչեսկո Վելլան ու Լանդո Լաուրենտանոն շարունակում էին հանդարտ զրուցել, և Չիչչինոն Նիկոլետային խոստանում էր շուտով այցելել նրան Ջիրջենտիում, իսկ դոննա Ռոզան ու Լիլիանան խորհուրդներ էին տալիս Դիանելլային, թե ինչպես պահի իրեն, եթե ուզում է նորից գտնել առողջություն և ուրախություն: Շուտով Սալվոն կանչեց Կապոլինոյին, և Աուրելիո Կոստան մենակ մնաց պատշգամբում:

Նա ինչքա՞ն ժամանակ կանգնեց այնտեղ: Նայում էր աստղերին, ինչպես երազում, լուսնի լույսին, որ արտացոլվում էր հրապարակի մյուս կողմի հեռավոր պատուհաններում: Նա համակված էր տանջալից ու անուշ հուզմունքով և չէր մտածում այն մասին, թե որտեղ է գտնվում: Աուրելիոյի աչքերի առաջ շարունակ հայտնվում էր միայն մի պատկեր՝ Նիկոլետայի կերպարը, և նա, անկասկած, շուտով կգա այստեղ, որ իրեն ասի. «Մինչև վաղը և առհավետ»: «Մինչև վաղը: Եվ առհավետ», կրկնեց Աուրելիոն՝ սեղմելով բռունցքները և արբեցած փակելով կոպերը:

Նա արդեն Նիկոլետայի հետ հանդիպել էր առավոտյան: Նրանք պայմանավորվել էին: Նիկոլետան կլքի ամեն ինչ, ամեն ինչ և կհետևի նրան: Այո՛, նույնիսկ այնտեղ՝ վտանգին ընդառաջ, որից այս պահին նա չէր կարող հեռանալ: Եվ, ի վերջո, չէ՞ որ նա պետք է գնար այնտեղ. այնտեղ էր նրա տունը, այնտեղ էր նրա աշխատանքը, որը հիմա, հեռանալով Սալվոյից, նա կթողնի ուրիշներին: Դա ի՞նչ նշանակություն ունի: Ի՞նչ պարգևի մասին էր խոսում Սալվոն: Մեծ պարգևի, որ ինքը կկորցնի՝ հեռանալով Սալվոյից... Դա ի՞նչ նշանակություն ունի: Չէ՞ որ Նիկոլետան կտա իր սերը. կարո՞ղ է ավելի մեծ պարգև լինել: Այդպես երազում էր Աուրելիոն՝ պատշգամբում սպասելով Նիկոլետային և ժամանակ առ ժամանակ խենթի նման կրկնելով. «Մինչև վաղը: Եվ առհավետ»:

Մինչդեռ հյուրասենյակում Ինյացիո Կապոլինոն տխուր տեսքով պատմում էր այն մասին, թե պալատի կուլուարներում ինչպիսի տագնապ է զգել առավոտյան թերթում տպագրված մի լուր: Խոսքն այն քառասուն հազար լիրայի մասին էր, որ Հռոմի բանկից պարտք էր վերցրել Ռոբերտո Աուրիտին: «Նա, անկասկած, միայն երաշխավոր է,— ասվում էր թերթում,— մի լավ հայտնի հարավային պատգամավորի համար, որը մինչև վերջին ժամանակներս վայելում էր՝ եթե ոչ ամբողջ կառավարության, ապա նրա որոշ անդամների լիակատար վստահությունը՝ hic et haec »: Հետո թերթը խոսում էր թղթերի մասին, որ վերացրել են այդ Հարավային պատգամավորին փրկելու համար: Բայց շտապելուց վերջին պահին որոշ թղթեր մնացել են և ընկել դատական իշխանությունների ձեռքը, մասնավորապես հենց Աուրիտիի թղթերը, որը հիմա տանջալիորեն փնտրում է այդ քառասուն հազարը, որ փրկի իրեն ու բարեկամին:

Կապոլինոն ասում էր, թե ծայրահեղ ձախ թևի որոշ պատգամավորներ հարցապնդում են արել պալատում, և կարելի է կանխատեսել Աուրիտիի անխուսափելի ձերբակալությունը:

Լանդո Լաուրենտանոն նստել էր՝ կարծես ասեղների վրա: Ամբողջ օրը նա փնտրում էր, թե այդ տեղեկությունը որտեղի՞ց կարող է թափանցել առավոտյան թերթերը. կարելի էր կարծել, թե դա հաղորդել է ինչ-որ մեկը, որ ականջ է դրել սենյակի դռների մոտ, որտեղ Ջուլիո Աուրիտին օգնություն էր խնդրում նրանից, և նա վախենում էր, թե Ջուլիոն կկասկածի, որ ինքը մատնիչ է:

Սալվոն, Վելլան ու Կապոլինոն, նկատելով երիտասարդ իշխանի հուզմունքը, սկսեցին իրենց կարեկցանքն արտահայտել Ռոբերտո Աուրիտիի նկատմամբ՝ որպես անմեղ զոհի, իսկ Սալվոն նույնիսկ պարզ հասկացնել տվեց, որ պատրաստ է փոխ տալու այդ գումարը, որպեսզի փրկի նրան: Սակայն Կապոլինոն հայտնեց, որ հիմա արդեն չափազանց ուշ է: Մնում էր միայն խմել Լիլիանայի պատրաստած թեյից մի գավաթ: Չիչչինոյի բերած առաջին երկու գավաթները մատուցվեցին դոննա Ռոզային ու Դիանելլային: Նիկոլետան լցրեց Լանդո Լաուրենտանոյի գավաթը:

— Կաթո՞վ:

— Այո՛, շնորհակալություն: Մի քիչ:

Դիանելլան խմում էր իր թեյը և սպասում, որ Նիկոլետան վերջին գավաթը կտանի պատշգամբ՝ Աուրելիոյի համար: Բայց Նիկոլետան, տեսնելով, որ հետևում են իրեն, սկզբում ձևացրեց, թե մոռացել է, և գավաթը վերցրեց իրեն:

— Օ՛յ, իսկ իմ ուղեկցի՞ն,— հանկարծ բացականչեց նա, կարծես հենց նոր հիշեց այդ մասին:

Եվ ելավ պատշգամբ:

Հենց որ Աուրելիոն տեսավ Նիկոլետային, բնազդաբար, ինչքան կարող էր նահանջեց ստվերի մեջ, որպեսզի նրան իր կողմը քաշի: Բայց Նիկոլետան, հենց որ պատշգամբի շեմն անցավ, թեյը պարզելով Աուրելիոյին, ասաց կամացուկ ու սառն.

— Ի սեր աստծո, վերադարձե՛ք: Դուք ձեզ վրա ուշադրություն եք գրավում: Տղայություն մի՛ արեք:

— Բայց ասացեք ինձ միայն...— թախանձեց Աուրելիոն:

— Ահա թե ինչ: Եվ ինչպես հարկն է, հիշեցեք այս. ես ամեն ինչ արեցի, որ խանգարեմ ձեր և իմ կործանմանը: Վաղը չմեղադրեք ինձ, որովհետև այդ դուք եք ցանկացել:

Եվ նա վերադարձավ հյուրասենյակ:

Գլուխ IV

Կորրադո Սելմին պատգամավորների պալատից դուրս եկավ գունատ, այլայլված դեմքով, ամբողջ մարմնով դողալով: Հենց որ հայտնվեց հրապարակում, արևի տակ, նա հուսահատական ճիգ արեց, որ տիրապետի իրեն, որպեսզի փակվի ինքն իր մեջ և իր իշխանությանը ենթարկի այդ զարհուրելի խառնաշփոթում ձեռքից թռչող կյանքը. բայց իսկույն էլ դադարեց՝ նկատելով, որ ուժ չունի շունչ առնելու, կարծես նրա և՛ կուրծքը, և փորը ճզմված էին:

Հանկարծ ծնվեց նոր զգացում՝ վախ: Ոչ թե ուրիշից, այլ՝ իրենից:

Հենց նոր նա այդ ուրիշներին մարտահրավեր նետեց, ծայրահեղ խստությամբ հարձակվեց նրանց վրա պառլամենտի դահլիճում: Այնտեղ ոչ ոք չէր համարձակվում շունչ քաշել: Բայց

այդ լռությունը... ա՛խ, այդ լռությունը նրա համար վատ էր ամեն մի մեղադրանքից, ամբողջ նիստի բուռն, հախուռն հարձակումից:

Այդ լռությունը սպանեց նրան:

Ականջներում դեռ հնչում էին սեփական ոտնաձայները, երբ դուրս էր գալիս դահլիճից: Մեռելային լռության մեջ այդ ոտնաձայները թխկթխկում էին, ինչպես մուրճի հարվածները դագաղի կափարիչին:

Նա ամբողջապես այրվում էր, իսկ ոտքերը... կարծես ոտքերը ջարդել էին:

Մեղադրանքը խորտակեց նրան. հավաքելով իր ամբողջ դեռ հզոր կենսական ուժերը, նա փորձեց բարձրանալ, բայց երբ ավարտեց իր ճառը, պատասխանը լռությունը եղավ: Ոչ մի կասկած չկար այն բանում, որ նրա՝ դահլիճից ելնելուց անմիջապես հետո պալատը քվեարկեց նրան դատի տալու օգտին:

Բայց չէ՞ որ բոլորը գիտեին, որ նա աղքատ է. գիտեին, որ բանկից վերցրած փողերը չեն կարող նրա դեմ մեղադրանք ծառայել այնքան խստորեն, ինչպես ուրիշ շատերի դեմ:

Նա նայել էր մահվան աչքերին այն տարիքում, երբ մարդկային կյանքն ամենից գեղեցիկ է. մի՞թե նա դրանով չի նվաճել ապրելու իրավունքը: Այդքան ոչ միշտ պարզ հանգամանքների պղտոր բարդության մեջ այդ պահանջի պարզությունը գրեթե միամիտ էր թվում, այնպես որ բոլորը, ծիծաղելով, պետք է մերժեին այն:

Նրանք ուզում էին ոչ թե միայն Սելմիի մահը, նրանց պետք էր, որ նա մեռնի խայտառակված: Սելմին պիտի մեռներ այն ժամանակ, երբ պատանի էր ու հերոս էր բոլորի համար, ովքեր ապրում են այսօր ու մեղադրում են՝ ինչպես հանցագործության մեջ, այն բանում, որ նա ողջ է մնացել:

Բայց նրան անարդարացի էր թվում ո՛չ այնքան մեղադրանքը, որքան իրենք՝ մեղադրողները. և նույնիսկ անարդարությունից ավելի՝ անշնորհակալ և ստոր. ստոր, որովհետև այսքան տարի նրանք ընդունում էին նրա ապրելու իրավունքը, իսկ հիմա վեր են կացել, որպեսզի արհամարհանքով ցույց տան նրա հավակնությունների միամտությունը, այսքան տարի նրանք հասկանում էին նրա կարիքները, իսկ հիմա դրանք ներկայացնում են որպես մեղադրանք, կարծես թե ինչ-որ խայտառակություն է:

Եվ դրա վրա էլ նրանք կանգ չեն առնի: Հետո կհաջորդեն դատը, դատապարտությունը, բանտը:

Կորրադո Սելմին նորից սկսեց ծիծաղել և դեռ կարողացավ նկատել, թե ինչ ջանքերի գնով դեմքին սառած դաժան ծամածռությունը փոխարինեց այդ սարսափելի ծիծաղով: Մի՞թե թեթև, բարեհոգի ծիծաղը, որ միշտ ուղեկցել է նրա կյանքի բոլոր արարքներին՝ նույնիսկ ամենալուրջ և ամենավտանգավոր, փոխարինվեց այդ խղճալի ու վշտալի ծամածռությամբ: Եվ ահա նա նորից վախեցավ ինքն իրենից, վախեցավ այն բանից, որ ինքը կարող է հիմա պարզորոշ կերպով ըմբռնել ինչ-որ մթին ու սարսափելի բան, որ անսպասելիորեն սկսեց շարժվել իր Էության խորքերում. դա նրան գցեց լիակատար խուճապի մեջ և ծնունդ տվեց հոգեկան լիակատար անկման զգացողության: Եվ որպեսզի իր Էության մեջ որևէ կերպ վերականգնի ներքին կապերը, որպեսզի հաղթահարի նողկանքն սարսափը, նա նայեց շուրջը՝ կարծես օգնություն և սփոփանք խնդրելով իրերի ծանոթ ուրվագծերից: Բայց դրանք էլ նրան փոխված էին թվում, դրանք, կարծես ընդարձակվելով, սեփական ձևը կորցնում, չքանում էին: Նա սարսափով զգաց, որ կորցրել է իր և ամբողջ շրջապատի միջև որևէ կապ վերականգնելու ամեն մի հնարավորություն: Այո՛, նա կարող է նայել, բայց ի՞նչ կտեսնի: Կարող է խոսել, բայց ի՞նչ ասել: Կարող է շարժվել, բայց ո՞ւր գնալ:

Նա խոսեց, որ լսի սեփական ձայնի հնչյունները, բայց ձայնն էլ նրան փոխված թվաց: Նա ասաց.

— Դե, ես ի՞նչ պիտի անեմ:

Նա լավ գիտեր, թե իրեն ինչ է մնում անելու: Բայց լեզվով դիպչելով քիմքին, երբ արտասանում էր «դ» և «տ» հնչյունները՝ «դե» և «պիտի» բառերում, նա ոչինչ չզգաց. միայն լեզուն հազիվ էր շարժվում, բերանում սաստիկ դառնություն կար, և դեմքը մռայլ նողկանք էր արտահայտում առաջվա նման:

— Ո՛չ:— ավելացրեց նա,— նախ... եթե ոչ այդ ապա ի՞նչ:

Քանի որ մնացած ամեն ինչը նրան թվում էր ավելորդ և անօգուտ: Նա դեռ կարող էր որոշ ժամանակ խոսել ու հիմարություններ անել, որպեսզի հոգին թեթևացնի ու կորցնի հակումը ամեն ինչի նկատմամբ: Բայց լրջորեն մտածել, լրջորեն գործել կարելի էր ոչ այլ կերպ, քան ողբերգական և անելանելի վճռի գնով, որը պետք է կործաներ նրա բոլոր կենսական հիմքերը: Նա կարող էր խաղալ դրանց բեկորների հետ, որոնք ներքին խռովքից դուրս էին լողում նրա բզկտված բանականության մակերեսը, կարող էր դեռ մի քիչ խաղալ: Այո՛, իհա՛րկե, Ռոբերտո Աուրիտիի մոտ: Ինքը պետք է տեսնի նրան, ասի, որ նրա փրկության համար իր վրա է առել մեղադրանքը: Ահա թե ուր պիտի գնա ինքը:

Որպեսզի փողոցում չնկատեին, որ իր ոտքերը ծալվում են ու դողում, Սելմին կառք կանչեց և կառապանին տվեց հասցեն՝ Կոլոնետտե փողոց: Բայց, կառք նստելով, նա իսկույն էլ զղջաց՝ նախազգալով, որ իր բոլոր արածների դիմաց ինքը, որպես պարգև, կստանա բուռն տեսարան: Սակայն ո՛չ, ինքն ամեն գնով կկարողանա թույլ չտալ այդ: Իր արարքը նրան թվաց նույնիսկ ոչ թե պարտականություն Ռոբերտո Աուրիտիի հանդեպ, այլ մեծահոգություն: Բայց տվյալ պահին իր այդ մեծահոգության նկատմամբ նա կարող էր միայն արհամարհանք զգալ: Նա զրկվել էր հասարակական դիրքից, բոլոր առավելություններից, որ տալիս էր անցյալը, նրան սպասվում էր կրել այնպիսի վիճակ, ինչպիսին կրում է ճակատագրից պարտված մարդը՝ որը չի կարողացել օգտվել իր ընդունակություններից, իր ծառայություններից, որպեսզի իր համար դիրք ստեղծի (իսկ դա նրա համար հնարավոր էր) և կարևորություն ձեռք բերի ուրիշ մարդկանց աչքում: Ոչ թե խղճահարություն, այլ սրտնեղություն կարող է հարուցել Ռոբերտո Աուրիտին: Թեկուզ ինքը՝ Սելմին էր բախտին ապավինած Ռոբերտոյին քաշել տարել այդ խութերի մեջ, վաղուց նավաբեկության ենթարկված այդ մարդը արժանի չէր, իհա՛րկե, որ արդեն գրեթե փրկված Կորրադո Սելմին նորից նետվեր ծովը և զոհվեր նրա հետ միասին. Ռոբերտոն դրան արժանի չէր, որովհետև երբեք չէր կարողացել ապրել, երբեք չէր կարողացել հաղթահարել նույնիսկ ամենափոքրիկ խոչընդոտները. նա արդեն ջրահեղձ էր, որին Սելմին քանի անգամ պարան էր նետել, որպեսզի դուրս քաշի և փրկի: Միայն մի անգամ այդ մարդը փորձեց օգնել նրան, և ահա հիմա այդ նույն ձեռքը, որն օգնություն էր ցույց տվել, Սելմիին անդունդ էր քաշում, ավելի ու ավելի խորը՝ ստիպելով հրաժարվել փրկվելու այլ միջոցներից: Իսկ նրա եղբայրը սլացել է Սիցիլիա, որպեսզի փրկի նրանց երկուսին: Դե, իհարկե, բոլորը պիտի սպասեին՝ մինչև նա գնար ու բերեր փողը: Բոլոր հարմարություններով: Առանց շտապելու: Եվ այն բանից հետո, ինչ նա ամեն ինչ պատմել է Լանդո Լաուրենտանոյին: Հիմա՛ր: Հիմա՛ր: Հենց միայն դրա համար Սելմին կարող էր չխառնվել, որպեսզի պաշտպանի տխմարին: Բայց հիմա...

Երբ գալով Կոլոնետտե փողոցը, Սելմին սկսեց բարձրանալ կիսամութ սանդուղքով, աճապարանքով թավալգլոր նրան ընդառաջ իջավ Օլինդո Պասսալակուան:

— Ա՛հ, ահա՛ և հենց դուք, մեծարգո: Ես վազում էի ձեզ մոտ. . . Ասացե՛ք, ի՞նչ է պատահել, ի՞նչ է պատահել:

— Դրսում քամի է,— անխռով պատասխանեց Կորրադո Սելմին:

— Քամի՞ է: Ի՞նչ եք ասում: Այդ ստոր մատնությունը: Այդ ինչպե՞ս կլինի: Այդ ո՞վ է արել: Կթքեի նրա երեսին: Իտալիա ստեղծեք այդպիսի սրիկաների համար:

Կորրադո Սելմին երկու մատով բռնեց նրա կզակը:

— Բրավո, Օլինդո: «Ազնիվ զգացմունքներ, ճիշտ է»: Դե, գնացինք:

— Սպասե՛ք, մեծարգո,— թեթևակի բռնեց նրան Պասսալակուան։— Ես ուզում եմ ձեզ նախազգուշացնել։ Իմ Նաննան դեռ ոչինչ չգիտի։ Եվ մենք էլ դեռ ոչինչ չգիտեինք։ Պատահաբար իմ աներձագ Պիլադի ձեռքն է ընկնում երկու օր առաջվա թերթը։ Նա բացում է ու տեսնում... և ուղարկում է մեզ մոտ՝ վերև, ընդգծելով հոդվածը... Ռոբերտոն պատշգամբում ծաղիկներն էր ջրում.... Կարդաց և կարծես երկնքից ընկավ... Դուք մի մտածե՛ք։ Նա, հենց նա թերթեր չի կարդում այնպիսի պահին, ինչպիսին հիմա է։ Հասկանո՞ւմ եք։ Այն թռչունի նման (ինչպե՞ս է կոչվում), որ գլուխը թաքցնում է ավազի մեջ։ Իսկ ես նրա համար երեք թերթ եմ գնում, գիտե՞ք։ Ամեն երեկո՝ երեք թերթ։ Գոնե մեկը կարդար։ Հենց որ թերթը բացում է, իսկույն էլ սկսում է ննջել, իսկ հետո հավատացնում է, թե բոլոր երեքն էլ կարդացել է և շատ քիչ է քնում։

— Ջայլամ,— ասաց Կորրադո Մելմին։— Թույլ կտա՞ս։— Եվ նա բարձրացրեց ձեռքը, որ ուղղի Օլինդո Պասսալակուայի թիթեռնաձև կապած, աչք ծակող կարմիր փողկապը։

— Ջայլամ,— կրկնեց նա,— թռչունը, որի մասին դու խոսում էիր. . . ջայլամն է։ Ա՛յ, այսպես լավ է։

Օլինդո Պասսալակուան կանգնել էր բերանը բաց։

— Շնորհակալություն,— ասաց նա։— Դե, ուրեմն... ուրեմն մենք կարո՞ղ ենք հանգիստ լինել։

Կորրադո Սելմին լուրջ նայեց նրա աչքերի մեջ, ձեռքը դրեց ուսին ու հարցրեց.

— Մի՞թե դու վերակացու չես։

— Վերակացու... այո՛...— շփոթահար պատասխանեց Պասսալակուան, կարծես վստահ չէր դրանում։

— Թո՛ղ, ուրեմն, աշխարհը կործանվի,— բացականչեց Սելմին և արհամարհական անհոգությամբ թափահարեց ձեռքը։— Դու վերակացու ես, և հրաշալի է. թքի՛ր ամեն ինչի վրա։ Վերև՛, վերև՛, ինձ հետ արի վերև։

Նրանք Ռոբերտոյին գտան բոլորովին ընկճված։ Նա նստած էր բազկաթոռին՝ դեմքը դեպի առաստաղը դարձրած, ձեռքերն անզոր կախված էին, կողքին ընկած էր ցնցուղը։ Տեսնելով Սելմիին, Ռոբերտոն վեր թռավ և, ջղաձգորեն ցնցվելով, նետվեց նրա մոտ ու փաթաթվեց վզին։

— Խնայեցե՛ք, խնայեցե՛ք,— թախանձեց Օլինդո Պասսալակուան ու վազեց դուռը ծածկելու, ձեռքի շարժումով ևս աղերսելով՝ կամաց խոսել, որ Նաննան չլսի նրանց։

Կարծես ձայնածելով Ռոբերտոյին, որ հեծկլտում էր Կորրադո Սելմիի կրծքի վրա, փակ դռան ետևից սկսեց հնչել ինչ-որ աշակերտուհու մլավոցանման ձայնավարժությունը։ Սելմին, որի վրա ամբողջ ծանրությամբ ընկել էր Ռոբերտոն, որոշ ժամանակ նայում էր, թե ինչպես է ձեռքերով զանազան շարժումներ անում Պասսալակուան, որը շարունակ աղերսում էր՝ խնայել իր խեղճ կնոջը. նրա սիրտը հիվանդ է. խնայել Ռոբերտոյին. նա կործանված է. խնայել իրենց տունը. այն ուր որ է՝ կփլվի։ Ի վերջո Սելմին, ամբողջ մարմնով դողալով, սկսեց հիստերիկ քրքջալ։

— Տո՛ւր ինձ,— ասաց նա և, ճանկելով ցնցուղը, մոլագարի նման վազեց պատշգամբ։— Իսկապես, մենք այստեղ ինչո՞վ ենք զբաղվում։ Դու ջրո՞ւմ էիր։ Կշարունակենք ջրել։ Այստեղ... և այստեղ։ Այսպե՛ս։ Այսպե՛ս։ Անձրև է։ Օլինդո, անձրև՛ է, անձրև՛։

Եվ ցնցուղի բերանից իսկական տեղատարափ թափվեց Օլինդո Պասսալակուայի գլխին, որն սկսեց վազել պատշգամբով՝ գոռալով ու ձեռքերով ծածկելով գլուխը, հետապնդվելով Սելմիի կողմից, որը շարունակ քրքջում էր՝ ասելով.

— Ես ջուր եմ լցնում, դու ջուր ես լցնում, նա ջուր է լցնում, բոլորս ջուր ենք լցնում :

— Օ՛յ-օ՛յ-օ՛յ: Ի սեր աստծո... պետք չէ, թանկագինս... պետք չէ.. Դե, վե՛րջ տվեք: Բավակա՛ն է. ի սեր աստծո, բավական է: Սա ի՞նչ բան է: Բավական է արդեն: Բավակա՛ն է:

Նրա աղաղակների վրա վազեցին եկան Լալլան, նրա աշակերտուհին, Անտոնիո Դել Ռեն ու Չելսինան: Կորրադո Սելմին, շնչասպառ լինելով, իսկույն շտապեց սեղմելու սինյորա Լալլայի ձեռքը, որը ծիծաղում էր՝ նայելով թրջված հավաճտի նման դողացող ամուսնուն: Երկու աղջիկները նույնպես ծիծաղում էին:

— Ի՞նչն է ամենից օգտակարը, սիրելի Լալլա,— գոռաց Սելմին:— Ծիծաղելը: Մենք ջրում ենք Օլինդոյին ու ծիծաղում ենք: Ուրեմն նրան կջրենք ու կջրենք:

— Բայց չէ՛ որ ես լալիս եմ,— տնքաց Պասսալակուան:

— Դրա համար էլ մենք ծիծաղում ենք,— ասաց Սելմին:

— Իսկ ով ստիպված է ծիծաղել, նա...— մռթմռթաց Անտոնիո Դել Ռեն, սեղմելով բռունցքները:

— Հետո կստիպի նաև լալ, ճիշտ չէ՞,— նրա խոսքն ավարտեց Սելմին:— Բրավո՛ պատանի: Դու միշտ լուրջ ես: Դու քո հիմարություններն էլ կանես հիմնավորապես, մտածված ու ջղային: Իսկ մենք մերը... Է՛յ, վերակացու... արի պարենք... Արա՛գ, Լալլա, շո՛ւտ դաշնամուրի մոտ: Դուք նվագեք, իսկ մենք պարենք: Ռոբերտոն կիագնի կարճ շալվար՝ ետևում կտրվածքով, ցած կթողնի վերնաշապիկի փեշերը, կառնի սուրն ու փայտե ձին՝ հենց նրանք, որոնցով պատերազմ էր խաղում վաթսուն թվականին. մենք նրա համար թղթե սաղավարտ կշինենք, և նա կարշավի իր ձիով... Դե՛-ե՛հ: Դե՛հ... իսկ ես ու Օլինդոն կսկսենք պարել Գարիբալդիի հիմնի հնչյունների տակ՝ «Դո՛ւրս Իտալիայից... դուրս Իտալիայից... բոլոր օտարերկրացիներ»:

Նա չէր հասցրել արտասանել վերջին բառը, երբ պատշգամբի շեմքին հայտնվեց Մաուրո Մորտարան. ծերունու աչքերը շողում էին ուրախության արցունքներից, ճառագում երանավետ հուզմունքով. թիկունքին ճոճվում էր մախաղը: Հենց որ տեսավ նրան, Կորրադո Սելմին, արագությամբ բռնելով գլուխը, դուրս ցատկեց պատուհանից, որ նույնպես ելնում էր պատշգամբ.

— Գրողը տանի, ո՛չ: Սա արդեն չափազանց է:

Ցանկանալով պահել նրան, Ռոբերտո Աուրիտին նետվեց նրա ետևից:

— Կորրադո՛, Կորրադո՛:

Տեսնելով նրա փախուստը, Մաուրո Մորտարան քարացավ՝ ցցված սինյորա Լալլայի, նրա աշակերտուհու և Պասսալակուայի դեմքերի շփոթահար, Չելսինայի ժպտացող դեմքի զարմանքի և Անտոնիո Դել Ռեի մռայլ արտահայտությունից:

— Ես եկել եմ, եթե չեմ խանգարում,— ասաց Մաուրոն,— հրաժեշտ տալու դոն Ռոբերտոյին: Վաղը մեկնում եմ:

— Իսկ դուք ո՞վ եք,— ասաց սինյորա Լալլան այնպիսի տեսքով, ինչպես եթե նրա առաջ հայտնվեր երկնքից ընկած մի լուսնաքար:

— Ես...— սկսեց բացատրել Մաուրո Մորտարան, բայց շարունակեց՝ ճանաչելով Անտոնիո Դել Ռեին:— Դուք դոննա Կատերինայի թոռը չե՞ք:

Եվ, արտասանելով այդ անունը, նա հանեց գլխարկը:

— Դուք ասացեք նրանց,— ավելացրեց Մաուրոն,— թե ով եմ ես: Ես արդեն երկու անգամ եկել եմ, բայց ինձ վերև չթողեցին, որովհետև դոն Ռոբերտոն տանը չէր:

Իսկ Պասսալակուան ամբողջովին թրջված մոտեցավ նրան, շոշափեց նրա կրծքի մեդալները և հարցրեց.

¬— Սիցիլիական հայրենասե՞ր: Սիցիլիական հայրենասերներին, գրողը տանի, ոսկե արձաններ: Ար... արձա... արձաններ...

Նա ուզում էր փռշտալ, բայց դա ոչ մի կերպ չէր ստացվում, և որոշ ժամանակ նա կանգնած էր բերանը բաց, դողացող ռունգներով ու պարզած ձեռքերով, կարծես պաշտպանվում էր. վերջապես հաջողվեց փռշտալ, և նա խոսքն ավարտեց.

— Ոսկուց: Սելմին է մեղավոր, նա ինձ մրսեցրեց: Բայց նա ինչո՞ւ փախավ: Նա, ի՞նչ է, խելքը թռցրե՞լ է: Տեսեք, թե ինչպես ինձ... ինձ... բայց նա ո՞ւր գնաց:

— Ռոբերտո՛,— ականջ ծակող ձայնով ծղրտաց սինյորա Լալլան՝ ներխուժելով սենյակ, որի միջով մի րոպե առաջ փախել էր Սելմին:

Նրա ետևից վախեցած ներս մտան բոլոր մյուսները:

Ինչ-որ կողմնակի մարդ՝ գլխարկը ձեռքին և աչքերը խոնարհած, քարացած կանգնել էր այդ սենյակի շեմքին՝ այն ժամանակ, երբ Ռոբերտոն՝ բծերով ծածկված հողագույն դեմքով, մի տեսակ ջղաձգորեն, անվճռական նայում էր շուրջը: Լսելով Լալլայի ճիչը, Ռոբերտոն պարզեց ձեռքը, բայց ոչ թե նրան, այլ կարծես ցանկանալով զսպել իր հուզմունքը, որ ավելի ուժեղ էր, քան մյուսներինը:

— Խնդրում եմ ձեզ, խնդրում եմ ձեզ,— ասաց նա,— առանց աղմուկի... Սա դատարկ բան է... Կոչնագիր, կանչում են քվեստուրա...

— Սա ձերբակալություն է,— այդ ժամանակ ատամների արանքից ասաց Անտոնիո Դել Ռեն. նրա ամբողջ դեմքը ծռմռվել էր և մանրիկ դողում էր:

Բարձր ճչալով, Նաննան ընկավ ամուսնու ձեռքերին:

— Նրան ձերբակալո՞ւմ են,— հարցրեց Մաուրո Մորտարան, առաջ քայլելով՝ քանի դեռ Ռոբերտոն ամբողջ սենյակում փնտրում էր իր սերթուկը և թախանձում բոլորին՝ չգոռալ, սկանդալ չսարքել:

— Ի՞նչ իրավունքով,— շարունակեց Մաուրոն՝ նայելով Անտոնիո Դել Ռեին:

Պատասխան չստանալով, նա ուղղվեց անծանոթի կողմը և, հարվածելու թափ վերցնելով, գոռաց նրա վրա.

— Դուք, դուք եկել եք այստեղ ձերբակալելու դոն Ռոբերտո Աուրիտիի՞ն:

— Մաուրո՛,— ընդհատեց նրան Ռոբերտոն,— ի սեր աստծո, Մաուրո, թո՛ղ...

— Ինչպե՞ս թե,— կրկնեց Մաուրո Մորտարան՝ դիմելով Ռոբերտոյին:— Մի՞թե ձեզ ձերբակալում են: Ինչո՞ւ:

Ռոբերտոն շտապեց սեղմել Պասսալակուայի, աշակերտուհու, Չելսինայի ձեռքերը, որոնք ոչ մի կերպ չէին կարողանում պահել սինյորա Լալլային, որն ամբողջ ուժով փորձում էր դուրս պրծնել և գալարվում էր նրանց ձեռքերում՝ ճիչերով, տնքոցներով ու ջղաձգական ծիծաղով:

— Տարե՛ք նրան, ի սեր աստծո, տարե՛ք այստեղից,— աղերսեց Ռոբերտոն:

Բայց դա անհնար էր: Իսկ Պասսալակուան, Ռոբերտոյի օգնությունից օգտվելու փոխարեն, գրկեց նրա վիզը և փղձկաց.

— Քավության նոխա՛զ: Քավության նոխա՛զ:

Ռոբերտոն գրեթե նողկանքով դուրս պրծավ և փակեց ականջները: Իսկ Պասսալակուան շարունակեց՝ դիմելով Մորտարային.

— Դուք տեսնո՞ւմ եք, հայրենասեր: Ահա՛ թե ինչպես է Իտալիան վարձահատույց լինում իր տառապյալներին, ահա՛ թե ինչպես:

— Ստեֆանո Աուրիտիի որդին,— ոչ ոքի չդիմելով, ասաց Մաուրո Մորտարան՝ աչքերը չռելով ու ձեռքը կրծքին զարկելով։— Դոննա Կատերինա Լաուրենտանոյի որդին… Եվ ես սա պիտի տեսնեի Հռոմում: Բայց դուք ի՞նչ վատ բան եք արել,— դիմեց ծերունին Ռոբերտոյին՝ նետվելով նրա մոտ, բռնելով նրա ձեռքերը և ցնցելով։— Ասացե՛ք ինձ, որ դուք նույնն եք, առաջվանը: Այո՞: Եվ այն ժամանակ...

Նա մի ձեռքով բռնեց իր կրծքի մեդալները, պոկեց, նետեց հատակին, կոխկրտեց ոտքերի տակ, հետո, դառնալով կատարածուին, գոռաց.

— Ասացե՛ք ձեր կառավարությանը: Ասացեք նրան, որ մի ծեր գյուղացի փակցրել էր իր գարիբալդիական մեդալները և եկել Հռոմ տեսնելու, իսկ Հռոմում նրա աչքերի առաջ ձերբակալեցին հերոսի որդուն, հերոս, որ մեռել էր այդ ծերունու ձեռքերի վրա, Միլացցոյի ճակատամարտում, և այդ ժամանակ ծերունին կրծքից պոկեց մեդալները և կոխկրտեց, ա՛յ այսպես:

Մաուրոն շրջվեց Ռոբերտոյի կողմը, գրկեց և լսելով, որ նա հեծկլտում է իր ուսին, սկսեց ափով թեթևակի խփել նրա թիկունքին՝ ինքն իրեն խոսելով.

— Որդի՛ս: Որդի՛ս:

Այդ պահին Անտոնիո Դել Ռեն մի տեսակ մռնչոցով դուրս վազեց սենյակից՝ վազքի ժամանակ շրջելով աթոռը: Չելսինան, որ աչք չէր կտրում պատանուց, վազեց նա ետևից՝ տագնապով կանչելով նրան: Մաուրո Մորտարան շրջվեց գիշատիչ գազանի պես, կարծես նրա մտքով անցավ, որ Անտոնիոն իր այդ սրընթաց անհայտացմամբ ուզում էր որևէ ձևով կանխել ձերբակալությունը. նա ինքը պատրաստ էր ամեն մի՛ բռնության: Ազատվելով նրա գրկից, Ռոբերտո Աուրիտին գնաց կատարածուին ընդառաջ.

— Ես պատրաստ եմ:

— Ո՛չ,— գոռաց Մաուրոն՝ բռնելով նրա ձեռքը։— Դոն Ռոբերտո, մի՞թե դուք հենց այդպես կհանձնվեք:

— Խնդրում եմ քեզ, թո՛ղ...— ասաց Ռոբերտոն և, շրջվելով ոստիկանի կողմը, ավելացրեց։— Ներեցե՛ք:

Նա իր մոտ կանչեց Նաննային, որը հազիվ շունչ քաշելով, ձեռքերը սեղմեց կրծքին, համբուրեց նրա ճակատը և ասաց.

— Արիացի՛ր:

— Իսկ ես ի՞նչ եմ ասելու ձեր մորը,— բացականչեց Մաուրոն՝ ձեռքերը թափահարելով գլխավերևում:

Ռոբերտո Աուրիտին մռայլվեց, ձեռքերը տարավ երեսին, կարծես ցանկանալով զսպել հուզմունքի բուռն պոռթկումը, և գնաց ոստիկանի ուղեկցությամբ: Սինյորա Լալլան, որին բռնել էին ամուսինն ու աշակերտուհին, հիմա արդեն չէր ճչում, այլ տնքում էր.

— Ռոբերտո՛: Ռոբերտո՛: Ռոբերտո՛:

Մաուրո Մորտարան դեռ էլի կանգնել էր ու նայում էր՝ կարծես քարացած: Երբ Պասսալակուան ամեն ինչ պատմեց նրան և, պարզորոշ հիշելով հենց նոր կարդացած թերթը, բացատրեց, թե ինչ դժբախտություն ու խայտառակություն թափվեցին իրենց գլխին հենց այդ պահին, Մաուրոն ասաց.

— Եվ սա... սա Իտալիա՞ն է:

Նրա մեծ երազանքը խորտակվեց, նա այլևս չէր մտածում Ռոբերտո Աուրիտիի մասին, նրա ձերբակալության մասին, այլևս ոչինչ չէր տեսնում ու չէր զգում: Հատակին ընկած էին մնացել նրա կոխկրտված մեդալները:

Ելնելով Ռոբերտոյի տանից, Կորրադո Սելմին սանդուղքի վրա հանդիպեց կատարածուին ու ոստիկանների, որ գնում էին ձերբակալելու անմեղ մարդուն: Նա մի ակնթարթ կանգնեց անվճռական. բայց իսկույն էլ զգաց՝ ինչպես խավարը պատեց իր ուղեղը, և զայրույթի ու տառապանքի այդ աղջամուղջում իր խղճի ամենախորքերից լսեց մի ձայն, որն ասում էր նրան, թե հիմա՝ այս պահին, ինքը ոչ մի ձևով չի կարող խանգարել այդ սարսափելի անարդարությանը:

Նա դեռ էլի այդպես դանդաղ շարունակեց իջնել սանդուղքով, հետո թեթև, երկտեղանի կառք նստեց ու զարմացավ, երբ կառապանը հարցրեց, թե ո՞ւր պիտի տանի նրան: Տուն, իհա՛րկե, մի՞թե հարկ կար խոսելու այդ մասին: Նա ուրիշ էլ ո՞ւր կարող էր գնալ: Նրան էլ ի՞նչ էր մնում անելու:

— Սան-Նիկոլո-դա-Տոլենտինո փողոց:

Նա կարծես արդեն եղել էր այնտեղ, պարզ տեսնում էր, թե ինչպես է բարձրանում իր տան սանդուղքով. ահա մտնում է սենյակ, գնում է այն անկյունը, որտեղ գտնվում է պատի կանաչ լաքած, փոքրիկ պահարանը, բացում է, հանում է այնտեղից մի սրվակ և... Նա բնազդաբար ձեռքը տարավ բաճկոնի գրպանը, որտեղ գտնվում էր այդ պահարանի բանալին: Ի՜նչ տարօրինակ է: Նա հիմա մտածում էր հայելու մասին, ձվաձև հայելու, որ կախված էր պահարանի մոտ, և որին ինքը չպետք է նայի, որ իրեն չտեսնի հայելում: Եվ, այնուամենայնիվ նա տեսավ իրեն, այո՜, այո՜, հենց այդ հայելում՝ սրվակը ձեռքին. տեսավ իր ծիծաղող աչքերը, որ կարծես չէին հավատում, որ ինքն արեց այդ բանը: Ո՛չ: Ինքը նախ պիտի գրի և իր ստորագրությամբ վավերացնի հայտարարություն՝ Աուրիտիի համար. մի քանի տող, բայց սպառիչ: Մեղադրողներն արժանի չեն իր վերջին բացատրությանը: Միայն երկու տող, որ փրկի բարեկամին, որն արդեն գտնվում է բանտում:

Թշնամինե՞րը... Բայց հատկապես ո՞վ: Ինչքա՞ն էին նրանք: Բոլորը: Հնարավո՞ր է արդյոք: Երեկվա բոլոր բարեկամները: Բոլորը և մի այնպիսի բան չի արել, որ երեկվա ուրախ ողջույնները հանկարծ փոխվեին այդ բացարձակ հոգեկան օտարացմանը, այդ թշնամանքին: Բայց պահն այդպիսին էր. այդ րոպեի կույր կատաղությունը սրընթաց հարձակվեց նրա վրա, ճանկերով բռնեց ու հոշոտեց մի ակնթարթում:

Ախ, ի՜նչ դանդաղ էր շարժվում այդ կառքը: Կորրադո Սելմիին թվում էր, թե այն չար արհամարհանքով երկարացնում է իր հոգեվարքը:

— Ես ոչ ոքի համար տանը չեմ,— ասաց նա ծեր ծառա Պյետրոյին, որ երկար տարիներ ապրում էր նրա մոտ:

Մտնելով սենյակ, Սելմին ամենից առաջ գնաց դեպի փոքրիկ պահարանը: Բայց իսկույն էլ զսպեց իրեն: Նա մտածեց հայտարարության մասին, որ պիտի գրի: Այնուամենայնիվ, ցանկացավ նախ վերցնել սրվակը և, չնայելով դրան, տարավ առանձնասենյակ ու դրեց գրասեղանին: Որոշ ժամանակ նա կանգնեց՝ կարծես անվճռական, կարծես փորձելով հիշել ինչ-որ բան, որ վճռել էր անել, բայց հիմա մոռացել էր: Մի տեսակ իր կամքից անկախ՝ կամացուկ վերադարձավ սենյակ. հայացքն ընկավ փոքրիկ, ձվաձև հայելուն, որ կախված էր պատին, պահարանիկի մոտ. նա մոռացել էր իրեն նայել հայելում: Բայց հիմա թոթվեց ուսերը և վերադարձավ գրասեղանի մոտ. նստեց, թղթապանակից հանեց մի թերթիկ ու ծրար, նայեց, թե կա՞ արդյոք զմուռսի ձողիկ ու կնիք. նորից վեր կացավ ու գնաց սենյակ, որ գիշերային սեղանիկից վերցնի մոմով մոմակալը:

Հայտարարությունն ստացվեց ոչ այնքան կարճ, ինչքան նա էր ուզում, քան որ Աուրիտիին ավելի լավ պաշտպանելու համար նա որպես վկայի վկայակոչեց հենց իրեն՝ բանկի նույնպես արդեն ձերբակալված կառավարչին, որի հետ գաղտնի պայմանավորվել էր՝ նախքան ուրիշի անունով այդ փոխառությունը վերցնելը: Ավարտելով գրելը, Սելմին նայեց գրասեղանի վրայի սրվակին և հանկարծ զգաց, որ ցանկություն չունի գրածը կարդալու: Նրան ուժից վեր էին թվում բոլոր այն մանրուքները, որ դեռ մնում էին անելու՝ չորս տակ ծալել թերթիկը, դնել

ծրարի մեջ, վառել մոմը, հալել զմուռսի ձողը, կնիք դնել... Նա այդ ամենն արեց վիատությամբ: Նրա շունչը կտրվում էր, մատները, որ կորցրել էին զգայնությունը, չէին ենթարկվում: Նա կնքում էր ծրարը, երբ ցածից՝ փողոցից լսվեց երգեհոնիկի ականջ ծակող, կոպիտ ձայնը: Սելմիին թվաց, թե հիմա այդ ձայնից կտոր-կտոր կլինի իր զանգը. նա փակեց ականջները, վեր թռավ, կնճռոտվեց՝ կարծես անտանելի ցավից, և արդեն ուզում էր մոտենալ պատուհանին, որ հայհոյանքներ տեղա թափառիկ երգչի գլխին: Ա՛խ, ո՛չ, գրողը տանի: Միայն թե ո՛չ այդպես: Նեապոլիտանական երգի՞ հնչյունների տակ: Ո՛չ, ո՛չ և ո՛չ: Նա իրեն նվաստացած զգաց սեփական կատաղությունից: Թե՞ ինքն իսկապես զող է: Հարկավոր է ամեն ինչ հանգիստ անել՝ առանց ձեռքերի դողի, առանց բերանի չորության, հարկավոր է սանձել ջղերը, ժպտալ, նա պետք է իրեն սպանի այնպես, ինչպես վայել է իրեն: Սելմին վերցրեց հայտարարությամբ ծրարը և դրեց թղթապանակի մեջ. գրպանը խցկեց թույնի սրվակը: Նա նորից ցանկացավ դուրս գալ վերջին զբոսանքին, վերջին ողջույնը հղել կյանքին՝ փրկվելով ամեն տեսակ հոգսերից, ազատվելով բոլոր կրքերից, վճիտ աչքերով և անամպ հոգով. կյանքին ողջույն հղել՝ ժպտալով իր սովորական թեթև ժպիտով, վերջին անգամ հագենալ այն ամենով, ինչ շարունակում է ապրել՝ այդքան ուրախ այդ արևոտ օրը, ոչինչ չիմանալով իրադարձությունների այդ պղտոր հորդացման մասին, որը, միևնույն է, շուտով իր հետ կտանի ժամանակի ընթացքը: Սելմին ելավ փողոց, կառք կանչեց և պատվիրեց իրեն տանել Ջանիկոլո: Սկզբում նա կարծես բթացավ ու խլացավ, ինչպես լինում է, երբ հանկարծ խցանվում են մարդու ականջները. ոչինչ չէր նկատում, չէր տեսնում, ոչ մի բանի մասին չէր մտածում. միայն՝ երբ կառքն անցավ «Ռեգինա Ցյոլի» բանտի մոտով, նա մտածեց, թե գուցե այդ ժամին այնտեղ փակեցին Ռոբերտո Աուրիտիին. բայց այլևս չէր ուզում վշտանալ դրա համար: Շատ շուտով, իր հայտարարության շնորհիվ, Ռոբերտոն դուրս կգա այնտեղից, որպեսզի շարունակի իր անկայուն ու տանջալից գոյությունը՝ սինյորա Լալլայի, Պասսալակուայի ու Բոնոմեի հետ՝ այն ժամանակ, երբ ինքը, ընդհակառակը, ամեն ինչից կազատվի արդեն:

Հասնելով բլրի գագաթը, նա, իսկապես, ինչ-որ ազատություն զգաց այդ բարձունքում, որտեղից կարող էր նայելով հիանալ Հռոմով, որ շողում էր արևի տակ, երկնքի պայծառ կապույտի ներքո: Դա ազատություն էր բոլոր մանր, բայց դառն վշտերից, որոնք այնտեղ՝ ցածում, վիրավորում էին ու խեղդում նրան, առօրյա կյանքի խղճուկ գռեհկության հետ բախումներից, փոքր մարդկանց ձանձրալի վեճերից, որ նրան խանգարում էին շարժվել ու շնչել: Այստեղ ՝ վերևում նա իրեն զգում էր ազատ ու միայնակ, ազատ ու անխոռով, բոլոր վիրավորանքներից վեր կանգնած, բոլոր կրքերից վեր, ժամանակից վեր ու դուրս, այդ ամենից բարձրացած իր մեծ սիրով դեպի կյանքը, որն ինքը պաշտպանում է՝ սպանելով իրեն: Այդ զգացմունքով համակված և դրանով զինված՝ իրեն զգաց մաքրված առհավետ: Այդ ակնթարթի հավերժության մեջ ջնջվեցին, նրան ներված թվացին իր բոլոր թուլությունները, բոլոր փոխզիջումները, բոլոր մեղքերը. չէ՛ որ նա մարդ էր և դրա համար ենթակա թշնամական անհրաժեշտության: Հիմա իր մահով ինքը կհաղթի նրան: Այդ ակնթարթում մնացել էր միայն նրա պայծառ, չմթագնված անմահ սերը կյանքի նկատմամբ, իր երկրի, իր հայրենիքի նկատմամբ, որի համար մարտնչել էր ու հաղթել: Այո՛, այնպես, ինչպես ուրիշ շատերը, որոնք այնտեղ՝ ցածում, պաշտպանելով Հռոմը, զոհվեցին հրաշալի մահով, ընկնելով պատանության խանդավառ ու մոլեգին տարիներին և հենց դրանով խուսափելով բոլոր դժբախտություններից, ազատվելով բոլոր խոչընդոտներից, որոնք գուցե հետագայում աղավաղեին նրանց նկարագիրը և նվաստացնեին: Հիմա՝ այս ակնթարթում, նա էլ, դեն նետելով իրենից բոլոր դժբախտությունները, ազատվելով բոլոր խոչընդոտներից, այրվելով թրթռալով առաջվա խանդավառությամբ, ոսկի փայլը աչքերում, իր վերջին արևի փայլը՝ մեծ, քառակուսի քաղաքի տների վրա, նախապատրաստեց իր համար, ինչպես և նրանք, հրաշալի մահ. մահ, որը բարձրացնում է նրան իրենից էլ վեր, այնպես որ նա կարող էր ամենևին նախանձ չզգալ նրանց նկատմամբ, ում փառքը հավերժացնում էին մարմարե կիսանդրիները: Նա մտածեց, որ թույնի սրվակն իր մոտ է. բայց ո՛չ, տանը, տանը, հանգիստ, իր անկողնում. հո ներկայացում չպիտի սարքել, Եվ նա նորից գնաց քաղաք:

Երբ իջավ, նրան թվաց, թե այնտեղ՝ վերևում, արևի շողերի մեջ թողել է իր հոգին: Այստեղ՝ ստվերում, դեռ ողջ էր (կարճ ժամանակով) միայն նրա մարմինը: Սելմին նայեց իր ձեռքերին,

ոտքերին, և նրա մարմնով մի պաղ սարսուռ անցավ: Բայց այնտեղից՝ վերևից կարծես ինչ-որ ձայն խստորեն արձագանքեց նրան, և նա տիրապետեց իրեն ու պատասխանեց այդ ձայնին, որ շատ շուտով ինքը, առանց տատանվելու, կսպանի իր մարմինը:

Անցնելով երկաթե կամուրջով, Սելմին լսեց, ինչպես լրագրավաճառներն աղաղակում են Հռոմում առավել տարածված թերթի արտակարգ համարի մասին: Նա մտածեց, թե գուցե խոսքը գնում է իր մասին, և կանգնեցրեց կառքը, թերթ գնեց: Իսկապես առաջին էջում պառլամենտի նիստի մասին հաղորդում կար, և վեցերորդ սյունակի վերնագրում աչքի էր զարնում իր անունը՝

ԿՈՐՐԱԴՈ ՍԵԼՄԻ,

որպես խմբագրական հոդվածի վերնագիր: Նա սկսեց կարդալ հոդվածը, բայց շուտով տարօրինակ ձանձրույթ զգաց. նա նկատեց, որ այդ ամենը հիմա իր համար դատարկ են ու չնչին, որ հոդվածն ընդունակ չէ իր մեջ արթնացնելու որևէ զգացմունք, կարծես գրված էր բառերով, որ զուրկ էին իմաստից: Նրան թվաց, թե հոդվածի հեղինակը միայն մի նպատակ է ունեցել՝ ցույց տալ, որ ինքը ողջ է, ողջ է իսկապես և որպես այդպիսին կարող է ու կարողանում է բառերի հետ խաղալ, որպեսզի մյուս ողջերը՝ ընթերցողները, կարողանան ասել. «Տեսեք ինչ կտրիճն է: Տեսեք ինչ լավ է գրում»: Վերևում տպագրված նրա անունով այդ թերթուկը, որ այնպես թեթև էր, հանկարծ նրան քար թվաց, իր սեփական շիրմաքարը, որը, տարօրինակ պատահականության շնորհիվ, դեպի գերեզման ուղևորվելիս նա կառքով տանում էր իր հետ. տարօրինակ շիրմաքար, որի վրա սովորական սուտ գովասանքների փոխարեն գրված էին մեղադրանքներ վիրավորանքներ: Բայց նա ի՞նչ գործ ուներ այդ ամենի հետ: Նա արդեն մեռած էր:

Սելմին շրջեց թերթի էջը: Եվ իսկույն էլ նրա հայացքն ընկավ մի հաղորդման վրա, որ տպագրված էր խոշոր տառերով՝ երկրորդ էջի հինգ սյունակների վրա.

ԵՂԵՌՆԱԿԱՆ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳՈՆԱՅՈՒՄ, ՍԻՑԻԼԻԱՅՈՒՄ

և ցածում՝ ավելի փոքր տառերով. «Ծծմբահանքերի բանվորների ապստամբությունը: Հարձակում լեռնային ինժեներ Կոստայի կառքի վրա: Վայրի տեսարաններ: Ինժեներին սպանում են պատգամավոր Կապոլինոյի կնոջ հետ և այրում են դիակները»:

Կորրադո Սելմին հայացքը հառեց այդ հաղորդմանը՝ սարսափից ու նողկանքից ճնշված: Նա հասկացավ, որ թերթի այդ արտակարգ համարը լույս է տեսել նրանց պատճառով և ոչ թե իր: Պատգամավոր Կապոլինոյի կի՞նը: Սելմին տեսել էր նրան Ջիրջենտիում, երբ գնացել էր այնտեղ, որ պաշտպանի Ռոբերտո Աուրիտիի թեկնածությունը և դառնա մարտավկա Կապոլինոյի ու Վերոնիկայի մենամարտի ժամանակ: Շատ գեղեցիկ կին էր... Սպանվա՞ծ է... Բայց նա ինչպե՞ս է հայտնվել Արագոնայում, այդ ինժեների հետ նույն կառքում: Հա՛, նա այդ ինժեների հետ միասին է մեկնել Հռոմից... Փախո՞ւստ... Կոստան ինժեներ էր Սալվոյի մոտ... ծծմբահանքերի բանվորները շարասյուներով գնացել են ավանից դեպի կայարան՝ վճռելով չթողնել նրան, եթե նա Հռոմից չի բերի հաստատումը, որ իրենց տրված խոստումները կկատարվեն: Ախ ահա թե ի՜նչ... դարձյալ Պրեոլան, Մարկո Պրեոլան, այդ սրիկան, որին Ռոբերտո Աուրիտին զարկեց կղերական թերթի խմբագրության ապակեպատ դռանը... այդ նա է հիմա գլխավորում չարագործների վայրի բանդան... Այդ նա է դրդել նրանց հարձակվել կառքի վրա, սպանել: Ա՛խ, սրի՜կա: Հարձակվել կնոջ վրա... Կոստան սկսել է կրակել... և այդ ժամանակ...

Սելմին չկարողացավ կարդալ շարունակությունը: Նա նստել էր՝ ցնցված, բացած թերթը ձեռքերին, կարծես շնչահեղձ էր լինում այդ զարհուրելի լուրից. նրան թվում էր, թե իրեն է դիպել գազանացած ամբոխի վայրագ շունչը: Նողկանքի պոռթկումի պահին նա ճմրթեց թերթը և դուրս նետեց կառքից: Վաղը կամ նույնիսկ այսօր երեկոյան նոր արտակարգ համարը նույնպիսի խոշոր տառերով կհաղորդի նրա ինքնասպանության մասին:

Երբ Սելմին վերադարձավ տուն, ծեր ծառա Պյետրոն հայտնեց, որ հյուրասենյակում նրան է սպասում Ռոբերտո Աուրիտիի ազգականը՝ Անտոնիո Դել Ռեն:

— Լավ,— պատասխանեց Սելմին,— նրան կթողնես առանձնասենյակ՝ հենց որ ես զանգահարեմ:

Գուցե Պյետրոն նկատողություն էր սպասում, որ ներս է թողել այդ պատանուն, և ծառայի մտքում արդեն պատրաստ էր պատասխանը, թե նա ուժով է տուն խուժել, իսկ հետո ինքը՝ Պյետրոն, արել է ամեն ինչ, որ խանգարի նրան ներս մտնել: Ծառան տարածեց ձեռքերը և խոնարհվեց՝ ի պատասխան նրա վճռական հրամանին. բայց երբ Սելմին գնաց, Պյետրոն էլի որոշ ժամանակ կանգնեց անվճռական՝ արդյոք տիրոջը չնախազգուշացնե՞լ այդ պատանու տարօրինակ, սպառնալից վարվելաձևի և հուզված տեսքի մասին: Հետո կկոցեց աչքերը, թոթվեց ուսերը, կարծես ուզում էր ասել. «Այդպես է հրամանը», և գնաց հյուրասենյակ, որպեսզի աչք չհեռացնի հանգիստ չտվող այցելուից:

— Ահա՛,— ասաց նա՝ գլխի շարժումով ցույց տալով դիմացի դուռը:— Հիմա, հենց որ զանգահարեն...

Անտոնիո Դել Ռեն Է՛լ չէր կարող հանգիստ նստել տեղում, նա ամբողջ էությամբ ալեկոծվում էր: Դեմքը ջղաձգորեն ծռմռվել էր սպասման տանջալից ջղաձգությունից: Մի ձեռքով նա անհանգիստ պրպտում էր գրպանում: Ծեր ծառան շարունակ հետևում էր այդ ձեռքին, որը, թվում էր, պիջակի տակ զենք է շոշափում: Իսկ զանգակը չէր հնչում ու չէր հնչում. ինչքան ավելի շատ ժամանակ էր անցնում, այնքան ավելի էր աճում տագնապը, որ պատանին զուր էր թաքցնում, և այնքան արագանում էին ձեռքի շարժումները: Ծայր աստիճան անհանգստացած ծեր ծառան մոտեցավ դռանը և հազիվ էր հասցրել իր մարմնով ծածկել այն, երբ զանգակի ձայնը լսելով, Անտոնիո Դել Ռեն գազանի նման նետվեց դռան մոտ՝ դաշույնը բարձրացրած, կատաղության պոռթկումի պահին իր ետևից քաշել-տանելով ծեր ծառային, որը երկու ձեռքով գրկել էր նրան:

Խիստ գունատ Կորրադո Սելմին նստել էր գրասեղանի մոտ՝ դեռ ձեռքին բռնած բաժակը, որից հենց նոր թույն էր խմել. սրվակը հիմա ընկած էր թղթապանակի կողքին: Նա շրջվեց և իսկույն էլ շատ սառը հայացքով փոքր-ինչ արհամարհական ժպիտով, որը դողում էր նրա շրթունքներին, զսպեց պատանու պոռթկումը:

— Մի՛ անհանգստանա,— ասաց նա:— Տեսնո՞ւմ ես: Դա ես ինքս եմ արել... Բա՛ց թող նրան...— հրամայեց նա ծառային:— Եվ ես քեզ արգելում եմ ճչալ կամ վազել օգնություն կանչելու:

Նա գրասեղանից վերցրեց կնքած ծրարը և ցույց տվեց պատանուն, որը շնչասպառ էր եղել և հիմա էլ նրան նայում էր սարսափով:

— Դու վատ րոպեի պատահեցիր, տղա՛,— ասաց նա:— Քո դեմքը մռայլ է... Բայց հանգիստ եղիր. այս ծրարը քո քեռու համար է... Նա կազատվի: Թող մնա այստեղ:

Նա նորից ծրարը դրեց գրասեղանին, փակեց աչքերը, սեղմեց շրթունքները, անշարժացավ, և նրա սոսկալի գունատ դեմքին սկսեցին նկատվել կապույտ բծեր: Նա փորձեց վեր կենալ. ծառան մոտ վազեց, որ բռնելով պահի նրան:

— Հասցրո՛ւ ինձ... մինչև մահճակալը:

Նա շրջվեց Անտոնիո Դել Ռեի կողմը և նայեց նրան արդեն թեթևակի հածող հայացքով: Կարծես ժպիտի նշույլը դեռ անցնում էր նրա մարած դեմքով: Եվ նա ասաց տարօրինակ ձայնով.

— Սովորիր ծիծաղել, բարեկամս... Ելիր փողոց. այսօր եղանակը հրաշալի է...

Եվ ծառայի օգնությամբ անհետացավ դռան ետևում:

Ինչպես Ռոբերտոյի ձերբակալությունից հետո Անտոնիո Դել Ռեն Կոլոնետտե փողոցից վազեց Սելմիի տուն, այնպես էլ Մաուրո Մորտարան, բայց բոլորովին այլ հոգեվիճակում, վազեց Լանդո Լաուրենտանոյին փնտրելու: Սոմմակամպանիա փողոցի վիլլայում լակեյ Ռաֆայելեն ասաց նրան, որ տերը, թերթում կարդալով Սիցիլիայում՝ Ջիրջենտիի գավառում, կատարված սպանության լուրը, ցատկել է կառքը և գնացել Վելլայի տուն:

— Որտե՞ղ է դա: Ճամփան ինչպե՞ս գտնեմ:

— Եթե ուզում եք, ես ձեզ կուղեկցեմ, կառք վարձենք:

Կառքում՝ տեսնելով, թե նա ինչպես է անհանգստանում և ուզում է շուտ տեղ հասնել, Ռաֆայելեն հարցրեց, թե նա ճանաչո՞ւմ էր արդյոք այդ սինյորային և այդ ինժեներին:

— Ի՞նչ սինյորայի: Ի՞նչ ինժեների:

— Ի՞նչ: Դուք չե՞ք լսել: Ոչինչ չգիտե՞ք: Նրանց սպանել են Արագոնայում:

— Արագոնայո՞ւմ...

— Հանքափորները...

— Բայց այս ի՞նչ է...

Եվ նա կտրուկ ընդհատեց իր խոսքը՝ չռված աչքերով նայելով նախ ծառայի դեմքին, հետո՝ փողոցով անցնող մարդկանց, կարծես հանկարծ նրան համակեց կասկածը, թե չի՞ պատահել արդյոք որևէ զարհուրելի աղետ, որի մասին ինքը ոչինչ չգիտի:

— Բայց այս ի՞նչ է կատարվում: Ամեն ինչ տակնուվրա եղավ: Այնտեղ սպանում են, այստեղ՝ ձերբակալում: Դուք գիտե՞ք, որ ձերբակալել են Ռոբերտո Աուրիտիին:

— Տիրոջ հորաքրոջ որդո՞ւն:

— Այո՛, այո՛, հորաքրոջ որդուն: Իսկ նա գնում է Վելլայի մոտ: Նրա հորաքրոջ որդուն ձերբակալում են, դոն Ռոբերտո Աուրիտիին՝ հազարից մեկին. վաթսուն թվականին նա տասներկու տարեկան էր, բայց կռվում էր: Իսկ նրա հայրը մեռավ իմ ձեռքերի վրա, Միլացցոյում... Ձերբակալված է: Իմ աչքերի առաջ: Եվ դա, և դա ես դեռ պիտի տեսնեի:

Նա սկսեց գոռալ, ձեռքերով զանազան շարժումներ անել ու բարձրաձայն լալ. և անցորդները կանգնում էին, շրջվում այդ տարօրինակ հագնված, մախաղն ուսին ծերունու կողմը, որը բարձր սուգ ու շիվանով սլանում էր կառքով ինչ-որ տեղ:

— Լռեցե՛ք: Լռեցե՛ք:

Բայց ի՞նչ լռություն այդտեղ: Մաուրո Մորտրան արդարություն էր պահանջում, հատուցում՝ այդ ձերբակալության համար. և այդ ժամանակ Ռաֆայելեն, որպեսզի նրան ստիպի լռել, խոսեց այն մասին, որ դոն Ջուլիոն՝ դոն Ռոբերտոյի եղբայրը, մի քանի օր առաջ եկել էր իր տիրոջ մոտ՝ հավանաբար, այդ նույն պատճառով:

— Դե, իհա՛րկե,— բացականչեց Մաուրոն:— Ես այնտեղ էի: Ես այնտեղ էի: Ես տեսա, թե նա ինչպես էր լալիս: Դրա՞ պատճառով էր, ուրեմն, լալիս խեղճ տղան: Նա օգնություն է խնդրել... Եվ ուրեմն... և ուրեմն՝ դոն Լանդոն մերժել է նրան: Հնարավո՞ր բան է:

— Գուցե գումարը չափազանց մեծ է եղել:

— Դուք ի՞նչ եք ասում ինձ, չափազանց մե՞ծ: Երբ խոսք է գնում հայրենասերի պատվի՞ մասին: Եվ նա հարուստ է: Իսկ նրա հորաքույրը ոչինչ չստացավ հայրական փողերից. ամեն ինչ վերցրեց ավագ եղբայրը… Օ՛, աստված, աստված... Դոննա Կատերինան կմեռնի սրտի պայթումից: Բայց եթե դա ճիշտ է, որ նա մերժել է օգնությունը, երդվում եմ տիրամոր անունով, ես էլ չեմ նայի նրա երեսին: Աստված է վկա: Չեմ հավատում, չեմ ուզում հավատալ:

Գալով Վելլայի տուն, նա այնտեղ այնպիսի իրարանցում գտավ, որ չկարողացավ նույնիսկ մտածել այն մասին, որ Լանդոյից բացատրություն պահանջի Ռոբերտո Աուրիտիի ձերբակալության համար: Դիանելլա Սալվոն՝ նրա սիրելի բարեկամուհի դոննա Դիանելլան, նրա աղավնյակը, որը Վալսանիայում անցկացրած մի ամսվա ընթացքում կարողացավ ձեռնասուն դարձնել նրան, մեղմացնել իր հայացքի ու ձայնի փաղաքուշ քնքշությամբ, հիմա՝ տեսնելով, որ նա հյուրասենյակ մտավ մռայլ ու շփոթահար, իսկույն նետվեց նրան ընդառաջ մի տարօրինակ ծիծաղով, որը նման էր վախեցած ձիուկի խրխնջոցի, կախվեց նրա վզից, ամբողջ մարմնով դողալով, գզգզված գլխով սեղմվեց Մաուրոյի մահուդե վերնաշապիկին, կարծես ուզում էր թաքնվել, և ցույց տալով ետ՝ հորը, ճչաց.

— Գա՛յլը... Գա՛յլը...

Տեսնելով, որ աղջիկն այդպիսի սարսափելի վիճակում կախված է իրենից և հրում է իր կրծքին, Մաուրո Մորտարան շվարած բարձրացրեց գլուխը և նայեց շրջապատի մարդկանց՝ բացատրություն փնտրելով նրանց աչքերում. նրա առաջ վախեցած, վշտացած, լացած դեմքեր էին, ձեռքեր, որ բարձրացված էին երկյուղից, կարծես ինքնապաշտպանության ձգտումով, հուսահատորեն, զարմանքով: Մաուրոն սկզբում չհասկացավ, որ աղջիկը խելագարվել է: Նա երկու ձեռքով բռնեց Դիանելլայի գլուխը և փորձեց պոկել իր կրծքից, որ նայի աչքերի մեջ:

— Աղջիկս,— ասաց նա:— Ո՞վ է ձեզ նեղացրել: Ո՞վ է ձեզ վիրավորել: Ասացեք ինձ: Մարդասպաններ. . . Սի՛րտս. . . պոկեցին սիրտս. . . իմ սիրտն էլ պոկեցին...

Բայց հենց որ տեսավ Դիանելլայի աչքերը, տանջահար, ծամածռված, խղճուկ կերպով ժպտացող դեմքը, արյան շիթը ատամների արանքում, նա սարսափեց, նայեց շուրջը՝ բոլորին, նորից աղջկա գլուխը սեղմեց իր կրծքին և, ձեռքով շոյելով նրա գզգզված մազերը, հոգածու խղճահարությամբ հարցրեց.

— Նո՞ւյնը, ինչ մորն է եղել:— Մաուրոն ընկրկեց, որովհետև Դիանելլան շարունակում էր հրել նրան և ծիծաղում էր նրա կրծքին նույն՝ խրխնջոցի նմանվող ծիծաղով ու տենչանքով կրկնում էր.

— Աուրելիոյի մոտ, Աուրելիոյի մոտ:

Ձարմուհի Լիլիանան մոտ վազեց՝ աչքերն արցունքով լի, իսկ հյուրասենյակի խորքում Լանդո Լաուրենտանոն ու դոն Ֆրանչեսկո Վելլան փորձում էին սիրտ տալ Ֆլամինիո Սալվոյին, որն այդ տեսարանի ժամանակ, նզովելով, դեմքը ծածկել էր ձեռքերով:

— Հապա, Դիանելլա, խելացի եղիր, խելացի եղիր: Նա հիմա քեզ կտանի... կտանի՝ ուր կամենաս... Խելացի եղիր, խելացի եղիր: Աուրելիոյի մոտ:

Բայց հենց որ Դիանելլան լսեց հոր ձայնը, նրան նորից պատեց սարսափը, և նա նորից սկսեց գլուխը թաքցնել Մաուրոյի կրծքին՝ Է՛լ ավելի մոլեգնաբար կառչելով նրանից ու ճչալով.

— Գա՛յլը. . . Գա՛յլը. . .

— Ես եմ, ես: Ո՞ւր է գայլը,— գոռաց նրան Մաուրոն՝ երկու ձեռքով գրկելով:— Մի՛ վախեցեք: Այստեղ միայն ես եմ:

— Տեսնո՞ւմ ես: Սա նա է: Նա՛ է,— կրկնեց Լիլիանան:

Եվ Չիչչինոն ու հորաքույր Ռոզան, որ կանգնել էին նրա մոտ, կրկնեցին.

— Սա նա է: Տեսնո՞ւմ ես, նա եկել է քո ետևից, որ քեզ պաշտպանի, թանկագինս. . .

Խեղճ աղջիկը՝ երջանիկ ու դողահար, մի փոքր բարձրացրեց գլուխը՝ երախտապարտ ժպիտով և շարունակեց Մաուրոյին հրել դեպի դուռը,

— Այո՛, այո՛, Աուրելիոյի մոտ... Աուրելիոյի մոտ...

Մաուրոն՝ հուզմունքից ճնշված և շարունակ ետ մղվելով դժբախտ աղջկա կողմից, մի անգամ էլ նայեց շրջապատի իրեն անծանոթ մարդկանց ու զայրույթով հարցրեց.

— Բայց, ի վերջո, սա ի՞նչ բան է: Ի՞նչ է պատահել: Ի՞նչ է ասում նա: Աուրելիո՞ն: Ո՞վ է դա: Դոն Լեոնարդո Կոստայի որդին: Հա՛, դա նա է... նա, ում սպանե՞լ են:

Բոլորը աչքերով, ձեռքերով լռելու նշաններ էին անում, իսկ մի քանիսը գլխով արեցին հաստատաբար:

— Դիանելլան սիրո՞ւմ էր նրան: Աղջիկս...

Լանդո Լաուրենտանոն ու դոն Ֆրանչեսկո Վելլան տարան Ֆլամինիո Սալվոյին:

— Ասացե՛ք ինձ, ասացե՛ք ինձ, ձեզ ի՞նչ են արել,— շարունակեց Մաուրոն՝ գրեթե զայրալից քնքշությամբ դիմելով Դիանելլային:— Հիմա կգնանք Աուրելիոյի մոտ... Բայց ասացե՛ք ինձ, ձեզ ի՞նչ են արել: Ո՞վ է այդ գայլը: Ես կսպանեմ նրան: Ո՞վ է այդ գայլը,— դիմեց նա ներկաներին, և նրա դեմքն ընդունեց դաժան արտահայտություն:

Բայց ոչ ոք վստահորեն չէր կարող ասել, թե ինչ է պատահել և ում էր ցույց տալիս Դիանելլան իր այդ ճիչով: Կարծես թե հորը և, այնուամենայնիվ, ի՞նչ իմանաս: Գուցե նա հորը ուրիշի տեղ էր դնում: Քանի դեռ նրանք տանը չէին, այստեղ եղել էր Ինյացիո Կապոլինոն: Դիանելլան մենակ էր մնացել, քանի որ իրեն լավ չէր զգում, և, իհա՛րկե, սարսափելի դժբախտությունից խելքը կորցրած Կապոլինոն հենց նրա վրա էր թափել իր հուսահատության ամբողջ կատաղությունը: Չիչչինոն ու Լիլիանան, որ առաջինն էին վերադարձել, լսել էին, թե նա ինչպես է գոռում.

— Քո հայրը, քո հայրը, հասկանո՞ւմ ես:

Բայց հենց որ նրանք ներս էին մտել, Կապոլինոն կատաղած դուրս էր վազել՝ խեղճ աղջկան թողնելով կիսաուշաթափ վիճակում, կարծես շշմած անողոք հարվածից, որ իջել էր նրա գլխին: Դրանից անմիջապես հետո, սարսափով համակված, Դիանելլան սկսել էր ճչալ. «Գա՛յլը... Գա՛յլը...»:

Նրան ի՞նչ էր ասել Կապոլինոն:

Միայն մի մարդ կարող էր այդ իմանալ այնպես լավ, ինչպես եթե ներկա լիներ այդ տեսարանին: Ֆլամինիո Սալվոն, որը հիմա հարևան սենյակում անհաղթահարելի պահանջ էր զգում Լանդո Լաուրենտանոյին և իր աներձագ Ֆրանչեսկո Վելլային պատմելու, թե ինչպես տանջում է իր խիղճը, բայց միևնույն ժամանակ չէր կարող իրեն պահել, որ իրեն մեղադրելով հանդերձ, չարդարանա:

Ֆրանչեսկո Վելլան հարցրեց, թե նա նկատե՞լ էր, որ իր աղջիկը սիրում է Կոստային:

— Չէ որ, եթե դու այդ չգիտեիր…

— Ես այդ գիտեի: Բայց մի՞թե կարող էի ես՝ հայրս, իմ աղջկան առաջարկել իմ ծառայողին: Այդ դժբախտը երբեք ոչինչ չէր նկատում իմ աղջկա համեստության պատճառով, նաև այն պատճառով, որ նրա գլուխն էլ չէր կարող գալ նման միտք. առավել ևս, որ նա որոշ ժամանակից ի վեր կիրք էր տածում մյուս դժբախտ կնոջ նկատմամբ: Իհա՛րկե ես մեղավոր եմ, ես մեղավոր եմ. ինձ համար արդարացում չի կարող լինել: Ոչ ոք ինձանից լավ չի հասկանում իմ մեղքը: Ես բարերարություն արեցի խեղճ պատանուն, ինչպես

բարերարություն արեցի բոլոր նրանց, ովքեր սպանեցին նրան: Ուրիշ ի՞նչ կարող է դուրս գալ բարերարությունից: Կոստան մեծացել է իմ տանը, որդուս նման, և այս խեղճ աղջնակը... Այո՛, իհարկե: Ես հասկանում էի, որ չարիքը, որ կատարել եմ՝ այդ տղային բարերարություն անելով, կվերջանա այն բանով, որ հարկ կլինի նրանց ամուսնացնել: Այնուամենայնիվ, խոստովանում եմ, դա ինձ համար հաճելի չէր, և ես փորձում էի հետաձգել դա՝ ինչքան հնարավոր է: Բայց տեսնում եք. ես Կոստային կանչեցի Սարդինիայից և նրան հանձնեցի Արագոնայի հանքերի կառավարումը, և այստեղ՝ Հռոմում, ես Կապոլինոյին ասացի, որ եթե Կոստային հաջողվի այնտեղ սանձահարել այդ անասուններին, ես որպես պարգև նրան կտամ իմ դստերը: Այո՛, ճի՛շտ է, ես հոգուս խորքում ուրիշ մտադրություններ ունեի, ավելի ճիշտ՝ ուրիշ հույսեր: Օ՛, սինյորներ, իմ դստեր համար ես կարող էի երազել բոլորովին այլ բան... (այս ասելով, նա հայացքը հառեց Լանդո Լաուրենտանոյին): Ահա թե ինչու ես նրան բերեցի Հռոմ և ուզում էի թողնել քրոջս տանը՝ այն հույսով, որ նա կմոռանա այդ մանկական քմահաճույքը: Դե, իսկ սինյորա Կապոլինոն որոշեց օգտագործել իմ այդ հույսը, որպեսզի խորտակի իմ ծրագրերը. նա ցանկացավ գնալ Կոստայի հետ, որպեսզի նրան առհավետ խլի իմ աղջկանից: Իսկ Կապոլինոն գուցե հույս ուներ, որ երբ Աուրելիոն նշանվի իմ աղջկա հետ՝ նախապես դառնալով իր կնոջ սիրեկանը, ինքը կարող է առաջվա նման տեղ գրավել իմ տանը: Եվ հիմա, հիմա, երբ նրա համար ամեն ինչ փուլ եկավ, նա իր մեքենայությունները ներկայացրեց իմ աղջկան՝ որպես իմը: Բայց, երդվում եմ ձեզ, սինյորներ, որ ես կվռնդեմ նրան, կվռնդեմ: Եթե նույնիսկ. հիմա... հիմա...

Նա թոթվեց ուսերը և տարածեց ձեռքերը, կարծես թե վանելով իր այդ սպառնալիքը, կարծես թե ապագայի ամեն մի մտադրություն նրան անտանելի սրտախառնուք էր պատճառում: Եվ նա նետվեց բազկաթոռի մեջ, ասես նրան հետզհետե ավելի ու ավելի ցած էր կռացնում սարսափելի, մաշող դատարկությունը, որ մնացել էր նրա հոգում այդքան երկար զեղումներից հետո:

Նա այլևս ոչինչ, ոչինչ չէր զգում՝ ո՛չ խղճահարություն, ո՛չ կապվածություն՝ ում նկատմամբ էլ որ լիներ: Զգում էր միայն մի անսահման թախիծ, նույնիսկ մի տեսակ շնչահեղձություն ամեն ինչից և հատկապես այն դերից, որ ինքը պիտի կատարի՝ անմխիթար հոր դերից, քանի որ իրականում նրա մեջ միայն անբավականություն կար, նաև սրտնեղություն և ամոթի նման ինչ-որ բան, հենց ամոթի: Աղջկա այդ խելահեղ, բուռն սերը մի մարդու նկատմամբ, որը սիրահարված է ուրիշի, վրդովում էր նրան, ինչպես մի ամոթալի բան: Եվ նա հարցրեց իրեն չար խստությամբ՝ երբևիցե ինքը ամբողջ սրտով իսկապես սիրե՞լ է իր աղջկան: Ո՛չ: Նա սիրել է աղջկան միայն պարտքի զգացումից: Իսկ հիմա, երբ այդ պարտքը նրա համար դարձել էր այդքան ծանր ու տանջալից, նա միայն թախիծ էր զգում ու սրտախառնուք, և ոչինչ ավելի: Այո՛, իհա՛րկե, չէ՛ որ նրա դուստրը դատապարտված էր հենց ճակատագրով: Մի՞թե նրա մայրը խելագար չէր: Եվ հիմա այն ամենը, ինչ կարող էր պատահել նրան, արդեն պատահել է: Չափը լրիվ լցվել է, և հիմա բավական է: Ճակատագիրը պատժեց իրեն այն ամենով, ինչով որ կարող էր: Բայց այդ սարսափելի, անպտուղ ամայության մեջ ինքը մնացել էր տեր և ոչինչ չուներ վախենալու: Մահը նրան չէր սարսափեցնում: Եվ այդ ժամանակ նրա հայացքն իր կողմը գրավեց ծնկին դրված իր մազոտ ձեռքի կարճ ճկույթի մատանու խոշոր ադամանդի փայլը: Չգիտես ինչու, այդ փայլը նրա մեջ արթնացրեց հիշողություն Նիկոլետա Կապոլինոյի մարմնի մասին, որ այրել են այդ անասունները: Նա բարձրացրեց գլուխը և փքեց ռունգները: Ինչպես կուզենար սիգար ծխել: Բայց և իսկույն մտածեց, որ այդպիսի պահին ծխել չի կարելի. դա անպատշաճ կթվա: Նա լսեց, որ Ֆրանչեսկո Վելլան Լանդո Լաուրենտանոյին ասաց.

— Այո՛, իհա՛րկե, կարելի է չկասկածել. նրանք փախել են: Նրանք մեկնել են չորս օր առաջ և միայն այսօր են հասել Արագոնա... Որտե՞ղ են եղել այդ չորս օրը:

Սալվոն խառնվեց զրույցին՝ խոսելով արդեն ուրիշ ձայնով, ուրիշ տեսքով, որ բոլորովին նման չէր առաջվանին:

— Ոչ մի կասկած չի կարող լինել,— ասաց նա:— Արդեն երրորդ օրը Կոստան Նեապոլից ինձ նամակ է ուղարկել՝ աշխատանքից ազատվելու խնդրանքով: Այսպիսով, նա սեփական

ցանկությամբ է մեկնել Արագոնա՝ մեռնելու. ուրեմն՝ ես կարող եմ դրանում ինձ մեղավոր չհամարել:

Այդ պահին ներս մտավ Չիչչինոն. նրա տեսքը մի տեսակ անվճռական էր. նա սաստիկ շփոթված էր այն բանից, ինչ ինքը պիտի հաղորդեր:

— Լանդո՛,— ասաց նա անվստահ եղանակով,— ես պետք է քեզ նախազգուշացնեմ... Այն ծերունին...

— Մաուրո՞ն:

— Այո՛... նա քո ծառայի հետ եկել է քո ետևից, որ... Նա ասում է... նա ասում է, թե ձերբակալված է Ռոբերտո Աուրիտին:

Լանդոն գունատվեց, հետո կարմրեց՝ խոժոռելով հոնքերը, կարծես ինչ-որ մտքի պատճառով, որ տիրեց նրան՝ իր կամքից անկախ. նա շփոթություն զգաց՝ գտնվելով մարդկանց մեջ, որոնք ավելի մեծ վիշտ ունեին:

— Գնացե՛ք, գնացե՛ք,— շտապով ասաց Ֆլամինիո Սալվոն՝ պարզելով ձեռքը, իսկ մյուսը դնելով նրա ուսին, որ ուղեկցի մինչև դուռը:

— Ցանկանում եմ ձեզ,— ասաց այդ ժամանակ Լանդոն,— որ ձեր աղջկա մոտ դա լինի ժամանակավոր ցնցում:

Ֆլամինիո Սալվոն փակեց աչքերը և օրորեց գլուխը.

— Ես ինձ համար պատրանքներ չեմ ստեղծում:

Այդպես էլ նրանք վերադարձան հյուրասենյակ՝ իրար ձեռք բռնած:

Հուսահատության հասած Մաուրո Մորտարան շնչահեղձ էր լինում. դժբախտ խելագար աղջիկը դեռ կախված էր նրա վզից: Տեսնելով ներս մտնողներին, նա չկարողացավ զսպել իրեն. երերաց, կոկորդից դուրս պրծավ ինչ-որ մնչոց, և նա գոռաց.

— Բռնե՛ք աղջկան... Վերցրե՛ք աղջկան... Նա ձեռք տվեց նրան... Ես նրան տեսնել չեմ կարող... Իսկ գիտե՞ք նրա անունն ինչ է: Նա կրում է իր պապի անունը՝ Ջերլանդո Լաուրենտանո:

Եվ ազատվելով Դիանելլայի ձեռքերից, նա դուրս վազեց:

Ֆլամինիո Սալվոյի շրթունքները հավաքվեցին դառն ժպիտով՝ ավելի շուտ հեգնական կարեկցանքից, քան վրդովմունքից, և ի պատասխան Լանդոյի ներողությանը, նա ասաց.

— Համաճարակ է... Դատարկ բաներ են, իշխան... Խենթությունը, դժբախտաբար, վարակիչ է:

Գլուխ V

Ջիրջենտիում՝ Պորտո-դի-Պոնտոյից այն կողմ, մեծ պարապուտում, քաղաքի մուտքի մոտ բազմություն էր խառնվել, սպասելով մինչև Վալ-Սոլլանո կայարանից ձիերով կբերեն Նիկոլետա Կապոլինոյի և Աուրելիո Կոստայի աճյունները (ըստ լուրերի՝ մի արկղում):

Բոլոր դեմքերն արտահայտում էին շփոթվածություն, սարսափ ու նողկանք այդ գազանային սպանության նկատմամբ, որի պատճառով քաղաքում ու շրջանում արդեն երկու օր տիրում էր մեծագույն գրգռվածություն: Բոլոր հայացքներն արտահայտում էին լարված ու վշտալի ուշադրություն, կարծես մարդիկ և՛ սարսափում էին նոր տեղեկություններից ու ավելի ստույգ մանրամասներից, և՛ միևնույն ժամանակ չէին ուզում ոչ մի բան բաց թողնել, քանի որ այն, ինչ արդեն հայտնի էր, ոչ ոքի չէր բավարարում, և բոլորը ցանկանում էին տեսնել ու, կարելի է ասել, հայացքով շոշափել արկղը՝ ակնհայտ ապացույցն այն բանի, որ այստեղից

հեռու կատարված և գրեթե անհավատալի թվացող ոճրագործությունը իսկապես եղել է: Նրանց չէր հաջողվել ներկա լինել այդ վայրի տեսարանին և հիմա ուզում էին՝ որքան այդ հնարավոր էր, տեսնել դրա ողբալի հետևանքները:

Զոհերի մահվան պատճառները (համենայն դեպս՝ դրանցից մեկը) առաջ էլ էին հայտնի. բայց հիմա ի հայտ էին գալիս նոր հանգամանքներ, որոնք իրադարձությանը Ё՛լ ավելի ողբերգական բնույթ էին տալիս և հարուցում էին զարմանք ու խղճահարություն: Այդ նոր լուրերը որոշ չափով մեղմացրին համընդհանուր վիշտը, բայց չնվազեցրին կարեկցանքը այդքան դաժան սպանության զոհերի նկատմամբ և զայրույթը մարդասպանների դեմ, որ խայտառակեցին ամբողջ գավառը:

Բոլորի աչքերի առաջ այդ գեղեցկուհու պատկերն էր, երբ նա հպարտորեն քայլելով իր շքեղ արդուզարդով, անցնում էր Սալվոյի կառքով և թեթևակի թեքում գլուխը՝ ողջույններին պատասխանելով ժպիտով, որ բարեհաճ էր և միաժամանակ փոքր-ինչ թախծալի: Բոլորը արտասովոր պարզությամբ էին պատկերացնում նրա կերպարի որոշ՝ առանձնապես ցայտուն մանրամասները՝ դեմքի արտահայտությունը, ատամների սպիտակությունը, որ երբեմն առ երբեմն մի քիչ երևում էին վարդագույն շուրթերի արանքում, երբ նա ժպտում էր, աչքերի փայլը սև թարթիչների տակից. և մի ինչ-որ անբացատրելի շփոթությամբ մարդիկ հարցնում էին իրենց, թե այն ժամանակ ո՞վ կարող էր երևակայել, որ նրան այդպիսի վախճան է սպասվում: Այդպես միանգամից հրաժարվել բարեկեցիկ կյանքից ու հարգանքից, որին հասել էր այն բանի շնորհիվ, որ Սալվոն նրա բարեկամն էր, իսկ ամուսինը պատգամավոր էր, փախչել մի մարդու հետ, որի ամուսնական առաջարկը մերժել էր առաջ. դրա համար, հավանորեն, պետք է խենթացած լիներ: Բայց հնարավոր է, որ նախանձն է նրան դրդել այդ քայլին, այո՛, թերևս նախանձը Դիանելլա Սալվոյի նկատմամբ, որը թաքուն սիրում էր Կոստային... Հնարավո՞ր է, որ այդպես էլ եղել է: Չէ՛ որ զուր չէ հայտնի դարձել, որ այդ խեղճ աղջիկը, հենց որ իմացել է նրանց փախուստի ու մահվան մասին, խելագարվել է, ինչպես իր մայրը: Ուրեմն նրանց՝ այդքան սարսափելի մահվանն ընդառաջ նետեց դավաճանությունը, սիրային արկածը, որը գուցե երկուսից միայն մեկի համար էր իսկապես սիրային և որը բավական էր, որպեսզի ամբողջ շրջանում մեծագույն սկանդալ առաջացնի: Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ են նրանք գնացել Արագոնա, որտեղ (չէ՛ որ նրանք այդ շատ լավ գիտեին) նրանց սպասում էին այդ գայլերը, որոնք սովահար էին եղել այն ամիսների ընթացքում՝ քանի դեռ Սալվոյի հրամանով հանքահորերը փակ էին մնացել: Հենց այն պատճառով, որ, փախչելով միասին, նրանք բոլորովին էլ չէին շտապում հասնել Ջիրջենտի: Նրանց փախուստը ամոթալի էր ո՛չ այնքան ամուսնու համար, որքան Սալվոյի, և հենց դրա համար էլ նրանք գնացել էին այնտեղ, որտեղ բոլորը դեմ էին Սալվոյին: Գուցե Կոստան հնարավոր է համարում կամ գոնե հույս ուներ, որ եթե ինքը տեղ հասնելուն պես իսկույն հայտնի, որ ինքն էլ է ապստամբել Սալվոյի դեմ, բանվորներն իրեն կընդունեն որպես ընկերոջ և իր վրա չեն բարդի պատասխանատվությունն այն բանի համար, որ չի կատարել խոստումները: Եվ, բացի այդ, Արագոնայում էր գտնվում նրա տունը. գուցե այնտեղ էր գնում միայն իրերը, աշխատանքի գործիքները, գրքերը վերցնելու և անմիջապես մեկնելու՝ վերադառնալու Սարդինիա՝ իր առաջվա տեղը: Այո՛, բայց կնո՞ջ հետ: Գոնե նրան թողներ որևէ տեղ: Այո՛, բայց գուցե Նիկոլետան ինքն է կամեցել նրա հետ միասին գնալ վտանգին ընդառաջ: Այդ կինը հպարտ հոգի ուներ և կարողացավ դրսևորել այդ վայրենիների հորդայի առաջ: Նա կանգնել է կառքում և, իր մարմնով ծածկելով Աուրելիո Կոստային, բղավել է, թե նա ազատվել է Սալվոյի մոտից, որովհետև գործատերը չի կատարել խոստումները: Բայց այդ վիժվածք Մարկո Պրեոլան գոչել է.

— Մա՛հ պոռնկուհուն:

Եվ վայրենիների հորդայով, որն սկզբում ապշել էր երիտասարդ կնոջ հիանալի խիզախությամբ, դող է անցել: Գուցե Նիկոլետա Կապոլինոն դեռ կարողանար զսպել նրանց և ստիպել լսելու իրեն, եթե չլիներ Աուրելիո Կոստայի խենթությունը. ի պատասխան հաշվեհարդարի այդ կոչին, կեղտոտ վիրավորանքին, նա զենքը ձեռքին նետվել է Նիկոլետային պաշտպանելու: Այդ ժամանակ կառքի վրա են հարձակվել բոլոր կողմերից, գործի են դրել դանակներն ու հանքահատ մուրճերը. երկուսն սպանվել էին, իսկ հետո

բառացիորեն հոշոտվել՝ կարծես կատաղած շների ոհմակի կողմից. նույնիսկ կառքը ջարդուփշուր է արվել, և երբ անվաճաղերի, դռնակների, նստելատեղերի կույտի վրա նետել են երկու մարմինների խղճուկ, անճանաչելի աճյունները, ինչ-որ մեկը դրանց վրա նավթ է լցրել պղնձե մեծ, կլոր լապտերից, որ քարշ տվել, բերել էին հարևան երկաթուղային կայարանից, ինչ-որ մեկը քծնողաբար ու երկչոտ կատաղությամբ սկսել է վառել խարույկը, կարծես ցանկանալով իրենց սեփական աչքերից շուտ թաքցնել հաշվեհարդարի սոսկալի հետևանքները:

Հրապարակում հավաքվածներն այդպես՝ գրեթե հաճույք ստանալով իրենց սեփական սարսափից, վերհիշում էին բոլոր մանրամասները, կարծես եղել էին սպանության ականատեսներ, և այդ տեսարանը մինչև հիմա իրենց աչքերի առաջ էր: Բոլորը կարծես տեսել էին արնաշաղախ սրիկային, որ պղնձե լապտերից նավթ էր լցնում խարույկի վրա գցած դիակների նողկալի կույտին, և մյուս չարագործներին, որոնք կռանալով, լարումից շնչասպառ լինելով, բորբոքում էին կրակը:

Հայտնի էր, որ շատերը, վաթսուն մարդուց ավելի, ձերբակալվել էին այդ վիժվածք Մարկո Պրեոլայի հետ, որն սկզբում գործում էր որպես կղերական կուսակցության կամակատար, իսկ հետո՝ Արագոնայի հանքափորների միության նախագահ: Ուրեմն շատ շուտով, գուցե նույնիսկ այսօր սպասվում է նոր տեսարան՝ զույգ-զույգ շղթայված այդ սրիկաների փոխադրումը կայարանից «Սան-Վիտո» բանտը՝ հեծյալ կարաբինակիրների ու զինվորների խոշոր պահակախմբի հսկողությամբ:

— Ախ, ահա՛, բերո՛ւմ են, բերո՛ւմ են: Իսկ ո՞ւր է արկղը: Հրե՛ն այնտեղ է: Օ՛յ, ի՛նչ փոքր է: Հրե՛ն, երրորդ կառքում, այնտեղ կառապանի տեղում ֆելդֆեբելն է նստել: Օ՛հ, ամբողջ արկղը տեղավորվում է առջևի նստելատեղին: Հրեն, ա՛յ, այն մետաղե արկղը: Դա՞: Այնտե՞ղ, որտեղ մյուս նստելատեղին ոստիկանության կոմիսարն է: Հա՛, հա՛: Իսկ ո՞վ է նրա կողքին: Ա՛խ, Լեոնարդո Կոստան է: Հա՛յրը: Հա՛յրը: Ախ, խե՛ղճ հայր, և արկղը նրա առաջ է:

Խղճահարության կարեկցանքի բացականչություններ էին լսվում ամբոխից, երբ տեսնում էին հորը, որի դեմքին կարծես քարացել էր սարսափի ու զայրույթի արտահայտությունը. արկղին հառած նրա աչքերը կարծես հարցնում էին, թե ինչպե՞ս կարող է այնտեղ գտնվել իր որդին, իր նեցուկը: Ի՞նչ է մնացել իր որդուց, եթե այդ արկղի մեջ տեղավորվել են երկու մարմին: Միայն գլուխնե՞րը: Այո՛, գուցե կտրված գլուխները և էլի ինչ-որ ածխացած մնացորդնե՞ր: Օ՛, աստվա՛ծ, աստվա՛ծ:

Գրեթե բոլորը լալիս էին, շատերը բարձր հեծկլտում էին:

Լսելով այդ լացն ու հեծկլտոցները, Լեոնարդո Կոստան նույնպես սկսեց ողբալ, և նրա ամբողջ վիշտն ու հուսահատությունը դուրս հորդեց այդ մռնչյունով, որի մեջ արդեն մարդկային ոչինչ չկար, և նա, ջղաձգորեն ծամածռվելով, ընկավ ոստիկանության կոմիսարի ձեռքերի վրա:

Կառքը կանգնեց դեպի հրապարակ տանող ոլորանի մոտ, որտեղ գտնվում էր պրեֆեկտուրան, և տեղավորված էր նաև ոստիկանության կոմիսարիատը: Երկու ոստիկաններ վերցրին արկղը: Կավալեր Ֆրանկոն Լեոնարդո Կոստային օգնեց իջնել: Խեղճ մարդը, թեև պինդ ծերունի էր, հիմա չէր կարողանում ոտքի վրա կանգնել. նրա ականջից արյուն էր հոսում, որովհետև կայարանում, զայրույթի պոռթկման պահին պոկել էր ոսկե ականջօղը: Մյուս ոստիկանները շարվեցին մուտքի առաջ՝ շքամուտքի մոտ չթողնելով ամբոխին, որ խռնվել էր հրապարակում:

Եվ ամբոխը մնաց դրսում՝ գրգռված, հիասթափված, չբավարարված: Իսկ հետո ի՞նչ է լինելու: Ամեն ինչ այսպես էլ կվերջանա՞: Այդ արկղը այդպես էլ կմնա՞ այնտեղ՝ կոմիսարիատում: Մի՞թե աճյունները չեն տանի Բոնամորոնե՝ գերեզմանոց: Այնտեղ էր Սպոտոների ընտանիքի տոհմական դամբարանը: Հիմա նրանցից արդեն ոչ ոք չի մնացել: Աուրելիո Կոստան հայր ուներ, Նիկոլետա Կապոլինոն՝ ոչ ոք. ամուսինը հնարավորություն չուներ ներկա գտնվելու. կարող էր գալ խորթ հայրը՝ դոն Սալեզիո Մարուլլոն, բայց հայտնի

էր, որ խեղճ մարդը, բոլորից լքված, ապաստան էր գտել Կոլիմբետրայի գթասիրտ տիրուհու մոտ և արդեն մի քանի ամիս հիվանդ պառկած էր այնտեղ: Գուցե Լեոնարդո Կոստան կուզենար վերցնել իր որդու աճյունը, որ փոխադրի Պորտո-Էմպեդոկլեի գերեզմանոցը, բայց իրավաբանական պատճառներով այդ անել չէր կարելի:

Ամբոխն սկսեց հետզհետե ցրվել՝ շարունակելով քննարկել ողբերգական իրադարձությունը և դրա հետևանքները:

Լեոնարդո Կոստան նույնն էր ուզում, ինչ ուզում էր և ամբոխը: Կոմիսարը՝ կավալեր Ֆրանկոն, փորձում էր համոզել նրան մի քիչ համբերել՝ քանի դեռ այնտեղ՝ կոմիսարիատում, մինչև վերջ չեն կատարվել, ինչպես ինքն ասաց, բոլոր իրավաբանական ձևականությունները... Այո՛, իհա՛րկե, օրվա ընթացքում՝ այն բանից հետո, երբ կգա դատական քննիչը: Կոստան, կարծես չհասկանալով, պնդում էր և համառորեն՝ միշտ նույն արտահայտություններով կրկնելով իր տխուր պահանջը: Որքան էլ կավալեր Ֆրանկոն կարեկցեր դժբախտ հորը, նա արդեն, կորցնելով համբերությունը, սկսեց փնչացնել: Պահը նրա համար սոսկալի տագնապալից էր. նա պարզապես չգիտեր, թե ուր գնար, քանի որ գավառի ամեն աննկյունից, ամբողջ Սիցիլիայից լուրեր էին գալիս՝ օրեցօր ավելի ու ավելի ծանր: Թվում էր, թե ամեն րոպե կարող է բռնկվել համընդհանուր խռովությունը, իսկ զինվորները շատ քիչ էին, ոստիկանները՝ դրանից էլ պակաս:

Բայց ի՞նչ էր ուզում, հիմա էլ ի՞նչ էր ուզում այդ բարի մարդը: Նա ուզում էր... ուզում էր, որ իր որդու աճյունը (ինչքան էլ որ մնացած լինի նրանից) չխառնվի այդ կնոջ աճյունի հետ: Ինչո՞ւ, ինչո՞ւ են նրանց միասին դրել:

— Ինչո՞ւ,— գոռաց կոմիսարը:— Ախր դուք չեք էլ պատկերացնում, թե ինչ կա այնտեղ՝ դրա մեջ:

Եվ նա ցույց տվեց սեղանին դրված արկղը:

— Օ՛, որդի՛ս:

— Ինչպե՞ս կարելի է այնտեղ որևէ բան ջոկել, տարբերել: Ոստիկանությունը չափազանց ուշ է հասել: Կայարանում ոստիկաններ չեն եղել: Մինչև Արագոնայից ոստիկանական կատարածուի գալը, կրակը. . . Ոչինչ, ես ձեզ ասում եմ... Մի քանի ածխացած ոսկորներ:

— Օ՛, որդի՛ս:

— Այդտեղ ոչինչ ճանաչել չի կարելի: Այո՛, այո՛, լացե՛ք, լացե՛ք, դուք իմ դժբախտ, կթեթևանաք... Խե՛ղճ Կոստա, այո՛. . . այո՛. . . Այնպիսի բան է, որ... աստվա՛ծ իմ: Հավատդ բոլորովին կկորցնես մարդկանց նկատմամբ: Բայց որպեսզի գոնե այդ փուշը հանեք ձեր սրտից, ձեզ համար լավ կլինի համարեք, թե ոչինչ չկա ձեր որդուց, ոչինչ չկա... Եվ, ի վերջո, իմ խեղճ բարեկամ, մտածեք, որ թեև դուք ատում եք այդ կնոջը, ձեր որդին սիրում էր նրան: Եվ ձեր որդու հոգին, թերևս, ուրախանում է հիմա, որ այն ամենը, ինչ մնացել է իրենից, խառնված է այդ կնոջ աճյունին: Խե՛ղճ կին: Թերևս նա շատ բանում է մեղավոր, բայց մտածեք, թե ինչ ճակատագիր ունեցավ...

— Ո՛չ, ո՛չ... նա. . . չեմ կարող... չեմ կարող խոսել. . . նա կործանեց իմ որդուն... նա՛: Դուք չգիտեք, սինյոր կոմիսար, իմ որդուն սիրում էր տիրոջ աղջիկը: Այո՛, այո՛, դա ճիշտ է, ճիշտ է... և խելագարվեց իմ խեղճ աղջնակը, ինչպես իր մայրը... Չէ՞ որ դա մի ամբողջ մեքենայություն է... Մարդասպան-հայրը և այդ կինը: Նրանք պայմանավորվել էին իրար հետ, որ կործանեն իմ որդուն. . . որպեսզի նրան չկարողանա սիրել այդ մաքուր արարածը... Օ՛, սինյոր կոմիսար, կապե՛ք ինձ, կապե՛ք իմ ձեռքերը, սինյոր կոմիսար, փակի տակ դրեք ինձ, փակե՛ք ինձ բանտում, որովհետև եթե տեսնեմ նրան՝ անիծյալ մարդասպանին, որն ահա այդպիսի միջոցով կործանեց իմ որդուն, ես նրան կսպանեմ, սինյոր կոմիսար, ես պատասխանատու չեմ ինձ համար, կսպանեմ նրան, կսպանեմ:

Կավալեր Ֆրանկոն ափը դրեց ափին՝ մատներն իրար հյուսելով և մի քանի անգամ ձեռքերը թափահարեց օդում:

— Եվ ձեր կարծիքով,— գոռաց նա աչքերը չռելով,— ձեր կարծիքով, ես պիտի մինչև վերջ լսեմ, ներեցեք ինձ, այդպիսի անմտությունը: Ես կարեկցում եմ ձեզ, դուք վշտից խենթացել եք, և չգիտեք, թե ինչ եք ասում: Բայց, գրողը տանի, ձեր որդին, ձեր որդին... այնպիսի պահի, ինչպիսին հիմա է, երբ բավական է մի չնչին բան, մի կայծ, որ հրդեհ բռնկվի ամբողջ Սիցիլիայում... նա չի բավարարվում այնքանով, որ տղայի նման փախչում է պատգամավորի կնոջ հետ... և դեռ սեփական կամքով նետվում է ամենաթեժ տեղը, կարծես ցանկանալով ասել. «Ահա՛ մենք այստեղ ենք, մեզ պատառոտե՛ք: Ձեզ պետք է թափել ձեր կատաղությունը: Թափե՛ք: Մենք այստեղ ենք»: Գրողը տանի, նա խենթացել էր, կուրացել... Չգիտեմ, թե էլի ինչ: Դուք էլ ո՞ւմ եք մեղադրում: Իսկ մենք այստեղ պիտի պատասխան տանք ամեն ինչի համար... Նույնիսկ նման խենթությունների: Եվ դրան ավելացրած՝ դեռ ստիպված եմ ձեզանից լսել՝ կսպանեմ, կսպանեմ, կսպանեմ: Ո՞ւմ կսպանեք: Եթե նույնիսկ ճիշտ է այն ամենը, ինչ դուք այստեղ հորինեցիք, կարծում եք Սալվոն առանց ձեզ էլ չհատուցե՞ց լիովին: Նրա համար բավական է իր աղջկա խելագարությունը:

Այդ պոռթկումից հետո Կոստան էլ չհամարձակվեց գոռալ. նա արցունքներով լի աչքերով նայեց կոմիսարին և, կծելով իր մատը, մռթմռթաց.

— Եթե նա խիղճ ունենար, պարոն կոմիսար: Բայց նա խիղճ չունի:

Կավալեր Ֆրանկոն թոթվեց ուսերը և դուրս եկավ սենյակից:

— Գնացե՛ք, գնացե՛ք,— ասաց Կոստան նրա ետևից. հետո կամացուկ մոտեցավ սեղանին դրված արկղին ու փորձեց բարձրացնել:

Նա հեծկլտաց, կոկորդը խռխռաց, և դրանից սկսեց ջղաձգորեն ցնցվել նրա գլուխը:

Այդ արկղը ոչինչ չէր կշռում, ոչինչ:

Նա սեղանի առաջ ծնկի իջավ, ճակատով հենվեց սառը մետաղին և սկսեց տնքալ.

— Տղա՛ս... տղա՛ս... տղա՛ս...

Երկու օր անց անսպասելիորեն Ջիրջենտիում հայտնվեց մեծարգո Ինյացիո Կապոլինոն: Նրա դեմքը խիստ մռայլ էր:

Հիմա նա շատ դժվարին և անորոշ վիճակում էր՝ ոչ այնքան անսպասելի դժբախտության պատճառով, որքան իր մոլեգին պոռթկումի, որը Դիանելլա Սալվոյին հասցրեց խելագարության, հարկավոր էր այստեղ՝ տեղում, հավաքել իր բոլոր ուժերը, մի լավ մտածել և որքան կարելի է շուտ, ամեն միջոցով ելք գտնել ստեղծված վիճակից: Սկանդալը, որ կբարձրանար կնոջ փախուստի պատճառով, խլացվեց նրա մահվան սարսափով, այդ ամբողջ իրադարձության ողբերգականությունը Կապոլինոյին դարձրեց անխոցելի՝ ծաղրանքների դեմ, որ կարող էր հարուցել կնոջ փախուստը: Բավական է համաքաղաքացիների առաջ երևալ վշտացած տեսքով, բայց միևնույն ժամանակ խիստ զուսպ, որպեսզի օգուտ քաղի համընդհանուր հուզումներից՝ չմասնակցելով դրանց. չէ՞ որ նա վիրավորանք էր ստացել կնոջից: Համաքաղաքացիների կարեկցանքը պիտի գար նրա մոտ՝ որպես արդարացի և արժանի հատուցում այդ վիրավորանքի դիմաց, և բոլորին պատշաճ է տեսնել, որ նա ծանրորեն տառապում է՝ ճնշված այդ սարսափելի իրադարձությամբ և, ըստ էության, ամենից ավելի նա է կարեկցանքի արժանի, որովհետև վիրավորանք է ստացել երկուսից էլ՝ թեև ամենայն ափսոսանքի արժանի զոհերից, այնպես որ կարող է նույնիսկ չարտասվել իր դժբախտության վրա:

Եվ այնուամենայնիվ... ինչպե՞ս թե: Նա վերադարձավ այն տունը, որը կնոջ հմուտ ու նրբին հոգացողության շնորհիվ այնպես լավ էր հարմարեցվել ճարտար ու նուրբ կեղծիքի

կատակերգության համար, սիրալիրություններով մրցության համար, որոնց մեջ նրանք երկուսն էլ այնպիսի հաճույքով էին իրենց վարժեցրել, որ նրանց կյանքը չափազանց սկանդալային չէր թվում շրջապատի մարդկանց և չափազանց նողկալի իրենց համար Սենյակները մռայլ լռության մեջ, որտեղ ամեն ինչ գտնվում էր իր տեղում ու պահպանել էր առաջվա տեսքը և կարծես ինչ-որ բանի էր սպասում, նա դատարկություն զգաց, դատարկություն, որի մեջ նա իրեն զգում էր այն պահից, երբ իմացավ կատարվածի մասին: Ինչպե՞ս թե: Բացելով ննջասենյակի դուռը և զգալով արդեն թույլ, սակայն չանհետացած հեշտալից բուրմունքը, նա հանկարծ ենթարկվեց անհաղթահարելի պոռթկումի, որը խիստ զարմացրեց նրան իր հակասականությամբ, այնուամենայնիվ հաճելի էր, ինչպես անսպասելի վերադարձը դեպի թախծալի քնքշությունը, և նա սկսեց լալ, այո՛, այո՛, լաց եղավ կնոջ մահվան լուրն ստանալուց հետո առաջին անգամ, լաց եղավ, ինչպես չէր լացել երբեք իր կյանքում, թեև զգում էր ոչ այնքան սեփական ցավը, որքան ցավը հենց այդ արցունքների, որ թափվում էին նրա աչքերից՝ իր ցանկությանը հակառակ. բայց հենց դրա համար, որ նա չէր ուզում լալ, այդ արցունքներն այնքան անուշ էին և այնպես թեթևացնում էին նրան:

Եվ, այնուամենայնիվ, պատշաճ չէ, որ նա, այո՛, այո՛, պատշաճ չէ... որովհետև... Նա մտովի դադար առավ մի պահ, որ մտածի, թե ինչու ինքը չպիտի ողբա կնոջը: Մի՞թե Նիկոլետան չի եղել այնպես հարկավոր, նույնիսկ անփոխարինելի ընկերուհի: Թանկագին ընկերուհի, քանի որ նա մշտապես աչքի էր ընկնում նուրբ ու բարդ կանխատեսությամբ, և չէ՞ որ այս անգամ (թեկուզ ավելի շատ իր համար, քան ամուսնու) նա գնաց այն ուղիով, որ ամուսինն էր ցույց տվել, և զոհվեց: Եվ ի՜նչ սարսափելի, ի՜նչ սարսափելի ձևով զոհվեց: Եվ այնուամենայնիվ՝ ո՛չ մարդկանց մոտ, այո՛, գոնե մարդկանց մոտ ինքը չպիտի ողբա նրան: Իսկ ա՛յ, այսպես, ինչպես հիմա, մեն-մենակ ինքն իր հետ, ինքը կարող է այդ անել՝ թեկուզ այն պատճառով, որ արցունքներն իրեն թեթևացնում են բերում: Ինքը մենակ մնաց ու կարող է հույս դնել միայն իր վրա և միայն ինքը պիտի օգնի իրեն: Ինչպե՞ս: Նա այդ դեռ չգիտեր:

Համենայն դեպս, իհա՛րկե, ո՛չ արցունքներով:

Կապոլինոն վեր կացավ, սրբեց աչքերն ու այտերը, հետո երկար, խնամքով մաքրեց թաշկինակով, նորից դրեց կրեոսկրե շրջանակով ակնոցը և մռայլ, խիստ ու խոժոռված մոտեցավ հայելավոր պահարանին:

Աստվա՛ծ իմ, մի քանի օրվա ընթացքում ինչպես էր սմքել, ծերացել նրա դեմքը:

Վշտի՞ց: Ի՞նչ վիշտ: Նա չէր կարող ընդունել, որ վիշտ է ապրել... Գուցե միայն հիմա... Ասենք, ո՛չ, առաջ էլ հոգու խորքում, հավանաբար, վիշտ էր զգում և շատ մեծ վիշտ, եթե Հռոմում, դժբախտության լուրը լսելով, այնպես էր կուրացել վրդովմունքից, որ զայրույթը թափեց Դիանելլա Սալվոյի վրա:

Ինքը պե՞տք է զղջա իր այդ պոռթկումի համար:

Հիմա նա ընդմիշտ իր դեմ հարուցեց Սալվոյի ատելությունը, մահացու թշնամանքը: Դե, իսկ եթե ինքը կարողանար զսպել իրեն այդ առաջին պահին, զրկեր իրեն վրեժի չար հաճույքից, ապա ինչի՞ կհասներ: Կշարունակե՞ր Ֆլամինիո Սալվոն աջակցել իրեն և օգնել՝ միայնակ, առանց կնոջ՝ միայն խղճի խայթից դրդված և այդ գործում իր ունեցած գաղտնի հանցակցությունից: Գուցե աղջիկը, որն արդեն հիվանդ էր, Կոստայի մահվան լուրն ստանալիս, միևնույն է, կխելագարվեր նաև առանց իր կողմից գաղտնիքը բացելու: Իսկ ա՞յդ դեպքում: Ֆլամինիո Սալվոն իրեն բավականաչափ պատժված կհամարեր դստեր խելագարությամբ ու կդադարեր նախկին բարեկամին որևէ ուշադրություն նվիրել և նույնիսկ կվաներ՝ որպես իր խղճի կենդանի կշտամբանք: Լիովին հնարավոր է: Դե, իսկ եթե Դիանելլան չխելագարվեր ու հետզհետե հանդարտվեր, մի՞թե Ֆլամինիո Սալվոն այնպիսի մարդ է, որ իր ուզածին հասնելով, երախտագետ հիշողություն պահպաներ այն կնոջ մասին, որը սեփական կյանքի գնով օգնեց նրան հասնելու իր նպատակին, մի՞թե նա հանուն այդ հիշատակի հոգ կտաներ այրիացած ամուսնու մասին: Չէ՞ որ իր վրայից ամեն տեսակ պատասխանատվություն գցելու համար Սալվոն իսկույն սկսեց գոռալ բոլոր անկյուններում,

որ Նիկոլետա Կապոլինոն և Աուրելիո Կոստան փախել են, որ Կոստան հեռացել է իր մոտից և սեփական ռիսկով գնացել Արագոնայում մեռնելու իր սիրուհու հետ: Այո՛, նրա՝ Կապոլինոյի, կինը փախել է Կոստայի հետ. բայց ո՞վ է Նիկոլետային դրդել այդ խելահեղ արարքին: Ո՞վ է Կոստային ուղարկել Հռոմ՝ ծրագիրը մինիստրությունում ներկայացնելու պատրվակով: Ո՞վ է գրգռել Նիկոլետայի խանդը կամ, ավելի ճիշտ, ինքնասիրությունը՝ ակնարկելով մոտալուտ ժամանակներում Կոստայի ու Դիանելլայի ամուսնության հնարավորության մասին: Իսկ ինքը՝ Կապոլինոն, ինքը՝ ամուսինը ստիպված էր ներողամտությամբ քաջալերել այդ դավաճանական խորամանկ քայլերը, որոնք հասցրին այսպիսի սարսափելի ողբերգության. չէ՞ որ այդպես է, ճիշտ չէ՞: Գործակցել, որպեսզի հետո լքված մնաս, որովհետև հիմա՝ այն բանից հետո, երբ Սալվոն քաղել է այդքան ստոր դավաճանության պտուղները, նա ոչ մի պատճառ չունի օգնելու Կապոլինոյին: Ինքը չպետք է զղջա իր այդ պոռթկումի համար: Ինքը կորցրել է կնոջը, նա կորցրել է դստերը: Իրենք հավասար են դուրս եկել: Եվ կանգնած են մեկմեկու դիմաց հավասար դիրքերում: Բայց հիմա Սալվոն իրեն կզրկի ամեն տեսակ դրամական օգնությունից: Ուրեմն հիմա ինքը պիտի հոգ տանի իր ամենակենսական կարիքների մասին: Սալվոյի բարեկամության հետ չքացավ նաև վարկի ամեն մի հնարավորություն: Ի՞նչ անել: Ինչպե՞ս վարվել:

Բոլոր այդ մտորումների մեջ խորասուզված, Կապոլինոն մատների մեջ անհանգիստ պտտում էր մեդալը՝ պառլամենտի պատգամավորի կրծքանշանը, որ կախված էր նրա ժամացույցի շղթայիկից: Հիմա Սալվոն չի կարող նրա ժամացույցի շղթայիկից պոկել այն: Իսկ այդպիսի նշանով նա՝ Կապոլինոն, դեռ պատգամավոր է այն մարդու աչքում, որն իրենց ամբողջ մարզում՝ եթե ոչ ավելի, ապա բնավ էլ պակաս կշիռ չուներ, քան Սալվոն: Դոն Իպոլիտո Լաուրենտանոն թույլ չի տա, որ նա, ով պառլամենտում հանդես է գալիս, որպես իր համոզմունքների պաշտպան, նյութական մանր նեղություններ կրի:

Այսպես ուրեմն. հենց հիմա՝ նախքան Սալվոն կգա Ջիրջենտի և կգնա Կոլիմբետրա, որ իշխանին լարի իր դեմ, ինքը կսլանա այնտեղ և դոն Իպոլիտոյին անկեղծորեն կպատմի Սալվոյի դավաճանության մասին: Դոննա Աղելաիդայի հետ մի քանի ամիս ապրելուց հետո իշխանը հազիվ թե առանձնապես հակված լինի բռնելու աներձագի կողմը. բացի այդ, հիմա Կապոլինոյի օգտին կներգործի նաև կարեկցանքը նրա դժբախտության առթիվ: Իհա՛րկե, Սալվոն դրան կարող է հակադրել իր աղջկան պատահած դժբախտությունը, բայց Կապոլինոն կգնա հենց այդ մասին նախազգուշացնելու իշխանին և ապացուցելու, որ ոչ թե ինքը՝ Կապոլինոն է դաժան վշտի նոպայի պահին իր բնական և օրինական պոռթկումով եղել այդ խելագարության պատճառը, այլ հայրը, հենց հայրը, որն այդպիսի կրքով ձգտում էր խանգարել աղջկան ամուսնանալ Կոստայի հետ՝ պատանուն զոհ բերելով և կործանելով Կապոլինոյի կնոջ հետ: Իսկ հիմա, որպեսզի խլացնի իր մեջ խղճի ամեն տեսակ կշտամբանքները, Սալվոն ուզում է պատասխանատվությունը դնել Կապոլինոյի վրա և նրանից ազատվել այնպես, ինչպես Կոստայից ու Նիկոլետայից:

Այդպիսին էր նրա ծրագիրը: Բայց ո՛չ այդ, ո՛չ էլ հաջորդ օրը նա չէր կարող իրագործել այն և գնալ Կոլիմբետրա: Այցելուների անընդհատ հոսանքը նրան պահում էր տանը՝ մեծագույն բավականություն պատճառելով, թեև նա գիտեր, որ բոլոր այդ մարդկանց դրդել է ոչ այնքան կարեկցանքը, որքան հետաքրքրասիրությունը, և, որ վաղը Սալվոյի նշանով նրանք մեջքով կդառնան իր կողմը: Համենայն դեպս, երբ գնա իշխանի մոտ, կարող է պատմել՝ ինչպես ամբողջ քաղաքը հանդիսավոր կերպով արտահայտեց իր կարեկցանքն ու համակրանքը. բացի դրանից, շատերը, ողբերգական դեպքից հուզված, իրենցից ներկայացնում էին լավ վարած ու նախապատրաստած հող, որտեղ կարելի էր բոլորովին աննկատելի ցանել Սալվոյի հանդեպ ատելության սերմերը:

— Մի՛ ասեք ինձ այդ մասին, ի սեր աստծո,— շարունակ կրկնում էր նա, և ամեն մի ակնարկի ժամանակ նրա դեմքի արտահայտությունը փոխվում էր:— Ես ստիպված կլինեմ, ստիպված կլինեմ ասել բաներ... բաներ, որոնք... ո՛չ, ոչինչ, ի սեր աստծո ինձ մի՛ ստիպեք խոսել...

Եվ եթե որևէ մեկը տարակուսում էր, իրենն էր պնդում.

— Այդ խեղճ աղջիկը...

— Աղջի՞կը,— կտրուկ կերպով հարցնում էր Կապոլինոն։— Ախ, հա՛, խե՛ղճ, խե՛ղճ զոհ: Նա՝ նույնպես: Իկա՛րկե, ոչ ավելի, քան մյուսները... Ի սեր աստծո, ինձ մի՛ ստիպեք խոսել...

Հյուրասենյակը լեփ-լեցուն էր մարդկանցով, երբ ներս մտավ Դ'Ամբրոզիոն՝ Նիկոլետա Սպոտոյի հեռավոր ազգականը, Կապոլինոյի մարտավական Վերոնիկայի հետ մենամարտի ժամանակ: Եվ այդ պահին տեղի ունեցավ մի տեսարան, որը չէր կարող ավելի լավ խաղացվել, եթե Կապոլինոն ինքը հատուկ նախապատրաստեր այն:

Դ'Ամբրոզիոն ներս մտավ՝ կարեկցանքով լեցուն, ձեռքերը պարզած: Նրանք պինդ գրկախառնվեցին և որոշ ժամանակ կանգնեցին այդպես՝ բարձր հեծկլտալով: Վերջապես պոկվելով Կապոլինոյից, Դ'Ամբրոզիոն խոսեց բարձր ձայնով, իր սովորական շեշտավորությամբ.

— Այստեղ բոլորը խոսում են, թե Նիկոլետան՝ իմ զարմուհին, այդ տխմար Կոստայի սիրուհին է եղել: Դա ճի՞շտ է: Դու ավելի լավ կիմանաս, քան որևէ մեկը: Ճի՞շտ է դա:

Բոլոր ներկաները շփոթահար շրջվեցին Կապոլինոյի կողմը:

Նա ընկավ բազկաթոռի մեջ, տապալվածի նման, ձեռքերը գցելով ծնկներին և վշտահար օրորեց գլուխը: Հետո, դժվարությամբ շարժելով ձեռքերը, ասաց.

— Ես պետք է չափազանց շատ, չափազանց շատ բան ասեի, բայց չեմ կարող... Նույնիսկ խղճահարությունը, հասկանո՞ւմ եք, այո՛, այո՛, նույնիսկ այդ արցունքները, բարեկամներս, ցավ են պատճառում ինձ: Որովհետև նաև այդ երկուսը, որ արժանի են արցունքների իրենց սարսափելի ճակատագրի պատճառով, բայց ձեր արցունքներին, թանկագիններս, ոչ թե իմ, որովհետև այդ երկուսն էլ են ինձ չարիք պատճառել: Բայց գլխավոր չարագործը նա է, ով նրանց մղել է այդ քայլին, նա, ով նրանց պահում էր իր բռում և. . .

— Սալվո՛ն,— գոչեց Դ'Ամբրոզիոն։— Արագոնայում ձերբակալել են Մարկո Պրեոլային. բայց, երդվում եմ տիրամոր անունով, պիտի ձերբակալեին իրեն՝ Սալվոյին: Նրա պատճառով է սովահար լինում մի ամբողջ մարզ: Հենց նա է իսկական մարդասպանը: Եվ աստված արդարացիորեն պատժեց նրան աղջկա խելագարությամբ: Թող հիմա ապրի երկու խելագարների մեջ՝ իր բոլոր հարստություններով:

Այդ ժամանակ Կապոլինոն վեր թռավ և հանդիսավոր կերպով հայտարարեց.

— Ի սեր աստծո: Ո՛չ: Ո՛չ: Ես չեմ կարող թույլ տալ, որ իմ ներկայությամբ այդպիսի բաներ ասվեն: Այնպես է ստացվում, թե դու պաշտպանում ես այդ մարդասպաններին: Բավակա՛ն է: Մենք բոլորս էլ գիտենք, որ Սալվոն իրավունք ուներ հանքերը փակելու: Ամեն մեկը պաշտպանում է իր շահերը, ինչպես կարող է և ձեռքից գալիս է: Եվ հետո՝ մի՞թե նա բոլոր ուժերով չէր ձգտում վերականգնելու սիցիլիական արդյունաբերությունը: Ո՛չ: Ո՛չ: Տեսնո՞ւմ եք, սինյորներ, այդ ես եմ ասում, ես՝ այսպիսի պահին և պատրաստ եմ նույնիսկ ասելու, թե նա իր կողմից, որպես հայր, գտնում էր, որ գործում է դստեր բարօրության համար: Մենք բոլորս հիմքեր չունենք չընդունելու այդ. կարող եմ այդ չընդունել ես, միայն ես, որովհետև այն միջոցները, որոնցից նա օգտվում էր, ավերեցին իմ տունը, խորտակեցին իմ կյանքը: Բայց մի դեպքում նա գործում էր բոլոր այդ անասունների բարօրության համար, մյուս դեպքում՝ դստեր բարօրության համար:

Տասը, տասնհինգ, քսան ձեռքեր պարզվեցին Կապոլինոյին՝ հիացմունքի արտահայտությամբ նրա անսահման մեծահոգության նկատմամբ, և Կապոլինոն զգաց, որ ինքն իրենից մի կանգուն բարձրացավ:

— Գուցե ես ստիպված կլինեմ,— ավելացրեց նա թախծալի լրջությամբ,— ձեզ վերադարձնել մանդատը, որով ինձ պատիվ եք արել:

— Ո՛չ: Ո՛չ: Դա ի՞նչ կապ ունի: Եվ ինչո՞ւ,— լսվեցին բողոքի բացականչություններ:

Կապոլինոն տխուր ժպտալով բարձրացրեց ձեռքը, որը ընդհատի այդ բարեկամական զեղումները:

— Մտեք իմ դրության մեջ,— ասաց նա,— և հասկացեք: Մի՞թե ես կարող եմ հարաբերություններ պահպանել (էլ չխոսած՝ ազգակցական կամ բարեկամական, այլ թեկուզ զուտ գործնական) Ֆլամինիո Սալվոյի հետ: Իհարկե, ո՛չ: Իսկ այդ դեպքո՞ւմ: Ես պետք է ինքս վաստակեմ, այնինչ ձեր մանդատը պահանջում է բացարձակ անկախություն, որն ունեի, երբ ծառայում էի Սալվոյի բանկում: Հիմա... հիմա ստիպված կլինեմ կենտրոնանալ և լրջորեն մտորել իմ վիճակի մասին: Այդպիսի հարցերը նման պարագաներում ոտքի վրա չեն վճռվում:

— Իսկ ինչո՞ւ: Իսկ ինչո՞ւ,— բոլորն սկսեցին միաբերան սփոփել նրան: Դրանք մասնավոր գործեր են: Քաղաքական ներկայացուցչությունը...

— Այո՛, այո՛. . .

— Դա այստեղ կապ չունի...

— Բոլորովին այլ բան է...

— Եվ, բացի այդ, հիմա...

— Հիմա,— ասաց Կապոլինոն,— ինձ համար բավական է, թանկագիններս, որ ես ձեզ այդ ասացի: Ես պատրաստ եմ ամեն ինչի. արդարացիորեն և իմ ուժերի չափով հանգիստ գնահատում եմ և՛ իմ սեփական դժբախտությունը, և՛ մնացած ամեն ինչ: Իսկ առայժմ շնորհակալություն, բարեկամներս:

Ավելի ուշ, այցելելով եպիսկոպոսին իր աթոռանիստում, Կապոլինոն նրանից այնպիսի տեղեկություններ ստացավ դոն Իպոլիտոյի և դոննա Ադելաիդայի մասին, որ վճռեց հրաժարվել իր մտածած սկզբնական ծրագրից. ընդհակառակը, ինքը պետք է սպասի Ֆլամինիո Սալվոյի՝ Հռոմից վերադառնալուն և միայն դրանից հետո գնա Կոլիմբետրա և փորձի իրականացնել իր գլխում ծագած մյուս, շատ հանդուգն ծրագիրը:

Ֆլամինիո Սալվոն չցանկացավ Դիանելլային թողնել Հռոմում, որևէ հիվանդանոցում, ինչպես խորհուրդ էին տալիս բժիշկները, քույրը և աներձագը. նա ասաց, որ ծայրահեղ դեպքում աղջկան կտեղավորի Պալերմոյի այդպիսի հաստատություններից մեկում, որպեսզի մոտիկ լինի, և ինքը կարողանա հաճախ այցելել. բայց չէ՞ որ, ավելացրեց նա, հիմա իր տունն էլ կարող է վերածվել մասնավոր հաստատության՝ հոգեկան հիվանդների համար, մեկ կամ մի քանի բժիշկների ղեկավարությամբ և լավ հիվանդապահուհիներով, որոնք նախապատրաստված են այդպիսի հիվանդներ խնամելու համար: Հիմա այդ տանը միայն ինքն է պահպանել բանականությունը, բայց հույս ունի, որ շուտով, հետևելով կնոջ ու աղջկա օրինակին և բարի կամք ցուցաբերելով, նույնպես կկորցնի այն:

Մեկնելու ժամանակ Սալվոն, այնուամենայնիվ, ստիպված եղավ դիմելու Լանդո Լաուրենտանոյի օգնությանը, որ նա որպես ուղեկից տա Մաուրո Մորտարային, որից Դիանելլան չէր ուզում բաժանվել. Մաուրոն գուցե միակ մարդն էր, որ ընդունակ էր համոզելու նրան՝ դուրս գալ մութ սենյակից, որտեղ աղջիկը թաքնվել էր, և ճանապարհ ընկներ Լանդր Լաուրենտանոն, որ նույնպես պատրաստվում էր ճանապարհի, քանի որ նրան Պալերմո էին կանչել միությունների կենտրոնական կոմիտեի ընկերները, Սալվոյին պատասխանեց, որ իրենք կարող են միասին կատարել ուղևորությունը, և որ հաջորդ օրը ինքն ու Մաուրոն կգան Վելլայի տուն՝ նրանց ետևից: Ֆլամինիո Սալվոն երիտասարդ իշխանի դեմքի արտահայտության մեջ, ձայնում, շարժումներում նկատեց տենդագին հուզմունք և մի քանի անգամ, ցանկանալով հոգատարություն ցուցաբերել, քիչ էր մնում հարցներ պատճառը, սակայն զսպեց իրեն: Իսկ պատճառը, որի համար Լանդո Լաուրենտանոն այդպիսի տրամադրության մեջ էր գտնվում, Սալվոն այդ պահին նույնիսկ հեռավոր կերպով պատկերացնել չէր կարող, քանի որ այդ պատճառն այն ցնցող

տպավորությունն էր, որ ամբողջ Հռոմի վրա գործել էր Կորրադո Սելմիի ինքնասպանությունը: Լուրն այդ մասին տարածվեց հենց նույն երեկո, երբ Լանդոն Մաուրոյի հետ գնաց Վելլայի տանից: Նրան այդ մասին հայտնեց լրագրավաճառի աղաղակը: Նա կանգնեցրեց կառքը, որ թերթ գնի: Բայց այդ լուրը, որ պիտի ուրախացներ նրան, սկզբում ավելի շուտ շշմեցրեց: Չնայած Մաուրոյի անհամբերությանը, նա կառապանին պատվիրեց կառքը կանգնեցնել լապտերի մոտ, որ կարդա հաղորդագրությունը. բաց թողեց երկար մահախոսականը, որ դրված էր ինքնասպանության լուրից առաջ, արագ կարդաց հաղորդագրությունը: Նա Սելմիի ծառայի պատմածից նախ իմացավ, որ Ռոբերտո Առւրիտիի ազգականը դաշույնով հարձակվել է Սելմիի վրա արդեն այն բանից հետո, երբ նա թույն էր խմել. հետո, ախ, հետո՝ մի այցելության մասին, որը լրագրողը կոչել էր ողբերգական, ոմն «դիմաքողով տիկնոջ» այցելության մասին, որը եկել էր Սելմիի մոտ՝ հենց որ նա փչել էր վերջին շունչը: Հարգանքից՝ տիկնոջ անունը չէր նշված, «իսկ նա եկել էր,— շարունակում էր լրագրողը,— դեռ չիմանալով ինքնասպանության մասին, գուցե այն նպատակով, որ սրտապնդի իր բարեկամին՝ այն մարտահրավերից հետո, որ Սելմին առավոտյան նետել էր ամբողջ պառլամենտին»:

Լանդո Լաուրենտանոն բոլորովին չէր կասկածում, որ այդ դիմաքողով տիկինը եղել է դոննա Ջաննետա Դ'Ատրին՝ իր զարմուհին, և նա նողկանքով ճմռեց թերթն ու զայրալից գոռաց կառապանին՝ քշել տուն: Տանը նա գտավ երկու հուզված այցելուների՝ Չելսինա Պինյային և Օլինդո Պասսալակուային, որոնք հուսահատ փնտրում էին Անտոնիո Դել Ռեին, որն անհետացել էր առավոտից: Այդ մարդուկի ծիծաղելի տեսքը և աղջկա բուռն տագնապը, իսկ գլխավորը՝ այն, որ նրանք եկել էին իր մոտ՝ փնտրելու իրեն անհայտ մի պատանու, որը բնավ չէր զբաղեցնում իր մտքերը, այդ պահին Լանդոյին թվացին այնքան անպատեհ, որ, իր սովորությանը հակառակ, նա ցասումով լցվեց: Կանչելով իր ծառա Ռաֆայելեին, Լանդոն նրան պատվիրեց զբաղվել այդ զույգով ու ամեն ինչով օգնել աղջկան, և մենակ մնաց Մաուրոյի հետ: Սա, այդ պոռթկումը մեկնաբանելով որպես արհամարհական անտարբերության նշան՝ զարմիկի ձերբակալության նկատմամբ, զայրույթով բռնկվեց և գնաց նրա վրա՝ գոռալով.

— Ես ուզում եմ գնալ հենց հիմա: Այս րոպեին: Այլևս չեմ ուզում տեսնել ձեր երեսը:

— Մաուրո՛, Մաուրո՛, Մաուրո՛,— բացականչեց Լանդոն՝ բռունցքները թափահարելով:

Մաուրոն ձեռքը կոխեց գրպանը և այնտեղից դուրս բերեց իր մեդալները.

— Նայե՛ք: Ես սրանք պոկեցի իմ կրծքից, երբ տեսա կատարածուին, որը եկել էր ձերբակալելու ձեր հորաքրոջ որդուն: Հիմա այդ աղջիկը ինձ բերեց սրանք... Այդ ի՞նչ արյուն է հոսում ձեր երակներով: Եվ այդպիսի՞ն է հիմա երիտասարդությունը: Մի՞թե...

— Երիտասարդությո՛ւնը...— դառնությամբ սկսեց Լանդոն, բայց իսկույն էլ զսպեց իրեն՝ բռունցքները սեղմելով բերանին, իսկ հետո ընկավ բազկաթոռին՝ արմունկներով հենվելով ծնկներին և գլուխն առնելով ափերի մեջ:

Երիտասարդությո՞ւնը: Ի՞նչ կարող է երիտասարդությունը, եթե ծերունիների ժլատ, երկչոտ, տիրական նախանձախնդրությունը ճնշում է նրան իր ստոր զգուշավորության ամբողջ ծանրությամբ , նվաստացումներով ու խայտառակությամբ: Եթե երիտասարդությանը բաժին է ընկել նրանց բոլոր սխալների, բոլոր անազնիվ զիջումների քավությունը, իրենց ինքնասիրությանը հասցված դաժան հարվածները և շուրջը կատարվող գարշելիությունների տեսարանը: Եվ ահա այստեղ՝ Իտալիայի կենտրոնում, Հռոմում, այն գործը, որ մի ժամանակ կատարել էին ծերունիները, խեղդվում էր ապականված միջավայրում. վերևում՝ Հյուսիսում, այն պատել էր ինչ-որ մարդկանց անխիղճ, շահադիտական մեքենայությունների խիտ ցանցը. իսկ ցածում ՝ Հարավային Իտալիայում, կղզիներում, այն քարացել էր դատարկ ու անպտուղ երազանքներում, քանի որ այնտեղ առաջվա նման տիրում էին անգործունեությունը, աղքատությունն ու տգիտությունը, և այնտեղից պառլամենտ էր գալիս պատգամավորների այն խումբը, որն օգնում էր կազմելու անդեմ և անգործունյա մեծամասնություն: Գուցե միայն Սիցիլիայում զոհ բերված

երիտասարդությունը հիմա կարող է դեն նետել ծերունիների անտանելի ճնշումը՝ վերջապես ելք գտնելով իր զայրույթի համար, ու հաղթել:

Լանդո Լաուրենտանոն ոտքի ցատկեց, որ գոռա Մաուրո Մորտարային իր այդ հույսի մասին, բայց խղճահարությունից զսպեց իրեն՝ տեսնելով, թե ծերունին ինչպես է լալիս իր խեղճ մեդալների վրա:

Հաջորդ օրը Անտոնիո Դել Ռեն հայտնաբերվեց: Օլինդո Պասսալակուան եկավ Լանդոյի մոտ և ցույց տվեց երկու շտապ հեռագրերն ու դրամական փոխադրումը Ջիրջենտիից, որպեսզի պատանուն անմիջապես ուղարկեն հայրենիք, բայց ավելացրեց, որ Դել Ռեն համառորեն հրաժարվում է վերադառնալ Սիցիլիա: Այդ ժամանակ Լանդոն Մաուրոյին խնդրեց՝ գնալ պատանու ետևից, որպեսզի նրան առաջարկի հաջորդ օրը մեկնել իրենց հետ. դրան Մաուրոն հաճույքով համաձայնեց: Բայց նրա հետ ինչպե՞ս խոսել Սալվոյի ընկերակցությամբ ճանապարհորդելու մասին:

Վաղ առավոտյան Չիչչինո Վելլան եկավ Սոմակամպանիա փողոցի վիլլան, որպեսզի պայմանավորվի, թե ինչպես Դիանելլային դուրս բերել այն անկյունից, որտեղ թաքնվել էր, և համոզել նրան մեկնել: Վատ կլինի, եթե նա տեսնի հորը: Ամբողջ ճանապարհին նա չպիտի տեսնի հորը: Քեռի Ֆլամինիոն ու Լանդոն ստիպված կլինեն գնալ վագոնի ուրիշ խցիկում՝ այնպես, որ ոչ մի անգամ չընկնեն նրա աչքին: Կա նաև այդ Դել Ռեն: Լավ, նրանք երեքը կարող են տեղավորվել առանձին: Մաուրոն և Դիանելլան մենակ կլինեն հարևան բաժանմունքում: Ընդհանրապես, նրանց տրամադրության տակ կլինի մի ամբողջ վագոն:

Այդպիսի պայմաններում հեշտ էր Մաուրոյին համոզել այդ ծառայությունն անել Սալվոյի համար: Երբ իմացավ, որ ո՛չ հիմա՝ Վելլայի տանը, ո՛չ էլ հետո՝ ամբողջ ճանապարհի ընթացքում ինքը չի տեսնի Սալվոյին, և որ խոսքը գնում է ոչ այնքան ծառայության, որքան այն մասին, որ գթասրտություն ցուցաբերի դժբախտ, խելագար աղջկա նկատմամբ, նա մռայլ համաձայնեց և Ռաֆայելեի ուղեկցությամբ գնաց Վելլայի տուն:

Բայց կարիք չեղավ ո՛չ խնդրանքների, ո՛չ հորդորների. հենց որ Դիանելլան տեսավ Մաուրոյին, դուրս թռավ իր անկյունից և դարձյալ նետվեց ծերունու մոտ, թախանձելով նրան՝ փախչել իր հետ միասին: Հարկ եղավ նույնիսկ պահել աղջկան. չէ՞ որ պետք էր թեկուզ մի քիչ կարգի բերել նրան, սանրել գզգզված մազերը, գլխարկ հագցնել, որ առանց այդ էլ համընդհանուր ուշադրություն գրավող ծերունու ընկերակցությամբ նա ինքը չդառնա հետաքրքրության առարկա:

Երբ Մաուրոն ու Դիանելլան միասին, իրար ձեռք բռնած, հյուրասենյակով անցան դեպի ելքը, նրանք, ովքեր տեսան այդ երկուսին այնտեղ, երբեք այլևս չէին կարող մոռանալ այդ պատկերը, ծերունին՝ մախազը թիկունքին ու հուզմունքից ծռմռված դեմքով և աղջիկը՝ արձակ, գզգզված մազերով, որ դուրս էին թափվել ծուռ դրած գլխարկի տակից, լայն բացված աչքերով և շուրթերին խղճուկ, անիմաստ մի ժպիտ:

Ինչի՞ մասին էին խոսում նրանք՝ քանի դեռ գնում էին գնացքով:

Սալվոն ու Լաուրենտանոն հերթով ականջ էին դնում խցիկի դռան մոտ, թե ինչպես նրանք երկար զրուցում են իրար հետ, և սկզբում կարելի էր նույնիսկ մտածել, որ ծերունին ու աղջիկը հասել են ինչ-որ փոխըմբռնման: Այո՛, նրանք հրաշալի հասկանում էին իրար, քանի որ նրանցից յուրաքանչյուրը խոսում էր ինքն իր հետ այն մասին, ինչ իրեն տանջում էր: Երկու խելագարներ նստել էին կողք-կողքի և իրար ձեռք բռնել:

— Կին... Ի՜նչ ամոթ... Չի կարելի ասել պարզապես «Աուրելիո»... Սինյոր Աուրելիո... Սինյոր Աուրելիո... Բայց մի՞թե դա հնարավոր է, որ նա մոռացած լինի: Այդպիսի մեծ վերքը մատին... Արի՛, արի՛ այստեղ, մութի մեջ... շքամուտքը... Ես կծծեմ քո մատի արյունը... Կի՞ն: Ամո՛թ է... Սինյոր Աուրելիո:

— Ահա նրանք ինչ տեսակ են, երեխաները: Նոր երիտասարդությունը: Մենք այնքան կռվեցինք, մենք զոհեցինք մեր կյանքը և տեսանք ահա թե ինչ. . . Այսպիսի բան տեսանք,

դոննա Դիանելլա: Եվ հիմա ես ի՞նչ կարող եմ կախել կամերոնեում, գեներալի նամակի տակ: Ի՞նչ կարող եմ կախել այնտեղ այն ամենից հետո, ինչ ես տեսա:

— Դե, ո՞վ գիտի, թե ինչ կլինի եկող տարի: Թթենին մարտին լցվում է նոր արյունով: Եվ երբ նա համակված է սիրով ու պատրաստում է նոր պտուղները, փափուկ-փափուկ է խմորի նման, և նրա հետ կարելի է անել այն ամենը, ինչ կամենաս... Ո՞վ գիտի ինչ է լինելու եկող տարի:

— Փորձանքը եկավ, դարպասը բաց արա, աղջիկս: Փորձանքը եկավ, դարպասը բաց արա:

Այսպես էլ զրուցում էին նրանք իրար հետ:

Ո՛չ Լանդոն, ո՛չ էլ Ֆլամինիո Սալվոն ուշադրություն չէին դարձնում իրենց ևս մի ուղեկցի վրա. նա ոչինչ չէր խոսում, բայց նրա գիտակցության մեջ տիրում էր նույնպիսի խառնաշփոթ, ինչպես ծերունու և աղջկա գիտակցության մեջ: Անտոնիո Դել Ռեն ոչինչ չէր տեսնում, ոչինչ չէր զգում, այլևս ոչնչի մասին չէր մտածում: Կատաղության հուսահատական պոռթկումը, որ տիրել էր նրան, երբ նա զենքը ձեռքին հարձակվեց Սելմիի վրա, կարծես նրա մեջ սպանել էր բոլոր զգացմունքներն ու մտքերը: Ելնելով Սելմիի մոտից, նա իրեն զգաց ամայացած, մոլորված՝ ինչ-որ հեղձուցիչ խավարում, նա ուրիշ ոչինչ չէր հիշում՝ ուր է գնացել, ինչ է արել, որտեղ է եղել գիշերը, եթե իսկապես գիշերն անցել է, մի ամբողջ գիշեր: Նա ոչ մի հարցի չէր պատասխանում, գուցե չէր լսում: Տեսնելը տեսնում էր, համենայն դեպս՝ նայում էր, բայց ոչինչ չէր հասկանում, իմաստ չէր գտնում իրերի տեսքի և մարդկանց արարքների մեջ: Նա չէր առարկում Սիցիլիա վերադառնալու դեմ. բայց և չէր ուզում շարժվել այն տեղից, որտեղ կարծես ոտքերն իրենք էին տարել նրան, և որտեղ կանգնել էր հոգնությունից ուժասպառ: Նա գնաց Մաուրոյի ետևից, երբ սա քաշեց նրա կուրտկայից. բայց ոչինչ չէր լսում այն ամենից, ինչ Մաուրոն ասում էր նրան տատի ու մոր մասին: Պասսալակուան ու Չելսինան առավոտյան նրան ուղեկցեցին մինչև Լանդոյի վիլլան: Մեկնումից առաջ Անտոնիոն տեսավ, ինչպես Չելսինան ժպտում է Չեչչինո Վելլային, համաձայնում է թևանցուկ անել նրան ու կառք նստել նրա ու Պասսալակուայի հետ: Անտոնիոն ամեն ինչ տեսավ, և հիմա էլ դա հայտնվեց նրա աչքերի առաջ, բայց ոչինչ, ոչինչ չդողաց նրա հոգում:

Երբ նրանք անցան Մեսսինյան նեղուցը, Լանդո Լաուրենտանոն իջավ, որպեսզի նստի մյուս գնացքը, որ գնում էր Պալերմո, իսկ Ֆլամինիո Սալվոն որոշ շփոթություն զգաց այն մտքից, որ ամբողջ մի օր՝ մինչև Ջիրջենտի հասնելը ինքը պիտի մենակ մնա այդ անհայտ պատանու հետ, որը երկու օր առաջ դաշույն է բարձրացրել Սելմիի վրա և որը հիմա իրենից չի հեռացնում լարված-կատաղի և միևնույն ժամանակ խելացնոր հայացքը:

Այդպես էլ Սալվոն ճանապարհորդում էր երեք խենթերի հետ, և գուցե նա, ով հենց նոր իջավ գնացքից՝ ամբողջ կղզին խռովության դրդելու մտադրությամբ, պակաս խենթ չէր, քան այս երեքը: Եվ միայն ինքը՝ Սալվոն, ճակատագրի դաժան դատավճռով մինչև վերջ պիտի ունենար սարսափելի առանձնաշնորհումը՝ պահպանել մտքի անխախտ և անողոք պարզություն, որ բոլորովին չէր պղտորվում ու չէր սասանվում ո՛չ խղճի խայթերով, ո՛չ խղճահարությամբ, ո՛չ որևէ կապվածությամբ, ո՛չ էլ որևէ հույսով կամ ցանկությամբ:

Եվ կարծես այն նպատակով, որ մի անգամ էլ տանջալիորեն բավականություն ստանա ճակատագրի ծաղրանքից, նա նորից մոտեցավ հարևան խցիկի դռանը և, ականջը դնելով բանալու անցքին, սկսեց լսել ծերունու և դստեր անիմաստ խոսքերը:

Հենց որ Մաուրո Մորտարան, Ջիրջենտի հասնելով, կարողացավ դուրս պրծնել Դիանելլա Սալվոյի ձեռքերից, նա կատաղածի նման վազեց դոննա Կատերինա Լաուրենտանոյի տուն: Ծերունին այնտեղ գտավ Անտոնիո Դել Ռեին մոր գրկում, որը, որդուն իրեն սեղմելով և ցնցելով մի տեսակ մոլեգնորեն, իզուր էր փորձում նրան վերադարձնել իրականությանը:

Հենց որ Աննան տեսավ ներս մտնող Մաուրոյին, թողեց որդուն ու նետվեց նրան ընդառաջ.

— Ի՞նչ է եղել նրան: Ի՞նչ է եղել: Ասացե՛ք ինձ: Ի՞նչ են արել նրան:

Բայց Մաուրոն հեռացրեց Աննայի պարզած ձեռքերը և գոռաց ավելի բարձր քան նա.

— Որտե՞ղ է ձեր մայրը: Որտե՞ղ է նա:

Եկավ Ջուլիոն, որը մի քանի օրում ծերացել էր տասը տարով: Ջուլիոն նայեց Մաուրոյին՝ ձեռքերը պարզելով նրան այն հույսով, որ նրանից ավելի ստույգ տեղեկություններ կստանա Ռոբերտոյի ձերբակալության, Սելմիի ինքնասպանության և այն մասին, թե Սելմին իսկապե՞ս թողել է մի ինչ-որ կտակ՝ ի պաշտպանություն եղբոր, ինչպես գրվել էր թերթերում: Զարմիկից ոչինչ չէր կարողացել իմանալ, թեև նույնիսկ մոր գրկում կատաղաբար ցնցում էր նրան, որպեսզի ստիպի խոսել:

Բայց Մորտարան Ջուլիոյին էլ մի կողմ հրեց՝ կրկնելով մոլի համառությամբ.

— Որտե՞ղ է ձեր մայրը: Ես ոչինչ չգիտեմ: Գիտեմ միայն, որ նրան ձերբակալեցին իմ աչքերի առաջ: Ոչ ոքի չեմ ուզում տեսնել: Միայն ձեր մորը:

Ջուլիոն տատանվում էր՝ կասկածելով, թե կարելի՞ է արդյոք այդպես՝ առանց նախազգուշացնելու, Մաուրոյին թողնել մոր սենյակը:

Այն օրվանից, երբ Ջուլիոն անհրաժեշտության ճնշման տակ, հաղթահարելով իր չկամենալը, սկզբում զգուշությամբ, հետո վճռական ու դաժանորեն ասաց, որ որդուն փրկելու համար նա պետք է գնա Իպոլլիտո եղբոր մոտ, մայրն իսկույն ընկավ անզգայության վիճակի մեջ, լիակատար անտարբերության, կարծես շրջապատում ամեն ինչ հանկարծ նրա համար կորցրեց ամեն մի իմաստ: Ո՛չ մի շարժում, ո՛չ մի բառ: Ոչի՛նչ: Ե՛վ այդ անշարժությունը, և՛ այդ լռությունը հենց սկզբից իրենց մեջ ամփոփում էին ինչ-որ բան՝ այնքան բացարձակ և անհաղթահարելի, որ ո՛չ մեկի շարժումները, ո՛չ մեկի բառերը չէին կարող ցնցել նրան կամ էլ սթափեցնել: Ջուլիոն գիտեր, որ եթե խոսի, ապա կսպանի մորը: Եվ, իսկապես, խոսելով՝ անմիջապես սպանեց նրան: Մայրը չէր կարող գնալ եղբոր մոտ, որ փրկի որդուն. դա նրա համար մահ կլիներ: Եվ ահա նա մեռավ:

Ե՛վ Ջուլիոն, և՛ Աննան սկզբում հույս էին տածում, թե մայրը ոչ թե չի կարող շարժվել ու խոսել, այլ չի ուզում, բայց շատ շուտով համոզվեցին որ նա իսկապես չի կարող: Եվ, այնուամենայնիվ, թեթևակի ջղակծկումը նրա ճակատին, հոնքերի միջև պարզ ցույց էր տալիս, որ նա, եթե նույնիսկ կարողանար, ապա չէր ցանկանա: Նա չէր շարժվում և լռում էր մեռածի նման. միայն ցուրտը դեռ չէր կաշկանդել նրան: Եվ, պայքարելով այդ ցրտի դեմ, Ջուլիոն ու Աննան, լալով, ձգտում էին սիրող ձեռքերով լավ ծածկել նրան անկողնում: Այսպես կրեց նա վերջին դաժանությունը, որ ավելի էր խորանում այն բանով, որ դրանում մեղավոր էին իր երեխաների ձեռքերը: Հիմա, հերթապահելով նրա մոտ և լալով, զավակներն ապացուցում էին նրան, ավելի ճիշտ՝ իրենք իրենց էին ապացուցում, որ իրենք չեն այդ բանը կատարել: Եթե այն ամենով, ինչ նրա կողմից արված էր կյանքում, նա չկարողացավ հատուցել որդու համար, ապա հիմա ստիպված եղավ հատուցել ահա այդ ձևով: Ջուլիոն այդ գիտեր և, այնուամենայնիվ, իմանալով, չէր կարող խանգարել դրան: Նա ստիպված էր խոսել և հենց դրանով մահացու հարված հասցնել մորը: Հետո նա մորն առավ ձեռքերի վրա, իսկ հիմա պինդ ծածկում էր վերմակներով ու ձեռքերը փաթաթում բրդե, սև շալով, որ պահպանի նրան վերջին ցրտից, և քայլում էր ոտքերի մատների վրա, որ բոլորովին չխանգարի լռությունը: Հիմա՝ այն բանից հետո, ինչ նա արել էր, չէր կարելի թույլ տալ, որ նույնիսկ մի ճանճ թռչի: Եվ նրա գլխում փայլատակեց ու անցավ այն միտքը, որ իր ամբողջ արածից հետո ինքն ի վիճակի չի լինի հանդուրժելու և՛ իր կյանքը, և՛ իր շունչը: Նա կյանք էր մտել դեռահաս՝ մորից հեռու, Սիցիլիայից հեռու: Նա ապրել էր առանց հիշողությունների, առանց կապվածությունների, առանց ձգտումների՝ սառը, անկիրք, արհամարհանքով, հեգնաբար: Անակնկալ կերպով, երբ նա ամենից քիչ էր այդ սպասում, նրա ընտանիքի ճակատագիրը իր պարույրի մի գալարով բռնել, պտտել էր նրան, քաշել դեպի ինքը և նետել այստեղ, որպեսզի կապի արմատի հետ, որից նա պոկվել էր. որպեսզի նա զգա այն ամենը, ինչ երբեք չէր ցանկացել զգալ, հիշի այն ամենը, ինչ երբեք չէր ցանկացել հիշել: Մի՞թե

վախճանը նրա, ով միշտ ամեն ինչ զգացել էր և միշտ ամեն ինչ հիշել, իսկ հիմա ջախջախվել էր հարվածից, որ նորից Ջուլիոյին անքակտելիորեն կապել էր նրա հետ, մի՞թե այդ մահը չպետք է դառնար և որդու վախճանը: Կտրված է բունը, կտրված են նաև ճյուղերը: Այդ տան մռայլ աղքատության մեջ նրան տիրում էր սարսափը, քանի որ, նայելով ինքն իրեն, նա համոզվում էր, որ լի է հենց նույն զգացմունքներով, հենց նույն հիշողություններով, որոնց իշխանության տակ էր մայրը: Բայց այստեղ նա գտավ և Աննային՝ քրոջը. ճյուղ, որը երբեք չէր կտրվել բնից և միայն մի անգամ էր կարճատև ու նվազ ծաղկել, որպեսզի ծնի փշփշոտ մի պտուղ՝ այդ որդուն, որին հիմա նույնիսկ մոր սերը չէր կարող վերադարձնել իրականությանը: Քույր ու եղբայր ամուր գրկախառնվեցին, միացան իրար անհուսորեն քնքուշ և անսահման վշտալի մերձավորությամբ. այդ մռայլ տանը նրանք իրենց հոգիները թեթևացրին արցունքներով, որոնք առաջին անգամ միավորեցին նրանց, թեև ջլատեցին նրանց հոգիները: Ջուլիոն պետք է ապրի քրոջ համար և նրա տղայի համար: Ռոբերտոյի ձերբակալության լուրը, որ անխուսափելի էր և սպասվում էր րոպե առ րոպե, վերջապես եկավ՝ Կորրադո Սելմիի ինքնասպանության լուրի հետ միասին. բայց սիցիլիական թերթերը դրան հատկացրին միայն մի քանի մանվածապատ տողեր. չէ՞ որ, միևնույն է, ընթերցողները, որոնք, ինչպես և բոլորն այդ պահին, համակված էին անառողջ հետաքրքրասիրությամբ Արագոնայում կատարված սպանության մանրամասների նկատմամբ, դրան մի առանձին ուշադրություն չէին դարձնի:

Աննայի անհանգստությունը որդու համար, որ մեն-մենակ էր մնացել Հռոմում, և Ռոբերտոյին օգնություն ցույց տալու ձգտումը Ջուլիոյին դրդում էին անմիջապես վերադառնալ մայրաքաղաք: Բայց ինչպե՞ս մորն այդպիսի վիճակում մենակ թողնել Աննայի հետ, որը խենթի նման դեգերում էր սենյակներում ու կանչում որդուն, և ի՞նչ օգնություն կարող էր ցույց տալ ինքը Ռոբերտոյին: Միակ հնարավոր օգնությունը փողն էր, այդ քառասուն հազարը բանկ վերադարձնելը՝ այն էլ այնպես, որ բոլորը մտածեին, թե նա վերցրել է սեփական կարիքների համար: Սելմիի ինքնասպանության շնորհիվ գուցե Ռոբերտոն դուրս գա բանտից, բայց մատնությունից ու ձերբակալությունից հետո նրա վրա կմնա կասկածելի մեղսակցության անջնջելի բիծը: Շատե՞րն արդյոք վաղը կհավատան, որ նա միանգամայն անշահախնդրորեն է իր անունով վերցրել այդ փողերը ուրիշի համար: Եվ Սելմիի հայտարարությունը, եթե այն իսկապես գոյություն ունի, ինչպես հաստատում են թերթերը, բավական չի լինի այդ բիծը վերջնականապես ջնջելու համար:

Այնտեղ՝ մոր սենյակում, գտնվում էր կանոնիկոս Պոմպեո Ագրոն, որն արդեն մի քանի օր բազմաթիվ ժամեր էր անցկացնում անկողնու ոտնակողմի մոտ դրված բազկաթոռին՝ սևեռուն նայելով պառկածի մարած դեմքին՝ այն հույսով, որ նա, չցանկանալով այլևս ոչինչ ասել մարդկանց, կցանկանա հոգևորականի օգնությամբ դիմել աստծուն: Մեկ անգամ չէ, որ կանոնիկոսը շատ երկար, համառորեն, խոր ձայնով կանչում էր նրան անունով, բայց պատասխան չէր ստանում:

Ջուլիոն Մաուրոյին խնդրեց մի քիչ սպասել. նա ուզում էր խորհրդակցել Ագրոյի հետ, ուզում էր, որ կանոնիկոսը պահպանի իր հույսը կամ էլ հաստատի իր մեծ երկյուղը, որ Մաուրոյի հայտնվելը, նրա ձայնի հնչյունը կարող են արթնացնել մորը (դեպի լավը կամ դեպի վատը) այդ մահանման անզգայացումից:

— Կարծում եմ,— պատասխանեց նրան Ագրոն,— որ հիմա արդեն հարկ չի լինի ո՛չ հուսալու, ո՛չ երկյուղելու: Նա ոչինչ չի նկատի: Փորձե՛ք: Նրա այժմյան վիճակը նույն մահն է:

Մաուրոն կույրի նման ներս մտավ գրեթե մութ սենյակը և, հուզմունքից շնչահեղձ լինելով, բարձր կանչեց.

— Դոննա Կատերինա... դոննա Կատերինա...

Նա կանգնեց մահճակալի առաջ, բարձր դարսած բարձերի վրա տեսավ դեպի առաստաղը դարձած դեմքը՝ անկենդան աչքերով, որոնք արդեն չբարձրացող, ծանր, սևացած կոպերի տակ հավանաբար մռայլ էին ու լեցուն հուսահատ թախիծով. այդ դեմքին կար համառ, անվերապահ իշխանությունը մահվան, որի մասին պարզ ասում էին և՛ դուրս ցցված

այտոսկրերը, և՛ փոս ընկած քունքերը, և՛ սրված քթի ներքաշված ռունգները, և՛ գունատ, բարակ շրթունքները, որ ոչ թե պարզապես սեղմված էին, այլ տեղ-տեղ կարծես սոսնձված էին չորացած թքով:

— Աղջի՛կս, աղջի՛կս...— բացականչեց Մորտարան:— Դոննա Կատերինա՛, ես եմ, Մաուրոն, ձեր հոր պահապան շունը... Նայեցե՛ք ինձ... Բացե՛ք ձեր աչքերը, դոննա Կատերինա, նայելով ինձ, դուք կտեսնեք ձեր սեփական վիշտը... Լսեցե՛ք ինձ. ես պետք է ձեզ ասեմ... ես եկել եմ Հռոմից:

Մաուրո Մորտարայի հուզմունքը, բախվելով մեռնողի այդ աիեղ, մեռելային լռությանը, հանկարծ զեղվեց բարձր ու սուր հեծկլտոցով. Ագրոն ու Ջուլիոն, նույնպես լալով, երկու կողմերից բռնեցին ծերունու թևերից ու դուրս բերեցին սենյակից:

Մեռնողը, որ անշարժ պառկած էր բարձր դարսած բարձերին, մենակ մնալով սենյակում, լսեց այդ ձայնը շատ ավելի ուշ, կարծես այն անցել էր երկար ճանապարհ, որպեսզի հասնի նրան խորունկ, խորհրդավոր հեռուներում, որտեղ արդեն ճախրում էր նրա հոգին: Եվ այնտեղից, ի պատասխան այդ ձայնին, նրա փակ կոպերին հայտնվեց մի կաթիլ արցունք, որը ոչ ոք չտեսավ: Այդ կաթիլը հոսեց մի աչքից, գլորվեց այտի վրայով, ընկավ և անհայտացավ վզի կնճիռներում:

Երբ Պոմպեո Ագրոն նորից նստեց բազկաթոռին՝ մահճակալի ոտնակողմի մոտ, ո՛չ պառկածի աչքերում, ո՛չ էլ նրա այտին ոչ մի հետք չէր մնացել այդ արցունքից:

Դոննա Կատերինան մեռած էր:

Գլուխ VI

Առաջին իսկ երեկոյից՝ հենց որ նրանք մենակ մնացին Կոլիմբետրա վիլլայում, չնայած բարի կամք ցուցաբերելու նրանց բոլոր ջանքերին, և՛ դոննա Ադելաիդայի, և՛ դոն Իպոլիտոյի համար սկսվեց նրանց կողմից կանխատեսված դժվար տանելի տանջանքը:

Երբ հարսանեկան արարողությունից հետո հյուրերը ցրվեցին, դոն Իպոլիտոն մեծ սիրալիրությամբ բռնեց կնոջ ձեռքը, բայց չնայեց այդ ձեռքին, որպեսզի չզգա, թե այն որքան նման չէ մյուսին (դալուկ ու նեղ ձեռքին, փափուկ, քնքուշ ու թեթև), որ ինքը մի ժամանակ պահում էր իր ձեռքերում, փորձեց նրան հասկացնել տալ, թե ինքը նրանից ինչ է սպասում իր կամավոր աքսորի մենության մեջ, որի պատճառը, հավանաբար, հայտնի է նրան՝ եթե ոչ լրիվ, ապա գոնե մասամբ: Այդ ճառը դոն Իպոլիտոն արտասանեց պատշգամբում, արդեն գիշերային խավարով պարուրված դաշտերի լռության մեջ, և այն, ճիշտն ասած, մի քիչ շատ էր երկար և նույնիսկ մի քիչ տաղտկալի էր: Խեղճ դոննա Ադելաիդան այդ ամբողջ օրվա ընթացքում առանց այդ էլ ճնշված էր նոր զգացմունքների փոթորկից. իսկ հիմա բոլոր կողմերից նրան շրջապատող խավարն ու լռությունը է՛լ ավելի սաստկացրին վախը այն խորհրդավորի առաջ, որ պետք է ապրի ինքը՝ «բորբոսնած պառավ օրիորդը», և դրա համար, ինչքան էլ նա ջանում էր, բայց մի ինչ-որ պահի արդեն անընդունակ դուրս եկավ ունկնդրելու իշխանի անշտապ, անվերջանալի ճառը: Նա այնպիսի տպավորություն ստացավ, կարծես իշխանը, միանգամայն անժամանակ, ուզում է գրեթե ուժով իրեն քաշել-տանել ամենաբարձր, մշուշապատ լեռան կատարը, որտեղից իր համար դժվար, գուցեև բոլորովին անհնար կլինի իջնել, որպեսզի դիմակայի մյուս անակնկալներին, մյուս ապրումներին, որոնք նրա համար, անկասկած, նախապատրաստել էր այսօրվա գիշերը: Բարի կամքի պակասի պատ- ճառով չէր, այլ՝ որովհետև մի ինչ-որ պահի նրան սկսում էր չբավականացնել օդը. այո՛, այո՛, հենց օդը. նա երբեք չէր կարողանում լսել երկար ճառեր: Օ՛հ, աստվա՛ծ իմ, իսկ ինչո՞ւ է դա պետք՝ պտույտ տալ բուն էությունից դուրս, այն էլ այդքան

հեռվից, եթե ի վերջո այս կամ այն կերպ հարկ կլինի անելու այն, ինչ պահանջում է բնությունը: Տե՛ր աստված, դա ի՜նչ սարսափելի և անիմաստ է: Եվ չէ՞ որ հասցնում է միայն հոգնության ու ջղայնության: Չէ՞ որ այն, ինչ պետք է անել, հասարակ բաներ են և, բացի այդ, դրանք կարելի է մատների վրա հաշվել. և, վերջապես, ամեն մեկը պետք է հասկանա, որ բոլոր այդ դեգերումները բուն էությունից դուրս ոչ միայն անօգուտ են, այլև, բացի այդ, հիմար են ու վնասակար, որովհետև հենց բոլոր այդպիսի խոսակցություններից բխող հոգնության ու ջղայնության պատճառով բուն գործը կարվի ուշացումով ու վատ: Սկզբում նա վախեցած ու աղերսական աչքերով սկսեց նայել իշխանին կամ, ավելի ճիշտ, նրա երկար, շատ երկար մորուքին: Հետո արդեն բոլորովին խլացած, համառ անհրաժեշտություն զգաց՝ խլելու ձեռքը և շունչ առնելու, թեկուզ մի քիչ շունչ առնելու, քանի որ արդեն չէր կարելի փնչացնել ու գոռալ, որպեսզի ելք տա շնչահեղձությանն ու տագնապին: Ի վերջո նրան հաջողվեց հաղթահարել իր ջղային խլությունը. մի ակնթարթ նրա լսողությունը մի տեսակ վերակենդանացավ, բայց միայն այն բանի համար, որպեսզի հեռու փախչի, գիշերային խավարում կառչի որևէ այլ հնչյունային թելի, որը կարողանա շեղել նրան, բերել թեկուզ մի քիչ թեթևացում: Ցածից՝ ծովափից, որտեղ հիմա արդեն խավար էր տիրում և ոչինչ չէր երևում, լսվում էր անընդհատ մռթմռթոց: Եվ հանկարծ հենց այն պահին, երբ իշխանի խոսքն առանձնապես հուզումնալից էր դարձել, դոննա Ադելաիդան ընդհատեց նրան հարցով.

— Այդ ի՞նչ է: Ծո՞վն է: Եվ ամեն գիշեր այսպես լսվո՞ւմ է:

Դոն Իպոլիտոն սկզբում շշմեց. ծո՞վը, ի՞նչ ծով. հետո հասկացավ, որ այստեղ ոչինչ չի կարելի անել:

— Ախ, այո՛, ծովն է, ծովը...

Նա բաց թողեց կնոջ ձեռքն ու ետ քաշվեց:

Դոննա Ադելաիդան գլխի ընկավ, որ իշխանին մի քիչ վիրավորեց այդ անտեղի հարցը: Չիմանալով ինչպես ուղղել գործը, նա հիմարաբար լռում էր, իսկ հարցը կարծես կախված էր մնացել օդում:

Պատասխանն ստիպեց իրեն սպասել որոշ ժամանակ և, ի վերջո, եկավ կարծես հեռվից և հնչեց մտածկոտ ու լուրջ.

— Այն միշտ այդպես մռնչում է, երբ փչում է սիրոկկոն...

Ծովի այդ հեռավոր ձայնը, թեև թախծալի, թանկ էր նրա համար: Քանի՛ անգամ գիշերային խորին անդորրի մեջ և հուզել է նրան, և միևնույն ժամանակ մի տեսակ բաժանել նրա մենակությունը: Շեզլոնգի վրա կիսապառկած՝ նա լսում էր, և նրան օրոր էր ասում ջրի այդ մռայլ, անընդհատ երերումը, որ պատմում էր նրան հեռավոր երկրների, ուրիշ, աղմկոտ կյանքի մասին, որ նա երբեք չի ճանաչել: Եվ հանկարծ այդ հարցից նա դարձյալ իրեն զգաց առաջվա մենության մեջ խորասուզված:

Հիմա նորից ինչպե՞ս սկսել ընդհատված խոսքը: Իսկ մյուս կողմից՝ ինչպե՞ս կարելի է լռել, հենց այստեղ՝ պատշգամբում ինքն իրեն հանձնելով կնոջը, որը վստահել է իրեն՝ նրա համար նոր և, հավանաբար, անցանկալի մենակության մեջ: Հարկավոր էր ստիպել իրեն հաղթահարելու կնոջը մոտենալու նողկանքը: Բայց հիմա՝ համոզվելով, որ իրենց միջև չի առաջանա ոչ մի մերձավորություն, բացի մարմնականից, դոն Իպոլիտոն դառնությամբ հարցնում էր իրեն, թե ինքնասիրությանը հասցվող վնասից բացի, ուրիշ ի՞նչ կարող է բերել իրեն այդ մերձավորությունը:

Եվ, իսկապես, այդ գիշեր...

Ա՛խ, խեղճ դոննա Ադելաիդան նույնիսկ չէր կարող պատկերացնել նման տեսարան՝ միաժամանակ և՛ խղճալի, և՛ սարսափելի: Նա հիմա էլ էր սկսում խաչակնքել զույգ ձեռքերով: Ախ, սո՛ւրբ տիրամայր: Այդպիսի մորուքով տղամարդը, լուրջ տղամարդը... Աստվա՛ծ,

աստվա՛ծ: Դոննա Ադելաիդան ստիպված եղավ տեսնել, թե ինչպես մի ինչ-որ պահի իշխանը փախավ՝ ոչնչացված ու գազազած: Գուցե նա գիշերով թաքնվեց իր թանգարանում՝ առաջին հարկում: Իսկ դոննա Ադելաիդան գիշերվա մնացորդն անցկացրեց կիսահագնված, պատուհանի մոտ՝ լսելով սիրահարված բվեճի հեծեծանքները կամ Չիվիտայի անտառից, կամ էլ ավելի հեռվից՝ Խոսող աշտարակից:

Դեռ լավ էր, որ հաջորդ առավոտյան, տեսնելով կալվածքը և վիլլայի հոյակապ կահավորումը, նա փոքր-ինչ սփոփվեց, և նույնիսկ մասամբ վերադարձավ նրա սովորական հանդարտ տրամադրությունը: Եթե չլիներ գործը վատացնելու երկյուղը, դոննա Ադելաիդան հաճույքով առաջինը կմոտենար իշխանին և կասեր նրան բարեկամաբար, չկշռադատելով ամեն մի բառը, որ նա ոչ մի վատ բան չմտածի ու ոչնչից չվշտանա, որովհետև ինքը լիովին գոհ է այն ամենով, ինչ որ կա:

Դոննա Ադելաիդային վշտացնում էր իշխանի մռայլված դեմքը: Խե՛ղճ մարդ, նա նույնիսկ չէր համարձակվում բարձրացնել աչքերը, որ նայի կնոջը, երբ նրա հետ խոսում էր նախաճաշի ժամանակ: Այո՛, այո՛, իհա՛րկե, հասկանալի է, իրենց վիճակն անսովոր է. իրենք դարձան այր ու կին՝ գրեթե չճանաչելով մեկմեկու: Հետզհետե իրենց միջև կառաջանա փոխադարձ ըմբռնում և... այո՛, այո՛, հասկանալի է:

Բայց դոննա Ադելաիդան նկատեց, որ երբ իշխանն ասում էր այդ ամենը, նրա անհանգստությունը հետզհետե աճում էր ու սրվում, և գիշերվա մոտենալը իրեն իսկապես սարսափ էր ներշնչում: Այդպես շարունակվեց մի քանի գիշեր իրար ետևից. ի վերջո իշխանուհին՝ թողություն ստացավ և հանգիստ թողնվեց, կարող էր քնել մենակ, առանձին սենյակում: Բայց դրանից հետո հաջորդ օրը Կոլիմբետրա եկավ մոնսինյոր Մոնտորոն և առանձին մի փոքրիկ քարոզ կարդաց դոննա Ադելաիդային: Եվ այդ ժամանակ դոննա Ադելաիդան նորից. «Օ՛, սուրբ տիրամայր: Ինչպե՞ս... Ո՛չ... Ինչպե՞ս... Ի՞նչ: Ինքն ի՞նչ պիտի աներ... Հիսո՛ւս: Հիսո՛ւս: Իր տարիքում սեթևեթել ու կոտրատվե՞լ: Ո՛չ ու ո՛չ: Ո՛չ ու ո՛չ: Երբե՛ք: Իր բնավորության մեջ չկա ու վերջ: Եվ, բացի այդ, ինչո՞ւ: Մի՞թե չի կարելի, որ ամեն ինչ այսպես էլ մնա: Ինքն ավելի լավ ոչինչ չի ուզում»: Ի՞նչ արտահայտություն ստացավ մոնսինյորի դեմքը: Եվ խեղճ դոննա Ադելաիդան այդ պահից չգիտեր, թե որ աշխարհում է ինքը կամ, ինչպես ինքն էր ասում, սկսեց իրեն զգալ, «թուրքական գերության մեջ»: Ինչպե՞ս թե: Բանից դուրս է գալիս, որ դա ի՞ր մեղքն է:

Իշխանը բոլոր օրերն անց էր կացնում թանգարանում՝ հայտնվելով միայն ճաշին ու ընթրիքին՝ սառած, խոժոռված, լուռ: Օ՛դ, օ՛դ, օ՛դ: Այո՛, այստեղ ինչքան ասես օդ կար, բայց դոննա Ադելաիդան այլևս չէր կարող շնչել այն: Իսկ ամենազարմանալին ահա թե ինչն էր. նա տառապում էր շնչարգելությունից, և նրան թվում էր, թե տառապում են նաև բոլոր իրերը, հատկապես ծառերը: Վիլլայի առաջ փուլ-փուլ դասավորված երեք ծաղկած թմբերից վեր աճում էր մի ձիթենի, որի բունը ծածկված էր ելունդներով ու հանգույցներով. հողմերի կամ էլ հողի առանձնահատկությունների պատճառով նրա բունն ամբողջովին ծռմռվել էր, և թվում էր, թե նրա համար շատ դժվար է պահել բազմաթիվ ճյուղերը, որ փարթամորեն աճել էին մի կողմից և, ի հակադրություն բնի, ուղիղ էին ու հարթ: Ոչ ոք չէր կարող տարհամոզել դոննա Ադելաիդային, որ այդ ծռմռված և այդպիսի քանակությամբ ճյուղերով ծանրաբեռնված ծառը չի տառապում:

— Օ՛, աստվա՛ծ, մի՞թե դուք չեք տեսնում: Տառապո՛ւմ է: Ես ձեզ ասում եմ, որ նա տառապում է, խե՛ղճը:

Եվ նա ստիպեց ծառը կտրել: Իսկ երբ այդ արդեն արված էր, նայելով այն տեղին, որտեղ առաջ գտնվում էր ծառը, նա թեթևացած շունչ քաշեց.

— Ա՛խ: Այսպես լավ է: Ես նրան ազատեցի:

Բայց դոննա Ադելաիդան դրանով չբավարարվեց: Բարի սրտի մյուս ապացույցները նա տվեց անլուսին երեկոները՝ ընթրիքի ժամանակ, երբ լամպի լույսը ճաշասենյակ էր քաշում զանազան թևավոր միջատների: Պերտիկինոյին՝ տասներեք տարեկան մի տղայի,

պահակախմբի սերժանտի որդուն, հանձնարարված էր կանգնել դոննա Ադելաիդայի աթոռի ետևում և քշել բոլոր այդ արարածներին՝ հենց որ դրանք հայտնվեին: Բայց Պերտիկինոն հաճախ մոռանում էր իր գործը, զննելով հաստ, թելե ձեռնոցները, որ քաշել էր իր ձեռքերին, և դոննա Ադելաիդան ամեն անգամ պետք է կտրեր նրան այդ հայեցումից՝ ճչալով ու ցնցվելով որևէ ծղրիդի թռիչքի կամ մեծ բզեզի բզզոցի պատճառով:

— Դատարկ բան է: Թիթեռ է... Մի՛ վախեցեք: Ահա՛, թիթեռ է:

— Խե՛ղճ արարած, մի՛ տանջիր նրան. իսկույն գլուխը կտրիր, թե չէ նորից ներս կթռչի: Արեցի՞ր:

— Արեցի, ձերդ պայծառափայլություն: Ահա՛:

— Ո՛չ, ո՛չ, այդ ի՞նչ ես անում: Ինձ մի՛ ցույց տուր դրան՝ խեղճին: Դա թիթե՞ռ էր: Պարզապես թիթե՞ռ: Խե՛ղճ արարած... Բայց նրան ո՞վ էր խնդրել ներս թռչել, երբ դրսում այնպիսի հրաշալի բնություն է... Ախ, եթե ես թևեր ունենայի, եթե ես թևեր ունենայի...

Ինչպե՞ս ասեր, որ ինքը, առանց վարանելու, կթռչեր հեռու:

Թեև այդ ամենը ջղայնացնում էր դոն Իպոլիտոյին, նա կնոջը թույլ էր տալիս անել և ասել՝ ինչ որ կամենար: Բայց վերջապես մի անգամ երեկոյան նա չկարողացավ զսպել իրեն: Նրանք երկուսով նստած էին պատշգամբում՝ իրարից քիչ հեռու: Իշխանն սպասում էր, որ զառիթափից այն կողմ, բլրալանջի ձիթենիների խիտ սաղարթների վրա բարձրանա լիալուսինը, որը միշտ նրա մեջ արթնացնում էր մի վաղեմի և նրա սրտին թանկ զգացում:

Ամեն անգամ նրան թվում էր, թե լիալուսինը, ձիթենիների ետևից բարձրանալով ցածում փռված դաշտերի ու հեռավոր ծովի վրա, չնայած անցած այդքան դարերին, դեռ էլի զգում էր զարմանք ու սարսափ, տեսնելով ցածում՝ այնտեղ, ուր առաջ գտնվում էր աշխարհի ամենահոյակապ ու շքեղ քաղաքներից մեկը, միայն ամայի ու լռին դաշտեր: Հիմա լուսինը ուր որ է պիտի հայտնվեր, նրա լույսն արդեն թափանցում էր ձիթենիների արծաթափայլ կատարների միջով, և դոն Իպոլիտոն, շրջապատի ամբողջ բնության հետ միասին, պատրաստվում էր դիմավորելու նրան՝ ունկնդրելով ծղրիդների խուլ, խորհրդավոր ճռճռոցին, որ ժամանակ առ ժամանակ լսվում էր բուի կողմից: Նա հույս ուներ նորից վերապրելու առաջվա թախծալի ու հուզումնալից տպավորությունը, երբ հանկարծ Սպերոնեի ափի զորանոցից, կործանելով ու փշրելով այդ կախարդանքը, դուրս թռավ կապիտան Շարալլայի սրնգի զիլ ու կոպիտ ձայնը: Դոննա Ադելաիդան սկսեց ուրախ ծափ տալ:

— Ա՛յ սքանչելի է: Օ՛, բրավո կապիտանին իր սերենադի համար:

Դոն Իպոլիտոն վեր թռավ՝ դողալով զայրույթից ու վրդովմունքից և փակեց ականջները՝ խորին հուսահատությամբ գոռալով.

— Նզո՛վք: Նզո՛վք: Նզո՛վք:

Բռնելով Պերտիկինոյի ուսերից, նա կատաղի ցնցեց տղային և հրամայեց իսկույն վազել ու գոռալ ձորի հանդիպակաց ափի այդ սրիկաներին, որ անհապաղ վերջ տան:

— Եվ հետո՝ դուրս այստեղից, կորիր: Էլ չեմ ուզում տեսնել քեզ: Ում տհաճություն են պատճառում ճանճերը, թող ինքն էլ քշի: Լռեք: Այո՛, ինքը: Ես հոգնել եմ, սիրտս խառնում է այս ամբողջ գռեհկությունից, ես դրանից շնչահեղձ եմ լինում: Բավակա՛ն է: Բավակա՛ն է: Հերի՛ք է:

Եվ նա, աչքերը փակելով ու ձեռքերով սեղմելով քունքերը, փախավ պատշգամբից:

Բարեբախտաբար, մի քանի օր անց օգնություն և ապաստան խնդրելու համար վիլլա եկավ տագնապահույզ ու վախեցած Սալեզիո Մարուլլոն՝ նիհարած և կարծես ծխահարված

դեմքով: Առաջին իսկ օրից նա դարձավ դոննա Ադելաիդայի հոգածության առարկան, և իշխանուհին գտնում էր, որ նա ուղարկված է հենց աստծու կողմից:

— Դոն Սալեզիո, խնդրում եմ ձեզ, կերե՛ք: Ի սեր աստծո, դոն Սալեզիո, չէ՞ որ դուք պիտի կազդուրվեք: Պերտիկինո, ևս երկու ձու դոն Սալեզիոյին:

Դոննա Ադելաիդան սկսեց բտել նրան, ինչպես հնդկահավը ծննդյան տոներից առաջ: Խեղճ մարդուկը, որ ստվերի էր վերածվել, ուժ չուներ դիմադրելու. նա կլանում էր, կլանում էր, կլանում էր այն ամենը, ինչ դնում էին իր առաջ և գրեթե բռերով լցնում էին բերանը. հետո... օ՛, հետո նա դրա համար հատուցում էր սարսափելի ծակոցներով և ընդհանրապես ստամոքսի լիակատար խանգարումով, այնպես որ մեկ անգամ չէ, որ որևէ զվարճանքի կամ զբաղմունքի կեսին, որ կապիտան Շարալլայի հետ հորինում էին իշխանուհուն զվարճացնելու համար, հանկարծ նա ծածկվում էր բծերով և, ի վերջո, պետք է դուրս վազեր. հեշտ էր պատկերացնել, թե դրանից ինչպես էր տառապում նրա՝ առանց այդ էլ անկման հասած այրական ինքնասիրությունը:

Բայց դոննա Ադելաիդային այդ ամենը շատ էր ուրախացնում: Քանի որ նա ոչ մի կերպ չէր կարող ծաղրել իր ամուսնու այրական արժանապատվությունը, նրան մնում էր միայն իր սրտնեղությունը ինքնամոռաց կերպով թափել իր ճանապարհին հանդիպող մյուս տղամարդկանց, ի միջի այլոց, նաև կապիտան Շարալլայի արժանապատվության վրա: Նա քարտուղար Լիզի Պրեոլայի սենյակում, գրասեղանի թղթերի մեջ գտավ մի հին ձեռագիր ոտանավոր, կապիտանի դեմ, որտեղ, ի միջի այլոց, ասվում էր.

Շարալլինո, Դոն Կիխոտիկ՝

Հողմաղացի դեմ մարտնչող

Դու կդառնաս քաջ որսորդիկ

Խխունջներին ոչնչացնող,

Հպարտ՝ կարմիր քո շալվարով,

Քո կուրտկայի եզրակարով,

Շարալլինո, Դոն Կիխոտիկ:

Մի անգամ ուժգին տեղատարափից անմիջապես հետո դոննա Ադելաիդան իջավ զորանոցի ներքևի հրապարակը, որտեղ «զինվորականները» զորավարժություն էին կատարում, և, խորհրդավոր կերպով մի կողմ կանչելով կապիտան Շարալլային, հրամայեց նրան՝ իր մարդկանց ուղարկել, մի ձեռքում բահ և մյուսում զամբյուղ բռնած, փնտրելու բաբբալուչեդի, այսինքն՝ խխունջներ, որ այդ տեղատարափից հետո պետք է դուրս սողային հողից:

Այդպիսի հրաման ստանալով, խեղճ կապիտանը քարացավ:

Ինչպե՞ս զինվորական ձևով նման հրաման տալ իր մարդկանց: Քանի որ դոննա Ադելաիդան նրան փորձության ենթարկելու համար հայտարարեց, որ խխունջներ փնտրելը նույնն է՝ ինչ որ ռազմական արշավը:

— Ձերդ պայծառափայլություն, ես ինչպե՞ս կարող եմ այդ անել:

— Իսկ ինչո՞ւ չեք կարող:

— Եթե մենք կորցնենք մեր հեղինակությունը, ձերդ պայծառափայլություն...

— Ի՞նչ հեղինակություն:

— Բայց հասկացե՛ք, ես պիտի հրաման տամ... իսկ այնպիսի պահին, ինչպիսին հիմա է...

— Ես՝ ուզում եմ բաբբալուչեդի:

— Լսում եմ, ձերդ պայծառափայլություն, ավելի ուշ, երբ ես հրաման կտամ՝ «ազատ»...

— Երբ հրաման կտաք... ի՞նչ:

— «Ազատ», ձերդ պայծառափայլություն:

— Ո՛չ: Ո՛չ: Այն ժամանակ էլ ոչ մի իմաստ չի լինի: Ես ուզում եմ զինվորական բաբբալուչեդի:

Եվ կապիտան Շարալլան ոչ մի հնարավորություն չուներ ազատվելու այդ քմահաճ բռնությունից: Հաջորդ օրը նա դառնորեն գանգատվում էր դոն Սալեզիո Մարուլլոյին, թե դա ինչ հարված է հասցրել կարգապահությանը. կապիտանն առաջ էլ էր նրան հաղորդակից դարձնում իր ցավերին՝ այն լուրերի կապակցությամբ, որ գալիս էին Սիցիլիայի բոլոր ծայրերից՝ միությունների անդամների մեջ սկսված խոշոր հուզումների մասին, որոնց չէին կարողանում դիմակայել ո՛չ ոստիկանները, ո՛չ զորքերը. այն զորքերը՝ «իսկականները»:

— Եթե նրանք հասկանային, որ մենք այստեղ նույնպես կառավարության դեմ ենք... Բայց ո՛չ, թանկագին սինյոր Սալեզիո, որովհետև նրանք միավորվում են ոչ այնքան պետության դեմ, որքան սեփականության, հասկանո՞ւմ եք:

— Հասկանում եմ, հասկանում եմ...

— Նրանք հող են ուզում: Իսկ եթե նրանց քշեն քաղաքից, և նրանք նետվեն գյուղե՞րը: Մենք էլ շատ քիչ ենք: Բայց աչքի ենք զարնում, որովհետև շրջում ենք երթային լրիվ համազգեստով, հասկանո՞ւմ եք:

— Հասկանում եմ, հասկանում եմ:

— Այստեղ շարունակ գտնվելով զենքի տակ, մենք կարծես հուշում ենք, որ վտանգ գոյություն ունի. մենք կարծես մի փոքրիկ պետություն ենք, որի հետ կարելի է կռվել առանձին, ասում եմ ձեզ: Իսկ վաղը եթե մեզ վրա հարձակվեն, գիտե՞ք դա ինչպես կբացատրի ոստիկանապետը: Որպես արդարացի հատուցում: Նա հոգ կտանի ուրիշների մասին, իսկ մեր մասին կասի. «Ախ, նորին պայծառափայլություն իշխան Լաուրենտանոն ցանկանում է իրեն ներկայացնել որպես թագավոր իր պահակախմբով: Շատ լավ, թող ինքն էլ իրեն պաշտպանի»: Բայց մենք ինչո՞վ պիտի պաշտպանվենք: Ասացե՛ք ինձ... Սա ի՞նչ բան է:

— Մի՛ հուզվեք, դե, զենքով, իհա՛րկե...

— Զենքո՞վ: Մի՛ ծիծաղեցրեք ինձ: Սա զե՞նք է: Բայց երբ մարդկանց ա՛յ, այսպես են զինում... և հագցնում... դուք ինձ տեսնում եք... արիություն է հարկավոր, իսկական արիություն մեր օրերում այսպիսի աչք ծակող զգեստ կրելու համար. ես զգում եմ, թե ինչպես է գունատվում իմ դեմքը, երբ նայում եմ այս կարմիր շալվարին: Ես ասում եմ, սինյոր դոն Սալեզիո, մենք ի՞նչ է, կատա՞կ ենք անում: Եթե նա այդպես փափկանկատ է, որ չի ուզում ոչ ոքի առաջ գլուխ խոնարհել...

— Գուցե,— անվճռական հուշեց դոն Սալեզիոն,— խելամիտ կլիներ հավաքագրել...

— Էլի՞ մարդկանց: Իսկ ո՞ւմ: Դա լավ ծրագիր կլիներ: Բայց ո՞ւմ: Գյուղացիների: Բայց եթե դրանք էլ նրանց հետ միության մեջ են: Թշնամինե՞ր տան մեջ:

— Այո՛, այո՛... Բայց ի՞նչ անել: Իսկ գիտե՞ք, միակ բանը, որ իմաստ կունենար...

Բայց նա դա բառերով չասաց. երկու ձեռքով կրծքի վրա ետ քաշեց համազգեստը, մի քանի անգամ ջղայնորեն ցնցեց այն, ապա գրեթե գաղտնաբար արեց երկու այլ շարժում, որ նշանակում էին՝ ծալել այն ու թաքցնել: Հետո անմիջապես հարցրեց.

— Դե ի՞նչ: Համաձայն չե՞ք:

Դոն Սալեզիոն թոթվեց ուսերը.

— Ինձ թվում է, թե իշխանը... գուցե...

— Այո, իհա՛րկե: Իսկ ինքն այսպիսի համազգեստ չի հագնում: Սինյոր դոն Սալեզիո, երկինքը մռայլվում է, ամպերը կուտակվում են բոլոր կողմերից: Եվ առաջին կայծակները կքաշենք մենք՝ մեր ձեռքերի երկաթներով. կտեսնեք, որ ես չեմ սխալվում:

Եվ, իսկապես, մի քանի օր անց զարկեց կայծակը, ահեղ կայծակը. դա Արագոնայում կատարված սպանության լուրն էր: Թվում էր, թե կայծակը զարկեց հենց Կոլիմբետրային, որովհետև այնտեղ նույն հարկի տակ էին գտնվում սպանդի գլխավոր կազմակերպչի հայրը, այսինքն՝ քարտուղար Լիզի Պրեոլան, և զոհի խորթ հայրը, խեղճ դոն Սալեզիոն: Շփոթությունն ու սարսափն Է՛լ ավելի ուժեղացան, երբ Հռոմից՝ որպես այդքան մոտ ընկած այդ կայծակի ցոլքը, լուր եկավ Դիանելլայի խելագարության մասին:

Դոննա Ադելաիդան, որն անմիջաբար խոցված էր շանթի զարկից, դադարեց նեղել դոն Սալեզիոյին իր աղմկոտ ու տանջող գթասրտությամբ և սկսեց աղաղակել արդեն իր անձնական ապրումների մասին. քանի որ Դիանելլան խելագարվել է այդ սպանության պատճառով, չի կարելի մարդասպանի հորը թողնել Կոլիմբետրայում: Ու թեև իշխանը անարդարացի էր համարում խիստ միջոցներ ձեռնարկել ծերունու նկատմամբ, որն արդեն ցնցված էր որդու նողկալի ոճրից, նա, որպեսզի կնոջն ստիպի լռել, հարկադրված էր կալվածքից վտարել Պրեոլային, ճիշտ է, տալով նրան դրամական նպաստ: Գնալուց առաջ Պրեոլան, որ դժվարությամբ էր շարժվում, և որի ուռած կոպերով գլուխը ծանրորեն ճոճվում էր, եկավ համբուրելու նաև սինյորա իշխանուհու ձեռքը և ասաց նրան, որ քավելով որդու հանցանքը, ինքն իր տիրոջից հաճույքով է ընդունում պատիժը՝ արտաքսվելն այս տանից՝ երեսուներեք տարվա ծառայությունից հետո, որ ինքը կատարել է այնպիսի սիրով և այնպիսի եռանդով: Հուզված ու զղջացած դոննա Ադելաիդան սկսեց մոլեգնել ու վկայակոչել աստծուն, որ միայն իշխանն է մեղավոր այն բանում, որ հիմա ինքն ստիպված է զղջալ՝ խեղճ ծերունու հանդեպ թույլ տված անարդարության համար, այո՛, հենց իշխանը. չէ՛ որ նա շարունակ կնոջը պահում է մի տեսակ տանջալից լարվածության մեջ, այնպես որ իշխանուհին ինքն էլ չգիտի, թե ինչ է ուզում և, որպեսզի հոգու թեթևացում գտնի, խոսում և անում է բաներ, որ հակառակ են իր բնավորությանը: Նրա ցասումը էլ ավելի սաստկացավ, երբ իմացավ, որ իր եղբայր Ֆլամինիոն վերադարձել է Հռոմից: Նա արցունքներից ուռած աչքերով հարցրեց մոնսինյոր Մոնտորոյին, որը եկել էր Կոլիմբետրա՝ ցավակցության այցի՝ դոննա Կատերինայի մահվան առթիվ, թե նա արդյոք մարդկայի՞ն է համարում, որ իրեն արգելում են գնալ տեսնելու ազգականուհուն և խնամելու նրան. չէ՛ որ ինքը միշտ փոխարինել է նրա մորը:

Դոն Իպոլիտոն այդ պահին տանը չէր: Նա գնացել էր Կոլիմբետայից ոչ հեռու Բոնամորոնե գերեզմանոցը՝ քրոջ շիրմի վրա աղոթելու: Երբ նա մռայլված մտավ հյուրասենյակ, ձևացրեց, թե չի տեսնում կնոջ արցունքները, իսկ եպիսկոպոսին, որը վեր կացավ և տրտմագին պարզած ձեռքերով գնաց նրան ընդառաջ, ասաց.

— Նա մեռավ հուսահատությունից, մոնսինյոր: Հուսահատությունից: Որդին բանտում է՝ «հայրենասերներից» շատերի հետ միասին խառնված բանկային խարդախությանը: Իսկ այդ Սելմի՞ն, որ եկել էր այստեղ, որպեսզի հանդես գա որպես Կապոլինոյի հակառակորդի մարտավկա: Դուք գիտե՞ք, նա ինքնասպանություն է գործել: Նրանք հատուցում են իրենց բոլոր հրաշալի գործերի համար: Դա կազմալուծում է, մոնսինյոր: Թող աստված ողորմա հանգուցյալներին: Իմ սրտում այնպիսի վրդովմունք է, որ ես չկարողացա աղոթել: Ծունր իջա իմ խեղճ քրոջ շիրմի վրա, բայց ծնկներս այնպես էին դողում, որ ստիպված եղա վեր կենալ. և այդ պահին հարցրեցի ինքս ինձ՝ արդյոք հիմա ժամանա՞կն է լալու և աղոթելու, ավելի լավ չէ՞ գործել, մոնսինյոր: Մենք պե՞տք է, իսկապես, անտարբեր մնանք, երբ ամեն ինչ փլվում է, և ժողովուրդը՝ ապստամբում: Դուք լսե՞լ եք, կարդացե՞լ եք թերթերը: Ամբոխները գրգռված են անարխիստական քարոզներից. նրանք փողոց են ելնում՝ բողոքելու հարկերի ծանրության դեմ, բայց իրենց հետ տանում են խաչելություն ու սրբապատկերներ:

— Նաև թագավորի ու թագուհու պատկերները, դոն Իպոլիտո,— դառնությամբ նկատեց մոնսինյորը:

— Դա միայն նրա համար, որ զինաթափ անեն զինվորներին,— արագ պատասխանեց դոն Իպոլիտոն:— Եվ դա վկայում է, որ ժողովրդի հոգին դեռ մեզ հետ է, պարզ վկայում է: Դուք գիտե՞ք , որ իմ որդին Սիցիլիայում է:

Մոնսինյորը տխուր լրջությամբ թեքեց գլուխը՝ մտածելով, թե իշխանն իրեն այդ հարցը տվեց, որ որևէ տհաճ բան հայտնի:

— Նա եկել է դոն Ֆլամինիոյի հետ,— ավելացրեց իշխանը հառաչանքով,— և խեղճ աղջկա հետ:

Դոննա Ադելաիդան նորից փղձկաց՝ է՛լ ավելի բարձր, դոն Իպոլիտոն ոտքը ջղային զարկեց հատակին:

— Պետք է կարողանալ հաղթահարել սեփական վշտերը,— ասաց նա հպարտ,— և տեսնել հեռուն ու խորը: Պետք է կարողանալ ապրել ինչ-որ բանի համար, որը բարձր է կանգնած մեր ամենօրյա դժբախտություններից և այն տխրություններից, որ բերում է մեզ կյանքը: Ես գրել եմ իմ որդուն, մոնսինյո՛ր, և կանչել եմ Կապոլինոյին, որպեսզի առաջարկեմ նրան զրուցելու որդուս հետ, եթե կարելի է գալ որևէ համաձայնության...

— Բայց այդ ինչպե՞ս կլինի,— զարմանքով ու վշտացած բացականչեց մոնսինյորը:— Համաձայնության գալ նրա՞նց հետ, ովքեր հենց նոր բարբարոսաբար սպանել են նրա կնոջը:

Դոն Իպոլիտոն դարձյալ ոտքը զարկեց գորգին, սեղմեց բռունցքները, թափահարեց և, բարձրացնելով արհամարհական ծամածռությունից աղճատված դեմքը, մռնչաց.

— Ստրկությո՛ւն: Ստրկությո՛ւն: Ստրկությո՛ւն: Ա՛խ, եթե ես գամված չլինեի այս տանը:

— Ի՞նչ է, մի՞թե մենք աքսորված ենք այստեղ: Իսկապե՞ս աքսորված ենք,— դառնալով եպիսկոպոսին հարցրեց արցունքներով ողողված դոննա Ադելաիդան:— Ո՞վ է մեզ արգելում դուրս գալ այստեղից և գնալ՝ ուր ուզում ենք, մոնսինյոր:

— Ո՛վ,— բացականչեց դոն Իպոլիտոն կտրուկ շրջվելով, և նրա դեմքը գունատվեց զայրույթից:— Դուք այդ դեռ չգիտե՞ք: Մոնսինյոր, մի՞թե դուք պարզորոշ չեք շարադրում իմ երկրորդ չարաբաստիկ ամուսնության պայմանները: Ինչպե՞ս կարող է նա չիմանալ, թե ով է մեզ արգելում դուրս գալ այստեղից:

— Բայց չէ՞ որ դեպքը միանգամայն բացառիկ է,— տնքալով ասաց դոննա Ադելաիդան:— Որ այդպես է, ես մենակ կգնամ: Նա կարող է մնալ: Սուրբ աստված, պետք է գոնե մի քիչ սիրտ ունենալ:

Մոնսինյոր Մոնտորոն ձեռքերի շարժումներով նրան աղերսեց լռել, լինել ավելի զգույշ: Դոն Իպոլիտոն ձեռքերն ամուր սեղմեց դեմքին և երկար ժամանակ չէր հեռացնում: Երբ վերջապես նա բացեց դեմքը, այն միանգամայն փոխվել էր. և խորին վշտի, խորին նվաստացման զգացմունքով իշխանն ասաց.

— Մոնսինյո՛ր, աշխատեցեք համոզել իմ աներձագին, որ դստերը բերի այստեղ, հորաքրոջ մոտ: Գուցե անդորրը, իրադրության նորությունը նրան օգուտ բերեն:

— Ախ, այստե՞ղ: Իսկապե՞ս, այստեղ: Ախ, եթե նա այստեղ գա...— հրճվանքով բացականչեց դոննա Ադելաիդան՝ շուռումուռ գալով և գրեթե պարելով իր աթոռի վրա:— Այո՛, այո՛, այո՛, մոնսինյոր, դուք լսեցի՞ք: Նա ինքն ասաց: Հենց հիմա, հենց հիմա բերեք նրան այստեղ, իմ խեղճ աղջնակին:

Այդ զիջումից գոհ՝ մոնսինյորը պարզեց սպիտակ, թմբլիկ ձեռքերը, որ դադարեցնի նրա զեղումները:

— Սպասե՛ք... թույլ տվեք ինձ: Ահա՛... Ես պետք է ձեզ ասեմ... ես այնպես հուզված եմ, այնպես հուզված եմ... Ահա՛. . . այո՛... բայց սպասեք... դուք ինքներդ կհամոզվեք, որ ավելի լավ է առայժմ խեղճ աղջկան թողնել Ջիրջենտիում… Գուցե մենք մի միջոց գտնենք բուժելու նրան: Այո՛, այ՛, նախանցյալ օրը գիտե՞ք ով եկավ ինձ մոտ՝ եպիսկոպոսություն: Դը Վինչենտիսը, խեղճ Նինի դը Վինչենտիսը, որ շատ վաղուց սիրահարված է աղջկան, դուք այդ գիտեք: Սիրելի պատանի: Օ՛, եթե դուք տեսնեիք նրան... Նա այնպիսի վիճակում էր, ես ձեզ կասեմ, որ խղճալի էր նայելը: Նա սկսեց լալ, հուսահատ լալ և խնդրեց ինձ, թախանձեց՝ խոսել դոն Ֆլամինիոյի հետ, որ նա վստահի իրեն և թույլ տա լինել աղջկա կողքին, որովհետև ինքը հույս ունի իր սիրով, իր ջերմ, համառ կարեկցանքով սթափեցնել աղջկան, վերադարձնել բանականության, կյանքի... Դե ահա, դուք ի՞նչ կասեք այս մասին:

— Տա՛ աստված,— բացականչեց դոննա Ադելաիդան:— Իսկ Ֆլամինիո՞ն: Ֆլամինիո՞ն:

— Ես երեկ առավոտյան անմիջապես կատարեցի այդ խնդրանքը,— պատասխանեց մոնսինյորը:— Եվ դոն Ֆլամինիոն, որ գիտի պատանու սիրտը, վեհանձնությունն ու անդրդվելի ազնվությունը, առաջարկությունն ընդունեց և դը Վինչենտիսին խոստացավ, որ Դիանելլան նրան կպատկանի, եթե նրան հաջողվի հրաշք գործել և բուժել աղջկան: Դիանելլային հանգիստ թողնենք, դոննա Ադելաիդա, և միասին աղոթենք աստծուն, որ հրաշքը կատարվի:

Սրանով մոնսինյորն ավարտեց զրույցը: Իջնելով սանդուղքով, նա դոն Իպոլիտոյին ասաց, որ պատրաստվում է հովվական ուղերձ հղելու ծխական համայնքների հավատացյալներին, բայց տարածելուց առաջ կգա, որ այն ընթերցի իշխանին: Դոն Իպոլիտոն հարգանքով գլուխ տվեց, և, հենց որ եպիսկոպոսի կառքը մեկնեց, նա փակվեց թանգարանի դահլիճում:

Իսկ դոննա Ադելաիդան նորից սկսեց լալ՝ սկզբում սրտաշարժվելով Նինի դը Վինչենտիսի արարքից, հետո՝ հուսահատությունից, որովհետև շատ լավ գիտեր զարմուհու առաջվա վերաբերմունքը պատանու նկատմամբ: Գուցե, եթե ինքը նրա կողքին լիներ... Ո՞վ գիտե: Եվ նա նորից սկսեց դողալ կատաղությունից, անզոր զայրույթից իշխանի բարբարոսության դեմ, որն իրեն ստիպում է մնալ այստեղ: Իսկ ինչո՞ւ: Ինքն իրենից ի՞նչ է ներկայացնում: Ի՞նչ է անում այստեղ: Ո՛չ, ո՛չ ու ո՛չ: Ինքը պիտի գնա, փախչի, ազատվի, թե չէ ինքն էլ կխելագարվի Դոննա Ադելաիդան որոշեց գրել եղբորը՝ թախանձելով նրան՝ անհապաղ գալ և տանել իրեն, ամեն միջոցով ազատել իրեն այդ տաժանակրությունից՝ բարեկամաբար կամ բռնությամբ:

Իշխան Լաուրենտանոյի հրավերից ուրախացած, Ինյացիո Կապոլինոն ուզում էր ուղևորվել Կոլիմբետրա, երբ լսեց, որ նախասենյակում պառավ աղախինը անքաղաքավարությամբ դուրս է հրում ինչ-որ այցելուների: Նա մոտեցավ դռանը և, գլուխը դուրս հանելով, տեսավ երկու կանանց՝ սևեր հագած, սև գլխաշորերով, որ ձիգ կապած էին նրանց դալուկ, խիստ նիհար դեմքերի շուրջը: Դրանք Պինյայի երկու աղջիկներն էին՝ Միտան և Աննիկիան:

Լսելով նրանց անունները, Կապոլինոն աղջիկներին տարավ հյուրասենյակ, ստիպեց նստել և հարցրեց, թե ի՞նչ են ուզում: Չցանկանալով ցուցադրել իրենց դժբախտությունը և ձգտելով պահպանել արժանապատվությունը, նրանք զսպում էին պոռթկացող հուզմունքը: Բայց ջանքերից, որ նրանք գործադրում էին լաց չլինելու համար, և շփոթությունից նրանց սկզբում չհաջողվեց մի բառ անգամ ասել: Երկուսն էլ հուզվում էին ու թաշկինակների տակ ձախ ձեռքի բթամատով ամբողջ ուժով շփում էին աջ ձեռքի ցուցամատի ծայրը, որ բթացած էին, կոշտուկոտ, սևացած ու ծակծկված՝ շարունակ թելով ասեղը քաշելուց, կարծես միայն այդ՝ զգայնությունը կորցրած մատները կարող էին որևէ կերպ օգնել նրանց՝ գտնելու բավականաչափ ուժ ու արիություն, որպեսզի սկսեն խոսել: Վերջապես Միտան անհամարձակ բարձրացնելով արցունքներից մշուշված աչքերը, դժվարությամբ ասաց.

— Սինյոր պատգամավո՛ր, մենք եկել ենք ձեզ խնդրելու...

Իսկ մյուսը իսկույն հուշեց և ուղղեց.

— Մենք անհանգստացնում ենք ձեզ... ձեր վշտի պահին...

— Խոսե՛ք, խոսե՛ք,— սիրտ տվեց նրանց Կապոլինոն։— Ես այստեղ եմ, որ լսեմ ձեզ։

— Ահա այսպես, սինյոր, ձերդ ողորմածությունը գիտի,— շարունակեց Միտան՝ հանկարծ կարմրելով,— որ մեր հայրը և Լիցիոն, որը...

— Մեր քույրերից մեկի ամուսինն է,— նորից հուշեց Աննիկիան։

Միտան նայեց նրան դառն հանդիմանությամբ։

— Նրանք ձերբակալված են, սինյոր պատգամավոր։

— Բայց նրանք անմեղ են, սինյոր պատգամավոր, նրանք անմեղ են։

— Մենք վկա ենք, որ նրանք չգիտեին, ոչինչ չգիտեին այդ գործի մասին։

Կապոլինոն՝ շփոթված այն բուռն հուզմունքից, որով խոսում էին քույրերը, նրանց ընդհատուն շնչառությունից, հարցրեց.

— Ի՞նչ գործի։

— Ինչպե՞ս,— ասաց Միտան։— Այն դեպքի, որը հատկապես ձերդ ողորմածության համար...

— Օ՛, տե՛ր աստված,— բացականչեց Աննիկիան։— Մինչև հիմա մեր սրտերը ճմլվում են...

Իսկ Միտան շարունակեց.

— Եվ նրանց ձերբակալեցին մյուսների հետ, որ ոչ մի բանում մեղավոր չէին, ինչպես ինքը՝ Քրիստոսը... Մենք վկա ենք, որ նրանք ցնցված էին՝ այնպես, որ երբ լսեցին այդ գործի մասին, չէին կարողանում շունչ քաշել, նրանք բացարձակապես ոչինչ չգիտեին...

— Եվ ձերդ ողորմածությունը կարող է հավատալ,— ավելացրեց Աննիկիան,— որ մենք համարձակություն չէինք ունենա գալ այստեղ և խոսել ձերդ ողորմածության հետ, եթե ավելի քան համոզված չլինեինք, որ նրանք անմեղ են...

Եվ Միտան, խոնարհելով հայացքը և ամբողջ մարմնով դողալով, ավելացրեց.

— Ձեր տիկինը... մենք նրա համար աշխատել ենք և գիտենք, թե ինչքան բարի էր. . . այնքան սիրալիր սինյորա էր... և գեղեցիկ, այնպե՛ս գեղեցիկ... Ի՛նչ դժբախտություն է։

Կապոլինոն կկոցեց աչքերը, մի քիչ անհանգիստ շարժվեց աթոռի վրա և խռպոտ ձայնով հարցրեց.

— Ձեր տանը խուզարկություն եղե՞լ է։

— Այո՛, սինյոր,— միաբերան պատասխանեցին երկու քույրերը։

Եվ Միտան շարունակեց.

— Ոստիկանները, կատարածուները, դատավորները... դևերի նման... ամեն ինչ տակնուվրա արեցին։

— Եվ ի՞նչ գտան։

— Ոչինչ։

— Օ՛, սուրբ Մարիամ, բացարձակապես ոչինչ. . . ինչ-որ նամակներ, թերթեր... միության անդամների ցուցակը։

— Եվ անդամությունն էլ խոսքով էր... ոչ ոք չէր գալիս...

— Գրքերը, թղթերը... Նրանք ամեն ինչ տարան... նույնիսկ մի վերնաշապիկ՝ վրան արյան կաթիլ, որ մնացել էր այն ժամանակից, երբ կարելիս մատս ծակել էի։

Կապոլինոն մտածմունքի մեջ ընկավ՝ բերանը փակելով հենց քթի տակ սեղմած մատներով և որոշ ժամանակ, խոժոռվելով, լռեց: Հետո նա ասաց.

— Եթե որևէ կապ չհայտնաբերվի. . .

— Ախ, ո՛չ, սինյոր,— անմիջապես բացականչեց Միտան:— Այն գործի հետ, որի պատճառով նրանք ձերբակալված են, ո՛չ մի կապ չկա, իհա՛րկե, ո՛չ մի: Ձերդ ողորմածությունը կարող է հավատալ...

— Մենք չէինք գա ձերդ ողորմածության մոտ,— կրկնեց Աննիկիան:

Կապոլինոն ձեռքի շարժումով ընդհատեց նրա խոսքը և նորից մտքերի մեջ ընկավ:

— Գիտե՞ք արդյոք դուք,— ասաց նա՝ կարճատև լռությունից հետո,— որ ես լավ համարում չունեմ իշխանությունների աչքում: Գիտե՞ք արդյոք դուք, որ ցանկանալով արդարացնել իրենց ավելի քան երեսուն տարվա վատ կառավարումը, նրանք ուզում են բոլորին համոզել, որ այդ խռովությունը գաղտնի կազմակերպված է կղերական կուսակցության կողմից, որին պատկանում եմ ես:

— Ձերդ ողորմածություն... Ինչպե՞ս թե,— ասաց Աննիկիան՝ ձեռքերը սեղմելով:— Եթե ձերդ ողորմածությունը... եթե ձերդ ողորմածությանը...

— Առավել ևս: Առավել ևս,— ընդհատեց Կապոլինոն:— Նրանք կասեն. «Այստեղ համաձայնություն կա: Սիրտը մի բան է, իսկ քաղաքականությունը՝ ուրիշ: Եվ նա ինքը, նա ինքն է եկել պաշտպան կանգնելու ձերբակալվածներին»: Ահա թե ինչ կասեն նրանք:

Երկու քույրերն էլ նստել էին շփոթահար և ընկճված:

— Բայց ինչպե՞ս կարելի է հավատալ այդպիսի բաների,— հարցրեց Միտան:

— Դե նրանք, իսկապես, չեն էլ հավատում,— արհամարհական ժպիտով պատասխանեց Կապոլինոն:— Ձևանում են՝ իբր հավատում են: Դրանում է նրանց արդարացումը: Իսկ եթե ես գնամ միջնորդելու, ապա կգործեմ նրանց օգտին՝ ոչնչի չհասնելով ձեզ համար: Եվ դա հենց այդպես է: Եվ հազար ութ հարյուր վաթսունվեց թվականին, երբ դուք դեռ չկայիք աշխարհում, քաղաքական վարչական անարդարությունների պատճառով բռնկված ժողովրդական ապստամբությունը վերագրվեց քավության նոխազին՝ կղերական կուսակցությանը: Դա ամենահարմարն է այժմյան իշխանության համար և միշտ հաջողություն է ունենում:

Երկու քույրերը որոշ ժամանակ լռեցին՝ մտածելով և ոչ միայն զգալով, այլև կարծես իրենց աչքերով տեսնելով, թե ինչպես հույսը, որ իրենց բերել էր այստեղ, դարձյալ ընկղմվում է առաջվա վշտի մեջ՝ սպանված անսպասելի փաստարկով, որ նրանք չէին կարող ինչպես պետքն է հասկանալ:

— Մենք մտածեցինք,— հետո ասաց Միտան,— որ եթե ձերդ ողորմածությունը ասեիք թեկուզ մի խոսք... ոչ միայն իշխանության, այլև ամբողջ շրջանի համար... Մենք ապրում ենք աշխատանքով, իսկ աշխատում ենք երկուսով՝ ես ու իմ այս քույրը: Իսկ հիմա այդ ձերբակալության պատճառով չեն ցանկանում մեզ գործ տալ, որովհետև բոլորը գտնում են, որ մեր հայրն ու փեսան մասնակիցներն են այդ չարագործության, որ իրավացիորեն վրդովել է ամբողջ երկիրը: Չէ՞ որ ձերդ ողորմածությունը տուժել եք ամենից ավելի և եթե դուք հաճեք մի բարի խոսք ասել... անմեղների մասին...

— Եվ էլի ահա թե ինչ, սինյոր պատգամավոր,— ասաց Աննիկիան՝ այլևս ի վիճակի չլինելով զսպելու արցունքները,— մեր քույրը կրծքով կերակրում էր երեխային, երբ ոստիկանները եկան ձերբակալելու նրա ամուսնուն ու մեր հորը: Եվ նրա կաթը փչացավ, սինյոր պատգամավոր, և հիմա երեխան մեռնում է, ու մենք չգիտենք ինչպես բուժել նրան. և մեր քույրը խելագարվում է այն բանի համար, որ երեխան մահամերձ է, իսկ նրա հայրը բանտում

է: Տանը մնացել ենք մենք՝ հինգ քույրերս. մենք դիմում ենք ամենքին և չգիտենք ինչ անել... Դրա համար էլ եկել ենք այստեղ աղերսելու ձեզ, սինյոր պատգամավոր:

Կապոլինոն վեր կացավ՝ կարծես կարեկցությամբ համակված:

— Ես կտեսնեմ... կտեսնեմ, թե չի՞ կարելի արդյոք որևէ բան անել,— ասաց նա:— Մի քիչ ժամանակ տվեք ինձ... Ես պետք է մի լավ մտածեմ... իմ, ինչպես ասացի... իմ քաղաքական պատասխանատվության պատճառով. . . Սիրտը, ես ձեզ ասացի, մի բան է, իսկ քաղաքականությունը՝ ուրիշ... Բայց ես կտեսնեմ... հաստատ խոստանալ չեմ կարող: Հանգստացե՛ք, հանգստացե՛ք... Եվ արի եղեք, զավակներս... Սա սարսափելի պահ է բոլորի համար, հավատացե՛ք. . . և ոչ ոք չի կարող ելք գտնել...

Այս խոսքերով նա աղջիկներին ուղեկցեց մինչև նախասենյակ՝ չցանկանալով լսել նրանց ո՛չ ներողությունները, ո՛չ շնորհակալությունները, և դուռը կամացուկ փակեց նրանց ետևից:

Թեև երկու քույրերը հավատացին այդքան մշուշոտ խոստումին, հենց որ փողոց ելան, նրանք որոշ թեթևացում զգացին այն բանից, որ արեցին այդ քայլը. և թեթև հուզմունքն այն բանից, որ կարողացան ամեն ինչ ասել, ինչ-որ չափով սփոփում էր նրանց: Սակայն նրանք անմիջապես հիշեցին, թե ուր են գնում, և նրանց համակեց այրող նվաստացման զգացումը: Իսկ նրանք գնում էին փոստ՝ մի քիչ փող ստանալու, որ Չելսինան էր ուղարկել Հռոմից, և նրանք չգիտեին, թե դա ինչ փող է: Օրերս ուրիշ փող էլ եկավ (ճիշտ է, քիչ և արդեն ակներևաբար ամոթալի), փող՝ ավագ քրոջից՝ Ռոզայից. և նրանց խեղճ, աշխատանքից այլանդակված ձեռքերը, որ հիմա մնացել էին անգործ, ստիպված էին ընդունել այդ անսպասելի օգնության տխուր բեռը:

Կապոլինոն շատ գոհ էր, որ բոլորի մոտ այն տպավորությունն ստեղծվեց՝ իբր ինքը մեկնեց Կոլիմբետրա ոչ թե սեփական ցանկությամբ, այլ՝ որովհետև իրեն այնտեղ հրավիրեցին: Այնտեղ ճյուղից կախված էր տանձը, որն առաջ նրա տենչանքի համար դեռ հասունացած չէր, բայց հիմա, որքան նա կարող էր դատել ըստ վերջին տեղեկությունների, արդեն գրեթե գերհասունացել է և կարող է ընկնել նրա ձեռքի ամենաթեթև, թեկուզև հանդուգն շարժումից: Ահա հենց այստեղ էլ լիովին կիրագործվի նրա վրեժը: Եվ ամեն ինչ հիանալի նախապատրաստված էր թվում՝ արագ ու հաջող ավարտի համար: Քաղաքացիական օրենքների առաջ Ադելաիդա Սալվոն ամուսնացած չէր: Ինքը նրան կհամոզի իր հետ փախչել Հռոմ և իջևանել նրա քրոջ՝ Ռոզայի տանը: Զգուշության համար, որպեսզի ինքը, ինչպես հարկն է, հաստատվի իր իրավունքներում, ինքն ու Ադելաիդան սկզբում մի քանի օր կմնան Նեապոլում. չէ՞ որ նա՝ խեղճ կինը, այնպես կարիք ունի զվարճությունների, իսկ դրանք նրան կարող է առաջարկել միայն այնպիսի քաղաքը, ինչպիսին Նեապոլն է: Հռոմում իրենք, առանց լայն հռչակման, կամուսնանան քաղաքացիական ամուսնությամբ: Ֆրանչեսկո Վելլան հնարավորություն կգտնի Կապոլինոյին տեղավորելու երկաթուղիների վարչությունում՝ որպես փաստաբան-խորհրդատու. և, իհա՛րկե, Վելլայի համար հաճելի կլինի, որ իր նոր քենեկալի բաճկոնի վրա առաջվա նման ճոճվում է պատգամավորի մեդալը: Հիմա գլխավորն է՝ համոզել Ադելաիդային, որ չվախենա փախուստի պատճառով ծագելիք սկանդալից՝ այսքան չարաբաստիկ պահին, ինչպիսին զարմուհու հոգեկան հիվանդությունն է: Բայց մոնսինյոր Մոնտորոն ասել էր Կապոլինոյին, որ իշխանը կտրականապես արգելել է կնոջը գնալ Ջիրջենտի՝ եղբորն ու զարմուհուն այցելության: Մյուս, շատ բարենպաստ հանգամանքը այդ սիրալիր դը Վինչենտիսի առաջարկությունն է՝ խնամել խեղճ, հիվանդ աղջկան: Չէ՞ որ եթե Դիանելլային բերեին Կոլիմբետրա՝ հորաքրոջ մոտ, ապա իր՝ Կապոլինոյի համար անհնար կլիներ ոչ միայն փախուստը կազմակերպել, այլև նույնիսկ ոտք դնել այնտեղ: Բայց մի՞թե Ադելաիդան զարմուհուց հեռու կարող է բավարարվել անորոշ հույսերով և սփոփվել լոկ այն բանով, որ Դիանելլայի կողքին շարունակ ծունկ է չոքում այդ խեղճ սուրբ Լյուդովիկոսը: Ըստ էության, զարմուհուն տեսնելու հորաքրոջ բուռն ցանկությունը, իր ամբողջ անկասկածելի անկեղծությամբ հանդերձ միայն առիթ էր, որպեսզի դուրս պրծնի Կոլիմբետրայից: Այդ ձգտման համար պատճառները միշտ էլ լիովին

բավարար են եղել, իսկ կալվածքից ելնելու արգելքից այն սաստկանում էր: Եվ Ֆլամինիոն էլ երբեք իշխանին չի խնդրի, որ նա քրոջը թույլ տա այդ ուղևորությունը: Հարկավոր է ամեն կերպ համառորեն պնդել դա, ապացուցել Ադելաիդային, որ նրա եղբայրն այնպիսի մարդ չէ, որ համաձայնի որևէ նկատառումով խախտել իշխանի դրած պայմանները: Մի խոսքով, հարկավոր է այնպես անել, որ դոննա Ադելաիդան՝ կորցնելով եղբորից օգնություն ստանալու ամեն մի հույս, տեսնելով, որ դատապարտված է տառապելու սրտնեղությունից ու ձանձրույթից և, ուրիշ ելք չգտնելով՝ բացի նրանից, ինչ կառաջարկի ինքը, վերջապես իր մեջ արիություն կգտնի՝ վճռելու փախչել: Այդպես որոճում էր Կապոլինոն բոլոր այդ մտքերը, հիշողություններն ու ծրագրերը՝ քանի դեռ Ջիրջենտիից կառքով գնում էր Կոլիմբետրա: Բայց դրանք նրա մեջ չէին արթնացնում ո՛չ տագնապ, ո՛չ խանդավառություն: Նա նույնիսկ զգում էր ինչ-որ ճնշող սառնություն, կարծես կյանքը նրա մեջ բոլորովին սառել էր. նա զգում էր, որ իր վրեժը վերաբերում է դեպքերի, որոնք արդեն անցյալի գիրկն են անցել, անդառնալի են, իր համար, ըստ էության, արդեն մեռած, և դրա համար էլ իրեն չի տա ո՛չ ուրախություն, ո՛չ էլ ապագայի հույսեր: Ինքը վրեժ էր լուծում նրա համար, ում մի ժամանակ մերժել էր Ադելաիդա Սալվոն. բայց մի՞թե հիմա ինքը նույնն էր: Այնքան դեպքեր են կատարվել, որոնք բոլորովին չպետք է կատարվեին, և դրանցից նրա սրտում մնացել էր մի մեռյալ ծանրություն. հիմա ի՞նչ ուրախություն սպասեր իր վրեժից: Այն բանից, որ նրա համար ամեն ինչ մեռել էր, վրեժն այնպես թեթև էր թվում նրան: Ահա դրա համար էլ նրա մեջ տիրում էր այդ գարշելի ցուրտը: Նիկոլետա Սպոտոյի մեջ նա, այնուամենայնիվ, ձեռք էր բերել ինչ-որ փոխհատուցում, ինչ-որ թեթևացում էր գտել իր նողկալի նվաստացման մեջ. Նիկոլետայի համար և նրա հետ արժեր իջնել մինչև ամեն մի ստորություն: Բայց հիմա նոր սկանդալ բարձրացնել, Ադելաիդա Սալվոյի պատճառով վիրավորել այնպիսի մարդու, ինչպիսին Իպոլիտո Լաուրենտանոն է... Ասենք, գուցե դոն Իպոլիտոյի համար թեթևացում կլինի, եթե ազատվի այդպիսի կնոջից: Առաջին պահին, իհա՛րկե, նրա ինքնասիրությունը մի քիչ կտառապի. բայց վատ չի լինի, եթե նրան՝ բախտից փայփայված, գեղեցիկ, հարուստ ազնվականին, որը կարող է իրեն թույլ տալ միշտ գլուխը բարձր պահելու բավականությունը, այդ նույն բախտը հիմա՝ նրա կյանքի վերջում, հենց այնպես, ի միջի այլոց, վզակոթին հասցնի հենց Կապոլինոյի ձեռքով:

Նա նոր էր եկել կալվածք, երբ բոլորովին անսպասելի նրա բախտը բերեց մի ուրիշ տեսակետից՝ այնպես, որ նա սկզբում նույնիսկ գլուխը կորցրեց: Դոն Իպոլիտոն՝ մի կողմից վրդովված եպիսկոպոսի անվստահությունից, մյուս կողմից՝ հիասթափված նախորդ օրը Պալերմոյից, Լանդոյից ստացած պատասխանից՝ կղերական կուսակցության հետ համաձայնության գալու հնարավորության վերաբերյալ, հանգստանալու կարիք էր զգում և, ինչպես միշտ նման դեպքերում, հափշտակությամբ տրվում էր հնություններին, զբաղվում էր վաղուց ձեռնարկած աշխատանքով՝ ակրագանտյան տեղադրության մասին:

Այնպես, ինչպես միջնաբերդի տեղադրության հարցում, նա Ակրագանտի առևտրական նավահանգստի հարցում էլ հանդես էր գալիս հին ու նոր պատմաբանների դեմ, որոնք նավահանգիստը տեղադրում էին Հիպսասի գետաբերանում: Իսկ նա, ընդհակառակը, պնդում էր, թե այնտեղ գտնվել է միայն նավամատույցը, իսկ նավահանգիստը, Ակրագանտի իսկական նավահանգիստը, ինչպես և մյուս հին հունական քաղաքների, որ անմիջապես ծովափին չէին, գտնվում էր քաղաքից հեռու, որևէ խոր ծովախորշում, որը կարող էր հուսալի պատսպարան ծառայել նավերի համար. Աթենքն ու Պիրեոնը, հին Մեգարան ու Նիսայան, սիցիլիական Մեգարան ու Քսինոփոնեն: Այդ դեպքում ո՞ր ծովախորշն է ամենից մոտիկ եղել Ակրագանտին: Այսպես կոչված՝ Կալա-դելլա-Յունկան՝ Պունտա-Բյանկայի և Պունտա-Պիլյերեի միջև: Այսպես ահա, ուրեմն՝ Կալա-դելլա-Յունկայում էլ պիտի գտնվի ակրագանտյան առևտրական նավահանգիստը:

Այդ եզրակացությանն էր նա եկել սուրբ Ագրիպպինայի մասին հին առասպելի շնորհիվ: Եվ մեծագույն բավականությամբ հնագիտական անպտուղ բանավեճի մեջ էր մտցրել այդ էջը՝ երեք կույսերի՝ Բասսայի, Պաոլայի և Ագատոնիկայի ուղևորության նկարագրությամբ, կույսեր, որոնք Հռոմից տանում էին Վալերիանոս կայսեր ժամանակ նահատակված սրբուհու մարմինը: Կասկած չկար այն մասին, որ սրբուհու մարմինը բերելիս երեք կույսերը կառանել

են ակրագանտյան ծովափին՝ այն տեղում, որը հունարեն կոչվում է Լիտոս, իսկ լատիներեն՝ Պետրա, այն տեղում, որը հիմա կոչվում է Պետրա-Պատելլա կամ Պուլնտա-Բյանկա: Բացի այդ, հին «Վարք սրբոց»-ներում կարելի է կարդալ, որ այն ժամանակ, երբ կառանել են երեք կույսերը, նավահանգստի մոտի Տիրո գյուղում սուրբ Ստեփանոսի վանքից դուրս է եկել մի վանական՝ Ագրիգենտ ուղևորվելու համար և կանգնել է՝ հրապուրված այն անուշ բուրմունքով, որ տարածվում էր սրբուհու մարմնից. նա անմիջապես շտապել է քաղաք, որ այդ հրաշքի մասին հայտնի եպիսկոպոսին՝ սուրբ Գրիգորիսին: Եթե, ինչպես պնդում են հին ու նոր պատմաբանները, նավահանգիստը գտնվեր Հիպսասի գետաբերանում և, հետևաբար, այնտեղ լինեին և vicus Տիրոն, և՛ սուրբ Ստեփանոսի վանքը, ապա այդ վանականն Ագրիգենտ ուղևորվելիս ինչպե՞ս կարող էր Պուլնտա-Բյանկայում հանկարծ հանդիպել երեք կույսերին, որ կառանել էին սուրբ նահատակի մարմնի հետ: Տիրոյի սուրբ Ստեփանոսի վանքը պետք է գտնվի այնտեղ՝ Պուլնտա-Բյանկայի մոտ, հետևաբար, այնտեղ է և նավահանգիստը: Ամենահամոզիչ ապացույցը այդ գյուղի անունն է՝ այնպես, ինչպես կոչվում էր փյունիկյան մեծ քաղաք Տյուրոսը: Ամենայն հավանականությամբ, այդ անունը գյուղին տվել են կարթագենցիներն այն ժամանակ, երբ առևտրական սերտ հարաբերությունների մեջ էին գտնվում ակրագանտցիների հետ. և այն կարող էր ծագել որևէ լեռան պատճառով, որ բարձրանում էր գյուղի մոտ. իսկապես, «տուր» փյունիկերեն նշանակում է՝ «լեռ»: Բայց եղե՞լ է որևէ լեռ Հիպսասի գետաբերանի մոտ: Ո՛չ, լեռը, որ Մոնտե-Գրանդե անունն է ստացել իր ավելի նկատելի հատկանիշով, գտնվում է հենց այնտեղ՝ Պուլնտա-Բյանկայի մոտ և բարձրանում է Կալա-դելլա-Յունկայի վրա:

Այդ առավոտ շատ վաղ դոն Իպոլիտոն ձիով, Շարալլայի և էլի չորս զինվորների ուղեկցությամբ, գնացել էր, որ ավելի մանրամասնորեն դիտի այդ վայրերը և, հատկապես, Մոնտե-Գրանդեի մոտի ծովափը Լիտրազի կոչվող գյուղում, որտեղ գտնվում են թաղման որմնախորշեր, որոնք, որոշ հնագետների կարծիքով, հանդիսանում են փյունիկյան դամբարաններ: Դոն Իպոլիտոն դրանք համարում էր զգալիորեն ավելի ուշ ժամանակի, քանի որ դրանք փորված էին և դասավորված համաձայն այն սովորությունների, որ գոյություն ունեին Սիցիլիայում Հռոմեական կայսրության անկման ժամանակներում, այնպես որ դրանք լիովին կարող էին վերաբերել սուրբ Գրիգորիսի եպիսկոպոսության տարիներին, այսինքն՝ այն ժամանակին, երբ այստեղ ափ են իջել երեք բարեպաշտ կույսերը՝ Բասսան, Պաոլան և Ագատոնիկան՝ բերելով սուրբ նահատակ Ագրիպպինայի անուշահոտություն արձակող մարմինը:

Թեև վերադարձի ճանապարհին դոն Իպոլիտոյի շուրջը բոլոր կողմերում փռված էին գրեթե գարնանային ջերմության մեջ գրգանքին անձնատուր, հայացքի համար այնքան հաճելի կանաչի լայնարձակ գորգերը, որ տեղ-տեղ ոսկեզօծվել էին արևով, տեղ-տեղ շղարշվել թանձր, բաց մանուշակագույն ստվերով՝ երկնքի խոր, բոցափայլ կապույտի ներքո, ծեր իշխանը՝ նայելով իր ձեռքերին, որ հենված էին թամբաղեղին, մտածում էր միայն մահվան մասին, այստեղից իր անդարձ հեռանալու մասին, մինչև որը հիմա արդեն այնքան քիչ ժամանակ էր մնացել: Բայց երբ նա մտածում էր մահվան մասին այստեղ՝ պայծառ արևի տակ, այդ ամբողջ կանաչի մեջ, իսկ նրա մարմինը համաչափ ճոճվում էր թամբին, այդ միտքը նրան ոչ թե սարսափ էր ներշնչում, այլ ավելի շուտ ինչ-որ վսեմ հանգստություն՝ թախծալի և միաժամանակ հաշտեցնող, այնքան մաքուր ու ազնվորեն էին տրամադրում նրան մտքերն ու հոգսերը, որ լցնում էին նրա կյանքը այդ հարազատ վայրերում, որոնց շուտով ինքը պետք է տա իր վերջին հրաժեշտը: Եվ նա ուզում էր ավելի երկար չբաժանվել անխռովության այդ զգացողությունից, որ ազատում էր նրան տանջալից սարսափից, որ մինչև հիմա ներշնչում էր նրան մահը, և որին ինքը պարտական է իր երկրորդ, անվայել ամուսնությամբ, որ արատավորեց նրա ծերության պարկեշտությունը, կամավոր աքսորի խստությունը:

Կեսօրից շատ չանցած, երկար ուղևորությունից հոգնած վերադառնալով Կոլիմբետրա, իշխանը հյուրասենյակում գտավ Կապոլինոյին և իր կնոջը խիստ լրջորեն զրուցելիս: Դոննա Ադելաիդան կարմրած էր և արցունքներով ողողված, Կապոլինոն գունատ էր և տենդագին

հուզմունքով համակված. դոն Իպոլիտոն կանգնեց շեմքին՝ զգալով ավելի շուտ նողկանք, քան վրդովմունք:

— Օ՛, իշխան...— շփոթված ասաց Կապոլինոն՝ վեր կենալով:

— Նստեցե՛ք, նստեցե՛ք,— ասաց դոն Իպոլիտոն՝ պարզելով ձեռքը՝ ավելի շուտ, որ խանգարի նրան մոտենալ, քան այն բանի համար, որ նա չանհանգստանա:— Ես ձեզանից ներում չեմ խնդրում ուշանալու համար, որովհետև, ինչպես տեսնում եմ, սինյորան արդեն ինձ ներկայացրել է այնպիսի բարբարոս, որ իմ բացակայությունը հազիվ թե կարողանար ձեզ վշտացնել:

— Ո՛չ, ո՛չ, իշխանուհին... իսկապես...— մռթմռթաց Կապոլինոն:

Դոն Իպոլիտոն հպարտ ընդհատեց նրան և, խոժոռվելով, ասաց սառնությամբ.

— Նա կարող է գնալ, եթե կամենա: Բայց թող հիշի՝ հենց այն, ինչն այսօր նրան խանգարում է դուրս գալ իմ վիլլայի ցանկապատից, վաղը նրան թույլ չի տա վերադառնալ: Իսկ հիմա շարունակեք ձեր զրույցը:

Նա ուղղվեց դեպի դուռը: Կապոլինոն փորձեց կնոջ առաջ պահպանել իր այրական արժանապատվությունը և իշխանի ետևից ասաց գրեթե մարտահրավերով, որը, սակայն կարող էր ներողություն թվալ.

— Բայց դուք, իշխան, ինձ կանչել եք...

Դոն Իպոլիտոն, որ արդեն հասել էր դռանը, թեթևակի շուռ եկավ՝ ձեռքով պահելով մի կողմ քաշած ծանր վարագույրը:

— Օ՛, դատարկ բաների համար,— ասաց նա:— Հիմա արդեն... իմ ամբողջ կասկածամտությունը, ավելորդ կասկածամտությունը...

Եվ նա դուրս եկավ՝ բաց թողնելով ծանր վարագույրը:

— Իսկ նա ե՞րբ կպատասխանի,— իսկույնևեթ սկսեց խոսել դոննա Ադելաիդան՝ վեր կենալով տեղից, նրա աչքերը արցունքներից ուռել էին կարմրել:— Ես պատասխանի կսպասեմ մինչև վաղը, կամ էլ թող ինքը գա և ասի, որ ես պիտի սատկեմ այստեղ նստած և հանդուրժեմ... որ թքեն իմ երեսին...

— Իհա՛րկե: Իհա՛րկե: Իհա՛րկե,— պատասխանեց Կապոլինոն՝ գնալով նրա ետևից:— Դու ուզում ես, որ Ֆլամինիոն քեզ ասի...

— Նա պետք է ինձ ասի,— ընդհատեց դոննա Ադելաիդան կատաղությամբ՝ սեղմելով բռունցքները և ատամները ցույց տալով:— Նա պետք է ինձ ասի՝ ինքը, անձամբ: Եվ այն ժամանակ, այո՛, այն ժամանակ... Ասենք, թեկուզ հենց հիմա: Ես հիմարություններ կանեմ: Ես պատրաստ եմ: Հիմարություններ կանեմ:

Այդ պահին ներս մտավ Լիբորիոն՝ իշխանի սիրելի ծառան՝ հուզված ու երկյուղով, բայց իշխանուհուն տեսնելով վրդովված և աչքերն արցունքոտ, կանգ առավ անվճռական:

— Ձերդ պայծառափայլություն... ձերդ պայծառափայլություն,— ասաց նա,— սինյոր դոն Սալեզիոն...

— Բանն ի՞նչ է,— զայրացած հարցրեց դոննա Ադելաիդան:— Նրան ի՞նչ է պետք:

— Ոչինչ, ձերդ պայծառափայլություն... թվում է՝ նա...

Եվ Լիբորիոն բարձրացրեց ձեռքն ու խաչի նշան արեց օդում:

— Ա՛,— այդ ժամանակ ասաց դոննա Ադելաիդան՝ մռայլ հայացքը հառելով Կապոլինոյին և մի քանի ակնթարթ նայեց նրան՝ խոժոռվելով, բերանը բաց, կարծես ուզում էր իմանալ նրանից՝ լա՞վ է, թե՞ վատ, որ խեղճ մարդը մեռնում է հենց այդ պահին:— Ի՞նչ արած,

այդպես, թերևս, ավելի լավ է նրա համար, թշվառի... Գնա՛նք, գնա՛նք, Նյացիո, գնա՛նք նրա մոտ:

Եվ վազեց Լիբորիոյի ետևից, իսկ Կապոլինոն հետևեց նրան շփոթահար ու հուզված:

— Ես նրան պահեցի այստեղ՝ ինձ մոտ,— ասաց դոննա Ադելաիդան վազելով:— Հոգ էի տանում նրա մասին... Լա՛վն եք բոլորդ էլ, լքել եք նրան, խեղճ ծերունուն... Այսպես ավելի լավ է... ավելի լավ է... Գոնե կդադարի տանջվելուց... Ես էլ էի մոռացել նրան այս օրերին... Մարդասպաննե՛ր: Վերջին հարվածը հասցրեցին նրան... Բայց նա էլ ճիշտն ասած, չափազանց շատ էր ուտում... չափազանց շատ քաղցրեղեն...

— Ճիշտ այդպես, ձերդ պայծառափայլություն,— հառաչեց Լիբորիոն,— ես էլ եմ նրան ասել... չափազանց շատ...

— Բարձրացրո՛ւ, բարձրացրո՛ւ, Նյացիո... իմ թաշկինակն ընկավ... Օ՛, սուրբ տիրամայր, ի՛նչ գարշահոտություն է այստեղ:

Եվ դոննա Ադելաիդան փակեց քիթը՝ չանցնելով սենյակի շեմքը, որտեղ մեռնում էր խեղճ ծերունին: Խոհարարը, որ վազել եկել էր Լիբորիայի կանչով, բռնեց նրա թևատակերից: Դոննա Ադելաիդան ու Կապոլինոն կանգնեցին հենց դռան մոտ՝ ենթարկվելով մահվան բնազդական երկյուղին և գուցե է՛լ ավելի՝ նողկանքին՝ այդ սրված դեմքի անասելի նիհարությունից, դեմք, որ ծածկված էր գունաթափված ստևամազերով, և որի կիսափակ կոպերի տակ արդեն կոշտացել էին ակնախնձորները: Եվ հանկարծ նրանք տեսան, որ մեռնողի բերանը բացվում է ու բացվում ավելի ու ավելի, բացվում է անսահման լայն՝ կարծես ինչ-որ ներքին զսպանակի կոպիտ ճնշման տակ:

— Օ՛, աստվա՛ծ,— տնքալով ասաց դոննա Ադելաիդան:— Նա այդ ի՞նչ է լինում:

Նա դեռ չէր հասցրել այդ խոսքն ասել, երբ մեռնողի բերանից դուրս թռավ ինչ-որ գարշելի մի բան: Դոննա Ադելաիդան սարսափից ճչաց ու բարձրացրեց ձեռքը, կարծես ուզում էր պաշտպանել դեմքը:

Լիբորիոն մոտեցավ մահճակալին և, տեսնելով այնտեղ լայն բացված արհեստական ծնոտները, ասաց դառն ժպիտով.

— Ոչինչ, ձերդ պայծառափայլություն: Հիմա նա էլ ծամելու կարիք չի ունենա:

Իսկ խոհարարն այդ ժամանակ բարձի վրա դրեց խեղճ ծերունու մեռած գլուխը:

Գլուխ VII

Եպիսկոպոսական պալատի հնամենի դիվանատան մեծ, թնդյունով արձագանքող դահլիճում՝ սևավուն, ճաքճքված, փոշոտ առաստաղով ու բարձր, դեղնած պատերով, որոնցից կախված էին պրելատների հին դիմանկարներ, որ նույնպես ծածկված էին փոշով ու բորբոսով և անկարգ- անկանոն դասավորված գունաթափ, բզեզակեր պահարանների գրադարակների վերևում, գվվոց լսվեց. այդ մոնսինյոր Մոնտորոն էր իր գեղեցիկ ձայնով, համաչափ ելևէջներով, որ հնչում էին հեղինակավոր կերպով և միևնույն ժամանակ հովանավորաբար, ավարտեց Սիցիլիան դառնացնող և քրիստոնյաների սրտերը վշտացնող բուռն իրադարձությունների կապակցությամբ հորինված հովվական քարոզի ընթերցումը համաժողովին՝ մյուս կանոնիկոսներին և հատկապես հավաքած ծխական քահանաներին: Այդ քարոզը մոնսինյորն սկսեց Մատթեոսի ավետարանի տողով՝ “Semper pauperis habetis vobiscum” :

Հունվարյան օր էր, ցուրտ ու քամոտ. ընթերցման ժամանակ և ինքը՝ եպիսկոպոսը, և ունկնդիրները հայացքները հառում էին բարձր պատուհանների ապակիներին, որոնք, թվում

էր, սպառնում էին այս ու այն կողմ թռչել հարավ-արևմտյան քամու մոլեգին ճնշման տակ: Այդ մեղմաբարո հրահանգի հանդարտ ընթերցումն ընթանում էր կատաղի, ականջ ծակող սուլոցի և երկար ու ձիգ, խուլ ոռնոցի մռայլ նվագակցությամբ, որ հաճախ շեղում էր շատ ունկնդիրների ուշադրությունը, այնպես որ ընդարձակ դահլիճում, որը, թվում էր, պահպանում էին հին, փոշոտ ու մամռակալած, ծանր վարագույրները, կարծես քամուց ծածանվում էր պերճախոսության այդ անվերջանալի մարզանքի ավելորդության զգացողությունը:

Ոմանք պատուհաններից մեկով սկսեցին ուշադիր նայել դիմացի հին տան փոքրիկ պատշգամբին, որտեղ մի դժբախտ խենթ երևի հաճույք էր վայելում (գուցե թռիչքի զգացողությամբ) կանգնած այդտեղ, կատաղի քամու դիմաց, որը նրա մարմնի շուրջն էր պտտում ուսերին գցած բրդե, դեղին վերմակը. նրա ամբողջ մեռելային դալուկ դեմքը ծիծաղում էր, սուր, խելոք աչքերում շողում էր կարծես արցունքների ցոլքը, գլխին բոլոր կողմերից բոցեղեն լեզուների նման բարձրանում էին շիկակարմիր մազերի երկար փնջերը: Խեղճը կրտսեր եղբայրն էր կանոնիկոս Բատի, որը նույնպես գտնվում էր դահլիճում, արտաքուստ թվում էր, թե նա լիովին կլանված է եպիսկոպոսի ընթերցումով, իրականում, հավանաբար, զբաղված էր բոլորովին այլ մտքերով, որոնք մի անգամ չէ, որ ստիպեցին նրան անել ինչ-որ ծիծաղելի շարժումներ:

Երբ ընթերցումն ավարտվեց, ավելի ծեր կանոնիկոսներից նրանք, ովքեր ավելի լավ գիտեին իրենց գերապատիվ եպիսկոպոսի թուլությունները, շտապեցին շրջապատել սեղանը, որի մոտ նստած էր նա, և խնդրեցին կրկնել մերթ մեկ, մերթ մյուս արտահայտությունը՝ նրանց թվից, որոնցից մոնսինյորը (դատելով արտահայտությունից, որով նա դրանք արտասանեց) առանձնապես գոհ էր:

— Այ դա՛, դա՛, սատանայի զորքի մասին, ձերդ սրբազնություն, ինչպե՞ս է հնչում:

— Չէ՞ որ դուք նկատի ունեիք մասոնությունը, ճիշտ չէ՞, ձերդ սրբազնություն, ձեզ մոտ այդ ինչպե՞ս է ասված:

Եվ մոնսինյորը, ներքուստ հրճվելով, բայց արտաքուստ հոգնած ձևանալով, համբերատարությամբ և բաց գույնի, երկարավուն աչքերի վրա իջեցնելով սոխի կճեպի նման թեթև կոպերը, գլխով արեց և, ձեռքով սպասելու նշան անելով, փնտրեց իր նշումներում ու կրկնեց.

— «Չարամիտ ու հանցագործ աղանդ: Չարամիտ ու հանցագործ աղանդ, որն իրեն հովանավոր է ընտրել սատանային, իսկ գերագույն քուրմ՝ Հուդային...»:

— Ահա՛, ահա՛... «քուրմ՝ Հուդային»,— բացականչեցին նրանք:

— Հիանալի է ասված, ձերդ սրբազնություն, հիանալի՛:

— Համարձա՛կ... համարձա՛կ...

— Բայց ի՛նչ հողմ է, աստվա՛ծ իմ,— նորից սկսեց գանգատվել եպիսկոպոսը՝ կարծես վշտացած իր աշխատանքի դիմաց այդքան անարդարացի հատուցումից:

Ավելի երիտասարդ կանոնիկոսները, որ մյուսներից լավ էին լսել ընթերցումը, հայացքներ էին փոխանակում, որ նողկանք էին արտահայտում այդ ծեր, հիմար քծնողների նկատմամբ կամ էլ տխուր հաշտվողություն այն բանի հետ, թե ժողովուրդն ինչպես կընդունի այդ դատարկաբանությունը, որը բուն էությունից դուրս պտտվում էր այդ ոչ այնքան բարեհոգի, որքան դաժան հարցի շուրջը, որով բարեկրոն ծխական քահանաները պիտի դիմեին թեմի աղքատներին՝ ինչո՞ւ աղքատությունը, որ միշտ եղել է ու կլինի, միայն հիմա է այսպես խռովել մարդկանց հոգիներն ու ամբողջ հասարակական կյանքը և հասցրել այսպիսի տխուր անկարգությունների: Այդ երիտասարդ պրելատներից ոմանց թվում էր, թե մոնսինյորը կարող էր կղզու իրադարձություններին հարմարեցնել գոնե նորին սրբություն Լեոն 13-րդ պապի վերջին կոնդակը՝ «De conditione opificium» , որտեղ, ի միջի այլոց, ասվում էր, թե

հողատերերը պետք է վերջ տան ուղղակի կամ քողարկված վաշխառությանը, բանվորներին չպահեն ստրուկների վիճակում, չօգտվեն աղքատների կարիքից և թշնամաբար չվերաբերվեն նրանց, «ովքեր համարձակվել են ոտնձգություն կատարել քաղաքացիական իրավունքի հին խստության դեմ»: Նրանք Է՛լ ավելի էին վշտանում իրենց եպիսկոպոսի հովվական ուղերձի տոնից, քանի որ հենց նախօրյակին Պոմպեո Ագրոն հրապարակել էր մի համարձակ գրքույկ՝ ի պաշտպանություն աղքատների, որտեղ, Սիցիլիայի դրությունը համեմատելով Իռլանդիայի դրության հետ և ընդգծելով այն դիրքը, որ բռնել են բազմաթիվ նշանավոր անգլիական և ամերիկյան կաթոլիկ պրելատներ և նրանց կարծիքները՝ ընթացիկ պահի սոցիալական ու տնտեսական հարցերի շուրջ, գրեթե որպես մարտահրավեր բերել էր պատվարժան Մակ Գլինի՝ նյույորքյան կաթոլիկ քահանայի հանդուգն պատասխանը իր եպիսկոպոսի առաջարկին՝ չափավորել հեղափոխական պրոպագանդան, «Մոնսինյո՛ր, ես միշտ սովորեցրել եմ և պիտի սովորեցնեմ մինչև վերջին շունչս, որ հողը, իրավամբ, ժողովրդի ընդհանուր սեփականությունն է, և որ հողի մասնավոր սեփականությունը հակասում է բնական իրավունքին, թեկուզև վավերացված է քաղաքացիական ու կրոնական օրենքներով»: Ագրոյի այդ գրքույկը սուր մեղադրանք էր սիցիլիական հոգևորականության հոգեկան ծուլության ու տգիտության դեմ: Եվ ահա մեկ օր անց նրանց եպիսկոպոսի ուղերձը հանդիսանում է այդ մեղադրանքի արդարացիության ամենավառ ապացույցը: Ոմանք, շրջան կազմած, խորհրդակցում էին, թե տեղին չի՞ լինի ավելի ուշ, գաղտնի մոնսինյորի մոտ ուղարկել նրա առավել սիրելի ծերունիներից մեկին, որպեսզի երես առ երես ցույց տա նրան, որ անժամանակ է այդ ուղերձը հիմա, երբ երկրում լուր է տարածվել, թե մոլեգնած փոթորկի պատճառով կարող է անխուսափելի դառնալ (եթե այդ արդեն չի կատարվել) ամբողջ Սիցիլիայում պաշարողական դրություն հայտարարելը: Տալիս էին նույնիսկ գեներալի անունը, որ նշանակված է արտակարգ կոմիսար՝ հատուկ լիազորություններով. հենց նա, որը մի քանի օր առաջ Պալերմոյում ափ էր իջել մի ամբողջ բանակային կորպուսով: Ասում էին, թե նրա առաջին գործն է եղել ձերբակալել միությունների կենտրոնական կոմիտեի անդամներին, որոնք նախորդ օրվա երեկոյան հեղափոխական թռուցիկ էին ուղարկել կղզու աշխատավորներին:

— Այո՛, այո՛, ահա՛ այն... Իմ գրպանում է… Ճի՛շտ է, ճի՛շտ,— խորհրդավոր տեսքով ասաց քահանաներից մեկը:— Ա՛յ, հիմա դուրս կգանք ու կկարդանք...

Բայց այդ ժամանակ զրույցն այդ խմբակում ընդհատվեց, և բոլորը քարացան տագնապալից հետաքրքրությամբ. հանկարծ դահլիճ մտավ եպիսկոպոսի երիտասարդ քարտուղարը, որ անսովոր գունատ էր ու շնչակտուր. նա, երևի, բերել էր այդ կարևորագույն նորության հաստատումը: Բոլորը խռնվեցին սեղանի շուրջը:

— Հայտարարվա՞ծ է:

— Այո՛, այո՛, հայտարարված է պաշարողական դրություն և հրաման՝ բնակչությանը զինաթափելու մասին:

— Ա՛խ, նաև զինաթափո՞ւմ: Ohո, այդպես... այդպես...

— Եվ ձերբակալված են Պալերմոյի միությունների կենտրոնական կոմիտեի անդամները:

— Բոլո՞րը:

— Ո՛չ, ո՛չ բոլորը, ոմանց հաջողվել է փախչել: Եվ, ասում են, փախածների մեջ է իշխան Լաուրենտանոյի որդին:

— Օ՛, աստվա՛ծ, այս ինչ եմ լսում,— հառաչանքով ասաց եպիսկոպոսը:— Եվ նա նույնպես... Փախե՞լ է... Փախե՞լ է...

Տեղեկություններն ստույգ չէին. շատերը հավատացնում էին, թե Լաուրենտանոն նույնպես ձերբակալված է: Ասենք, հիմա ամբողջ Սիցիլիան կօկուպացվի զորքերով, նույնիսկ ամենափոքրիկ ավանները, այնպես որ փախածները կբռնվեն և կընկնեն բանտ:

— Օ՛, աստվա՛ծ, այս ի՛նչ եմ լսում: Օ՛, աստվա՛ծ, այս ի՛նչ եմ լսում,— շարունակեց բացականչել մոնսինյորը:— Այսպես, ուրեմն... իսկապե՞ս, բանը դրան է հասել...

Նրանից թաքուն երիտասարդ պրելատի գրպանից հանեցին կոմիտեի թռուցիկը, որը բազմաթիվ օրինակներով տարածել էին կղզու բոլոր քաղաքներում. այն ձեռքից ձեռք էր անցնում սեղանի շուրջը. բայց շատերը չգիտեին, թե դա ինչ բան է, իսկ ոմանք, իմանալով, հրաժարվում էին նույնիսկ բացել և, ինչքան կարելի է արագ, հանձնում էին ուրիշներին, կարծես այդ ծալած ու շատերի մոտ եղած թուղթը այրում կամ աղտոտում էր նրանց ձեռքերը, ի վերջո թռուցիկը հասավ երիտասարդ քարտուղարին, որը բացեց և սկսեց բարձրաձայն կարդալ եպիսկոպոսի ներկայությամբ, մի բան, որը հարուցեց ոմանց զարմանքն ու վշտալի բացականչությունները, իսկ մյուսներին դրդեց աշխույժ մեկնաբանությունների՝ մերթ ծաղրական, մերթ զայրալից:

Դիմելով կառավարությանը, ինչպես իշխանություն ունեցողն իշխանություն ունեցողին, կոմիտեն հանդիսավոր տոնով Սիցիլիայի աշխատավորների անունից պահանջում էր. ալյուրի մաքսի վերացում (Է՛, ահա թե ի՛նչ), վարչական մարմինների գործունեության հետաքննություններ՝ միությունների մասնակցությամբ (Բերանների համը գիտեն: Մի տե՛ս ինչ են ուզում), գյուղացիների ու հանքափորների աշխատանքի՝ սոցիալիստական կուսակցության կոնգրեսում մշակված պայմանների օրինականացում (Ի՞նչ: Ի՞նչ: Օրինականացո՞ւմ: Մի մտածե՛ք, Է՛, օրինականացում, պետական կնիքով), հողագործական և արդյունաբերական կոլեկտիվների կազմակերպում՝ չմշակված մասնավոր հողերի կամ պետության կոմունալ տիրույթների ու դեռ չվաճառված վանքապատկան տիրույթների բազայի վրա (այստեղ մի ամբողջ փոթորիկ բարձրացավ, ընդհանուր քաոսային աղմուկ, որի մեջ գերակշռում էին՝ «Կողոպո՛ւտ: Ավազակնե՛ր: Անբաննե՛ր» ճիչերը, այնպես որ երիտասարդ քարտուղարն սկսեց թափահարել ձեռքերը՝ լռության կոչելով. հետո, իբր, ավելի թունդ բան է լինելու, ավելի թունդ, ու, շարունակելով կարդալ թուղթը, կրկնում էր՝ և բացի այդ... և բացի այդ...), և բացի այդ, խոշոր կալվածքների բռնագրավում՝ նախկին տերերին մեծ ոչ ամենամյա ռենտայի ժամանակավոր վճարումով (Օհո՛, ի՛նչ բարեսիրտ են: Ի՛նչ գթասրտություն: Ի՛նչ առատաձեռնություն: Ի՛նչ ողորմածություն), սոցիալական օրենքներ պրոլետարների կյանքի տնտեսական ու բարոյական բարելավման համար և, ի վերջո (իսկական ռումբ) պետական բյուջեում քսան միլիոն լիրա գումարի հաստատում՝ վերոհիշյալ պահանջների բավարարման նպատակով՝ ինչպես հողագործական, այնպես էլ արդյունաբերական կոլեկտիվների համար գործիքներ ու գույք ձեռք բերելու, այնպես էլ դրանց անդամներին կանխավճարներ տալու այն բանի համար, որ կոլեկտիվները հնարավորություն ունենան արդյունավետ աշխատելու:

— Բայց նրանք խենթացե՛լ են: Խենթացե՛լ են,— ընդհանուր աղմուկի մեջ հնչեց ոտքի ելած մոնսինյորի ձայնը:— Օ՛, ողորմած աստված, ի՛նչ անպատկառություն: Բայց ճի՞շտ է արդյոք, ճի՞շտ է արդյոք, որ զորքերը ժամանել են: Այդ լուրը ճի՞շտ է: Չէ որ սա արդեն հանաք բան չի: Օ՛, տե՛ր աստված, տե՛ր աստված:

Երիտասարդ քարտուղարն շտապեց հանգստացնել նրան, իսկ հետո ավարտեց թռուցիկի ընթերցումը, որը որպես եզրափակում զսպվածության էր կոչում, «որովհետև առանձին ջղաձիգ գործողություններով չի կարելի հասնել երկարատև հաջողությունների», և նախազգուշացնում էր, որ «կառավարության որոշումներից կախված կլինեն աշխատավորների հետագա գործողությունները»:

Բայց մոնսինյորը, վճռականորեն մերժելով այդ կոչերն ու նախազգուշացումները՝ որպես լիովին ավելորդ, քարտուղարին պատվիրեց անմիջապես տպագրության ուղարկել իր քարոզը, որն, իհա՛րկե, դուր կա գեներալին՝ բանակային կորպուսի հրամանատարին. հետո նա արձակեց ժողովը, որ շուտ ուղևորվի Կոլիմբետրա և հանգստացնի իշխան Լաուրենտանոյին: Դեռ երկար փողփողացին, խշխշացին, քամուց ծափ զարկեցին հոգևորականների փարաջաներն ու թիկնոցները՝ մինչև նրանք իջան Սան-Ջերլանդոյի բլուրներից և անհայտացան քաղաքի ընդհանուր իրարանցման մեջ: Իսկ խենթը

պատշգամբում գոռում էր հրճվանքից՝ թափահարելով դեղին վերմակը, որը կարծես ձայնածում էր ծածանվող սև թիկնոցներին:

Շտապելով Կոլիմբետրա, մոնսինյոր Մոնտորոն, իհա՛րկե, չէր ենթադրում, որ իր հովվական քարոզում այնպիսի գրական քաղցրմեղցրությամբ արտահայտած զգացմունքներին շատ մոտիկ զգացմունքներ էին հուզում այն երիտասարդներից մեկի հոգին, որոնց ինքը հենց նոր կոչեց խենթեր: Իր այսպես կոչված ընկերների հետ առաջին անմիջական շփումներից հետո, այն բանից հետո, երբ նրան հասան այդ ժողովրդական ապստամբության արյունալի իրադարձությունների առաջին՝ ավելի մոտիկ և ավելի բազմաթիվ արձագանքները, Լանդո Լաուրենտանոն բարեկամների կողմից կանչվեց Սիցիլիա, որպեսզի նրանց հետ միասին պատասխան տա՝ եթե ոչ հանցագործությունների համար (որովհետև նա չէր կարող կասկածել ընկերների ազնվությանը և բարի կամքին), ապա չլսված խենթության համար: Եվ միշտ խենթությունները կատարվել են ինքնապատրումի, ինքնակուրացման պատճառով՝ գուցե զգալի չափով ծնունդ առած սիցիլիական հողի տապից, որը նրա ցեղակիցների ձայներին ու շարժումներին տալիս էր թատերայնություն, և դա նրա մեջ, որ դիտումնավոր կերպով խիստ էր ու զուսպ, հարուցում էր շատ սուր անբավականություն: Ինչպե՞ս կարող էին նրա բարեկամները գայթակղվել այն մտքով, թե իրենց կիաջողվի մի քանի ամսում իրենց քարոզներով ճեղքել տգիտության կոպիտ կեղևը, որը կրկնապատկվել էր անասնական խորամանկությամբ և անվստահությամբ, կեղև, որ շերտ-շերտ ծանրորեն դարսվել էր Սիցիլիայի գյուղացիների ու հանքափորների բանականության վրա: Ինչպե՞ս կարող էին նրանք հնարավոր համարել կազմակերպված դասակարգային պայքարն այնտեղ, որտեղ ոչ միայն չկար ոչ մի համաձայնություն և սկզբունքների, զգացմունքների ու ծրագրերի հաստատունություն, այլև բացակայում էր նաև ամենատարրական կուլտուրան, գիտակցականությունը՝ ինչպիսին էլ որ լինի: Ամբողջ տակտիկան սկզբից մինչև վերջ սխալ էր: Պետք էր ձգտել ո՛չ թե դասակարգերի պայքարի, որն անհնար էր այդպիսի պայմաններում, այլ, ընդհակառակը, հարկավոր էր փորձել հասնելու Սիցիլիայի բոլոր հասարակական խավերի համագործակցությանը, որովհետև բոլորը կղզում հազար ութ հարյուր վաթսուն թվականից սկսած սուր ու խորին դժգոհություն էին զգում Իտալիայի կառավարության հանդեպ՝ իրենց կարիքների նկատմամբ նրա արհամարհական անուշադրության պատճառով: Մինչդեռ մի կողմից՝ ֆեոդալական ավանդույթները, գյուղացիների հետ, ինչպես անասունների հետ, վարվելու սովորույթը, իսկ մյուս կողմից՝ արմատացած կատաղի ատելությունը տերերի հանդեպ և լիակատար անվստահությունը արդարության նկատմամբ դարձել են անհաղթահարելի արգելքներ բոլոր սիցիլիացիների համագործակցությունը կազմակերպելու ամեն մի փորձի համար: Բայց եթե այդ փորձերը կարող էին անհուսալի թվալ, ապա հենց սկզբից էլ ավելի անհուսալի էր ներկայանում այն, ինչ ուզում էին ձեռնարկել Լանդոյի բարեկամները, որոնք անգիտակցաբար և չարաբաստիկ կերպով դրդված էին կառավարության անտարբերությամբ, կառավարություն, որն ընդունակ էր հրահրելու՝ ինչի կամենաք: Տվյալ պահին մինչև կոկորդը թաղված Հռոմի բանկային սկանդալի ճահճում և վստահ իր սիցիլիական ոստիկանության վրա, որը կամ անգործունյա էր, կամ սանձարձակ ու լկտի, կառավարությունը, ուշադրություն չդարձնելով կղզու բազմամյա աղետալի վիճակի վրա, հարգանք չցուցաբերելով ո՛չ օրենքների, ո՛չ էլ հասարակական ազատությունների նկատմամբ, մերթ իր քար-անտարբերությամբ, մերթ կանխամտածված գրգռումներով աջակցել է պրոլետարական միությունների արագ կազմակերպմանը: Եթե այդ միավորումները հասնեին գյուղատնտեսական բանվորների ու հանքափորների աշխատանքի պայմանների թեկուզ մի փոքր բարելավման, և եթե դրանց չդրդեին արյունալի ընդհարումների, դրանք, անկասկած, իրենք իրենց կկազմալուծվեին, քանի որ զուրկ էին համերաշխության բարձր զգացումից, ամեն տեսակ գիտակցական մակարդից կամ էլ իդեալների նշույլից: Լանդո Լաուրենտանոն այդ ամենը չափազանց ուշ հասկացավ, այստեղ՝ տեղում, և ոգևորությունը, որով նա սլացավ բարեկամների կոչով, մարեց մռայլ ու վշտալից զարմանքից, որով համակեց նրան այն ամենը, ինչ տեսավ, կարծես բարեկամները ծղոտով լիքը լցրեցին ծարավից չորացած նրա բերանը:

Նրան ցնցել էր կառավարության կողմից իրեն սպառնացող դաժան պատիժներից որևէ փրկություն գտնելու անհրաժեշտությունը, բայց նա վրդովմունքով մերժեց պահի ծայրահեղ լրջությունից շփոթված ու վախեցած իր բարեկամների զգուշության կոչերը: Զգուշությո՞ւն: Հիմա՝ այս օրերին, երբ կղզու խորքում, փոքրիկ ավաններում՝ Ջարդինելլոյում, որ հազիվ ութ հարյուր բնակիչ ունի, Պյետրապերցիայում, Ջիբելլինայում, Մարինեոյում, մարդկանց բազմություններ էին հավաքվում հրապարակներում՝ առանց որևէ վատ դիտավորության, առանց որևէ դրոշի, միայն թագավորի ու թագուհու պատկերներով, առանց որևէ զենքի՝ բացի խաչից, որ թափորի առջևից տանում էր որևէ խեղաթյուրած, ցնցոտիավոր կին, և կուրացած գնում էին ուղիղ երկու տասնյակ զինվորների հրացանների դեմ, որոնք կրակ էին բացում՝ չսպասելով հրամանի, գլխավորապես այդ ամբոխի կողմից հանկարծ ճզմվելու վախից: Այո՛, ո՛չ ոք չէր դրդել կազմակերպել այդ թափորները, որ վերջացան արյունահեղությամբ. բայց դրանց համար և մյուս կամայական գործողությունների, և թափված արյան համար նա պետք է հիմա պատասխան տա հենց այն պատճառով, որ այդ կույր մարդկային նախիրը իրեն բավականաչափ գիտակից է համարել, որպեսզի բարձրաձայն հայտարարի իր իրավունքների մասին: Էլ ինչպե՞ս հիմա նահանջել և զգուշության կոչ անել: Ո՛չ, հիմա ուրիշ ելք չկա. մնում է միայն մեկը՝ այդ խեղաթյուրության մեջ գնալ մինչև վերջ, գնալ կորստի մատնվելու այդ զոհերի հետ միասին: Եվ Լանդո Լաուրենտանոն քամահրանքով հրաժարվեց իր ստորագրությունը դնել կենտրոնական կոմիտեի՝ կղզու աշխատավորներին ուղղված կոչի տակ, որն իր վճռական տոնի հանդիսավորությամբ նրան պարզապես ծիծաղելի թվաց՝ ո՛չ այնքան կառավարությանը ներկայացված պահանջների, որքան, գլխավորապես, այն պատճառով, որ լիովին բացակայում էին գիտակցականությունն ու իրական ուժերը նրանց մոտ, ում անունից դրանք առաջադրվում էին: Լանդոյի համար իրական էր միայն մի բան՝ տգիտությամբ մշտական աղքատության դատապարտված բազմաթիվ դժբախտների հուսահատությունը և արյունը, այդ զոհերի արյունը:

Հենց որ պաշարողական դրություն հայտարարվեց, Լինո Ապեսը ուժով ստիպեց նրան փախչել: Նա փախավ ո՛չ այն պատճառներով, որոնց մասին պահի ազդեցության տակ գոռում էր նրան Լինո Ապեսը, այլ որովհետև նրա մեջ ամենախորին նողկանք էր հարուցում առաքյալի, հերոսի կամ նահատակի դերում հանդես գալու հեռանկարը, զինվորական տրիբունալի վանդակում ի ցույց հանվելու իր լավ ծանոթների՝ Պալերմոյի հիացող կամ էլ պարզապես հետաքրքրասեր արիստոկրատների առաջ: Նրա հետ, բացի Ապեսից, հաջողվեց փախչել նաև Բրունոյին, Ինգրաոյին և Կատալդո Սկլաֆանիին: Երեքն էլ զգեստափոխված էին:

Կատալդո Սկլաֆանին անճանաչելի էր դարձել առանց իր փռչոտ, ծակծկող մորուքի՝ այտերին ու կզակին: Իր հանդեպ նա զգում էր ինչ- որ նվաստացուցիչ զզվանք, իսկ ուրիշների մոտ հարուցում էր կիսաարհամարհական, կիսակարեկցական ծիծաղ. ընդ որում, թվում էր, թե նրա աչքերն ու ձայնը դեռ չէին գիտակցել այն, ինչ կատարվել էր մորուքի հետ, որն այնպես համապատասխանում էր իրենց, իսկ հիմա հանկարծ չքացավ, և դրա համար էլ իրենք գործում են լիակատար շփոթվածության կոմիկական տպավորություն: Բայց, ճիշտն ասած, այդ երեքի զգեստափոխությունը բնավ էլ վախի արտահայտություն չէր. դա պահանջվում էր այն դերով, որը տվյալ պահին նրանց վզին էր փաթաթել թաքնվելու անհրաժեշտությունը. այդ ամենի մեջ քիչ բաժին չուներ իսկական կղզեցիների սնափառությունը, որոնք չափազանց գոհ էին, որ իրենց հաջողվել է խուսափել պատիժներից և դրանով իսկ ճարպկորեն հիմարացնել պետական իշխանություններին:

Նրանք ձգտում էին կղզու խորքը՝ թաքնվելով զինվորներից, որոնք, շարժվելով Պալերմոյից, մտադրվել էին գրավել նաև մյուս բոլոր գավառները: Եթե փախստականներին հաջողվեր կտրել-անցնել կղզին, նրանք կարող էին թաքնվել Վալսանիայում, իսկ այնտեղից կգնային Մալթա կամ Թունիս: Լանդոն կուզենար բնակություն հաստատել Մալթայում՝ իր պապի աքսորավայրում՝ ո՛չ թե հանուն այն բանի, որ հանդգնորեն համեմատեր իր և պապի ճակատագրերը, այլ պարզապես այն պատճառով, որ արդեն մի որոշ ժամանակ նա ընդհանրապես պատրաստվում էր ուղևորվելու Բուրմուլա և գտնելու այնտեղ պապի

գերեզմանը, եթե դա հնարավոր լիներ, քանի որ, ճիշտն ասած, Մաուրո Մորտարայի տեղեկություններն աչքի չէին ընկնում ճշգրտությամբ, որովհետև թաղումը կատարվել էր խուճապի պայմաններում, խուճապ, որ համակել էր ամբողջ Մալթան հազար ութ հարյուր հիսուներկու թվականի համաճարակի պատճառով: Իզուր էր Լինո Ապեսը կատակում արկածների ու ձախորդությունների առթիվ, որ ուղեկցում էին իրենց հապճեպ փախուստին՝ մերթ ոտքով, մերթ երերուն սայլերով, լեռներով ու հովիտներով, ապաստարան և ուտելիք որոնելով, իզուր էր նա փորձում համոզել բարեկամներին, որ, ի վերջո, իրենց բոլոր աղետներն այնքան լուրջ չեն, որպեսզի ցանկության դեպքում կարելի չլինի դրանց վրա ծիծաղել: Մի՞թե, օրինակ, իրենց բոլոր պատրանքների խորտակումը բավարար պատճառ էր, որպեսզի ուշադրություն չդարձներ այն բանին, թե ինչի էր վերածվել իր անդրավարտիքը, երբ իջավ սայլից: Այդ պատրանքները Տիբերիոս Գրակքոսից էլ հին էին, իսկ անդրավարտիքը նոր էր: Որտե՞ղ թողեց Կատալդո Սկլաֆանին ծրարը՝ իր հոյակապ մորուքով: Չէ՞ որ փիլիսոփայական տեսակետից ուրիշ ինչո՞վ, եթե ոչ այդ անհայտացած մորուքի մազերով կարելի էր ամենից լավ կարկատել այդ անդրավարտիքը: Սակայն տրտում, ձմեռային տեսքն այն վայրերի, որոնցով նրանք գնում էին սայլով կամ ոտքով, մշտական տագնապները՝ հոգնեցուցիչ և ամեն տեսակ բարդություններով սպառնացող ճանապարհին, անհամբեր ցանկությունը՝ շուտ իմանալու, թե ինչ է կատարվել այդ օրերի ընթացքում՝ այդ ամենը փախստականներին բնավ չէին տրամադրում արձագանքելու Լինո Ապեսի սրամտություններին: Կուտակված տպավորությունները Լանդո Լաուրենտանոյի հոգում հետզհետե ավելի ու ավելի էին ամրացնում այն համոզմունքը, որ սխալ է կատարվել ընկերների կողմից, հատկապես, երբ հաստատվեցին լուրերն արտակարգ միջոցների մասին, որ անսպասելիորեն ձեռնարկել էր կառավարությունը: Սիցիլիացիների վաղեմի, խոր ատելությունը ամենուր վերածվեց բուռն զայրույթի. եթե սկզբում հասարակության բարձր շրջանները վախեցած էին ժողովրդական ապստամբությունից, ապա հիմա՝ ռազմական միջամտության վտանգի առաջ, որը թշնամական ներխուժման բնույթ էր կրում՝ խախտելով բոլոր օրենքները և ոչնչացնելով բոլոր սահմանադրական երաշխիքները, նրանք պատրաստ էին՝ եթե ոչ եղբայրանալու ստորին խավերի հետ և ոչ էլ արդարացնելու նրանց, ապա, համենայն դեպս, ընդունելու, որ մինչև հիմա բոլոր բախումներում հասարակ ժողովուրդը ամենավատ վիճակի մեջ է ընկել, մինչդեռ երբեք զինված ապստամբություն չի բարձրացրել և եթե իրեն թույլ է տվել հասարակական կարգի որոշ խանգարումներ, ապա այն պատճառով, որ նրան այդ բանին հրահրել են իշխանությունների դաժան ու հիմար դատաստանները: Կղզեցիների բնածին հպարտությունը վրդովվեց նոր խայտառակությամբ, որին իտալական կառավարությունը ենթարկեց Սիցիլիան՝ արմատացած չարիքը թեկուզ ուշացումով վերացնելու փոխարեն: Ամբողջ կղզով ատելության շող էր անցնում, երբ լուրեր էին գալիս այն ավանների մասին, որոնք շրջապատվել էին հետևակի ջոկատներով կամ հեծելազորի էսկադրոններով. այն մասին, թե ինչպես առանց որևէ խտրության, վայրի կատաղությամբ բռնում են հարյուրավոր մարդկանց՝ հարուստների ու աղքատների, ուսանողների ու բանվորների, այստեղ՝ աստիճանավորների, այնտեղ՝ ուսուցիչների, և կոմունալ քարտուղարների, և՛ կանանց, և՛ ծերերի, և՛ նույնիսկ երեխաների մամուլն արգելանքի տակ է, գրաքննությունն ստուգում է նույնիսկ մասնավոր նամակագրությունը. կղզում ոտնահարված է քաղաքական կյանքը, և ամբողջ Սիցիլիան՝ կապկպված ու անզեն, հանձնված է զինվորական դիկտատուրայի քմահաճույքին:

Ինչպես կամակոր ձին՝ իր կամքին հակառակ հեռու քշվելով այն արգելքներից, որ պիտի հաղթահարեր, կատաղության պոռթկման պահին հանկարծ գազազում է, ծառս է լինում և սմբակներով հարվածում՝ դողալով ամեն մի մկանով, այնպես էլ Լանդո Լաուրենտանոն՝ համընդհանուր զայրույթի մոլեգնությամբ վարակված, հանկարծ վրդովվեց՝ շնչահեղձ լինելով նվաստացումից, որ այսպիսի պահին ինքն ստիպված է փախուստի դիմել: Հիմա արդյոք թաքնվելո՞ւ ժամանակն է: Մարտադաշտը թողնելո՞ւ: Հողն այրվում էր նրա ոտքերի տակ, օդը, թվում էր, բոցավառվում է: Հնարավո՞ր է, որ ծայրից ծայր հուզումներով համակված կղզին թույլ տա իրեն խոշտանգել, տրորել ոտքերի տակ և չապստամբի ատելության պոռթկումով, որ այնքան երկար ճնշված էր և հիմա այսպես կոպտաբար արթնացված: Գուցե բավական է մի կոչ: Գուցե բավական է մի մարդ, որն առաջ անցնի: Երբ

նրանք հասան Իմերա և իմացան, որ մոտիկ Սանտա-Կատերինա-Վիլարմոզա գյուղում ժողովուրդն ապստամբել է, Լանդոն այլևս չէր կարող համբերել՝ չնայած այն բանին, որ բարեկամներն ամեն ինչ անում էին նրան զսպելու համար, գոռում էին, որ էլ փորձելու կարիք չկա, էլ ոչ մի բանի հույս չկա, և որ նա սեփական կամքով, ամենահիմար ձևով խցկվում է կառավարական զորքերի ճանկերի մեջ: Միայն Լինո Ապեսը հետևեց Լանդոյին, բայց նա էլ լոկ այն հույսով, որ չափավորի բարեկամին, կանգնեցնի կես-ճանապարհին՝ ձգտելով տվյալ պահին ինչքան կարելի է լավ խաղալ Սանչոյի դերը, որպեսզի իր բարեկամը, որ այնքան զգայուն է ծիծաղելիի նկատմամբ, գլխի ընկնի, որ նրա կողքին ինքն ակամա ներկայացնում է Դոն Կիխոտին: Եվ, իսկապես, շուտով հսկաները, ինչպիսիք Լանդոյի գրգռված երևակայության մեջ պատկերանում էին Սանտա-Կատերինա-Վիլարմոզա գյուղի գյուղացիները, որ ապստամբել էին պաշարողական դրություն մտցնելու լուրն ստանալով, իրականում հողմաղացներ դուրս եկան: Մոտենալով գյուղին, Լանդոն և Ապեսը պարզեցին, որ այնտեղ ոչ ոք դեռ ոչինչ չէր իմացել պաշարողական դրության մասին (հայտարարությունը փակցված էր պատին, բայց բնակչությունը այն նույնիսկ չէր կարողացել) և, չիմանալով այդ, մարդիկ սովորականի պես դուրս էին բերել թագավորի ու թագուհու պատկերները և խաչելության հետ տանելով թափորի առջևից, «Կեցցե՛ թագավորը: Կորչե՛ն հարկերը» բացականչություններով շարժվել են գյուղի փողոցներով ու քայլել այնքան ժամանակ՝ մինչև հրապարակից շրջվելով դիմացի նեղլիկ փողոցը, հանկարծ դեմ են առել ութ զինվորների և չորս կարաբինակիրների դարանին: Դրանց հրամանատարը (պատահական չէ, որ նրա ազգանունը Կոլլեոնի էր) այդ դիրքն էր գրավել ամենաճշգրիտ ստրատեգիական հաշվարկով, որովհետև նեղ փողոցի մեջ խցկված ու սեղմված ամբոխը ցրվելու պահանջի դեպքում չէր կարող տեղից շարժվել. և այդ ժամանակ նա հրամայել է կրակել, ընդ որում՝ ոչ թե մեկ, այլ մի քանի անգամ: Տասնմեկ սպանվածներ, անհամար թվով վիրավորներ, որոնց մեջ՝ կանայք, ծերունիներ, երեխաներ: Հիմա ամեն ինչ հանգիստ էր, ինչպես գերեզմանոցում: Միայն այս ու այնտեղ լսվում էին սպանվածների հարազատների ողբերը և վիրավորների հառաչանքները:

— Քեզ բավակա՞ն է,— հարցրեց Լինո Ապեսը Լանդոյին:

Սա շրջվեց ծեր գյուղացու կողմը, որը հենց նոր պատմեց նրանց այդ ամենը և, կարծես ընդգծելով իր համեմատությունը գերեզմանոցի հետ, ցույց տվեց ամենամոտիկ բլուրը, որտեղ մի քանի նոճիներ էին աճել:

— Նրանք այնտե՞ղ են,— հարցրեց Լանդոն:

Ծեր գյուղացու աչքերում սուր ատելություն կար և դրա հետ մեկտեղ՝ խորին տառապանք: Նա մի քանի անգամ օրորեց գլուխը, հետո պարզեց աշխատանքից այլանդակված, հողագույն զույգ ձեռքերի մատները և ցույց տվեց սկզբում բոլոր տասը, ապա՝ մեկը. նրա հայացքն ու լռությունը, որ հաջորդեցին այդ անխոս հաղորդումին, պարզ վկայում էին, որ նա տեսել է բոլոր սպանվածներին: Լանդոն շարժվեց դեպի բլուրը:

— Հասկանալի՛ է,— հառաչեց Լինո Ապեսը:— Հիմա ես դառնում եմ Հորացիո... Նոր տեսարան՝ Համլետը գերեզմանոցում:

Բլրի գագաթին, փոքրիկ, խղճուկ գերեզմանոցում նրանք գտան միայն մրսած պահակին, որ ուսերին էր գցել թեթև, բրդե շալը: Մուտքի ձախ կողմի փոքրիկ նստարանին նստած՝ նա թախծալի լռության մեջ անտարբեր նայում էր իր առջև դրված դագաղների շարքերին, ինչպես հովիվն իր հոտին: Թաղել չէր կարելի՝ քանի դեռ չէին եկել և թույլտվություն չէին տվել դատական իշխանությունները: Տեսնելով, որ երկու մարդ են մոտենում, պահակն իսկույն վեր կացավ ու հանեց բերետը՝ մտածելով, թե դրանք դատավորն ու ոստիկանության կոմիսարն են: Լինո Ապեսն իրեն ու ընկերոջը կոչեց լրագրողներ, իսկ Լանդոն խնդրեց իրենց ցույց տալ մեռած մարմինները:

Այդ ժամանակ պահակը կռացավ դագաղներից մեկի վրա, որ մյուսներից մեծ էր, ներկված էր գորշ գույնով՝ երկու խաչաձև, սև շերտերով, և վերցրեց կափարիչին դրված քարը:

Այդ դագաղում երկու դիակ կար, մեկը մյուսի վրա. մեկի ոտքերն ընկած էին մյուսի գլխին:

Վերևինը տղա էր: Նրա ոտքերն իրարից հեռացած էին, գլուխը սեղմված ընկերոջ ոտնաթաթերի միջև: Նայելով նրան, կարելի էր մտածել, թե նա՝ պառկած ահա այդպես, ետ թեքված գլխով, ասում է՝ ո՛չ, ո՛չ, իր ամբողջ փոքրիկ, հյուծված դեմքով, հազիվ փակված աչքերով ու հոգեվարքի տանջալից ծամածռությամբ: Ո՛չ՝ այդ մահվանը, ո՛չ այդ սարսափին, ո՛չ այդ դագաղին երկուսի համար, որ արձակում էր սպանդանոցի գաղջ ու սուր հոտ: Բայց ավելի սարսափելի էր մյուսի դեմքը՝ խոշոր, սև, լայն բացված աչքերով ու փոքրիկ մորուքով, դեմք, որ սեղմված էր տղայի ցեխոտ կոշիկների միջև: Դա մի տղամարդ էր ուժերի ծաղկման տարիքում: Սարսափելի, բաց աչքերը, որ նայում էին երկնքին, և երեսնիվեր ընկած մարմինը կարծես վրեժ էին պահանջում, որ իրենց ենթարկել են այդ վերջին դաժանությանը՝ մյուս, նրա վրա ընկած դիակի ճնշող ծանրությանը: «Դու տեսնո՞ւմ ես, աստվա՛ծ,— թվում է՝ ասում էր նա,— դու տեսնո՞ւմ ես նրանք ինչ արեցին»:

Սոճու մերկ, խղճուկ դագաղների մեջ կար մեկը՝ բաց կապույտ կտորով երեսպատած, այնքան փոքրիկ, որ Լանդոյի մեջ կասկած ծագեց, ավելի ճիշտ՝ հույս, թե այդ փոքրիկ դագաղը կապ չունի կոտորածի հետ: Նա մի հայացք գցեց պահակի վրա, որ դիտում էր փոքրիկ դագաղը, և նրա հայացքից հասկացավ, որ սա էլ... սա էլ... Լանդոն հարցրեց պահակին, և պահակը, փոքր-ինչ օրորելով գլուխը, պատասխանեց.

— Ննուչենտի (աղջնակ):

— Կարելի՞ է նայել նրան:

Լինո Ապեսը, որ կարծես ածուխների վրա լիներ, վրդովմունքով բացականչեց.

— Թո՛ղ, Լանդո: Չե՞ս տեսնում: Դագաղը մեխած է:

— Միայն դա...— ասաց պահակը՝ գրպանից հանելով գործիքը:— Միևնույն է, հարկ կլինի բացել քննիչի համար... Հեշտ գործ է...

Եվ նա կռացավ՝ դուրս քաշելու մեխերը թեթև կափարիչից, խնամքով ջանալով բոլորովին չփչացնել կապույտ կտորը: Ամեն մի հրումից մեխերը հեշտությամբ դուրս էին գալիս փափուկ փայտի միջից: Երբ փոքրիկ դագաղը բացվեց, նրանք տեսան մի աղջնակի, որ դեռ չէր հասցրել փայտանալ. փոքրիկ, վարդագույն դեմք, գանգուր, փոքր-ինչ մի կողմ թեքված գլխիկ, ձեռքերը մարմնի երկարությամբ մեկնած: Բայց վառ կարմիր բերանիկը ծածկված էր թքով, և քթիկից արյունոտ փրփուր էր հոսում, որ դեռ պղպջակներ էր արձակում՝ կարծես հանդարտ շնչառությունից:

— Բայց նա ո՛ղջ է,— բացականչեց Լանդոն սարսափով:

Ծերունին դառն ժպտաց:

— Ո՞ղջ է,— և նորից ծածկեց կափարիչը:

Մի՞թե մայրը նրան ողջ կտար, մայրը, որ այդպես սիրով հագցրել էր նրան, սանրել ու փոքրիկ դագաղը զարդարել այդ բաց կապույտ կտորով:

— Ահա թե նրանք ինչ արեցին...— մռթմռթաց Լանդոն:

Ե՛վ Լինո Ապեսը, և՛ պահակը մտածեցին, թե նա խոսում է զինվորների մասին, որոնք սպանել են այդ խեղճ աղջնակին: Բայց Լանդո Լաուրենտանոն մտածում էր իր ընկերների մասին, և նրա մտքի հայացքի առաջ ոչ թե այդ փոքրիկի պատկերն էր, որի մասին գոնե հոգ էր տարել մայրական սիրտը, այլ մղձավանջային պատկերը մյուս՝ չափահաս զոհի, մյուս դիակի կոշիկների միջև սեղմված այն դեմքը՝ լայն բացված աչքերով, որ դարձած էին դեպի երկինք ու լիքն էին անսահման սարսափով:

Դը Վինչենտիս ընտանիքի հնամենի ապարանքում լռություն էր տիրում. դրսից այն սևացել էր ժամանակից և ամբողջովին ճաքճքել, կարծես արդեն վերածվել էր ավերակների՝ իր մամռակալած պատշգամբներով, ընդարձակ սանդղափուլի ժանգոտված վանդակաճաղերով. բայց ներսում մեծ սենյակները շարունակ լի էին լույսով ու անդորրությամբ, և բյուրեղապակե կափարիչների տակ աչքի էին զարնում սրբերի պատկերներն ու մոմե ծաղիկները, որոնք, թվում էր, ամենուր տարածում էին վանքին հատուկ ինչ-որ հոտ: Լռությունը, որ կարծես դրոշմված էր հատակի սալիկներին՝ պատուհանների ապակիներից ընկնող քառակուսիներով, որ հետզհետե երկարում էին փոշու դանդաղ ու թեթև շարժման հետ միասին, խախտվեց քայլերի մռայլ, համաչափ թխկթխկոցով: Արդեն մի ամբողջ շաբաթ դը Վինչենտիսը, մոռանալով արաբական ձեռագրերը Իտրայի գրադարանում և փաթաթված բարձրացված օձիքով հին, գունաթափ թիկնոցի մեջ, առավոտից երեկո ետուառաջ էր քայլում սենյակներից մեկում. ձեռքերը դրված էին մեջքին, գլուխը՝ խոնարհած, մազերը կախվում էին աչքերին, որ առանց այդ էլ ոչինչ չէին տեսնում, որովհետև տանը նա միշտ շրջում էր առանց ակնոցի:

Հարևան սենյակում, պատշգամբի ապակեպատ դռան մոտ նստած, գուլպա էր գործում պառավ տնտեսուհի դոննա Ֆանան՝ փափլիկ ու անշարժ՝ հակի նման, բրդե գորշ շալով ու բրդե սև գլխաշորով՝ հանգուցված կզակի տակ: Նրա մարմնի կեսը գտնվում էր հենց արևային ուղղանկյան մեջ, կարծես լուծվում էր այնտեղ, և նրա շալի խավիկները վառվում էին փոշու արևային սյան պարող մանրագույն մասնիկներից:

Դոննա Ֆանան սեփական ձեռքերով էր դագաղի մեջ դրել՝ սկզբում տանտիրոջը, որ մեռել էր տակավին երիտասարդ, հետո տանտիրուհուն, որի համար ոչ այնքան աղախին էր եղել, որքան ընկերուհի. նրա օրոք են ծնվել ու նրա ձեռքերի վրա են մեծացել երկու պարոնորդիները, որոնց մասին հիմա նա ստիպված էր ամեն կերպ հոգ տանել: Երիտասարդ ժամանակ նա քույր էր եղել Սան-Վինչենցո վանքում և մնացել էր «առանց աշխարհայինի», ինչպես ինքն էր արտահայտվում, այսինքն՝ կույս և գրեթե ճգնավորուհի տան մեջ: Ինչպես այնտեղ՝ վանքում, նա ժամանակ առ ժամանակ կրակոտ հառաչանքներ էր արձակում, որոնց անպայման հետևում էր բացականչությունը.

— Եթե ես այնտեղ լինեի:

Բայց նրա մոտ ոչ ոք չկար, որ հարցներ վանքի սովորույթների համաձայն.

— Որտե՞ղ, քույր իմ,— որպեսզի նա կարողանար պատասխանել նոր հառաչանքով.

— Փոքրիկ հրեշտակների հետ:

Ասենք, այդ տանը նա առանց այդ էլ ապրում էր հրեշտակային անդորրության մեջ: Տանտիրուհին իսկական սուրբ էր, աղջնակի պես միամիտ, նույնիսկ հասուն տարիքում անընդունակ անգամ վատ բան մտածելու և ամբողջովին նվիրված կրոնին ու գթության գործերին. երկու որդիներն էլ մեկը մյուսից լավն էին՝ բարեկիրթ ու աստվածավախ:

Էլ ինչպե՞ս կարող է աստված լքել այս տունը և հասցնել սնանկացման:

Թվում էր, թե դոննա Ֆանային հայտնի էին տեր աստծու բոլոր ցանկությունները. նա այնպես էր խոսում դրախտի մասին, կարծես արդեն ապրել էր այնտեղ՝ շարունակելով գուլպա գործել հայր-աստծու աչքի առաջ, և կարող էր պատմել, թե որտեղ է նա նստած Հիսուս Քրիստոսի՝ մեր Փրկչի և նրա սուրբ մոր հետ: Դոննա Ֆանան արդեն վաղուց նախապատրաստել էր և՛ սպիտակեղենը, և՛ զգեստը, և՛ կոշիկները, և՛ մետաքսե գլխաշորը, որպեսզի կանգնի Ահեղ դատաստանի առաջ՝ վստահ այն բանում, որ բարձրագույն դատավորը իրեն կդասի ընտրյալների շարքը, քանի որ ինքը այնպես գեղեցիկ է հագնված. և ամեն երեկո նա հատուկ աղոթքով դիմում էր սուրբ Բրիգիտային, որը երեք օր առաջ երազում պիտի հայտներ նրա մահվան ժամը, որպեսզի նա կարողանար պատրաստվել վերջին հաղորդությանը: Դրա համար էլ դոննա Ֆանան ոչ մի բանի մասին չէր անհանգստանում. նրա կարծիքով՝ Վինչենտեի (որին նա կոչում էր Տինուցցո) բոլոր տագնապները պարզապես երեխայություն էին: Նրա այդ միտքն ամրապնդում էր ոչ միայն

հավատն առ աստված, այլև անսասան համոզվածությունն այն բանում, որ այդ ապարանքի հարստությունը երբեք չի կարող սպառվել: Եվ նա շարունակում էր տնտեսությունը վարել հին ժամանակների առատության սովորույթներով, այնպես որ բոլոր հարևան աղքատները ճաշի վերջում գալիս էին, որ իրենց մեջ բաժանեն ամբողջ ավելցուկը, կերակրի բոլոր մնացորդները, ինչպես դա ընդունված էր երկար տարիների ընթացքում, ու մառանը միշտ պահում էր ամեն տեսակ պաշարներով լիքը և, սովորած լինելով վանքում, սեփական ձեռքերով երիտասարդ պարոնների համար պատրաստում էր թրմօղիներ ու ավանդական քաղցրեղեններ՝ բրնձով ու պիստակով կուսկուս և՛ քաղցր ձկներ՝ նշով խմորից, և՛ մայրի ծառի շաքարած ընկույզներ, և՛ սերկևիլի մուրաբա, և՛ մրգեր անուշահյութի մեջ:

Հնարավոր է, իհա՛րկե, որ կառավարիչ դոն Յակո Պաչան ծածուկ մի որոշ բան տարել է:

— Բայց ի՞նչ է նա վերցնում,— հարցրեց դոննա Ֆաննա Նինիին՝ նրա ավագ եղբոր կատաղության հերթական սուր բռնկումից հետո:— Դե, ինչ-որ չնչին բաներ, որդիս, չնչին բաներ:

Դոն Յակո Պաչան նույնպես բարեպաշտ մարդ էր. հնարավո՞ր է արդյոք, որ նա գողանար այդպես լկտիաբար և այնքան, որքան ասում էր դոն Տինուցցոն: Բայց չէ՞ որ դոն Յակոն շարունակում էր տան ապրուստի համար նրան տալ նույն գումարը, ինչ տալիս էր միշտ՝ ընդ որում, ոչինչ չասելով: Բոլոր փողերը տնօրինում էր դոն Յակոն. ի՞նչ արած, եթե մի ինչ-որ չնչին բան էլ կպել է նրա մատներին, հարկավոր է դրա վրա փակել եթե ոչ երկու, ապա գոնե մի աչքը: Դոննա Ֆաննա պաշտպանում էր նրան մաքուր սրտով, որովհետև դոն Յակոյի մտքերի ու արարքների ազնվության ապացույցն էր համարում այն, որ նա, գնալով Հռոմ, վերադարձին այնտեղից իր համար բերել էր օրհնած վարդարան և քթախոտի տուփ՝ սուրբ հոր պատկերով: Եթե նա իմանար, որ հենց այդ նույն օրը դոն Յակոն, որպեսզի փող ձեռք բերի, ոչ միայն Միլիոնեի հողերն էր զիջել Ֆլամինիո Սալվոյին, այլև գնացել էր գրավ դնելու այդ նույն ապարանքը, որտեղ ինքը հանգիստ նստել ու գուլպա էր գործում: Այդպիսի ռումբ չէր սպասում նույնիսկ Վինչենտեն: Բացի հողային տիրույթները զիջելու մասին մտքերից, նա ուրիշ լուրջ մտահոգություն էլ ուներ, որն ահա արդեն երկու օր հանգիստ չէր տալիս նրան: Սենյակներից մեկի անկյունում, որտեղ հավաքված էին գործածությունից դուրս եկած զանազան իրեր, նա գտել էր մի հնամենի կայծքարավոր հրացան՝ ծածկված ժանգով ու փոշով: Քանի որ ամբողջ Սիցիլիայում հայտարարված է պաշարողական դրություն և հրաման՝ զինաթափման մասին, արդյոք նա պարտավոր չէ՞ հանձնելու նաև այդ հրացանը: Նինին ու դոննա Ֆաննա պնդում էին, որ պարտավոր չէ. Նինին նույնիսկ գտնում էր, թե նման զենքի հանձնումը կընկալվի որպես հանդգնություն, որպես վիրավորական ծաղրանք իշխանությունների նկատմամբ: Բայց նրանք դա որտեղի՞ց գիտեին: Ինչո՞ւ էին այդպես խոսում: Սեփական հասկացողությա՞մբ: Բոլոր զենքերը հանձնելու հրամանը աներկբա էր ու վերջնական, և այնտեղ ոչ մի վերապահություն չէր արվում: Իսկ չէ՞ որ հրացանը զենք է, այո՞, թե՞ ոչ: Շատ հին է, ճիշտ է: Այո՛, շատ հին է ու ժանգակեր, այնուամենայնիվ զենք է: Եվ նույնիսկ գուցե լիցքավորված է ու պատրաստ կրակելու... Երևում էր կայծքարը. և հրացանի փակաղակը, ահա՛ այն, կախված է շղթայիկից...

— Լավ, վերցրու և գնա հանձնիր,— գոռաց նրան Նինին դեռ նախորդ օրը: Այն հազվադեպ ակնթարթներին, երբ տուն էր վերադառնում, նա մտածում էր բոլորովին այլ բանի մասին և, ի վերջո, տանջահար շտապում էր շուտով վերադառնալու իր տառապանքին՝ Դիանելլայի մոտ:

— Վինչենտեն պահանջում էր, որ Նինին, թեև նրա համար առանց այդ դժվար էր, կես օր կորցնի, որ տեղեկություններ հավաքի այդ զենքի մասին: Հեշտ է ասել՝ վերցնել այն ու տանել: Իսկ եթե կրակի՞: Հանձնել այն, բայց ո՞ւմ: Որտե՞ղ: Պրեֆեկտուրա՞: Մունիցիպալիտե՞տ: Ոտիկանության կոմիսարիա՞տ: Նա ոչինչ չգիտեր. իսկ եթե հրամանից երկու օր անց հարցնես հենց այնպես, իբր հետաքրքրությունից դրդված, կենթարկվես կասկած հարուցելու վտանգին և առիթ կտաս տունը խուզարկելու:

Պաշարողական դրությունը Վինչենտե դը Վինչենտիսին հասցրել էր այնպիսի կատաղության, որ նա ամենուր սպառնալիքներ էր տեսնում և ամեն տեսակ վտանգներ: Իսկ ի՞նչ կլինի, եթե դոննա Ֆանայի անիծյալ շատախոսության պատճառով, որը շրջանում բոլորին պատմում էր ընտանիքի նույնիսկ ամենաաննշան գործերի մասին, ոստիկանությունը, իմանալով այդ զենքի մասին, հայտնվի տանը:

Հանկարծ պառավ տնտեսուհին տեսավ, որ նա խենթի նման ձեռքերը թափահարելով ու գոռալով, դուրս վազեց սենյակից, որտեղ շարունակ փակված էր:

— Դե, թո՛ղ պայթի: Թո՛ղ սպանի ինձ: Կգնամ ու կվերցնեմ: Կգնամ ու կվերցնեմ:

— Ի սեր աստծո, թողե՛ք, դոն Տինուցցո,— բացականչեց դոննա Ֆանան՝ սլանալով նրա ետևից:— Միայն աստված գիտի, թե ինչ կարող է պատահել, երբ դուք այդպիսի վիճակում եք... Չէ՞ որ ամբողջ մարմնով ցնցվում եք: Թողե՛ք: Ես պատշգամբից կկանչեմ որևէ մեկին...

— Ո՞ւմ կկանչեք: Չհամարձակվե՛ք...— սկսեց գոռալ ամբողջովին կաս- կարմիր կտրած Վինչենցոն, երբ շքամուտքով, որ ցերեկները միշտ բաց էր, ներս մտավ դոն Յակո Պաչան, իր սովորական՝ սրբի տեսքով, որ երկնքից ընկել է տխրության հովիտը: Նա բարձրահասակ էր ու նիհար, կարծես ամբողջապես փայտից լիներ, գունատ դեմքով, որ կոպտաբար կտրտված էր դեպի վեր սրված սև հոնքերով, որ տարօրինակ հակադրություն էին կազմում շփոթահար, երանավետ ժպիտի հետ՝ սպիտակած, ծակծկող բեղերի տակ: Ճապոնացիների կոպերի նման հարթ կոպերը լիովին ծածկում էին աչքերի սպիտակուցները. աչքերը մնում էին մի տեսակ աղոտ, և դրանց արտահայտության մեջ ոչինչ չէր համապատասխանում ո՛չ դաժանությանը, որ նրա դեմքին տալիս էին հոնքերը, ո՛չ հիմարավուն երանությանը նրա մշտական ժպիտի: Գունատ, կոշտոտ ձեռքերը միշտ խաչած էին կրծքին, և դա նրան տալիս էր այնպիսի տեսք, կարծես նա հաշտվել էր ամենքի հետ ու հնազանդվել ճակատագրին:

Լսելով խոսքն ինչի մասին է, նա իր վրա վերցրեց հրացանի հոգսը, բայց միաժամանակ ավելացրեց, որ դոն Տինուցցոն ո՛չ թե մեկ, այլ հարյուրավոր պատճառներ ունի անհանգստանալու համար: Իհարկե, դա զենք է: Եվ աստված փրկի, այնպիսի պահին, ինչպիսին հիմա է... Սարսափելի պահ է ամբողջ Սիցիլիայի համար: Բայց չէ՞ որ ինքն այստեղ է, ինքն այստեղ է, ինքն է այս փառավոր պատանիների նեցուկը, և, աստծո օգնությամբ, հիմա նրանք ոչինչ չունեն վախենալու: Դժբախտություններ և ոչ փոքր դժբախտություններ սպառնում են ուրիշ կողմից: Եվ նա սկսեց խոսել Միլիոնեի հողերի վերաբերյալ փաստաթղթերը փնտրելու իր բոլոր ջանքերի մասին՝ սկզբում նոտարական արխիվներում, ապա տրիբունալի և հետո եպիսկոպոսության գրասենյակում, որպեսզի որոշի վճարման պարտավորությունները, որ ընկած էին այդ տիրույթների վրա: Հիմա թղթերը լրիվ պատրաստ են և լիովին կարգին վիճակում գտնվում են նոտարիուսի մոտ: Բայց դոն Ֆլամինիո Սալվոն չցանկացավ վճարել տուրքերը, որ գանձվում են վաճառքի ակտերից, և գուցե իր կողմից իրավացի էր. չէ՞ որ ի վերջո նա մեծ լավություն է արել... որպես բանկիր...

— Ախ, հա՛, շատ մեծ լավությո՞ւն: Շատ մեծ լավությո՞ւն,— կատաղությամբ բացականչեց Վինչենտեն:— Հենց այնպիսին, ինչպիսին Պրիմոսոլեի համար: Շա՛տ մեծ լավություն:

Չփոխելով սուրբ տառապյալի իր սովորական դիրքը, դոն Յակոն թողեց, որ նա արտահայտվի, հետո ասաց.

— Համբերե՛ք, սիրելի դոն Տինուցցո: Մի՞թե դոն Ֆլամինիոն ուրիշ երեխաներ էլ ունի՝ բացի աղջկանից: Իսկ չէ որ աղջիկն արդեն դոն Նինիի՝ ձեր եղբոր հարսնացուն է: Մի՞թե դուք չեք տեսնում, արդար աստված, որ այդ ամենը միայն առերևույթ է: Վաղը տեղի կունենա հարսանիքը, և ամեն ինչ ետ կվերադառնա:

— Ամեն ինչ, այո՞: Հրաշալի՛ է... հե՛շտ... ու հա՛րթ է գնում,— սկսեց խոսել Վինչենտեն՝ կատաղի գրգռվածությամբ խոնարհվելով ամեն բառից հետո:— Երկու խենթերի ամուսնություն: Բայց եթե դա այդպես է, ինչո՞ւ է դոն Ֆլամինիոն հրաժարվում վճարել տուրքերը, որ գանձվում են վաճառքի ակտերից: Որովհետև ոչ մի հարսանիքի չի հավատում: Ձեզ ո՞վ ասաց, թե այդ ամուսնությունը կկայանա: Ձեզ ո՞վ ասաց, թե...

— Դոն Տինուցցո,— ընդհատեց նրան Յակոն:— Ձեր եղբայրը մտե՞լ է, թե՞ չի մտել Սավոյի տուն: Գուցե դա ես եմ հորինել: Օրհնյալ է անունն աստծո: Արդեն քիչ օրեր չեն անցել: Ուրեմն դա ի՞նչ է նշանակում: Դա նշանակում է, որ աղջիկը համաձայն է: Եվ հասկանալի է, ծղոտը կրակի մոտ: Այո՛, վերջապես ահա և դոն Նինին անձամբ: Նրանից լավ ոչ ոք չի կարող դա հաստատել:

Վինչենտեն վազեց ներս մտնող եղբորն ընդառաջ, սեղմվեց նրա կրծքին՝ բռնելով ձեռքերը և գրեթե ընդհուպ մոտեցրեց իր կարմրատակած դեմքը նրա դեմքին, կկոցելով իր կարճատես աչքերը, որ ավելի լավ դիտի նրան:

— Մի նայե՛ք նրան,— քմծիծաղ տվեց Վինչենտին՝ ետ քաշվելով ու ցույց տալով Նինիին:— Տեսնո՞ւմ եք նա ինչ տեսք ունի: Փեսացուն նման է մեռելի:

Անակնկալի եկած Նինին այդպես էլ քարացավ սենյակի մեջտեղում՝ մի տեսակ խելացնոր տեսքով նայելով եղբորը, դոն Յակոյին ու դոննա Ֆանային:

Իսկապես, նրա դեմքը, որ սովորաբար հեզ էր ու բարեհոգի, հիմա այլանդակված էր տանջալից ծամածռությամբ. գեղեցիկ, սև, թավիշե աչքերը շղարշված էին մռայլ վշտով և կարծես չէին տեսնում շրջապատը: Վերջապես հասկանալով, թե իրենից ինչ են ուզում և ինչ նպատակով, նա հպարտ ետ ցատկեց նողկանքով խույս տվեց: Ե՛վ դոն Յակոն, և՛ դոննա Ֆանան փորձում էին հանգստացնել նրան և զգուշորեն հարցուփորձ անել, բայց ապարդյուն. նա ամբողջ մարմնով դողում էր, օրորում գլուխը, և թվում էր, թե նրա կոկորդում թպրտում է համր աղաղակը, որը նա չէր թողնում դուրս պրծնի:

— Բայց ասացե՛ք գոնե, որ հանգստացնեք ձեր եղբորը, կա՛ արդյոք որևէ հույս,— ի վերջո գոռաց նրան դոն Յակոն՝ պաղատագին ծալելով ձեռքերը:

Նինին նայեց նրան՝ տարօրինակ մի փայլ աչքերում: Չէ՞ որ եթե իսկապես ոչ մի հույս չկար վերադարձնելու Դիանելլայի բանականությունը, նրա համար ի՞նչ նշանակություն ուներ տան սնանկացումը, աղքատությունը և մնացած ամեն ինչը: Մի՞թե որևէ մեկը կարող էր հուսալ, թե Դիանելլան կապաքինվի միայն այն բանի համար, որ սնանկացումից փրկի իրենց տունը: Եվ իր բոլոր ջանքերը, իր ամբողջ տառապանքը, այս մարդկանց կարծիքով, պիտի ծառայեն միայն այդպիսի՞ նպատակի: Եվ ահա նրանք հարկադրեցին իրեն՝ նետել նրանց այդ հույսը, ինչպես ոսկորը՝ շանը, որպեսզի նրանց ազատի աղքատության երկյուղից: Այսպես ահա՝ առե՛ք ձեզ: Հույս կա՛... կա՛... կա՛...

Եվ Նինին ձեռքերով ծածկեց դեմքն ու, շնչահեղձ լինելով, բարձր հեծկլտաց:

Ֆլամինիո Սալվոն մեծ դժվարությամբ վերծանեց իր քույր Ադելաիդայի նամակը. նրա խզբզոցները միշտ էլ անընթեռնելի են եղել՝ և՛ ձեռագրի, և՛ ուղղագրական սխալների պատճառով, բայց այդ նամակն արդեն այնպիսի տեսք ուներ, կարծես թղթի վրա մոլեգնորեն ճանկռտել էին հավի տոտերը: Այն ամբողջովին օգնության ճիչ էր՝ լի սպառնալիքներով, որոնք ընդմիջվում էին նզովքներով ու հուսահատական աղաղակներով: Սալվոն քրոջը պատասխանեց կարճ, հանգիստ, թե շուտով կգա Կոլիմբետրա նրան տեսնելու, իսկ այժմ քույրը պետք է իրեն հանդարտ պահի, ինչպես վայել է նրա տարիքի ու դիրքի կնոջը: Սառն մի ժպիտ նշմարվեց նրա շրթունքներին, երբ նա նայում էր կարդացած թերթիկին, որ իրեն պատճառեց ևս մի անախորժություն: Նա հանդարտորեն ծալեց այն և սկսեց պատռել լայնությամբ ու երկարությամբ, վերածեց մանր-մանր կտորների՝ չմտածելով այն մասին, թե ինչ է անում, կարծես անզգայանալով իր զայրալից անձկության մեջ. ի վերջո նա նայեց գրասեղանին, որտեղ ընկած էր այն, ինչի վերածել էին նրա մատները նամակը՝ թղթի մի կույտ մանրիկ կտորներ: Ի՞նչ իմանաս, գուցե այդ թղթի թերթիկն էլ էր տառապում, երբ ինքը պատռում էր այն՝ վերածելով մանրիկ կտորների: Նա թեթև ցավ էր զգում ցուցամատի ու բթամատի ծայրերում, որ այնպես համառորեն զբաղվել էին այդ անգիտակից ավերումով. դրանք գործել էին իրենք իրենց, ոչնչացրել էին հանուն ոչնչացման: Ա՛խ, եթե կարելի լիներ առանց այդ մասին մտածելու այդպես ծվեն-ծվեն անել իր ամբողջ կյանքը. չորստակ ծալել

վրան հիմարություններ գրված կեղտոտ թերթիկի նման և պատռել լայնությամբ ու երկարությամբ՝ տասը, քսան, երեսուն անգամ, դանդաղ, ծվեն առ ծվեն:

Նա փչեց, և թղթի այդ մանրիկ կտորտանքները այս ու այն կողմ թռան գրասեղանի վրա և հատակին, հետո նա վեր կացավ: Պատշգամբի ապակիների միջով նայեց դաշտերի միշտ սովորական ընդարձակությանը, Պորտո-Էմպեդոկլեի երկու հեռավոր ծովապատնեշներին, որ նման էին երկու ձեռքերի՝ պարզված այնտեղ՝ արևմուտքում, ծովի հեռուներում, խարիսխ գցած նավերի մուգ բծերին. պատկերացրեց, թե իր մոտ ծառայող ինչքան մարդիկ անդադրում վխտում են այնտեղ՝ նավերը բարձելով իր հանքերի ծծումբը, որ դիզված էր ափին, և զգաց, թե ինչպես են իրեն տանջում բոլոր թախծալի մտքերը՝ այդ ամբողջ իրարանցումը տեսնելիս: Հիմա այդ ամենը պետք էր ոչ թե իրեն, այլ միայն նրանց, ովքեր այնտեղ իրենց համար միջոցներ էին ձեռք բերում բոլոր կենսական պահանջմունքները բավարարելու և պայքարելու համար դժբախտությունների ու տխրությունների դեմ, որոնցից հյուսված է ո՛չ միայն նրանց, այլև մյուս բոլոր մարդկանց կյանքը: Եվ նա մտածեց այն մասին, որ ինքը՝ կուշտ ու հոգնած, կշտությունից սրտախառնուք զգալով և հոգնությունից անընդունակ շարժվելու, նստած է այստեղ՝ կարծես վճռելով որպես կերակուր տրվել բոլոր անհանգիստ քաղցած մարդկանց, որոնց նկատմամբ, ինքը, սակայն, բացարձակապես անտարբեր է: Բայց մի՞թե ինքը կարող էր խանգարել դրան: Իր գործը, իր ամբողջ կյանքի գործը, կարծես իր կամքից անկախ, աճել էր և հիմա այն գոյություն ուներ ուրիշների համար: Մի՞թե կարող էին շուրջը տարածված այդ դաշտերը խանգարել մարդկանց՝ փորել իրենց, փխրեցնել գութանով, ծառեր տնկել և պտուղներ քաղել: Այդպես էր հիմա նաև իր վիճակը: Եվ, ինչպես հողը, ինքը ոչ մի ուրախություն չէր զգում աշխատանքից, որ իր շնորհիվ անում էին ուրիշները՝ քաղելով նրա պտուղները. և այդ ուրիշները, ինչքան էլ որ նրանցից քայլեին իր վրայով, չէին կարող հաղորդակցվել իր հետ, թափանցել իր էության մեջ, վերացնել իր մենակությունը, որ հիմա ձեռք էր բերել քարի անզգայություն: Այդ ամենից նա միայն անասելի հոգնություն էր զգում, որ նրա մեջ ճնշում էր նույնիսկ ազատվելու ձգտումը, և նա ուժ էր ունենում միայն այն բանի համար, որ բնազդաբար շարժի մատները՝ ա՛յ, ինչպես հիմա, չարիք պատճառելով թղթի թերթիկին: Բայց հիմա բոլոր իրերը նրա համար ավելի արժեք չունեին, քան այդ թերթիկը, և թող մատներն իրենք, թեկուզև միայն մատներն իրենք իրենց, շարունակեին ինչ-որ բան անել, քանի որ նրանց շարժում էր անձկությունը: Իսկ եթե դրանք նույնիսկ գազազեին և դառնային նրա դեմ, նա, միևնո՛ւյն է, թույլ կտար դրանց անելու՝ ինչ կամենան:

Բայց դա այդպե՞ս էր արդյոք: Նա արդյոք չէ՞ր ձևանում, որ իր մատները բնազդաբար պատռեցին քրոջ նամակը, նա չէր ձգտում արդյոք ձեռք բերելու ինչ-որ իրավունք՝ ասելու ինքն իրեն, որ, Ջիրջենտի վերադառնալով, ճիշտ այդպես անգիտակցաբար պատռեց մի քանի ուրիշ նամակներ՝ հենց որ դրանք տեսավ գրասեղանի գզրոցներում կամ բաժանմունքներով դարակում, որ դրված էր գրասեղանի առաջ: Ուրիշ նամակներ, որոնց տակ Նիկոլետա Կապոլինոյի ստորագրությունն էր:

Ո՛չ, ո՛չ. Աուրելիո Կոստայի և Նիկոլետա Կապոլինոյի պատկերները երբեք չէին հայտնվում նրա հայացքի առաջ այնպես, որ նա չկարողանար վանել դրանք սառը ժպիտով բերելով իր տրամաբանական փաստարկները և ապացուցել, որ նրանք հենց փաստարկներ չունեն, որ իրավունք տան հալածելու իրեն խղճի խայթերով: Սակայն այդ հալածանքը առավել ևս գրգռում էր նրան, որ չէր հայտնվում գիտակցության մակերեսին: Իսկ այն չէր հայտնվում անվիճելի, հիմնավոր, շիրմաքարի նման ծանր պատճառով. այն պատճառով, որ նրանք ինքները՝ մեկը կրքից կուրացած, մյուսը իր՝ խիստ անձնական մղումներով, գնացին անկասկած մահի:

Եվ այնուամենայնիվ... Այնուամենայնիվ, չնայած այդ պատճառին, որը կարծես խաչ էր քաշել նրանց վրա և նրանց չէր թողնում կանգնել մտքի հայացքի առաջ, նրանք ինչ-որ ձևով, որ ինքը չէր կարող որոշել, ոչ այն է, որ... ներկա էին, ո՛չ, բնավ էլ ներկա չէին, ընդհակառակը, համառորեն բացակայում էին, բայց հենց իրենց այդ բացակայությամբ հալածում էին իրեն: Նրանք երկուսն էլ այն կողմում էին, այնտեղ, որտեղ բանականությունը կորցրած Դիանելլան էր: Սալվոն նրանց չէր տեսնում, բայց զգում էր աղջկա իմաստից զուրկ խոսքերում,

իմաստից զուրկ հայացքներում ու ժպիտներում: Իսկ այդ ժամանակ, կարծես նրան տիրող դաժանացման ամենախորքերից, անզսպելիորեն շրթունքներին էին մոտենում իմաստից զուրկ բառեր, որոնց մասին նա չէր էլ մտածել. սարսափելի, անորոշ բառեր, որ փոխում էին նրա դեմքի արտահայտությունը՝ այն նշանակությանը համապատասխան, որ դրանք ունեին կարծես իրենք իրենց՝ նրա գիտակցությունից դուրս և առանց որևէ կապի տվյալ պահի նրա վիճակի հետ: Ահա՛ այդպես և այդ օրը, կարծես ենթարկվելով իր շինծու անգիտակցականությանը, նա, պատռելով քրոջ նամակը, ճիշտ հենց այդպիսի ձևով սկսեց արտասանել բառեր, որ նրա լեզվից պոկվում էին մի տեսակ մեքենաբար:

— Այն, ինչ պետք կգա... այն, ինչ պետք կգա...

Կամ էլ գուցե նա, ի վերջո, որոշակի մտքի էր վերածել անգիտակցականության իր խաղը՝ պարզ զգալով, որ դա խաղ է:

— Այն, ինչ պետք կգա... հենց այդպե՞ս: Ես պետք է վառե՞մ սիգարը: Ինձ պետք կգա լուցկին: Ահա՛ սիգարը... ահա՛ լուցկին. ինքնին դրանք երկու տարբեր իրեր են, բայց ստեղծված են իմ ծխելու պահանջի համար. . . Սկզբում վառում եմ մեկը, հետո՝ մյուսը, և երկուսն էլ ոչնչանում են... Ինչքան լուցկի եմ ես վառել: Չափազանց շատ: Եվ իմ բոլոր գործերը ծուխ դարձան: Վատ է, որ ես չհասա նպատակիս... Բայց ես ուզում էի հաջող ամուսնացնել աղջկաս, որ իմ բոլոր ջանքերը, իմ ամբողջ պայքարը պսակվեին. . . այո՛, պսակվեին թագով... գեղեցիկ, իշխանական... Իշխանական թագ: Ծո՞ւխ : Սնափառությո՞ւն: Ի՞նչ արած, գոնե դա փոխհատուցում կլիներ իմ տղայի մահվան համար: Սնափառություն, իհա՛րկե, քանի որ բախտը կամեցավ խլել ինձանից ամեն մի մղում՝ ձգտելու ավելի կարևոր բաների և թողեց ինձ միայն խեղճ աղջկան, որի ամբողջ մանկությունը մռայլված էր մոր խելագարությամբ: Իսկ հիմա... հիմա գուցե ես պետք գամ սիգար վառելու համար...

Այո՛, այդպես էլ եղել է: Մի՞թե նա իր տուն չթողեց այդ շատ հաճելի պարզամիտ պատանուն՝ դը Վինչենտիս որդուն: Եվ նրա առաջ դրեց իր աղջկան՝ այնպես, փորձի համար: Եվ եթե այդ պատանին բուժի աղջկան իր գեղեցիկ, նշաձև, թավիշե աչքերով, իր քնքուշ, կանացի վարքագծով, ապա դոն Յակոն, նստած այստեղ՝ այս գրասեղանի մոտ, որպես տեր ու պարոն, մի քանի տարում մեկը մյուսի ետևից քամուն կտա նրա բոլոր բանկային տոմսերը, ռենտան, ծծմբահանքերը, և՛ հողերը, և՛ տունը, և՛ արհեստանոցները:

— Այն, ինչ պետք կգա... այն, ինչ պետք կգա...

Եվ այստեղ դեռ իր գանգատներով ձանձրացնում է քույրը՝ Ադելաիդան, այսպիսի ժամանակ՝ դա արդեն չափազանց է: Ի՞նչ է ուզում նա իրենից: Ինչո՞ւ չի կարողանում տեղը նստել: Փշե՞ր կան այնտեղ: Ա՛խ, հոգյակս: Նա ամուսնուց պահանջում է վարդեր: Նա այնտեղ մշտական «զինվորական» թիկնապահ խումբ ունի, նրան պաշտպանում են Բուրբոնյան տան թագավորների պատկերները. խնդա ու հրճվիր... Ա՛յ, ես լինեի նրա տեղը:

Հիմա, երբ կյանքից չքացել էր ամեն մի նպատակ, միայն միտքն այն մասին, որ նորից պիտի տեսնի դոն Իպոլիտոյին ու խոսի նրա հետ, անասելի ծանր էր: Ի՞նչ կարող է հակադրել իր հոգին ցամաքած, անպաշտպան մնացած, հուսահատված, պատրանքների ամենավերջին ցոլքից զրկված այդ մարդուն՝ այդպես զուսպ ու վշտացած, զարդարված այդպիսի վեհանձն արժանապատվությամբ: Հիմա նրան անհավատալի էր թվում, որ ինքը՝ Ֆլամինիո Սալվոն, լրջորեն կարող էր այդպիսի ուղի ընտրել իր նպատակներին հասնելու համար... Խե՛ղճ Ադելաիդա: Նա էլ միջոց էր... Բայց, ի վերջո, բավակա՛ն է: Վիլլան շքեղ է, դիրքը՝ նախանձելի: Ցուցաբերելով մի քիչ համբերություն ու բարի կամք, նա կարող է շատ լավ հանդուրժել ձանձրալի, իր համար չստեղծված մարդուն:

Այդպիսի հոգեվիճակում Սալվոն երկու օր անց կառքով գնաց Կոլիմբետրա: Ժպիտը, որ երևաց նրա շրթունքներին ներս մտնելիս, երբ նրան պատիվ տվեցին իշխանական գվարդիայի զինվորները, որ դեռ զինվորական համազգեստով էին, բայց առանց զենքի, այդպես էլ չիջավ նրա դեմքից ամբողջ այցելության ընթացքում: Արտաքին նախասրահի սյուների միջև նա ժպտալով լսեց ձիգ կանգնած կապիտան Շարալլայի զեկույցը, որ զենքերը,

սինյոր, իշխանություններին չեն հանձնել, բայց զգուշությունից թաքցրել են. ժպտալով լսեց Լիբորիոյի առաջարկը՝ տեղավորվել հյուրասենյակում, որտեղ քիչ անց հանկարծական փոթորկի նման ներխուժեց քույրը՝ Ադելաիդան և, լալով, նրա գլխին հարցեր տեղաց Դիանելլայի մասին:

— Բայց... նա բուժվում է սիրով,— պատասխանեց Սալվոն քրոջը:

Եվ դարձյալ ժպտաց՝ տեսնելով կատաղի արտահայտությունը, որ տվեց դեմքին շշմած քույրը՝ ի պատասխան իր հանգիստ խոսքերին:

— Դու ծիծաղո՞ւմ ես: Ուրեմն նա կարո՞ղ է առողջանալ:

— Առողջանալ... Հուսա՛նք: Բուժումը շատ լավն է...

Նա շարունակում էր ժպտալ և՛ այն ժամանակ, երբ դոննա Ադելաիդան կատաղի պոռթկումով հայհոյանքներ էր տեղում նրա վրա, և երբ նրա առաջ հեղում էր իր բոլոր վշտերը, տառապանքներն ու բողոքներն ամուսնուց, որը ծաղրուծանակի է ենթարկել կնոջը և «թքել է երեսին»:

— Բավակա՛ն է, Ֆլամինիո,— ի վերջո հայտարարեց քույրը՝ տեսնելով, որ նա շարունակում է ժպտալ:— Բավակա՛ն է: Կվերջանա նրանով, որ ես իսկապես խենթություն կանեմ:

Սալվոն որոշ ժամանակ նայեց նրան և հետո, ձեռքերը տարածելով, ասաց.

— Ինչո՞ւ: Ների՛ր, բայց քո տեսքը հրաշալի է:

Նրա այս խոսքերը լսելով, քույրը սենյակից դուրս թռավ այնպես, կարծես ուզում էր անհապաղ ի կատար ածել իր սպառնալիքը:

Եվ այդ ժամանակ՝ սպասելով, թե երբ դուրս կգա իշխանը, Սալվոն ժպտում էր Նեապոլի ու Սիցիլիայի երկու թագավորներին, որոնք խիստ լրջորեն նայում էին նրան բարձր պատերից:

Դոն Իպոլիտոն Հյուրասենյակ մտավ չափազանց մռայլ ու խիստ մտահոգված որդու ճակատագրով, որի մասին տեղեկություն չուներ, և նույնպես տրամադրված չէր այդ հանդիպումին, որովհետև եթե այն կարող է հասցնել որևէ բարեհաջող արդյունքի, ապա միայն սկանդալից հետո, դառն ու իրենց գռեհկությամբ անտանելի բացատրություններից հետո: Բայց նրա դեմքը փոքր-ինչ պարզվեց, երբ տեսավ աներձագի դեմքի ժպիտը: Նա այդ ժպիտը հասկացավ այն իմաստով, որ իրենք՝ երկու տղամարդիկ, չեն կարող և չպետք է որևէ նշանակության տան կնոջ էժան արցունքներին, անցողիկ քմահաճույքներին, որոնք իրենց այրական վեհանձնությունը կարող է և պետք է հեշտությամբ ների:

Եվ դոն Իպոլիտոն, սեղմելով աներձագի ձեռքը, նույնպես ժպտաց: Նա որոշ տխրությամբ և շարունակելով ժպտալ, սկսեց հանգիստ, այրական գերազանցության տոնով խոսել նրա հետ այն մասին, թե իր համար որքան տհաճ են իր և կնոջ միջև ծագած տարաձայնությունները... որովհետև մինչև հիմա. այո՛, մինչև հիմա մի տեսակ համերաշխություն չի հաստատվում իրենց զգացմունքներում, և կինը ոչ մի կերպ չի ուզում հասկանալ այն պատճառները, որոնք...

— Թողե՛ք, իշխան,— փորձեց ընդհատել նրան Սալվոն:

— Ո՛չ, ո՛չ,— համառորեն շարունակեց դոն Իպոլիտոն:— Որովհետև ես խորապես հասկանում եմ այն զգացմունքները, որոնք նրան դրդում են ինձանից խնդրելու այն, ինչ ես չեմ կարող թույլ տալ: Հավատացե՛ք ինձ, ես ամբողջ սրտով բաժանում եմ ձեր վիշտը և. . .

— Բայց, մնացած ամեն ինչից բացի, նրա ներկայությունը մեզ մոտ միանգամայն անօգուտ կլիներ,— ասաց Սալվոն, որպեսզի ընդհատի այդ խոսակցությունը:

Եվ երկուսն էլ մեծագույն թեթևացմամբ սկսեցին խոսել ուրիշ բանի մասին, այսինքն՝ ընթացիկ պահի դրամատիկական իրադարձությունների մասին: Եվ միայն այդ ժամանակ

իշխանը փոքր-ինչ շփոթվեց այն բանից, որ աներձագի շրթունքներից այդպես էլ չչքացավ ժպիտը՝ նույնիսկ այն դեպքում, երբ նա բուռն կերպով իր վրդովմունքն էր արտահայտում կառավարության ձեռնարկած միջոցների դեմ, որոնք վիրավորական էին սիցիլիացիների համար, և հասարակ ժողովրդի հանդգնության դեմ: Ինչպիսին կլիներ նրա զարմանքը, եթե հանկարծ, ընդհատելով իր խոսքը, հարցներ Ֆլամինիո Սալվոյին, թե ինչո՞ւ է նա շարունակում ժպտալ, և, հավանաբար, լսեր այսպիսի պատասխան.

— Ինչո՞ւ: Ա՛խ... Որովհետև այս պահին մտածում էի, որ, ի լրումն իր բոլոր արժանիքներին, Կոլիմբետրան նաև մոտիկ է գերեզմանոցին. այսպիսով, երբ դուք ոչ հեռավոր ապագայում կմեռնեք, կունենաք նաև այն բացառիկ առավելությունը, որ ձեզ կթաղեն այստեղից երկու քայլ հեռու, և, նույնիսկ հանգուցյալ լինելով, դուք հարկ չեք ունենա անցնել քաղաքի միջով:

Բայց այդ ժամանակ հիշեց, որ իշխանը հրամայել է հենց այստեղ՝ կալվածքում, նարնջենիների և խնձորենիների պուրակում, արհեստական լճակի մոտ, որ անուն էր տվել կալվածքին, գերեզմանաբլուր շինել՝ Տերոնյան բլրի նման, և Սալվոյի մեջ սուր ցանկություն առաջացավ՝ գնալ տեսնել այն: Հենց որ հնարավորություն ստեղծվեց, նա ընդհատեց փեսայի խոսքը և առաջարկեց գնալ, զբոսնել պուրակում:

Դոննա Աղելաիդան այդ ժամանակն օգտագործեց, որպեսզի Պերտիկինոյին շտապ ուղարկի Ջիրջենտի՝ իր գրությունը հանձնելու համար մեծարգո պատգամավոր Ինյացիո Կապոլինոյին՝ «Ս. Հ. Ձ.» (սեփական հարգելի ձեռքը):

Երբ երեկոյան կողմ Ֆլամինիո Սալվոն տուն վերադարձավ, ապա, բացելով այն սենյակի դուռը, որտեղ սովորաբար լինում էր Դիանելլան՝ պառավ տնային դաստիարակչուհու և հիվանդապահուհու ընկերակցությամբ, նա զարմանքով տեսավ աղջկան, որ գրկել էր Նինի դը Վինչենտիսի վիզը. պատանու ուսի ետևից, գզգզված մազերի տակ հազիվ էին երևում Դիանելայի ուրախ, երջանկությունից փայլող աչքերը և երկու ձեռքերը՝ միացած Նինիի վզի շուրջը:

— Դիանելլա՛... Դիանելլա՛ ...— ձայն տվեց հայրն աղջկան՝ վախով ու հույսով. գուցե հանկարծ նա ապաքինվե՞լ է:

Բայց Նինի դը Վինչենտիսը դժվարությամբ շրջեց գլուխը, և Սալվոն տեսավ չարչարող տառապանքից ծռմռված նրա դեմքը և լսեց անհույս պատասխանը.

— Նա ինձ կոչում է Աուրելիո...

Գլուխ VIII

Վերադառնալով Հռոմ կատարած ուղևորությունից, որից նա հույս ուներ Վալսանիա բերել իր կյանքի ամբողջ մնացորդի համար այնքան ուրախություն, լույս և հերոսական տեսիլքներ, և քաղաքում այցելելով մեռնող դոննա Կատերինա Լաուրենտանոյին, Մաուրո Մորտարան տուն հասավ խորին վհատությամբ. նա նույնիսկ չէր համարձակվում շուրջը նայել, կարծես վախենում էր, որ իր վրա կծիծաղեն ծառերը, որոնց նա այսքան տարի պատմել էր իր արկածները, խոսել այն վեհության ու հզորության մասին, որ ձեռք էր բերել հայրենիքը դավադրությունների, աքսորի ու պատերազմի իր հին ընկերների շնորհիվ: Նա թաքնվեց առաջին հարկի իր սենյակում, ինչպես մահացու վիրավորված գազանն իր որջում: Իզուր էր դոն Կոսմոն, որ լի էր անսփոփ խղճահարությամբ բոլոր նրանց նկատմամբ, ովքեր լիովին հասկանալի պատճառով մերժում էին բոլոր ցավերից բուժվելու իր գտած միջոցը, փորձում սթափեցնել նրան, ստիպել խոսել: Ի պատասխան դոն Կոսմոյի համառ խնդրանքներին՝ տուն գալ գոնե ճաշելու և ընթրելու, Մաուրո Մորտարան միայն ուսերն էր թոթվում:

— Ինձ հանգիստ թողեք, գրո՛ղը տանի:

— Իսկ ի՞նչ ես ուտում:

— Բռունցքներս եմ կրծում: Հեռացե՛ք:

Գալու հաջորդ օրը նա էլ ավելի կոպիտ վարվեց աղավնիների հետ, որոնց նրա բացակայության ժամանակ կերակրում էր երեցփոխ Վաննի դի Նինֆան. Մաուրոն երկու անգամ բարձր ծափ զարկեց, և աղավնիներն աղմուկով թռան տարբեր կողմեր: Բոլորովին էլ ավելի սրտագին չընդունեց նա երեք շների ողջույնները, որոնք նրան տեսնելով քիչ էր մնում խենթանային ուրախությունից: Սենյակում, որ տոգորված էր ինչ-որ գազանին հատուկ հոտով, հին իրերի խաղաղ անշարժությունը (իրեր, որոնք կարծես սպասում էին, որ նա նորից իրենց մեջ վերսկսի իր սովորական կյանքը) նրա մեջ հարուցեց մեծագույն անբավականություն: Նա հաճույքով երկու ձեռքով կվերցներ աննկյունում ծալած ներքնակը և դուրս կնետեր տախտակների ու իշոտնուկների հետ, որ պահում էին ներքնակը, դուրս կնետեր ջարդված մամլիչը ձիթապտղի համար, աթոռները, և՛ արկղերը, և՛ թամբերը, և՛ պայուսակները: Նրա համար հաճելի էր տեսնել միայն ծամած ծխախոտից դեղին թքի հետքերը պատին, թուք, որ նա սովորաբար անկողնում պառկած ուղարկում էր հայրենիքի թշնամիների՝ սանֆեդիստների Բուրբոնների կողմնակիցների երեսին:

Մեկ անգամ չէ, որ նա նորից պատրաստ էր հանձնվելու հին հիշողությունների կախարդանքին, մեկ անգամ չէ, որ ինքնամոռացության րոպեին խաղողի վազերի երկար շարքերը, որ երևում էին բաց դռնից, և արդեն կանաչող ծառերը վերակենդանացնում էին նրա առաջ հեռավոր տեսիլքներն այն աշխարհի, որով նա դեռ ոչ այնքան վաղուց շրջում էր պայծառ օրերին՝ հպարտանալով իր ձեռքերի գործերով, ինչպես ինքը՝ տեր աստված, գոհունակ շոյելով մորուքը: Ամեն անգամ, երբ նրա հոգին, հմայված այդ տեսիլքով, պատրաստ էր զիջելու, հանկարծ սենյակ թռած որևէ ձիաբոռի սուր ու մռայլ բզզոցը նրան բռնի կերպով վերադարձնում էր իրականությանը, ոչնչացնում հմայքը և աղավաղում տեսիլքը:

Ի՞նչ անել: Ի՞նչ անել: Ինչպե՞ս ապրել հիմա այս վայրերում, որոնք վկա են եղել իր առաջվա խանդավառությանը: Ինչպե՞ս զբաղվել խաղաղ գյուղատնտեսական աշխատանքներով, երբ ամբողջ Սիցիլիան խռովահույզ է, և ինչքան ստոր դավաճաններ են ոտքի ելել, որ կործանեն ու ոչնչացնեն ավագ սերնդի գործը: Շատ ու շատ տարիների ընթացքում նրա բոլոր մտքերը, բոլոր երազանքները տոգորված են եղել մեծ գործի հիշողություններով և նրա բարեհաջող ավարտի ուրախությամբ: Ինչպե՞ս պահպանել հանգստությունը, երբ մտածում ես, որ գործը նորից սպառնալիքի տակ է և կարող է կործանվել. Ըմբոստանալով հին, խաղաղ սովորություններին տրվելու գայթակղության դեմ, նա իր պարզունակ տրամաբանությամբ գտնում էր, որ սուրբ գործն ավարտելու համար մեդալներով պարգևատրված բոլոր հայրենասերներին պատվո պարտքը պարտադրում է նորից ելնելու նրա պաշտպանության համար:

— Հին ազգային գվարդիա՛: Հին գվարդիա՛: Բոլոր վետերաններ՝ հավաքի՛:

Ի վերջո հոգեկան խռովքի մոլուցքի պահին նա վազեց կույրի նման ապաստարան՝ խորհուրդ փնտրելու գեներալի կամերոնեում, որտեղ մինչև հիմա սիրտ չէր անում նույնիսկ նայել: Հազիվ սենյակ մտնելով, նա բուռն կերպով հեկեկաց և, չհամարձակվելով բացել պատուհանների ու պատշգամբների ծածկոցափեղկերը, որ սիրով ու խնամքով փակել էր մեկնելուց առաջ, ձեռքերը սեղմելով երեսին, երկար լաց եղավ մթության մեջ՝ հին, խարխուլ, փոշոտ բազմոցի վրա: Այստեղ՝ կամերոնեում, ծեր գեներալի շուրջը հավաքվող, քառասունութ թվականի հին առյուծ-դավադիրների հոգեկան թրթիռն ու հուզումը հետզհետե վերածնվեցին նրա մեջ և ստիպեցին նրան ամաչել իր արցունքների համար, այդ առյուծների ստվերները ահեղ վրդովմունքով ծառացան նրա շուրջը և պահանջեցին, որ նա ողջ մնացած մյուս վետերանների հետ նետվի (այո՛, նետվի, թեև արդեն ծեր է) կործանվող հայրենիքին օգնության: Կամերոնեի մութ աննկյունում առաջվա նման աչքի էր զարնում ընձառյուծի տխուր խրտվիլակը, որ կորցրել էր մի աչքը, բայց նրան չհաջողվեց Մաուրոյի ուշադրությունը դարձնել ոստայնի վրա, որ անհամար թելերով նրան կապել էր պատին, փոշու շերտի վրա, որ նստած էր նրա մորթուն, որը հիմա խայտաբղետ էր դարձել բորբոսի բծերով: Երբ Մաուրոն դուրս եկավ, արցունքներից ուռած ու կարմրած նրա աչքերը հաճում

էին, և նա քիչ էր մնում նետվեր դոն Կոսմոյի վրա, որը, միջանցքով անցնելիս՝ տեսնելով նրան այդպիսի վիճակում, նախ կանգնեց զարմացած, իսկ հետո փորձեց պահել նրան ու հանգստացնել:

— Եթե չիմանայի, որ ձեր մայրը սուրբ էր, ես կասեի, որ դուք ձեր հոր որդին չեք,— գոռաց Մաուրոն բռունցքները գրեթե դիպցնելով նրա երեսին:

Դոն Կոսմոն չբարկացավ. նա միայն տխուր ժպտաց, կարեկցանքով օրորեց գլուխը և հարցրեց, թե այդ տարիքում ո՞ւր է ուզում գնալ, ո՞ւմ դեմ է ուզում կռվել: Բայց Մաուրոն, ոչինչ չպատասխանելով, հեռացավ: Եվ, իսկապես, այնտեղ՝ ցածում, իր կիսանկուղային սենյակում սկսեց պատրաստվել գնալու: Նրա՞ տարիքում: Սուրբ տիրամայր, ի՞նչ տարիք: Մի՞թե կարելի է տարիքի մասին ասել նրան: Ո՞ւր էր մտադրվել գնալու: Այդ ինքն էլ չգիտեր: Զինված, ամեն վտանգի պատրաստ՝ նա ուզում էր բարձրանալ Ջիրջենտի, որպեսզի խորհրդակցի ու պայմանավորվի մյուս վետերանների՝ Մարկո Սալայի, Չերաուրոյի, Տրիգոնայի, Մատտիա Գանջիի հետ, որոնք, եթե նրանց երակներում արյուն է մնացել, պետք է, իհա՛րկե, ինչպես և ինքը, զգային, որ ժամանակն է զինվելու և շտապելու ընդհանուր գործի պաշտպանությանը: Եթե թշնամիները միավորվել են, համախմբվել միություններում, ինչո՞ւ չեն կարող միավորվել, իրենց միությունն ստեղծել և իրենք՝ հին գվարդիան: Զինվորները քիչ էին, հարկավոր էր նրանց աջակցել, ուժով ցրել այդ միությունները և, եթե հարկ լինի, կրակոցներով քշել բոլոր այդ շներին: Հասկանալի է, որ այդ ամենի հիմքում ընկած է տերտերների սադրանքը, ինչպես նաև Ֆրանսիան, և Ֆրանսիան, ասում են, գաղտնի փող է ուղարկել, որ բաժան-բաժան անեն Իտալիան ու Հռոմը, վերադարձնեն պապին: Եվ, ո՞վ գիտի, եթե հեղափոխություն սկսվի, մի՞թե ֆրանսիացիները չեն ցանկանա Թունիսից զորք ափ հանել Սիցիլիա: Էլ ինչպե՞ս մնալ այստեղ ձեռքերը ծալած և նույնիսկ չփորձել պաշտպանվել, նույնիսկ չհանդիպել առաջվա ընկերներին և չասել նրանց. «Ես պատրաստ եմ: Հարկավոր է հանդես գալ, հանդես գալ անհապաղ»: Այլապես նրա մոլեգին ձգտումը հետզհետե կթուլանա՝ ինչպես ոստայնում խճճվելով արկածներով լեցուն նրա կյանքի բոլոր սուրբ հիշատակներում՝ դուրս բերված հին գզրոցներից և արկղիկներից, մաշված ու կարկատած պարկերից, պարաններով ամուր կապկպած թղթե դեղնած փաթեթներից: Նա կուզենար այդ ամենը մեկ-մեկ վերցնել մոլոր, շարունակ տարվելով հիշողություններով, որ կապված էին ամեն մի իրի հետ, նա զգում էր, որ գլուխը պղտորվում է, և ինքը չպիտի շարունակի: Ո՛չ, անհնար է այդպես արագ ազատվել բոլոր այդ կապանքներից: Եվ նա որոշեց իր գնալը հետաձգել մինչև հաջորդ օրը: Ամբողջ գիշերը նա անցկացրեց բաց երկնքի տակ, կարծես զառանցանքի մեջ: Ծովի ձայնը նրա համար դառնում էր գեներալի ձայնը, ծառերի ստվերները՝ Վալսանիայի անցած-գնացած դավադիրների ստվերները, և՛ ձայնը, և՛ ստվերները պահանջում էին նրա գնալը: Այո՛, վաղը, վաղը նա կգնա այդ մարդասպաններին ընդառաջ. թող նրանք հաղթեն իրեն և սպանեն. այո՛, իհա՛րկե, նա այդ է ուզում, ավելի լավ է այդպես, եթե Իտալիան նորից պիտի մասնատվի: Այլապես էլ ի՞նչ արժեք կարող են ունենալ նրա մեդալները: Հարկավոր է մեռնել հանուն դրանց և դրանց հետ: Վաղը նա կրծքին կկախի մեդալները՝ հանդիման գնալով հայրենիքի նոր թշնամիներին: Քանի որ Սիցիլիան չպիտի խայտառակված լինի, ո՛չ, ո՛չ, նա չպիտի խայտառակված լինի Իտալիայի մյուս մարզերի առաջ, որոնք միավորվել են, որ երկիրը դարձնեն ավելի մեծ ու փառավոր:

Հաջորդը օրը իր ահագին, փրչոտ փափախով, անփույթ հագնված, վրան կախկխած կապոցներ ու սուրբ հիշատակներ, մինչև ատամները զինված՝ նա մտավ դոն Կոսմոյի մոտ, որ հրաժեշտ տա: Եվ, անկասկած կգնար, եթե Լեոնարդո Կոստան, որ եկել էր Պորտո-Էմպեդոկլեից, դոն Կոսմոյի հետ միասին բոլոր ջանքերը չգործադրեր, որ ամեն կերպ պահի նրան: Որդու մահից հետո, ազատվելով Սալվոյի մոտից և նորից գործի ընդունվելով նավահանգստի կշեռքների վերակացուի աննշան ու անհաստատ պաշտոնում, Լեոնարդո Կոստան համաձայնել էր ընդունել դոն Կոսմոյի գթասիրտ առաջարկությունը՝ ամեն երեկո գալ ընթրելու և գիշերելու Վալսանիայում, ընդունել էր ավելի շուտ այն բանի համար, որ մենակ չլինի, քան ուրիշ նկատառումներով: Ճանապարհը երկար էր ու դժվար, խավարում, անլուսին երեկոներին, երկաթուղու պաստառի երկարությամբ ձգվող, խճով ծածկված

արահետով: Որդուն պատահած ողբերգությունից հետո նրան համակել էր ինչ-որ մահացու հոգնություն, որից ծանրացել էին ոտքերը, կարծես լցված լինեին կապարով: Շատ անգամներ էր նրան սպառնացել դիմացից եկող գնացքը, շատ անգամներ էր նրա մեջ ծագել գնացքի անիվների տակ նետվելու և ամեն ինչին վերջ տալու գայթակղությունը: Երբ այնտեղ՝ ծովափին, աշխատանք չէր լինում, նա արագ ետ էր վերադառնում, և նրա շնորհիվ նորությունները Վալսանիա էին հասնում առանց ուշացման: Եթե այդ օրը նա լուր չբերեր, որ Պալերմոյում ափ է հանվել մի բանակային կորպուս, որը մի ակնթարթում կջախջախի և կճնշի խռովությունը, ո՛չ նա, ո՛չ դոն Կոսմոն չէին կարող ուժով պահել Մաուրոյին: Ծերունուն էլ ավելի հանգստացրեց նոր լուրը՝ պաշարողական դրությունը հայտարարելու և զինաթափման մասին: Սակայն նրա մտքով չէր էլ անցնի, որ զենքերը հանձնելու հրամանը, ինչպես բոլորին, կարող է վերաբերել նաև իրեն և որ նա իրեն կենթարկի ձերբակալվելու վտանգին, եթե զինված գնա քաղաք, չէ որ նրա զենքն այնպիսին է, ինչպիսին զինվորներինն է, և այդ զենքը կրելու իրավունքը նրան տրված է իր մեդալներով:

Կոստայի բերած լուրերն այնպիսի տպավորություն էին գործում նրա վրա, ինչպես փոթորկից խռովված անտառի թավուտի վրա կգործի արևի և ամպերի արագ հերթագայությունը: Ամեն ինչ նրա համար մի տեսակ պարզվեց, երբ հայտնի դարձավ, որ Հռոմում բանտից ազատվել է Ռոբերտո Աուրիտին, թեև նրան ազատություն է տրվել պայմանականորեն, և, որ նրա եղբայր Ջուլիոն իր հետ Հռոմ է տարել քրոջն ու զարմիկին. և նա դարձյալ մռայլվեց անսպասելի լուրից, որ Լանդինոն՝ գեներալի թոռը, որ կրում է պապի անունը, ապստամբության առաջնորդներից մեկն է, և երբ պաշարողական դրություն է հայտարարվել, նա փախել է Պալերմոյից, որ խուսափի ձերբակալությունից: Դրանից հետո ամեն անգամ՝ տեսնելով, ինչպես հոգնած, շնչասպառ Կոստան վերադառնում է Պորտո-Էմպեդոկլեից, Մաուրոն նայում էր նրան մռայլ ու խոժոռված: Նորություններն իմանալու կրքոտ ցանկությունը նրա մեջ կատաղի պայքարի մեջ էր մտնում զայրալից վախի հետ՝ հանկարծ այդ մարդը, ինքն էլ հաշիվ չտալով իրեն այդ բանում, չստիպի իրեն զինվել ու գնալ Վալսանիայից: Մի անգամ արդեն նա քիչ էր մնում գնար, բայց փորձից գիտեր, թե իր համար ինչքան դժվար կլինի կտրվել այդ հողից, բոլոր հիշողություններից, որոնք իրեն կապում էին այդ հողի հետ, ինչքան դժվար կլինի թողնել իր պահակետը կամերոնեի դռան առաջ, իր խաղողի այգին, իր աղավնիները, ծառերը, որ այսքան ժամանակ ունկնդրել էին իր դատողություններին:

Բայց Լեոնարդո Կոստան ծերունու մի կատաղի բռնկումից հետո հիմա լավ գիտեր, թե ինչպիսի նորություններ կարելի է հայտնել Մաուրոյին և ինչպիսիք՝ դոն Կոսմոյին ու դոննա Սառա Ալայմոյին: Չէ՞ որ այն անգամ նա համարձակվել էր պատմել իշխանի որդու մասին՝ ենթադրելով, թե Մաուրոն գիտի սոցիալիստների հետ Լանդոյի կապի մասին և ուրախ կլինի, որ նրան հաջողվել է փախչել:

Վերջին նորությունները, ամենավերջինները Կոստան հայտնեց մի անգամ երեկոյան, դժոխային եղանակին, կայծակի բռնկումների և անձրևի ու քամու աղմուկի տակ:

Դոննա Սառային արդեն երկու օր անկողնուն էր գամել ուժեղ մրսածությունը, և Մաուրոն, ընթրիքի սեղան բացելով, դոն Կոսմոյի հետ նստել էր ճաշասենյակում՝ սպասելով իր հյուրին, որ ուշանում էր, հավանաբար, վատ եղանակի պատճառով: Այդ սպասումը ջղայնացնում էր Մաուրոյին ոչ այնքան այն պատճառով, որ ուտել էր ցանկանում, որքան այն, որ վախենում էր, թե ընթրիքը հանկարծ անպետք դուրս կգա: Նա միշտ ամեն ինչ անում էր ջանասիրությամբ, և անցյալի մասին այն հիշողությունների մեջ, որոնք առանձնապես հաճելի էին նրան, կար և հիշողությունն այն մասին, թե անգլիացիներն ինչպես էին մատները լպստում, երբ նա խոհարար էր՝ սկզբում նավում, իսկ հետո՝ Կոստանդնուպոլսում: Դոննա Սառայի հանդեպ Մաուրոյի ատելության պատճառներից մեկն էլ հենց այն էր, որ նա բազմիցս չարախնդել է, երբ խոհարարական խորհուրդները, որ ինքը տվել է, հասցրել են ողբալի արդյունքների: Վաղուց չզբաղվելով այդ գործով և, բացի այդ, լինելով հուզված ու սեփական մտքերով տարված, Մաուրոն արդեն երկու օր համառորեն ու ծանրորեն աշխատում էր չափազանց բարդ համեմունքներ պատրաստելու վրա և թունավորում էր հյուրին ու խեղճ դոն Կոսմոյին:

— Ձեզ դո՞ւր է գալիս:

— Պարզապես մեղր է,— միշտ պատասխանում էր դոն Կոսմոն:— Վատն այն է, որ այսօր ախորժակս փակվել է:

— Իմ կարծիքով,— համարձակվեց միջամտել Կոստան,— կարծես մի քիչ պակաս է աղը:

— Օ՛, սո՛ւրբ տիրամայր,— պատասխանեց Մաուրոն,— ահա՛ ձեզ աղամանը:

Դոննա Սառան արդեն երկու օր ոչինչ չէր ուտում:

Հողմի ոռնոցի միջից, ծովի սարսափազդու թնդյունի միջից, տեղատարափի աղմուկի միջից լսվում էին նրա հազի նոպաները, գանգատներն ու բարձրաձայն արտասանած աղոթքները: Հավանաբար, ենթարկվելով կրոնական մոլուցքի պոռթկումին, նա փակվել էր իր սենյակում առ ժամանակ դոն և հրաժարվում էր կերակրից ու բուժումից: Ժամանակ Կոսմոն՝ լսելով, որ նա հազում է ավելի ու ավելի երկար, հոգատարությամբ ձայն էր տալիս նրան՝ կանգնած դռան ետևում ու հարցնում էր, թե որևէ բան չի՞ ուզում: Պատասխանի փոխարեն դոննա Սառան շնչարգելության նոպաների արանքում գոռում էր.

— Ապաշխարե՛ք, սատանաներ:

Եվ նորից սկսում էր բարձրաձայն աղոթքներ արտասանել:

Վերջապես եկավ Լեոնարդո Կոստան՝ սարսափելի տեսքով, քամուց լիովին տանջահար, ջուրն առվի նման հոսում էր նրա վերարկուից, և երեք մատ հաստությամբ ցեխը ծածկում էր սապոգները: Նա չէր կարողանում շունչը տեղը բերել, և գլուխը շարունակ կախվում էր հոգնությունից: Որպեսզի մի քիչ սրտապնդի ծերունուն, Մաուրոն նրան ստիպեց կուլ տալ մի բաժակ գինի, իսկ հրաժարվելու նրա փորձերին պատասխանեց իր սովորական բացականչությամբ.

— Օ՛, սո՛ւրբ տիրամայր, թողեք հոգ տանեմ ձեր մասին:

Դոն Կոսմոն շտապեց սենյակ տանել նրան և օգնեց շորերը փոխել՝ ստիպելով հագնել իր զգեստը, որ թեև փոքր-ինչ նեղ դուրս եկավ, բայց դրա փոխարեն չոր էր: Այդ ժամանակ Մաուրոն բացեց ընթրիքի սեղանը և գոռաց ճաշասենյակից.

— Գրողը տանի, գալի՞ս եք, թե՞ չէ:

Նկատելով, որ երկուսն էլ հայտնվեցին շփոթահար դեմքերով, Մաուրոն իսկույն անհանգստացավ և, խոժոռվելով, հարցրեց.

— Էլի ի՞նչ է պատահել այնտեղ:

Բայց ո՛չ մեկը, ո՛չ էլ մյուսը չպատասխանեցին: Դոն Կոսմոն հարցրեց Կոստային.

— Իսկ Իպոլիտո՞ն: Իպոլիտո՞ն:

— Նա քնած է եղել,— պատասխանեց Կոստան:— Գիշերվա ժամը երեքին: Նա քնած է եղել: Բայց երբ պահակախմբից մեկը, որն ստիպված էր դարպասը բացել, վազել է նրան հայտնելու...

— Դուք խոսում եք դոն Լանդինոյի՞ մասին,— այդ պահին նրան ընդհատեց Մաուրոն՝ կատաղի շարժումով խցկվելով նրանց արանքը:— Ասացե՛ք ինձ, ի՞նչ է պատահել:

— Չէ՛, ի՞նչ Լանդինո,— պատասխանեց Կոստան, և նրա դեմքին հայտնվեց մի տխուր քմծիծաղ:— Հիմա արդեն վերջին պարգևն է ստացել այն պատվարժան պարոնը, որն այստեղ մի ամբողջ ամիս թքեց ձեր երեսին: Գիտեմ, որ դուք նրանք սիրում եք այնպես, ինչպես ես:

— Սալվո՞ն:

— Այո՛:

Կոստան բարձրացրեց ոտքը, կարծես ցանկանալով աքացի տալ ընկածին, և շարունակեց.

— Նրա քույրը, իշխանի կինը այս գիշեր փախել է պատգամավոր Էսպոլինոյի հետ...

— Փախե՞լ է: Ինչպե՞ս է փախել:

— Դե, ինչպե՞ս: Գործը պարզ է. Կապոլինոն կառքով եկել է նրա ետևից, և նրանք գիշերը, ժամը երեքին գնացել են Պալերմո Պայմանավորվել են, իհա՛րկե, նախապես:

Դոն Կոսմոն, որ դեռ շշմած էր, իրեն-իրեն մռթմռթաց.

— Խե՛ղճ Իպոլիտո... խե՛ղճ Իպոլիտո...

— Այդպես էլ պետք էր նրան,— մոտ վազեց և նրա երեսին գոռաց Մաուրոն:

— Խառնվել այդպիսի ցեղի հետ,— ավելացրեց Կոստան՝ նողկանքի ծամածռությամբ:— Բայց, ի վերջո, գիտե՞ք, դոն Կոսմո: Դա գուցե վիրավորական է, ես չեմ ժխտում... Շատ մեծ սկանդալ է: Ջիրջենտիում ու ծովափին ուրիշ ոչ մի բանի մասին չեն խոսում... Բայց ճիշտն այն է... իշխանը նրա հետ չի վերաբերվել, ինչպես կնոջ հետ. ասում են՝ նրանք առանձին էին քնում... և, եթե հավատանք բամբասանքներին, ապա այդ խարդախը, իբր, նրան տարել է այնպես, ինչպիսին նա եղել է հարսանիքից առաջ... Իսկ երբ զինվորը վազել է վիլլա, որ հայտնի փախուստի մասին, և ծառան գնացել է արթնացնելու իշխանին, սա, ասում են, նույնիսկ գլուխը չի բարձրացրել բարձից և ծառային պատասխանել է. «Ախ, այդպե՞ս: Բարո՛վ գնա: Իսկ ես կվշտանամ վաղը, երբ ելնեմ անկողնուց»:

Դոն Կոսմոն մի քանի անգամ վճռականաբար՝ օրորեց գլուխը.

— Չէր կարող Իպոլիտոն այդ խոսքերն ասել:

— Իսկ ինչ վերաբերում է ինձ,— շարունակեց Կոստան՝ նստելով սեղանի մոտ և սկսելով ընթրել,— ապա ձեզ ինչպե՞ս ասեմ: Ինձ համար շատ տհաճ է իշխանի պատճառով: Բայց նրա կնոջ եղբոր խայտառակությամբ ես գոհ եմ, այնպես եմ գոհ: Ա՛խ, սինյոր դոն Կոսմո, ես չգիտեմ, թե ինչու եմ ապրում: Ես կուզենայի փրկել իմ հոգին, նրան ժամանակ տալ, որ հաղթահարի վիշտը, որպեսզի գոնե իմ մահվան ժամին նա կարողանա ներել և բարձրանալ առ աստված... Բայց ո՛չ, սինյոր դոն Կոսմո. վիշտն ավելի ուժեղ է կրծում իմ հոգին. ատելությունն աճում է իմ մեջ և օրեցօր ավելի ու ավելի է մոլեգնում, և ես ասում եմ ինձ՝ ավելի լավ չի՞ լինի սպանել նախ նրան, հետո ինձ ու վերջ դնել այս ամենին:

— Գուցե,— մռթմռթաց դոն Կոսմոն,— դուք դրանով նրան միայն նվեր կտաք:

— Ա՛յ, հենց դա է ինձ ետ պահում,— բացականչեց Կոստան:— Իսկ այդպես դա ինձ համար էլ նվեր կլիներ:

— Կերե՛ք և մի՛ լացեք,— գոռաց նրան Մաուրոն:

— Մի քիչ սպասեք դոն Մաուրո,— այդ ժամանակ ասաց Կոստան նրան՝ աշխատելով ժպտալ:— Ձեր կերակուրներում, իմ ճաշակով, մի քիչ պակաս է աղը: Մի քանի կաթիլ արցունք՝ ահա և համեմունք:

Իսկ այդ ժամանակ դոն Կոսմոն, պատառաքաղով մի կտոր միս վերցնելով ու մտախոհ զննելով այն, խոսեց ինքն իրեն.

— Ինչպես երկու մանկիկներ...

Իսկ դոննա Սառան հազի նոպաների արանքում շարունակում էր գոռալ պատի ետևից.

— Ապաշխարե՛ք, սատանանե՛ր, ապաշխարե՛ք:

Երբ արդեն ավարտել էին ընթրիքը, հանկարծ դրսից, որտեղ մոլեգնում էին քամին ու անձրևը, ծառերի ծովի չընդհատվող աղմուկի միջից լսվեց կատաղի հաչոցը շների, որոնք ամեն երեկո սպասում էին սանդուղքի աստիճաններին՝ մինչև իրենց տերը դուրս գար ընթրիքից հետո: Մաուրոն, խոժոռվելով, շտկվեց և ականջ դրեց: Այդ հաչոցը նախազգուշացնում էր, որ ինչ-որ մեկը մոտեցավ վիլլային: Բայց ո՞վ կարող էր գալ այդ ժամին, այդպիսի զարհուրելի եղանակին: Առմուտքի մոտ ինչ-որ բան գոռացին: Մաուրոն վեր թռավ, վազեց, վերցրեց հրացանը, որ դրված էր անկյունում, հետո մոտեցավ դռանը: Բացելուց առաջ նա ականջը դրեց փեղկերի արանքի ճեղքին և իսկույն էլ հասկացավ, որ վիլլա են ուզում մտնել մի քանի մարդ, որոնց վրա նետվել են շները, և որոնք գոռում են՝ պաշտպանվելով դրանցից: Նա հանգցրեց լույսը, լայն բացեց դուռը և, նշան բռնելով, սկսեց մռնչալ ուղիղ այնտեղ՝ կատաղի տեղատարափի և փոթորկալից մթության մեջ.

— Ո՞վ կա այդտեղ:

Կայծակի մռայլ բռնկումը մի կարճ ակնթարթ աղոտ լուսավորեց շուրջն ամեն ինչ: Մաուրոյին թվաց, թե տեսավ չորս-հինգ մարդու, որոնք սպառնում էին շներին, բայց բոլորովին հուսահատված՝ դանդաղ ետ էին քաշվում:

— Մաուրո՛, գրո՛ղը տանի: Անիծվա՛ծ շներ: Ա՛յ, ես հիմա կթրխկացնեմ մեկնումեկին: Արդեն երեք ժամ է՝ կանչում եմ քեզ:

— Դոն Լանդինո՞:

Եվ Մաուրոն, ամբողջովին դողալով, սանդուղքից վազեց քամու և անձրևի տակ:

— Որտե՞ղ եք դուք: Որտե՞ղ եք դուք:

Լսելով տիրոջ ձայնը, շները դադարեցին նետվել եկվորների վրա, թեև շարունակում էին հաչալ:

— Մաուրո՞:

— Այդ դո՞ւք եք,— գոռաց Մաուրոն՝ փորձելով շների փոխարեն փակել նրա ճանապարհը:— Եվ դուք գարշելի գործի ձեր այդ ընկերների հետ դեռ համարձակվո՞ւմ եք ապաստարան փնտրել այստեղ: Ես ձեզ չե՛մ ընդունում: Հեռացե՛ք: Սա ձեր պապի տունն է: Ես ձեզ չեմ ընդունում:

— Մաուրո, դու խելքդ թռցրեցի՞ր:

— Հանուն Ջերլանդո Լաուրենտանոյի՝ հեռո՛ւ այստեղից: Հեռացե՛ք: Ձեր հոր մոտ ապաստան փնտրեք և՛ դուք, և՛ ձեր ուղեկիցները, բայց ոչ այստեղ: Ես ձեզ չեմ ընդունում:

— Մաուրո՛, դու խելքդ թռցրեցի՞ր: Բա՛ց թող ինձ, — գոռաց Լանդոն՝ աշխատելով դուրս պրծնել Մաուրոյի ձեռքերից, որ ամուր բռնել էին նրա ուսերը:

Սանդղահարթակում ցոլաց մոմը, որ իսկույն էլ հանգցրեց քամին: Եվ այդ ժամանակ հնչեց դոն Կոսմոյի ձայնը, որ Կոստայի հետ դուրս վազեց սանդուղքի վրա.

— Լանդինո՛: Լանդինո՛:

— Հորեղբայր Կոսմո,— բացականչեց Լանդոն և շրջվեց ընկերների կողմը.

— Գնացի՛նք տուն: Գնացի՛նք:

— Դոն Լանդինո՛,— այդ ժամանակ ասաց Մաուրոն՝ կատաղությունից ընդհատվող ձայնով:— Մի՛ մտեք ձեր պապի վիլլան: Եթե դուք մտնեք, ես կգնամ ընդմիշտ: Շնորհակալ եղեք աստծուն, որ ձեզ կոչում են Ջերլանդո Լաուրենտանո: Միայն դա է զսպում ինձ, որ ես չգնդակահարեմ ձեզ ու այդ սրիկաներին, այդ աղբով լցված պարկերին, որ դուք քարշ եք տվել ձեզ հետ: Ախ, ուրեմն դուք ներս եք մտնում: Տե՛ր աստված, դու շանթահարիր նրանց բոլորին: Լանդո՛, ավարտեք ձեր քաջագործությունը, վերցրեք բանալին: Ես ձեզ եմ տալիս:

Եվ կամերոնեի մեծ բանալին թրխկոցով դիպավ փակվող դռանը:

— Խե՜նթ, խե՜նթ,— խավարի մեջ կրկնեցին Լանդոն, դոն Կոսմոն ու Կոստան՝ գրպաններում լուցկի փնտրելով, որ նորից վառեն լույսը՝ այն ժամանակ, երբ Լանդոյի ընկերները, այնքան ցանկալի և հիմա վերջապես գտած ապաստարանում այդպիսի ընդունելությունից շփոթահար, հազիվ շունչները տեղը բերելով, զարմացած հարցնում էին.

— Ո՞վ էր դա:

— Նա իսկապե՞ս խենթ է:

— Նրան ի՞նչ է եղել:

Երբ լույսը նորից վառվեց, երևաց, որ հինգ փախստականներին՝ Լանդոյին, Լինո Ապեսին, Բիկսիո Բրունոյին, Կատալդո Սկլաֆանիին և Ինգրաոյին, կարծես դուրս էին քաշել կեղտոտ առվից: Ամենից սարսափելին Կատալդո Սկլաֆանին էր, որի փոս ընկած այտերին, շրթունքի վրա և կզակին նորից սկսել էին մազեր աճել, կարելի էր կարծել, թե դա սաստիկ ահաբեկված, ապաքինվող հիվանդ է, որ գիշերը փախել է փոթորկի ավերած հիվանդանոցից:

Այդ ժամանակ սկսվեց փոխհրաձգության նման բարձր ու արագ խոսակցություն՝ կարճ հարցեր, հուզումնալի պատասխաններ, բացականչություններ, բարձր հառաչանքներ ու տնքոցներ. մեկը դողում էր, մեկը դոփում ոտքերով, մեկն աթոռ էր փնտրում, որ իր ամբողջ ծանրությամբ ընկնի վրան:

— Հետապնդո՞ւմ էին: Ո՛չ, ո՛չ...— Ճանաչեցի՞ն:— Գուցե:

— Ի՜նչ եք ասում, ո՛չ:— Այո՛:— Գուցե, Լանդո..

— Ոտքո՞վ: Ուրիշ էլ ինչպե՞ս:— Երեք օր:— Ջրհեղե՛ղ է: Ջրհեղե՛ղ: Բայց ինչպե՞ս, ես հարցնում եմ, առանց նախազգուշացնելու: Առանց նախազգուշացնելո՞ւ:

Այս վերջին նախադասությունը պոկվեց դոն Կոսմոյի շրթունքներից: Այս նախադասությունը կրկնելով, նա, երկու ձեռքով քորելով մորուքն այտերի վրա, քայլում էր մեկից մյուսը՝ փորձելով գլուխ հանել այդ խառնաշփոթության մեջ:

— Ես ասացի... ասացի... Այդ ինչպե՞ս... առանց նախազգուշացնելու...

Եվ ո՞վ գիտի դեռ ինչքան ժամանակ նա կկրկներ այդ, եթե վերջապես նրա գլխում միտք չծագեր, թե հարկավոր է որևէ կերպ օգնել այդ երիտասարդներին: Բայց ինչպե՞ս օգնել:

— Ա՛յ, եկեք, եկեք այստե՛ղ,— ասաց նա՝ քաշելով մերթ մեկի, մերթ մյուսի ձեռքից:— Հանվեցե՛ք, հենց հիմա... Ինձ մոտ զգեստները կբավականացնեն... կբավականացնեն բոլորիդ... այստեղ, այստեղ, իմ սենյակում... սնդուկում, գնա՛նք ինձ հետ:

Բիկսիո Բրունոն և Ինգրաոն, որ պակաս հյուծված ու հոգնած էին, եռանդուն ընդդիմանում էին այդ տարօրինակ համառությանը:

— Ո՛չ: Թողե՛ք ինձ,— բացականչեց առաջինը:— Չի կարելի ժամանակ կորցնել ... Պորտո-Էմպեդոկլեն հեռո՞ւ է այստեղից:

— Այո՛, այո՛,— բացականչեց Լանդոն՝ դիմելով հորեղբորը:— Որևէ մեկը... որևէ հավատարիմ մարդ... հարկավոր է նրան հենց հիմա ուղարկել Պորտո-Էմպեդոկլե, որ նավակ վարձի... ձկնորսական մեծ նավակ...

— Ի սեր աստծո, շուտ արեք, դեռ մինչև լուսաբացը,— առաջ գալով, ավելացրեց Սկլաֆանին՝ ուրվականի պես գունատ:

— Մենք պետք է ծովում լինենք արևածագից առաջ: Գուցե մեզ արդեն հայտնաբերել են...

— Ի՜նչ ես խոսում: Ես քեզ ասում եմ, որ ոչ,— գոռաց նրան Ինգրաոն:

— Իսկ ես քեզ ասում եմ, որ այո՛,— առարկեց Սկլաֆանին:— Ջիրջենտի կայարանում, կարող եմ երդվել, Լանդոյին ճանաչեցին:

Լեոնարդո Կոստան նկատեց, որ այդպիսի փոթորկին նավակ վարձելը չի կարելի վստահել գյուղացու:

— Կարող եմ գնալ ես, եթե ուզում եք: Կգնամ թեկուզ հիմա:

— Այսպիսի եղանակի՞ն,— մտահոգված հարցրեց դոն Կոսմոն:— Թանկագին սինյորներ, մի շտապեք այդպես: Լսե՛ք ինձ, ձեր շորերը փոխեք, այլապես կհիվանդանաք: Տեսնո՞ւմ եք, ա՛յ այստեղ... սա իմ բարեկամն է, տեսնում եք... ես նրան հենց նոր ստիպեցի շորերը փոխել: Այնտեղ զգեստները կբավականացնեն… Կբավականացնեն բոլորին... Սնդուկում են, գնացե՛ք տեսեք:

Կոստան անհամբեր հարցրեց երիտասարդներին.

— Ուզում եք, որ նավակը գա այստեղ՝ Վալսանիա՞:

— Այո՛, այո՛, այստեղ,— պատասխանեց Լանդոն:— Ո՛չ, հորեղբայր, խնդրում եմ քեզ, թո՛ղ ինձ:

— Հանվի՛ր, քեզ ասում եմ:

— Անզգուշություն կլինի,— շարունակեց Լանդոն՝ դիմելով Կոստային՝ այն ժամանակ, երբ հորեղբայրը նրա վրայից ուժով պոկում էր վերարկուն,— անզգուշություն կլինի երևալ Պորտո-Էմպեդոկլեում: Հիմա արդեն Պալերմոյից բոլոր ծովային նավահանգիստները հրաման է եկել մեզ ձերբակալելու մասին:

— Բայց տարտանայի համար,— նկատեց Կոստան,— շատ դժվար կլինի կառանավել այստեղ, երբ ծովն այսպես փոթորկալի է... Ասենք, կարևոր չէ: Ես չեմ հրաժարվում: Կարելի է փորձել:

Եվ նա նետվեց դահլիճ՝ իր լայն, ամբողջությամբ թրջված թիկնոցն ու կնգուղը վերցնելու:

— Բարեկամնե՛ր,— բացականչեց Ինգրաոն:— Ավելի լավ չէ՞ արդյոք գնալ այդ սինյորի ետևից հիմա՝ գիշերով, երբ մեզ ոչ ոք չի տեսնի: Մենք կթաքնվենք այնտեղ՝ որևէ մոտիկ տեղ ու կսպասենք՝ մինչև նա նավակ վարձի:

Խորհուրդը չընդունվեց Լինո Ապեսի խելամիտ նկատառման պատճառով:

— Դուք ի՞նչ եք ասում: Կարծում եք կարելի՞ է երկու րոպեում նավակ վարձել գիշերը, այսպիսի եղանակին: Հարկավոր է գտնել տիրոջը...

— Կա՛ այդպիսի մարդ, կա՛,— ընդհատեց Կոստան:— Ես գիտեմ մի շատ հավատարիմ մարդու, նա իմ բարեկամն է:

— Իսկ նավաստինե՞ր,— հարցրեց Ապեսը:— Միայն տերը քիչ է:

— Իհա՛րկե: Հարկավոր է նավաստիներ էլ գտնել ,— համաձայնեց Կոստան,— և նավակը սարքավորել... Մինչև լուսաբաց չեն վերջացնի:

— Այդ դեպքում՝ ո՛չ,— իսկույն բացականչեց Սկլաֆանին՝ առաջ ցատկելով:— Պորտո-Էմպեդոկլեում ցերեկով՝ ո՛չ մի դեպքում: Հարկավոր է նավակ նստել այստեղ:

— Իսկ առայժմ ես գնում եմ,— ասաց Լեոնարդո Կոստան, որն արդեն գլխին էր քաշել կնգուղը:

— Իմ խե՛ղճ բարեկամ,— հառաչեց դոն Կոսմոն:— Բայց գուցե...

Կոստան չցանկացավ լսել ո՛չ կարեկցական զեղումներ, ո՛չ շնորհակալություններ և անհայտացավ հողմի ու գիշերվա մեջ:

Իմանալով, որ նա հայրն է Աուրելիո Կոստայի, որին պատգամավոր Կապոլինոյի կնոջ հետ միասին գազանաբար սպանել են Արագոնայի հանքափորները, Լանդոն մռայլ նայեց Ինգրաոյին ու մյուս ընկերներին: Ճիշտ չմեկնաբանելով այդ հայացքը, Բրունոն բավական անվստահ կասկած հայտնեց, թե արդյոք նա չգնա՞ց Պորտո-Էմպեդոկլե, որ վրեժ լուծի՝ մատնելով իրենց: Բայց դոն Կոսմոն, հատուկ ձևով հավաքելով շրթունքները, սկսեց ծիծաղել իր սովորական եղանակով՝ «Հո՜-հո՜-հո՜»:

— Ի՞նչ եք ասում,— ասաց դոն Կոսմոն ու բացատրեց, թե հիմա ինչ զգացմունքներ են հուզում այդ անձնվեր բարեկամին, որը, իր որդու մահվան միակ մեղավորը համարելով Ֆլամինիո Սալվոյին, ամենաչնչին չափով իսկ չի մեղադրում Արագոնայի միության անդամներին:

— Հա՛, ի դեպ,— ավելացրեց նա՝ Սալվոյի անունը պատահաբար արտասանելիս հիշելով դոննա Ադելաիդայի փախուստը, և Լանդոյին մի կողմ կանչեց, որ նրան հայտնի այդ մասին:

— Աղջնակի պես, հասկանո՞ւմ ես: Գիշերվա ժամը երեքին:

Իրարանցման մեջ մինչև հիմա չէր լսվել դոննա Սառա Ալայմոյի ձայնը, որին, հավանաբար, թվում էր, թե այդ փոթորկալի գիշերը տան վրա է հարձակվել դևերի մի ամբողջ հորդա, և նա էլ ավելի մեծ զայրույթով, քան սովորաբար, կրկնում էր միջանցքի կողքի իր հեռավոր սենյակում.

— Ապաշխարե՛ք, սատանանե՛ր:

Այդ տարօրինակ, զիլ ճիչը հնչեց հենց այն պահին, երբ լռություն տիրեց, և, բացի դոն Կոսմոյից, շշմեցնող տպավորություն գործեց բոլորի վրա, նույնիսկ Լանդոյի, որ առանց այդ էլ ցնցված էր հորեղբորից լսած լուրից:

— Դա ո՞վ է:

— Ա՛, դատարկ բան է, դոննա Սառան է,— պատասխանեց դոն Կոսմոն, կարծես Լանդոն ու նրա ընկերները արդեն վաղուց ճանաչում էին իր պառավ տնտեսուհուն:— Նա ինձ կխենթացնի, ազնիվ խոսք... Երկու օր առաջ փակվել է սենյակում ու ճչում է՝ ա՛յ, այդպես... Նա հիվանդ է, խեղճ կինը... Եվ այստեղն էլ...

Եվ մատը տկտկացրեց ճակատին:

Լանդոյի չորս ընկերները հայացքներ փոխանակեցին: Այս ո՞ւր են ընկել երեք օրվա խելահեղ փախուստից հետո: Խենթ կոչեցին ծերունուն, որը հենց սկզբից այնպիսի սիրալիր ընդունելություն ցույց տվեց. խենթ հայտարարեցին և այս պառավին. իսկ լիովին խելքը գլխի՞ն է այս ծերունին, որն այդպես հանգիստ խենթեր կոչեց մյուս երկուսին՝ նրանց համար, ճիշտն ասած, այնքան էլ պարզ չէր: Մինչև հիմա, երևի, Լանդոյի հորեղբորը ոչինչ չի անհանգստացրել, բացի իրենց թաց զգեստներից:

— Դուք դեռ թաց շորերո՞վ եք,— զարմանքով բացականչեց դոն Կոսմոն՝ դոննա Սառայի մասին խոսակցությունից հետո և իսկույն էլ վազեց բացելու սնդուկը, որտեղ գտնվում էին նրա հին հագուստները:— Ահա՛, ահա՛ վերցրե՛ք: ...Ես ձեզ ասում եմ՝ բոլորիդ կբավականացնի:

Չորս երիտասարդները չկարողացան զսպել իրենց ծիծաղը և սկսեցին իրար օգնել՝ հանելու թաց հագուստները:

— Հավատացնում եմ ձեզ, ամենակարևորը հիմա,— ասաց դոն Կոսմոն,— հենց դա է՝ չմրսել: Ծիծաղեցե՛ք ինձ վրա, բայց ձեր զգեստները փոխեք:

Դոն Կոսմոյի հավաստիացումները, որ համապատասխան հագուստները կբավականացնեն բոլորին, ավելի քան համարձակ դուրս եկան: Լինո Ապեսը սնդուկում իր համար ուրիշ ոչինչ չգտնելով, դուրս եկավ՝ ձեռքերին բռնած սեմինարիստի փարաջան, կարծես երեխա էր տանում կնքելու:

— Կարելի՞ է սա վերցնել:

— Իսկ ինչո՞ւ չէ: Դա ի՞նչ է: Ա՛խ, փարաջա՞... Ի՞նչ կա որ... եթե ձեզ կսազի...

Եվ դոն Կոսմոն սկսեց ծիծաղել՝ միանալով չորս երիտասարդների քրքիջին, որոնք խեղկատակային ծամածռություններով հագնում էին զանազան հնամաշ շորեր, որոնցից կամֆորայի սուր հոտ էր փչում: Կատալդո Սկլաֆանին հագել էր նապոլեոնյան սերթուկ և գլխացավի պատճառով գյուղացու նման գլուխը կապել էր չթե մեծ թաշկինակով, որ դեղին էր՝ կարմիր վանդակներով:

Երիտասարդությունը հետզհետե նորից գտավ ոգու կայտառությունը: Ո՛չ ոք չէր մտածում պարտության մասին, ապագայի հանդեպ անվստահության մասին: Ընկերների ծաղրանքից ու հարվածներից քշվելով, Լինո Ապեսը, որ սեմինարիստի փարաջա էր հագել, վազեց խոհանոց, որ կրակ վառի: Նրանք քաղցած էին: Ուզում էին խմել: Բայց այդ ժամանակ դոն Կոսմոն զգաց, որ ձեռքերը թուլացան: Նա հազիվ էր հիշում, թե որտեղ է մառանը, իսկ դրա բանալին երևի գտնվում էր Մաուրոյի մոտ:

— Բանալին,— բացականչեց Ինգրաոն:— Ես գտել եմ:

Եվ նա վազեց, որ վերցնի սանդղահարթակում մնացած բանալին՝ հենց այն, որ Մաուրոն զարկել էր դռանը:

— Ահա՛ բանալին: Ահա՛ բանալին:

Դոն Կոսմոն որոշ ժամանակ զննեց բանալին:

— Սա՛,— ասաց նա:— Ո՛չ... Օ՛յ, սա ի՞նչ է: Չէ՞ որ սա կամերոնեի բանալին է: Որտեղի՞ց վերցրիք:

Ընդհանուր խառնաշփոթում դոն Կոսմոն չէր լսել Մաուրոյի վերջին ճիչը. և երբ նրան ասացին, թե ծերունին այդ բանալին նետեց Լանդոյին, նա իսկույն խոժոռվեց և, թեքվելով եղբորորդու կողմը, բացականչեց.

— Բայց այդ դեպքում, դու կտեսնես, օ՛, աստվա՛ծ իմ... քանի որ նա բանալին նետել է քեզ, կտեսնես, նա, հավանաբար, կգնա... Գուցե արդեն գնացել է:

— Գնացե՞լ է: Ո՞ւր,— հարցրեց Լանդոն՝ նույնպես շփոթված ու վշտացած:

— Իսկ ո՞վ գիտի նրան,— հառաչեց դոն Կոսմոն: Եվ կարճ պատմեց, թե առաջին անգամ ինչ դժվարությամբ հաջողվեց պահել Մաուրոյին. հետո, քանի որ մյուս չորս պատանիները ծիծաղում էին այդ տարօրինակ ծերունու խելահեղ ծրագրերի ու զգացմունքների վրա, ստիպված եղավ պատմել, թե ով է եղել Մաուրոն, ինչ է արել, նրա համար ինչ է եղել այդ կամերոնեն, և ինչեր կան այդ սենյակում:

— Ա՛խ, այդպե՞ս: Նույնիսկ ընձառյուծի խրտվիլա՞կ:

Եվ հենց որ դոն Կոսմոն ու Լանդոն գնացին Մաուրոյին փնտրելու, Լինո Ապեսը, Ինգրաոն, Բրունոն, Սկլաֆանին, հետաքրքրությամբ համակված, վերցրին բանալին ու մտան կամերոնե:

Հենց նրանց տակ էր գտնվում Մաուրո Մորտարայի սենյակը:

Դոն Կոսմոն ու Լանդոն մոմերը ձեռքներին մտան գաղտնի սենյակը, որի հատակին կար փոքրիկ դռնակ, որ տանում էր տան առաջին հարկը. նրանք հատակից անաղմուկ բարձրացրին դռնակը և փայտե ուղղաբերձ, ոչ այնքան ամուր սանդուղքով իջան նկուղ, հետո անցան հնձանը, երկու դատարկ շտեմարաններ, խցիկը, որտեղ անկարգ իրար վրա Էին թափված հին գյուղատնտեսական գործիքներ, և հասան Մաուրոյի սենյակի ներքին մուտքին: Կռանալով, որ նայի, Լանդոն շեմքից նկատեց, որ այնտեղ լույս կա:

— Մաուրո՛,— ձայն տվեց դոն Կոսմոն:— Մաուրո՛:

Ո՛չ մի պատասխան:

Լանդոն դարձյալ կռացավ բանալու անցքին:

Վերևից լսվում էր դռփյունը նրա չորս ընկերների, որոնք ճիչերով ու քրքիջով հետապնդում էին Լինո Ապեսին, որ սեմինարիստի փարաջա էր հագել:

Մաուրո Մորտարան նստել էր մահճակալի տակից դուրս քաշած արկղի առաջ, ձեռքերով հենվել բարձրացրած կափարիչի եզրերին և գլուխը դրել ձեռքերի վրա:

— Նա այնտե՞ղ է: Ի՞նչ է անում,— հարցրեց դոն Կոսմոն:

Լանդոն բռունցքը զայրալից բարձրացրեց դեպի առաստաղը, որտեղից լսվում էր նրա ընկերների ոտքերի դռփյունը: Բացի դառն անբավականությունից ընկերների դեմ և ինքն իր դեմ, նա զգում էր սուր զղջում այն բանի համար, որ այդպես դաժանորեն վիրավորեց թանկագին ծերունուն, և տանջալից ափսոսանք, որ այդ պահին ինքը չի կարող հորեղբոր կանչին միացնել իր ջերմագին կանչը:

— Նա ի՞նչ է անում,— հարցրեց դոն Կոսմոն էլ ավելի կամացուկ:

Ի՞նչ էր անում Մաուրոն՝ երեսը ձեռքերով ծածկած. այդ մասին էին ասում մեդալները, որ նրա նստելու դիրքի պատճառով կախվել էին կրծքից և մերթընդմերթ ցնցվում էին: Նա լալիս էր... այո՛ , հենց այդպես... Նա լալիս էր, իսկ նրա թիկունքին կախված էր անհեթեթ մախաղը, որ Լանդոն արդեն տեսել էր Հռոմում:

— Մաուրո՛,— նորից ձայն տվեց դոն Կոսմոն:

Եվ այդ ժամանակ Լանդոն, որ դեռ կանգնած էր՝ աչքը դրած բանալու անցքին, տեսավ՝ ինչպես Մաուրոն բարձրացրեց գլուխը, որոշ ժամանակ ականջ դրեց՝ դեմքով շրջվելով դռան կողմը, հետո վեր կացավ և թափով նետվեց դեպի սեղանը:

— Նա մարեց լույսը,— ասաց Լանդոն՝ ուղղվելով:

Որոշ ժամանակ նրանք ականջ դրեցին՝ վախենալով, որ կլսեն, թե նա ինչպես է բացում դուռը: Եվ այդ ժամանակ նրանք իրենց զգում էին գերիների պես, նրանք չունեին ո՛չ շտեմարանների, ո՛չ հնձանի, ո՛չ նկուղի բանալիները և, հետևաբար, եթե ուզում էին խանգարել Մաուրոյի գնալուն, պետք է անհապաղ վերադառնային վերև. հարկավոր էր այդ անել արագ, որպեսզի չթողնեին, որ նա հեռանա: Բայց սենյակից հիմա ոչ մի ձայն չէր լսվում:

Դոն Կոսմոն եղբորորդուն լուռ նշան արեց վերադառնալու: Երբ նրանք հայտնվեցին երկու շտեմարաններից առաջինում, նա կանգնեց և կիսաձայն ասաց.

— Եթե նա ցանկանա գնալ, ո՛չ դու, ո՛չ էլ ես նրան ուժով չենք պահի: Գուցե նա վերադառնա, երբ դուք գնաք, և նրա զայրույթն անցնի:

Լանդոն նայեց այդ ծերունուն՝ իր հորեղբորը, որին հազիվ էր ճանաչում, այդ մեծ շտեմարանում, որտեղ մոմի լույսը պատերին էր նետում նրանց մարմինների ահռելի չափով մեծացված ստվերները, նրա մեջ այն տպավորությունն ստեղծվեց, թե մի ինչ-որ տարօրինակ իրականություն, որը չես էլ կարող հորինել, հանկարծ հայտնվեց իր աչքերի առաջ երազի քմահաճ անհետևողականությամբ: Արդեն որոշ ժամանակից ի վեր նա ոչ մի իմաստ չէր տեսնում իր արարքներում, որ նրա մեջ թողնում էին ինչ-որ զղջման զգացում և նվաստացման դառն համը. և այդ իմաստը խույս էր տալիս նրանից ավելի, քան երբևէ, հիմա, երբ նրա առաջ էր հենց այդ իրականությունը՝ այնպես պարզորոշ, շոշափելի՝ նրա հորեղբայրը, որն ապրում էր կյանքից դուրս, այդ հնամենի, ամայի վայրերում և այդ ակնթարթում մոմը ձեռքին կանգնած էր իր կողքին այդ դատարկ շտեմարանում: Նա հանկարծ ցանկացավ հանգցնել այդ մոմը, ինչպես Մաուրոն հենց նոր հանգցրեց լույսն այնտեղ՝ իր սենյակում: Նա լսում էր քամու ձայնը, ծովի աղմուկը. այնտեղ՝ դրսում փոթորկի խավարն էր և նրան սպասվող ճակատագրի խավարը: Հարկավոր էր անպայման, ամեն գնով այդ խավարում իմաստ գտնել հետագա գործունեության համար, որպեսզի նրա մեջ

հանդարտվեին բոլոր հուզումները, և նա դադարեր տառապելուց կասկածներից, որ տանջում էին նրա բանականությունը: Բայց այդ ինչպիսի՞ գործունեություն կլինի: Եվ ե՞րբ: Եվ որտե՞ղ:

— Ամեն ինչ կանցնի,— քիչ անց ասաց դոն Կոսմոն. նրա բերանի անկյունները կախվեցին, ճակատը խոժոռվեց, կարծես դրա ետևում ալիք-ալիք դիզվում էին մտքերը, որ ներս էին քշված նրա անմխիթար իմաստնությամբ. իսկ հայացքը, թվում էր, մի կողմ է թեքվել կյանքի բոլոր դառն ու ձանձրացնող հանգամանքներից, որ կարծես նրա համար կորչում էին ժամանակի ունայն ընթացքի մեջ:— Ամեն ինչ կանցնի, թանկագիններս... կանցնի՛...

Մինչ նրանք գնում էին Մաուրոյի ետևից, չորս երիտասարդներն իրենք էին գտել մառանը և, քանի որ այն փակ չէր, բերել էին ու դրել սեղանին այն ամենը, ինչ դուր էր եկել. հիմա նրանք կուշտ կերել էին ու խմել և հուսահատական ջանքեր էին գործ դնում, որ դիմադրեն հոգնությանը, որ ծանրացրել էր նրանց կոպերը:

Դոն Կոսմոյի այդ բացականչությունը պատասխան էր նրանց պատմածներին՝ վերջին հախուռն իրադարձությունների մասին, որոնց շուրջը նրանք խոսում էին՝ մեկը մռայլ դառնությամբ, մյուսը՝ զայրալից կշտամբանքով, իսկ Լինո Ապեսը՝ իր սովորական կծու հեգնանքով: Դիտելով այդ իրադարձությունները որպես արդեն ժամանակի խորքն անցած, դոն Կոսմոն չէր կարող հասկանալ ո՛չ դրանց իմաստը, ո՛չ էլ նպատակը: Եվ նրա ամբողջ տեսքը Լանդոյի մեջ հարուցում էր հենց նույն զգացողությունը, ինչպիսին հարուցում են իրերը, որ անխռով նայում են մարդկային ճակատագրի անակնկալների սրընթաց փոփոխություններին:

— Դուք տեսա՞ք ընձառյուծը:

— Այո՛, գեղեցիկ գազան է...— մռթմռթաց Ինգրաոն՝ սեղանին հենած ձեռքերին դնելով դեմքը, որ այլանդակված էր թուխ խալով:

— Իսկ չէ՞ որ դա եղել է կենդանի ընձառյուծ:

Լինո Ապեսը բացեց աչքերը և հարցրեց գրեթե սարսափով.

— Եվ նա ուտո՞ւմ էր:

— Ես այդ ասում եմ,— շարունակեց դոն Կոսմոն,— որովհետև հիմա այն լիքը լցված է ծղոտով և այլևս չի ուտում: Իսկ հորս նամա՞կը: Դուք այն կարդացի՞ք: Դեղնած թղթի մի թերթիկ... Իսկ այն գրել է այնպիսի կենդանի մի ձեռք, ինչպիսին սա է, նայեցե՛ք... Հիմա այն ի՞նչ բան է: Այդ խեղճ խենթը դրել է այն շրջանակի մեջ... Լուի Նապոլեոն... պետական հեղաշրջում... իրադարձությունները Ֆրանսիայում...

Նրա ձեռքերն իրար միացան մատների ծայրերով, և նա թափահարեց ձեռքերը, կարծես ուզում էր ասել. «... Դրանից ի՞նչ է մնացել: Ի՞նչ իմաստ այդ ամենի մեջ»:

— Ակնթարթ, և ամեն ինչ չքանում է... Ամեն ինչ սո՛ւտ է:

Նա վեր կացավ, մոտեցավ պատշգամբի պատուհանին, որ էլ չէր ճռռում քամուց, շրջվեց եղբորորդու կողմը և ասաց.

— Լսո՞ւմ ես, ի՞նչ խաղաղ է: Քեզ հայտնում եմ մխիթարական նորություն՝ քամին դադարեց...

— Դադարե՞ց,— հարցրեց Կատալդո Սկլաֆանին՝ սեղանին հենած ձեռքերից թափով կտրելով դեմքը. ապաքինվող հիվանդի դեմք, որի վրա ճակատից ցած էր սահել դեղին թաշկինակը:— Շատ լավ է: Նավակ կնստենք այստեղ... Բարի գիշեր:

Եվ նա նորից քնեց:

— Ահա և բոլորը...— հառաչեց դոն Կոսմոն և սկսեց քայլել սենյակում՝ երբեմն կանգնելով, բայց շարունակելով խոսել:— Մի բան է միայն տխուր, թանկագիններս. տխուր է, որ դուք հասկացել եք խաղի իմաստը: Ես ասում եմ խաղի մասին ծաղրասեր սատանայաճուտի, որը

կա մեզանից յուրաքանչյուրի ներսում և որը զվարճանում է նրանով, որ մեզ արտաքին իրականություն է ներկայացնում այն ամենը, ինչ քիչ անց հենց ինքն էլ բացահայտում է որպես պատրանք: Եվ այդ ժամանակ նա սկսում է ծաղրել այն պատրանքները, ինչ մենք դրա պատճառով ապրել ենք, և ծաղրել մեզ, ինչպես ինձ հետ է անում, այն բանի համար, որ մենք չենք կարողանում անձնատուր լինել պատրանքին, որովհետև նրա ետևում ոչ մի ուրիշ իրականություն չկա: Ուրեմն՝ մի՛ գանգատվեք: Անձնատուր եղե՛ք ձեր կրքերին, տառապեցե՛ք՝ չմտորելով այն մասին, որ դա ոչ մի բանի չի հասցնում: Եվ քանի որ չի հասցնում, ապա, ուրեմն, չպիտի հասցնի, և, հետևաբար, զուր է որևէ ելքի ձգտումը: Հարկավոր է ապրել, այսինքն՝ խաբվել, հնարավորություն տալով ծաղրասեր սատանայաճուտին խաղալ մեր ներսում՝ մինչև որ հոգնի, և հիշել, որ այդ ամենը կանցնի... կանցնի՛...

Նա նայեց սեղանին և Լանդոյին ցույց տվեց քնած ընկերներին.

— Ա՛յ, տեսնո՞ւմ ես: Արդեն անցավ...

Լանդոն նայեց իր բարեկամների անհարմար, անճոռնի կեցվածքներին, անհեթեթ հագուստներին, հոգնությունից տանջահար դեմքերին, նախանձեց նրանց քնին և միևնույն ժամանակ վրդովվեց: Նրանք կարող էին կատակել, իսկ հիմա կարող են քնել՝ մոռանալով, որ անկարգությունները, որ իրենց քարոզների շնորհիվ ծագել են դաժան իրավազրկությունից ճնշված, բայց առայժմ դեռ կույր ու խուլ ժողովրդի մեջ, կառավարությանը հնարավորություն են տվել նորից ոտքերի տակ կոխկրտելու երկիրը, որը ազնիվ պոռթկումի պահին ինքը, առանց որևէ պայմանի, իրեն հանձնել է Իտալիային, իսկ որպես պարգև ստացել է միայն աղքատություն ու արհամարհանք: Նրանք՝ իր բարեկամները, կարող են քնել՝ մոռանալով այնքան զոհերի արյան մասին, մոռանալով ընկերների մասին, որ ընկել են ոստիկանության ձեռքը, և վաղն, անկասկած, կդատապարտվեն զինվորական տրիբունալով:

Նա էլ վեր կացավ, գնաց նախասենյակ, որ հիմա, երբ անձրևն ու քամին դադարել էին, դուրս գար տանից, թարմ օդ շնչեր և ազատվեր իրեն ճնշող թախծից: Բայց կանգնեց դռան մոտ՝ հմայված անցած կյանքի ոգով, որ պահպանվել էր այդ վիլլայում, որտեղ ապրել էր իր պապը, որտեղ անօգուտ կերպով անցնում էին իր հորեղբոր թախծալի օրերը, որ համակված էին ամբողջ գոյության վաղանցիկության անհուսալի զգացողությամբ, որտեղ Մաուրո Մորտարան... Նա իսկույն ցնցվեց՝ հիշելով իր ծերունու մասին, որին հենց ինքն էլ կյանքի մայրամուտին արտաքսեց այդ կացարանից, որը նրա համար դարձել էր հերոսական հիշողությունների տաճար: Լանդոն վրդովվում էր ինքն իր վրա և դրա հետևանքներից ավելի էր ամաչում, քան մյուս բոլոր արարքներից՝ և՛ իր սեփական, և՛ իր ընկերների. Վալսանիայից դուրս քշել նրա ծեր պահապանին, այն մարդուն, ով արդեն վաղուց Լանդոյին թվում էր սիցիլիացու հին ոգու ամենամաքուր մարմնացումը: Եվ Լանդոն վազեց, որ փորձի հանգստացնել Մաուրոյին, ասի նրան իր զղջումը և համոզի մնալ: Մաուրոյի սենյակի դուռը բաց էր, այնտեղ խավար էր ու դատարկ:

Շեմքին, լիակատար անվճռականության մեջ քարացած, կանգնել էին երեք շները: Նրանք չհաչացին Լանդոյի վրա: Նույնիսկ ընդհակառակը՝ մոտեցան՝ ականջները սրած, շարժելով կարճ պոչերը, կարծես ուզում էին հարցնել, թե ինչո՞ւ իրենց տերը, երբ իրենք գնացին նրա ետևից, ինչպես ամեն գիշեր, շրջվեց, գոռաց իրենց վրա և կոպտաբար քշեց տուն: Ինչո՞ւ:

Վիլլայի պատշգամբներից մեկից, խավարի միջից լսվեց դոն Կոսմոյի ձայնը.

— Գնացե՞լ է:

— Այո՛,— պատասխանեց Լանդոն:

Դոն Կոսմոն ոչինչ չասաց: Դեռևս տագնապալի գիշերի հանդիսավոր և կարծես թանձրացած խավարում նա սկսեց լսել ծովի աղմուկը Վալսանիայի զառիթափի տակից և ավել կամ պակաս հեռու ուրիշ շների հաչոցները. հետո, ձեռքը դնելով ճաղատ գլխին, հայացքը հառեց մի քանի աստղերի («Գաղտնիքի բևեռները», ինչպես ինքն էր կոչում դրանք), որ հանկարծ հայտնվեցին պատառոտված ամպերի արանքում, երկնային ծովալճակներից մեկում:

Ուշադրություն չդարձնելով անանցանելի ցեխին, որի մեջ խրվելով, նրա երկաթե պայտերով երկայնաճիտ սապոգները շաղ էին տալիս շուրջը, Մաուրո Մորտարան այդ ժամանակ արդեն մի քանի մղոն հեռու էր Վալսանիայից: Ուռած աչքերը կիսափակ էին, դեմքը՝ զայրույթից ծռմռված, կրծքում նա զգում էր տանջալից այրոց, իսկ գլխում տիրում էր էլ ավելի թանձր խավար, քան շուրջը: նա քայլում էր գիշերվա մեջ, որը դեռ համակված էր մրրիկի վերջին սարսուռներով, և երբեմն նրան էին հասնում խիստ սառն քամու հանկարծակի պոռթկումները, որոնք նրա երեսին էին շպրտում կաթիլները՝ ճանապարհի երկու կողմերում, ցածրիկ պատերին ցցված ծառերից: Նա քայլում էր կորացած, գլուխը կախած, մի ուսին հրացանը, կողքերին՝ երկու ատրճանակները, գոտու տակ դաշույնը կաշվե պատյանում, թիկունքին՝ մախաղը, գլխին՝ փրչոտ փափախը, կրծքին՝ մեդալները: Նա բարձրանում էր Ջիրջենտի, բայց ուզում էր էլ ավելի հեռուն գնալ, թեքվել մեծ ճանապարհից ու շարժվել երկաթուղու պաստառով, անցնել կարճ թունելով ու դուրս գալ Վալ-Սոլլանո, իսկ այնտեղից, կայարանից ոչ հեռու թեքվելով, մյուս մեծ ճանապարհով գնալ Ֆավարա, որտեղ ավանից այն կողմ՝ ագարակում ապրում էր շատ տարիներ առաջ մեռած նրա քրոջ որդին: Զարմիկը մեկ անգամ չէ, որ նրան առաջարկել էր ապաստան ու կերակուր՝ այն դեպքում, եթե, հիվանդանալով, նա ցանկանա հեռանալ Վալսանիայից: Մաուրոն գնում էր այնտեղ՝ իր զարմիկի մոտ, բայց չէր ուզում մտածել այդ մասին: Նրա հոգին, նրա սիրտը կարծես կոխկրտված էին, փշրված, ճզմված ոտքերի դոփյունով այն երիտասարդների, որոնք նրան հասցրին ամենածանր վիրավորանքը՝ մտնելով գեներալի կամերոնեն և պղծելով այն, քանի դեռ ինքը ցածում պատրաստվում էր հեռանալու: Նա չէր ուզում այլևս ո՛չ մտածել, ո՛չ զգալ և չէր ուզում պատկերացնել, թե ինչպիսիք կլինեն իր կյանքի մնացած օրերը: Եվ, այնուամենայնիվ, այն մտքից, որ գուցե իր ազգական գյուղացին իրեն ապաստան է առաջարկել, որովհետև իրենից սպասում է ո՞վ գիտի, թե ինչ բարիքներ, նրա կոխկրտված սիրտը նորից սկսեց դողալ հպարտ մտքերի հանկարծական պոռթկումով: Միայն պատանի ժամանակ՝ մինչև իր Մալթա տարագրվելն էր նա ռոճիկ ստացել գեներալից: Թափառիկ կյանքից և ծովում, Թուրքիայում, Փոքր Ասիայում, Աֆրիկայում ունեցած հախուռն արկածներից հետո, վաթսուն թվականի պատերազմից հետո վերադառնալով Վալսանիա, նա միշտ անշահախնդրորեն ծառայել էր Լաուրենտանոների տանը. . . Եվ ահա հիմա, յոթանասունութ տարեկան հասակում նա հեռանում էր այնտեղից՝ աղքատ, առանց գրպանում մի գրոշ ունենալու, իր միակ հարստությամբ՝ մեդալները կրծքին: Բայց հենց դրա համար, որ իր միակ հարստությունը նա վաստակել էր իր ամբողջ կյանքի գնով, նա կարող էր իր զարմիկին ասել. «Տխմա՛ր, դու երեք թիզ հողի տեր ես և եթե ետ գնաս մի քայլ, կլինես արդեն ուրիշի հողի վրա: Իսկ ես միշտ, որտեղ էլ որ ոտքս դնեմ, կլինեմ Սիցիլիայում իմ հողի վրա: Որովհետև ես անցել եմ այն ծայրից ծայր ազատագրելով տիրակալից, որ պահում էր նրան ստրկության մեջ»:

Մղում ստանալով, նրա հուզմունքն սկսեց աճել րոպե առ րոպե, խթանվելով՝ մի կողմից Վալսանիայից ընդմիշտ անջատվելու վշտով, իսկ մյուս կողմից՝ իր առաջ լայն բացված դատարկությունը հիշողություններով լցնելու անհրաժեշտությամբ, հիշողություններ, որ կարող էին նրան սփոփանք տալ:

Նա ծիծաղում էր, բարձր խոսում և թափահարում ձեռքերը՝ ուշադրություն չդարձնելով, թե ուր է գնում. նա ժպտաց ռելսերի կրկնակ գծերին, հեռագրասյուներին (այդ ամենը հեղափոխության պտուղներն էին) և, ուժգին զարկելով իր կրծքին, գոչեց.

— Ես ի՞նչ գործ ունեմ դրա հետ: Ես.. ես... ես Սիցիլիան եմ... Սուրբ տիրամա՛յր... ես ձեզ ասում եմ՝ Սիցիլիան... Եթե դա Սիցիլիայի համար չլիներ... Եթե Սիցիլիան չցանկանար... Սիցիլիան շարժվեց և ասաց Իտալիային՝ ահա՛ ես այստեղ եմ: Գալիս եմ քեզ մոտ: Արի Պյեմոնտից քո թագավորի հետ, իսկ ես կգամ այստեղից Գարիբալդիի հետ, և մենք՝ երկուսս, կմիանանք Հռոմում: Օ՛, սուրբ տիրամա՛յր, ես գիտեմ. Ասպրամոնտե, պետական նկատառումներ, ես գիտեմ: Բայց Սիցիլիան ցանկացել է լինել առաջինը՝ ամենասկզբից... միշտ Սիցիլիան... Եվ հիմա մի քանի սրիկաներ ուզում են խայտառակել նրան... Բայց

Սիցիլիան այստեղ է, այստեղ ինձ հետ է Սիցիլիան, որը թույլ չի տա իրեն խայտառակել այստեղ, ինձ հետ...

Հանկարծ նա հայտնվեց կարճ թունելի առաջ, որը ելնում էր Վալ Սոլլանո, և զարմացավ, որ այդքան շուտ է հասել ու չի նկատել այդ թունել մտնելուց առաջ նա նայեց երկնքին, որպեսզի աստղերով իմանա ժամը քանիսն է: Հավանաբար, գիշերվա ժամը երեքն էր: Գուցե լուսաբացին մոտ հասնի Ֆավարա: Անցնելով թունելը և հասնելով մինչև այն տեղը Ջիրջենտի կայարանի մոտ, որտեղ սկսվում է սայլի ճանապարհը, որ տանում է ծծմբահանքերով շրջապատված մեծ ավանը, նա ստիպված եղավ կանգնել, որ ճանապարհ տա զինվորների երկու ջոկատներին, որոնք արագացված երթով, լուռ, ծանր շնչելով, գիշերով շտապում էին հանքերը: Երկաթուղային պահակախմբի գծային պահակից նա իմացավ, որ, չնայած պաշարողական դրություն հայտարարելուն, Ֆավարայի ցրված միության անդամները երեկոյից առաջ հավաք են նշանակել հրապարակում, շրջապատել ու վառել են մունիցիպալիտետը, ազնվականական ակումբը, մաքսատան պահատնակները: Հրդեհներն ու հուզումները դեռ շարունակվում են, և կան մի քանի սպանվածներ ու բազմաթիվ վիրավորներ:

— Ահա թե ի՞նչ, ահա թե ի՞նչ,— ամբողջ մարմնով դողալով, հարցրեց Մաուրոն:— Էլի՞:

Եվ նա դուրս պրծավ պահակի ձեռքերից, որն աշխատում էր պահել նրան, որ, ո՞վ գիտե, զինվորները հանկարծ չձերբակալեն նրան. չէ՞ որ նա զինված էր:

— Իտալիայի զինվորները կարո՞ղ են ինձ ձերբակալել:

Եվ նա վազեց՝ շտապելով միանալ նրանց:

Անզսպելի, տենդագին ուրախությունը վերականգնեց նրա ուժերը, որ արդեն սկսել էին թուլանալ. այն ծեր գարիբալդիականի ոտքերին վերադարձրեց առաջվա զորությունը. նրա հուզմունքը փոխվեց ցնորքի: Այդ ակնթարթում նա, իսկապես, իրեն զգում էր Սիցիլիան, հին Սիցիլիան, միացած Իտալիայի զինվորների հետ՝ ամբողջ երկրով համատեղ պաշտպանվելու համար նոր թշնամիներից:

Նա սլանում էր, կարծես կուլ տալով ճանապարհը և իրեն պահելով մի քանի քայլի վրա այդ երկու ջոկատներից, որոնք Ֆավարայից եկող և ճանապարհին հանդիպող բանբերների խորհրդով իրենց քայլերն արագացրին մինչև վազք:

Երբ օրվա առաջին շողերի տակ ոտքից գլուխ ցեխի մեջ կորած, վազքից արբած, հոգնությունից խլացած Մաուրոն արդեն ավանում խառնվեց զինվորներին, նա ժամանակ չունեցավ որևէ բան տեսնելու, որևէ բանի մասին մտածելու, խելահեղ իրարանցումով հափշտակված, քարերի կարկուտի տակ նա կարծես հայտնվեց տպավորությունների հորձանքում՝ այնպես արագ և ուժեղ, որ ոչինչ չէր կարող հասկանալ. զգաց միայն՝ ինչպես փախուստի մատնվելով, խելահեղորեն տեղից պոկվեց գոռացող մարդկանց հոծ բազմությունը, հետո որոտաց համազարկը, ինքն ընկավ և...

Հենց որ ցրվեց կրակոցների ծուխը, այգաբացի դալուկ լույսի մեջ, հրապարակը, որ կարծես ինքն էլ էր մասերի բաժանվել ու փախուստի մատնվել գոռացող բազմության հետ միասին, հանկարծ (այդպես թվաց զինվորներին) կանգ առավ իր վրա ցրիվ ընկած հինգ անշարժ մարմինների ծանրության տակ:

Ինչ-որ տարօրինակ, անհաղթահարելի մղում կապիտանին ստիպեց տալ որևէ հրաման, ինչ պատահի: Այդտեղ մնացած այդ հինգ դիակները, որ այլանդակված էին, զարհուրելի անշարժությամբ ընկած ցեխոտ հրապարակում, փախչող ամբոխի ոտքերի տակ կոխկրտված, անտանելիորեն ճնշում էին հայացքը: Կապիտանի հրամանով մթերապահն ու կապրալը շփոթահար անցան հրապարակով ու մոտեցան հինգ դիակներից առաջինին:

Մթերապահը կռացավ ու տեսավ, որ երեսնիվայր ընկած մարդը զինված է ավազակի պես: Նա դիակի ուսից հանեց հրացանը և, գլուխը բարձրացնելով, այն ցույց տվեց կապիտանին.

հետո հրացանը տվեց կապրալին ու նորից կռացավ դիակի վրա, որպեսզի նրա գոտուց հանի նախ մեկ, ապա մյուս ատրճանակը, որոնք նույնպես ցույց տվեց կապիտանին: Այդ ժամանակ կապիտանը, թեև նրա ոտքը դեռ շատ ուժգին դողում էր, և նա վախենում էր, որ զինվորներն այդ կնկատեն, հետաքրքրությամբ համակված՝ նույնպես մոտեցավ դիակին և պատվիրեց շրջել այնպես, որ կարելի լինի տեսնել դեմքը: Երբ մարմինը շրջեցին, արյունաշաղախ կրծքին շողացին չորս մեդալներ:

Եվ այդ ժամանակ երեքն էլ նայեցին մեկմեկու աչքերի մեջ՝ շփոթված ու վշտահար:

Այդ ո՞ւմ էին սպանել իրենք: